V 9
115

1999

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԿԱՆԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ

ԵՒ ՍԱՀՄԱՆԱՑ ՆՈՐԱ

ԿԱՄ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

ԳԵՐՊ. ԱՆԴՐԷԱՍ Վ. ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1911

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ

Գ
115

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԿԱՆԱՒՈՐ ՔԱՂԱՔԻՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ

ԵՒ ՍԱՀՄԱՆԱՑ ՆՈՐԱ

ԿԱՄ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

ԳԵՐՊ. ԱՆԴՐԷԱՍ Վ. ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ



463

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1911

2$-126

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Б...отека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

115-79

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՏԱՍ կանուխ բաղձանք ունեցած էի գրել մեր մեծանուն Մելաթիա քաղքին պատմութիւնը, նախայն այլ և այլ պաշտօններ, զորոնք ի Զէյթուն և ի Կոստանդնուպոլիս վարել որոշուած էի ի Վերնագոյններէս, կը դժուարացնէին ինձ ամփոփել պարապել նոյն գործոյն: Միայն գտած պարապ ժամանակս ան-օգուտ չանցնելու համար, փոյթ կը տանէի կարեւոր եղած տեղեկութիւնները հաւաքելու պատմական և այլ նիւթոց վրայ. առանց այս միջնորդաց յայտնի է որ գրուածքը մը չի կրնար յօրինուիլ:

Այս աշխատութիւնը բոլորովին անօգուտ չի մնաց. զի իմ ողբացեալ վարժապետիս Մելաթիոյ Հայկազեան Ներսէս Արքեպիսկոպոսին կողմանէ՝ յամին 1862–3ին երկու ընդարձակ նամակներ գրած եմ երեւելի անձանց. և 1864ին տեղեկագիր մը՝ մեր Ս. Վլաս Հայրապետին վրայ, Թախուզայի Արքեպիսկոպոսական դիւանին խնդրանօքն: Նոյնպէս 1864ին Արփի խոռխոռունի Ղեւոնդ Արքեպիսկոպոսի կողմանէ Մխիթարեանց Աթոռոյն համար երկայն նամակ մը գրեր եմ: Եւ յամին 1870, Հռովմ վատիկանեան Տիեզերական ժողովքին ժամանակ գաղղիերէն տետրակ մ'ի լոյս ընծայած « Notes sur la mission Arménienne Catholique de Mélitène (Arménie Mineure) մակդրով: Ուրիշ առանձին գրութիւններ ալ յօրինած եմ այս նիւթերուն վրայ:

Սկիզբն այս պատմութիւնը գրաբար գրած ըլլալով՝ զայն աւելի եւս պար-զելու մտօք նորէն գրչէ անցուցի: Եւրքէն բարեկամներն ըսին, որ աշխարհա-բարն աւելի ընդունելի է, ուստի հարկ եղաւ երրորդ անգամ եւս գրել զայն, և այս անգամ շատ մը յաւելուածներով ճոխացնել: Թէ և գործն այլ եւս մե-ծապէս ձանձրալի և տաժանելի դիրք մը առած էր ինձ համար, այսու հանդերձ առին Հայրենակցաց փոքր նուէր մը պատրաստելու դիտմամբ՝ պատ-շաճ դատեցայ յարատեւել և շարունակել, նախայն ինքնին փափկութեան մտա-դրելու սիրտ չեմ ունեցած: Նաև պատմութեան ընթացքին մէջ, մեր կրկնու-

թիւններ տեղի ունեցեր են, զորոնք երբեմն ուղղեր եմ ամբողջ և երբեմն համառօտեր. ինչ ինչ տեղեր առաջուան գրուած վիճակին մէջ թողուցեր եմ։

Վաղեմի ժամանակաց, քննագրական և այլ հնաց տեղեկութեանց ոչ հետամուտ եղած եմ և ոչ ալ պարապած. մանաւանդ թէ՛ իմ պատմութեան գլխաւոր կէտն՝ որ է Սեբաստիան, այնչափ մեծ հնութիւն մը չունի։ Այո՛, կան տեղեր՝ ուր պատմական կարգին մէջ յառաջ անցեր եմ. բայց աս ալ միայն անոր համար՝ որ Փոքր Հայոց դրից, բաժանման և այլ կարևոր գիտելեաց նկատմամբ մեր և օտար պատմիչներուն գրածներն մէջ բերեմ, և միանգամայն՝ թէ, ինչպէս իրաց փոփոխ ընթացքովն Սեբաստիա մէջ տեղ եկաւ ու նշանաւոր քաղաք մը հաստատուեցաւ։ Գրեցի նաև անոր շուրջը գտնուած տեղերուն և ընդհանրապէս բոլոր Փոքր Հայոց վրայ։

Պատմութեան յառաջելովդ յայտնի պիտի տեսնուի նաև՝ որ գրելու համար ընտրած նիւթս բոլորովին աղքատ չէ, երբէ՛ քաղաքական և երբէ՛ կրօնական տեսակէտով։ Այո՛, թէպէտ Փոքր Հայք Մեծ Հայաստանի պէս երկայնժամանակեայ և հզօր պետութիւններ չէ ունեցեր, սակայն և այնպէս չեն պակսեր պետեր և թագաւոր գլուխներ (որոնք նստեր են Սեբաստիա և Մելիտինէ), մեծամեծ իշխաններ, ինչպէս նաև Հռովմէական սպարապետներ և փոխանիշխաններ, կայսերական զօրավարներ, կուսակալներ և Հայ Պատրիկներ, վերջապէս Սեբաստիոյ Արծրունի իշխանները, Մեծ Հայաստանու Վասպուրականի պետերն և նախարարներ։ Մէկ խօսքով գտնուեցան նաև Տաճիկ իշխանք և Օսմանեան առաջնակարգ կուսակալներ։ — Գալով կրօնականին՝ թէպէտ չունեցաւ Հայրապետներ, բայց կային երկու Մետրոպօլտական բարեկարգ գաւառներ՝ իրենց վիճակակից եպիսկոպոսներով և ուրիշ շատ մը բարեմասնութիւններով ճոխացած։

Փոքր Հայք ամբողջ ունի ընդարձակ ու լայնատարած դաշտեր, առատ ջրեր, և լի է տեսակ տեսակ հանքերով։ Երկիրն ընդհանրապէս բարեբեր է. ցորեանը, գարին և այլ արմտիք առատ են, և ունի պարտէզներ, պտղատու ծառեր և այգիներ, նաև անտառներ։ Ժողովուրդը փութաջան է և հետամուտ արուեստից. իրենց կ՚օգնէ երկրին բնական հարստութիւնը. ջանալու է զանոնք արդիւնաբեր ընել և ձեռքէ չհանել, որպէս զի ազգն հայրենի երկրին մէջ կարևորներէն զուրկ և աղքատ մնալու չենթարկուի։ Հաղորդակցութեան ճամբաները հետզհետէ աւելցած են, կան շատ մը կառուղիներ, կը պակսի միայն երկաթուղին, զոր այժմու վարչութիւնը փոյթ կը տանի յաջողելու. և այն ատեն վաճառականութիւնն ընկերական քայլ մը կ՚առնու և կը զարգանայ։ — Արիութիւն Հայրենակիցք, ջանացէք չխնայեցնել ու չնուաստացնել ձեր դիրքը։

Միութեամբ և համերաշխութեամբ կը բարգաւաճի յառաջադիմութիւնը․ անհոգութեամբ ու տարաձայնութեամբ կը կորսուի ամէն յաջողութիւն, ուրիշներ մեզի յաջորդելով ամէն բանէ զմեզ կը մերկացնեն, ու դժուարին, չըսեմ անկարելի կ'ըլլայ այնուհետեւ զանոնք նորէն ձեռք բերել: Ազգայինք ի մասնաւորի խորհելու են, որ Օսմանեան բազմամարդ բնակչութեան հազիւ տասներորդ մասը կը կազմեն: Նման արտաքին և մանաւանդ ներքին դժուարութիւնք: Միութեամբ և համաձայնութեամբ, և միանգամայն հաստատարիմ հնազանդութեամբ պիտի կարենան յառաջադէմ նկրտիլ այս մեծ կայսրութեան մէջ: Անձնասիրութիւն, ներքին և արտաքին տարաձայնութիւնք անկարելի կ'ընեն որ և է յառաջադիմութիւն:

Գրուածքը փոքր ըլլալով՝ իր վրայ երկայն բացատրութեան պէտք մը չեմ տեսներ. եթէ տեղ տեղ անձնական կարծիքներ յայտներ եմ, զանոնք իրաց հանգամանքներուն բնական հետեւութիւն համարած եմ և ոչ ինքնատեղծ բան մը: Կայ եւս իր մը դիտելու արժանի, իբր զի պատմութեան մէջ դրած եմ նաև վերջի դարերու մարտիրոսները, որոնք զՅիսուս Տէրն մ'ր և իր սուրբ հաւատքը չուրանալու համար նահատակուեր են՝ խոստովանելով զՔրիստոս Աստուած: Ասոնց մեծ մասը Միքայէլ վարդապետ Չամչեան Հօր ընդարձակ հեղինակութեան, այլ ամբողջը Սեբաստիոյ Պատմութեան մէջ յիշուած են: Այս նահատակները մեր եկեղեցւոյ մէջ չեն տօնուիր, սակայն բարի հաւատով իրենց արիւնը թափած են՝ սիրելով զՔրիստոս Աստուած․ և զանի չուրանալու ու անոր սէրը չի կորսնցնելու համար՝ ամբողջ արիւննին թափեր և կեանքերնին զոհեր են:

Պէտք է խոստովանիլ նաև անկեղծութեամբ, որ պատմութիւնս շատ մը թերութիւններ ունի․ բայց համոզուած եմ ըսելու այ՝ որ շատ աւելի նիւթերով նոյնը խճողելու չեմ համարձակած: Թէպէտ կայ ձեռքս գրեթէ աւարտած աւելի ընդարձակ ու աւելի լայն սահմաններով պատմութիւն մը, բայց ունեցած դոյզն միջոցներս թոյլ չեն տար ինծի նորին հրատարակութեան հետամուտ ըլլալու․ անոր համար պէտք չէ մեղադրել և ոչ մէկին: Զի ազգային աղէտները աւելի ծանր պիտոյքներ կը ներկայացնեն մեզի, որոնց առջև անտարբեր կենալ անհնարին է: Կենաց հարցն ամենէն աւելի մեծ մտահոգութիւն կը պատճառէ․ աղքատութիւն, կոտորած և սով՝ ըռուցեր են ամէն ձեռք: Մեծայոյս եմ որ բարեբաղդ տարիներ պատսպարեն ու խնամեն կարօտները:

Այս ամէն պայմաններով իմ հայրենակիցներս պիտի յորդորեմ, որ այս գրութեան մէջ տեսնալով իրենց նախնեաց փայլուն և տխուր օրերը, չի յուսահատին այժմու նեղ վիճակէն , յաջողութիւնք միշտ ձախորդութեան ընկերն

է․ կորուստը կրնայ դարձեալ ստացուիլ՝ քանի որ օտարի ձեռք անցած չէ։ Մանաւանդ՝ որ Օսմանեան Տէրութիւնն այժմ իր անձն հպատակաց անխտիր ազատութիւն և հաւասարութիւն տուած ըլլալուն՝ բոլոր բնակչաց առջև․ յառաջադիմութեան մեծ ասպարեզ մը բացուած է։ Ուստի այլ ևս գործելու և աշխատելու է ամենայն ձգամբ․ ըստ որում «Որ ոչն գործիցէ և կերիցէ մի» կ՚ըսէ սուրբ գիրքը։ Մարդը գործելու համար դրուած է աշխարհիս մէջ, միանգամայն սահմանադրութեանն օգուտ քաղել գիտնալու է՝ առանց պարապ ժամանակ անցնելու։

Պէտք կը տեսնամ վերջապէս ըսելու, վարեր եմ քանի մը բառեր, որ հիմակ ի գործածութեան չեն, բայց մեր երկիրներուն սովորական՝ և քիչ առաջ ընդհանուր էին։

Գիտեմ ևս, որ մեր Հայրենակիցք իմաստուն են և ուշիմ, անշուշտ բարեզուր պիտի գտնուին ակամայ՝ այլ և հարկադրեալ վրիպանաց, ու սոյն մեր փոքրընծայ նուէրը սիրով և ներողամտութեամբ պիտի ընդունին։



ՍԵԲԱՍՏԻԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵԲԱՍՏԻՈՅ

ԳԼՈՒԽ Ա

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Այս գլխոյս մէջ պիտոր բովանդակին Փոքր Հայոց անուան, դրից, բաժանման եւ բնակչաց վերաբերեալ գիտելիներն, որոնք կարեւոր են պատմութիւնը լուսաւորելու համար։

Ա. — ԱՆՈՒՆ ԵՒ ԴԻՐՔ

Մեր հին պատմագրաց քով « Փոքր Հայք » բառը չէ արտասանուած. նաև մեր պատմագրաց Հայրը Մովսէս Խորենացի՝ Հայոց այս մասը կ'անուանէ « Արևմտեան մեր կողմն ». կը գրէ ևս որ Արամ Նահապետ Հայոց՝ այս կողմերու տիրելով աշխարհակալութեամբ՝ իր տէրութեան մասն կազմած էր, և ասոնք են ծեր պատմագրին խօսքերը. « Արամ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց ի տեղի մի որ այժմ ասի « Կեսարիա... Պատահէ նմա Պայապիս Քաղեայ Տիտանեան, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց՝ զՊոնտոսն և զՈվկիանու (Միջերկրականին). որում ի դիմի հարեալ վանէ, փախստական առնելով ի կղզի ինչ ասիական ծովուն։ Եւ ինքն թողեալ զոմն « Մշակ անուն յազգէ իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերայ

« աշխարհին, և ինքն դառնայ ի Հայս։ Բայց հրաման տայ բնակչաց
« աշխարհին ուսանել զխօսս և զլեզու հայկական. վասն որոյ մինչև
« ցայսօր ժամանակի անուանեն զկլիմայն զայն՝ Պռոտին Ամենիան, որ
« թարգմանի՝ Առաջին Հայք։ Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն
« իւր Մշակ կողմնապետն Արամայ՝ փոքրագունիւք պարսպեալ որմովք,
« անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, այսպէս ոչ կարելով ուղղա-
« խօսել, մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ
« Կեսարիա։ Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ ցրուն իւր սահ-
« մանսն զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ
« անուանեցան՝ Հայք, այլ և Չորրորդ։ Այս է առաջին և ճշմարիտ
« պատճառ վասն անուանելոյ զարեւմտեան մեր կողմն՝ Առաջին և Եր-
« կրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք։ Իսկ որ այլ յոմանց ասի ի
« յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ»։ Խորենացւոյն կը հետևին մեր
հին պատմագիրներէն ուրիշներն ևս, քանի մը պարագաներու տարբե-
րութեամբ։

Խորենացին ըսելով՝ «մեզ ոչ է հաճոյ», յայտնի կը ցուցնէ, թէ անտեղեակ չէր անոնց այս անուանակոչութեանց տուած պատճառներուն. բայց ըսածներնին հաճելի չերևնալով, և ոչ զանոնք մէջ բերել յարմար դատեր է։

Իրօք անծանօթ չէր արտաքին պատմագրաց Հայոց աշխարհին՝ այս պայմանը կամ անուանակոչութիւնն, այլ անոնց քով չընծայուիր ան Նահապետին Հայոց Արամայ։ Այս արևմտեան Հայաստանի նկատմամբ հին մը կը գտնուի Աստուածաշունչ գրոց մէջ Սաւուղայ և Դաւթի ժամանակ, ուր խօսք կ'ըլլայ Ծոփաց աշխարհին վրայ, իբր առանձին պետութիւն՝ որուն վրայ եռքէն։ Նա և Դարեհ Վշտասպեանի ժամանակ, որ թագաւորեց Քրիստոսէ 522–486 տարի առաջ, կը գտնուի յիշատակ Հայաստանի արևելեան և արևմտեան մաս ունենալուն։ Քսենոփոն յունական բիւր զօրաց նահանջին պատմութեան մէջ կը յիշատակէ արևմտեան Հայաստանի Սատրապը կամ Նախարարը Տիրիբազ, որ Պարսից արքունեաց մէջ մեծ դիրք և պատիւ ունէր։

Մինչև հոս խօսքն է՝ թէ Հայոց աշխարհքն երկու գլխաւոր մաս ունէր, արևելք և արևմուտք։ Իսկ Մեծ և փոքր Հայոց անուանակոչութիւնն սկսած կը համարին արտաքին պատմիչք այն բաժանումէն, զոր ըրաւ Մեծն Անտիոքոս՝ որ թագաւորեց 223-187 *տարի Քրիստոսէ առաջ, և երկու մասանց՝ կարգեց երկու նախարար. Արտաքսիան կամ Արտաշէսն արևելեան կողմին, և Զարիատրէս կամ Զատրիատէսն, այն է Զարեհ կամ Դարեհն, արևմտեան կողմին։ Եւ որովհետև Արտաշէսի բաժինն աւելի մեծ էր, անոր համար կոչուեցաւ Մեծ Հայք. իսկ Զարեհի բաժինն փոքր Հայք, ինչու որ չունէր միւսին տարածութիւնը։*

Անկէց առաջ եկած է արտաքին պատմագրաց մեր երկրին տուած Մեծ և փոքր Հայք անուանակոչութիւնը, թէպէտ ոչ միշտ նոյն սահմաններով և նոյն տարածութեամբ։

Իսկ մեր պատմագրաց մէջ՝ արևելեան մասին Մեծ Հայք յորջորջումը միշտ ի գործածութեան էր. հետևաբար պէտք էր արևմտեան մասն ևս կոչել փոքր Հայք, որ հին մատենագրաց մէջ բաւական դատուեր է ըսել «Արևմտեան մեր կողմ»։

Իսկ փոքր Հայոց դիրքն է փոքր–Ասիոյ Արևելեան վերջին մասը՝ մինչև Մեծ Հայոց արևմտեան սահմանը։ Տարածութեան համար Մովսէս Խորենացի կ'ըսէ. «զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտոսն և զՈվկիանոս»։ Որով փոքր Հայքը կ'իյնար Փարիզի երկայնութեան 33°–38° *և լայնութեան* 36°–41° *աստիճանաց ներքև։ Բայց ոմանց ասի շատ ընդարձակ երևնալով՝ կ'ամփոփեն Ա, Բ և Գ Հայք անուանեալ գաւառներով միայն. երկայնութեան* 33°–36°, 30'. *և լայնութեան* 37°, 30' - 40°, 30' *աստիճանաց ներքև բաւական ընդարձակ երկիր մը։*

Այս երկրորդ տեսութեամբ Պոնտական ծովէն և Միջերկրականէն հեռանալով՝ կը մնայ փոքր–Ասիոյ արևելեան միջնաշխարհն, որ մեր նախնիք Միջերկրեայ կ'անուանէին. և յիշեալ երկու ծովերէն որչափ հեռանայ, այնչափ կը նուազին անտառախիտ տեղերը. բայց ընդ հակառակն հովիտները կ'ընդարձակին լայն դաշտերով. իսկ լեռները թէպէտ լերկ են, այլ զանազան գոյներով զարդարուած ականահանքոյ կերպարանք

մը կ'ընծայեն աչաց, մէկ լերան վրայ հինգ վեց գոյն վրայէ վրայ շարուած տեսնելով. բայց վերջապէս Փոքր Հայաստան բոլորովին զուրկ չէ անտառներէն։ Այս երկիրը Փոքր–Ասիոյ բարձրագոյն մասն է։ Արգէոս լեռնէն, որ 4000 մեդր բարձր է, մինչև Գոհանամ լեռը ձգուած լերանց գիծ մը կը բաժնէ Փոքր Հայքը երկու մասի, հիւսիսային և հարաւային, որոնք կրնան կոչուիլ, հովիտ Սև ծովուն՝ հիւսիսայինն, իսկ հարա-ւայինը պէտք է կոչել Միջերկրականի և Եփրատայ հովիտներ։ Ջրերն ևս նոյն լերանց գծէն վեր կ'երթան կը թափին Սևու ծով. բայց միշտ արևելքէն արևմուտք ոլոր մոլոր շրջան մ'ընելով, կը դառնան ապա դէպ ի հիւսիս մինչև Սևու ծով, ինչպէս են Ալիս, Իրիս և ուրիշներ։ Նոյն գծէն դէպ հարաւ կ'իջնեն Սար (Սէհուն) և Պիւրամ (Ճիհան) գե-տերն իրենց արբանեակներովն, և ուրիշներ՝ դէպ ի Միջերկրականը։ Եփրատ թափող գետերն ու գետակներն աւելի փոքր են, բայց բազմա-թիւ. անոնց մէջ նշանաւոր է Մելաս (Թարասու) գետն, որ Մեծիրան (Կէօվտէլի) լեռնէն կ'ելլէ և Մելիտինոյ մօտերէն կ'անցնի մինչև Եփրատ։

Երկու ծովերէն հեռանալով, երկրին բարձրանալուն համեմատ կլիման կը փոխուի. տեղ տեղ, ի մասնաւորի Սեբաստիա, ցրտութիւնը մեծ է. այլ օդը մաքուր և չոր։ Ծովեզրը եղած գաւառներն, ի մաս-նաւորի Եւդոկիա, թէպէտ խոնաւ է, բայց բազմաբեղուն։ Ընդհանրապէս Փոքր Հայք ամառը շատ ջերմ է, որով հունձքերը կ'երագեն. մանաւանդ գարնան ցանը։ Այս մասին վրայ արդէն երկայն գրած ըլլալով, ուրիշ պատմութեան մը մէջ, հոս բաւական կը համարիմ այսչափս համա-ռօտակի։

Փոքր Հայոց բաժանումները

Փոքր Հայոց հնագոյն բաժանումն է զոր կը յիշատակէ Խորենացին, և կ'ընծայէ Հայոց Արամ Նահապետին, ինչպէս նշանակեցաւ քիչ մ'ա-ռաջ։ Յովհաննէս պատմաբան կաթողիկոսն ևս մէջ կը բերէ նոյները զատ

զատ, ճշդելով մասամբ իր տեղեկութեանց համեմատ, և տանք են իր խօսքերը. «Արամայ բազում արութիւն քաջութեանց մրցանաց պատմի, « և ընդարձակեալ ասի հարստութեամբ բազմաւ զսահմանս Հայոց հա- « տարակ ընդ չորեսին ոլորտս երկրի. զի ըստ քաջափայլ հանդիսի առն « զօրութեան, որ շուրջ զմեւք են ազգք՝ ի նորին անուն յարակցաբար « Արմանեակս զմեզ անուանեն: Սա ոչ միայն զայլս ոմանս դիւրախառս, « այլ և զկապուդկեցիս ևս բազում արիական քաջամարտութեամբ ընդ « իւրև նուաճեալ սեպհականէր. և զկլիմայն զայն և զՊոնտոսին ըստ « իւրումն իսկ անուան Արմէնի անուանէր, որ մինչև ցայսօր այս անուն « ի յունականաց անուի աշխարհին այնմիկ անուանի: Իսկ յԱրմենէն « յայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս Պոնտացւոց՝ Առաջին Հայք « զաշխարհն անուանեաց, և ի Պոնտոսէ մինչև ցոլորտս քաղաքին Մե- « լիտինոյ՝ Երկրորդ Հայք, և ի Մելիտինոյ մինչև ցսահմանս Ծոփաց՝ « Երրորդ Հայք. և ի Ծոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց յաշխարհն « Աղձնեաց արևմտեայ՝ Չորրորդ Հայք. այս մինչև ցբնիկ սահմանս « տէրութեան իւրոյ. իսկ զսեպհական և զբնիկ աշխարհն իւր համա- « տարած, զսա Մեծ Հայք անուանեաց» (ձեռագիր, էջ 10):

Խորենացին իր աշխարհագրութեան մէջ կը նշանակէ միայն երեք գաւառ Փոքր Հայոց համար, զորոնք կը զատէ Մեծ Հայաստանի տասն և հինգ աշխարհներէն. և այս երեք գաւառներն են. «Երկրորդ Հայք. « յելից կալով Լիկիոյ առ Տաւրոս լերամբ, ունի լերինս երիս, և գետս « չորս և զդրունս երկու ելանելոյ Ասորւոց:

« Առաջին Հայք՝ յելից կալով առաջին Կապադովկիոյ, առ երի « Երկրորդ Հայոց. և սահմանի յելից Եփրատայ, և լեառն ունի զԱրգէոս, « և գետս երեսուն, զԱլիս և զայլ մանունս:

« Երրորդ Հայք են՝ որ կան յարևելից Կապադովկիոյ և երկայն « տարածի մինչև ցԵփրատ. և ունի գետս երկու, և լերինս բազումս « մեծամեծս քան և երկու»:

Կան որ այս գրութիւնը չեն համարիր Խորենացւոյն:

Իսկ Չորրորդ Հայքը կը կարգէ Մեծ Հայոց հնգետասան փոքր

աշխարհաց մէջ, և կը սահմանէ այսպէս. «Չորրորդ Հայք յերի կայ «Բարձր Հայոց. և գաւառք են ի նմա ութ, Խորձէն, Հաշտեանք, Պաղ-«նատուն, Բալահովիտ, Ծոփք, Հանձիթ, Գորէք, Դեգիք: Ունի բերդս «և գետս և լերինս. և բիւրեղ, ունի և երէս և հաւս և ձկունս, և «ի գազանաց առիւծ»:

Արտաքին պատմագրաց մէջ ալ կան աւանդուած փոքր Հայոց բաժանմունքներ, որոնց մէջ իբր հնագոյն կը դնեմ նախ Պտղոմեայ աշխարհագրի գրած եօթներորդ գլուխը. «Դիր փոքուն Հայոց, որուն «հիւսիսայնագոյն մասը կը կոչուի Օրպալիսէնէ, և անկէց վար եղածը «Տէտուլանա, որուն կը յաջորդէ Էրեթիքա, որուն վարի կողմն է «Հօրսէնա և հարաւայնագոյն մասը. Հօրսէնայէն վար կու գայ Որպի-«սէնէ»: Քաղաքներուն անունէն, զորոնք Պտղոմէոս կը յիշատակէ Եփրատայ եզերքն և երկրին ներքին կողմերը լեռներու վրայ, կրնանք հետևցնել՝ թէ այս հինգ գաւառներս իրենց մէջ կը բովանդակեն բոլոր այն երկիրներն՝ որ կան Եփրատայ արևմտեան կամ աջակողմը, Կիւմիւշ-խանէի սահմանէն մինչև Մելոս, հիւսիսէն դէպ հարաւ երկննալով, որոնց մանրամասնութիւնն ետքէն:

Երբոր Հռովմայեցիք տիրեցին այն կողմերուն, նոր նոր բաժան-մունքներ ըրին. ես Մեծին Կոստանդիանոսի սահմանածը մէջ բերել յարմար կը դատիմ: Ասիկայ բոլոր Հռովմէական պետութիւնը բաժնեց նախարարութեանց, և զասոնք վիճակներու և վիճակները գաւառներու. որոնցմէ Արևելից Նախարարութեան Պոնտական վիճակին մէջ կը գտնուէին այս երկու գաւառներն

Արմենիա առաջին, Սեբաստիա.

Արմենիա երկրորդ, Մելիտինէ:

Առաջին հայոց մայրաքաղաքն էր Սեբաստիա, ուր կային նաև Սեբաստուպոլիս, Նիկոպոլիս, Կողոնիա, Սատաղա, Ամփիպոլիս, Պե-րիսսա, Հերակլեպոլիս կամ Պիտաքոպէ քաղաքներն: Ետքէն աւելի ևս ընդարձակեցաւ այս գաւառն, իր մէջը գրաւելով Երիզա, Կամախ և Թէո-դոսուպոլիս գաւառները:

Երկրորդ Հայոց մայրաքաղաքն էր Մելիտինէ. կային նաև Արկա, Կոմանա Կապադովկիոյ, Արապիսոս, Կիթարիձոր։ Երբեմն նաև Սոփենէ (Ծոփք) և Տրոսպոնտիս կամ Տիոսպոնտիս։

Յուստինիանոս մեծն, որ 527–563 տարիները թագաւորեց, իր նորագոյն օրինաց մէջ, թիւ ԼԱ, նոր բաժանումն ըրաւ Փոքր Հայոց, չորս գաւառ, Մեծ Հայոց քանի մ'արևմտեան գաւառներն ալ խառնելով անոր հետ, որոնք այն ատեն իր իշխանութեան ներքև էին։

« Առաջին Հայք, մայրաքաղաքը Բասէն կամ Լէոնդուպոլիս, որուն
« կը վերաբերէին Թէոդոսուպոլիս (Էրզրում), Սատաղա, Նիկոպոլիս,
« Կողոնիա, Տրապիզոն, Կէրասոն քաղաքները։

« Երկրորդ Հայք, մայրաքաղաք Սեբաստիա, որուն ձեռաց ներքև
« էին Սեբաստուպոլիս, Կոմանա Պոնտական, Զիլէ և Բրիսա քաղաքները։

« Երրորդ Հայք, մայրաքաղաք Մելիտինէ, որուն կը պատկանէին
« Արկա, Արապիսոս, Արիարաթիա, միւս Կոմանա, Կէրիզա կամ Կո-
« կիսոն քաղաքները։

« Չորրորդ Հայք Եփրատէն անդին, մայրաքաղաք Մարտիրոպո-
« լիս. առաջիններէն աւելի շատ ժողովուրդներ ունէր»։ (Լըքիէն Քրիստ. Արևելք, հտ. Ա. էջ 420)։

Նոյնն կ բան մ'ևս կը պատմէ Յովհաննէս կաթողիկոս Մօրիկ ինքնակալին համար, թէ « Ապա կայսերն Մաւրկայ ձեռներէցութեամբ
« իմն փոփոխումն արարեալ անուանց աշխարհացն այնոցիկ, որ ի մե-
« րոյն Արամայ կարգաւ եղեալ էր։ Եւ նախ զԱրմէնին զայն որ Առաջին
« Հայքն անուանիւր, Երկրորդ Հայք զնա Մաւրիկ կոչեաց, յորում
« մայրաքաղաք Սեբաստիա. իսկ զԿապադովկիա՝ յորում մայրաքաղաք
« Կեսարիա, և Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք,
« և անդէ եպարքի։ Իսկ զՄելիտինէ՝ որ ունի զհամանուն իւր գաւառ
« և է Երրորդ Հայք, կոչէ զնա Առաջին Հայք։ Իսկ զՊոնտոս՝ յորում
« մայրաքաղաք է Տրապիզոն, կոչէ զնա մասն մեծին Հայոց։ Եւ Չոր-
« րորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք Մարտիրոսաց պոլիս,

« այսինքն Նփրկերտ, Յուստինիանոս զնա գրէ ի դիւան արքունի։
« Դարձեալ զաշխարհն Կարնոյ, յորում մայրաքաղաք Դիոսպոլիս, ա-
« նուանէ զնա Մեծ մասն Մեծին Հայոց։ Եւ որ ի Մեծն Հայոց մասն
« ինչ մնացեալ էր ի ձեռս Հոռոմոց, ի կողմանց անտի Բասենոյ մինչեւ ի
« սահմանս Անտիոքայ, Մեծ Հայք։ — Իսկ զկողմանս Ծայոց սահ-
« մանօք իւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայք անուանէ։ — Այսպէս
« ամենեցուն սոցա փոփոխումն արարեալ Մաւրկայ՝ գրէ ի դիւանս ար-
« քունի։ Արդ քեզ եր[illegible]ակալ գրեցաւ, զի մի ագիտութիւն ինչ քեզ
« վարկցես զայն, զոր յառաջագոյն առ յինէն քեզ պատմեալ եղեւ,
« Առաջին եւ Երկրորդ եւ Երրորդ եւ Չորրորդ Հայք. զի այն Առաջինն
« ի մերոյն յԱրամայ քաջէ անուանեալ եղեւ, իսկ այս Երկրորդ ի
« Մաւրկայ կայսերէ Հոռոմոց »։ (Ձեռագիր, էջ 41, 42)։

Կոստանդին Պորփիւրոժէն ուրիշ բաժանում մը մէջ կը բերէ թե-մերու, որոնց տասնեւօթն թեմերը կ'ընծայեն կայսերութեան այն գաւառները որոնք Եգէական եւ Պրոպոնտիս ծովերէն կը տարածուին մինչեւ Եփրատ, որոնցմէ յարմար կը դատիմ յիշատակել հետագայները։

2 Թեմ Հայոց կամ Արմինական
10 Թեմ Կողոնիոյ
11 Թեմ Սեբաստիոյ
12 Թեմ Լիւքանդիոյ

Նաեւ Կապադովկիոյ եւ Խաղտեաց թեմերը մասն ունին փոքր Հայքէն. եւ այս բաժանման հեղինակ եղած է Հերակլ կայսրը։

Այս ամէն բաժանմունքներէն՝ զորոնք վերը յիշատակեցի, Կոստանդիանոսի մեծի բրածը լաւագոյն կը թուի, եթէ ներուի տալ աւելի ընդարձակութիւն մը, մանաւանդ դէպ հիւսիս։ Ասանկ այժմու Եւդոկիոյ, Սեբաստիոյ, Նիկոպոլսի եւ Մելիտինոյ Օսմանեան սանճագները, արեւմտեան մասամբ Խարբերդի, կը կազմեն Առաջին, Երկրորդ եւ Երրորդ Հայք. պէտք է յաւելուլ նաեւ Ամասիա եւ այլ ինչ ինչ տեղեր հարաւէն եւ այլ կողմերէն՝ արեւմտեան Հայաստանը ճիշդ ունենալու համար։

Եւ այսպէս կրնան առնք համեմատիլ այն հնագոյն բաժանման՝ որ եղած է Կապադովկիոյ և Պոնտոսի թագաւորութեանց ժամանակ, ո֊րոնք են.

Մորիմենէ	*Ագոսդ Մատէնի*
Ջէյլիա	*Զիլէ*
Կազակէնէ	*Մարսուան, Ամասիա*
Տաքսիմոնիա	*Խոտկէ ..գաղ*
Կոլոբենէ	*Սեբաստ... ,իվազ*
Կամիսենէ	*Տիվրիկ, ..ա*
Փանարէա	*Եւպատորիա, Հէօրէկ*
Օրպալիսենա	*Գարահիսար*
Տեռուլանա	*Ագշէհրապանո*
Էրեոիքա	*Կէրճան*
Հօրսենա	*Ա/ն*
Օրպիսենէ	*Արաբկիր, Արկաւա*
Լաւիալեզենէ	*Կիւրին Թոնուզ, Ազիզիէ*
Մելիտենէ	*Մալաթիա*
Սարկարաւսենէ	*Նէաշէհիր*
Կատաոնիա	*Կէօքսուն, Հաճին, Զէյթուն*
Արաւսենէ	*Բեհնիա*

Այս հին անուններուն դիմացը նոր յորջորջումները դրուած են մերձաւոր համեմատութեան համաձայն, և ոչ թէ ամէն մէկին տեղակա֊լութեան և ճիշդ տարածութեան չափ։

Բաժանման այլեայլութեան պէս՝ նաև փոքր Հայոց սահմանն հին ատենէ շատ մը փոփոխութեանց ներքև ընկած է, ընդարձակուելով և ամփոփուելով, ինչպէս նոյն աշխարհին տիրողներուն յարմար տես֊նուած է։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Փոքր Հայոց բնակիչները

Հնութիւն պրպտող երկրաբաններուն կարծիքն է՝ թէ Փոքր Հայոց Եփրատէն անդին կամ նուազ հեռու գաւառները, Կապադովկիոյ հետ միանգամայն, որուն երբեմն մասն ևս էին, ընիկ Հայաստանէն շատ ուշ բազմամարդ եղան բնակիչներով. և ասիկա առաջ եկած էր երկրին բնական կազմութենէն. զի սարերկրեայ հրոյն պատճառով այն տեղերն յաւեր և յապականութիւն մատնուած էին, և ասոր ազդեցութիւնը կը տեսնուի ամէն տեղ. անանկ որ ամայի անապատ մ'էր այն, և հազիւ ուրեմն տեղ տեղ ցան և ցիր բնակութեան նշմարանք մը կը տեսնուէր: Անոնք հետզհետէ աճելով, և Մեդացւոց և Հայոց հետ կցորդութեամբ՝ մարդուեցան քաղաքական կարգերու և կրօնքի մէջ:

Խորենացին ալ իբր 2000 տարի Քրիստոսէ առաջ Փոքր Հայոց պատկանեալ գաւառներն անմարդաբնակ կը համարի՝ երբոր կ'ըսէ. «Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ, (Կեսարիոյ գաւառէն զոր Արամ առաջին Հայք անուաներ էր, հոն զինուորական գաղթականութիւն մը հաստատելով, իրեն ազգական Մշակին առաջնորդութեամբ), մինչև ցբուն իսկ սահմանս զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք այլ և Չորրորդ»:

Հնագոյն աւանդութիւն մ'է, թէ Եփրատայ արևմտեան կողմն եղած գաւառաց բնակիչները Յաբեթի Գամեր որդիէն սերած են. ասոր համար Եւսեբի Քրոնիկոնին և մեր մատենագրաց մէջ կը գրուի. «Գամեր և ի նմանէ Կապադովկացիք կամ Գամիրք»: Եւ արդարև պարսից այն կողմերը գալէն առաջ Կապադովկիոյ մէջ կը յիշուին Կիմերեանք կամ Գամերեանք. Աստուածաշունչ մատեանք և Խորենացին այն երկրին բնակիչները (զէթ Արամայ ընծայուած ժամանակ) կը հաստատեն՝ թէ Քամայ զարմերէն կամ Տիտանեաններէն էին: Եւ թէ Յաբեթեանք կամ արիական տոհմերը զանոնք վանելով, Արամայ քաջի Հայկազնոյ և իր տեղակալ Մշակայ առաջնորդութեամբ՝ ըստ Խորենացւոյն, կամ ընդ հրամանատարութեամբ Մոսոքայ իշխանին Մոսոքաց կամ Ազքանազեանց՝ ըստ այլոց, իրենց ազգին գաղթականութիւնը հաստատեցին հոն:

Յոյնք նոյն կողմերու բնակիչները Սեմական կը համարէին, զորոնք Ասորի կամ սպիտակ Ասորի (լեւկոսիւրիէն) կը կոչէին, որ է արամհաւրօ. և այսպէս կը գրուի Հերոդոտի քով. «Կապադովկացիք՝ զորոնք մենք լեւկոսիւրացի կ՛անուանենք, և թէ այս սպիտակ անուամբ կը զանազանին ասոնք բուն Ասորիներէն, որոնք գորշագոյն են»:

Արդ ինչ դատում որ այս աւանդութեանց վրայ ընել ուզուի, այն հաստատ կը մնայ՝ որ Եփրատի արեւմտեան կողմն եղող գաւառներուն բնակիչները, մանաւանդ անոնց որ նոյն գետոյն աւելի մօտ են, հին ժամանակներէ ի վեր Հայք էին մեծագոյն մասամբ, կամ Հայերէն սերուած, որոնք եկեր փոխանակեր են թերեւս յառաջագոյն հոն բնակած հնագոյն ազգերն. և այսպէս մասն եղաւ Հայոց աշխարհին, և անուանեցաւ Նոր կամ Փոքր Հայք անկէց ետև:

Դժուարին բան մը չէ ուրեմն մտածել՝ որ Հայք պահած էին և կը խօսէին իրենց բնիկ բարբառը. մանաւանդ՝ որ կից ըլլալով Մեծ Հայոց, միշտ յարաբերութեան մէջ էին իրենց ազգակցաց հետ. և թէպէտ ժամանակէ մ՛ետև անոնց մէջ շատեր վարժեցան յոյն լեզուին, բայց անշուշտ չմոռցան բոլորովին իրենց հայ լեզուն, ուստի և իրենց լեզուին անգէտ չէին. մանաւանդ հասարակ ժողովուրդը: Կար նոյն աշխարհին մէջ անշուշտ և հայ դպրութիւն յունական տառերով, ինչպէս Մեծ Հայոց մէջ սովորութիւն ունէին յոյն և ասորի տառերով հայերէն սորվեցնել: Որովհետև չկրնար մտածուիլ, որ Հռովմէական ինքնակալութեան պայծառ օրերն, երբոր Փոքր Հայք ծաղկեալ և բարգաւաճած էր մեծապէս, մանաւանդ քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ, մինչդեռ կը գտնուէին ընտիր ընտիր եպիսկոպոսներ, քահանայներ և կղերականներ, անփոյթ եղած ըլլան հոգ տանելու այնչափ բազմութեան հաւատացելոց, որոնք չկրնալով սորվիլ յունական լեզուն՝ հոգևորական նըպաստներէ և հրահանգութիւններէ զուրկ մնային: Նա մանաւանդ եթէ ուզենք հաւանիլ Խորենացի Պատմահօր, Փոքր Հայոց հասարակաց բարբառ եղաւ հայերէնն Արամայ քաջի օրերէն, որ նոյնը պատուիրեց այն երկրին նախնի բնակչաց:

Եւստաթեանց պատմութեան մէջ կը գրուի՝ որ Սեբաստիոյ Ս. Վլաս Եպիսկոպոսը հայերէն կը խօսէր Ս. Եւստաթիոսի հետ, յոյն կամ հռովմայեցի դահճէն ծածկելու համար իրենց խօսակցութեան նիւթը։

Մելիտինոյ Եպիսկոպոսը Ակակ կը ջանար Հայոց լեզուին գիր յարմարցնել, և նոյն գործոյն յաջողութեան համար աշխատեցաւ Մեսրոպ Վարդապետին հետ։

Կը պատմէ Ագաթանգեղ՝ որ Հայոց Մեծաց Եպիսկոպոսապետը Ս. Գրիգոր Լուսաւորիչն, երբ Ղեոնդիոս Կեսարու Հայրապետէն ձեռնադրուելով հասաւ Սեբաստիա, բազմութիւն եղբարց, եպիսկոպոսներ, ժառանգաւորներ և բազմաթիւ աշխարհականք զինքը դիմաւորեցին, զորոնք հաւանեցուց Լուսաւորիչն, և գունդ գունդ կը տանէր իր հետն՝ որ վիճակեցնէ Մեծ Հայոց մէջ քահանայութեան։ Արդ թէ որ հայերէն չգիտնային, ինչ բանի համար կ'ուզէր ինքը տանիլ զիրենք և եպիսկոպոս և քահանայ կարգել իր վիճակին մէջ. որովհետև հոն փոքր Հայոց պէս շատ չէր յունարէն գիտցողներուն թիւը։

Ասոնք կը համարիմ թէ բաւական են հաստատելու, թէ հին ժամանակէ ի վեր Առաջին և Երկրորդ Հայոց բնակչաց մեծագոյն մասը, մանաւորապէս Սեբաստացիք, Հայ էին, և իրենց հին եպիսկոպոսներն նոյն ազգէն սերած, ինչպէս յայտնի է ևս Սեբաստիոյ ծանուցուած առաջին Եպիսկոպոսին անունէն, որ կը կոչուէր Մերուժան։ Նոյնպէս և ուրիշ նոյն երկրին պատկանեալ բնակիչները Հայ էին, և հայերէն էր իրենց լեզուն։ Տարաս քահանային խօսքերն ևս կ'ակնարկեն այս իմաստը. «Հայք, կ'ըսէ, նոյն ժամանակը (Մաքսիմիանոս Գայայի հետ Տրդատայ ըրած պատերազմին ատեն) այն քաղաքներու մէջ որ Հռովմայեցւոց հպատակ էին (ինչպէս փոքր Հայք), ընդունեցան բազմութեամբ մարտիրոսութեան պսակն։ Իսկ իբրև ազգ (որոնք Տրդատայ թագաւորութեան ներքև էին), առաջին դարուց այս քրիստոնեայները զէն ի ձեռին պաշտպան կեցան ճշմարիտ կրօնից։ Իբրև անհատ անձեր (որոնք փոքր Հայոց մէջ Հռովմայեցւոց հպատակ էին՝) նոյն ճշմարիտ կրօնից համար մեռան (Հտ. Ա, Գլ. ԺԴ.)։

ԳԼՈՒԽ Բ

ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԸ

Այս գլուխը կը բովանդակէ 530 տարուան պատմութիւն. 195 տարի Քրիստոսէ առաջ եւ 335 տարի անկէ ետեւ. ուր խօսք պիտի ըլլայ Ա. Արեւմտեան կամ Փոքր Հայոց իշխանութեանց վրայ։ Բ. Միհրդատ եւ Տիգրան կը գրաւեն նոյն իշխանութիւնները։ Գ. Հռովմայեցիք նոր կարգադրութիւններ կ'ընեն անոնց մէջ։ Դ. Սեբաստիոյ Պոլեմոն տոհմին պետութիւնն, եւ Սեբաստիա քաղաքին վրայ տեղեկութիւն։ Ե. Փոքր Հայոց նոր թագաւորութիւնն եւ Հայաստանի՝ գաւառ Հռովմայեցւոց ըլլալը։

Ա. — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս ժամանակ արեւմտեան Հայոց վրայ կար երկու պատմութիւն. առաջինն է Ծոփաց և հարաւային արեւմտեան Հայոց մասին պատմութիւնն. երկրորդը՝ հիւսիսային արեւմտեայ մասին Հայոց պատմութիւնը։ Պետութիւնները կ'երևին ինձ երկու, ուստի և այս յօդուածը պիտի բաժնեմ երեք հատուածի։

Հատուած առաջին

Ծոփք և իրեն վերաբերեալ տեղերը հին ժամանակներէ, Սաւուղի և Դաւթի իշխանութեան օրերէն, առանձին պետութիւն մըն էր, Մեծ Հայոց երեք պետութիւններէն զատ, որոնք են Այքանազ, Մինni և Արարատ, ինչպէս կը յիշատակէ Աստուածաշունչ մատեանը։

Հետևաբար ասիկա պէտք է անուանել չորրորդ պետութիւն՝ միւսներէն կրտսեր, և յաւէտ արևմտեան Հայաստանի պատկանեալ, որ կը սկսէր Նպատ լեռնէն դէպ ի հարաւային արևմուտք. և այս է Ծոփաց աշխարհն և իրեն պատկանեալ երկիրներ։

Եզեկիէլի մէջ երկու Սաբա կը յիշուի ըստ հայ թարգմանութեան (Գլ. ԻԷ, համր. 22, 23), առանց որոշիչ նշանի մը. բայց հին և նոր կտակարանաց մէջ, այս նիւթին նկատմամբ այլ և այլ խօսքերն իրարու հետ համեմատելով, մի և նոյն Սաբա (հայերէն) անուամբ երկու ուրոյն երկիր և երկու ուրոյն պետութիւն նշանակուած կը գտնուի. մին զետեղուած է Պաղեստինի հարաւակողմը, ըստ այնմ «Տիկինն Սաբայ» (Գ. Թագ. Ժ. 1) և «Դշխոյն հարաւոյ» (Մատթ. ԺԲ. 42)։ Իսկ միւսը նոյն Պաղեստինի արևելեան (հիւսիսի) կողմը. «Թագաւորք Թարսսի և կղզեաց.... Թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա» (Սաղմ. ՀԱ. 10). և «Ահա մոգք արևելից եկին» (Մատթ. Բ. 1)։ Ասորական և Արաբական թարգմանութեանց մէջ այս երկու Սաբաները բոլորովին տարբեր կերպով գրուած են. որոնք քիչ լուսաւորութիւն չեն ընծայեր խնդրոյն։ Հարաւային Սաբան ասորերէն գրուած է Շապա և արաբերէն Սապա։ Իսկ արևելեանն՝ ասորերէն Ծոպօ (Տզոպօ) և արաբերէն Սոպահ (Զուպա), որոնք նոյն են ըստ ձայնին, լատին Սոփենէ և հայ Ծոփք անուանակոչութեան հետ։ Գիտեմ որ ոմանք այս արևելեան Սաբան կը համարին Դամասկոսի մօտ քաղաք մը. կան որ կը նոյնացնեն Հալէպի կամ Մծբնայ հետ։

Արևելեան Սաբայի յիշատակը կ'ըլլայ 1070–1030 թուականաց մէջ Քրիստոսէ առաջ. կրնայ մտածուիլ՝ որ անիկայ Նպատ (Նինփատ) լեռնէն սկսելով կը տարածուէր դէպ հարաւ, և կը բովանդակէր իր տէրութեան մէջ Խարբերդ, Արկանա, Սևերէկ, Մելիտինէ, Բերիա, Պեհեսնի, թերևս նաև Ուրֆա գաւառները։ Կրնայ ըլլալ որ Ծոփացւոց բնակութիւնը յառաջագոյն նշանակուած երկրին հարաւային բաժնին մէջ ըլլալով, ապա Դաւիթէն յաղթուելնէն ետև՝ հիւսիսային բաժինն անցած ըլլան։ Չիարդ և իցէ՝ Ծոփաց գաւառին գոյութիւնը նոր և անծանօթ չէ։

Սոլահ, Ծոպօ, Սոփենէ, Ծոփք տէրութեան յիշատակը կ'ըլլայ Ա. Թագաւորութեանց մէջ Սաւուղայ ժամանակ, յորում իբր 1020 *տարի Քրիստոսէ առաջ Ռոհոպ թագաւորը միջամտութիւն ըրաւ Ասորիքի գործոց։ Ընդարձակ է ասոր յաջորդ՝ Հատատ — Եզերի (Ադրաազար) գործերն Բ. Թագաւորութեան մէջ Դաւթի ժամանակ։ Սա շատ զօրացաւ, տարածեց իր տէրութիւնը, մանաւանդ դէպ հարաւ Ասորիքի կողմերն. և շատ թագաւորներ և իշխաններ իրեն նիզակակից և հարկատու եղան։ Ապա իր պետութիւնը հաստատելու համար միջին Եփրատայ վրայ՝ Դաւթի դէմ պատերազմի ելաւ ։ Եմաթայ (Համայի) ճակատը ձախորդ գնաց։ Հատատ—Եզէր կորոյս* 1000 *կառք,* 6000 *հեծեալ,* 20,000 *հետևակ։ Այս առաջին ճակատէն ետև նոր փորձ մ'ընելու դիտմամբ, կամ նախընթաց պարտութեան վրէժն առնելու մտքով, իր նիզակակից թագաւորաց հետ նորէն պատրաստուեցաւ կազմեցաւ, և Սովփակ և Եղամ զօրավարաց հրամանատարութեամբ՝ հզօր բանակ մը գործելու սկսաւ։ Բայց այլ և այլ ձախորդութենէ ետև որոշիչ ճակատամարտն եւս կորաւ անհնարին կոտորածով. ի լրումն աղէտից Սովփակ սպարապետն անգամ ինկաւ վիրաւոր։ Դաւթի մեծանուն զօրավարներն և Յովաբ դիմեցին մինչև Եփրատ և աւելի առաջ, գրաւեցին Հատատ-Եզրի քաղաքներն, որոնք են Պէթէ (Պաթնէ), Պէրօթա (Պիրթա, Պիրէճիկ). Թէպա (Թզեպահ, Ծոփա), Դու Քուն, Մատէրա (Մապսակ կամ Թապսակ, Մատէրէթ) քաղաքներէն շատ աւար առին. նիզակակից իշխանք թօթափելով, մտան Դաւթի ծառայութեան. ինքն իսկ Հատատ-Եզէր ճարը հատնելով հարկատու եղաւ Իսրայէլի թագաւորին, և ձեռքէն ելան իր նիզակակիցներն և հարաւային գաւառները յամի* 1030։ *Իսրայէլի պետութեան հզօր ժամանակը շատ երկարատև եղած չէ, և ոչ իրենց այս վերին իշխանութիւնը։ Վասն զի Ասորեստան վերստին նորոգելով իր հզօր զօրութիւնը, դարձեալ նոյն կողմերը իրենց վերին իշխանութեան ներքև անցած էին։ Հողեփեռն Ասորեստանի սպարապետը կը նուաճէ Մելութի (Մելեդա, Մելտինէ) հոյակապ քաղաքը։ Յիշեալ սպարապետին Բետիղուայի (Պիթուլա) քով Եսդրելոնի մէջ խորտակուելէն ետև՝ մա-*

րական գերիշխանութիւնը տեղակալեց ժամանակ մը։ Վերջապէս Մեծին Կիւրոսի և մանաւանդ Դարեհ Վշտասպեայի ժամանակ՝ նման բաժանում եղած է։ Քսենոփոն կը խօսի Ծոփաց աշխարհին Տրիբազ իշխանին վրայ, որ Պարսից արքունեաց մէջ բարձր դիրք ունէր. իրեն յաջորդներէն եղաւ Դարեհ Կոդոման գահաժառանգ իշխանը, որ ապա թագաւորեց Պարսից գահուն վրայ։

Մեծին Աղեքսանդրի աշխարհակալութենէն ետև, որ գրաւեց բոլոր Հայաստան, Հայք շուտ նորոգեցին իրենց պետութիւնը նախկին ամբողջ սահմանաց վրայ, արևելեան և արևմտեան գաւառներով։ Սելևկիացիք բնականապէս հաճ չէին, զի իրենց սեփականած էին արևելից ինքնակալութիւնը։ Պատերազմ բացաւ Անտիոքոս մեծն և ձեռք բերաւ մեծ յաղթութիւն մը. և Հայաստանը տկարացնելու համար երկուքի բաժնեց զայն. արևելեան հիւսիսային մասը տուաւ Արտաշէսի, և արևմտեան հարաւային մասը՝ Դարեհի կամ Զարեհի, որ միւսէն նուազ ըլլալուն համար կոչուեցաւ Փոքր Հայք։ Եւ այս իշխանութիւնը կը փակէր իր մէջը, գրեթէ Խորենացւոյն Գ. և Դ. Հայք անուանած երկու գաւառները միայն. այսինքն Մելիտինէն իր շրջակայիւքն և Խարբերդի այժմեան գաւառին մեծ մասն, որ Եփրատէն անդին է, և ուրիշ տեղերով, որ հին Ծոփքէն շատ տարբեր չէր։ Իսկ աշխարհին մայրաքաղաք եղաւ Ծոփք՝ Եփրատայ եզերքն, ուր Դարեհ կամ Զարեհ հաստատեց իր իշխանութեան աթոռ։ Զարեհին տոհմը իշխեց նոյն կողմերը մինչև 70 տարի Քրիստոսէ առաջ։ Իրեն յաջորդ կը համարուի Միհրափարզան կամ Մորփիւլիկ։ Վերջինն եղաւ Արդէն կամ Արտանէս կամ Արշակ, որուն ձեռքէն առաւ Տիգրան Մեծն։

Իսկ Հայոց արևելեան գաւառներուն՝ որ կոչուեցան Մեծ Հայք, կուսակալ կամ նախարար անուանուեցաւ Արտաշէս։ Այս երկու Հայ պետութիւնները դարձեալ Նպատ լեռներով կը բաժնուէին իրարմէ։

Անտիոքոս մեծ յամին 190 Հռովմայեցւոց դէմ պատերազմի ելլելով, Մակնեսիայի քով տրուած որոշիչ ճակատամարտին մէջ բոլորովին բեկաւ իր զօրութիւնը։ Արտաշէս և Զարեհ յաղթողներուն հետ բարե-

կամութեան դաշն դնելով Սելևկիացիներէն գլուխ վերցուցին, և թագ կապեցին ամեն մէկն իր բաժինին վրայ և թագաւորեցին, և կը վարէին խաղաղութեամբ իրենց աշխարհքը։

Հատուած երկրորդ

Սելևկիացիք հարկէն սախլուած լուռ կեցած էին Հայաստանի անկախութեան նկատմամբ։ Բայց Անտիոքոս Եպիփան (174 – 164) աթոռ ելածին պէս յամին 174 պատերազմի ելաւ Արտաշէսի Մեծ Հայոց թագաւորին դէմ, որ ի պարտութիւն մատնուելով զոհացուց Անտիոքոսն. այլ համարելով որ անոր այս արշաւանքը Փոքր Հայոց Զարեհ թագաւորին գրգռութենէն եղած ըլլայ, կը խորհէր անորմէ վրէժ առնուլ։ Զարեհ երբոր իմացաւ անոր միտքը, շուտով պատգամաւորներ ճամբեց Արտաշէսի շատ ընծայներով և խաղաղութիւն ըրաւ անոր հետ, և կրտսեր որդին Գորոն անուն՝ պատանդ դրաւ անոր քով։

Ասկից վերջ երբոր Գարեհ կամ Զարեհ մեռաւ (Հ. Միք. Չամչեան Հտ. Ա, Գ․. ԽԱ), Արտաշէս իրեն յարմար առիթ համարեցաւ, և սկսաւ պատրաստուիլ որ յարձակի Փոքր Հայոց վրայ և տիրէ նաև այն մասին։ Այն ատեն Մորփիլիկէս երէց որդի Գարեհի, որ կը նստէր Ծոփաց աշխարհին մէջ, ապաւինեցաւ իսկոյն Կապադովկիոյ Արէթ կամ Արիարաթ թագաւորին քով և անկէ օգնութիւն խնդրեց։ Այն ատեն Արտաշէս դեսպան ղրկեց Արիարաթի, և ըսաւ. ինչ ունիս դու Գարեհի որդւոյն հետ. եկուր միաբանէ ինձի հետ և վերցնենք մէջտեղէն անոր երկու որդիքը. ես կը սպաննեմ Գորոն որ իմ քովս է, և դուն Մորփիւլիկէսն որ քեզի ապաւիներ է, և կը տիրենք իրենց ժառանգութեանը, և Փոքր Հայքը ամբողջ կը բաժնենք մեր մէջ, որչափ սահման որ ունի։

Մտիկ չըրաւ Արիարաթ, մանաւանդ դեսպանաց շատ մը մեղադրական խօսքեր ըսաւ, և յորդորեց որ անանկ անիրաւ գործերէ ետ կենայ։ Իսկ ինքն Արիարաթ արքայ զօրքով ձեռնտու եղաւ և թագա-

ուրեցուց Դարեհի որդին Մորփիւլիկէսը Փոքր Հայք աշխարհին վրայ, ինչպէս կը գրէ Դիոդորոս Սիկիլիացի՝ Հենրիկոս Վաղէսի Քաղուածոց մէջ (325), ուր կ'անուանէ զայն Մորփիւկէն կամ Միհրփուճէն, որ է Միհրոբարզան։

Իսկ Արտաշէս որ կ'ուզէր· Մորփիւլիկի դէմ պատերազմի ելլել, կենաց վերջ հասած ըլլալով մեռաւ, և իրեն յաջորդեց Արտաւազդ որդին, ինչպէս կը գրէ Ստրաբոն (Գլ. ԺԱ)։ Ասոր ժամանակը երևելի է Հայաստանի մէջ Դատ իշխանը, զոր Պոլիբիոս Միհրդատ կը կոչէ։

Հիմա նորէն կը դառնամ Մորփիւլիկէս կամ Միհրոբարզանի։ Նոյն ժամանակ՝ ինչպէս յայտնի է՝ Մեծ Հայաստանի մէջ կը թագաւորէր Արտաշէսի որդին Արտաւազդ։ Խորենացւոյն պատմութեան կարգը կը պահանջէ՝ որ Պարթևաց Արշակ Մեծ թագաւորը յաղթէ Արտաւազդի և գրաւէ անոր երկիրները և իր եղբայրը Վաղարշակը կարգէ հոն թագաւոր։ Սա ըստ պատմութեան նոյն Խորենացւոյն «Զօր բազում յԱտրպատականէ և ի Հայոց գումարէ, և զբոլոր կողմն աշխարհիս միաբանեալ՝ հասանէ առ սահմանօք Խաղտեաց. քանզի Ղազիկա, Պոնտոս, Փռիւգիա, Մաժաք և այլք ոչ գիտելով զհամ պատերազմին Արշակայ, առ Մակեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանց հաստատուն պահէին։ Վասն որոյ ոմն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ կողմանս զայսոսիկ, գրգռի պատերազմ ընդ Վաղարշակայ. բայց պատահին միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնի՝ որ այժմ ասի Կողոնիա. և մօտեալ ի միմեանս ձիգ ասպարիզօք միջոցացն՝ ամրանան երկոքին կողմանքն բովանդակ աւուրս։

«Զկնի անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ կողմանց երկոցունց՝ գրգռի պատերազմ ի մերմէ կողմանէ. վասն որոյ յարդարէ կամայ կամ ակամայ և Մորփիւղիկեան զիւրոյ կողման ճակատն, հասանէ յանդուգն յարձակմամբ. քանզի այր սրտեայ էր, և անդամովք երկար և ընդ իբեարս պատշաճ, զոյգ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով։ Ամրացեալ պղնձով և երկաթով և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ թուով, տապաստ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս ի մանկանցն Վա-

ղարշակայ. և ջանայր անցանել հասանել յարքայն Հայոց ի մէջ խմբի մեծի և զինու ամրացելոյ: Եւ մօտ անցեալ յաջողեցաւ ձգել զուռինն, քանզի էր կորովի և երկայնաձիգ, հեռի զաշտէն արձակեալ որպէս ի թռիչս սրաթև հաւուց: Այլ ոչ ինչ կարի յամեցին ընդ մէջ անցանել արք քաջք և անուանիք ի զարմից Հայկայ և Ասորեստանւոյն Սենեքերիմայ, և աշտէիւ հարեալ սաստկեն զքաջն, և զզօրսն առաջի արկեալ ի փախուստ դարձուցանէին. բազում վտակս արեան հեղեալ՝ զերկիր ոռոգանէին իբր հեղեղք անձրևաց: Եւ յայնմ հետէ խաղաղեալ դադարէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ. և Մակեդոնացւոցն դադարէր գոռ: Եւ այս այսպէս կատարեալ կարգէ զկողմանս Մաժաքայ, զՊոնտացիս և զԵգերացիս, դառնայ ի Հայս»: Մինչև հոս Խորենացւոյն խօսքերն են, զորոնք Հ. Միքայէլ հետևեալ կերպով կը պարզէ:

«Իբրև լուան զարշաւանս Վաղարշակայ Խաղտիք, Լազիկիացիք, Պոնտացիք, Կապադովկացիք, Փռիւգացիք և այլք, որք հաստատուն դաշամբ խաղաղութիւն ունէին ընդ Սելևկիացիսն, խռովեցան յոյժ. և ամենեքին առ հասարակ միաբանեցան տալ պատերազմ ընդդէմ Վաղարշակայ: Եւ եղև նոցա առաջնորդ Մորփիւլիկէս քաջ, որ երբեմն թագաւորն էր փոքուն Հայոց, ըստ որում յիշեցաք ի վերոյ երես 207» (*Հտ. Ա. էջ* 209):

Հոս կայ մտադրելու արժանի քանի մը կէտ. Ա. լաւ կ՚ըլլար կարծեմ որ Հ. Միքայէլ ըսէր «Որդի Մորփիւլիկեայ երբեմն Թագաւորի Հայոց» համաձայն Խորենացւոյն՝ որ Վաղարշակայ դէմ պատերազմի ելլող զօրավարին անունը կը դնէ Մորփիւլիկեան և ոչ Մորփիւղիկէս. և ասանկ աւելի լաւ կը յարմարէր Վաղարշակայ նշանակուած ժամանակին. մանաւանդ որ Խորենացին պատերազմի մէջ կը ներկայացնէ Մորփիւղիկեանն իբր կորովի և յանդուգն երիտասարդ մը. Մորփիւլիկէս նոցա ժամանակ ծեր ըլլալու էր:

Բ. Բայց իրօք ո՞վ է այն քաջն, որ կրցաւ իր ներքև գումարել այնչափ ազգեր: Խորենացին կ՚անուանէ ոմն Մորփիւլիկեան իբր անծանօթ անձ մը. Ասողիկ կ՚անուանէ Մորփիւղիկ՝ «որ բռնացեալ ունէր,

կ՚ըսէ, զաճմանս Մաժաքայ և Պոնտոսի»։ Ոմանք սակայն նոյն համարիլ կը յօժարին Միհրոբարզանայ հետ՝ զոր Դիոդոր կը յիշատակէ իբր իշխան Ծոփաց։ Նոյն ժամանակը կար մէկը Կապադովկիոյ մէջ Ողոբեռն անունով, որ կը պնդէր թէ ինքը Կապադովկիոյ թագաւորին որդին է, և այս կերպով յաջողեցաւ նոյն թագաւորութեան մէկ մասն ձեռք անցունելու, բաժնելով Արիարաթ Զ.ի իբր իր եղբօրը հետ, բայց ասոր վրայ չպատմուիր ասանկ գործ մը։

Գ. Թէ ճակատամարտն ուրտեղ եղաւ՝ Խորենացին կը դնէ Մծբին՝ Վաղարշակայ աթոռը՝ Միջագետաց Միգդոնիա գաւառին մէջ։ Հետևաբար անկէց բազմութեամբ զօրաց յառաջ քալեց, որ արշաւէ Հայոց արևմտեայ աշխարհն[1]. կամ գոնէ նոյն ատեն նուաճեց և անցաւ Եփրատն և յառաջացաւ դէպ ի Կողոնիա, (այսինքն այն տեղն կամ աւանն որ ետքէն Կողոնիա կոչուեցաւ), Փոքր Հայոց մէջ. անշուշտ այժմու Կանգալ աւանն է, ինչպէս կը թուի ինձ, և ոչ նոյն աշխարհին հիւսիսային Կողոնիան։ Միայն պէտք է յաւելուլ՝ որ Ծոփաց թագաւորութիւնը նոյն ժամանակ չվերցուեցաւ, այլ շատ ետքը։

Դ. Յայտնի կերպով գիտենք՝ որ նոյն ժամանակ Եփրատայ արևմտեան կողմը գտնուող ազգերը չունէին միաբանութեան դաշինք՝ ոչ Մակեդոնացւոց և ոչ Սելևկեանց հետ, այլ առանձին պետութիւններ էին Հռովմէական հասարակապետութեան վերին ազդեցութեան ներքև։ Անոնց վրայ ասանկ արշաւանք մը լռութեամբ չէր կրնար անցնիլ, թող թէ «Յայնմ հետէ խաղաղեալ դադարէր երկիրն՝ նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և Մակեդոնացւոց դադարէր գոռ»։ Մակեդոնացւոց գոռը վաղ դադրած էր, և նոյն պետութիւնն ալ արդէն գաւառ եղած էր Հռովմայեցւոց։ Կարելի չէր նաև այն՝ թէ «Եւ այս այսպէս կատարեալ, կարգէ զկողմանս Մաժաքայ, զՊոնտացիս և զԵգերացիս»։ վասն զի Մաժաք ունէր իր թագաւորն Արիարաթ Զ. Փիլոպատոր, նոյնպէս և Պոնտոս իրը, Միհրդատ Զ. Եւերգետէսը։ Եւ ժամանակակից

1. Եփրատին աջակողմն, և ասկէ կը հետևի՝ որ արդէն նուաճած էր Ծոփաց աշխարհը։

պատմութիւնք չեն նշանակեր ասանկ երևելի գրաւում մը Հայ կամ ուրիշ հզօր թագաւորի մը կողմէ. մանաւանդ որ նոյն կրկին պետութիւնները տևեցին տակաւին բաւական ժամանակ, և Պոնտոսինը հզօրագոյն ևս եղաւ քիչ մը ետքը:

Այս խորհրդածութիւններէ ետև հարկ է աւելցնել՝ որ արդի քննախօսները՝ Հայաստանի վրայ Վաղարշակ Պարթևի թագաւորութիւնն անստոյգ կը համարին: Մեր սահմանէն դուրս է ատանկ ծանր խնդրոյ մը մէջ մտնելը. բայց ինչ որ ըլլայ այն, այս ստոյգ է՝ որ Կողոնիոյ ճակատամարտն իր ամէն պարագայներովը Փոքր Ասիոյ պատմութեան մէջ տեղ մը զետեղելն՝ անշուշտ դիւրին բան մը չէ:

Այսչափ այս նիւթին վրայ համառօտ. դառնամ տեսնել նաև ինչ ինչ նոր՝ յիշեալ պետաց վրայ: Սկիզբը դրի Զարեհ կամ Զարիադրէսի յաջորդները մինչև վերջն՝ որչափ կարելի էր. իսկ հոս պիտի յիշեմ Խորենացւոյն նշանակածն: Մեկնութեամբն Հ. Միքայէլ Վարդապետի՝ Գարեհէն ետև կը դրուի՝ Մորփիւլիկ, Միհրոբարզան, զորոնք մի և նոյն անձ կը համարին ոմանք. եթէ Խորենացւոյն յիշած «ոմն Մորփիւլիկեանն» այլ անձ կարծուի, կամ թերևս որդի Մորփիւղիկեսի, կ'ըլլան չորս անձինք 190–140 տարին:

Ծոփաց տէրութիւնը տևած է 190էն մինչև 70 տարի Քրիստոսէ առաջ. և իր ծանօթ պետերը յիշեր եմ առաջ. հիմայ առաջիկայ հատուածին մէջ պիտի խօսիմ միւս մասին վրայ:

Հատուած երրորդ

Հ. Միքայէլ Վարդապետ Չամչեան կը գրէ թէ Արտաշէսի որդւոյն Արտաւազդ թագաւորին օրերն, երևելի էր Հայոց աշխարհքին մէջ Գատ իշխանը, զոր Պոլիբիոս Միհրդատ կը կոչէ: Բայց նոյն Հ. Միքայէլին ժամանակագրութեան իսկ համեմատ պէտք է ըսել որ Միհրդատ կամ Գատ իշխանը ժամանակով առաջ էր Արտաւազդայ թագաւորելէն: Ո-

րովհետև Միհրդատայ վրայ խօսք կ'ըլլայ պատմութեան մէջ Մեծին Անտիոքոսի որդւոյն Սելևկոս Փիլոպատորի ժամանակներն որ թագաւորեց 187 – 176․ ուր կ'անուանի Միհրդատ նախարար փոքուն Հայոց, ինձ կը թուի արևմտեայ հիւսիսային մասին, այսինքն անոր, զոր Պտղոմէոս կը ծրագրէ Սեբաստիոյ հետ մէկ տեղ, որ անուանեցաւ առաջին Հայք։

Նոյն ժամանակները փոքր Ասիոյ թագաւորաց մէջ մեծ պատերազմ բացուեր էր․ և Միհրդատ նիզակակից էր Փառնակ Բ․ Պոնտոսի թագաւորին հետ, Եւմենէսի և անոր դաշնակցաց դէմ․ պատերազմը տևեց երկայն ժամանակ։

Պոնտոսի թագաւորութիւնն այս առենները քանի առաջ կ'երթար աւելի կը զօրանար․ և Փառնակ Բ․ որպէս զի աւելի ընդարձակէ զայն պաշարեց և առաւ, Եւքսինեան Պոնտոսի եզերքն եղած Սինոպ քաղաքը որ Մելիտէի գաղթական էր։ Առաւ նաև անոր գաւառն, որ մինչև Ալիսի բերանը կը տարածուէր․ նոյնպէս Տրապիզոն, Կոտիորա և Կիրասոն քաղաքներն, որ Սինոպցիներուն ձեռքն էին։ Այս պատճառաւ փոքր Ասիոյ թագաւորներն՝ Եւմենէս Պերգամանի, Արիարաթ Կապադովկիոյ և Պրուսիաս Բիւթանիոյ թշնամացան իրեն հետ։ Թէպէտ թագաւորաց վէճն Հռովմայ ծերակուտին ատեանն եղած էր, բայց Փառնակի խորհուրդն այն էր տարածել իր պետութեան սահմանները։ Ղրկեց ատոր համար իր Լևկրիտ զօրավարը Գաղատիա՝ տասը հազար զօրքով․ նաև ուրիշ շատ զօրք գումարելով իր քով, անձամբ արշաւեց Կապադովկիա։ Երբ այս գործոց լուրն Եւմենէս առաւ՝ բարկացաւ և իր Ատտաղոս եղբօրը հետ աճապարեց օգնութեան հասնիլ նիզակակցին․ նաև Արիարաթ Կապադովկիոյ թագաւորն իր զօրքերովը եկաւ միացաւ անոր հետ Պառնասի քով, և միաբան արշաւեցին Մովկիսենաց երկիրը՝ բայց գործի ձեռք չը զարկած, հասան Հռովմի պատգամաւորներն, և անոնց խնդրովը զինադադար եղաւ, և երկու կողմէն դեսպաններն եկան ժողվեցան միասին Հռովմէական պատգամաւորաց հետ խաղաղութիւն ընելու համար։ Բայց Փառնակի դեսպանաց խօսքերէն յայտնի եղաւ թէ նա կամք չունէր

պատերազմը վերջացնելու. ուստի և Եւմենէս սկսաւ աւելցնել իր պատրաստութիւնները. բայց և ոչ Փառնակ անգործ կեցած էր: Սա Եւմենէսի զօրութիւնը բաժնելու համար հրաման ըրաւ Լեկրիտ զօրավարին որ մտնէ Բիւթանիոյ սահմանը և պաշարէ Դէոս քաղաքը, զոր և առաւ երկար դիմակալութենէ ետև, ինչու որ քաղաքին պահապանները անձնատուր եղան Լեկրիտի:

Զարմանալի էր Փառնակի այս գործը, բայց իր վստահութեան առաւելութիւնը անկէց յուէտ յառաջ կու գար՝ որ Փոքր Հայոց Միհրդատ Սատրապին գործակցութենէն ապահով եղած էր, նաև ծածուկ դաշն յարձակողական և պաշտպանողական կռեր էր Ասորիքի Սելեկոս Թագաւորին հետ, որ յամին 187 յաջորդեր էր հօրը Մեծն Անտիոքոսի, և կ'ուզէր շուտով ազատուիլ այն ծանր պայմաններէն զոր Հռովմայեցիք Ապամիոյ հաշտութեամբ դրած էին իր հօրը վրայ. կը պատրաստուէր հզօր բանակով անցնիլ Տաւրոսն. և յանկարծ ետ կեցաւ այն գործէն, և այսպէս երեսի վրայ թողուց Փառնակ Պոնտոսի Թագաւորն, և Միհրդատ Հայոց նախարարն, որոնք թէպէտ մինչև նոյն ատեն յառաջադէմ էին, և շատ տեղեր առած էին իրենց թշնամիներէն, սակայն կը տեսնէին որ Հռովմայեցիք կը պատրաստուէին օգնել Եւմենեանց, և իրենց հզօր օգնականը Սելեկոս լքեր էր զիրենք. զարհուրեցան և անձապարանօք խնդրեցին զինադադար: Եւմենէս և Արիարաթ յանձն առին և ամէն մէկը դարձաւ իր երկիրը, և դատը նորէն մատուցին Հռովմայ ծերակուտին ատեանը: Բայց երկու կողմէն մեծամեծ պատրաստութիւններ կ'ընէին, և երբ տեսան որ բանակցութիւնները յաջող ելքի մը չէին յանգիր, Եւմենէս, Արիարաթ և Պրուսիաս պնդեցին իրենց նիզակակցութեան դաշինքն, և աւելի զօրաւոր բանակով և բազմաթիւ նաւատորմիղով, ծովէն և ցամաքէն քալեցին գնացին Պոնտոսի վրայ նոր ծրագրով մը յարդարելով պատերազմին կարգաւորութիւնը. որ ահարեկ ըրաւ Փառնակն, որ դեսպան ղրկելով Եւմենէսի և Արիարաթի՝ խաղաղութիւն խնդրեց: Անոնք ոչ միայն չմերժեցին խնդիրն այլ և իրենք դեսպան ղրկեցին և շատ մը բանակցութենէ ետև կնքեցաւ խաղաղութեան դաշինքն իրենց մէջ, որ է հետևեալն:

«Մշտնջենաւոր խաղաղութիւն ըլլայ՝ Եւմենէսի, Պրուսիասայ և Արիարաթայ մէկ կողմէն, և Փառնակայ և Միհրդատայ Հայոց նախարարի միւս կողմէն: Փառնակ չմտնէ Գաղատիա որ և իցէ պատրուակով: Գաղատացւոց հետ իր դրած ամէն դաշինքներն իբրև չեղեալ համարուին: Փառնակ հանէ իր զօրքը Պափղագոնիայէն և դարձունէ անկից գերած բնակիչները, զէնքերը, կազմածները և ուրիշ բաներ զորոնք անկից վերցուցեր է: Նա դարձունէ Արիարաթէն յափշտակած երկիրները և անոնց մէջ եղած կարասին, և պատանդները: Յանձնէ Եւմենէսի Պոնտոսի եզերքն եղած Դէոս քաղաքը: Գերիներն արձակէ առանց փրկանաց, ամէն գերիներն և փախըստականները: Պափղագոնիոյ Մորզիոս թագաւորէն հանած արծաթն, ինչքերը, նոյնպէս Արիարաթէն առնուածները՝ դարձունէ իրենց: Եւ պատերազմի ծախուց փոխարէն հատուցանէ այդ երկու թագաւորաց ինը հարիւր տաղանդ»: Վերջին պայմանն էր որ, «Միհրդատ երեք հարիւր տաղանդ վճարէ. որովհետև Եւմենէսի հետ կռուած դաշանց հակառակ պատերազմ ըրած էր Արիարաթի դէմ»: Այս դաշնադրութեան կամ հաշտութեան մասնակից եղան նաև ուրիշ մէկ կամ միւս կողման նիզակակից իշխանք, Եւրոպա և Ասիա, որոնց մէջ էր նաև Հայաստանի մեծագոյն մասին թագաւորն Արտաշէս. և մերձաւոր կողմերու իշխան մը Ակուսիլոք Թերևս Ծոփաց պետը: Նշանաւոր այս հաշտութիւնն եղած է յամին 180 Քրիստոսէ առաջ:

Ժամանակ մ'ետքը Պերգամանի թագաւորն Ատտալ Բ. պատերազմի բռնուեցաւ Պրուսիաս Բ. Բիւթանիոյ թագաւորին դէմ. ուր դարձեալ կ'ըլլայ յիշատակ Միհրդատ Նախարարի փոքր Հայոց: Պատերազմն սկսաւ յամին 156 (ոմանք կը համարին 166ին որ ճիշդ չթուիր) յաջորդ տարին Ատտալ պարտեցաւ և դիմեց Հռովմէական հասարակապետութեան պաշտպանութեան, որով կռուոյն սաստկութիւնը թուլցաւ: Ատտալ այս պարագան իր օգտին գործածելով ձմեռ առեն գումարեց հզօր բանակ մը, զի նիզակակից էին իրեն Արիարաթ Զ. Փիլոպատոր Կապադովկիոյ թագաւորն, և Միհրդատ փոքր Հայոց նախարարն, որոնք բազմաթիւ

գունդեր ղրկեցին իրեն հեծեալ և հետևակ, Արիարաթի որդւոյն Գեմերի հրամանատարութեամբ։ Այնուհետև կը սկսէին ձախողիլ Պրուսիասի գործերն որ հարկեցաւ ելլել Պերգամանի սահմաններէն և երթալ պահպանել իր աշխարհն։ Եւ միջնորդութեամբ հռովմէական պատգամաւորաց կնքեցաւ հաշտութեան դաշինքը յամին 154 (164) ի նպաստ Ատտալի, որ Արիարաթի և Միհրդատի նիզակակիցն էր։

Բ. — ՓՈՔՐ ՀԱՅՔ Կ'ԻՅՆԱՅ ՄԻՀՐԴԱՏԱՅ ԵՒ ՏԻԳՐԱՆԱՅ ՁԵՌԱՑ ՆԵՐՔԵՒ. – ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄ

Պոնտոսի հզօր թագաւորը Միհրդատ Եւպատոր երբոր զօրացաւ իր թագաւորութեան մէջ, աչքը դարձուց փոքր Հայոց վրայ, այսինքն հիւսիսային արևմտեայ մասին վրայ, ուր կ'իշխէր առաջ Միհրդատ Նախարար, և զոր այս ժամանակ Անտիպատրոս Սիսիս գրաւեց Սեբաստիոյ գաւառին հետ. մանաւանդ թէ ինչպէս կը գրուի իր պատմութեան մէջ, Միհրդատ Պոնտոսի վրայ թագաւոր հաստատուելէն վերջ, ստիպեց փոքր Հայոց թագաւորն Անտիպատրոս Սիսին՝ որ թողու յանձնէ իր երկիրներն, որոնք էին Եփրատայ Արևմտեան և Մելոսի հիւսիսային կողմը, Սեբաստիոյ, Նիկոպօլսի, Ակնայ, Արաբկերի և Կառնակայ գաւառներն, ինչպէս կը թուի ինձ։

Միհրդատ այս երկիրները ձեռք անցունելէն վերջ կանգնեց փոքր Հայոց մէջ, որ իր իշխանութեան ներքև էր՝ վաթսուն ղղեակ որոնց մէջ բաժնեց իր գանձերն։ Իսկ Սեբաստիա որ այն ատեն Կապիրա կը կոչուէր, իրեն համար պալատ մը կանգնեց որ յիշեալ ղղեակներէ մին էր. միւս ղղեակներն ընդհանրապէս կը գտնուէին Պարխարեան (Ջանը–Պէլ) լերանց անցքերուն վրայ։

Այս գաւառաց մէջ չէր փակուէր Զաորիատէսի կամ Զարեհի կալուածները, որ Հայոց աշխարհին հարաւային արևմտեայ կողմն էր Ծոփաց Մելիտինէի և այլ տեղեաց մէջ և կ'իշխէր հոն Զաորիատէսի

տոհմն, որ 100–120 տարի մը տեւած էր, մինչեւ Արտէն կամ Արշակ՝ զոր սպաննեց Հայոց Մեծաց թագաւորը Տիգրան Բ. Մեծն եւ իր տէրութեան ներքեւ գրաւեց անոր գաւառներն որոնք մաս կը համարուէին Փոքուն Հայոց։ Այս գործոյն ժամանակն այլ եւ այլ կերպով կը դնեն. կը յիշեմ հոս Ալպէ Կոամպոնի Սրբազան աշխարհագրութեան մէջ գրածը (Հտ. Ա. էջ 21). այսպէս, Արտանէսի ժամանակ՝ որ վերջին յաջորդն էր Զարիադէսի, Քրիստոսէ 70 տարի առաջ՝ վերցուեցաւ Փոքր Հայոց թագաւորութիւնը։

Ցամին 74 Քրիստոսէ առաջ. Պոնտոսի թագաւորը Միհրդատ Եւպատոր՝ երրորդ անգամ պատերազմ բացաւ Հռովմայեցւոց դէմ, անոնց ընթացքէն բռնադատուած։ Մեծ յաջողութեամբ յառաջ քալեց, Բաղկեդոնի քով զարկաւ խորտակեց Կոտտաս հիւպատոսին զօրութիւնը ծովու եւ ցամաքի վրայ. եւ փոխանակ իր յաղթող բանակովը Լուկուլլոսի վրայ իյնալու, իբր արհամարհելով զայն՝ պաշարել տուաւ Կիզիկոնն, որ երկայն դիմակալեց, եւ իր բանակը սովի բռնուելով, հարկեցաւ պաշարումը վերցնելու։ Իր ընկրկող զօրքը մեծ հարուած մը կրեց Ասէպոսի քով։ Ձմեռը վրայ եկած ըլլալով, ահեղ ալեկոծութեան մը զոհ գնաց ծովու եւ ցամաքի վրայ մնացած զօրութիւնը։ Հռովմայեցիք ամէն կողմէն խաղացին Պոնտոսի վրայ, ուր հասաւ Միհրդատ իբր մինակ։ Ծուտով պատգամաւոր ճամբեց Տիգրան Հայոց թագաւորին, իր Մագարէս որդւոյն եւ ուրիշ բարեկամաց։ Իսկ ինքը Պարխարեան լեռներն անցնելով եկաւ Կապիրա։ Եւ երբ Հռովմայեցիք Սինոպի, Ամիսոսի եւ Եպատորիայի պաշարմամբ ժամանակ կը կորսնցնէին, Միհրդատ հանգարտ նստելով Կապիրա կը հաւաքէր իր բանակին մնացորդներն, եւ կը կազմէր կը յարդարէր նորէն իր զօրքերը պատերազմի։ Անանկ որ երբ մատնութեամբ Փէնիքսի, զոր Միհրդատ Պարխարխի կրճերուն պահպանութեան դրած էր, Լուկուլլոս աներգել անցաւ նոյն լեռներն եւ իջաւ Կապիրայի դաշտավայրը, թագաւորը կը սպասէր անոր նոյն տեղը քառասուն հազար հետեւակ եւ չորս հազար ձիաւոր զօրքով։ Առաջին անգամ հեծելազնդի բախում մը տեղի ունեցաւ, յորում թագաւորին զօրքն առաւելութիւն

ձեռք բերաւ. Նոյն յաջողութիւնն ունեցաւ նաև հետևակազօրը: Բայց վերջը գնդապետաց անզգուշութենէն հեծելազօրաց մէկ մասը կորսնցնելով, և չյուսալով այնուհետև յաղթել Հռովմէական բանակին, խոյս տուաւ Տիգրան թագաւորին քով ի Հայաստան:

Լուկուլլոս ազատ մնալով, առաւ Կապիրան և ուրիշ շատ մը բերդեր, որոնց մէջ գտաւ առատ գանձ: Նաև թագաւորին քոյրն Նեսա, ինչպէս և անոր ազգականներէն ոմանք՝ իր ձեռքն ինկան:

Պոնտոսի թագաւորութիւնն ընկճուած էր. և Հռովմայ սպարապետն յամին 69 Ծոփաց աշխարհէն անցնելով մտաւ Մեծ Հայաստան և երբ կը քալէր դէպի Տիգրանակերտ, Հայոց թագաւորը տուաւ Միհրդատայ 10,000 հեծեալ որ մտնէ Փոքր Հայք, և ինքը խրոխտանօք մօտեցաւ նոր դաստակերտին՝ բայց բոլորովին անհոգ, ուստի և կրեց մեծ պարտութիւն մը. հետևութիւնն եղաւ Տիգրանակերտի առումը, ձեռնտուութեամբ գաղթական բնակչաց. բայց Տիգրան այս ձախորդութիւններով չէր լքած. նոր կազմութեամբ ցանկեց յաղթականին առջև Հայ պետութեան Արտաշատ բնիկ մայրաքաղաքին ճամբան: Իսկ Լուկուլլոս որ մինչև Հայաստանի սիրտն մխուած էր, Արածանիի քով տրուած մեծ ճակատամարտէն ետև հարկեցաւ ետ դառնալ իր յառաջացած ճամբէն և Մծբինն առնելով՝ ժամանակ մը կեցաւ հոն հանդարտ, մինչդեռ Տիգրան կը պատրաստէր նոր արշաւանքն հզօր բանակով դէպ ի Կապադովկիա:

Երբոր Մեծ Հայոց մէջ այս գործերն կը կատարուէին՝ Միհրդատ իրեն յանձնուած տասն հազար Հայ ձիաւորով, և Փոքր Հայքի բնակչաց ձեռնտուութեամբը, յաղթեց երկու անգամ Փաբիոսի Ադրիանոսի, և եկաւ պաշարեց Կապիրան, և իմանալով որ Տրիարիոս արագ օգնութեան կը հասնի պաշարելոց, թողուց այն քաղաքն և ետ քաշուեցաւ: Այս երկրորդ անգամ Փոքր Հայք ասպարէզ եղաւ պատերազմի, որով մեծ վնասներ կրեց այն աշխարհը:

Գարնան (67) Միհրդատ ստուարացնելով իր բանակն ինքն՝ ելաւ որոնելու Տրիարիոսը. և այլ և այլ բախումներէ յետոյ Զիլէ քաղաքին մօտ երկու բանակներն եկան որոշիչ ճակատի մը, մեծ յաղթութիւն

վաստակեցաւ Միհրդատ, սաստիկ կոտրած ըլլալ թշնամեաց զօրքերուն, և մնացածները մղեց տարաւ նետեց Իրիսի եզերքը մեծ ճահիճի մը մէջ։ Այս նշանաւոր պարտութիւնը լսելով Լուկուլլոս անապարեց Պոնտոս համնելու։ Սակայն Տիգրան ևս ահեղ բանակով առաջ կը քալէր։ Լուկուլլոս իր հետը գումարելով նաև Տրիարիոսի գնդին ողորմելի մնացորդը, կը խորհէր արգիլել երկու թագաւորաց իրարու հետ միանալը, սակայն չյաջողելով նաև այս գործոյն մէջ, սրտաբեկ առանձնացաւ Գաղատացւոց երկիրն Ալիս գետին եաև։ Օտար պատմագիրք այս նահանջին ուրիշ պատճառներ կը բերեն զօրավարն արդարացնելու համար, բայց եղած գործն այս է ճշդիւ, և այս պատճառաւ Հռոմ անբաւական դատեցաւ զինքն այն երկու հզօր թագաւորաց դէմ մաքառելու համար։

Յաջորդ տարին (66) զօրավար կարգուեցաւ Հռովմայեցւոց Մեծն Պոմպէոս։ Տիգրան անարգել Կապադովկիան ասպատակելէն ետև դարձեր էր իր երկիրը։ Միհրդատ երեսուն հազար հետևակ և երեք հազար ձիաւորով կեցեր էր իր երկրին արևմտեան սահմանածայրը։ Եւ իր ձեռաց ներքև ունէր բոլոր գաւառներն Ալիս գետէն մինչև Եփրատ, գրէթէ իր ամբողջ նախկին պետութիւնը։ Պոմպէոս Գաղատիա հասնելով բանակին հրամանատարութիւնն իր վրան առաւ, և քալեց Միհրդատայ վրայ և մօտ հասնելով ժամանակ մը դէմ առ դէմ կեցան։ Մինչև որ պարէնի նուազութեան համար ընկրկեցաւ Միհրդատ դէպ ի Փոքր Հայք, եղծանելով ինչ որ իր ետևը մնացեր էր. իր ջանքն էր աւելի ևս մօտենալ Հայաստանի սահմաններուն. որովհետև կը յուսար անկից ընդունիլ հզօր օգնականութիւն, և պարտութեան առեն՝ ապաւէն, ինչպէս եղած էր Լուկուլլոսի ժամանակ։ Սակայն Տիգրան ևս ինչպէս կ'երևէր կամք չունէր շարունակելու պատերազմը, որ մեծ վնաս պատճառած էր իր թագաւորութեան։ Իսկ Պոմպէոս հետամուտ եղաւ և փոփոխ բաղդիւ մրցելէն ետև՝ վերջապէս յաղթող հանդիսացաւ, և հալածական տարաւ զինքն իր առջև, և ճակատամարտին տեղը քաղաք մը շինեց և անուանեց Նիկոպոլիս. Միհրդատ շատ վտանգներէ ազատելով ընկրկեցաւ Փասիսի կողմերը և դարձեալ սկսաւ կազմել իր զօրքը։

Տիգրան ևս հաշտութիւն ըրաւ Պոմպէոսի հետ ամփոփուելով իր հարց սահմանը, որով բոլոր Եփրատայ արևմտեան կողմի երկիրը կը մտնէր Հռովմայեցւոց իշխանութեան ներքև։ Նա և Ծոփքն և Կորդուքը Պոմպէոս առանձին թագաւորութիւն ըրաւ Տիգրանայ համանուն որդւոյն համար, բայց մանուկ իշխանը չհաճելով այդ տուչութեան, բանագնաց ըլլալ սկսաւ իր աներոջ Պարթևաց թագաւորին հետ։ Այն ատեն Պոմպէոս յանձնեց Ծոփքը Կորդուաց հետ Կապադովկիոյ թագաւորութեան. ուրիշները կ'ըսեն թէ յանձնեց Թէոտար Ա. Գաղատիոյ թագաւորին։

Գ. — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ ՀԵՏԶՀԵՏԷ ՍԱՀՄԱՆԱԾ ԿԱՐԳԵՐԸ

Յամին 65 *Պոմպէոս ձմեռն անցուց Ամիսոս, և կարգաւորեց նուաճեալ գաւառաց գործերը. Ծոփաց և Կորդուաց աշխարհները, Մելիտինէն և Կիլիկիոյ մէկ մասը (Կաստաբալայ վիճակը) խառնեց Կապադովկիոյ թագաւորութեան։ Փառնակիոյ և Տրապիզոնի երկիրը մասամբ փոքուն Հայոց (Սեբաստիոյ գաւառին), շնորհուեցաւ Գաղատիոյ Թէոտար չորրորդապետին։ Միհրդատայ Արքեղաւ զօրավարին որդին՝ համանուն հօրը, Կոմանայի քրմապետութիւնը ընդունեցաւ, որ թագաւորութեան հաւասար նուէր մ'էր. Պոնտոսն Հռովմէական գաւառ եղաւ։ Ամէն բան կարգաւորելէն ետև յաջորդ տարին իջաւ Ասորիք, և այն տեղ ևս բարեկարգեց։*

Այս կարգադրութիւնները տևեցին մինչև 49 *Քրիստոսէ առաջ. և նոյն տարին քաղաքական պատերազմ բացուեցաւ Պոմպէի և Կեսարու մէջ։ Փոքր Ասիա առաջնոյն կողմը բռնեց, և Ասիացի զօրաց հետ, նաև Փոքր Հայոց գունդերն եկան խառնուեցան Պոմպէի զօրաց հետ։ Սադիրաքիոնի քով զօրացաւ՝ պատերազմին սկիզբը. բայց ետքը Փարսաղիայի քով բոլորովին խորտակեցաւ իր զօրութիւնը (48ին) և փախաւ Եգիպտոս։ Կեսար անոր ետևէն ինկաւ և Փոքր Ասիա հասնելով նե-*

բողամիտ գտնուեցաւ ամենուն, և հարկին երրորդ մասը շնորհեց և գնաց դէպ ի Եգիպտոս։

Երբ Կեսար պատերազմի բռնուած կը զարնուէր Եգիպտացւոց հետ, Միհրդատի որդին Փառնակ, որ կը թագաւորէր Կիմերեան Պոսփորի մէջ, յարմար ժամանակ համարեցաւ Հռովմայեցւոց քաղաքային կռուին, որ եռապետաց մէջ կը մղուէր, ընդարձակելու իր պետութեան սահմանը. Փանագորիոս քաղաքը՝ զոր Հռովմայեցիք ազատ քաղաք հրատարակեր էին, առաւ և ամբողջ Կողքիսը գրաւեց. անկէ ետքը միտքը դրաւ բոլոր Պոնտոսի թագաւորութիւնը ձեռք բերել. առաւ Սինոպն, ինչպէս նաև ուրիշ շատ քաղաքներ, որոնց ոմանք Թէոտար չորրորդապետին իշխանութեան ներքև էին։ Զարկաւ Կեսարու տեղակալ Դոմետիոս Կալվինոսի զօրքերը, Գաղատացի և Կապադովկացի օգնական գնդերովն. հալածեց իրենց աթոռներէն Հռովմայեցւոց դաշնակից իշխաններն ու փոքր թագաւորները և բարձրացաւ իր սիրտն։

Բայց իր այս յաջողութեան խոչընդոտն եղաւ Պոսփորի մէջ իր Ասանդր տեղակալին ապստամբութիւնը, և կասեցուց իր աշխարհակալութեան ընթացքը։ Այս տագնապալից ժամուն Կեսար իր սովորական շուտափոյթ արագութեամբ վրայ հասաւ. և ականջ չդնելով հաշտութեան խնդրոյն, զոր Փառնակ կը հայցէր մեծամեծ նուէրներով, Զիլէի քով զարկաւ խորտակեց անոր բանակը բոլորովին։ Փառնակ փախաւ գնաց Պոսփոր և հոն պատերազմելով իր հին տեղակալին Ասանդրի դէմ ինկաւ քաջութեամբ։ Իսկ Կեսար այսպէս շուտով Փառնակեան պատերազմն աւարտելուն համար, գրեց այն հակիրճ մեծահռչակ խօսքը, ԵԿԻ, ՏԵՍԻ, ՅԱՂԹԵՑԻ. դարձուց Փառնակէն վտարուած թագաւորներն և իշխաններն իրենց աթոռները։ Կոմանայի մեծ քրմապետութիւնը 120 վտաւան ընդարձակելով նուիրական երկրին սահմանաց վրայ, տուաւ Լիկոմետի, որ Կապադովկիոյ առաջին թագաւորաց զարմէն էր։ Գաղատացւոց թագաւորը Թէոտար կորուսեր էր Կեսարու խնամքն ու շնորհքը. վերցուց անկէ Փոքր Հայքն և տուաւ պարգև Կապադովկիոյ Արիոբարզան Բ. թագաւորին։ Ուրիշ փոփոխութիւններ ևս ըրաւ։

Փիլիպպեան ճակատամարտէն երկու տարի ետքը (40), Անտոնիոս՝ Հռովմայ Երկրորդ եռապետներէն մէկն, Արեւելք գալով, նոր փոփոխութիւններ մտոյց Փոքր Ասիոյ թագաւորաց կարգին մէջ։ Միհրդատի թոռը, Փառնակի որդին Դարեհ՝ ընդունեցաւ Պոնտոսի արեւելեան մասին (Պոլիմոնիոյ՝ որուն յարակից էր Կապիրայի՝ Սեբաստիոյ գաւառը) թագաւորութիւնը։ Եւ Պոլեմոն որ Լաւոդիկէի Հռետոր Զենոնի որդին էր, առաւ Կիլիկիոյ մէկ մասին թագաւորութիւնը, բայց շուտ թողուց այն երկիրն և եղաւ յաջորդ Դարեհի թագաւորութեան։ Քիչ մ'ետքը Անտոնիոս տուաւ իրեն Փոքր Հայքը. բայց ինչպէս ինձ կը թուի՝ ո՛չ բոլորն, այլ մինակ մէկ մասը։

Անտոնիոսի և Հոկտաւիանոսի մէջ մղուած մեծ քաղաքային պատերազմին ատեն, Փոքր Ասիոյ հինգ թագաւորներն որոնք էին Տարկոնտիմոտ Կիլիկիոյ, Ամինտաս Գաղատիոյ, Թէոտար Փիլադելփոս Պափլագոնիոյ, Արքելաւ Կապադովկիոյ և Պոլեմոն Փոքր Հայոց և Պոլեմոնիոյ, անձամբ կամ իրենց զօրավարաց ձեռքով զօրքեր հասցուցին Անտոնիոսի՝ Ակտիա, ուր խմբեցաւ մեծ ծովամարտը Կեսար Հոկտաւիանոսի դէմ։ Անտոնիոսի անհոգութեամբ խորտակեցաւ Նաւատորմն, որ անգլուխ թողլով ցամաքային հզօր բանակը՝ փախաւ Եգիպտոս, զօրաց մէկ մասն այն ատեն յաղթողի կողմն անցաւ և մէկալ մասը ցրուեցաւ։ Նիզակակից թագաւորներէն շատերն իրենց զօրքերովն անցան Հոկտաւիանոսի կողմն. Տարկոնտիմոտ ինկաւ նոյն ճակատին մէջ։ Յաղթողին առջև բաց էր այնուհետև բոլոր Փոքր Ասիա, ուր երբ հասաւ՝ ընդարձակեց Ամինդասի և Արքելաւի երկիրները։ Իսկ Պոլեմոն և Թէոտար իրենց ստացուածքներէն բան մը կորուսած չեն թուիր։ Բայց Հոկտաւիանոս ծանրացասումն ըլլալով Կիլիկիոյ թագաւորին Տարկոնտիմոտի դէմ, չուզեց տալ իր որդւոցը հայրենի ժառանգութիւնին։ Լեւկոմետ պաշտօնանկ եղաւ Կոմանայի քրմապետութենէն և իր տեղը դրուեցաւ Կղէոն Գորդիացի, և ասոր մահուանէ ետև տուաւ Դիւտեւտոսի, որ Ադիատորիքս Գաղատացւոյն զարմէն էր։

Այսպէս Ակտիոնի ճակատամարտէն ետև, որ յամին 32 մղեցաւ,

Սեբաստիա փոքր Հայոց մէկ մասին հետ և անոր վերաբերեալ գաւառներով կը գտնուի Պոլեմոնի ձեռքը։ Սա յամին 26 խոնարհ աղերսով պատիւ ստացաւ անուանուելու բարեկամ և դաշնաւոր Հռովմայ, և հրաման հանեց որ իր թագաւորութեան ամէն թատրոններուն մէջ, առաջին տեղը պահուի Հռովմայ Ծերակուտին անդամոց։

Յամին 21 Հոկտաւիանոս նորէն եկաւ Ասիա, և այս անգամ Ակտիոնի մէջ մեռնող Տարկոնտիմոնտի ժառանգութիւնը Կիլիկիան՝ տուաւ անոր որդւոյն, և փոքր Հայոց մէկ մասը (Հարաւայինը) պարգեւեց Կապադովկիոյ թագաւորին։

Եօթը տարի վերջ (14, Քրիստոսէ առաջ) Պոսփորի մէջ մեծ շփոթութիւն մ'ելաւ. և Պոլեմոնի յանձնուեցաւ երթալ խաղաղել. սակայն չյաջողեցաւ նուաճել երկիրն իր ձեռաց ներքև. ուստի օգնութեան հասաւ Ագրիպպաս և հանդարտեցուց զամէնքը, և անկէ ետև Պոսփոր ինկաւ Պոլեմոնի իշխանութեան ներքև։ Քիչ ժամանակ ետքն երբ Ասպուրկեան խուժադուժ ժողովրդոց երկիրը կ'արշաւէր Կովկաս լեռներուն քով, մեռաւ Պոլեմոն Ա. իբր 14 տարի Քրիստոսէ առաջ։

Դ. — ՊԻՒՏՈԴՈՐԻՍ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ՊՈԼԵՄՈՆ Բ. ԿԸ ԹԱԳԱՒՈՐԵՆ. — ՍԵԲԱՍՏԻԱ ՔԱՂԱՔԻՆ ՎՐԱՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պոլեմոն Ա. թագաւորին տէրութիւնը ժառանգեց այրին Պիւտոդորիս դուստր Նիւսայի Հռետոր Պիւտոդորի որ շատ հարուստ և մեծատուն էր, և որովհետև շատ ժամանակ Տրալլա բնակեր էր, անոր համար Տրալլացի ևս կոչուեցաւ՝ ինչպէս կը վկայէ Ստրաբոն։ Կին ժրագլուխ և բազմարդիւն էր Պիւտոդորիս. ունէր երկու որդի Պոլեմոնէն ծնած. անդրանիկն որ հօրը անուամբ Պոլեմոն կը կոչուէր մօրը հետ թագաւորեց։ Իսկ կրսերը Զենոն, որ աչքը դրած էր Հայոց մեծաց թագաւորութեան, և անոնց հաճելի ըլլալու և սրտերնին շահելու համար, իր զգեստներուն և այլ իրաց մէջ կը ջանար նոյն երկրին սովորութեան

համեմատ ընթանալ. որ և վերջապէս թագաւոր եղաւ Մեծ Հայոց և անուանեցաւ Արտաշէս Գ.: Պիւտոդորիս երկրորդ անգամ ամուսնացաւ Կապադովկիոյ Արքելաւ թագաւորին հետ, և երկուքին իշխանութեան ներքև կը գտնուէին այն ատեն Եւքսինեան (Սև) Ծովէն, մինչև Միջերկրական ձգուած գաւառներն որոնք տակաւին չէին ինկած Հռովմէական պետութեան ներքև:

Վասն զի Արքելաւ իր իշխանութեան ներքև ունէր Փոքր Հայոց հարաւային մասը, կամ Մալաթիոյ գաւառն, որ Երկրորդ Հայք նաև Փոքր Հայք կը կոչուէր, Կապադովկիան, Լիկայոնիան, Իսաւրիան, և Կիլիկիա Տրաքեան Ելևսի կղզեկին հետ մէկտեղ, որ Կալիկատնոսի քով եղած Սելևկիոյ մօտն էր, որոյ վրայ Արքելաւ կանգնեց փառաւոր պալատ և գեղեցիկ շէնքեր:

Իսկ Պիւտոդորիսի կը պատկանէին Տրապիզոն՝ Փառնակիա գաւառովը, Տիբարենաց երկիրը, Դէմիսկիւրայի դաշտավայրքը, Փանարիոյ հովիտներն որ կ'ոռոգուին Մեծ Հայքէն եկող Լիկոս (Գայլ) և Իրիս գետերով. Զէյլիան Մեքալուպօլսի երկիրն, և վերջապէս Կապիրան և իր գաւառը: Ասոնք երկուքը երկայն ատեն խաղաղ կեանքով վայելեցին իրենց թագաւորութիւնը. միայն Մեծ Հայաստանի մէջ մղուած անդադար պատերազմներուն ատեն, ստիպուած էին զօրքով և ուրիշ կարևոր իրերով օգնութեան հասնիլ Հռովմէական զօրավարաց: Պիւտոդորիս զարդարեց Կապիրա քաղաքն և ի պատիւ Հոկտաւիանոս Օգոստոսի՝ անուանեց Օգոստա կամ Սեբաստա, որ նոյն է Սեբաստիա. և այս անունը սեպհականուեցաւ: Եւ այս առիթով հարկ է որ այս քաղաքին վրայ գրեմ ինչ ինչ ծանօթութիւններ, որ այլ և այլ տեղերէ ձեռքս հասած են:

Սեբաստիա քաղաքին տեղը, հիմնարկութիւնն և զարգացումը

Արևելքի մէջ շատ քաղաքներ կան որ Սեբաստիա ու Սեբաստու Պօլիս կ'անուանին. ինչպէս Սեբաստիա Պաղեստինու մէջ որ հին Սամարիան է. Սեբաստիա Կիլիկիոյ եպիսկոպոսարան Տարսոնի Մետրապօլիտութեան ներքև որ Օգոստա ևս կը կոչուէր. Սեբաստիա Ցուլեան փառագիոյ մէջ. Սեբաստիա Գաղատիոյ մէջ, և ուրիշներ։ Հեղինակներ այլ և այլ ծանօթութիւններ կը յիշատակեն մեր Սեբաստիոյ վրայ, զորոնք մէջ բերել յարմար կը դատեմ։

Սեբաստիա այժմ Սիվազ՝ փոքր Ասիոյ հին մէկ քաղաքն էր Ալիս գետին քով, ի սկզբան ամրոց մ'էր, և կ'անուանէր Կապիրա. այս բերդին քով Հռովմայեցիք մեծ յաղթութիւն մ'ըրին Միհրդատայ դէմ. ժամանակ մը Պոնտոսի մաս համարուեցաւ, ետքն եղաւ Առաջին Հայոց գլխաւոր տեղին։ Պոմպէոս ընդարձակեց և Դիոսպօլիս անուանեց. Պոնտոսի Պիւթոդորիս թագուհին նոյն քաղաքն ընդարձակեց՝ անունը փոխեց և դրաւ Սեբաստիա (այսինքն օգոստական), Օգոստոս ինքնակալին պատուոյն նուիրուած. և հոն հաստատեց իր բնակութիւնը, ինչպէս արդէն Միհրդատ ալ հոն պալատ մը կառուցած էր. և այսու Սեբաստիա պոնտական քաղաքներէն մէկն եղաւ, Պարիադրիս լերանց զառ ի վայրին վրայ շինուած. ուր հին ատեն շատեր սկսած էին բնակիլ։

Այս այն Սեբաստիա քաղաքն է որուն վրայ կը խօսին վկայաբանութեանց մէջ Ցունուարի ամսոյ 7ին (որ է յունուար 20). փետրուարի երրորդ, հինգերորդ և եօթներորդ օրերուն և Մարտի ամսոյ 7ին (մարտի 22ին)։ փոքր Հայաստանի սահմաններուն մէջն է, և այս գիրքը կը յարմարի Սեբաստուպօլիս քաղաքին, զոր ծանօթութիւնները Պոնտոսի մէջ կը դնեն. և կը յիշատակէ զայն Անտոնինոսի ճանապարհորդութեան պատմութիւնը Սեբաստիոյ քով՝ դէպ ի Տաւիա։

Տարբեր է՝ Սեբաստիա Պոլեմոնական Պոնտոսի քաղաքաց մէկը զոր Պտղոմէոս (Յաղագս երկրագր.) կը յիշատակէ և Պլինիոս Կոլոբենէի

մէջ կը դնէ։ Ասիկա կրնայ այն Սեբաստիան ըլլալ զոր Հերոկլէսի ծանօթութիւնը առաջին Հայոց մէջ կը յիշատակէ. այն Սեբաստիան է որուն պարիսպները նորոգեց Յուստինիանոս, ինչպէս կը գրէ Պրոկոպիոս և զոր Անտոնինոսի ճանապարհորդութեան պատմութիւնը կը դնէ Կոկուսի կամ Կոկիսոնի ճամբուն սկիզբը Մելիտինէէն անցնելով։

Նոյնպէս Սեբաստուպոլիս մէկէն աւելի էր, զոր օրինակ մէկը Կողքիս. երկրորդն Եւօլիտ փոքր Ասիոյ մէջ. երրորդը մեր խնդրածն է. նոյնպէս փոքր Ասիոյ մէջ Կապադովկիա, կամ ինչպէս Պտղոմէոս կ'ուզէ (Գիրք Ե. Գլ. Զ.) Պոնտոս Կապադովկիոյ մէջ, և Պլինիոս (Գիրք Զ. Գլ. Գ.) Կապադովկիոյ Կոլոբենէ գաւառին մէջ։ Անտոնիոսի ճանապարհացոյց մատեանը կը նշանակէ այն ճանապարհին վրայ, որ Տաւիայէն կ'երթայ Սեբաստիա քաղաքը, Գարանիա և Վերիսս աւանաց մէջ. առաջինէն՝ քառասուն, երկրորդէն՝ քսանուչորս մղոն հեռու։ Ս. Գրիգոր Նիւսացի կը խօսի Սրբուհւոյն Մաքրինէի վարուց մէջ, մարդու մը և գնդի մը վրայ որոնք Պոնտոսի Սեբաստուպոլիս քաղաքին պահպանութիւն կ'ընէին։ Կ'աւելցնեմ որ Սեբաստիա և Սեբաստուպոլիս այլ և այլ քաղաքներ էին, և այս վերջինը կը յարմարցնեն ոմանք Թուրխալի հետ, որ ինը ժամ հեռու է Թոգատէն դէպ արևմուտք և այլք՝ Սուլու Սերայի հետ, որ աւելի յարմար կը թուի։

Բոլոր վերը Սեբաստիա անունով նշանակուած քաղաքաց մէջ ամենէն հռչակաւորն այն է, որ Միջերկրական և Եւքսինեան ծովերէն գրեթէ զուգաչափ հեռու միջավայրը կը գրաւէ, և Բարիզի Միջօրէին արևելեան երկայնութեան 33° 40' աստիճանի երկայնութեան. և 40° 32' հիւսիսային լայնութեան ներքև կը գտնուի. Ալիսի լայնածաւալ հովիտին մէջ. անկէ իբր կէս ժամ հեռու՝ հիւսիսային կողմը։ Այս քաղաքը կը դնեն ոմանք Կապադովկիոյ մէջ, ոմանք Առաջին և այլք Երկրորդ Հայոց կ'ընծայեն. կան ալ որ Պոնտոսի քաղաքներէն մէկը կը համարին. բայց ոչ եթէ երեք չորս քաղաքներ են մէկմէկէ տարբեր, այլ մի և նոյն քաղաքն է երբեմն Կապադովկիոյ, երբեմն փոքր Հայոց Առաջին կամ Երկրորդ գաւառին, և երբեմն Պոնտոսի անուամբ նշանակուած,

ինչպէս որ ժամանակին բերմամբ բաժանմունքներ տեղի ունեցեր են այլ և այլ իշխանութեանց և պետութեանց ներքև։

Այս քաղաքին սկզբնաւորութիւնն ալ եղած է, ինչպէս գրեթէ ամէն քաղաքաց սկզբնաւորութիւնը։ Քրիստոսէ իբր 100 *կամ* 150 *տարի առաջ ցան և ցիր եկած բնակած են մարդիկ այս հովտին մէջ, և բազմացեր են. և թէպէտ տակաւին ճշդիւ քաղաքի կերպ չունէր, սակայն կ՚անուանէին Կապիրա։ Միհրդատ իր ձախորդութիւններէն ետև դէպ ի Փոքր Հայք ընկրկելով, եկաւ բանակեցաւ հոն. ապարանք մը կառուց, որ ամուր դղեակ կամ բերդ մի էր և քաղաքի ձև տուաւ, իր գանձերէն մաս մը հոն զետեղեց, ամրացուց նաև Պարիադրիսի անցքերն, և ուրիշ ամրոցներ շինեց Փոքր Հայոց մէջ, ուր սփռեց իր գանձերն։ Բայց հարկ եղաւ տեղի տալ Լուկուլլոսի առջև։ Ետքէն Պոմպէոս Հռովմէական սպարապետը հզօր ամրոց մը կանգնեց և Կապիրա անուան տեղ կոչեց Դիոսպոլիս, այլ թագուհին Պիւթոդորիս որուն կը վերաբերէին այն կողմերն, գեղեցիկ յարդարեց և զարդարեց, ըրաւ քաղաք ընդարձակ և հոն փոխադրեց իր իշխանութեան աթոռն, և անուանեց զայն ի պատիւ Հռվոմէական Օգոստոս կայսեր Սեբաստիա ...*

Հռկտաւիանոսի Օգոստեայ ինքնակալի Աւգուստակեան կամ Սեբաստիա. և եղաւ մայրաքաղաք Պոլեմոնեան պետութեան, ուր նստաւ ինքն և իր որդին Պոլեմոն Բ. որ Լատին վկայաբանութեանց մէջ կ՚անուանի իշխան կամ թագաւոր Հայոց, որոյ վրայ ետքէն պիտի գրեմ նիւթին համեմատ։

Անկէց ետև Սեբաստիա եղաւ Փոքր Ասիոյ երևելի քաղաքներէն մին թէ՛ քաղաքական և թէ կրօնական տեսակէտով. աթոռ էր Պրետորի և փոխանիւպատոսի Հռովմայեցւոց ժամանակ։ Արևելեան ինքնակալութիւնն ևս նշանաւոր անձինքներով կը կառավարէր։ Մետրապոլտական և արքեպիսկոպոսական աթոռ էր միշտ եկեղեցական կարգի մէջ։ Ժամանակ մը մայրաքաղաք եղաւ Արծրունի Հայ թագաւորութեան, ինչպէս նաև խալամ տոհմերու։ Սելճուգներու Տանիշմէնտ տոհմը իշխեց հոն։ Ալաէտտին Սուլդանը նորէն կառուց և ամրացուց քառակուսի քարերով բարձր շրջապատով մը։ Նոյն պայծառութեան մէջ մնաց երկայն ատեն։ Լէնկ-Թիմուր սոսկալի աւերումներ գործեց որով շատ անշքացաւ իր

պայծառութիւնը, մինչև առին Օսմանցիք և նորոգեցին փոքր ի շատէ, և դասուած է նոյն պետութեան գլխաւոր քաղաքաց կարգը, մեծ կուսակալութեան մը կեդրոն, ուր կը գտնուի մեծ բազմութիւն։

Հիմա դառնամ նորէն շարունակել Պիւթոդորիսի և Պոլեմոնի պատմութիւնը։

Երբոր Հոկտաւիանոս Օգոստոսէ ետև, Տիբեր ինքնակալութեան գահը բարձրացաւ, Արքեղաւ ինկաւ անոր երեսէն. մինչև գինքը Հռոմ դատաստանի կոչեց. ութսուն տարուան էր խեղճ Թագաւորն երբոր Հռոմ հասաւ. և հոն սարսափէն կամ ծերութեան անձկութենէն մեռաւ։ Եւ Տիբեր անոր տէրութիւնը հռոմէական գաւառ ըրաւ։ Բայց Պիւթոդորիսի երկիրները նաև էրկանը մահուանէ ետև իր ձեռքը մնացին ամբողջ անփոփոխ։

Յամի Տեառն 18 Գերմանիկոս Կեսար արևելք գալով, Հայաստանի նախարարաց խնդրոյն համեմատ, Արտաշատ քաղաքին մէջ մեծաշուք հանդէսով թագ կապեց և թագաւոր պսակեց Հայոց Մեծաց վրայ Պոլեմոնի և Պիւթոդորիսի որդին Զենոնը, որ կոչեցաւ Արտաշէս Գ. և թագաւորեց հոն ԺԲ. տարի և մեռաւ յամին 35։ Երեք տարի վերջ 38ին մեռաւ նաև Պիւթոդորիս թագուհին։

Իսկ իր երէց որդին Պոլեմոն Հռոմ գնաց, խնդրեց և հրաման տրուեցաւ ծերակոյտէն ժառանգել իր հայրենի տէրութիւնը, և կրել անուն Թագաւորի։ Եւ ինքնակալը Կայիոս Կալիգուլա, որ յաջորդած էր Տիբերի (37) հրապարակին մէջ մետաքսեայ դիպակէ հովանոցի ներքև նստած, իր աջ ու ձախ կողմերն երկու հիւպատոսներն ունենալով ժողովրդեան առջև թագաւոր անուանեց զինքը յամի Տեառն 39։ Իսկ Կալիգուլայի յաջորդը Կղօդիոս շնորհեց Պոսփորը Միհրդատի Պոնտոսի թագաւորաց տոհմին։ Եւ Պոլեմոնի ի փոխարէն տուաւ ինչ ինչ վիճակներ Կիլիկիոյ մէջ։ Լատին վկայաբանութեանց մէջ այս Պոլեմոնը կը կոչուի իշխան կամ թագաւոր Հայոց, ինչպէս յիշատակեցի։

Ե· — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ· ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԸԼԼԱՅ ԳԱՒԱՌ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ

Երբոր Կայիոս Կալիգուլա բարձրացաւ ինքնակալութեան աթոռ (37–41), *ուզելով շնորհք մ'ընել Անտիոքոսի, նորէն կանգնեց Կոմագէնոյ թագաւորութիւնն և անոր հետ խառնեց Կիլիկիոյ մէկ մասն։ Իսկ փոքր Հայքը շնորհեց Կոտիս Ե. Թրակիոյ թագաւորին։ Բայց ինձ յարմար կը թուի փոքր Հայոց թագաւորութեան կանգնումն ընծայել Տիբերի, որ յամին* 17 *Կապադովկիան գրաւելէն ետև՝ անոր արևելեան մէկ մասն առանձին տէրութիւն մը կանգներ է, ինչպէս գրուած է, թէ Տիբեր փոքր Հայքը միապետութիւն մը յօրինեց, որ Կոտիսի ձեռքով կառավարուեցաւ։ Վասն զի Կոտիս Ե. թագաւորեց Թրակիոյ մէջ մինչև* 19 *Քրիստոսէ ետև, և այսպէս յարմար է որ Կապադովկիոյ թագաւորութեան բարձումէն* (17) *երկու տարի ետև եղած ըլլայ Կոտիսի փոքր Հայք գալը· սակայն իր իշխանութիւնը հոս տևած ըլլալու է Կալիգուլայի իշխանութեան ժամանակ ևս։*

Հ. Միքայէլ Չամչեան (Հտ. Ա. Գլ. Ի.) կը գրէ, թէ Կոտիշ ոմն որ էր թագաւորն կողմանց փոքուն Հայոց, յանկոյց յինքն զբազումս ի նախարարացն Հայոց, և ջանացաւ խափան լինել Միհրդատայ (Վրացւոյ)· բայց քանզի նա ինքն Կոտիշ ընդ իշխանութեամբ կայսեր էր, եհաս հրաման մի՛ առնել ինչ ընդդէմ Միհրդատայ և այսպէս թագաւորեաց Միհրդատ ի վերին Հայս։

Այլ այս տեղ ինձ այնպէս կ'երևայ, որ Կոտիսի տրուածը բոլոր փոքր Հայք չէր, այլ այն մասը միայն որ Կապադովկիոյ Արքելաւ թագաւորին ձեռքն էր, և կ'անուանէր Երկրորդ Հայք որ Եփրատէն կը տարածուէր մինչև Անտի Տաւրոս· մայրաքաղաքը Մելիտինէն էր միայն։ Իսկ հիւսիսային մասը Սեբաստիա մայրաքաղաքով մէկտեղ՝ անկէց ետև ևս մնաց Պիւտոդորիս թագուհւոյն, և իր որդւոյն Պոլեմոնի ձեռքը՝ մօրմէն ետքը։

Փոքր Հայքը յամին 55 Ներոն տուաւ Քաղկիդի Հերովդէս Թագաւորին որդւոյն Արիստաբուղի. և կարգեց զինքն նոյն երկրին վրայ իշխան արքայական շքով։ Կորբուղոնը կարգեց սպարապետ և առաքեց Մեծ Հայք Պարթևաց դէմ. Հայաստանի այս պատերազմն երկայն տևեց և Տրդատ որ կը թագաւորէր հոն, մեծ քաջութեամբ դէմ դրաւ Հռովմայեցւոց, բայց չկրցաւ մինչև վերջը տոկալ Թշնամեաց հզօր զօրութեան, որոնց նիզակակից էին նաև չորս սահմանակից թագաւորք, փարսման Վրաց, Պոլեմոն Պոլեմոնիայի կամ Սեբաստիոյ, Անտիոքոս Կոմագիոյ և Արիստաբուղ փոքր Հայոց, ուստի և թողուց Հայաստանը և գնաց իր եղբօրը Ողոգէս (Գալէհ) Պարթևաց թագաւորին քով. իսկ հռովմէական սպարապետը վերը յիշուած չորս նիզակակից թագաւորաց բաժին հանելով Մեծ Հայաստանէն, մնացած մասին վրայ Ներոն՝ թագաւոր դրաւ յամի Տեառն 60 Կապադովկիոյ թագաւորին թոռն, որ անուանեցաւ Տիգրան Զ։

Նոյն Ներոնի ժամանակ յամին 65 Պոլեմոն Բ. թողուց Հռովմայեցւոց իր թագաւորութիւնը Պոլեմոնիան, որ անունը պահելով եղաւ գաւառ ինքնակալութեան, ինչպէս նաև Սեբաստիա իր սահմաններովն որ նոյնպէս հռովմէական գաւառ մ'եղաւ Առաջին Հայք անուանակոչութեամբ։

Իսկ (սորին) փոքր Հայոց Արիստաբուղ թագաւորին յաջորդեց իր մերձաւորներէն Տիգրան անուն իշխանը, թերևս Տիգրան Զ. թագաւոր Մեծ Հայոց (60–62) որդի Աղեքսանդրի, Հերովդէս մեծին թոռը. Գլափիւրա իր հանին՝ դուստր էր Կապադովկիոյ Արքելաւ թագաւորին։

Փոքր Հայոց վերջին թագաւորը եղաւ այս Տիգրան որ մեռաւ անժառանգ և Վեսպասիանոս նահանգք Հռովմայեցւոց ըրաւ սոյն երկիրներն, և պահակապան Հռովմայեցի դրաւ Մելիտինէ և այս գաւառին միւս գլխաւոր քաղաքները. կար նաև գաւառապետ Պրետոր մը։

Կարգն է երկու խօսք ևս ըսելու յօդուածիս երկրորդ մասին վրայ, թէ ինչպէս ամբողջ Հայաստան գաւառ եղաւ Հռովմէական ինքնակալութեան. և անոր հետևութիւնները։ Վասն զի երբ Տրայիանոս գրաւեց Մեծ Հայաստանը, չուզեց անոր նոր թագաւոր մը տալ, այլ կարգեց

զանիկա գաւառ իր լայնածաւալ պետութեան յամին 115, *և Եփրատայ աջակողմը գտնուած Մելիտինէն մեծցնելով անուանեց մայրաքաղաք Մեծ և Փոքր Հայոց և անկէ ետև բազմամարդ և անուանի եղաւ այն քաղաքը։ Տրայիանոսի մահուանէն ետև, որ եղաւ յամին* 117, *իր յաջորդն Ադրիանոս հաշտութիւն ըրաւ Պարթևաց հետ, և հայազգի թագաւոր մը դրաւ Մեծ Հայոց վրայ։*

Իսկ Փոքր Հայք անկէց ետև միշտ գաւառ մնաց Հռովմայ ինքնակալութեան. և թէպէտ Պարթևներն և ապա Պարսիկք, նոյն իսկ երբեմն նիզակակցութեամբ Հայոց, շատ անգամ առաջ քալեցին զինու զօրութեամբ, և մտան նոյն երկիրն ասպատակեցին և աւարեցին, սակայն չկրցան իրենց տէրութեան ներքև գրաւել։

Մեծն Կոստանդիանոս յամին 335, *թագաւոր անուանեց Պոնտոսի Կապադովկիոյ և Փոքր Հայոց իր եղբօրորդին և փեսան Աննիբաղիանոսն։ Այլ այս աւելի սոսկ յորջորջում մ՚էր, և միայն երեք տարի տևեց անոր այս իշխանութիւնը, ինչու որ Աննիբաղիանոս իր զօրքերէն ըսպաննուեցաւ, Կոստանդիանոսի մահուանէն ետև։*

Ինչպէս Ծանօթութիւն Կայսերութեան անուանեալ գրքին մէջ կը տեսնուի, նոյն ինքն մեծն Կոստանդիանոս կարգադրութիւն մ՚ըրաւ իր բովանդակ ինքնակալութեան, բաժնելով զայն նախարարութիւններու, վիճակներու և գաւառներու, մին միւսին ստորակարգուած։ Արևելից նախարարութեան Պոնտական վիճակին մէջ կը գտնուէր Փոքր Հայք երկու գաւառի բաժնուած, որոնք էին Առաջին Հայք՝ Սեբաստիա մայրաքաղաքով, և Երկրորդ Հայք Մելիտինէ մայրաքաղաքով, ինչպէս սովորութիւն ունէին անուանել այն ժամանակ, և այդ երկու գաւառաց տեսուչք էին Պրետորք կամ դատաւորներ։

Փոքր Հայք կատարուած Ս. Մարտիրոսաց վկայաբանութեանց մէջ կը յիշատակուին Սեբաստիոյ Պրետորներէն ոմանք ինչպէս Անտիոքոս առաջին դարուն, և Հերինար, Լուսիաս և Ակրիկոլա և ուրիշներ երկրորդ երրորդ և չորրորդ դարուն. իսկ ինչ որ անկէց ետև դէպք և անցք պատահեցան պէտի տեսնուին հետզհետէ։ Բայց հոս անմիջապէս խօսիմ պիտոր քրիստոնէական կրօնից վրայ։

ԳԼՈՒԽ Գ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆՔԸ ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Պիտի գրեմ հոս Ա. թէ քրիստոնէութիւնն ինչպէս շուտ ծաւալեցաւ Փոքր Հայք, եւ թէ որո՞նք եղան առաջին քարոզիչներն. Բ. Ակնարկութիւն մը պիտի ընեմ Ս. Մարտիրոսաց վրայ որ նոյն աշխարհին մէջ կատարուեցան. Գ. փոքր Հայոց եկեղեցիներուն վրայ եւ Նախ Սեբաստիոյ գաւառի. Դ. Երկրորդ Հայոց եկեղեցիները. Ե. Նաեւ Մետրապոլտութեան, եւ երեք եկեղեցական Հայկական գաւառաց վրայ։

Ա. — ԾԱԳՈՒՄՆ ԼՈՒՍՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐԸ

Քրիստոս Յիսուս աշխարհ գալով քարոզեց յաւիտենական ճշմարտութիւնն և Գողգոթայի վրայ իր կեանքը զոհելով կատարեց փրկագործութեան մեծ խորհուրդն. որուն կ'ակնկալէին ազգք և ազինք դարերէ ի վեր և զոր բարերարն Աստուած հաճեցաւ շնորհել ի լրման ժամանակի։

Շատ չյապաղեցաւ Աւետարանին լոյսը ծաւալելու Փոքր Հայոց և անոր շրջակայ գաւառաց մէջ, և շուտ սփռեցաւ գաւառին ամէն կողմերը զարմանալի արագութեամբ և հաւատարիմ պահպանութեամբ։

Իսկ առաջին քարոզիչք բանին կենաց եղան նոյն իսկ առաքեալներն, որոնք եկան Հայաստանի արեւմտեան գաւառներն, և համաձայն ամէն պատմագրաց՝ Բարթուղիմէոս և Թադէոս առաքեալները։ Նոյնպէս

կը գրեն նաև ուրիշ ազգաց հեղինակները, միայն Թադէոսը կը համարին
երկոտասան առաքեալներէն, և ոչ եօթանասուն աշակերտներէն, ինչպէս
կ'ըսեն մերոնք. այս շփոթութեան պատճառն եղած է, Մովսէսի Խո-
րենացւոյն յանուն Ղերուբնայ Եդեսիոյ Դիւանադպրի յառաջ բերած
պատմութիւնը, և ասկից մտած է անշուշտ այն աւանդութիւնը մեր
ազգին մէջ, թէ Հայաստանի մէջ քարոզութիւն ընող Թադէոսն եօթա-
նասուն աշակերտներէն մէկն էր. և ասոր հետևած են մեր պատմա-
գրերն։ Եւ որովհետև հիմա Ղերուբնայի կամ Լաբուբնայի բնագիրը
ձեռքերնիս ունինք, որ բոլորովին համաձայն է արևմտեան հեղինակաց,
կրնանք շատ լաւ ըմբռնել պատմութեան ստուգութիւնը, թէ Հայաստան
քարոզող Թադէոսը չէր եօթանասուններէն, այլ մին Քրիստոսի տասնե-
երկու Առաքեալներէն, որ կը կոչուէր Յուդա Թադէոս և քարոզեց
Միջագետք և Հայաստան։

Զատ էր այս Առաքեալէն Միջագետաց Հայոց մէջ քարոզող Ադէն
կամ Ադդէն. եօթանասուններէն մէկը բայց պէտք չէ ասիկա շփոթել
Եդեսացի Ադէյի հետ, որ նոյն քաղքին առաջին եպիսկոպոս եղաւ։

Բարոնիոս իր տարեգրութեան մէջ Քրիստոսի ԽԴ. տարին կը գրէ
թէ, Ս. Առաքելոյն Բարթողիմէոսի վիճակեցաւ Քրիստոսի Աւետարանը
քարոզել Մեծ Հայաստան։ Իսկ Հռովմայեցւոց ժամագիրքը կը գրէ Թա-
դէոսի Միջագետք երթալն որ Հայոց աշխարհին հարաւային մասն էր։
Եւ երանելին Անտոնիոս (Հտ. Ժ. Ճառ. Զ. Գլ. ԺԹ.) կը պատմէ թէ
Ս. Առաքեալն Թադէոս ոչ միայն քարոզեց Միջագետք այլ և Պոնտոսի
մէջ. և յայտնի է որ Թադէոս Սեբաստիա մայրաքաղաքին և անոր չորս
դին քարոզելէն ետև, որ նոյն ժամանակ Պոլեմոնիա նաև Պոնտոս ա-
նունով նշանակուած էր, շարունակելով իր քարոզութիւնը Փոքր Հայոց
միացած տեղերն և նաև Մեծ Հայաստան՝ գնացեր է Միջագետ։ Կալանոս
որմէ կ'առնում վերը գրածներս, կը յաւելու նշանակել թէ երկու ա-
ռաքեալները (Բարթուղիմէոս և Թադէոս) շուրջ զՀայոց աշխարհաւ կա-
տարեցան մարտիրոսութեամբ և այս եղև, յետ որոյ Բարթուղիմէոս ի
հաւատս Քրիստոսի դարձոյց զՀայոց իշխանն Պոլիմէոս (որ է Պոլեմոն

Բ. Թագաւոր Պողեմոնիոյ Սեբաստիոյ մէջ ուր իշխեց մօրը հետ ու մօրմէ ետք 26 = 39 + 65 տարի)։

Թադէոս քրիստոնեայ ըրաւ նաեւ Բաբելացւոց եւ Միջագետաց թագաւորն՝ Արշամայ որդին Աբգար, զոր Ասորիք կ'անուանեն Ապգար Ուքոմօ, այսինքն սեւ. Ոքովմեան Հայ տոհմէն էր Աբգար, ինչպէս կը համաձայնի ինձ նաեւ Գաղղիացի հեղինակ մը։ Պէտք է գիտնալ որ այս տոհմէն Եդեսիոյ մէջ թագաւորած են սկսեալ Քրիստոսէ 113 տարի առաջ մինչեւ Գ. դարուն սկիզբն, եւ ամէնուն սովորական անունն էր Աբգար՝ թէպէտեւ անոնցմէ շատերն առանձին անուն եւս ունէին, եւ այս տոհմը թագաւորեց Եդեսիա քաղաքին եւ գաւառին մէջ իբր 350 տարի։

Թադէոս առաքեալին նահատակութիւնը կը դնեն մեր պատմագիրները Սանատրկոյ ժամանակ, կամ մանաւանդ Միհրդատայ Վրացւոյ, որ 35–51 տարիները թագաւորեց Հայոց։ Իսկ Բարթուղիմէոս առաքեալին համար արեւմտեան մատենագիրք կը գրեն թէ Պոլիմոնի եղբայրը Աստիակէս կամ Արտաշէս (Զենոն) արքայ Մեծ Հայոց՝ չարչարեր եւ նահատակեր է։

Մինչեւ հոս ըսուածներէն յայտնապէս կը տեսնուի թէ քրիստոնէական հաւատքն առաջին դարուն քարոզուեցաւ Փոքր Հայոց մէջ։ Բարթուղիմէոս լուսաւորեց Պոլեմոն Բ. թագաւորն եւ անոր երկիրը. Պոլեմոնի եղբայրն Արտաշէս Գ. նահատակեց զինքն ինչպէս վերը գրուեցաւ, թէպէտ կայ հոս անհամաձայնութիւն մը՝ մտադրութեան արժանի, զոր պիտի տեսնենք քիչ վերջը։ Թադէոս՝ որ Հայաստան աշխարհը լուսաւորելէն առաջ կամ ետքը Կապադովկիոյ եւ Փոքուն Հայոց (Պոլեմոնիոյ) կողմերն եկաւ, քարոզեց Սեբաստիա մայրաքաղաքին մէջ, կը հաստատէր նաեւ Կեսարիոյ եկեղեցին եւ Թէոփիլոս ականաւոր անձը հովիւ կը կարգէր, ինչպէս կ'ըսուի, եւ ապա կ'երթար Մեծ Հայք այցելութիւն ընել եղբարց, որոնց հասած էր աստուածային վարդապետութիւնն իր կամ սրբոյն Բարթուղիմեայ քարոզութեամբ եւ իբր յամի 48 նահատակուած է Սանատրուկ թագաւորէն, ինչպէս կ'ըսուի։

Փոքր Հայոց մէջ Ս. Թադէի քարոզութեան համար կը վկայէ

փուլիթի կանոնագէտն այսպէս. «Պոնտական վիճակը Յուդա Թադէի ընծայուած է, և անկէ հաւատոյ ճշմարտութեան լոյսն, և բարեպաշտութեան և սրբութեան սերմանքն ընդունած ըլլալնին կ՝ աւանդեն Վալագրիոս Սորաբոն և Թիլլըմուն» (Յիշատ. Եկղ. Հտ. Ա. էջ 402)։ Եւ այս Պոնտական վիճակն իր մէջ կը բովանդակէր Կապադովկիան, փոքր Հայքը, Գաղատիան, Պափղագոնիան, Հոնորիատէոն և Բիւթանիան։

Այլ այս գաւառներուն աւելի մեծ պարծանք է իրենց լուսաւորիչ ունենալ առաքելոց իշխանը՝ Մեծն Պետրոս։ Փրկչին չարչարանաց վրայ դեռ տասը տարի անցած չէր, Պետրոս Անտիոքայ եկեղեցին հաստատելէն ետև գնաց դէպ ի Պոնտոս (հարկաւ նախ Սեբաստիա մայրաքաղաքը), ի Կապադովկիա և փոքր Ասիոյ ուրիշ կողմերն։ Աւանդութիւն է Ամասիոյ եկեղեցւոյն թէ Պետրոս Առաքելապետը Հռովմ երթալէն առաջ, որ կը համարուի յամի Տեառն 42, գնացեր է Ամասիա, և անկէց մեկնելու ատեն իրենց վրայ եպիսկոպոս ձեռնադրեր է Նիկետ անուն անձ մը զոր ոմանք փիթիմոս կ՝անուանեն։ Այլ պէտք է համարել թէ նա ոչ միայն Ամասիոյ եկեղեցին հաստատած է, այլ և ուրիշ քաղաքներուն և մանաւանդ Սեբաստիոյ, որ այն ժամանակ բարձրագոյն տեղ ունէր բոլոր այն կողմերու քաղաքաց մէջ։ Ըստ այսմ Յովսէփ Պարսխլաճի յունածէս եպիսկոպոս Մեծ—Վարատինի, կանոնագէտ անուանի՝ կը գրէ «Մեծ առաքեալն Պետրոս Կապադովկիոյ ամէն քաղաքներն (որոնց մէջ կ՝իմացուին նաև Պոնտոս և փոքր Հայք) կարգեց եպիսկոպոսներ....։ Ասոր համար Ս. Պետրոս իր առաջին թղթին մէջ որ ուղղուած է «Ընտրելոցդ Նժդեհից ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց, Կապադովկացւոց Ասիացւոց և Բիւթանացւոց» գրեց (Գլ. Ե. Հմր. Բ.) այն կողմերու եպիսկոպոսաց «Արածեցէք որ ի ձեզ հօտդ է», այս է որ ձեզ աւանդեցաւ Հօտդ Աստուծոյ ինև» (Կանոնական իրաւ. Գլ. Դ. յօդ. 87)։ Ս. Պետրոսի այս գրութիւնը ուղղուած է Եբրայեցի Նժդեհներու, որոնք կը բնակէին վերը յիշատակուած աշխարհներու մէջ, բայց անշուշտ հեթանոսներէն հաւատացեալներն ալ դուրս թողուած չէին։ Եւ ասկից յայտնի է որ նոյն գաւառաց մէջ Քրիստոսական հաւատքը շատ պայծառացած էր և այն ամէն կողմերը կային եպիսկոպոսներ։

Նաեւ սակաւ մի յառաջ յիշատակուած փոլիթի, Պոնտական վիճակին գաւառներն յիշատակելէն ետեւ, վրայ կը բերէ, ուր Ս. Պետրոս իր Պետութեան իրաւամբ, եւ Ս. Պօղոս արտաքոյ կարգի քարոզութեամբը կը լուսաւորէին ընդհանուր տիեզերքն եւ եկեղեցիներ կը մեծցունէին. նոյնպէս կ'աւանդէին Պոնտոսի, Գաղատիոյ, Կապադովկիոյ եւ Բիւթանիոյ ժողովրդոց Քրիստոսէ ընդունած վարդապետութիւննին, եւ քրիստոնէական կարգերը պայծառ յարդարելով կը ծաւալէին։

Փոլիթիի այս խօսքերէն յայտնի է, թէ նաեւ Հեթանոսաց Առաքեալը քարոզութեամբ եկած է այս կողմերը։ Չկայ պատճառ երկբայելու թէ նաեւ ուրիշ առաքեալներ եկած են այս կողմերը. Ս. Անդրէասի վրայ կայ առանձին, յիշատակութիւն, թէ Պետրոս Առաքեալին հետ բնակած է ժամանակ մը Սինոպի մէջ, եւ թէ կար հոն քարաշէն գահ որոյ վրայ նստելով կը քարոզէր Ս. Պետրոս։ Կային նաեւ աշակերտներէն, որոնց մէջ յիշատակութեան արժանի է Ոնեսիմոս։

Այս ամէն ըսուած խօսքերէն, որ մինչեւ հիմայ յառաջ բերուեցան, յայտնի եւ բացայայտ կ'ըլլայ թէ Սեբաստիա եւ անոր գաւառն, Աւետարանին լոյսն առին նոյն իսկ Առաքեալներէն։ Եւ առաջին եղաւ Բարթուղիմէոս, որ ինչպէս կ'աւանդուի՝ Հնդկաստան եւ ուրիշ հեռաւոր աշխարհներ քարոզելէն ետեւ, կուգայ Հայաստան եւ Սեբաստիա հասնելով կը դարձունէ ի հաւատս Քրիստոսի Պոլեմոն թագաւորն, անոր կինն եւ որդիքը, նաեւ տասներկու քաղաք, որոնք կը պատկանէին այս իշխանին տէրութեան։ Եւ Պոլիմոնի, իր տանն եւ գրեթէ բոլոր Տէրութեան այս մեծ դարձն կը պատմուի թէ այսպէս եղած է։ Թագաւորին դուստրը կը տառապէր դիւահարութեամբ, Առաքեալը կը բժշկէ զանի յանուն Յիսուսի Քրիստոսի. Պոլեմոն դրամ կը մատուցանէ իրեն եւ Բարթուղիմէոս կը մերժէ ընդունիլ, եւ թագաւորին առջեւ կը խորտակէ անոր կուռքերն։ Թագաւորը տեսնելով եղած այս ամէն սքանչելիքներն, եւ ականջովը լսելով դիւին աղաղակը, թէ մինչեւ հիմա թագաւորին կամաց համեմատ խաբեցի ժողովուրդը, բայց չկայ ուրիշ Աստուած բաց անորմէն զոր Բարթուղիմէոս կը քարոզէ, Պոլեմոն բոլոր իր տնովը դարձաւ ի Քրիստոս։

Այս յաջողութիւնն առաքելոյն դէմ գրգռեց Հայոց քրմերուն ատելութիւնն, որոնք գնացին Հայոց Մեծաց Արտաշէս թագաւորին քով, որ Պոլեմոնի եղբայրն էր և շարժեցին անոր սիրտը. «Թէ որ չխնդրես աստուածոց վրէժը պատուհասակոծ ընելով Բարթուղիմէոսը, չպիտի կրնաս այլ ևս թագաւորել», և ամէն ճգամբ յաջողեցան արթնցնել Արտաշէս Արքային սրտին ցասումն ու բարկութիւնը որ կեղծիքով մը կոչեց իրեն քով Ս. Առաքեալը, իբր թէ անոր քարոզած վարդապետութիւնը կ'ուզէր լսել. երբոր հասաւ ստիպեց զինքն որ զոհէ կռոց, և շատ յորդորանքէ և ապարդիւն սպառնալիքէ ետև կը նահատակէ, տալով այն անագորոյն հրամանը՝ մորթեզերծ ընելու Ս. Առաքեալն և անոր գլուխը կտրելու։ Այսպէս կատարեցաւ Ս. Բարթուղիմէոս յանձնելով իր մաքուր հոգին Աստուծոյ ձեռքն և թաղեցաւ Մեծին Հայոց Ալպանոպոլիս քաղաքն, զոր Խորենացին Արեբանոս կ'անուանէ։ Բայց հոս յարմար կը թուի յիշեցնել որ Արտաշէս Գ. (Զենոն) արքային ժամանակը յարմար չգար Բարթուղիմէոսի Նահատակութեան, զի աս նստաւ Մեծ Հայոց աթոռը 18–35ին, ուստի լաւ ևս կ'ըլլար թերևս Խորենացւոյն հետ ըսել Սանատրկոյ օրերն 32–56. կամ Վրացի Միհրդատայ ժամանակ որ թագաւորեց Հայոց 35–50. որովհետև Ս. Առաքելոյն նահատակութիւնը կը համարուի 50ին։

Երկրորդ եղաւ Յուդա Թադէոս, որ կ'անուանուի ևս Ղեբէոս, որուն գործերը արդէն տեսանք։ Նաև Թովմաս, Անդրէաս և Պօղոս առաքեալք մաս ունին Փոքր Հայքի կողմերու քարոզութեան մէջ։

Իսկ եօթանասուն աշակերտներէն՝ Ոնեսիփոր կամ Ոնեսիմոս աշակերտ Ս. Պօղոսի որ քարոզեց նոյն կողմերն և նահատակուեցաւ Սեբաստիա քաղաքին մէջ։ Եւ անշուշտ այս է պատճառ Հայ եկեղեցւոյ աւանդութեան, որ Ոնեսիմոսի անունը կը յարակցի Ս. Վլասայ հայրապետի հետ, և երկուքը մէկտեղ կը տօնուին մէկ աւուր մէջ։

Ահա այս կերպով Քրիստոսական հաւատքն առաջին դարուն մէջ զարգացաւ պայծառացաւ Սեբաստիա և համօրէն Փոքր Հայք և անոր մերձակայ տեղերն, և բազմաթիւ մարտիրոսաց մաքուր արեամբ ոռոգելով, բարգաւաճեցաւ և շքեղ կերպով ծաղկեցաւ ամենայն բարեմասնութեամբք։

Բ. — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԻՐՈՅՆ ՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՈՒՈՂ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ՎՐԱՅ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Արժանաւոր կերպով Ս. Մարտիրոսաց թափած արեան վրայ խօսելու համար, երկայն երկայն ճառերու պէտք կայ։ Այս մաքուր արիւնը առատօրէն ընդունեցաւ մեր փոքրիկ աշխարհը, պարարտացաւ, և ծաղկելով վայելչանալով անմահական կենաց հոտ բուրեց. և երկնային առատաբաշխ շնորհաց ցօղն իրեն հրաւիրելով մեծամեծ արդիւնքներ յառաջ բերաւ. որով ճոխացաւ Եկեղեցին Աստուծոյ և պարծանօք լեցուեցաւ մեր Փոքր Հայաստանը. ասոնք օրինակ բարի են մեզի որ իրենց պայծառութեամբը լուսաւորեցանք որպէս զի հետևինք իրենց քրիստոնէական բարձր կատարելութեան, որուն ճանապարհն հարթեցին մեզի։ Բայց հոս մեր գործը վկայաբանութիւն գրել չէ. ուստի բաւական պիտի համարիմ անոնց համառօտ յիշատակը մէջ բերել, որոնց վրայ մեր Ճառընտիրներն և Յայսմաւուրք, ինչպէս նաև Յունաց և Լատինացւոց՝ յորդ կերպով կը գրեն։

Մեծ էր երկու Հայ Լեգէոններուն համբաւը հռովմայական բանակին մէջ. մէկը կը կոչուէր Սեբաստեան և միւսը Մելիտեան։ Քրիստոնեայ էին ամէնքը, քաջութիւննին հռչակուած էր. արիական գործերն իրենց հասարակ սովորութիւնը կը համարուէր. միանգամայն մաքուր էին վարքով, փութաջան և բարեկրօն, որոնցմէ շատեր նահատակուեցան Քրիստոսի հաւատոց համար այլ և այլ ժամանակներ։

Երկրորդ դարուն սկիզբը (117) *տասը հազար զօրականք Փոքր Հայոց աշխարհքէն Ադրիանոս ինքնակալին հրամանով խաչ հանուեցան Մասիսի քով, Տրայանոսի հալածանաց հետևանք։ Ասոնք պատերազմեցան Եփրատացւոց դէմ և մեծ յաղթութիւն ձեռք բերին. բայց չուզեցին զոհել կռոց և անոնցմէ համարիլ յաղթութիւնը, որ կը խոստովանէին թէ քրիստոնէից ճշմարիտ Աստուծոյն շնորհքն էր այն. ասոր համար խաչակից եղան Քրիստոսի և անոր սիրոյն համար նահատակուեցան մարտիրոսութեամբ։*

Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս կայսերաց հալածանքներուն ժամանակ, փոքր Հայքի մէջ մարտիրոսաց արեան հեղումը շատ աւելցաւ: Ակակիոս վկայն և եօթն կանայք կատարուեցան Սեբաստիա քաղաքին մէջ՝ Ներենարկոսի դատաւորութեան ժամանակ, նոյն քաղաքին մէջ նոյն իսկ դատաւորն սքանչանալով Ս. Վկային արիութեան վրայ, հաւատաց Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան, և նահատակուեցաւ Ակակիոսի հետ:

Մեծահռչակ է նահատակութիւնը մեր Ս. Հայրապետին Վլասայ: Սա ժամանակ մ'առանձնացաւ Կապադովկիոյ մենարանաց մէջ, խնդրակներ գտան զինքը, պատկառելով իր վեհանձն կերպէն և բարեվայելուչ ընդունելութենէն, կ'ուզէին ազատ թողուլ: Վերջապէս ներկայացաւ յատեան դատաստանի, ուր համարձակ խոստովանեցաւ Յիսուսի Քրիստոսի սուրբ հաւատքը, և յանդիմանեց կռոց սուտութիւնը: Հրաման տուաւ Ագրիկոլա դատաւորը դահիճներուն, որ բիրով զարնեն զինքն երկայն ատեն և ամենայն սաստկութեամբ. յետոյ բանտ դնել, փայտէ կախել, երկաթի քերիչներով անոր մարմինը քերել, և վերջապէս կապել և լճին խոր տեղը նետել, և երբ անկից ողջանդամ ելաւ, կտրեցին անոր գլուխն, ինչպէս նաև երկու մանկանց գլուխներն՝ անոր հետ: Ասոնցմէ առաջ նահատակեցին եօթը բարեպաշտ տիկնայքն, որոնք կը ժողվէին արեան կաթիլներն որ կը հոսէին իրենց, Ս. Հայրապետին մարմնէն: Ս. Վլասայ և երկու մանկանց մարմինն ամփոփեց աստուածասէր Տիկինն Եղիսէա (Էզաա, Էլիզա) Սրբոյն նահատակուած տեղն, ուր շինուեցաւ առաջին մատուռն ի պատիւ Վլաս հայրապետին և գերեզմանը կայ քաղաքին արեւմտեան կողմը, Մէտրէսէ կոչուած թաղին մէջ որ ուխտատեղի է ամբողջ գաւառին: Ասպա շատ տեղեր՝ շինուեցան եկեղեցիներ անոր անունով, նախ Սեբաստիոյ և Ամասիոյ քաղաքներն և անկից ետքը Պոլիս և Հռովմ հինգ եկեղեցի և ուրիշ շատեր՝ Ռակուզա ուր կը պատուուի երանելին իբր պաշտպան քաղաքին, Պենևենդ, Նէապոլիս և ուրիշ տեղեր: Վերջի ժամանակները Սեբաստիոյ մէջ փոքրիկ կամարակապ եկեղեցի մը կառուց Զմմառի Վանուց միաբաններէն Յակովբ Վ.

Ճգնաւորեան յամին 1845, ի պատիւ սրբոյն, առաջնորդարանով մէկտեղ, որ ունի մշտահոս ջուր։

Նահատակութիւն Ս. Վլասայ եղաւ Լիկիանոս կայսեր հալածանաց ժամանակ, Լուսիասի և Ագրիկոլայի պրետորութեան օրերն, որոնք քաղաքին և գաւառին հաւատացեալները տանջեցին տեսակ տեսակ չարչարանքով, և շատեր արժանացան մարտիրոսական պսակի, ինչպէս և Ս. Վկայն Սեւերիանոս Սեբաստացին. նոյնպէս նահատակեցաւ Սեբաստիոյ մէջ Ս. Վլասի յաջորդը Պետրոս Ա. եպիսկոպոս, որ պայծառացուց իր եկեղեցին։

Այս ժամանակներս Սեբաստիոյ մէջ կատարուեցաւ նաև, Ս. Աթանագինէս եպիսկոպոս Պիտակտողեայ, իր տասն աշակերտաց հետ, ու 265–290ին այրելով հրոյ մէջ ընդունեցաւ մարտիրոսութեան պսակը։ Նահատակութիւն Աթանագինէսի եղաւ այն տեղ, ուր կատարումն առած էր Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսը մարտիրոսութեամբ։ Գրիգոր Լուսաւորիչ փոխադրեց Աթանագինէսի նշխարքը Մեծ Հայք Յովհաննու Կարապետի մասանց հետ, և Տարօնոյ կողմերը զետեղեցան նորակառոյց եկեղեցւոյ մէջ. ուր կան և կը պատուուին մինչև ցայսօր Ս. Կարապետի հռչակաւոր վանքին մէջ. և կը կատարուի Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի տօնն ի միասին Հայ եկեղեցւոյ մէջ։

Առանձին կը յիշատակուին Աթանագինեայ երկու աշակերտներն, Արիստոն որ իր Վարդապետէն առաջ նահատակուեցաւ. և Հռեգինոս որ տասն աշակերտներէն ըլլալով, Երանելոյն հրամանաւ Նէոկեսարիա գնաց և հոն կատարուեցաւ։

Նոյն հալածանաց մէջ զոր հրամատարներ էին Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս, Սեբաստիոյ դատաւորը կամ իշխանը Հիւքեմոն, ձերբակալ ըրաւ հինգ նշանաւոր անձինք. Թէոփրաստ կամ Թէոփրաս, Մաքսիմիան, Պատրոփիլ, Հիւսիք կամ Հիւտիկ, Կղէոնիկ կամ Կղինք և նահատակեց զիրենք։

Սեբաստիոյ մէջ չարչարուելով նահատակուեցան նաև Ս. Վկայք Կարտէր, Ստիրեակ, Տովբիթ, Եւդոքսիոն, Ագապ և ուրիշ շատեր։

Մի և նոյն քաղաքին մէջ շքեղ հանդիսացուցին իրենց մարտիրոսութեան հանդէսը մեծանուն վկայք Եւստրատ, Օգսենտ, Եւգինէոս, Մարդար և Ովրեստ. գեղեցիկ խոստովանութեամբ կատարեցան երանելիքն Ագրիկոլա դատաւորին ժամանակ: Եւ սուրբ Վլաս քաղաքին եպիսկոպոսը տարածեց իր հայրական խնամքը անոնց վրայ. և իրենց նշխարքը վերցնելով դրաւ պատուական տապանի մէջ և իրենց գերեզմանին տեղն յայտնի է մինչև հիմա:

Պարծանք պարծանաց են մայրաքաղաքին այն քաջարի զօրականներն որոնք դարուց ի դարս, անմոռաց պիտի մնան յիշատակաւ, և պատուուած է իրենց անունն ազգաց և ազանց մէջ: Քառասուն պայծառ պատանիներ, Սեբաստեան գնդին ընտիր ընտիրներն, որոնք կ'անուանին քառասուն մանկունք Սեբաստիոյ. Քրիստոսի քաջ նահատակներն որ նոյն սուրբ հաւատքին համարձակ խոստովանութեամբ ձգուեցան լճի մէջ, որ գիշերը սառեցաւ, և այսպէս ընդունեցան երկնաւոր փառաց պսակը: Անոնց գերեզմանը կայ մինչև ցայսօր, հին մեծակառոյց եկեղեցւոյն աւերակաց մէջ, քառասուն գմբեթայարկ խորաններու ներքև որ այժմ լքուածի պէս է, միայն հոն է Հայոց գերեզմանատունը:

Փոքր Հայք նահատակեցան նաև Ս. Վկայք Դիոնէսիոս, Եմիլիանոս և Սեբաստիանոս:

Փոքր Հայոց Նիկոպոլիս քաղաքը շատ տանջանքներէ ետև յաղթական պսակին արժանի եղան Յունուար և Պեղագիա: Նոյն քաղաքին մէջ ծանր տանջանքներով կատարուեցան ի Քրիստոս Ղևոնդ, Մաւրիկ և Դանիէլ բորբոքեալ հրոյ մէջ ձգուելով, Լիկինիոս կայսեր հալածանաց և Լիսիասի դատաւորութեան ատեն:

Սատաղա քաղաքն ևս փայլեցաւ հեղմամբ արեան եօթն եղբարց, Ովրէստի, Հերայխի, Փառնակայ, Փիմինու, Փիրմեայ, Կիրակոսի և Ղունկիանու զինուորաց որոնք զՔրիստոս Աստուած դաւանելնուն համար, Մաքսիմիանոս կայսեր հրամանաւ զինուորական կարգէն ելան մերկացան, և այլ և այլ տեղեր տարուելով, և շատ մը վիշտ և տառապանք կրելէն ետև հանգեան ի Տէր:

Մելիտինէ ևս որ գլխաւոր քաղաք էր փոքուն Հայոց ունեցաւ իր նշանաւոր անձինքը և Ս. Վկայքը, յառաջ կը դնեմ իր եպիսկոպոսներն որոնց ծանօթն է Ս. Ցուսիկ որ նահատակեցաւ Գորդիանոս Լինքնակալի ժամանակ. Ս. Ակակ Ա. եպիսկոպոս Մելիտինէի որ նահատակեցաւ Դեկոսի կայսերութեան ատեն. ասոնք նոյն քաղաքին ծանօթ եպիսկոպոսներէն առաջինններն են։

Այս քաղաքին մէջ Դեկոսի և Վաղերիանոսի հալածանաց ատեն, մարտիրոսութեամբ պսակեցաւ քաջն Պոլիոկտ կամ Պողիկտոս, ազնուական տոհմէ և արքայազն, որ Մելիտինէ ծնած և փեսայացած էր Ֆելիքս ղատաւորին (Պրետոր) երկրորդ Հայոց։ Իրմէ ետքը նահատակեցաւ քաջ զինուորը Նէարք, ընկեր և բարեկամ Պողիկտոսի. նոյնպէս և սուրբ Վկայքն Ներուն, Նիկանդր, Ցուսիկ, և անոնց հետ ուրիշ երեսուն անձինք, որոնք պսակեցան մարտիրոսութեամբ Մելիտինէի մէջ, ինչպէս նաև Եւղոկսիոն, Զենոն, Մակար որոնք հազար հարիւր և չորս զինուորներով քակեցին իրենց զինուորական կամարն և կատարեցան ի Քրիստոս։ Նոյն քաղաքին մէջ իրենց արեամբը պսակուեցան Պողիեւտ, Վիկտոր և Դոնատ, և ուրիշ մը Հերմոգինէս, Կայոս, Լապէգէտ կամ Լաբէտիտ (Առաքել, որ շատ հռչակուած է Եւրոպայի մէջ), Արիստոնիկ, Հռուփոս և Գաղատոս։

Եւս և ուրիշ շատեր զորոնք ո՛վ կրնայ թուել. բայց կարեւոր կը համարիմ երկրորդ անգամ յիշել մեր Հայրենակից Մելիտեան Լէգէոնն, որ ամբողջ Մելոսի հովտէն և անոր մերձակայ տեղերէն կը հաւաքուէր. որ Մարկոս Աւրեղիանոս կայսեր ժամանակ ամբողջ քրիստոնեայներէն կազմուած էր, և ունէր այն պանծալի անունը, Շանթաձիգ գունդ, մէկ երեւելի սքանչելեաց պատճառաւ. արիասիրտ և իրենց դրօշին հաւատարիմ, ինչպէս եղած են միշտ Հայ զինուորները։ Վերը յիշուած մարտիրոսներէն շատերը այս ականաւոր գնդին զինուորներէն էին։

Գ. — ԱՌԱՋԻՆ ՀԱՅՈՑ ԿԱՄ ՍԵԲԱՍՏԻԱ ԳԱՒԱՌԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Վերը բաւական ցուցուեցաւ թէ փոքր Հայոց եկեղեցեաց կամ եպիսկոպոսաց հաստատութիւնն առաքեալներէն, նա՛ թէ նոյն իսկ առաքելապետէն Պետրոսէ եղած է. և արդէն կանուխ կը յիշատակուին բազմութեամբ այն կողմերու եպիսկոպոսներն։

Սեբաստիոյ եկեղեցւոյն համար կը գրէ Լէքէն (Քրիստ. Արևել. Ա. 420), *թէ սկիզբէն զարդարուեցաւ անիկա մարտիրոսաց բազմութեամբ. Դիոկղետիանոս, Մաքսիմիանոս և Լիկինիոս կայսերաց ատեն, ինչու որ երրորդ դարուն քրիստոնէից թիւը շատ բազմացած էր. մանաւանդ թէ յունաց վկայաբանութեան համեմատ՝ գրեթէ նոյն իսկ առաքելոց ժամանակէն։ Ուր կը պատմուի ևս թէ Ոնեսիփոր Քրիստոսական հաւատոյ համար ի մահ մատնեցաւ, Սեբաստիոյ Անտիոքոս դատաւորէն։ Նոյն Լէքէն կը յիշատակէ առաջին և երկրորդ Հայոց եպիսկոպոսաց կարգը, Սեբաստիոյ և Մելիտինէի մետրապոլտութեան ներքև։*

Առաջին Հայք

Ա.	Եկեղեցի	Սեբաստիոյ մայրաքաղաք որուն ներքև են
Բ.	»	Սեբաստուպոլսի
Գ.	»	Նիկոպոլսի
Դ.	»	Կողոնիոյ (փոքր Հայոց)
Ե.	»	Սատաղայ
Զ.	»	Պերիսայ
Է.	»	Ամփիպոլսի
Ը.	»	Յուստինիանուպոլսի
Թ.	»	Կամախու
Ժ.	»	Կարնոյ
ԺԱ.	»	Պիտակոլի

Ինչպէս առաջ ըսի Սեբաստիոյ աթոռոյն սկիզբը շատ հին է և չկայ դժուարութիւն ըսելու նոյն իսկ առաքելոց ժամանակէն։ Բայց յանուանէ առաջին ծանօթն որ կը յիշատակուի պատմութեան մէջ է Մերուժան Հայ ազգաւ, անունն իսկ կը յայտնէ. երրորդ դարուն կէսին (250) և թէ անկէ առաջ կային ուրիշներ ևս չկայ երկբայութիւն, թէպէտ իրենց անուանքն ինծ ծանօթ չեն։ Մերուժանէն ետև ուրիշներ ևս յաջորդեցին եպիսկոպոսական և Մետրապոլտական իշխանութեամբ, ծանօթներուն անուններն և յիշատակը մէջ կը բերեմ հոս։

Ա. Մերուժան 250ին (Եւսեբի. Գիրք Ա. Գլ. Խ.)։

Բ. Ս. Վլաս Լիկիանոսի ժամանակ նահատակուած։

Գ. Ս. Պետրոս Ա. որ նոյնպէս մարտիրոս եղած է։

Դ. Եւլոկիոս կամ Եւլալիոս, որ գտնուեցաւ Նիկիոյ ժողովքին մէջ յամին 325։

Ե. Եւստաթէոս, սխկա առաջ բարեկամ էր մեծին Բարսղի Կեսարացւոյ. Արիոսեան էր աղանդով (360) ապա Անոմեանց ձեռքով ինկաւ աթոռէն, Կ. Պոլսոյ ժողովին մէջ։

Զ. Ս. Մելիտոս որուն վրայ Սոկրատ այս կերպով կը խօսի. «Ասիկայ կ'ըսէ, Եւստաթէոսի անկմանէն ետև եղաւ եպիսկոպոս Սեբաստիոյ յամին 361»։ Մելիտոսի փոխադրութիւնն ի Բերիա (Հալէպ) չեն հաստատեր Հերոնիմոս, Սոզոմենոս և Թէոդորետոս, այլ թէ՝ ժամանակ մը հոն առանձնացաւ, բայց Բերիոյ եկեղեցին չյանձանձեց բնաւ, և երբ Անտիոքացիք հրաւիրելով զինքն բարձրացուցին հայրապետական աթոռը, կրեց հոն ևս մեծ դժուարութիւններ։

Է. Եւստաթէոս (երկրորդ անգամ) 368 իր աղանդակցաց կողմանէ Հռոմ գնաց հրեշտակութեամբ առ Պապն Լիպերիոս, երկրորդ անգամ կարգէն լուծուեցաւ Գանգրայի ժողովքին մէջ։

Ը. Ս. Պետրոս Բ. եղբայր Ս. Բարսղի և Գրիգորի Նիւսացւոյ։ Ասիկա 381ին գտնուեցաւ Կ. Պոլսոյ Ա. ժողովքին մէջ։

Թ. Յովհաննէս կամ Յոհան Ա. որ առաջիկայ գտնուեցաւ Քաղկեդոնի Ս. ժողովոյն։

Ժ. Յովհաննէս Բ. յամին 480։

ԺԱ. Նիկեփոր։

ԺԲ. Աւգսենտիոս։

ԺԳ. Հուրբինոս կամ Հուրբանոս, որ յամին 553 ներկայ գտնուեցաւ Կ. Պոլսոյ Բ. ժողովոյն։

ԺԴ. Թէոդոսիոս։

ԺԵ. Ղեոնդ։

ԺԶ. Աստուածատուր. որ յամին 680 ներկայ գտնուեցաւ Կ. Պոլսոյ Գ. ժողովոյն։

Այսուհետեւ յունածէս (և մեծ մասը ծագմամբ Հայ) մետրապոլիտները շարունակեցին և կը տեւեն մինչև ցայսօր։ Իսկ գաւառին ժողովուրդը ինչպէս ըսուեցաւ Հայ էր ազգաւ բայց Յունաց հետ միացած էր ծէսով, ինչպէս են հիմակուան յունածէսներն որ կը գտնուին Սեբաստիոյ գաւառին մէջ. խօսքս Հայ–Հոռոմներու համար չէ, այլ Յոյն անուանածներու նկատմամբ։

Հոս ներուի ինձ խօսք մ'ընել Սեբաստիոյ գաւառին պատկանեալ մէկ նշանաւոր եպիսկոպոսին վրայ։

Անիկայ է Ս. Գրիգոր եպիսկոպոս Նիկոպոլսի Փոքր Հայոց, ուր ծնաւ Ժ. դարուն, և իր ծնողաց մահուանէն ետև իրեն ինկած բոլոր ստացուածքը բաժնեց աղքատաց, և ինքն առանձնացաւ Նիկոպոլսի մօտ վանքերէն մին, ուր ապրեցաւ գերազանց առաքինութեամբ. և նոյն քաղաքին եպիսկոպոսէն քահանայ ձեռնադրուեցաւ և ապա յաջորդ եղաւ իրեն եպիսկոպոսութեան։ Սակայն այս արժանապատուութիւնը չաւելցուց նոր բան մը իւր կենաց և ընթացից վրայ, և գիտցաւ վանական կրթութիւնը լաւ կցորդել եպիսկոպոսական պաշտամանց հետ։ Իր խոնարհ բարքէն ստիպուած թողուց եպիսկոպոսութիւնն, և իր հետ առնելով երկու Յոյն (կամ յունածէս) կրօնաւոր, ելաւ գնաց դէպ արեւմուտք. Իտալիա և Գաղղիա շրջելով ժամանակ մը Օրլէանի թեմը, Բօրի սահմանին մէջ Պլուվեր ըսուած տեղն հաստատեց իր բնակութիւնն, և խստագոյն կեանք մը սկսաւ վարել մեծ ճգնութիւններով եօթը տարի.

և ԺԱ. դարուն սկիզբը մարտի 16ին կնքեց իր կեանքն, և նոյն օրէն սկսաւ պատուիլ իր յիշատակը Վերոնէի մէջ. թաղուեցաւ Ս. Մարտինոսի եկեղեցին: Բայց յետոյ փոխադրեցին Պլուվեր աւանը Ս. Սողոմոնի եկեղեցին իր պատուական մարմինը:

Հայ էր այս սուրբը Փոքր Հայք ծնած և սնած. այն աշխարհին նշանաւոր քաղաքներէն միոյն եպիսկոպոսը. սակայն Հայոց քով չունի անիկայ սեպհական տօն. և ոչ յիշատակ թերևս անոր համար որ Հայաստանէն մեկնելէն ետև, իր տեղն այնուհետև անծանօթ մնացեր է ազգին առջև. ուրիշ պատճառ ևս կրնայ ըլլալ:

Ոմանք այս Գրիգորը կ'անուանեն արքեպիսկոպոս. բայց անիկա թեմական եպիսկոպոս միայն էր, վիճակակից Մետրապոլտին Սեբաստիոյ Առաջին Հայոց: Արդ մեր պատմական կարգին դառնալով, պիտի խօսիմ Սեբաստիոյ Մետրապոլտին վիճակակից եպիսկոպոսարանաց վրայ, որոնք տասը կը նշանակուին առաջին Հայոց մէջ, որոնք են:

Ա. Սեբաստուպոլիս քաղաք Փոքուն Հայոց. ոմանք նոյն կը համարին այժմու Թուրխալի հետ. թէպէտ կը կրէ դժուարութիւն, դիրքն և ուրիշ Մետրապոլտութեանց սահմաններուն նկատմամբ: Թերևս աւելի յարմար է նոյնացնել զայն այժմու Սուլու Սէրայի հետ որ կը գտնուի Շիլաքս (Չէքէրէք) գետին քով: Յետ ժամանակաց Սեբաստուպոլիս ստացաւ, արքեպիսկոպոսութեան պատիւ, այլ ոչ իրաւունք զի իր իշխանութեան ներքև չունէր վիճակակից աթոռներ:

Բ. Նիկոպոլիս նոյն համարուած է այժմու Գարահիսար Շարքի կամ Շապին Գարահիսարի հետ որ թերևս հին Կողոնիոյ դիրքն հետ աւելի յարմար է, քան թէ Նիկոպոլիս, որ նոյն կ'երևի այժմու Ազշէհրապատ աւանի հետ: Տես ևս վերջը:

Գ. Կողոնիա Հռովմէական գաղթական մի էր, Սեբաստիոյ գաւառին մէջ. աթոռ եպիսկոպոսական նոյն քաղաքին Մետրոպոլտութեան ներքև. յետոյ ուրեմն բարձրացաւ արքեպիսկոպոսութեան պատուոյ պոնտական վեցերորդապետութեան մէջ. Սեբաստիոյ գաւառին պատկանելով, համաձայն ծանօթութեան Լէոնի: Նիկետաս կը համարի զայն Տագարա.

այս քաղաքին արքեպիսկոպոսութիւնը կ'ելլէ մինչև իններորդ դար ըստ Կոմանվիլլայ, և վեց անձինք արքեպիսկոպոսական տիտղոսով աթոռակալեցին հոն։ Պրոկոպիոս կ'ըսէ թէ բերդ մի էր, զոր Պոմպէոս ամրացուց, երբ նուաճեց այն գաւառն. և թէ ետքը Յուստինիանոս ինքնակալը նորոգեց նորէն զանիկա։ Քաղաքիս անունը մերձաւոր է Գանգալ աւանին հետ. սակայն պատմական ծանօթութիւնք չեն ներեր, զանիկայ այնչափ հեռացնել Սև Ծովէն. ուստի Գարահիսարը Շարկի աւելի յարմար է կամ անոր մօտ քաղաք մը. և որովհետև Պորփիւրոժէն կայսրը կը յիշատակէ ուրիշ Կողոնիա քաղաք մը յանուն փոքուն Հայոց, որ կը կոչուի Տաքսարա յոմանց, ասիկայ Կանգալի հետ նոյն ըսել անդէպ չերևիր։

Դ. Սատաղա, որ այսօր իսկ կը պահէ իր անունը որ կը համարուի նաև Արօրկա կամ Ածպաեր, ասկից էին Եւստաթիոսեան փառաւոր վկայք։ Հին ատենն եպիսկոպոսական աթոռ էր Սեբաստիոյ մետրոպոլութեան ներքև, հինգերորդ դարուն կանգնուած։ Յուստինիանոս Ա. նորէն շինեց, ինչու որ ամուր կերպով շինուած չըլլալուն համար կործաներ էր։ Այս քաղաքին եպիսկոպոսները եղան Եւփտիոս որ յամին 325 ներկայ գտնուեցաւ Նիկիոյ ժողովոյն։ Եւլիտիոս յամին 360 Կ. Պոլիս եղած համախմբութեան մը մէջ աթոռընկէց եղաւ. Բեմենիոս որ Ս. Բարսեղէն թուղթ ընդունեց յամին 377, Անատոլիոս որ Կ. Պոլսի ժողովոյն իր կողմանէ տեղակալ կարգեց Տորոթէոս քահանայն։ Եպիփանիոս յաջորդեց իրեն որ ստորագրեց գաւառին եպիսկոպոսաց առ Լևոն ինքնակալ ուղղած թղթին։ Գրիգորիոս, որ յամին 680 ներկայ գտնուեցաւ Տրուղեան ժողովոյն. Փիլիպպոս, որ մասնակից էր Փոտայ գումարած ժողովակին (Քրիստ. Արևել. Հտ. Ա. էջ 432)։

Ե. Բերիսա կամ Պրիսա զոր ոմանք նոյն կը համարին այժմու Թօգաթ քաղաքին հետ. տեղւոյն մերձաւորութիւնն իրաւունք կու տայ այս կարծեաց, բայց անիկայ աւելի ուղիղ կը յարմարի դրից այժմու Պօրուս կամ Պոլիս աւանի, որ կը գտնուի Որթագապատ (Արթովա) դաշտին մէջ, որ մէկ օր հեռու է Թօգաթէն։

Զ. Պիտակթոլի կամ Հերակլէոպոլիս այս քաղաքը կ'անուանի մանաւանդ Պիտակթոլէ, կը գտնուի Էպիկէ կամ Էտիկէ գաւառակին մէջ[1]։

Է. Այս անուններուն հետ միացնելով նաև գաւառին հին անունը՝ Ցագխմունիա, յայտնի է թէ ասկից առաջ եկած են Իղոկէ կամ Եւդոկէ–Թոքատ անունները. Պիտակ, Թէոնէ–Խատակոէ և Եպիփիկէ–Եփիկէ հընչումներէն. տեսած եմ հինաւուրց ստորագրութիւններ յորում գրուած է Իղոկիա։ Իսկ Հերակլէոպոլիսն աղաւաղուած է Հերպոլէ, կամ Էրտէլա հնչմամբ, որ չէ ծանր փոփոխութիւն։ Ծանօթ է ինձ, թէ շատեր կը խորհին որ Եւդոկէ կամ Թոգաթ մի և նոյն է պոնտական կամ փոքր Հայոց Կոմանայի հետ. այո՝ կրնայ ըլլալ որ անոր աւերելէն ետև ասիկայ ընդարձակեր է։ Եւս կը կարծուի թէ Կապադովկիոյ Նէոկեսարիա քաղաքին տեղը կը գրաւէ և ոչ անոր որ հիմա Նիքսար կը կոչուի։

Ը. Յուստինիանուպոլիս. (Երիզա կամ Երզնկա) Եկեղեաց գաւառին մէջ որ ժամանակ մը մայրաքաղաք եղաւ Արշակունեաց թագաւորութեան մէկ մասին։ Հին ատեն հռչակուած էր այս քաղաքը. ոսկեձղին ոսկի-մայր Անահիտի տօնին համար, որ կը կոչուէր մայր ամենայն զգաստութեան։

Թ. Կամախ որ իր անունը պահած է ցարդ։ Անի ևս կը կոչուէր. ամուր բերդ մ'էր Դարանաղեաց գաւառին մէջ։

Ժ. Թէոդուպոլիս, որ Կարին գաւառին մէջ էր, ուստի և հին ատեն կ'անուանէր Կարնոյ քաղաք. իսկ հիմակ առ հասարակ կը կոչեն Էրզրում։ Ոմանք Թէոդուպոլիսը նոյն կը դնեն Հասան Գալէ ամրոցին հետ։ Իսկ Էրզրումը նոյն Արծն քաղաքին հետ որ է Արծն Յունաց կամ Էրզրում։

Յուստինիանուպոլիս, Կամախ և Թէոդուպոլիս ետքէն արքեպիսկոպոսութեան պատուոյ բարձրացան։

1. Եռիկէ կամ Եռիկացւոց գաւառ, Սեբաստիոյ սահմաններուն մօտերն, որուն մէջ կը գտնուէր Պիտակթոլէ կամ փիթակթոնէ գիւղը կամ աւանը. Հայրենիք սրբոյն Աթանագինեայ։

Սակուպինէ գիւղ Պիտակթոլէի մօտը։

Վէմօրի գիւղ բարձր լերան գլխացը ուր ապաստանեցաւ Ս. Աթանագինէս և վէմէ ջուր բխեցուց։

Գօոզէ ագարակ Սապուտեցւոց սահմանին մէջ հինգ կամ վեց մղոն Պիտակթոլէն հեռու։

կարեւոր ծանօթութիւն

Այս երեք քաղաքներն իրենց գաւառներովն, մասն էին Թագաւորութեան Արշակունեաց, որ երբ երկուքի բաժնուեցաւ Պարսկային և Հռովմէական ինքնակալութեան մէջ յամին 386 *կամ* 387, *ասոնք յետոյ բաժին ինկան, ինչպէս նաև Ծոփք և Տիոսպոնտոս գաւառները։ Մեծին Ներսէսի մահուանէն ետև* (373) *«Շահակ ոմն կացուցեալ փոխան նորա առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» (Խորէն. Գիրք Գ. Գլ. ԼԹ), կը ծագէր վէճ իրաւաբանական Կեսարիոյ և Հայոց Մեծաց աթոռներուն մէջ, որոնց վրայ երկայն կը գրէ նաև Բուզանդ։ Ամին իրի Հայոց եպիսկոպոսներն իրենց ձեռնադրութիւնն սկսան առնուլ անկից ետև Կեսարիա. և ետքն երբոր պետութիւնը բաժնուեցաւ և ապա վերցաւ, Յունաց մասին եպիսկոպոսները, մանաւանդ վերը յիշուած երեք քաղաքներուն, անցան Կեսարիոյ վեցերորդապետին (Էքսարք) իշխանութեան ներքև և խառնուեցան առաջին Հայոց կամ Սեբաստիոյ Մետրապօլտի գաւառին մէջ։ Խորենացին կը գրէ այս բանիս վրայ, համառօտ բովանդակելով կարեւոր եղածն, կ'ըսէ « Եւ ուստի (Մեսրոպ) գնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բայց Յունաց մասնէն (Հայոց Մեծաց) որք ընդ ձեռնադրութեամբն տուգանեցան՝ վիճակեալ յաթոռն Կեսարու » (Գիրք. Գ. Գլ. ԾԴ)։ Եւ ահա այսպէս եպիսկոպոսապետք Մեծին Հայոց Գրիգորէ ի վեր եղած հնաւանդ սովորութիւնը լքանելով, որոյ համեմատ ձեռնադրութիւնք Կեսարիոյ աթոռէն կ'առնուին, այն երեք գաւառներուն կամ եկեղեցիներուն վրայ, որոնք էին Երիզա, Կամախ, և Թէոդուպօլիս արգիլուեցան իշխանութիւն վարել, և անոնք մտան Սեբաստիոյ եպիսկոպոսապետին վիճակն որ կը պատկանէր վեցերորդապետութեան Կեսարիոյ։*

Եւ ահա այս պատճառաւ երբոր Մեծն Սահակ եկաւ Յունաց բաժինը՝ չ'ընդունուեցաւ իր իրաւանց արժանեաց համեմատ, ինչպէս ինքն անձամբ տրտունջ վերցուց Թէոդոս Բ. ինքնակալին թղթով՝ ուր կ'ըսէ. « Ոչ

հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուաց սոցա…. Արդ հաճոյ թուեսցի տէրութեան ձերում, ոչ անիշխան առնել զմեզ ի մերում վիճակիս»: Գրեց նաև Կ. Պոլսոյ Ատտիկոս Հայրապետին որ Հայ էր ազգաւ և Սեբաստացի, որ բարեխօսելով մեծ Թագաւորին քով, օգնէ իրեն, որպէս արդարև Եղբայր Սիրելի: Եւ այս թղթերը երանելոյն Մեսրոպայ և քաջին Վարդանայ Մամիկոնէի ձեռամբ ճամբեց Կ. Պոլիս: Մեսրոպ իր բազմաթիւ աշակերտներն՝ զորոնք իրենց գլխաւորին Ղևոնդի հետ բերած էր միասին, յանձնեց Մելիտինեայ Ակակ եպիսկոպոսին և անոր քով թողլով զանոնք, ինքը Վարդանին հետ գնաց Բիւզանդիոն յանձնարարական թղթով Անատոլ զօրավարին՝ որ կը նստէր Մելիտինէ:

Կայսեր և Հայրապետին պատասխանները մեզ այրական էին. բայց և այնպէս կը գրէ Թէոդոս թէ զիջեալ ի խնդիր եպիսկոպոսապետին Սահակայ, անոր մեծամեծ արդեանց համար, «Գրեցաք (կը յաւելու) զի… զքեզ պատուով ընկալցին, իբրև զարդարև Վարդապետ իւրեանց հանգոյն Արքեպիսկոպոսին Կեսարու և դարմանք և ծախք յարքունուստ տացին» (Խորեն. Գիրք. Գ. Գլ. ԾԷ.): Եւ այս կերպով Հայոց Մեծաց եպիսկոպոսապետին հաճութիւն և հրաման կը տրուի յիշուած երեք գաւառաց՝ Կարնոյ, Երիզայ և Կամախի (ինչպէս նաև անոնց վրայ, զորոնք վերը յիշատակեցի), վարել իշխանութիւն իբր հայրապետ (էքսարք) «Հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու»: Ասա անկից ետև ես իրաւունք ունէր այն երեք եպիսկոպոսարանաց, այսինքն անոնց մէջ բնակած սակաւաթիւ յունաց կամ Յունածէսից վրայ: Որովհետև այն նշանաւոր դէպքէն ետքն ևս, նոյն քաղաքաց եպիսկոպոսները կը տեսնուին յիշատակուած գրուածոց մէջ Սեբաստիոյ Մետրապոլտութեան ներքև, ի բաց առեալ անշուշտ անոնց մէջ բնակած հայերը: Վերցուեցաւ Կեսարիա ձեռնադրուելու խնդիրն ևս, որ անկէց ետև սեպհականուեցաւ Հայոց մեծաց եպիսկոպոսներուն:

Դ. — ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՔ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՈՑ

Ա. *Եկեղեցին Մելիտինեայ Մայրաքաղաք, ընդ որով*
Բ. » *Արկայ*
Գ. » *Կոմանայ*
Դ. » *Արապիսոսի*
Ե. » *Կոկիսոնի*
Զ. » *Արիարաթիոյ*
Է. » *Կիթարի Զորոյ. նաև*
Ը. » *Սոփենէի*
Թ. » *Տրապոնտեայ կամ Պիտոպոնտեայ*

Մելիտինէ՝ գաւառին Մայրաքաղաքն էր և Մետրապօլտի աթոռ, ու փոքր Հայոց հնագոյն քաղաքներէն մէկը կը համարուէր։ Բևեռագրերը կը պատմեն անոր առանձին թագաւորութեան վրայ. կը պանծայ իրեն հիմնադիր ունենալ Ասորեստանեայց Շամիրամ դշխոյն, կամ ինչպէս ուրիշները կ՚ուզեն՝ Շահ–Միր–Ամ ինքնակալը. Մելիտեայ պատուոյն կառուցուած է, որ է Մա կամ Մէն՝ այսինքն՝ լուսին, որ Հայոց Անահիտն է. և այս պատճառաւ քաղաքն անուանած է Մալաենի կամ Մելիտինէ յամին իբր 1767, Քրիստոսէ առաջ։ Զանց ընելով ուրիշ մասնաւորութիւնները, Տրայիանոս ինքնակալը Քրիստոսի երկրորդ դարուն սկիզբները նորոգեց զայն և անուանեց Մայրաքաղաք համօրէն Հայաստանի. և մնաց նոյն պատուոյն մէջ միայն երկու տարի. այլ այս առթիւ ծաղկեալ բարգաւաճեցաւ անկէց ետև։ Վեցերորդ դարուն Պարսիկներն և Յոյները մեծամեծ պատերազմներ մղեցին անոր մօտերը. Հնդկաստանի կարաւանաց երթևեկութեամբը նորէն յառաջադէմ զարգացաւ և եղաւ քաղաք շահաստանի նոյն երկիրը եկող գնացողներուն։ Մետասաներորդ դարէն ետև Սկիւթական խուժաններէն ոտնակոխ ըլլալով՝ ընկաւ առաջին

մեծութենէն: Եւ Օսմանեան պետութեան հովանաւորութեամբ հանգարտելով, բնակիչները թողուցին հին քաղաքն և հաստատուեցան Ասպուզլի ամարաստանի մէջ, որ հետզհետէ առաջ կ'երթայ:

Քրիստոսական կրօնից Առաքեալներէն և անոնց աշակերտներէն քարոզուած ըլլալուն, ինչպէս նաև գաւառիս Մարտիրոսաց վրայ՝ խօսեցայ առաջ. ուր ցուցուեցաւ նաև թէ Մելիտինոյ եկեղեցին սկիզբն առած է նոյն Առաքեալներէն: Իսկ անոր Եպիսկոպոսներէն ամենէն առաջ յիշուածն՝ է Ս. Յուսիկ Մարտիրոս, որ Քրիստոսի հաւատոյ համար նահատակուեցաւ Գորդիանոս ինքնակալին ժամանակ (239–244)*: Ոմանք Յուսիկ կամ Եւսիկիոս անունը կը փոխեն և կ'ընեն Եւտիքէս: Ոմանք զանիկա ժամանակակից Առաքելոց կը համարին և թէ անոնց ժամանակն աթոռ եղած ըլլայ:*

Երկրորդ կը յիշուի Ս. Ակակ Ա. Մարտիրոս, որ նահատակուեցաւ Դեկոս կայսեր ժամանակ (249–251)*:*

Գ. Ուրանիոս, որ Մելիտոսի Անտիոքայ Հայրապետին յամին 363*. առ Յովինիանոս ինքնակալ գրած ժողովական թղթին մէջ դրաւ իր հաւանութեան ձեռագիրն ուրիշ արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց հետ:*

Դ. Ոտրէիոս Ա. այր առաքինի ամէն բանի մէջ: Յամին 372 *գումարեցան Մելիտոսի Անտիոքայ Պատրիարքին քով ԼԹ. եպիսկոպոսներ, որոնց մէջ էին՝ Եւսեբիոս Սամոսատայ և մեծն Բարսեղ Կեսարիոյ, և ուրիշ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, և թուղթ գրեցին Իտալիոյ և Գաղղիոյ եպիսկոպոսաց: Ոտրէիոսի եպիսկոպոսութիւնն երկարատև եղաւ ինչու որ յամին* 376, *գտնուեցաւ Տիանայի ժողովին և յամին* 381 *Կ. Պոլսի Ա. ժողովին մէջ: Նախ այս ժողովոյն կողմանէ՝ և միանգամայն Թէոդոս Մեծէն, ղրկուեցաւ Գրիգոր Նիւսացւոյ հետ Պոնտոսի գաւառը՝ մաքրելու համար անկէ Արիոսի աղանդը:*

Ե. Լէտոյոս կամ Լիտիոս, սրբակրօն անձ մի էր, որուն երկայնապատում նամակ մը գրեց Գրիգոր Նիւսացի՝ եղբայր Ս. Մեծին Բարսղի:

Զ. Ակակ Բ. Յունաց քով կը պատուի իբրև սուրբ և սքանչելագործ անձ մը, որ ժամանակին հերձուածողաց դէմ քաջութեամբ մրցե-

ցաւ։ Մեծին Կիւրղի Աղեքսանդրիոյ Հայրապետին հետ ախոյեան հանդիսացաւ Նեստորի դէմ։ Առաջինկայ գտնուեցաւ յամին 431 Եփեսոսի ժողովոյն. գրեց թուղթ առ Մեծն Սահակ յամին 431 ինչպէս նաև Կիւրեղ և Պրոկղ. մեծապէս ձեռնտու եղաւ երանելւոյն Մեսրոպայ։ Հանգեաւ ի Տէր յամին 438, թողլով մեծ և փառաւոր անուն։

Է. Սիւնոտիոս, առաքինութեամբ, խոհեմութեամբ և վարդապետութեամբ իր նախորդէն պակաս չէր, միայն շատ ծեր էր, և տասը տարի մնալով իր պաշտաման մէջ 439–448ին հանգեաւ ի Տէր։

Ը. Կոստանդին, որ անձամբ ներկայ գտնուեցաւ Քաղկեդոնի ժողովոյն յամին 451. և ստորագրեց։

Թ. Ոտրէկոս Բ. գաւառական ժողով գումարեց, որուն մէջ ներկայ գտնուեցան մետրապօլտութեան եպիսկոպոսները՝ Ակակ Արիարաթիոյ, Յովհաննէս Արկայ, Ատիլմի Արապխոսի, Որմիզդ Կոմանացւոց և Լոնգին Կոկիսոնի, որոնք բարեկրօն անձինք էին, և Մելիտինոյ աթոռոյն վիճակակիցները. ժողովքին նպատակն էր մերժումն հերետիկոսութեանց։ Ոտրէկոս ժողովական Հարց հետ գրեց Լեոն կայսեր թուղթ ընդունելութեան ժողովոյն Քաղկեդոնի. և նոյն գրութեան մէջ կ'ըսեն. եթէ «Զսուրբ Հարսն, որք ի Քաղկեդոն ժողովեցան, իբրև զնոյն երեք հարիւր ութուտասան Հարսն (Նիկիայ) պատուեմք»։ Նոյն օրինակ թուղթ գրեցին յիշեալ կայսեր նաև բոլոր եպիսկոպոսունք արեւմտեան Հայոց։

Ժ. Զաքարիա ճարտարախօս ազգաւ ասորի և աղանդով միաբնակ։

ԺԱ. Եւլոկ
ԺԲ. Մամաս
ԺԳ. Փալլադիս
} Ասոնք երեքը Մետրապօլիտ եղան վեցերորդ դարուն, և սրբութեամբ արածեցին Քրիստոսի հօտը Մելիտինէի մէջ։

ԺԴ. Դոմետիանոս, արժանաժառանգ յաջորդ եղաւ վերոյիշեալ երեք եպիսկոպոսաց՝ սրբութեամբ և վարդապետութեամբ 595–609 տարիներուն մէջ. ազգական էր Մօրիկ կայսեր, և անոր որդւոցը խնամակալ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Հոս իբր եօթանասուն եւ աւելի տարի բաց կայ։

ԺԵ. Թէոդորոս Ա. որ յամին 681. *գտնուեցաւ Կ. Պօլսոյ Զ. ժողովին մէջ, և թէպէտ առաջ միաբան էր միակամեայց հետ, և կ'ուրանար ի Քրիստոս երկու կամք և երկու գործողութիւն, բայց ետքը միաբանեցաւ Ս. Հարց հետ նոյն ժողովքին մէջ։*

ԺԶ. Դոմերիանոս կը յիշատակուի յամին 696։

ԾԱՆ. Հոս եւս կայ բաց մը 250. եւ աւելի տարիներու։

ԺԷ. Թէոդորոս Բ. Ասիկա ունեցաւ յարաբերութիւն Մեծին Հայոց եկեղեցւոյն հետ։ վահան եպիսկոպոս, որ սուրգապէս ճանչցած էր Քաղկեդոնի ժողովոյն վարդապետութեան ուղղութիւնն, ընդունեցաւ զայն մտադիւր, և միաբանեցաւ Յունաց հետ։ Եւ երբ կաթողիկոս եղաւ զրութեամբ ևս հաստատեց իր միաբանութիւնը Յունաց և Վրաց հետ՝ Թէոդորոսի, Մելիտինոյ Մետրապօլտին ձեռքով։ Թէոդորոս Մետրապօլիտն իբր Լ. տարի վարեց իշխանութիւնն և վախճանեցաւ։

ԺԸ. Յովհաննէս Ա. նստաւ յամին 1027 *և յամին* 1028. *Կ. Պօլիս գումարուած ժողովքի մէջ ստորագրեց « Յովհաննէս Մելիտինացի »։*

ԺԹ. Նիկեփորոս, ականաւոր և մեծ գովեստի արժանի անձ էր. վարեց իշխանութիւնն երկու տարի 1028–30։

Ի. (որուն անունն անյայտ է) 1056 *կամ* 1067։

ԻԱ. (որուն անունն անյայտ է) 1151 *կամ* 1153։

ԻԲ. Նիկետաս 1166 *կամ* 1177։

ԻԳ. Յովհաննէս Բ։

Ետքը Թաթարները, Սելճուգները և այլք գրաւեցին քաղաքն և գաւառն, և կորսնցուց իր առջի մեծութիւնն և շատ ստորնացաւ։

Բայց և այնպէս Քահանայապետք Հռովմայ պահեցին անոր արքեպիսկոպոսական աթոռն, որով պատուեցին

Ա. Փրանկիսկոս–Փրետերիկոս Եօրտանին, զոր Բենետիկտոս ԺԳ. անուանեց յամին 1725 *արքեպիսկոպոս Մելիտինոյ։*

Բ. Գաբրիէլ Տէրբի Նաւարրացին յամին 1741. *Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետը։*

Գ. Գաբրիէլ Մարիամ Կրաւէն յամին 1818. *Պիոս Է։*

Դ. Հերոնիմոս Անտրէի յամին 1841 *ի Գրիգոր ԺԶ. Քահանայապետէն որ ետքը Պիոս Թ. կարտինալութեան բարձրացուց:*

Ե. Փրանկիսկոս Քաւերիոս Տէ-Մէրօտ յամին 1866*. Պիոս Թ. Քահանայապետէն. և ուրիշներ:*

Վեց եպիսկոպոսարաններ կը նշանակուին Մելիտինոյ Մետրապօլտին իշխանութեան ներքև. նաև ուրիշ երկու վրայ աւելցուած, որոնց նկատմամբ պիտի գրեմ հոս համառօտ:

Ա. Արկայ, Միլոսի (Թոքմա) վրայ, Ագճուտաղի մէջ. այժմ քաղաքագիւղ է և կը կոչուի Արղա:

Բ. Կոմանայ Կապադովկիոյ, Սար (Սէյհուն) գետին վրայ. առաջ հռչակաւոր քաղաք էր, ինչպէս կը պատմէ Ստրաբոն Պելլոնայ դից մեհենին համար, զոր Ցոյնք Էնյօ կ'անուանէին: Ասոր նկատմամբ պատմութեան մէջ տեղ տեղ խօսեցայ: Այս մեծ քաղաքին աւերակը կը գտնուի հիմա Հաճըն գաւառակի հիւսիսակողմը և կը կոչուի Շէհր-Տերէսի, և կը բնակին հոն այժմ նաև Հայեր, որոնք մեծաւ մասամբ Հաճնէն գաղթած են:

Գ. Արապիսոս, այժմ Եարբուզ: Այն կողմերու քրիստոնեայք կ'անուանեն Արբըսոս: Ոմանք Կիւրին կը տանին զայն, և մինչև Արաբկեր կը հասցնեն՝ որ սխալ է: Եարբուզ հիմա աւան մի է և կը գտնուի Էլ-Պօսթան գաւառակին մէջ 6 *ժամ հեռու դէպ արևմուտք:*

Դ. Արիարաթիա. հաւանած եմ ասիկա նոյն համարել Էլ-Պօսթանայ (Ապլաստան կամ Ալպըսթան) հետ. Պիւրամ (Ճիհան գետին վրայ): Թէպէտ ոմանք Սարի աղբերակներուն քով կը դնեն զայն Կոմանայի հիւսիսակողմն, ուրիշները Կոմանայի հետ նոյն կը համարին:

Ե. Կաթարի ձոր կամ Կառնակձոր, որ կ'երևի թէ նոյն է Կառնակ-Կիւրին քաղաքի կամ աւանի հետ:

Զ. Կոկիսոն. արևմուտցիք Քուքուզա, և արդիք Կէօքսուն կամ Կէօյսուն կ'անուանեն: Այս քաղաքն էր և Ցուլիանոսի հալածանաց ժամանակ նահատակուեցաւ Ս. Ստեփանոս որ իր թաղման տեղւոյն

համար կոչուեցաւ Ոլնեցի այսինքն Յուլիոպոլսեցի, որուն աւերակը մօտ է Փորնոսի և որոյ պատճառաւ Չէյթուն քաղաքը կը կոչուի ևս Յուլնիա։ Ստեփանոսի հետ նահատակուեցան նաև իր բոլոր ազգականներն երեսուն և չորս անձինք յամին 361։ *Շատ հռչակուեցաւ այս քաղաքը պատճառաւ մեծանուն սուրբ անձանց, որոնք հոն աքսորուեցան. ինչպէս էր Պօղոս խոստովանող Հայրապետ Կ. Պօլսոյ՝ Կոստանդին կայսերէն. և Մեծն Յովհան Ոսկեբերան, զոր Արկադ կայսրը ղրկեց հոն յամին* 404, *ուր և խօսեցաւ գեղեցիկ ճառ մը Ս. Գրիգոր Լուսաւորչի վրայ։ Կոկիսոն՝ քաղաք փոքուն Հայոց և իր եպիսկոպոսութիւնն սկսած է Գ. դարուն։ Կոկիսոնի Հայ եպիսկոպոսն յամին* 1342, *առաջիկայ գտնուեցաւ ժողովոյն զոր Մխիթար Կաթողիկոս գումարեց Սիս մայրաքաղաքին մէջ։*

Իսկ երկու քաղաքաց համար, որոնց վրայ պիտի շարունակեմ խօսելու, թէ երբ և ի՞նչ կերպով ընկան Մելիտինոյ Մետրապօլտին իշխանութեան ներքև, արդէն ըսած եմ, արևմտեայ Հայոց երեք գաւառաց կամ քաղաքաց (Կարնոյ, Երիզայ և Կամախի) վրայ խօսելով. տես հոն։

Է. Սոփենէ կամ Ծոփք. որ նոյն է այժմու Խարբերդ գաւառին (Սանճագ) հետ։

Ը. Տրապոնտիս կամ Տիրապոնտիս, և կամ Պիրապոնտիս, Մեծ Հայոց հին քաղաքներէն, որուն եպիսկոպոսն էր Ս. Արիստակէս, որ իբրև տեղապահ հայ նուիրապետութեան Ս. Գրիգոր Հայոց Լուսաւորչի անուամբ գնաց Նիկիոյ Ա. ժողովքին, ինչպէս կը տեսնուի նոյն ժողովոյն գրենց պատմութեան մէջ։

Ե. — ՄԵՏՐԱՊՕԼՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՍԿԻԶԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԱՒԱՌԱՑ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Մետրապօլտութեանց յօրինուածը շատ հին է. Գ. դարուն անիկա կազմուած և կարգուած էր։ Նիկիոյ ժողովին մէջ առաջին անգամ կը յիշատակուին Հռովմայ, Աղեքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղէմի Աթոռներն նաև Գաւառներ, որոնք էին Թրակիոյ, Պոնտոսի և Ասիոյ վիճակներն, նոյնպէս Կարքեդոնի. կը յիշատակուին նմանապէս Մետրապօլիտք կամ եպիսկոպոսապետներ, ինչպէս եւ Հռովմայ Քահանայապետաց գլխաւորութիւնը։ Հին բարեկարգութիւնն եկեղեցւոյ մասն փոքր Հայք առաջին գաւառաց հետ։

Կ. Պօլսոյ Ա. ժողովոյն մէջ՝ Արեւելք եղած վիճակաց վրայ որոշակի խօսք եղաւ, որուն երկրորդ կանոնին մէջ այսպէս գրուած կը գտնուի.

«Որ ի վիճակացն վերայ կան եպիսկոպոսունք, յեկեղեցիսն՝ որ արտաքոյ քան զորոշեալ սահմանս իւրեանց իցեն, մի մատիցեն, և մի զայն կարծեօք վրդովեսցեն, այլ ըստ կանոնաց՝ Աղեքսանդրիոյ միայն Առաջնորդն՝ զորս յԵգիպտոս են՝ խնամեսցէ. և Արեւելից (այս է երկրին Ասորւոց) եպիսկոպոսք զարևելս ևեթ յանձանձեսցեն, պահեալ զառաջնաշնորհութիւնն՝ որք ի Նիկիական կանոնաց՝ եկեղեցւոյն Անտիոքայ ընծայեցան։ Եւ Ասիական վիճակին (այս է գաւառաց փոքուն Ասիոյ առ Միջերկրական ծովուն) եպիսկոպոսք՝ զորս յԱսիոյ վիճակին են՝ զայնս ևեթ հոգասցին։ Եւս և Պոնտոսի (իմա՝ գաւառաց փոքուն Ասիոյ, որ առ Եւքսինեան Պոնտոսին) եպիսկոպոսք զայն միայն՝ որք ենն ի Պոնտոս։ Եւ Թրակացւոցն (եպիսկոպոսք), զորս ի Թրակիա՝ յանձանձեսցեն...։ Իսկ եկեղեցիք Աստուծոյ ի խժական ազինս հաստատեալք (այս է՝ արտաքոյ Հռովմէական ինքնակալութեան), ի դէպ է, զի յարգարեսցին ըստ սովորութեանն, որ ի Հարցն պահեալ է։

Այլ և Կ. Պօլսի եպիսկոպոսն ունիցի առաջնութիւն պատուոյ զկնի եպիսկոպոսին Հռովմայ, զի քաղաքն այն կրտսեր Հռովմ է »:

Պոնտոսի կողմն եղած վիճակին գլուխ էր Կեսարիոյ Կապադովկացւոց վեցերորդապետն և իր իշխանութեան ներքև ունէր տասներկու Մետրապօլտութիւններ. որոնց մէջ էին փոքուն Հայոց երկու գաւառներն, առաջին Հայք (Սեբաստիա), Երկրորդ Հայք (Մելիտինէ): Կան որ Մեծ Հայք ևս կը դնեն նոյն վեցերորդապետութեան գաւառաց մէջ, բայց անիկա մեծագոյն էր այդ գաւառաց շատերէն մէկտեղ առնուած. և անշուշտ տարբեր կերպով կը յանձանձուէր:

Կ. Պօլսոյ եպիսկոպոսը Թրակիոյ Մետրապօլտական գաւառին վիճակակիցներէն մէկն էր առաջ. ինքնակալութեան գահն հոն փոխադրուելով, ընդունեցաւ պատիւ Մետրապօլտի, այսինքն՝ առանց վիճակակից աթոռոց, և որովհետև գաւառին Մետրապօլտէն չէր կախուած, անոր համար կը կոչուէր ինքնագլուխ, չէ թէ իրմէ վերնագոյն չունէր կամ չէր ճանչնար, այլ անոր համար միայն, որ գաւառին Մետրապօլտի իշխանութենէն արտօնցած էր. և ոչ բնաւ վերնագոյն Մեծաւորներէն, և մանաւանդ Քահանայապետէն Հռովմայ:

Արդ՝ Կ. Պօլսոյ Տիեզերական ժողովոյն երկրորդ կանոնին մէջ գրուած խօսքին թէ « Կ. Պօլսի եպիսկոպոսն ունիցի առաջնութիւն պատուոյ զկնի եպիսկոպոսին Հռովմայ », յենլով՝ զոր Մեծն Լեոն Քահանայապետը զավփազփուն և անզօր կ'անուանէ Կ. Պօլսոյ եպիսկոպոսները ձեռք նետեցին Պոնտոսի, Ասիոյ և Թրակիոյ վիճակաց վրայ: Այս նպատակին աւելի ևս օժանդակեցին իրենց՝ Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովոյն իններորդ և եօթնևտասներորդ կանոններն՝ որոնցմով հաւանութիւն կը տրուէր, որ այն երեք վիճակաց ժառանգաւորներէն կամ եպիսկոպոսներէն մին՝ երբ զրկանք կրէ իր եպիսկոպոսապետէն, կամ ուրիշ ով որ ըլլայ, կրնայ դիմել վիճակին Գահերեցին (Էքսարք), կամ Հայրապետին Կ. Պօլսոյ՝ տեսնել իրեն դատաստանն: Ասոնք և ինչ որ առաջ կը կատարուէր, և ետևէ ետև գործուեցան, և նոյն գաղտագողի աւելցուած քսանևութերորդ անուանեալ կանոնն,

(որում հակառակ կեցան Լեւոն Մեծն և ուրիշ Հռովմէական Քահանայապետք, իբր խոտելի, և ոչ իբր գործ ժողովոյն. ինչպէս նաև ուրիշ ականաւոր Հարք, համարելով զայն փոփոխութիւն և խանգարումն առաջին եկեղեցական բարեկարգութեան), դիւրինցուցին Կ. Պօլսեցւոց գաղափարն՝ բերել ձուլել թագաւորեալ քաղաքին Հայրապետութեան հետ այն վիճակներն և գաւառներն, և այսպէս հերձուածոց և այնչափ աղետից հիմն դրին եկեղեցւոյն Աստուծոյ՝ Արևելքի մէջ: Այսպէս ահա երեք վիճակաց բոլոր Մետրապօլտութիւնները նոյն քաղաքին Հայրապետութեան ներքև կը մտնէին առանց և ոչ մէկ դժուարութեան:

Այլ ևս անկէց ետև Տիեզերական Պատրիարքին կամացը համեմատ կը բարձրանային բարձր պատիւներու. ինչպէս՝ Սեբաստիոյ եպիսկոպոսապետին տրուեցաւ պատիւ Գահերեցու կամ վեցերորդապետի (Էքզարք), ինչու որ կը կախուէր անմիջապէս Պատրիարքին իշխանութենէն. այսպէս նաև ուրիշներու[1]:

Պէտք է հիմակ դառնամ քննութեան հանգամանաց նուիրական Հայ Աթոռներուն: Կ. Պօլսոյ Առաջին՝ Տիեզերական երկրորդ՝ ժողովոյն երկրորդ կանոնին մէջ կը գրուի. «Իսկ եկեղեցիք Աստուծոյ, որ ի խժական ազգինս (այս է ի գաւառս, որ արտաքոյ Հռովմէական իշխանութեան) հաստատեալք, ի դէպ է զի ըստ սովորութեան որ ի Հարց պահեալ է, յանձանձեսցին»: Արդ՝

Սովորութիւնը Մեծ Հայոց եկեղեցւոյն համար ի մասնաւորի հետևեալն էր. Ա. Կեսարիոյ Հայրապետն, որ Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրեց, իր առ Տրդատ թագաւոր Հայոց գրած կոնդակաւ, Ագաթանգեղոսի աւանդածին համեմատ, կը հրամայէ. «Հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս. զի պարգևարաշխութիւն նորոգեալ Քահանայապետութեան Ձերոյ նահանգի առ ի մէնջ՝ կացցէ

1. Բայց այն ատեն այս կարգադրութիւնները Յունաց եկեղեցւոյն միայն կը պատկանէր, ինչու որ Ժ.Գ. դարէն առաջ ևս, Հայոց և Յունաց իրերը մէկմէկէ զատ էին, և անոնց ամէն մէկը Սեբաստիա քաղաքին մէջ ունէր իր առանձին եպիսկոպոսապետը կամ Մետրապոլիտը:

*անշարժ յեկեղեցւոջս Կեսարու, ուստի հանդերձեալ ձեզ պատրաստու-
թիւն շինութեան ձեռնադրութեանս»: Բ. Կիւզիկեցի Գեղասիոսի քով,
Նիկիոյ ժողովոյն Հարց կարգին մէջ, այս կերպով կը յիշատակուի
«Ղեոնդիոս Կեսարու Կապադովկացւոց, զարդ եկեղեցւոյն Աստուծոյ
վասն եկեղեցեացն նորին Կապադովկիոյ, Գաղատիոյ, Պոնտոսի Դիոս-
պոնտեայ, Պափղագոնիոյ, Պոլեմոնական Պոնտոսի, Մեծ և փոքր Հայոց»,
թերևս Մեծ Հայքը գրուած է սխալմամբ կամ չափազանցութեամբ:*

*Գ. Իրաւարանական վէճն, որ ծագեցաւ Կեսարիոյ էքզարքին և
Հայոց մեծաց եպիսկոպոսապետութեան մէջ, պատճառաւ Շահակի աթո-
ռակալութեան «առանց Մեծի արքեպիսկոպոսապետին Կեսարու». և
ինչ որ անկէ հետևեցաւ, ինչպէս կը պատմեն՝ ոչ միայն Բուզանդ այլ
նաև Խորենացին, ինչպէս տեսնուեցաւ առաջ, ուրիշ ամէն պարագա-
ներովը յայտնի կ'ընեն թէ ինչ էր Սովորութիւնն պահեալ ի Հայս:*

*Սակայն մեր յետնագոյն պատմիչներն, իրենց գլուխ ունենալով,
պատմաբան կոչուած Յովհաննէս կաթողիկոսը, մեծ ժողով մը կը
յիշատակեն Մեծն Ներսէսի ժամանակ Վաղարշապատ թագաւորական
քաղաքին մէջ, ուր Արշակ թագաւորն և նախարարութիւնք Հայոց,
կ'ամբառնան զՄեծն Ներսէս ի Պատրիարքական աթոռ Թորգոմայ Տանս:*

*Յովհաննէս կաթողիկոս իր պատմութեան ԺԲ գլխոյն մեծ մասը
կը նուիրէ ասոր. աշխարհքի Պատրիարքները չորս կը համարի ի սկզբանէ,
չորս Աւետարանչաց համեմատ, և թէ Կոստանդեայ (որդի Մեծին Կոս-
տանդիանոսի) «Յեփեսոսէ ի Կ. Պօլիս գնշխարս ոսկերաց Յովհաննու
Աւետարանչի փոխեալ, և յայնմանէ համարձակութիւն առեալ՝ Պա-
տրիարք ի Կ. Պօլիս կացուցանէ: Ըստ այսմ պատճառի և Երուսաղե-
մացիք առեալ զիւրեանցն ևս աթոռ ի պատիւ Պատրիարքութեան . . .:
Ապա յայսմանէ իրակութեանց վեց բովանդակեալ կային: Ըստ սմին
սակի ապա և մերն թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հայոց հա-
մարձակութիւն առեալ կացուցին ի պատրիարքութիւն Տանս Թորգոմայ
զՄեծն Ներսէս, փաստս իրաւախոհս ըստ արժանին ի մէջ բերեալ զՍ.
Առաքելոյն մեր զԲարթուղիմէոս և զԹադէոս. որք առաքնագեան ազին*

վիճակեցան քարոզք և Աւետարանիչք... եօթն միանգամայն բովանդակեալ զտանէր թիւ Պատրիարքութեան»: Եւ յաւելու՝ «իսկ ի Սեբաստիա, ի Մելիտինէ և ի Մարտիրոսաց քաղաքին Մետրապօլիտս կացուցանէին»: Զնոյն կը համառօտէ և Վարդան պատմիչ, և կը յիշէ ևս այս երեք քաղաքներն իբրև նոր կարգուած Մետրապօլտութիւններ:

Այս պատմութիւնը մէջ կը բերէ նաև Ուռպելեանն և կ'ըսէ «եթէ Արշակ թագաւորն մեծաւ ժողովով զբովանդակ կարգս եկեղեցւոյ անթերի սահմանել հրամայէ. զՍ· Ներսէս կացուցանեն Պատրիարք, և ի ներքոյ նորա արքեպիսկոպոս զԱղուանիցն, որ կաթողիկոս. և Մետրապօլիտս զՍիւնեաց եպիսկոպոսն և զՎրացն և զՄարդպետականն և յետ այլ Մետրապօլիտս կացուցանեն զՄելիտինեայն և զՍեբաստիոյն» (Հտ. Ա. Գլ. Է.):

Երեքին խօսքերը մի և նոյն են. ընդարձակ գրած է Յովհաննէս կաթողիկոս. և երկու վերջինք համառօտեր են անոր գրածը: Բայց ինչ ընելու է, որ ասոնք չեն համաձայնիր ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան, և ոչ մեր ժամանակակից պատմչաց, մանաւանդ Բուզանդի և Մովսէս Խորենացւոյն հետ, ինչպէս վերը գրուեցաւ: Զի այն ատեն՝ ինչ ինչ բացառութեամբ անշուշտ Հայկական երեք Աթոռները՝ Մեծին Հայոց, Սեբաստիոյ և Մելիտինոյ, կերպով մը հանգիտապատիւ կ'երևէին իրարու, և չէր կրնար անշուշտ առաջինն, այն ժամանակ, երկու վերջին քաղաքաց վրայ իր ձեռաց ներքև Մետրապօլիտներ կարգել. որոց պատճառաւ կրնար մեծագոյն դժուարութիւններ առաջ գալ:

Սակայն կ'երևի, որ սրբոյն Սահակայ օրերը փոփոխութիւն մը տեղի ունեցաւ. ինչ ինչ առաւելութիւններ ճանչուեցան Հայոց Հայրապետին նկատմամբ. որով կեսարիա ձեռնադրուելու խնդիրը դադրեցաւ: Սակայն Կ. Պօլսոյ Հայրապետները կը պնդէին տակաւին իրենց փոխանցելու այն իրաւունքը. «զի եպիսկոպոսունք վիճակաց յաշխարհս բարբարոսաց յԱթոռոյն Կ. Պօլսի ձեռնադրեսցին, ըստ տեղեկագրի կանոնական ընտրութեան որ տացի նմա»: Բայց որովհետև այս կանոնը իրենց անուանածն է, ինչպէս առաջ ըսինք, ընդունելի չեղաւ, և ոչ գործադրուեցաւ Մեծ

Հայոց եկեղեցեաց մէջ. և որուն պատճառ եղաւ Քահանայապետն Մեծն Լևոն՝ հայրական խնամքով, Մելիտինոյ Մետրապօլիտն իր կողմանէ տեղակալ կարգելով, որ արգելու Կ. Պոլսեցւոց ձեռներիցութիւնը Մեծ Հայաստանի մէջ: Նաև յետ ժամանակի հանդիպած դէպքեր, զորոնք մեր աւելի յետնագոյն պատմիչները կը յայտնեն, հաւաստի փաստեր են, որ Յովհաննէս կաթողիկոսի այս նիւթին վրայ պատմածը վաւերական չէ:

Կաղանկատուացին և Ուխտանէսը կը պատմեն թէ վեցերորդ դարուն վերջը կամ եօթներորդին սկիզբն, (այսինքն յիշեալ Վաղարշապատեան կոչուած ժողովքէն իբր երկու հարիւր քան և աւելի տարի վերջը) Հայք չունէին տակաւին նուիրապետական կարգ՝ Պատրիարքի, արքեպիսկոպոսի (Էքզարք), Մետրապօլտի և այլն: Ասոր համար Հռոմները հեգնութեամբ կ՚ըսէին. «կարգաւորեաց Աստուած զՍ. Եկեղեցի իւն դասուք, և ըստ չորից Աւետարանչացն մեծախորհուրդ դիպուածոց. չորս միայն սահմանեաց Աթոռս ի վերայ երկրի Պատրիարքս...: Արդ՝ ո՞ր է Ձեր աթոռն և պատրիարք, ընդ որով դասել արքեպիսկոպոսն, և այլն. կամ ցուցէք զձերն՝ և կամ թէ ոչ ունիք, հնազանդեցէք միում ի չորից Աթոռոցս. ապա թէ ոչ՝ կատարեալ հերձուածող էք. և թերի յամենայն շնորհս աստուածայինս»: Յունաց բերանը դրուած խօսքերն անճոռնի են. բայց ինչո՞ւ Հայք այնպէս արագ պապանձեցան, կամ ինչպէս կ՚ըսեն յիշեալ երկու պատմիչներն, «Անպատասխանիք պարտեալ լինէին Հայք», (Կաղանկատուացին): «Յոյժ պարտեալք և ըմբերանեալ գտան», (Ուխտանէս): Ինչ դժուարութիւն ունէին մէջ բերել սինհոդոսական կարգումը Մեծին Ներսէսի և Արշակայ ժամանակ, ինչպէս կը պատմէ Յովհաննէս կաթողիկոս, և Ուխտանէսը կը կրկնէ:

Այլ ասոնք ոչ միայն պարտեալ, ըմբերանեալ, անպատասխանի մնացին. այլ և իբր թէ նոր բան մը Յունաց սովորութենէն «Ուսեալ և մերոց, կ՚ըսէ Ուխտանէս, կացուցանեն Պատրիարք Հայոց զԱբրահամ կաթողիկոս (որ նստաւ 594 – 617) զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զՎրացն՝ մետրապօլիտ»: Եւ երբ Վիրք բաժնուեցան, նախ տրուեցան

Մարգպետականին և ապա Սիւնեաց եպիսկոպոսին պատիւ Մետրապօլտական. պատիւ՝ ըսի, որովհետև անոնք չունեցան իրաւունք Մետրապօլտի որպէս զի իրենց ձեռաց ներքև եպիսկոպոսներ ունենան. ինչպէս կ'ըսէ նոյն ինքն Ուսպելեան Մարգպետական եպիսկոպոսին համար, որ Մետրապօլիտ կոչուեցաւ. « և նորա հպարտացեալ խնդրէր եպիսկոպոսս ընդ ձեռամբ լինել, յորմէ երկուցեալ Հայոց, ասէին, մի գուցէ այլ իմն գունակ բաժանումն լիցի. տուին ի սմանէ զայն, և ետուն Սիւնեաց եպիսկոպոսին: Եւ այսպէս Հայոցն (եղև) Պատրիարք, Աղուանիցն՝ արքեպիսկոպոս, Սիւնեացն՝ մետրապօլիտ »: Բայց Կաղանկատուացին, կը յանդիմանէ Հայոց Առաջնորդներն, որ այն գործը կատարեցին, երբոր կ'ըսէ. « գլխաւորք եկեղեցականք անձնահաճ կամօք... կարգին... Պատրիարք, արքեպիսկոպոս, և այլն »: Իսկ Փոքր Հայոց գաւառներուն համար կը յաւելու Ուսպելեանն. « Բայց Յովհաննէս պատմագիր յիշէ և զՄելիտինեայն և զՍեբաստեայն Մետրապօլիտ զոլ. և զայլ աշխարհս թողին յառաջին սովորութեանն, զի մի ամբոխ ինչ լինիցի »: Այսպէս դեռ ևս եօթներորդ դարուն սկիզբը Հայոց կաթողիկոսը չունէր իշխանութիւն յիշատակեալ երկու Հայ գաւառաց վրա, որոնք կը գտնուէին Եփրատայ արևմտեան կողմն. և Աբրահամ կաթողիկոսէն վասն կարգաւորութեան նուիրական դասու եկեղեցւոյն Հայոց գումարած ժողովքն՝ անոնց նկատմամբ խօսք անգամ ընել չէր համարձակեր:

Վերջապէս, պարզ ըսելով՝ ես այս երկու պատմագրաց Հայոց մեծաց եկեղեցւոյն համար ամէն գրածներնուն համամիտ չեմ: Միայն միտքս կու գայ բան մ'ըսել իրենց, մանաւանդ Ուսպելեանին, որ եթէ ունենային փոքր մի գիջողութիւն Մեծին Պետրոսի Աթոռոյն իշխանութեան, անշուշտ այնչափ նկուն չէին թողուր Հայ եկեղեցին Յունաց առջև. ինչպէս նոյնը գործի դրին՝ իրմէ ոչ շատ հեռի ժամանակի մէջ, կրթնելով այն աւանդութեան և իշխանութեան, որ Հայ ազգին մէջ շատ հռչակուած է, թէ մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչն Հռովմ երթալով՝ ընդունած էր Ս. Սեղբեստրոսէն ինչ ինչ առանձնաշնորհութիւն և իշխանութիւններ, որով և քաջ հանդիսացան Յունաց և նոյն իսկ Անտիոքայ

պատրիարքին դէմ. Նաև վաւերացմամբ Սրբոյ Գահին Հռովմայ, որ և Ռուպելեանին անծանօթ չէր։

Այլ երբ Հայոց Մեծաց եպիսկոպոսապետը կամ կաթողիկոսն իրաւասութիւն վարել սկսած է Սեբաստիոյ, Մելիտինոյ եկեղեցական գաւառաց և այլ քաղաքաց և տեղեաց վրայ. — երկբայութիւն չկայ, որ տասներորդ դարէն վեր չելլեր. և այսպէս Հայոց Հայրապետը՝ տասներորդ դարուն վերջերը իշխանութիւն վարեց այն կողմերն և ձեռնադրութիւններ կատարեց եպիսկոպոսաց։ Մինչև այն ատեն մէկ մէկ եպիսկոպոս կամ մետրապօլիտ միայն կը նստէին Սեբաստիա և Մելիտինէ, ինչպէս նաև Փոքր Հայոց միւս քաղաքներն. ասոնք յոյն ծիսով կը վարուէին և կը հետևէին յունաց, այլ մեծ մասը հայ էին ազգաւ. և գիտէին հայ լեզուն. Նախ յունական և ապա հայկական դպրութեամբ կը վարէին. ուստի երբ ըսենք թէ նոյն գաւառներուն մէջ հիմա գտնուած յունածէսք՝ առաջ եկած են հայոցմէ, չենք սխալիր և ոչ մէկ կերպով։

Հիմակ կը դառնամ գրելու արևմտեան հայոց քաղաքական դէպքերն. և ետքէն երբ կարգը գայ, տասներորորդ դարէն՝ մէջ կը բերեմ հայ եպիսկոպոսաց կամ եպիսկոպոսապետաց համառօտ պատմութիւնն, իւրաքանչիւր յարմար տեղեաց համեմատ։

ԳԼՈՒԽ Դ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ՓՈՔՈՒՆ ՀԱՅՈՑ ՀՌՈՎՄԱՅ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ ԵՐՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՉԵՒ ԺԱ· ԴԱՐՈՒՆ ՍԿԻԶԲԸ

Պոլեմոնիոյ (65) եւ փոքուն Հայոց (69–75) թագաւորութիւնը վերնալէն ետեւ Սեբաստիա եւ Մելիտինէ անթոռ եղան Պրետորի կամ եւս փոխանիւպատոսի, զորոնք մերինները դատաւոր անուանել սովորութիւն ըրած էին։ Քրիստոնէութեան Բ. Գ․ եւ Դ․ դարերու այդ դատաւորներէն ոմանց անունը յիշատակեցի վերը, ինչպէս նաեւ Մեծին Կոստանդիանոսի եղբօրորդւոյն Աննիբալիանոսի՝ 335–338 տարիներու մէջ սակաւատեւ իշխանութիւնը։ Հիմա հոս պիտի խօսիմ Քրիստոսի հինգերորդ դարէն մինչեւ մետասաներորդին սկիզբը հանդիպած դէպքերուն վրայ։

Ա․ — ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ 400էՆ ՄԻՆՉԵՒ 570

Հինգերորդ դարուն՝ և անկէ ետև՝ փոքր Հայոց դրուած կուսակալներէն ոմանց յիշատակը կ'ըլլայ, որոնց մէջ քիչ չէին հայազգիները․ մանաւանդ թէ աւոնք աւելի եւ կը շատնային տարիներու առաջ երթալով ։

Արկադ կայսեր (395–408) *ժամանակ, երբ խաւրացիք արշաւանք կ'ընէին կայսրութեան երկիրը յամին* 404, *փոքր Հայոց վրայ կուսակալ էր Սոպատր, հանճարեղ և աշխարհին գործոց տեղեկութեան մէջ փութաջան անձն։ Այսիկա թէպէտ իր քով չունէր պատրաստ զօրք*

պատերազմի, և ոչ տեղէ մը ձեռնտուութիւն անկէց զատ՝ զոր իր ժրութիւնն և իր խոհականութիւնը կը հայթայթէին իրեն, սակայն և այնպէս գիտցաւ պահել լաւ կերպով իր գաւառն խաւրացւոց ապստամբութենէն, որոնք Փոքր Ասիոյ շատ գաւառները կ՚աւարէին սաստկութեամբ։ Նոյն դարուն մէջ կը յիշատակուին նաև Արևելից զօրավարներ, ինչպէս Անատոլ, որ կը նստէր Մելիտինէ, որուն նամակ գրեց Մեծն Սահակ յամին 420, և որ մեծապէս նպաստաւոր եղաւ Հայրապետին և անոր վերաբերելոց։ Ասոր իշխանութեան ներքև էին Հայաստանի յոյն և հայ վերակացուներն, ինչպէս նաև նախարարք։ Ասոր ժամանակը կը յիշուին Դիոնեսիոս անունով մեծ իշխան մը յամին 432․ նոյնպէս Արտապուր զօրավարն որ պատերազմներ մղեց Հայաստանի և Միջագետաց մէջ՝ վասն Ի․ Պարսից թագաւորին դէմ․ և ետքը կնքուեցաւ հարիւրամեայ հաշտութիւն Թէոդոս Բ․ի և նոյն Վռամայ մէջ։ Անատոլ զօրավարը յիշեալ 432 թուականին՝ աղաչանք մատուց Վռամ թագաւորին որ Սահակ հայրապետը ղրկէ գոնէ Յունաց բաժինը։

Բայց յետ ժամանակի սոյն այս Անատոլ նպաստաւոր չեղաւ Հայոց օգնելու՝ Վարդանանց պատերազմին առեն, վասն զի երբոր Յազկերտ Բ․ յամին 440, Յունաց երկիրը կ՚արշաւէր, Անատոլ Թէոդոսի հրամանաւ նորոգեց խոնարհ աղերսանօք անոր հետ հաշտութեան դաշինքը, յանձն առնելով կատարել անոր ամէն պայմանները։

Երբ յամին 451 արևելից հրամանատար կարգեցաւ վերը յիշուած Արտապուր զօրավարն, և իրեն յաջորդեցին այս պաշտօնին մէջ ուրիշներ հետզհետէ։

Վեցերորդ դարուն սկիզբը՝ Մելիտինոյ փոքուն Հայոց Եւգինէոս կուսակալին վրայ խօսք կ՚ըլլայ, որ յամին 502, քալեց գնաց Բարձր Հայք, և Պարսիկներէն գրաւուած Թէոդոսուպօլիս քաղաքն առաւ վերստին անոնց ձեռքէն։ Այս պատերազմներն երկարատև եղան, բայց սաստկութիւնը Միջագետաց մէջ էր, ուր Հռովմայեցիք և Պարսք կը մրցէին իրարու հետ, և յամին 505 հաշտութեան դաշինք կնքեցան Անաստաս Ա․ և Կաւատ Բ․ ինքնակալաց մէջ։

Նոյն Անաստասի ժամանակ, յիշեալ հաշտութենէն առաջ, յամին 503, *Տրովբեն անուն Յունաց զօրավարը դիմեց Չորրորդ Հայք և այն կողմանց իշխանը Մուշեղակ հնազանդեցաւ կայսերական իշխանութեան։ Ինքն իսկ Անաստաս կանգնեց Թէոդոսուպօլիս մեծ քաղաքը և ամրացուց, ինչու որ առաջ լոկ բերդ մի էր։*

Երբոր Յուստինիանոս կայսերական գահն ելաւ (523-565) *Պարսից թագաւորը մեծ պատերազմ հանեց իրեն դէմ. այս պատճառաւ հարկ էր կարգաւորել սահմանագլուխները. և որովհետև Միջագետք և Հայաստան ասպարէզ էին պատերազմին, այն աշխարհքներուն աւելի միտ դնելու պէտք ունէին երկու դիմամարտ պետութիւնները։*

Մեծ Հայքը նոյն ժամանակ երկու մաս ունէր. առաջինն և արևելեանն, որ աւելի ընդարձակ էր, իր մէջը կը բովանդակէր Մեծ Հայոց գլխաւոր մասն՝ զոր Յոյնք պարսկահայք կը կոչէին, ինչու որ անոնց իշխանութեան ներքև էր. և Պարսից պետութեան կողմէն կը վարէր այն երկիրը հայ մեծ նախարար մը Մժէժ Գնունի, իբրև Մարզպան։ Արևմտեայ մասն, որ առաջինէն շատ փոքր էր, յունական կայսրութեան կը պատկանէր, և փոքր Հայոց հետ կը կազմէր կայսրութեան արևելեան գաւառը։ Ասոնց վրայ կը գրէ Պրոկոպ (Գիրք Ե. Գլ. Ա.) թէ «Միւս (փոքուն Հայոց) որ գետովն Եփրատաւ պատեալ ձգէր մինչև յԱմիդ քաղաք, սատրապք հինգ հայկազունք ի վերայ կային»։ Նոյն ինքն Պրոկոպ (Գիրք Գ. յաղագս շինուածոց Յուստ. կայսեր Գլ. Ա.), այս սատրապներուն կամ նախարարաց զարդերն և զգեստները մէջ կը բերէ, որոյ թարգմանութիւնը Հ. Միքայէլ Վ. Չամչեանէ կ՚առնում։ «Լոդիկ կամ քղամիդ նոցա էր, ասէ, ասրանիւթ, ոչ ի խաշանց, այլ ընտրանաւ հաւաքեալ ի մանրաթելից ծովային ինչ կենդանւոյ, որ կոչի պինայ. այն է ազնուագոյն տեսակ ինչ փենեղի, որ ի հարկանել արևու՝ գոյնզգոյն փողփողէր։ Ծիրանի հանդերձ ունէր զարդ ոսկեհուռն յայնմ մասին, որ ամփոփեալ կապէր ի վերջին ծայր լոդկին. շինգղ ոսկի կամ վարսակալ ազնիւ ակամբ յեռեալ զորմէ երեք յակինթ կախէին ոսկի շղթայիւք։ Մետաքսեայ պարեգօտ նոցա համակ ոսկեղէն պալա-

բազարդ կօշիկ կարմիր նռնագոյն մինչև ցծունկն պատեալ, զորս ոչ ումեք՝ բաց ի կայսերէ և յարքայէն Պարսից օրէն էր զգենուլ, աստ, նա ինքն Պրոկոպ»։

Յարմար կը թուի ինձ դնել հոս, ինչ որ Վասակայ Սիւնեաց տիրոջ զարդուց և զգեստուց վրայ կը գրեն հայ պատմիչներն. «Ըստ առաջին խրունս կարգի զգեցաւ, կ'ըսեն, զգեստ իշխանական, կապեաց ի գլուխ զպատվարան կամ զարդ վարսիցն և եդ ի վերայ գլխոյն ոսկեղէն, էած ընդ մէջ զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբ պատուականօք, ագոյց զգինդսն յականջս, և զգումարտակն կամ շիգղն ի պարանոցի, էարկ սամոյր զթիկամբ և ամենայն զարդու զարդարէր զանձն, և գնայր բազմութեամբ ծառայից»։

Նաև Բուզանդի գրածը (Տպր. Ե. Գլ. ԼԲ). «Ետ, կ'ըսէ, թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրէնայ՝ թագ և պատմուճան և զվառ թագաւորաց տիկնոջն Զարմանդխտոյ։ Եւ թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ և Վաղարշակայ...։ Սոյնպէս ետ տանել (և սպարապետին Մանուելի) զթագաւորական պատմուճանն սամոյր. և գլխոյ պատիւ զարգմանակ ոսկի արծաթու ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն. հանգոյց թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց. և լանջաց պատիւ ապիզակ որպէս օրէն են ունել թագաւորաց։ Եւ շիկակարմիր խորան, և ի վերայ խորանին արծուի նշան և սրահակս մեծամեծս։ Եւ կապուտակ երկնագոյն հովանոցս ոսկիս սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի»։ Նախնի հայ իշխանաց զարդերուն և զգեստներուն վրայ այս ծանօթութիւնը մէկ տեղ հաւաքելով, կը դառնամ պատմութեան, զոր վայրկեան մը թողուլ օգտակար համարեցայ։

Մեծն Յուստինիանոս իր բաժնին նախարարներն կարգի դնելով, իրենց վրայ իշխան և զօրավար անուանեց Տաճատ անուն քաջ և հմուտ նախարարն, և թագուհւոյն Կոմիտոնէ քոյրը տուաւ անոր կնութեան, և կարգեց զինքը հրամանատար հայ զօրաց։ Նաև Ջօրրօրդ Հայքը յանձնեց երկու հայ զօրավարաց, որոնց հրաման ըրաւ որ մէկը Նփրկերտ նստի

և միւսը Կիլթաւինն Հաշտենից սահմանն, և պաշտպանեն այն կողմերը, զի այն գաւառին նախարարները միայն չէին իրարու հետ, որով և անպաշտպան մնացած էր երկիրը թշնամեաց դէմ։

Նոյն ժամանակ կայսերական դուռը նշանաւոր էր Ներսէս պատրիկ Կամսարականաց մեծ նախարարութեան տոհմէն։ Եկան նաև նոյն նախարարութենէն երեք եղբարք Ներսէս, Հրահատ (Արէսխս) և Սահակ, որոնք սիրով և պատուով ընդունեցան Ներսէս պատրկէն։ Անոնց անդրանիկը Ներսէս կարգեցաւ կուսակալ Աղեքսանդրիոյ՝ հայ զօրքերով։

Մի և նոյն ատեն կային նաև ուրիշ հայ իշխաններ ինչպէս Շմաւոն նախարարն և անոր արենակիցը Համազասպ իշխան՝ Կարնոյ կողմերէն. և Ակակ անուն անպիտան մարդ մը, զոր Յովհան Արշակունի և որդին Արտաւան սպաննեցին, և փախան Պարսկահայոց սահմանը։ Իրենց վրայ ղրկուեցաւ Սիդդա զօրավարն, որ խաղաղութեամբ շահի զիրենք, բայց երբ հրաման տրուեցաւ պատերազմով նուաճել. Սիդդա պարտեցաւ հայ քաջաց առջև, և Արտաւան իր ձեռքովն սպաննեց զանիկայ։

Միջագետաց և Հայոց աշխարհին մէջ մղուած մեծամեծ ճակատներէն ետև, ուր շքեղ հանդիսացան Գերման, Բելիսար և Ներսէս պատրիկ, Պարսից թագաւորը խոսրով մեծ նեղութեան մէջ ընկնելով, Դուին նստող հայոց Յովհաննէս կաթողիկոսն կը ղրկէ Փոքր Հայք՝ կայսեր Վաղերիոս զօրավարին, որ ջանայ համոզել զինքն, որպէս զի կայսեր կողմէն պատգամաւորներ ղրկուին իրեն, և թէ ինքը պատրաստ է հաշտութիւնն ընդունիլ նպաստաւոր պայմանով. բայց այս միջնորդութիւնն առաջ չի գնաց, ըստ որում կայսեր հրամանն ուրիշ կերպ հասած էր, և Վաղերիոս բազմութեամբ զօրաց դիմեց Պարսից Հայաստանը, գնաց իրեն հետ և Ներսէս բասենցի իր եղբարց հետ մէկ տեղ հայ զօրքերով։ Պարսկահայոց Մժէժ մարզպանին խնդրոյն համեմատ վնաս մը չի հասուցին հայոց Դուինի կողմերն և ոչ ուրիշ տեղեր։ Սակայն Անգղ աւանի քով տրուած ճակատամարտին մէջ Յոյնք խորտակուեցան։ Անկէց ետև Պարսից կողմանէ նոր զօրավար մ՚եկաւ Յունաց

դէմ՝ Խոռեամ անուն, իսկ կայսերականաց կը զօրավարէր Գագիմթէոս, հեծելազօրուն՝ Յովհան Քօշ, և հայ գնդին Արտաւան Արշակունի, որ հաշտուած էր կայսեր հետ. իրենց ընկերացեր էր նաև Եգերացւոց կուաշ թագաւորը. զարկին խորտակեցին Պարսից բանակն, և անոնց սպարապետը Խոռեամ՝ ընկաւ նոյն ճակատուն մէջ:

Յովհան Քօշ զարկաւ նաև Ափխազաց Ոփսեդ թագաւորն և նուաճեց, և Ողիղաս զօրավարին հետ գնաց Կ. Պօլիս: Յովհաննէս կատարած է ուրիշ շատ արիական քաջութիւններ և մեծ ճակատու մը մէջ ընկած է: Բազմաթիւ բախումներէն և ճակատներէն ետև՝ որոնց մէջ փայլեցան մեծանուն զօրավարներ, և յոյն և հայ հրամանատարներ, երբոր փոքր մի դուլ և դադար գտնուց եղաւ 545 – 550 տարիներն, Յուստինիանոս ինքնակալ հրամայեց նորոգել Սեբաստիա, Սատաղա, Կողոնիա և Նիկոպոլիս Փոքր Հայոց քաղաքներուն պարիսպներն, և փոյթ տարաւ որ շուտով կատարուի. շինել տուաւ նոյն աշխարհին մէջ ամրոցներ և վանքեր, որոնց մին ըլլալու է Թոքաղի Յունաց վանքը կէքս բռուած տեղը: Նոյնպէս շատ քաղաքներ նորոգեր և ամրացուցեր էր Միջագետաց մէջ: Իսկ Մելիտինէ և Թէոդոսուպօլիս արդէն իսկ Անաստասի ժամանակ զօրաւոր կերպով ամրացուեր էին, ինչպէս ուրիշ շատ տեղեր Հայոց և Միջագետաց մէջ:

Բ. — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՆԵՐՆ ԵՒ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ 570–630
ՅՈՎՀԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՓՈՔՈՒՆ ՀԱՅՈՑ

Յուստինոս Բ. ինքնակալին պատերազմներուն ժամանակ յամին 572 Փոքր Հայոց կուսակալ էր Յովհան ազգաւ հայ՝ նախարարական տոհմերէն՝ արի և քաջ: Յուստինոս Բ. թագաւորեց 565–578, տարիներուն մէջ, ասոր ժամանակ Վարդան Մամիկոնեան, որ փոքր կը կոչուի, միաբանութեամբ Մեծ Հայաստանի իշխանաց, որ պարսկային Պետութեան կը հպատակէին, գլուխ վերցուց նոյն իշխանութեան դէմ

յամին 571. *և մեծ ճակատամարտի մը մէջ զարկաւ անոնց բանակը, գրեց նաև Յունաց ինքնակալին, որ զիրենք և բոլոր Հայաստանն իր հովանաւորութեան ներքև առնու. նոյն խոստումն ըրին նաև Վիրք: Այս ատեն Յուստինոս կայսրը սպարապետ կարգեց Արևելից իր ազգականը Մարկիանոս և Հայաստան ճամբեց: Հրաման եղաւ նաև փոքուն Հայոց Յովհաննէս նախարարին, որ իր գաւառին զօրքովը դիմէ Արևելից սպարապետին և Վարդան Հայոց զօրավարին օգնութեան: Պատերազմին սաստկութիւնը Միջագետաց մէջ էր. Մարկիանոս իր հետը գումարեց Հայերը, Լազերն, Ափխազներն և Վիրերն իրենց Սարոս թագաւորին հրամանատարութեան ներքև, և մեծ ճակատամարտի մէջ Պարսից Վահրամ սպարապետին դէմ յաղթող հանդիսացաւ:*

Բայց անպիտան անձանց քսութեամբ Մարկիանոս զօրավարութենէ ետ կանչուեցաւ. որով շատեր թողուցին լքին կայսերական բանակն, որուն զօրավար կարգեցաւ Ակակ պատրիկ: Նաև Յովհան նախարար դարձաւ փոքր Հայք: Իսկ Խոսրով արքայն հզօր բանակաւ կու գար և կը մօտենար. և Յունաց զօրքերուն հանդիպելով՝ զարկաւ և հալածեց իր առջևէն Ակակ պատրիկն. և պատնիշափակ պաշարելով առաւ Դարան. և ասդին անդին ասպատակներ սփռեց, մանաւանդ փոքր Հայք, ուր Մելիտինէ քաղաքը կրակով այրեցին Պարսիկները:

Կեսար Տիբեր, որ Յուստինոսի յիմարութեան ժամանակ, յունական պետութեան սանձն իր ձեռքը ունէր, աճապարեց գումարել բազմաթիւ զօրքեր և տարեց Մեծ և փոքր Հայոց և Միջագետաց սահմաններն, որպէս զի արգիլէ Պարսից յառաջխաղացութիւնը: Թէպէտ Յոյնք շատ անգամ զարնուեցան թշնամիներէն բայց Պարսիկներն ևս չի կրցան այս անգամ տիրել Մեծ Հայոց, ուր կռուեցան իրենց դէմ Յոյնք և Հայք միաբան:

Քանի մը տարի վերջը մեռաւ Յուստինոս Բ. և կայսերական աթոռն ելաւ Տիբեր (578–582), *որ տարիներէ ի վեր ետևէ էր հաշտութիւն ընելու Պարսից հետ, և շատ մը պատգամաւորութեանց երթալէն յաջողած չէին բան մը վճարել. մանաւանդ որ Յուստինոսի մահուան*

լրոյն վրա՝ Պարսից թագաւորը հզօր բանակով դիմեր էր Մեծ Հայք և հայ նախարարք յանձն առած էին հնազանդիլ և վճարել տարեկան հարկն, և միջնորդութեամբ Մովսէս Բ. կաթողիկոսի հաշտութիւն ըլլալով՝ Միհրվզան մարզպան կարգուեցաւ, Փոքր Վարդանայ ապստամբութենէն եօթը տարի վերջը։ Ետքը կը յարձակի Խոսրով Փոքր Հայոց կողմերը և կը հասնի Կարնոյ քաղաքն. հանդարտ և անզօր կը կենայ հոն քանի մ'օր՝ յոյն իշխանաց աղաչանքին, և կայսեր դեսպանին իրեն մատուցած ընծաներուն համար։

Բայց Տիբեր մեծ բանակ կազմեց, և հրամանատար կարգելով Գերմանիկոսի որդին Յուստինիանոսն՝ առաքեց թշնամեաց դէմ, որ մօտեցած էր Կապադովկիա մտնելու։ Այս լուրը լսելուն պէս, Խոսրով սաստիկ բարկանալով առաջ քալեց, որ երթայ ինքը զարնէ թշնամին։ Եւ երբոր Սեբաստիոյ մօտեցաւ, քաղաքին և արուարձանաց բնակիչներն ահաբեկ ըլլալով թողուցին փախան Ամասիա։ Եւ որովհետև Յունաց բանակը Կեսարիայէն աւելի առաջ անցեր էր, Խոսրով ևս իջաւ Փոքր Հայոց լայն դաշտավայրերն, թշնամեաց դէմ ճակատ տալու դէպ ի Մելիտինէ։ Այլ և այլ յառաջամարտութիւններէ ետև Յունաց աջ թևին հրամանատարը Կուրս Սկիւթացի՝ յարձակեցաւ Պարսից հանդիպակաց թևին վրայ, և խորտակեց զանիկա, և անոնց ամբողջ բանակն ևս շփոթեց վեր ի վայր ըրաւ. ուստի երբոր գիշեր եղաւ աճապարեց Խոսրով Մալաթիա հասնիլ, զոր հրդեհեց. և լուր առնելով՝ թէ Յոյնք մօտ են գալ ընկնել իր վրայ, ձգեց ամէն բան, և անցաւ Եփրատէն փախստական, և անհետ եղաւ անոր բանակը։

Պատերազմին սաստկութեան ատեն՝ երկու կողմանց դեսպանները, Զաքարիա և Թէոդորոս և Անդեկան՝ ամէն ջանք ի գործ կը դնէին կնքել հաշտութեան դաշինքն։ Եւ երբ մօտ էին համաձայնութեան մը գալու, և ահա Յուստինիանոս սպարապետը Հայոց աշխարհին մէջ պատերազմելով Պարսից Թամ-Խոսրով քաջ զօրավարին հետ՝ մեծ ճակատ մը կորուց։ Այս պատճառաւ Տիբեր կայսրը առաքեց Մաւրիկ Հայկազն, որ Արապիսոս Փոքր Հայոց քաղաքը ծնած էր։ Անկէց ետև

Խոսրով Ա. շատ չապրելով մեռաւ, և յաջորդեց իր որդին Որմիզդ Դ. որ անմիջապէս Յունաց երկիրն արշաւեց. այլ անոնցմէ և Փոքր Հայոց զօրքերէն վանեցաւ, և փախաւ գնաց իր երկիրն։ Իսկ Մաւրիկ սպարապետ՝ Պարսից զօրքը Փոքր Հայքէն հալածելով առաջ գնաց դէպ ի Միջագետք և փառաւոր յաղթութիւն մը ձեռք բերաւ Կալլինիկէ քաղաքին քով, և իր ձեռքն ընկան Միջագետաց հոյակապ քաղաքներն։ Երկրորդ անգամ զարնուեցան իրարու հետ Կոստանդիա քաղաքին քով Մաւրիկ և Թամ—Խոսրով, և այս մարտին ելքն եղաւ բոլորական պարտութիւն Պարսից, և նոյն ճակատին մէջ ընկաւ նաև Թամ—Խոսրով մեռեալ։

Մաւրիկ դարձաւ Կ. Պօլիս և կատարեց հանդէս յաղթանակի։ Ինքնակալն Տիբեր անուանեց Մաւրիկը կեսար, և գահուն յաջորդ որոշեց զինքն, և իր ձեռօքը դրաւ անոր գլուխը կայսերական թագն և զգեցուց ծիրանի, և ինքն Տիբեր ննջեաց ի Տէր։

Մուշեղ Մամիկոնեան

Տիբերի մահուանէն ետև թագաւորեց Մաւրիկ հայկազն (582–602)։ Ասիկա Յովհանի տեղ, որ մեռած էր, կարգեց դուքս իր ձեռքն եղած Հայոց աշխարհին՝ Մամիկոնեան Մուշեղ Տարօնոյ իշխանն, և Մաւրկայ պետութեան առեն, ամբողջ երկիրն անդորրութեան մէջ էր։ Յոյնք Մուշեղը կ'անուանեն Յովհան Մուստակոն և զինքը Թրակացի կը համարին։

Մուշեղ կարգեցաւ սպարապետ Արևելից, և յոյն և հայ զօրքով առաջ քալեց Պարսից դէմ, և Նիմփիս գետին (Պաթման չայ) քով բախեցաւ անոնց բանակին հետ։ Իր աջ թևը յանձնեց Կուրսի, և ձախը Լոմպարտացի Արիուշփին, և մէջ տեղն ինքը կեցաւ. պատերազմը շատ սաստիկ եղաւ, և յաղթութիւնը Մուշեղի կողմն էր. բայց նախանձաբեկ տեղակալը Կուրս, որ սպարապետութիւնը իրեն աւելի յարմար կը դատէր, անշարժ կեցաւ իր տեղն, որով և Յունաց գործերն ձախորդ գնացին։ Սակայն և այնպէս Մուշեղ իր անխոնջ արիութեամբ դէմ դրաւ

Պարսից. նաև Արում բերդին պաշարումը վերցնել տուաւ, զոր քիչ մ'առաջ իրենք գրաւած էին։ Աքազ ամրոցին (Նիմփիսի գետեզերքը) քով կրած ձախորդութենէն ետև՝ Մուշեղ ստիպուած էր միայն պաշտպանել կայսրութեան սահմանը, զի բաւական զօրութիւն չունէր ձեռքը յարձակողականն սկսելու, բայց և ոչ Պարսիկները կը համարձակէին իրեն դէմ գործելու։

Իրերն այս պարագային մէջ էին՝ երբոր Մաւրիկ ինքնակալն՝ Արևելից բանակին սպարապետ կարգեց Փիլիպպիկոսն, որուն վրայ մեծ համարում ունէր, և փեսայացուց զանիկա, իր քոյրը Կորտիան տալով անոր կնութեան։ Սա Սօլահոնի քով տրուած մեծ ճակատամարտին մէջ յաղթեց Պարսից, այլ չգիտցաւ անկէց օգտուիլ։ Հերակլ կայսեր հայրը զօրավարն Հերակլ տեղակալ էր Փիլիպպիկոսի. և իր քաջութեամբը պատսպարան եղաւ Յունաց բանակին։ Մաւրիկ տաղտկացեր էր Փիլիպպիկոսի երկարատև անգործութենէն, ուստի սպարապետ կարգեց Պրիսկոսն, որ բանակը չի հասած՝ Փիլիպպիկոս, որ Տարսոն կը գտնուէր հիւանդագին՝ հրաման ղրկեց իր Հերակլ տեղակալին յանձնել բանակին հրամանատարութիւնը Կոստանդիոյ կուսակալին Ներսէսի որդւոյ բաւենցի Ներսէսի՝ Արշարունեաց տոհմէն, և դառնալ Կապադովկիա իր հայրենիքը։ Մեծ չփոթութիւն մ'ընկաւ զօրավարաց և զօրաց մէջ. Պրիսկոսը չընդունեցան զօրականք, և անոր տեղն ստիպանօք սպարապետ անուանեցին Գերմանոսը։ Վերջապէս դարձեալ իր վրան առաւ Փիլիպպիկոս վերին հրամանատարութիւնը և մեծ յաղթութիւն մը ձեռք բերաւ Պարսից դէմ, սակայն ապարդիւն, ինչու որ թող տուաւ Պարսից հզօր օգնականներ մտցնել Մարտիրոպօլիս։ Այն ատեն կայսրը սպարապետ անուանեց Կոմենզիոլն, որ իր Հերակլ տեղակալին քաջութեամբ յաղթող հանդիսացաւ Սիսարչանի ճակատամարտին մէջ, և Նիմփիոյ եզերքն եղած Աքազ բերդն առաւ՝ և սաստկացուց Մարտիրոպօլիս քաղաքին պաշարումը։

Պարսից արքայն Որմիզդ սպարապետ կարգեց իր բանակին Վահրամ Արշակունին, որ դիմեց Աղուանից աշխարհը, Հայաստան, Վրաստան և Լազիկիա։ Մաւրիկ կայսրն իրեն դէմ ղրկեց պատերազմի քաջահմուտ Ռոմանոսն, որ ձեռք բերաւ ինչ ինչ առաւելութիւններ։ Ասոր

վրայ զայրացաւ Որմիզդ, և ծաղր ըրաւ Վահրամը. նա ևս նոյնն ըրաւ թագաւորին։ Եւ որովհետև Պարսից նախարարները գոհ չէին Որմիզդէն, մեծ խռովութիւն մը հանեցին, թագաւորը վար առին աթոռէն և Վահրամ գլուխ վերցուց և կը ջանար իրեն գրաւել թագը։ Արքայորդին Խոսրով՝ որ գահակալեր էր, չունենալով բաւական ոյժ դէմ դնելու Վահրամայ՝ հարկեցաւ Մաւրկայ գթութեան ապաւինիլ. և փոքր Հայքէն անցնելով մտաւ կայսեր Տէրութեան երկիրն, որ ընդունեցաւ սիրով, և Կ. Պօլսոյ մէջ որոշուեցաւ դարձունել Խոսրովը իր հարց աթոռը։

Կոմինգլոյի վրայ այսպիսի ծանր գործ մը յանձնելու վստահութիւնը չունէր Մաւրիկ կայսրն, ասոր համար որոշեց ժամանակին ընտրելագոյն զօրավարը՝ Բասենցւոյն որդին Ներսէս Արշարունին, և կարգեց զինքը ընդհանուր հրամանատար։ Նաև փոքր Հայոց իշխանը Մուշեղ Մամիկոնեան հրաման ընդունեցաւ հայկական զօրքով օգնական ըլլալ. ասոր հետ էր Սմբատ Բագրատունին, որ բազմայաղթ կը կոչուէր, և Սաանոյ իշխանը Խուժա, և այս հայ գնդին թիւը կը կարծուի երեսուն հազար, ինչպէս կ՚ըսեն ոմանք, և բանակեցան յոյն զօրքերէն զատ։ Ներսէս այս նոր եկած գնդովը զօրանալով՝ Բաշարաթ գետին քով մեծ և որոշիչ յաղթութիւն մը վաստկեցաւ։ Մուշեղ մուրճով զարկաւ սպաննեց Վահրամը և Խոսրով թագաւորեց յամին 591։

Իր արժանեաց համեմատ Մուշեղ չի պատուեցաւ Խոսրովէն. մանաւանդ թէ նախանձաբեկ անձինք սուտեր խօսելով, իբր թէ Մուշեղ փախցուցեր ազատեր է Վահրամը, գրգռած էին Խոսրով թագաւորը, որ միտքը դրած էր զինքը պատուհասել։ Մուշեղ զայրագին թողուց ամէն բան և գնաց առանձնացաւ Տարօն իր նախնի հարց Մամիկոնէից երկիրը։

Երբոր յամին 602, *Մաւրիկ սպաննուեցաւ և Փոկաս բռնակալեց կայսերութեան աթոռը, Պարսից թագաւորը Խոսրով իր բարերարին Մաւրկայ մահուան վրէժն առնելու համար պատերազմ բացաւ Յունաց դէմ, Միջագետքը գրաւեց, Եփրատ գետն անցաւ և փոքր Հայքն աւարի առաւ, ինչպէս նաև ինքնակալութեան ուրիշ գաւառներն։ Իսկ Յունաց զօրքերը Կապադովկիայէն անդին ընկրկեր էին երկու վատ անձինքներու Տոմէնցիոլոյ և Արևելից նախարար Պոնոզի առաջնորդութեամբ։*

Մժէժ Գնունի իշխան և զօրավար Փոքուն Հայոց

Հայաստանի Մարզպան Մժէժ Գնունիի թոռան որդին էր։ Ասոր ատեն Կ. Պօլիս եկաւ Ափրիկէի նախարար կամ իշխան Հերակլ զօրավարին որդին, որ նոյնպէս կ'անուանէր Հերակլ. սպանեց Փոկաս բռնաւորը և ինքն առաւ ինքնակալութեան աթոռը (610–641)։ Շատ մը ձախորդ պատերազմներէն վերջ, որով Պարսք մինչև Կ. Պօլսոյ դռներն հասան՝ յամին 620, անձամբ դիմեց Հերակլ Թշնամեաց վրայ, և անոնց յառաջապահ զօրքերը զարկաւ Փոքր Հայոց մէջ. անկէց ետ ժողվեց հզօր գունդ մը, և անոնց վրայ զօրավար կարգեց Մժէժ Գնունին։ Ետքէն Պարսից բանակները զարնելով՝ մինչև Տիզբոն առաջ գնաց և կատարեալ յաղթութիւն ձեռք բերաւ. Թէոդոսուպօլիս գալով՝ Մժէժն անուանեց իշխան և զօրավար արևմտեան Հայաստանի յամին 628։ Այս ատենները Հայոց կաթողիկոս էր մեծանունն Եզր. կայսեր հրամանաւ ժողովք եղաւ Կարնոյ քաղաքը, միաբանելու համար Հայ եկեղեցին Յունաց դաւանութեան։ Այս բանիս շատ ջանք ըրաւ Մժէժ Գնունի. և գործը յաջողութեամբ գլուխ ելաւ։ Մժէժ իշխանին հրաւիրմամբն Եզր կաթողիկոս իր եպիսկոպոսակցաց հետ եկաւ Կարին՝ ուր կը գտնուէր Հերակլ կայսրը։ Յոյն Եպիսկոպոսաց հետ շատ մը վիճաբանութենէ և քննութենէ ետև, ընդունեցան Հայք Քաղկեդոնի Ս. Ժողովքն և հաւատոյ ամէն մասանց մէջ միաբանեցան անոնց հետ։ Եւ երբ աւարտեցաւ ժողովքը՝ կաթողիկոսն և անոր հետ եղողները մեծ պատիւներ ընդունեցան կայսրէն և դարձան խաղաղութեամբ իրենց տեղերը։

Իսկ Փոքր Հայոց բնակիչներն, որ առաջուց ի վեր կ'ընդունէին նոյն ժողովքը, սկսան այս դէպքէն ետև Սուրբ Աստուածն երգել առանց խաչեցարի, Ծննդեան տօնը կատարել Դեկտ. 25ին Մկրտութենէն զատ, պատարագի բաժակին մէջ ջուր խառնել, և նուիրական հացը խմորուն ընել։

Կոստանդ կայսր (641–668) Փոքուն և արևմտեան Հայոց Մժէժ իշխանը կոչեց կայսրութեան արևմտեան կողմեր զօրավարութեան, ուրիշ յոյն հրամանատարներու հետ՝ որ պատերազմին պետութեան թշնամեաց դէմ. և հրամանատարաց մէջ գլխաւոր իշխանութիւնը Մժէժի տրուեցաւ իբր վերին զօրավար։ Ինքնակալին մահուանէն ետև Սիկիլիայի զօրքն՝ ուր կը գտնուէին, ընտրեց զինքն կայսր. բայց գահաժառանգը Կոստանդին Պոգոնատ դիմեց անոր վրայ, և սաստիկ ճակատամարտին մէջ ընկաւ Մժէժ մեռեալ։

Գ. — ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐՆ ԱՐԱԲՆԵՐՈՒ ԸՐԱԾ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԵՒ ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՀԱՅԱԶԳԻ ԻՇԽԱՆԵՐԸ 630–741

Հերակլ Յաղթութեամբ գլուխ տարած էր Պարսից դէմ մղուած պատերազմը յամին 620 և հանդարտած էր կայսրութեան ուրիշ գործոց միտ դնելու. կամ յաւէտ՝ ինչպէս այլք կ՚ըսեն, աստուածաբանական խնդիրներով ժամանակ անցնելու։ Եւ ահա ահեղ պատերազմ մը ծագեցաւ հարաւէն. յամին 633 Արաբները արշաւել սկսան Ասորիք և Պաղեստին։ Շատ մը բաղխումներէ և երկու որոշիչ ճակատներէ ետև, զոր Յոյնք կորուսին, մօտ հասած էին Արաբք գլուխ հանել այն երկու աշխարհաց գրաւումը։ Հերակլ Թողուց Դամասկոսն, որ անմիջապէս ընկաւ թշնամեաց ձեռքն, և ինքն ընկրկեցաւ մինչև Անտիոք. և հոն իրեն կանչեց հայկազն Վահանն, և զինքը կարգեց ընդհանուր հրամանատար, և իրեն յանձնեց այս վտանգաւոր պատերազմին գործը։ Մինչև այն ատեն Արաբք յառաջացեր և Հալէպի և Անտիոքայ յարաբերութիւնն ևս կտրած էին. ժամանակն անձուկ էր, Վահան կրցածին չափ զօրք ժողվելով՝ դիմեց թշնամեաց դէմ։ Առջի բաղխումները յաջող գնացին և Արաբք մղուեցան. Դամասկոսն ևս առաւ անոնց ձեռքէն, որոնք մինչև Յորդանան նահանջ տուին։ Վահանի զօրքերը բազմացան, բայց մեծաւ մասամբ անկիրթ էին պատերազմական գործոց, սակայն և այնպէս

յառաջեց մինչև Ցորդանան։ Արաբացւոց զօրավարները մէկ կողմանէ բանակցութեան մտնելով կայսերական սպարապետին հետ, միւս կողմանէ կը համախմբէին իրենց բոլոր զօրութիւնն. ամիրապետը ղրկեց իրենց բազմաթիւ օգնականներ։ Վահանին բանակն ևս դեռ չէր ամբողջացած։

Վերջապէս յամին 636 Նոյեմբեր ամսոյն մէջ խմբեցաւ մեծ ճակատ եռօրեայ։ Երկրորդ օրը հասաւ հայ գունդն և իրենց աղեղնաւորներն մեծ քաջութիւններ կատարեցին, եօթը հարիւր Արաբ աչքերնէն զարնելով, թող ուրիշ սպանուածներն. և անոր համար այս երկրորդ օրն անուանեցաւ Արաբաց քով՝ օր կոտորուեան։ Քրիստոնէից ձեռքն էր յաղթութիւնը, սակայն երկու մատնութիւն փոխեցին պատերազմին ելքը, Վահան անծանօթ անձինքներէ սպաննուեցաւ, և բանակն անհետ եղաւ։ Անկէ ետև Արաբները շուտ ձեռք բերին Տաւրոսի հարաւակողմն եղած բոլոր երկիրներն. և յամին 639 առաջին անգամ երևցան Հայոց աշխարհին մէջ, որուն տիրեցին շուտով. մտան նաև Փոքր Ասիա և շատ զօրացան կայսերականաց վրայ։ — Ու այս իրաց համար այսչափ։

Վասակ իշխան Փոքուն Հայոց

Կայսերական բանակին հրամանատարութիւն ընելու համար Մժէժ իշխանն Արևմուաք՝ կոչուելէն ետև, Կոստանդ կայսրը յամին 648 Փոքր Հայոց իշխան կարգեց Վասակ պատրիկը, զոր Թէոփան և Անաստաս՝ Վասակնադէս կամ Վասակնատ կ'անուանեն։ Ասոր իշխանութեան ատեն յամին 652, Արաբները նուաճեցին Պարսից աշխարհքն և սկսան ծաւալել իրենց աշխարհակալութիւնը. Հալիպ նուաճեց Մեծ Հայոց գլխաւոր մասը. Մոզէյրա տիրացաւ Սիվազայ, որ մինչև նոյն ատեն կ'անուանէր Սեբաստիա Փոքուն Հայոց, և մտաւ Կապադովկիա. և ուրիշ զօրաց գնդեր Մուավիա Ասորւոց կուսակալի և Արաբացւոց սպարապետի հրամանին համեմատ՝ Ամանեան լեռներէն անցնելով՝ կ'ապատակէին Կիլիկիա։

փոքր Հայոց իշխանը կամ կուսակալը Վասակ պատրիկ, այս դէպքերն իրեն յարմար սեպելով՝ Կոստանդ կայսեր մետասաներորդ տարին զէնք առաւ ինքնագլուխ ըլլալու համար։ Մանավլէի նիզակակից եղաւ և որդին պատանդ տուաւ։ Երբոր լսեց կայսրը Վասակայ ապստամբութիւնը՝ կ՚ուզէր անձամբ անոր վրայ քալել, և նոյն իսկ Կապադովկիա հասեր էր զօրաւոր բանակով, բայց իմանալով որ Վասակ ձեռքը մեծ զօրութիւն ունի իրեն դէմ դնելու համար, կամ ինչպէս ուրիշները կ՚ըսեն, վանուելով անոր առջևէն, կորակոր դարձաւ ամօթապարտ Կ. Պօլիս։ Վասակայ այս յաջողութենէն ետև, Արաբները յամին 653 դիմեցին Մեծ Հայք, որ աւարեն այն աշխարհքը. բայց Վասակայ միջնորդութեամբ, առանց արիւն թափելու՝ գրաւեցին զայն։ Այս ժամանակները փոքր Հայոց գունդը մեծ համբաւ ստացեր էր և կը համարէր ամբողջ կայսերական զօրուն ծաղիկը։ Չորս տարի տևեց Վասակայ ինքնագլխութիւնը, ցվերջ կենացը։

Շապուհ իշխան Փոքուն Հայոց

Յամին 656 Մեծ Հայաստանի բնակիչները նեղութիւն կրելով Արաբացւոց հարկահանութենէն, թողուցին անոնց իշխանութիւնն և մտան Կոստանդ կայսեր պաշտպանութեան ներքև։ Նոյնպէս փոքր Հայք ինքնակամ նուաճեցան անոր իշխանութեան։ Եւ Շապուհ անունով իշխան մը կարգեցաւ նախարար, զոր ոմանք պարսիկ կը համարին, խորոտ անձ մը։

Բայց Մեծ Հայք կայսեր վարչութենէն ևս գոհ չըլլալով՝ յամին 657, գլուխ վերցուցին կայսեր դէմ, և կազմեցին անկախ վարչութիւն։ Մինչ դեռ փոքր Հայոց զօրքը կը ձմերէին Ադրիանուպօլիս, նաև Շապուհ գլուխ վերցուց, և իր մտերիմ տեղակալ Սարգիս զօրավարն առաքեց Մանավեայի քով և անկէ օգնութիւն խնդրեց. և ինչպէս կը գրէ Թէոփան, գրգռեց զանիկա Յունաց դէմ։ Նիկեփոր պատրիկը Կ. Պօլսէն

ղրկուեցաւ Շապհոյ վրայ, բայց անոր հասնելէն առաջ, սա մեռաւ, ձիով արշաւելու ատեն գլուխը քարի զարնելով։ Իսկ Սարգիս զօրավարը Դամասկոսէն դառնալու ատեն՝ ձեռբակալ եղաւ Տաւրոսի անցքերուն մէջ, և Մելիտինէ բերուելով՝ հոն սպաննուեցաւ։

Մուսլիմ իր խոստման համեմատ, քիչ մը զօրքով Փատուլը ղրկեց, որ օգնէ անոնց։ Հասաւ սա Փոքր Հայք և եղած անցած դէպքերն իմանալով, ծանուց իր հրամանատարին։ Այն ատեն Մուսլիմ բազմութեամբ զօրաց ղրկեց իր որդին Եէզիտն, որ Փատուլի հետ միաբանելով արշաւեցին Փոքր Ասիա և մինչև Բաղկեդոն քաղաքն առաջ քալեցին։

Սմբատ պատրիկ՝ իշխան Փոքուն Հայոց

Յուստինիանոս Բ. կայսեր ժամանակ (685–695) որ Պնչատ անուանեցաւ, Փոքր Հայքը կը յանձնձէր Սմբատ պատրիկ։ Ասիկա երբ տեսաւ որ կայսերական բանակը Կիլիկիոյ մէջ պարտեցաւ Արաբացւոց Մէհէմմէտ կամ Մահմուտ բազմահմուտ սպարապետէն, որ Մեծ Հայաստանի ոստիկանն էր, և ապա յաղթականք կը դիմէին դէպ ի իր տէրութեան երկիրը, զարհուրեցաւ, և երբոր մօտեցան իր սահմանը՝ խոյս տուաւ աճապարանքով։ Եւ թէպէտ Սարին անուն արի սպայ մը Հայոց կամաւորներէն գունդ մը կազմելով՝ քաջութեամբ կռուեցաւ, այլ և այնպէս Արաբք տիրեցին Փոքր Հայոց մեծ մասին, և անկէց դիմեց Մէհէմմէտ Մեծ Հայաստան։

Յամին 695–698, Ղևոնդ բարձրացաւ ինքնակալութեան գահն և իր Հերակլ եղբայրը կարգեց ընդհանուր հրամանատար զօրաց, և առաքեց Կապադովկիա, որպէս զի բանէ լեռներու անցքն, որոնց մէջէն կրնար մտցուիլ Փոքր Հայք, և որպէս զի դիտէ Արաբացւոց շարժումները։ Հերակլ թշնամեաց չփոթութիւնները տեսնալով, քալեց գնաց մինչև Ասորւոց երկիրն, աւարի առաւ և ջարդեց բազմութիւն երկու հարիւր հազար արանց և կանանց, (կը թուի չափազանց)։

Սակայն Արաբները շատ չուշացան զօրանալ Ղեւոնդի յաջորդաց ժամանակ. նաև Հերակլի գործը պարզ ապստամբութիւն մ'էր։ Վասն զի յամին 701 Արաբացւոց սպարապետն Աբտալլա Կիլիկիոյ վրայ քալեց և նորոգեց Մոպսուեստիոյ պարիսպները. և անկէց ետև Արաբները ամէն տարի սկսան արշաւել ինքնակալութեան գաւառներն և արեամբ ներկել զանոնք և գրաւել հետզհետէ շատ տեղեր։ Եօթներորդ դարուն աւարտն Մեծ Հայաստան ելած էր բոլորովին կայսերական իշխանութենէն, և Արաբ կուսակալ մը կը կառավարէր զայն, պահելով Հայ նախարարներն ամէն մէկն իր գաւառին մէջ։

Այս ժամանակ նաև Չորրորդ Հայոց Վահան նախարարը, զոր Յոյնք Հեփտատեմոն կ'անուանեն, այս հանապազօրեայ արշաւանքէն ձանձրանալով, և կայսեր կողմէն օգնութեան յոյս մը չունենալով՝ դրաւ իր երկիրն Ամիրապետին իշխանութեան ներքև, և որպէս զի աւելի ևս ընդարձակէ զայն, Փոքր Հայոց շատ մը քաղաքներուն տիրեց, և անոնց մէջ պահակապան դրաւ։ Բայց երբոր նախարարն իր զօրքովը մեկնեցաւ, երկրին մեծամեծները միաբանեցան դաւաճանութեամբ ջարդել Արաբացիները. գործով ևս կատարեցին՝ ինչ որ խորհեր էին, և պատգամաւոր ղրկեցին ինքնակալին, և յոյն պահապան խնդրեցին իրմէ։ Սակայն յամին 705 նորէն մտաւ Փոքր Հայք և ըրաւ ահեղ վրէժխնդրութիւն։ Յաջորդ տարին Օսման յարձակեցաւ Կիլիկիա և առաւ ամրացած քաղաքներն, և Փոքր Հայքէն անցնելով՝ գնաց գրաւեց Դարանաղեաց գաւառի Կամախ քաղաքն՝ որ ըստ Պտղոմեայ կառուցուած էր Անտի-Տաւրոսի ոտքը։

Այսչափ պատերազմներէն և ապստամբութիւններէն շատ նուազեր էր Փոքր Հայոց բնակչաց թիւն. ուստի հայկազն կայսրը Վարդան Փիլիպպիկոս (711-713) ուզելով նորէն բազմամարդացնել զանիկա, հրաման ըրաւ Մեծ Հայաստանէն գաղթականներ բերել և բնակեցնել Մելիտինէ և անոր շրջակայ և մերձակայ ամրոցները. բայց Արաբացւոց սպարապետը հզօրն Մեսալմա Պոնտոս մտաւ, և Ամասիան մերձակայ բերդերովն առաւ, ինչպէս նաև շատ տեղեր Լիկաոնիոյ մէջ, և Պիսիդիոյ Անտիոքը։

Արտաւազդ իշխան և զօրավար փոքուն Հայոց

Անաստաս Բ. գահընկէց եղաւ յամին 717, և տեղը Թէոդոս Գ. բարձրացաւ աթոռ: Արևելից հրամանատարը Լէոն Իսաւրացի, զոր Անաստաս Բ. կարգեր էր նոյն պաշտօնին, չուզեց ճանչնալ նոր կայսրն և իբրև ի պաշտպանութիւն Գահընկէցին զէնք առաւ, և սրտին մէջ կը խորհէր անձին սեպհականել զայն: Միաբանեցաւ իրեն հետ նաև Արտաւազդ իշխան հայ զօրաց, որուն խոստացաւ Լէոն տալ կնութեան իր քոյրն և կիւրապաղատութիւն: Գաղատիա կը գտնուէր Լէոն, և արաբ զօրավարաց ձեռքն ընկնելու վտանգի մէջ էր, որոնք մինչև հոն հասեր էին. անոնց ձեռքէն ազատելու հնարքը գտաւ, և Նիկոմիդիա հասնելով՝ հոն վարկաւ կայսերական բանակն և հասաւ Կ. Պոլիս: Թէոդոս հրաժարեցաւ և Լէոն Ս. Սոփիա տաճարին մէջ պսակեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքէն՝ կայսր, մարտի 25ին յամին 717: Ապա Արտաւազդ անուանեցաւ կիւրապաղատ, որ ինքնակալութեան բարձր աւագութիւններէն մէկն էր, և կարգեցաւ դուքս Ոպսիկիա գաւառին, որ կը պատասխանէ մեծաւ մասամբ այժմու Խուտէվէնտիկեար վիլայէթին:

Դ. — ԱՐՏԱՒԱԶԴԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ, ՆԻԿԵՏ ԿԸ ԿԱՐԳԻ ԻՇԽԱՆ ԵՒ ԶՕՐԱՎԱՐ ՓՈՔՈՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ (741–830)

Երբոր Լէոն ինքնակալը մեռաւ և անոր որդին ապիրատն Կոստանդին Կոպրոնիմոս յաջորդեց աթոռ (741–755), իր ինքնակալութեան առաջին տարին, հայազգին Արտաւազդ կիւրոպաղատ առաքինի և մեծարգոյ անձ մը, սիրելի ամենուն, ինչպէս կ'ըսէ Թէոփան, ոտքի ելաւ նոր կայսեր դէմ. հոս հոն քանի մը բաղխումներէ ետև, մտաւ Արտաւազդ Կ. Պոլիս, և պսակեցաւ կայսր ի ցնծութիւն բոլոր ուղղափառաց, և հաստատեց պատկերաց պաշտօնը:

Երկու որդի ունէր Արտաւազդ, երէցը Նիկեփոր գահակից ըրաւ իրեն. իսկ կրտսերը՝ Նիկետ՝ դրկեց զօրավար հայկական բանակին։ Ապա Արտաւազդ և Կոստանդին գումարեցին բազմաթիւ զօրքեր և երկուքն անձամբ անոնց գլուխն անցնելով՝ ապստամբութեամբ դիմեցին մէկմէկու ձեռքն եղած երկիրներն։ Բայց Արտաւազդ իր բանակը տակաւին չի համախմբած, մանաւանդ հայ գունդը դեռ չհասած, յառաջ մխուեցաւ, և տկար զօրութեամբ ստիպուեցաւ Սարտէ քաղաքին քով որոշիչ ճակատամարտ մը մղել մայիս ամսուն՝ յամին 742, որով կորուց զայն և իր գահն։ Եւ երբ ինքը հազիւ թէ կը ճողոպրէր նախ Կիզիկոն և ապա Կ. Պօլիս, ահա իր կրտսեր որդին Նիկետ՝ փոքուն Հայոց զօրավարը, կ'աճապարէր գալ միանալ հօրը հետ և օգնել անոր իր զօրքերովն, և հասած էր Բիւթանիա։ Կոզմոպոլիս Բիւթանիոյ քաղաքին քով յունիս ամսոյն խմբեցաւ երկրորդ ճակատամարտն առաջինէն աւելի մեծ, թշնամւոյն ստուարացեալ բազմութեամբն, և Հայ սակաւաթիւ գնդին նշանաւոր արիութեամբը. «Տրդատ պատրիկ ազգական Արտաւազդայ հռչակեցաւ իր արիութիւնն ու քաջութիւնն, և ընկաւ նոյն ճակատուն մէջ։ Իսկ հայ զօրքը միտքը դրաւ որոշակի մեռնիլ իրենց հայրենակցին համար, քան թէ տեղի տալ. ջարդուեցան գրեթէ առ հասարակ։ Ասոնք շատ ժամանակէ ի վեր հռովմէական բանակաց ծաղիկն համարուած էին». (Պատմ. ստորին. կայս. Գիրք ԿԳ.) և այսպէս ահեղ բազմութիւնը յաջողեցաւ ճամբայ մը բանալ իրեն անհաւասար գնդին քովէն դէպ ի Կ. Պօլիս, ուր հասաւ Կոպրոնիմոս և պաշարեց մայրաքաղաքը։

Այն ատեն արի երիտասարդը Նիկետ, հօրը վտանգն աչքին առաջ ունենալով քաջայանդուգն արիութեամբ հասաւ թշնամեաց ետևէն մինչև Խրիսոպոլիս՝ իր ձեռքը մնացած գնդովը. և չի գտնելով միջոց մը քաղաքին օգնելու, սկսաւ նահանջել արագ արագ. բայց Կոպրոնիմոս հզօր բանակաւ Վոսփորն անցնելով հասաւ պարտասեալ գնդին ետևէն, որ արիաբար կռուեցաւ և անկարելի ըլլալով՝ այնչափ բազմութեան դէմ դնել, ոմանք ջարդուեցան և ոմանք ձեռք ընկան, որոնց մէջ էր նաև մանկահասակ իշխանը Նիկետ, զոր շղթայակապ տարաւ Կ. Պօլսի պա-

ըիւզանդներուն մօտ, որ տեսնէ հայրը։ Նոյեմբերի երկրորդ օրը տիրեց Կոպրոնիմոս մայրաքաղաքին. իսկ Արտաւազդ ծովու ճամբով ազատ հասաւ Նիկիա, և անկէց գնաց իր դքսութեան երկիրն Օպսիկիա Պուղան բերդն, և հոն ամրացաւ, և երկայն պաշարումէ ետև, բռնուեցաւ և Կ․ Պօլիս տարուեցաւ։ Կոպրոնիմոս անգութը հանել տուաւ անոր, ինչպէս նաև անոր երկու որդւոց աչքերն. և գլխատեց անոր գլխաւոր պաշտօնեայն Վասակ պատրիկը։

Վարդ պատրիկ իշխան և զօրավար Փոքուն Հայոց

Ասիկա Արծրունեաց տոհմէն էր, և կայսեր դրան աւագանիներէն մին, պատրիկ իշխան և զօրավար Փոքր Հայոց։

Երբոր Կոստանդին Ջ․ Պորփիւրոժէն իր Եռինէ մօրը հետ թագաւորեց, կայսրութեան ուրիշ աւագաց հետ Վարդ ևս միաբանեցաւ գահընկէց ընելու զանոնք, և Նիկեփորն ամբառնալու աթոռ։ Երբոր դաւը յայտնուեցաւ, ցպահար և քարկոծ ըլլալով աքսորուեցաւ իր հայրենիքն Փոքր Հայք և հոն տառանձնացաւ։

Նիկեփոր պատրիկ՝ զօրավար Փոքուն Հայոց

Ասոր վրայ իբրև զօրավար Փոքր Հայոց, քիչ բան կայ ըսելու, որոնք պիտի տեսնուին վարը։

Ալեքս Մուշեղ իշխան և զօրավար Փոքր Հայոց

Քանի մը տարի որդւոյն հետ կայսերական իշխանութիւնը վարելէն ետև, Իրինէ՝ ուզելով միահեծան ըլլալ, Կոստանդին որդին արգելքի և պահպանութեան ներքև դրաւ, և ինքնակալութեան սանձը միայնակ իր ձեռքը առաւ յամին 789, և այս պատճառաւ հաւատարմութեան երդում պահանջեց ամենէն։ Հայոց պահնորդ գունդը յանձն չառաւ կատարել նոյնը. կ'ըսէր «Երբոր Լեւոնը մեռաւ, մեր գունդը հաւատարմութիւն երդուընցաւ Կոստանդնի և Իրինեայ մէկտեղ, և թէ ցմահ հաւատարիմ պիտի մնայ անոնց, միայն թէ օրէնքէն և երդման ձեւէն հրամայուած կարգը պահուի, և թէ չի կրնար բնաւ հանդուրժել, որ Իրինէի անունն անօրինակ կերպով մը յաղթահարէ Կոստանդինին»։ Կայսրուհին տագնապելով ղրկեց իր վահանակիրն և գիշերապահ գնդին զօրավարն Ալեքս Մուշեղ հայազգին անոնց քով՝ որ աղմուկը հանդարտեցնէ։ Երբոր Մուշեղ հասաւ, Հայք զինքը հաւանեցուցին և իրենց իշխան և զօրավար կացուցին. իսկ իրենց առջի զօրավարը շղթայակապ բանտ դրին։

Հայոց գնդին հետևեցան նաև ուրիշ գաւառաց պահնորդներն և ամէն տեղ հռչակեցին, թէ իրենց երդմունքէն առ Իրինէ իրենք զիրենք ազատ կը համարին. և թէ Կոստանդինը միայն կը ճանչնան ինքնակալ։ Զարհուրեցաւ կայսրուհին՝ և իր որդին արգելանաց տեղէն հանելով, իրեն յանձնեց պետութեան վարչութիւնը։ Եւ որովհետև այս գործին մէջ առաջին եղաւ հայ գունդը, Կոստանդին իրենց շնորհք մ'ընելու համար, հաստատեց Մուշեղն իր իշխանութեան և զօրավարութեան մէջ, ինչպէս կը խնդրէին։ Ասիկա մեծ պարծանք մի էր հայ գնդին. բայց անոնք իրենց սովորական պարզութեամբը չի գիտցան խոհեմութեամբ և հեռատեսութեամբ գործածել իրենց նախանձայուզութիւնն և փոյթն, որմէ վնասուեցան մեծապէս։

Թէոդոր պատրիկ զօրավար Փոքուն Հայոց

Երինէ 791ին սկիզբը հնարք մը գտաւ իր որդւոյն հետ հաշտուելու և առաջուան պէս սկսաւ հաղորդ ըլլալ պետական իշխանութեան իբրև կայսրուհի: Եւ այս իրողութեան և ոչ տեղէ մը ընդդիմութիւն տեսնուեցաւ. միայն հայ պահնորդ գունդը պահած ըլլալով իր ատելութիւնն Երինէի դէմ, խոժոռութեամբ կը նայէր կատարուած իրողութեան: Կոստանդին կայսրը կասկածելով՝ որ չըլլայ թէ նոր շփոթութիւն մէջ տեղ ելլէ, Մուշեղ իշխանը Կ. Պոլիս կանչեց, պատրիկ անուանեց և քովը պահեց. և անոր տեղը ղրկեց Թէոդոր պատրիկն, և հայ գնդին հրաման ըրաւ, որ իրենց նոր զօրավարին հրամանատարութեամբն երթան Պոնտոս: Անոնք մեծ աղմուկ հանեցին թէ Երինէի իշխանութիւնը չեն ճանչնար, և մեծ խռովութիւն մը յուզելով կը խնդրէին իրենց Մուշեղ զօրավարը: Տագնապեցաւ կայսրն անոնց այս ցոյցին վրայ, և որովհետև ձայն կը շրջէր, թէ հայ զօրականաց միտքն էր զինքը կայսր անուանել, զարհուրեցաւ Կոստանդին, և գանակոծ ընել տուաւ Մուշեղը, մազերը կտրել և պրետորական բանդ դնել. անմեղի մը վրայ անօրինակ և աղիկամի բռնութիւն:

Այս խստութիւնն գրգռեց հայ գունդն յայտնապէս ապստամբելու: Ինքնակալն անհոգ գտնուեցաւ, ինչու որ իր առջևն մեծագոյն գործ մը կար՝ Բուլգարաց պատերազմն, որոնց վրայ անձամբ դիմելով Կոստանդին, պարտեցաւ անոնց առջև, շատ մարդ կորուց իր բանակէն և կորակոր ետ դարձաւ:

Այն ատեն իշխանները խորհեցան կայսրը գահընկէց ընել, և իր հօրեղբայրը Նիկեփոր նոյն գահը բարձրացնել: Դաւը յայտնուեցաւ. և Ինքնակալն՝ այն ժամանակի վայրագ սովորութեան համեմատ բրել տուաւ իր հօրեղբարց Նիկեփորի, Անդիմոսի և Եւդոքսի աչքերը: Նոյն ժամանակ Սարակ անուն պալատական մը, Մուշեղն ևս կասկածելի ցուցուց, ուստի և անոր աչքերն ևս բրուեցան վատախորհուրդ Ինքնակալին հրամանին համեմատ:

Երբոր քաջին Մուշեղի կրած տանջանքները լսեց հայ գունդը սոսկալի կերպով բարկացաւ, և իր Թէոդոր զօրավարը շղթայակապ բանտ դրաւ, և համարձակ դրօշ բարձրացուց կայսեր դէմ։ Սինոպի Գրիգոր եպիսկոպոսն գլուխ եղաւ անոնց, կոստանդնի վահանակիր Անդրոնիկի և Թէոփիլ զօրավարաց հետ։ Ասոնք բարձր Հայոց զօրքերն ևս միաբանեցին իրենց հետ և շատ զօրացան։ Կոստանդին կայսր երբ տեսաւ այս պայմանը, պատրաստեց հզօր բանակ մը, որուն առաջնորդութիւնը յանձնեց իր առաջին վահանակրին Արտաշիր կոստանդեայ և Կրիսոքերայ, որ Գաղատիոյ զօրաց հրամանատարն էր և ղրկեց զիրենք ապստամբաց վրայ։

Հայք թէև թուով նուազ էին, զայրագին սաստկութեամբ դիմեցին կայսերականաց դէմ համարձակ։ Ճակատամարտը խմբեցաւ Նոյեմբեր ամսոյն մէջ և շատ արիւնալից եղաւ, կայսերական զօրքը խորտակեցաւ չարաչար, երկու զօրավարները կենդանի ձեռք ընկան, և աչքերնին բրուեցան, Մուշեղ իշխանի գլուխը բերուած անիրաւ պատժոյն վրէժն առնելու համար։ Այս ամօթալի պարտութեան լուրը Կ. Պօլիս հասնելով՝ թուլցուց պալատականներուն սիրտը։ Բայց և այնպէս մտքերնին դրին վրէժ առնուլ ահեղ կերպով, բայց յապաղեցին գործադրութիւնն՝ ինչու որ ձմեռ էր, և ջանք կ՚ընէին անոնց մէջ երկպառակութիւն ձգելու։ Բարձր Հայոց գունդը խոստումներով և դրամով խաբուելով միաբանեցաւ Յունաց հետ ծածուկ իր ազգայինները մատնելու համար։ Եւ երբ 793*ին մայիսի* 26*ին Նիկետ զօրավարն ահեղ բանակով վրանին եկաւ, փոքր Հայոց զօրքն՝ իրենց ընկերակցաց դաւաճանութենէն լուր չունենալով, քաջութեամբ ելան Յունաց դէմ։ Բայց երբոր Բարձր Հայոց զօրաց գունդը թշնամեաց կողմն անցաւ, ամէն կողմէն պաշարուելով, զէնընկէց անձնատուր ըլլալու հարկադրուեցան։ Կայսեր զօրավարը հոն ճակատու տեղը գլխատել տուաւ Գրիգոր եպիսկոպոսը, Անդրոնիկն և Թէոփիլը. միւս ապստամբ սպաներն իրենց աստիճաններէն վար ընկան, և ինչքերնէն կողոպտուեցան, գլխաւոր խռովայոյզներէն հազար մը շղթայակապ Կ. Պօլիս տարուեցան և հոն ժողովրդեան առջև անջնջելի*

դրոշմեցին իրենց ճակատը Հայ ապստամբ, և ցրուեցին զիրենք Սիկիլիոյ մէջ, որ հոն անցնեն իրենց կեանքը։

Իսկ անոնք, որ իրենց եղբարցը մասնիչ եղան, այսինքն Բարձր Հայոց գունդը, դերև ելլելով իրենց ակնկալութենէն, ունայնաձեռն դարձան իրենց երկիրն, և կայսեր դէմ սաստիկ բարկանալով մտան Արաբացւոց իշխանութեան ներքև, և տուին անոնց ձեռքը Կամախ ամրոցը։

Լևոն Արծրունի իշխան և զօրավար փոքր Հայոց

Ասիկա Վարդ պատրկին որդին էր, որ յառաջագոյն իշխան էր Փոքր Հայոց ինչպէս գրուեցաւ. և նոյն երկրին մէջ ծնաւ Լէոն, և յամին 802, կարգեցաւ հրամանատար հայ գնդին, միանգամայն և կուսակալ Փոքր Հայոց։ Ապա կարգեցաւ զօրավար Արևելեան բանակին, որոնց սիրտը շահել և իրեն հետ սերտ կապանօք կապել շատ լաւ գիտցաւ։ Սա շատ մը քաջագործութենէ ետև, կայսերական գահը բարձրացաւ Միքայէլ Ա. Ռանգապէն անկէց վար իջեցնելով։

Մանուէլ իշխան և զօրավար փոքուն Հայոց

Մամիկոնեան տոհմէն էր, Փոքր Հայք ծնած, վահանակիր եղաւ Միքայէլի Ռանգապեայ, և անոր մտերիմներէն մէկն էր, և իր արիութեամբն և անվեհեր քաջութեամբ բոլոր յունական բանակին մէջ զօրավարաց առաջինն եղաւ։ Ասոր համար երբոր Լէոն հայկազն ինքնակալութեան հասաւ, Մանուէլը զօրավար կարգեց հայ գնդին յամին 813, և ըսաւ իրեն. «Տե՛ս, թէ ի՞նչպէս քեզմէ վրէժխնդիր կ՚ըլլամ, ուրեմն հիմա զիս նախամեծար ընել պէտք է Պրոկոպիայէն (Միքայէլ կայսեր կինը) աւելի»։ Մանուէլ ազնուական վեհանձնութեամբ պատասխան տուաւ. «Ո՛վ իշխան, դու հիմա այն ես ինչ որ էր երբեմն

Միքայէլ. ուրեմն անհրաժեշտ պարտք են հիմա ծառայել քեզի»: Մանուէլ որչափ ապրեցաւ, իր մեծահանճար խորհրդովն հաստատուն եղաւ ինքնակալութեան, մանաւանդ մեծամեծ պատերազմներու մէջ:

Հոս համառօտակի հարկ կը տեսնեմ ծանուցանել որ ինքնակալութիւնը հետզհետէ նուազելով, և բնիկ փոքր Հայքն Արաբացւոց ձեռքն ընկնելով, Հայկական գաւառի կամ բանակի անունը դէպ ի հիւսիս կը վերջոտնէր, մինչև իր մէջը կը բովանդակէր Ամասիա, Նիկսար, Սամսոն և Սինոպ քաղաքները: Բայց ասոնց վերջէն եղած ըլլալն յայտնի է, որովհետև Կոստանդին կայսրը յամին 791 *հրաման ղրկեց Փոքր Հայոց գնդին, որ իրենց Թէոդոր նոր զօրավարին հրամանատարութեամբը Պոնտոս երթան՝ որ իբր զատ երկիր կը նշանակուի. թող ուրիշ պատճառներ, որոնք պատմութեան ընթացքին մէջ տեսնուեցան: Այս ստոյգ է, որ այս բանակները յետ ժամանակաց սկսած ըլլալով՝ միշտ միակերպ պահուած չեն, և ոչ ամէն մէկուն հանգամանքը որոշակի նշանակուած: Այսչափ բաւական համարելով՝ կը դառնամ պատմութեան:*

Ե. — ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ԴԷՊՔԵՐ: — ԷՄԻՐՆԵՐ: — ՊԱՒՂԻԿԵԱՆ ԱՂԱՆԴԱՒՈՐՆԵՐ: — ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ: (830–870)

Ինքնակալութեան աթոռն ելաւ Թէոփիլ (829–842)*. իր առաջին գործն եղաւ Մանուէլ զօրավարը կարգել սպարապետ Արևելից. և անոր հետ մէկտեղ քալեց Արաբացւոց դէմ, որոնց հրամանատար էր Իպրահիմ և անոր տեղակալը Ապուկազար: Մանուէլ չէր ուզեր որ ինքնակալն անձամբ ձեռնարկէ պատերազմին մէջ, Թէոփոր հակառակը կը մտածէր. ինքնակալը համաձայնեցաւ երկրորդ կարծեաց, և կորուց մեծ ճակատ մը, բայց ինքը պահնորդ գնդովը գերծաւ բուն բանակը, զոր Մանուէլ կազմ կը պահէր, խորտակեալ զօրաց մնացորդները մէկտեղ հաւաքելով, և անկից գնաց կայսրը Կ. Պօլիս. իսկ Արաբք դարձան Ասորիք:*

Յաջորդ տարին Կարսիանա քաղաքին քով խմբեցաւ մեծ ճակատ մը, յորում Թէոփիլ ինքնակալն իր սպարապետին Մանուէլի աջակցութեամբ խորտակեց Արաբներն և 25.000 գերի հետն առած Կ. Պոլիս դարձաւ :

Զայրագին էին Արաբներն այս պարտութեան վրայ, և զարունը բազմութեամբ դիմեցին Կապադովկիա : կայսրն իր սովորական համարձակութեան համեմատ առաջ նետուեցաւ, բայց յաղթութիւնը չի կրցան ստանալ, և մինչդեռ Մանուէլ բանակին միացրդոմն յետս կը նահանջէր, կայսրը մէջ տեղ չի տեսնուեցաւ. որովհետև տեղ մը պաշարուած էր անիկա թշնամեաց մէջ: Նոյն ընդ նոյն գումարեց զօրաց քաջերն իր քով և գոչեց Մանուէլ. «Եկէք երթանք կայսրն ազատենք, կամ անոր հետ մէկտեղ մեռնինք». և կայծակի պէս վրայ հասնելով ազատեց զանիկա, իսկ Արաբներն ետ քաշուեցան, և չի համարձակեցան ճակատը նորոգել:

Յոյն իշխանները չի հանդուրժեցին Հայկազունի մ'այս փառաց, և մեծ ատելութիւն մը սերմանեցին իրեն դէմ, իբր թէ կ'ուզէ Թէոփիլի ձեռքէն գահն յափշտակել: Այն ատեն Մանուէլ խոյս տուաւ Կ. Պոլսէն և գնաց Սուրիա, և հոն Արաբացւոց հետ յարմարելով հասաւ Պաղտատ. և յոյն գերիներ իր ձեռքին ներքև զինուորելով՝ որոնք Մութթասէմ Ամիրապետին քով կը գտնուէին, անոնց գլուխն անցած գնաց նուաճեց Խօրասանու ապստամբներն, և մեծապատիւ մեծարեցաւ և պատուեցաւ Ամիրապետէն:

Այլ Թէոփիլ զղջաց ըրածին վրայ և մեծապէս կը բաղձար ձեռք բերել այն քաջ մարդը՝ հանճարեղ զօրավարն՝ որ և յաջողեցաւ միջնորդութեամբ Յովհաննու Սինկեղեայ և Կապադովկիոյ կուսակալին ձեռնտուութեամբ: ինչու որ Մանուէլ ամիրապետին Ուաթէք որդւոյն հետ նոյն գաւառը գնացած էր բազմաթիւ զօրքով, և անկէց մեկնելով՝ Արաբ գահաժառանգին մեծ սրտի ցաւովն, զոր իբրև հայր կը սիրէր և կը յարգէր՝ գնաց Կ. Պոլիս: Ինքնակալը շատ գոհ ըլլալով ուելցուց և բարձրացուց Մանուէլի աստիճանը, կացուցանելով զինքը զօրավար

պաշտօնըդ գնդին։ Եւ երբ կայսրն արու զաւակ մ'ունեցաւ, Մանուէլը կնքահայր անուանեց անոր, որ հաւուն անունով կոչուեցաւ Միքայէլ։

Մանուէլի պարզէն եւս պատերազմը դեռ կը շարունակուէր Յունաց և Արաբացւոց մէջ Կապադովկիոյ սահմաններուն վրայ. այլ եբր թէ ակնածելով իրարմէ, պատերազմական ճակատներ չէին մղեր իրարու դէմ։ Թէոփիլ կայսրը թշնամեաց անգործութենէն օգուտ քաղել ուզելով, հարիւր հազար զօրաց գլուխ անցաւ և դիմեց Սուրիա, և աւրեց ապականեց բոլոր այն երկիրն և դէպ ի Եփրատ առաջ քալելով առաւ Կոմագիոյ Սամոսատ քաղաքը և պաշարեց Սոզոբերդը նոյն աշխարհին մէջ. և ականջ չի կախելով Մութասէմ Ամիրապետին աղաչանաց, որոյ ծննդեան վայրն էր այն, երիկ մարդիկը սուսերահար ջարդեց. և կանայքն ու մանկտին գերի վարելով՝ անոնց հետ մէկտեղ եկաւ Մելիտինէ, ուր ժամանակէ մ'ի վեր սկսած էին իշխել Արաբք, և կը նստէր հոն Արաբ էմիր մը, Ամիրապետին իշխանութեան ներքև, և քաղաքը կ'անուանուէր Մալաթիա։ Թէոփիլ հոն ևս կոտորած մ'ըրաւ, և հազար այր գերի առնելով դարձաւ Կ. Պօլիս։

Բայց իր այս անխորհուրդ ասպատակութեան անմիտ հաճութիւնն երկայն չի տեւեց. վասն զի Ամիրապետը գումարեց աշեղ բանակ, և զօրաժողովոյն կեդրոնն էր Տարսոն. ընդհանուր հրամանատար կարգեց իր որդին Ուաթէքը փոքր Հայոց Սուտէս կամ Սաուտ էմիրին հետ, որ երթան առնուն Ամորիոյ ամուր և բազմամարդ քաղաքն, որ այժու Անկիւրիոյ Հայմանայ գաւառին մէջ կ'իյնայ, ուր ծնած էր Թէոփիլ։ Հակառակ զօրավարաց, և նոյն իսկ Մանուէլի խորհրդոց, կայսրը քալեց գնաց իր սովորական համարձակութեան համեմատ մինչև Տօրիլէա (Էսկիշէհիր)։ Կայսերական բանակը խորտակեցաւ Ուաթէքի և Սուտէսի առջև. և կայսրը հազիւ ազատեցաւ այս երկրորդ անգամ Մանուէլի քաջութեամբ։ Այն ատեն Արաբները յարձակեցան Ամորիոյ վրայ և առին և երեք օրուան մէջ առին, աշեղ կոտորածէ մ'ետև, կրակով այրեցին քաղաքին բոլոր շէնքերն։ Եւ այսպէս վրէժխնդիր ըլլալով Սոզոբերդի աւերման, դարձան Պաղտատ երեսուն հազար գերի տանելով

հետերնին, որոնց մէջ էին նաև Ետիոս Ամորիոյի հրամանատարն և Թէոդոր Կրատեր։

Յամին 842, երբոր մեռաւ Թէոփիլ կայսրն, ինքնակալութեան գահն նուիրեցաւ Մանուէլի, այլ նա մերժեց մեծանձնութեամբ. և Միքայէլ մանուկը Թէոդորա մօրը հետ թագաւորեցուց, և ինքը խնամակալ եղաւ։

Եաքը եպիսկոպոսաց ժողովով հաստատել տուաւ պատկերաց պաշտօնն և պատկերաց մոլեգին թշնամին Յովհաննէս Լիկանոմանը պատրիարքական աթոռէն վար առնելով, տեղը բարձրացուց երանելի Մեթոտիոսը։ Ըրաւ նաև ուրիշ շատ մը բարի գործեր, և պարծանք եղաւ կայսրութեան։ — Հիմակ գանք տեսնելու իր արիական գործերը Միքայէլ կայսեր ժամանակ։

Ինչպէս տեսնուեցաւ արդէն՝ Թէոփիլի օրերէն և աւելի առաջ ընիկ Փոքր Հայքը գլխաւոր մասամբ ելած էր Յունաց իշխանութենէն. և Էմիր Սաուտ Փոքր Հայոց իշխանը կը հրամայէր Արաբացւոց զօրքին, որոնք գահաժառանգ Ուսթէք իշխանին առաջնորդութեամբ գիմեցին Փռիւգիա և Գաղատիա, և աւերեցին Ամորիոյ մեծ քաղաքը։ Սաուտէն ետև պետ կարգեցաւ Փոքուն Հայոց քաջ Էմիրն Օմար, որ կը նստէր Մալաթիա, ինչպէս սկսած էր կոչուիլ հին Մելիտինէն։ Այս Էմիրը հպատակ էր Արիմապետին և շատ պատերազմներ մղեց կայսրութեան զօրաց դէմ։

Օմար իր ձեռաց ներքև ունէր աւարառու զօրաց բազմութիւն մը, և անոնց հետ մէկտեղ կ'ասպատակէր կայսրութեան արևելքի գաւառներն անդադար։ Թէոդորա որ կը թագաւորէր իւր որդւոյն հետ՝ որ Միքայէլ արբեցող կ'անուանէր, ղրկեց Էմիրին դէմ բազմութեամբ զօրաց Թէոկտիստոս մեծ իշխանն՝ որ Միքայէլի խնամակալներէն մէկն էր, բայց զինուորական գործոց հմտութիւն չունէր։ Տաւրոս լեռան մօտերը մեծ ճակատ մը տրուեցաւ, ուր իրեններէն քառասուն հազար մարդ թողլով փախաւ Թէոկտիստոս, և այն թողուած զօրքերէն շատերն իրենց զօրավարին խստութենէն ազատելու համար, ընդունեցան Մահմէտի կրօնքն

և խառնուեցան Արաբացւոց գնդերուն մէջ։ Այն ատեն բոլոր երկիրը Արաբացւոց առջև բաց մնալուն համար, կայսրուհին առաջարկեց Արաբացւոց՝ որ գերիներու փոխանակութիւն ըլլայ. և Ամիրապետը չի մերժեց։ Սակայն անկէց ետև Արաբները յանկարծ մտան կայսրութեան երկիրն, այլ օդէն և ցուրտէն մեծ բազմութիւն կորաւ։

Մի և նոյն ժամանակ կայսրուհին կ'ուզէր ստիպել Պաւղիկեաններն, որ թողուն իրենց աղանդն, մանաւանդ որ սպաններ էին Նէոկեսարիոյ Թովմաս եպիսկոպոսն և գաւառին Պարակոնդաս կուսակալը։ Պաւղիկեանները կը բնակէին Կապադովկիա, Փոքր Հայք և Պոնտոս։ իրենց վարդապետութիւնը խառնուրդ մ'էր Կնոստիկեան, Մանիքեցւոց և մոգութեան աղանդներէն. իրենց առաջնորդութիւն կ'ընէր Սիլվէյն սարկաւագն՝ որ կը բնակէր Կողոնիա՝ Լիկոս (Գայլ) գետին եզերքն և քսանևօթը տարի կը քարոզէր իրենց։ Ասոնք Պաւղիկեան անունն առին, որովհետև իրենք զիրենք կը համարէին հետևող Պաւղոսի Առաքելոյն։ Երբոր այս աղանդն սկսաւ աճիլ և բազմանալ, ինքնակալները միտ դրին չիջուցանել զանիկա։ Յուստինիանոս Բ. Միքայէլ Ա. Լէոն Ե. հայկազն և ուրիշ կայսերք հալածանք հանեցին իրենց վրայ։ Բայց ամենէն խիստ գտնուեցաւ Թէոդորա կայսրուհին որ բազմաթիւ զօրքով անոնց վրայ ղրկեց Արկերի որդին Լէոնն, Անդրանիկոս Դուկասն և Սուդալիոն՝ որ կա՛մ դարձնեն ուղիղ դաւանութեան, և կամ ի սայր սուսերի ջարդեն անխնայ։ Երեք հրամանատարներն անհնարին տանջանօք սպաննեցին շատ մեծ բազմութիւն՝ իբր հարիւր հազար, ինչպէս կ'ըսուի. և անոնց ամէն ինչքերը յարքունիս գրաւեցին։ Պաւղիկեանց գլխաւորը Սարգիս մեռած էր. և անգլուխ մնացած ըլլալով՝ փախան ընկան անտառախիտ և մացառուտ տեղեր. վայրենաստուն կեանք մը սկսան վարել. և իրենց կատաղի ասպատակութիւններովն ապականեցին Պոնտոսը, Կապադովկիան և Փոքր Հայքը. իրենք ազգաւ յոյն և հայ, և ուրիշ ցեղերէ կազմուած էին։

Թէոդոր Մելիսենի արևելից նախարարին ծառաներէն մանիքեցի մը Կարպաս անուն, յանդուգն և խրոխտ մարդ մը՝ փախաւ իր տիրոջը

քովէն, և իր գլուխը Պաւղիկեաններէն հինգ հազար մարդ ժողովելով և զինելով, գնաց ապաւինեցաւ Մալաթիոյ Էմիրին, որ զինքը ղրկեց Ամիրապետին։ Նա շատ գոհ գտնուեցաւ, որովհետև այս կերպով կը պատրաստուէին կայսրութեան անհաշտ թշնամիներ. և Պաւղիկեանց բնակութեան տեղ սահմանեց Արգէոս լերանց քովերն, և վստահ ըրաւ զիրենք իր հովանաւորութեան նկատմամբ։

Այդին անդին ցրուած Պաւղիկեանք աճապարեցին գալ ժողովիլ իրենց համար նշանակուած երկիրն, որ շատ նեղ և անձուկ ըլլալով, Կարպաս նոր քաղաք մը շինեց Փոքր Հայքի Կողոնիա թեմին մէջ, զոր Թէփրի կամ Թէփրիկա անուանեց, այն է՝ Տիւրիկ՝ որ Պաւղիկեանց և ամենայն չարագործաց եղաւ ամուր ապաստանի և լեցուեցաւ բազմութեամբ։

Ինքզինքը կազմելէն ետև, Կարպաս նիզակակից եղաւ Մալաթիոյ Օմար՝ և Թարսոնի Ալիմ Էմիրներուն հետ՝ Յունաց դէմ։ Բայց Ալիմ ընկերներէն զատուելով՝ իր բոլոր զօրութեամբը դիմեց Հայաստան և չարաչար խորտակուեցաւ։ Օմար և Կարպաս ընդհակառակն միաբան կեցան և մերձակայ գաւառներն աւարեցին։ Կայսրուհւոյն եղբայրը Պետրոնաս իրենց դէմ ղրկուեցաւ, և որովհետև կը ջանար իր բանակը միայն պաշտպանել, գործ մը չի կրցաւ կատարել։ Օմար Պոնտոսն և Կապադովկիան աւարելէն և ապականելէն ետև, իր աւարահարութիւնը մինչև Բիւթանիա առաջ քշեց, քանի որ Միքայէլ կայսր տանկ բաներու զբաղելու ժամանակ չունէր, ինքզինք տուած ըլլալով անդադար արբեցութեան և խեննեշութեան։ Եղեսիոյ իշխաններ Ֆատըլ և Ալի որդիք Եահեայի, քանդելով կ՚աւարէին Հռովմէական Կիլիկեան։

Կ. Պօլիս այս ժամանակ կը յուզուէր մեծ խնդիր մը Ս. Իգնատիոսի հայրապետութեան նկատմամբ, կայսրն և իր մօրեղբայրը Վարդ Կեսար ընկղմած էին այն գործին մէջ, մօքերնին դնելով աթոռէն վար առնուլ Սուրբը. նաև Արաբացւոց հետ պատերազմը կը մղէր ամենայն սաստկութեամբ. խնամակալներէն Մանուէլ և Թէոկտիստոս մերժուած էին իրենց այս պաշտօնէն, և Վարդ Կեսար անցեր էր վարչութեան

գլուխը։ Թէոդորա կայսրուհին իր դստերաց հետ փակուած էր վանքի մը մէջ, և բռնի կ'ուզէին ուխտ ընել տալ անոնց։

Մինչդեռ այս իրենց չպատկանեալ խնդրոց մէջ ժամանակ կ'անցունէին ինքնակալն և իր մօրեղբայրը Վարդ կեսար, հզօր բանակաւ թշնամեաց վրայ քալեց Լէոն զօրավարն. առաւ Այն-կիրա ամրոցն, և Եփրատ գետն անցնելով՝ ասպատակեց երկիրը մինչև Ամիտ. առաւ շատ բերդեր Տիգրիսէն անդին, և աւարեց զանոնք։

Արաբք ևս հանդարտ չէին կեցեր. Մալաթիոյ էմիրը քաջն Օմար արագաշարժ գնդերով աւարեց և աւերեց բոլոր երկիրը մինչև Սինոպ առանց մէկէ մ'ընդդիմութիւն կրելու, և հանդարտ ետ դարձաւ։

Վերջապէս Միքայէլ կայսրը փոքր մի սթափելով իր թմրած կեանքէն, յամին 858, մեծազօր բանակով քալեց գնաց, որպէս զի ձեռք զարնէ պաշարելու Սամոսատ քաղաքն, որ շատ լաւ նորոգուած էր Արաբներէն. իրեն հետ առած էր նաև Վարդ կեսարը։ Կայսերական բանակն աւագ Հինգշաբթի հասաւ Սամոսատ, և որովհետև պաշարուողները զարհուրած և սարսափած էին, անարգել պատնէշ կանգնեցին անոր չորս կողմը։ Ս. Զատկի Յարութեան օրը Յունաց զօրքերն սկսան առ հասարակ ուրախութեան հանդէսներ կատարել, խրախունք ընել, առանց կարևոր զգուշութեան։ Այն ատեն պաշարուած քաղաքացիք, բանալով իրենց քաղաքին դռներն, ամէն կողմէ վրանին թափուեցան յանկարծ, և սկսան անխնայ կոտրել և ջարդել։ Կայսրը առաջին եղաւ փախչելու և իր ձիուն արագընթացութեամբը զերծաւ։ Պաւղիկեանք միացեր էին Արաբներու հետ և աւելի սաստիկ կերպով կը վազէին ջարդելու. և իրենց գլուխ կեցած էր Կարպաս, որ իր վայրագ կործանութիւնը հանդէս հանեց։ Յոյն քաջերէն, որոնց հետ էր նաև Լէոն զօրավարը, շատեր գերի վարուեցան, Լէոն շղթաներու մէջ մեռաւ, իսկ միւսներն ետքէն փրկանաւորուեցան։ Բանակին վրաններն, աղխերն և մեծագին հանդերձանքն ամբողջ աւար եղան յաղթող Արաբներուն և Պաւղիկեանց։

Երկու տարի վերջը Մալաթիոյ իշխանը կամ էմիրն երեսուն հազար զօրքով դարձեալ մտաւ Կապադովկիա։ Նաև Միքայէլ ինքնակալ գումարեց քառասուն և հինգ հազար զօրք, և քալեց անոր վրայ։ Այս անգամ հետն առաւ նաև ծերունի Մանուէլն, որ պահած էր հայ պահնորդ գնդին զօրավարութիւնը։ Սակայն կայսրն իրեն անձին պահած էր բանակին հրամանատարութիւնն, և որովհետև հմուտ չէր պատերազմական գործոց՝ երբոր խմբեցաւ ճակատամարտն Ամասիա քաղաքին քով, Յոյնք խորտակեցան, և կայսրը պաշարուեցաւ Թշնամեաց զօրաւոր մէկ խմբէն, և մօտ էր ընկնել անոնց ձեռքը կենդանի կամ մեռեալ։ Երբոր այս բանն իմացաւ արին Մանուէլ (որ երբեմն Միքայէլի հայրը՝ Թէոփիլ կայսրն՝ երկու անգամ զերծուցած էր), իր պահնորդ գնդէն ընտրեց հինգ հարիւր քաջակորով անձինք և խաչին նշանն առջևէն տանելով, անցաւ Թշնամեաց գնդին մէջէն և հասաւ կայսեր գտնուած տեղն, և ստիպեց զանիկա, որ իրեն հետ մեկնի այն տեղէն. Միքայէլ ահաբեկած ըլլալով չէր ուզեր գտնուած տեղէն շարժիլ։ Այն ատեն Մանուէլ կայծակներու շանթի պէս յարձակեցաւ Օմարի գնդին վրայ, որ վախէն սարսափած իրեններովն ետ ետ ընկրկեցաւ. և Մանուէլ համարձակ ազատեց կայսրն անվտանգ։

Այս փառաւոր գործէն ետև ծերունին Մանուէլ լնլով իր բազմարդիւն և արի կեանքը, հանգեաւ ի Տէր։

Իսկ քաջն և անխոնջն Օմար՝ իր հետն ունենալով կայսրութեան անհաշտ Թշնամի Պաւղիկեանները, յամին 861, Կապադովկիան, Պոնտոսն և Կիլիկիան անապատ ամայի դարձուց, և աւերելով քանդեց Փոքր Ասիան, և 60,000 գերի տարաւ իր հետ. նոյն ատեններն ուրիշ Արար զօրավար մը քսան նաւերով եկաւ առաւ Կիլիկիոյ Անտիոք քաղաքը։

Այլ եւ շատ համարձակած էր Օմար իշխանը. յամին 862, գումարեց քառասուն հազար զօրք. և Պոնտոսի մէջ մինչև Սամսոնի (Ամիսոս) դռներն առաջ գնաց, զոր առաւ և մեծագին աւար ժողվեց անկէ։ Եւ երբ Ամասիոյ մօտերը կը գտնուէր ճակատու անյարմար դիրքի մէջ,

Յունաց սպարապետը Պետրոնաս, իրեն խորհրդակից ունենալով Գաղատիոյ Նազար կուսակալը՝ վրայ հասաւ: Մեծ քաջութիւն ցոյց տուաւ Օմար, և որովհետև անհնար էր պրծիլ, արիաբար ընկաւ մարտին ժամանակ: Օմարի որդին Ալիսն անցեր առաջ քալեր էր, երբոր լսեց հօրը պարտութիւնն և մահը, դարձաւ ետ ետ, և կը ջանար Մալաթիա հասնիլ, այլ յաղթականներէն շրջապատուելով գերեցաւ իր գնդովը: Պետրոնաս հետը տարաւ Կ. Պօլիս Օմարի գլուխն, և հոն կատարեց յաղթանակի հանդէս:

Զ. — ՄԵԾԻՆ ՎԱՍԼԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԽԱԼՈՒՄԸ ԴԷՊ ԱՐԵՒԵԼՔ. (870 - 920)

Վասիլ Ա. մեծն՝ հայ ազգաւ՝ յամին 867 ամբարձաւ յաթոռ ինքնակալութեան. առաջին գործն եղաւ հոգ տանել եկեղեցական բարեկարգութեան, որ խանգարուած էր Կ. Պօլիս Ս. Իգնատիոսի աթոռէն մերժմամբը և Փոտի անոր տեղը գրաւելովը, որ կատարուած էր Վարդ կեսարի ձեռնտուութեամբն և Միքայէլ կայսեր անհոգ գործակցութեամբ: Վասիլ միաձայնելով Ադրիանոս Բ. Հռովմայ Քահանայապետին հետ յամին 869, գումարել տուաւ Կ. Պօլսոյ չորրորդ ժողովքն: Ս. Իգնատիոս դարձաւ իր աթոռն և Փոտ մերժուեցաւ:

Այս ժամանակները Տիվրիկի Պաւղիկեանք նորոգած էին Մալաթիոյ նոր էմիրին հետ ամկէց առաջ իրենց և նախորդ էմիր Օմարի մէջ հաստատուած միաբանութեան դաշինքն: Եւ որովհետև Պաւղիկեանց պետը Կարպաս մեռած էր, անոր որդին Կիւրշահր, կամ ըստ Յունաց Կրիսոշիր, իրենց առաջնորդ եղաւ: Սա ևս հօրը նման կտրիճ և խրոխտ էր, որ իր գլուխը գումարելով Պաւղիկեաններն և Մալաթիոյ զօրաց ճնացորդները, դիմեցին փոքր Ասիա, և ասպատակութեամբ քալեցին գնացին՝ մաս մը մինչև Նիկիոյ և Նիկոմիդիոյ դռներն, և մաս մը Եփեսոսի կողմերն, զոր առին և աւերեցին, և կողոպտեցին Ս. Յովհ. Աւետարանչի եկեղեցին:

Վասլի ինքնակալութեան սկիզբները պատահեցին այս խռովութիւնները՝ մինչև նա մայրաքաղաքի աղմուկներուն զբաղած էր։ Ուստի խաղաղութեամբ վճարել կամեցաւ գործն, և Պետրոս Սիկիլիացին դեսպանութեամբ ղրկեց Կիւրշահրին գերիները փրկանաւորելու և անոր հետ հաշտութիւն ընելու համար։ Մէկ երկու տարի Պետրոս կեցաւ Տիվրիկ, գերիները փրկանաւորեց, այլ հաշտութիւն ընելու հնարք չեղաւ, ինչու որ Կիւրշահր պայման կը դնէր և կը պահանջէր՝ որ ինքնակալը Վոսփորէն ասդին եղած ամեն գաւառներէն, այսինքն ամբողջ Փոքր Ասիայէն հրաժարի. և շատանայ միայն անոնցմով՝ որ նոյն նեղուցէն անդին կը գտնուին։ Այլ և յայտնի էր որ խաղաղութեամբ գործը վերջացնել կարելի չէր։ Ուստի Վասիլ կայսրը յամին 871 բազմութեամբ զօրաց քալեց թշնամւոյն վրայ։ Կիւրշահր Անկիւրիոյ կողմերն արշաւեր բոլոր երկիրն ասպատակեր էր, և շատ մ՚աւար հաներ էր Պոնտոսի Կոմանայէ։

Կայսեր արշաւանքն ի սկզբան յաջող չի գնաց, նա թէ վտանգ ևս եղաւ, որ ինքը թշնամեաց ձեռքն ընկնի՝ զոր արիութեամբ ապրեցուց հայ զինուոր մը Թէոփիլակ–Վաշտակ անուն։

Կ. Պոլիս դառնալով Վասիլ, պատերազմի մէջ արիացողներուն շատ նուէրներ բաշխեց, իսկ իր կեանքն ազատող Թէոփիլակ–Վաշտակը քովը կանչեց և կ՚ուզէր շատ աւելի վարձատրել, բայց պարկեշտ հայ զօրականը փառք կը մատուցանէր Աստուծոյ՝ որ այնպիսի պատուոյ արժանի ըրաւ զինքն, ապրեցնել իր Տէրն, և ասոր համար կ՚ըսէր, իրաւունք չունի այն պատճառով բան մը պահանջելու անորմէ, որովհետև իր պարտքը կատարած էր. իսկ եթէ ինքնակալը կ՚ուզէ իրեն շնորհք մ՚ընել, պարգևէ իրեն փոքր ածու մը տան և ընտանեաց պահպանութեան համար։ Կայսրը շատ աւելի առատութեամբ կատարեց անոր խնդիրքն և այս Թէոփիլակ – Վաշտակի որդին էր Ռոմանոս՝ Լէկապէն կոչուած, որ կրցաւ մինչև կայսերական գահն ելլել։

Տիվրիկի չորս կողմերը կային շատ մը քաղաքներ Արաբացիներէն բնակուած՝ Մալաթիոյ իշխանութեան ներքև և Պաւղիկեանց հետ միաբան. ասոնք զարհուրելով Վասլի զօրաց հարուածներէն, աւերմունքէն,

աղերսաւոր առաքեցին խաղաղութիւն ընել ինքնակալին հետ և իրեն նիզակակից ըլլալ։ Ասոնց մէջ առաջին եղաւ Տարրաս (Թարրաս) աւանը. նաև հայազգի իշխանը Բուրդիկ կամ Կուրտիկիոս Լոկան ամրոցին տէրն և անոր շուրջն եղած ընդարձակ երկրին որ Միքայէլ Արբեցողի ժամանակ յաճախ կ'ապստամբէր կայսրութեան երկիրներն, բայց հիմակ իմանալով Վասիլ կայսեր գթութիւնն, իր գաւառովն և ժողովուրդներովը մտաւ ինքնակալ անոր իշխանութեան ներքև. և պատուեցաւ ինքնակալութեան զօրավարաց կարգը դասուելով։

Յաջորդ տարին պատրաստեց Վասիլ զօրաւոր բանակ, և որպէս զի Պաւղիկեաններէն վերցնէ այն մեծ ոյժն՝ որ Արաբներէն կը ստանային, քալեց Մալաթիոյ սահմանն, զոր Թէոփիլ կործաներ էր, ինչպէս նաև Սամոսատ ու Սողոբերդը։ Սակայն գրաւուած քաղաքները չէր կրնար պահել ինքնակալութիւնը, ինչու որ կը նուազէր բանակին ոյժն որ և նուազած ըլլալով՝ չէր բաւեր երկու գործողութեան միանգամայն։ Վասիլ իր զօրաց մէկ մասին հրամանատարութիւնը յանձնեց իր ազգականին Քրիստափորի, որ զօրավար էր բազմահմուտ՝ երթալ զարնել Սողոբերդ քաղաքն, որ շինուած էր Ամանոսի և Տաւրոսի մէկ ճիւղին կրճերուն մէջ։ Քրիստափոր յանկարծ վրայ հասնելով գրաւեց զայն յարձակմամբ, սուսերահար ջարդեց բնակիչներն, ըրաւ մեծազին աւար, ազատեց գերիներու բազմութիւն, և կրակով այրեց անոր չորս դին եղած տեղերը, դիմեց ապա Սամոսատի վրայ, որ փոքր ինչ ընդդիմութիւն ըրաւ. վերջապէս Քրիստափոր լեցուն աւարով և ազատած գերիներով իր զօրքը բազմացնելով, նաև հետն առնելով Արաբ գերիներ դարձաւ միացաւ կայսերական բանակին հետ։ Վասիլ հասաւ Եփրատայ եզերքն և թէպէտ ամառ ատեն գետը յորդած էր, այլ կամուրջ շինեց, և իր օրինակովը սրտապնդեց զօրքերն, անցաւ արիաբար, առաւ Թաքասակ ամրոցն և աւերելով Ծոփաց աշխարհքը մինչև Արսանիա գետն և Միջագետաց մէկ մասը, նորէն դարձաւ Մալաթիոյ կողմերն, ուր ժողոված էին մեծ բազմութիւն Արաբացւոց։ Խմբեց մեծ ճակատ. կայսրը լաւ ցոյց տուաւ հոն իր արիութիւնն, ամէն վտանգներու մէջ սուրը ձեռքը նախայարձակ

ըլլալով։ Խորտակեցան թշնամիք մեծամեծ կորուստներով. և յոյն և հայ զօրքերը սուր ի կողս հալածեցին զանոնք մինչև քաղաքը՝ սոսկալի կոտորածով։ Բայց Մալաթիա շատ ամուր էր շէնքերով, պաշարով և բազմութեամբ պահապանաց. փորձ ըրին յարձակմամբ առնուլ. բայց դժուարութիւնը տեսնելով թողուցին գնացին։ Կայսրը կը խորհէր Տիվրիկի վրայ յարձակիլ, բայց որովհետև ժամանակն անցած էր, և ձմեռը վրայ հասած, բազմապատիկ վարձքեր և պարգևներ տալով քաջութիւն գործող զօրավարաց և զօրաց, ինքը դարձաւ Կ. Պօլիս։

Մալաթիոյ քով կրած մեծ պարտութենէն ետև ևս, տակաւին Կիւրշահը չունէր դժուարութիւն զօրաց մեծ բազմութիւն գումարելու, ինչու որ Պաւղիկեանք բոլորն ալ առ հասարակ զինուոր էին։ Ասոր համար առաջինէն աւելի մեծ բազմութեամբ ասպարէզ ելաւ և Կապադովկիա մտնելով՝ ամէն բան աւրեց աւրշակեց։ Անձամբ կ՚ուզէր Վասիլ դիմել անոր դիմացը, բայց իշխաններն և զօրավարները կ՚ըսէին. Կիւրշահը արժանի չէր անանկ պատիւի մը, և կայսերական վեհափառութեան վայել չէր՝ մոլեգնած թափառականի մը հետամուտ ըլլալ, որ յանդգնութենէ աւելի ուրիշ արդիւնք մը չունի։

Այն ատեն ինքնակալն ազօթքով Աստուծոյ օգնութիւնը խնդրելէն ետև, պատերազմին գործն յանձնեց նոյն ինքն Քրիստափոր զօրավարին։ Ասիկա բանակին գլուխն անցնելով՝ գտաւ Կիւրշահն Ակրան, որ մօտ էր Սեբոր (կամ Պատրիկէ) քաղաքին Կապադովկիոյ մէջ, բայց ասիկա Յունաց դէմ ճակատ տալ չուզեց, և ժողոված աւարներովը թողուց գնաց Տիվրիկ։ Քրիստափորի հետ եկեր միացեր էին նաև Բարձր և Փոքր Հայոց զօրքերն։ Այն ատեն նոյն սպարապետը զատեց երկու ուրոյն վաշտ, ամէն մէկը վեց հարիւր անձ, մէկը Հայոց գնդէն՝ և միւսը Կապադովկիացիներէն, որ հետամուտ ըլլան Կիւրշահի բացագոյն, և մատդրել անոր ընթացիցն, թէ նորէն կը մտնէ՞ ինքնակալութեան երկիրն, և ամէն բանի վրայ իրեն լուր տալ։ Պաւղիկեանք գնացին բանակեցան խորաձոր հեղեղատի մը քով անտառախիտ լեռներով պատած. իսկ երկու վաշտերը՝ թշնամիներէ գաղտուկ՝ եկան կեցան հեղեղատին միւս

եզերքը լերան գագաթն։ Եւ որովհետև շատ ժամանակէ ի վեր նախանձընդդէմ հակառակութիւն կար կապադովկացի և հայ գնդերու մէջ, թէ ո՛րը միւսէն քաջագոյն է կայսերական զօրաց մէջ, թշնամւոյն մօտաւորութենէն այս վէճն աւելի ևս սաստկացաւ. այն ատեն հայ զօրականներէն մէկն աղաղակեց. «Ի՞նչ պարապ խօսքերով ժամանակ կը կորսնցնենք, ուր որ առիթը մեր դիմացը պատրաստ է, թշնամեաց վրայ, որ մեր ոտքին տակը կեցեր են, ցուցնենք մեր արիութիւնն ու քաջութիւնն, և անիկա թող դատէ թէ մեզմէ ո՛րը քաջագոյն է»։

Երբոր հրամանատարք զօրաց այս պատրաստակամութիւնը տեսան, երկու վաշտերէն վեց հարիւր հոգի ընտրեցին երկու առանձին խումբ և արձակեցին թշնամեաց վրայ։ Ասոնք առանց երևնալու մօտ հասնելով առաւօտ կանուխ՝ արևը չի ծագած գոչեցին միաբան «Յաղթութիւն խաչին» ու ճայթառող ամպոց փոթորիկներու պէս խոյացան ընկան թշնամեաց վրայ. իսկ անոնք որ նոյն ատեն լեռները մնացած էին, սկսան պատերազմի փողերը զարնել և բարձրաձայն աղաղակել։ Այս գոռում գոչումներէն շփոթեցաւ աղմկեցաւ Պաւղիկեանց բանակն, և խառն ի խուռն սկսան փախչիլ. Կիւրշահր շատ մ՚անօգուտ ճիգերէ ետև, ինքն ևս հարկեցաւ հետևիլ անոնց. և հեղեղատին ծայրը հասնելով, ուստի առաջ անցնիլ կարելի չէր, ահա վրայ հասաւ Պուլատ, և տէգի հարուածով գետին ձգեց զինքը. տակաւին անոր քով կեցած էր իր վահանակիրը Տիակոնիս որ ապա գետին ինկաւ։ Ետքէն կտրեցին Կիւրշահրի գլուխն և տարեցին Կ. Պօլիս՝ ինքնակալին։

Երբոր այս գործերն իմացաւ Քրիստափոր ամբողջ բանակովը դիմեց Տիվրիկի վրայ և հասաւ անդիմակաց, որովհետև նոյն ժամանակը սաստիկ երկրաշարժ ըլլալով՝ բնակիչքը թողեր փախեր, պարիսպներուն պատուարներն ևս ընկեր էին։ Յոյնք գտան այն քաղաքն աւերակներու կոյտ մը. յամին 873 եղաւ այս գործն։ Եւ այսպէս վերջացաւ Պաւղիկեանց պատերազմը, քսան և հինգ տարի տևելէն, և փոքր Ասիան մինչև Վոսփոր սասանեցնելէն ետև։ Իսկ Պաւղիկեանց մնացորդները ցրուեցան, անցան ևս Եւրոպիոյ կողմերը։

Պաւղիկեանց բոլորական պարտութիւնը՝ կայսրութեան Սև ծովուն եզերքն եղած ստացուածները՝ Սեբաստիա գաւառին հետ ապահով վիճակի մէջ դրաւ։ Մալաթիա տակաւին կը գտնուէր Էմիր Օմարի յաջորդներուն ձեռքը։ Թարսոսի Արաբներն ամուր բերդ մ'ունէին Լուլէ անունով, որ նոյն ըլլալու է Կիլիկեցւոց Լուլվայի հետ․ անկէց ապատակութիւն կ'ընէին մերձակայ գաւառներն։ Վասիլ կայսեր հրամանաւ առնուեցաւ այն․ անձնատուր եղաւ նաև Մէլուս ամրոցն, և անկէ յարձակելով առին կործանեցին Կատապալն, ուր Տիվրիկի աւերմանէն ետև գնացեր ամրացեր էին Պաւղիկեաններէն։

Այս յաջողութիւններէն ետև, կայսրն անձամբ իր Կոստանդին որդւոյն հետ եկաւ Կեսարիա Կապադովկիոյ, և հրահանգելով զօրքերն առաջ քալեց, և ամէնքն ևս տեղի տուին իր դիմացն․ ոմանք բուռն զօրութեամբ ընկճեցան, և ուրիշներն անձնատուր եղան։ Անարզաբայի էմիրն Ապարտէլէ (Ապու – Թալէ), որ շրջակայ գաւառաց արհաւիրքն էր, ինքնակալին հասնելէն առաջ Մալաթիա փախաւ։ Տաւրոսի կիրճերուն մէջ բնակող Սէամ էմիրն, որ ինքնակալութեան սահմանները կ'աւերէր՝ հպատակութիւն մատուց կայսեր։ Ասպա Վասիլ մտաւ Կիլիկիա, Սար գետն անցնելով հասաւ Կոկիսոն, որուն մօտերն անտառախիտ տեղեր համախմբեր էին Արաբներն։ Ինքնակալը կտրելով կամ այրելով այն անտառները, վանեց զանոնք Կալլի և Բատասիոն, և ճանապարհին դժուարութեան համար վատասրտած զօրքերն անձին օրինակաւ քաջալերեց։ Գերմանիկի քովերն եղած Արաբացի գնդերը հալածեց՝ Բարատիզ (արքայութիւն) կոչուած գետն անցնելով։ Բայց Գերմանիկ քաղաքին սաստիկ ամրութիւնը տեսնելով, թողուց զանիկա և Ամանոս լեռներն անցնելով եկաւ Ատանա, և անոր չորս դին եղած տեղերն աւերեց, իսկ քաղաքն, որովհետև շատ լաւ ամրացած էր, թողուց զանիկա, և ճամբան Կէառն փոքր քաղաքն առնելով՝ դարձաւ Կեսարիա և անկէց Կ․ Պոլիս։

Երկայն տևեցին այս պատերազմները երկու կողմէն․ գարունը միաբանեցան Թարսոսի և Մալաթիոյ էմիրներն իրարու հետ, և կրակով և թուրով առաջ մղեցին իրենց արշաւանքը մինչև Բիւթանիա և Եւ-

լէնպոնտոս, որուն կուսակալն էր Անդրէաս պատրիկ ազգաւ Սկիւթացի։ Ասիկա առաջ քալեց մինչև Թարսիսի սահմաններն և Պոտանտ գետին քով մեծ ճակատ մը խմբեցաւ։ Արաբները բազմաթիւ էին, բայց քրիստոնէից արիութիւնն և ապաւինութիւնը յԱստուած և ի Ս. Աստուածածինը՝ յաղթող ըրաւ զիրենք։ Այս ճակատուն մէջ լմիրն սպաննուեցաւ և բանակին մեծ մասը ջարդուեցաւ, հազիւ վերջապահները պատսպարուեցան Թարսիս։ Այսու ամենայնիւ Անդրէաս պատրիկ չի համարձակեցաւ քաղաքին վրայ յարձակիլ։ Եւ այս պատճառաւ նախանձաբեկ Յոյները աղարտեցին իր անունն, և Սոփիլոն սպարապետ կարգուելով ղրկուեցաւ, որ իր յանդգնութեամբը խորտակուեցաւ և առաջին եղաւ փախչելու, թողլով բանակը թշնամեաց սրոյն դիմացն. և կորոյս Անդրէաս քաջ զօրավարին ստացած այնչափ արդիւնքները։

Մեղրիկ կամ Մեկի հայ իշխանը

Այս ժամանակները Բագրատունեաց Աշոտ իշխանին ձեռքով կանգնուած էր Հայոց թագաւորութիւնն, որ թէև Արաբացւոց գերիշխանութեան ներքև էր, բայց և այնպէս Վասիլ ինքնակալին հետ ևս բարեկամութեամբ կը վարուէր։ Եւ ինչպէս կը գրէ Հ. Միքայէլ Վ. Չամչեան (Հտ. Բ. էջ. 706) «Աշոտ արքայ Հայոց յամին 888, ի զնին ելեալ աշխարհաց, ի կողմանս փոքուն Հայոց գնաց, առեալ ընդ իւր և զՄեղրիկ իշխան զօրաւոր և գունդ մի զօրաց՝ եկն ի Սեբաստիա և ի տեսութիւն կայսերն Լէոնի որդւոյ Վասլի չոքաւ ի Կ. Պօլիս. ուր մեծաւ պատուով ընկալեալ եղև. որդի սիրելի անուանէր զնա ինքնակալն։ Աշոտ յետ սակաւուց դարձ արար ի Կ. Պօլսէ. իսկ զՄեղրիկ մասամբ զօրացն Հայոց եթող անդ, զի Լէոն պատերազմէր ընդդէմ Բուլղարաց։ Բանակն Յունաց խորտակեցաւ և բազումք ի նոցանէ անկան, Մեղրիկ զերծեալ գնաց ի փոքր Հայս»։

Կան որ Մեղրիկը կը համարին ծառայ պահնորդաց հրամանատարի Ակուրինէսի, որ հայ էր ազգաւ և վիթխարի հասակաւ և հռչակուած էր իր մեծամեծ քաջութեանց համար և ընկաւ մեռաւ Բուլգարաց պատերազմին մէջ։

Ուրիշները կ'ըսեն թէ Աշոտ անունով բարձր դիրքէ հայազգի մը, հսկայական հասակով, և երկու ձեռքէ յաջողակ Կ. Պոլիս եկած էր իբրև բարեկամ կամ ապաստանարան գտնելու իրեն՝ Լէոն ինքնակալը։ Ասիկա Բուլգարաց պատերազմին գնաց և հոն անյայտ եղաւ։ Այն երևելի Հայը բարեկամ մ'ունէր, որ կը կոչուէր Մելիաս, և ողջ առողջ զերծաւ ճակատէն, և որովհետև ինքը բաղդախնդիր հայ մըն էր, ժողվեց խումբ մը հայ քաջերու, գնաց Լիկանդոն և այլն։ Տե՛ս թէ ո՞րչափ տարբերութիւն կայ Հ. Չամչեանին և ասոնց գրածներուն մէջ, այս նիւթին վրայ։

Մեղրիկ կամ Մէլիաս աներկիւղ և հոյակապ անձ մ'ըլլալով փոքր Հայքէն գումարեց կազմեց փոքր հայ խումբ մը, հրահանգեց. և անոնց հետ մէկտեղ եկաւ Լիւկանդիա գաւառն, ուր բարեբեր և արգաւանդ երկրի մէջ նորէն կանգնեց Լիւկանդ քաղաքն և անոր ներքնաբերդը, կամ ինչպէս կը գրէ Հ. Միքայէլ, Աշոտի դղեակը կամ աւանը, յանուն Աշոտ Ա. Բագրատունի Թագաւորի Տէրէնտէյի մօտերը, Ջահան գաւառի սահմաններուն վրայ, և անկէց կը նեղէր Արաբները, և քիչ ժամանակի մէջ Հայոց աշխարհէն եկած յաղթականներով բազմամարդացաւ երկիրն և բարգաւաճեցաւ։ Երբոր ինքնակալն Լէոն լսեց եղածը, գաւառը Թեմ Լիկանդիոյ անուանեց, և Մեղրիկը Թեմակալ կամ գաւառապետ. որ իր հայկական գնդովը շատ դէպքերու մէջ ձեռնտու եղաւ Յունաց պատերազմներու մէջ, և անցաւ գլխաւոր զօրավարաց կարգը։ Լիւկանդիան կը դնեն այն երկրին տեղն, որ Ամանոսի և Եփրատայ մէջը կ'իյնար, բայց ստոյգ է որ ասիկա յետ ժամանակաց եղաւ. յառաջ յաւէտ նոյն երկրին հիւսիսային մասն էր, Մելաս (Բարասու) գետին վերին հովիտներն, ուր կը գտնուէր նաև Աշոտի դղեակն, որ մինչև հիմա նոյն անունը կը պահէ։ Կը վկայեն ժամանակին հեղինակները, թէ երկիրը շատ բարեբեր էր, և զարմանալի կերպով առատ արօտներ ունէր, բազ-

մաթիւ էին խաշինք և մանաւանդ ոչխարներու հօտից բազմութիւնն և այլ և այլ տեսակները, սպիտակ, կարմիր, կանաչ, դեղին, սեւ գոյնըզգոյն, և նոյն իսկ ոսկեգոյն, որ կը յիշեցնէ Յունաց ոսկեգեղման այն երևելի առածն. և այլն:

Այն ատեն երեք ընտիր զօրավարներ կային կայսերական բանակին մէջ. Անդրէաս պատրիկ, Նիկեփոր փոկաս և Լէոն կաթակալ՝ որոնք մէկմէկու յաջորդեցին, Լէոն Իմաստասէրի ինքնակալութեան ժամանակ: Սակայն Արաբները շատ զօրացեր էին նոյն միջոցին: Թարսիսի Էմիրն Թագամ՝ արշաւեց Կապադովկիա, առաւ շատ ամրոցներ, որոնց հետ նաև Կորոնէ մեծ բերդը: Դէմ դնելու բաւական չըլլալով կայսրը, դրամի զօրութեամբ ձեռք բերաւ զինադադարն, և առանց փրկանաց ետ դարձուց 2054 գերի, Արաբներն ևս նոյնչափ դարձուցին իրենց քով եղած յոյն գերիներէն:

Լալական զօրավարն դիմեց Հայոց սահմաններն, և անոր յաջորդն եկաւ Բասէն Երասխ գետին աղբերակներն. առաւ Թէոդոսուպօլիս (Հասան Գալէ) Արզրումի մօտը. Բասէնն աւերեց, և Արաբները տկարացուց: Եւ այս յաջողութիւնն և Եփրատին արևելեան կողմն եղած գաւառին (Մալաթիոյ դիմացի հարաւակողմն) ստացումը, զոր երեք հայ եղբարք՝ նոյն երկրին տէրերը՝ տուին կայսեր և անուանեցաւ Թեմ Միջագետաց, կերպով մը համարեցան Յոյնք սփոփանք մը, հակառակ այնչափ անյաջողութեանց, զոր կրեցին իրենք Լէոնի կայսրութեան օրերը:

Յովհան Գուրգէն և Յովհան Չմշկիկ, և Յոյն ինքնակալութեան դէպ արևելք զօրաւոր ծաւալումը

Մինչև Վասիլ ինքնակալին մահը յաջողութիւնը զինքը չթողուց, անանկ որ յարձակողականի ևս ձեռք զարկաւ. Պաւղիկեան Մնացորդներուն հետամուտ էր Կիլիկիոյ մէջ. աւերեց Կաստապալը, գրաւեց Տարսոնի մօտ Լուլէ բերդը, Պատանդ գետին քով մեծ յաղթութիւն մը ձեռք

բերաւ։ Խալիֆէն նոր բանակ մը ղրկեց որ և իսպառ խորտակեցաւ․ վերջապէս Արաբք չհամարձակեցան այլ ևս յառաջ խաղալ։

Բայց Վասիլ յաջորդը Լեոն Իմաստասէր չունեցաւ հօրը յաջողութիւնները․ Արաբք յառաջ քալեցին Կապադովկիոյ սահմաններն ապստամբութեամբ, առին Կիլիկիոյ մէջ Սելևկիա Տրաքեան, և ուրիշ տեղեր։ Կային մեծանուն զօրավարներ և իշխաններ, բայց պատերազմական գործերը միշտ ձախորդ էին։ Յամի 915 զինադադար մը դաշնադրուած էր Կոստանդին և Ռոմանոս ինքնակալաց ժամանակ, որ չեղաւ տևական և շուտ լուծաւ։

Այս ժամանակները մեծապէս հռչակուեցաւ Յովհան Գուրգէն, հայ ազգաւ, զոր Յոյնք Կուրկուաս կ'անուանէին․ իշխանազուն էր որդի Գուրգէն զօրավարի։ Ծնաւ փոքր Հայք և Կ. Պոլիս երթալով անուանեցաւ նախ զօրավար պահնորդ գնդին և ապա սպարապետ Արևելից։ Յոյնք կը հաւասարեն զինքը Բելիսարայ և Ներսէս պատրիկի, և անոնցմէ վեր ևս կը դասեն։

Յովհան Գուրգէն 920ին Արևելեան զօրավար անուանուած ըլլալով կը գտնուէր Կեսարիա Կապադովկիոյ մէջ և չորս տարիէ ի վեր կայսրութեան սահմանը մինչև Եփրատ գետը և ասորւոց սահմանը առաջ տարեր էր արաբացւոց ապստամբութիւնը վանելով։ Յամին 924 Վարդ Բոիլաս (Վարդան Վուզ) գաւառապետ Բարձր Հայոց, Սպերոյ՝ Ադրիանոս և Բաբերդցի Տաճատ հայ իշխանաց հետ միաբանելով ապստամբեցաւ․ Յովհան Գուրգէն հասաւ արիաբար և ձերբակալ ըրաւ Ադրիանոսը գաւառին մեծամեծներովը։ Տաճատ ամրացաւ բերդի մը մէջ, և ապահովութիւն առնելով գնաց Պոլիս և դասեցաւ կայսրութեան պահնորդաց կարգը․ իսկ Բոիլաս Ռոմանոսի պաշտպանութեամբ վանական զգեստ հագնելով վանք մ'առանձնացաւ։

Մալաթիոյ Արաբները Լեոնի կայսրութեան ատեն Կ. Պոլիս պատգամաւոր ղրկելով՝ խնդրած էին գերեաց փոխանակութիւն ընել։ Պատուով ընդունուեցան և հաշտութիւն հաստատուեցաւ մէջերնին։ Ետքէն 915ին սահմանուեցաւ դադար զինուց․ այլ ճշդիւ չպահուեցաւ։ Բայց

վարդ Բոլլասայ ապստամբութեան առեն համարձակեցան Մալաթիոյ Արաբները, իրենց ասպատակութեան սկսիլ. Յովհան Գուրգէն արեւելքի քաջ ճարտար և անաշխատ սպարապետն ելաւ անոնց դէմ անդիմադրելի, և ամէն ճակատու մէջ յաղթող հանդիսացաւ. կրակով և սրով քալեց մինչև Եփրատայ ափունքը, կ'ապականէր անդաստանները, կը քանդէր կ'եղծանէր քաղաքները և գիւղերը. կը ջարդէր կամ գերի կը բռնէր մարդիկը, կանայքը և մանկտին, և բոլոր այն երկիրն աւեր և ապականութիւն դարձնելէն ետև, եկաւ պաշարեց Մալաթիա մայրաքաղաքն՝ արաբաց հզօրագոյն բերդը: Բաղաքին վրայ ի գործ դրած ռուսկալի հարուածները, շուտով հասուցին զայն ծայրագոյն տագնապի և տարակուսանաց, և հարկեցան անձնատուր ըլլալ ու դաշինք դնել: Ապուքապա և Ապուսալաթ Էմիրներն և առաջաւոր իշխանք դիմեցին անձապարանօք երթալ իյնալ յաղթողին ոտքն և անոր հրամանով Պօլիս անցան աղերսել ինքնակալին գթութիւնը, որ տուաւ իրենց հաշտութեան պայմաններն, որ է բաժնուիլ Ամիրապետին իշխանութենէն և ծառայել կայսրութեան պատերազմելով նաև Արաբաց դէմ:

Հաւատարմութեամբ պահեցին Մալաթիացիք իրենց խօսքը քանի որ երկու Էմիրները կենդանի էին, և ամէն պատերազմաց մէջ օգնեցին Յովհան Գուրգէնի. իսկ Էմիրներուն մահուանէն ետև յամին 934, *խորտակեցին Յունաց լուծն, և ձեռք զարկին դարձեալ իրենց ասպատակութեանց: Այն առեն սպարապետն արևելից Յ. Գուրգէն, օգնականութեամբ Լիւկանդիոյ Մեղրիկ (Մելիաս) նախարարի, պաշարեց Մալաթիան, առաւ և կործանեց զայն. նոյնպէս խստութեամբ վարուեցաւ միւս քաղաքաց հետ. և փոքր Հայք ամբողջ գաւառ եղաւ Յունաց կայսրութեան: Եւ այս պտղաբեր և արգասաւոր երկիրը (Մալաթիոյ կողմերը) միանալով Լիւկանդիոյ նախարարութեան հետ, նոր աղբիւր մ'էր կայսերական գանձուն: Գուրգէն արշաւեց ապա Մեծ Հայք մինչև Վանայ ծովակն, և այնտեղ այլազգեաց ձեռքն եղող Խլաթ քաղաքն առաւ: Իր եղբայրը Թէոփիլոս Գուրգէն պատրիկ և դուքս էր Խաղտեաց Թեմին, որոյ օժանդակութեամբ Յովհան Գուրգէն ամէն պատերազմներու*

մէջ քաջ և յաղթող հանդիսացաւ։ Արևելքի մէջ կայսրութեան սահմանը մինչև Ալիս գետ ամփոփուած էր, ինքն ընդարձակեց մինչև Եփրատ և աւելի առաջ մինչև Տիգրիս և Վանայ ծովակը։ Նուաճեց միջագետաց շատ մը քաղաքներն որոնք ինկած էին Արաբացւոց իշխանութեան ներքև։

Յամին 941 Ռուսներն արշաւեցին կայսրութեան արևմտեան գաւառներն. Յովհան Գուրգէն լսածին պէս Տիգրիսի ափունքներէն դիմեց Իստրուի (Դանուբ) եզերքներն արագութեամբ, և ժամանակին վրայ հասնելով խորտակեց թշնամին, և հալածեց զիրենք կայսրութեան սահմաններէն և նորէն դարձաւ իր տեղը։

Բայց նախանձաբեկ Յոյնք արգելք եղան իրեն աւելի ևս յորդելու կայսրութեան մեծութիւնն և փառքը։ Ռոմանոս Լէկաբէն քննութիւն ընելով իմացաւ անոր անմեղութիւնը. սակայն զրպարտութիւնները շատնալով վերջապէս յամին 943, պաշտօնանկ եղաւ քաջակորով և հաւատարիմ զօրավարը, այն ատեն՝ երբ նա արիւնալից ճակատամարտի մէջ խորտակելով Արաբաց զօրութիւնն առեր էր Արծանը, Դարան և Թաւլայն։ Եւ այս եղաւ հատուցումն քսան և երեքամեայ ծառայութեանց, զոր հատուցին իրեն Յոյնք։ Իր տեղը զօրավար եղաւ Արևելից՝ Պանտերիոս։ Նաև իր եղբայրը արին Թէոփիլ Գուրգէն իշխանութենէ վար ձգուեցաւ Թէոդոսուպոլիսն և անոր շրջակայ ամրոցներն առնելէն, և Միջագետաց մէջ շատ քաջութիւններ ընելէն ետև։ Թէոփիլի թոռն է Յովհաննէս Չմշկիկ։ Իսկ Յովհան Գուրգէնի որդին էր Ռոմանոս քաջ զինուորականն որ Նիկեփոր Փոկասի ժամանակ պայծառացաւ։

Յամին 944 (դեկտ.) ինկաւ կայսրութենէն Ռոմանոս Լէկաբէն և Կոստանդին Պորփիւրոժէն բոլոր կայսրութիւնն իր վրայ ամփոփելով, Արևելից զօրավար կարգեց Լէոն Փոկասն. այս ատեն Արաբները դիմեցին կայսրութեան սահմանն. յունական բանակ մը (թերևս Լէոն Փոկասի առաջնորդութեամբ) վանեց զիրենք, առաւ Մարաշն և աւերեց նաև Թողուց. Հալէպի և Տարսոնի վրայ ևս յարձակեցաւ բայց առանց արդեանց, զի եղածը պարզ արշաւանք մ՚էր։

Տասներորդ դարուն սկիզբը Համատանի Արաբ Տոհմը պետութիւն մը կանգնեց Միջագետաց և Տիարպէքիրի կողմերը, և իր իշխանութեան ներքև էին Մուսուլ և Ռաքքա քաղաքները, ետքէն նաև Հալէպ։ Այս Պետութեան իշխանաց մէջ Սէյֆէլ–Տոլէ Ալի Պին Հէմտան մեծ հակառակութիւն ունեցաւ յունական կայսրութեան դէմ. սա ընդհանրապէս կը կոչուի Քափտան, կը տիրէր նաև Եմեսայի։ Երկու ամիս կայսրութեան մերձակայ երկիրներն ապատակելէն և աւարելէն ետև, հասաւ Կապադովկիա ուր խմբեցաւ մեծ ճակատ մը, յորում երեսուն հազար Յոյնք ինկան և երկու հազար գերի վարեցան, բայց քանի մ'օր վերջ յոյն զօրավարը վրէժն հանեց, և գրաւեց Ամանոսի մէջ Կիկերոնեան կիրճն. երկու տարի վերջ Հալէպի և Տարսոնի էմիրներն պատերազմի ելան, և բոլոր Կապադովկեան եղծին խանգարեցին։ Վարդ Փոկաս վրանին գնաց, բայց առջի ճակատուն պարտեցաւ և հազիւ ազատեցաւ գերութենէ, իր թիկնապահներուն արութեամբը։

Վարդ Փոկաս շատ ծերացած ըլլալով, իրեն յաջորդ դրուեցաւ որդին Նիկեփոր Փոկաս, և երկրորդ որդին Լէոն՝ կուսակալ Կապադովկիոյ, և երրորդ որդին Կոստանդին՝ նախարար Սելևկիայ՝ Կիլիկիոյ մէջ, և տեղակալ միւս երկու եղբարց։

Սէյֆէլ–Տոլէ (Քարտան) Հալէպի իշխանը կազմեց երկու բանակ, մէկն յանձնեց իր ազգական Ապոլասարի որ Լէոնէն յաղթուեցաւ և գերի ինալով Կ. Պոլիս ղրկուեցաւ ուրիշ գերիներու հետ, բայց Նիկեփոր դէպ ուղիղ Սէյֆէլ–Տոլէյի բանակին վրայ քալելով մեծ ճակատ մը կորոյս, և եղբայրը Կոստանդին Փոկաս գերի ինկաւ, և չտաճկնալուն համար Հալէպի մէջ սպաննուեցաւ. կայսրն ևս զայրանալով՝ Սէյֆէլ–Տոլէյի ազգականները սպաննել տուաւ ի Կ. Պոլիս և դեսպան յղեց Հալէպ՝ զոր էմիրն անարգանօք իր առջևէն վռնտեց։

Արևելից սպարապետն Նիկեփոր զեմեւլիկ առաջին պարտութեամբն ըմբռնեց լաւ իր զօրաց տկար կողմն, որով ահաբեկեալ էր Սէյֆէլ–Տոլէյի զօրութենէն, որ նոյն ժամանակ կայսրութեան ահաւոր թշնամին էր։ Զօրքն պէտք եղած կերպով հրահանգելէն և սրտապնդելէն ետև

տապարէզ ելաւ։ Սէյֆէլ–Տուլէ՝ Հալէպի, Պարաման՝ Տարսոնի և Իգէմ՝ Տրիպոլսի էմիրները շատ մը տեղեր պարտելով՝ կորուսին իրենց քանի մ'ամրոցներն և բազմաթիւ գերիներ։

Մի և նոյն ժամանակ Լէոն փոկաս արշաւեց Եփրատայ կողմերն, և Սամոսատայ ճակատամարտին մէջ, Յովհաննէս–Զմշկիկ, Թէոփիլ Գուրգէնի թոռը, քաջակորով հաւուն և Յովհան Գուրգէնի նման քաջ և միանգամայն փառասէր, տուաւ իր զինուորական հանճարոյն առաջին ճաշակը (954) և անկից ետև հռչակուեցաւ իր անունը կայսրութեան մէջ։

Սէյֆէլ–Տուլէ արի և անհանդարտ թշնամի մ'էր. մինչդեռ Նիկեփոր զբաղած էր Կրետէն նուաճելու, ինքն հզօր բանակով յարձակեցաւ Կապադովկիա։ Լէոն փոկաս սակաւաձեռն գնդով կը հսկէր անոր վրայ, առանց ճակատի մը ձեռնարկելու. վերջապէս երբոր հասան Գաղատիոյ Անտարաս քաղաքը, յանկարծ վրանին իյնալով ջարդ ու բուրդ ըրաւ զիրենք, և Պօլիս դառնալով կատարեց յաղթանակի հանդէս։

Կրետէն նուաճուած ըլլալով Նիկեփոր փոկաս, աճեղ բանակաւ, զոր Էլ Մաչէն երկու հարիւր հազար կը դնէ, դիմեց Ասորիք, և Եփրատայ կողմերը հասնելով՝ առաւ Տոլաք (Տոլիքա) և Մամպիճ (Յերապոլիս) քաղաքները։ Դեռ ևս մեծ աշխատութիւն կրեց մինչև որ անձնատուր եղաւ Անարզաբա ինչ ինչ պայմաններով. կը մնար Հալէպը։ Սէյֆէլ–Տուլէ իր բանակը երկուքի բաժնեց. Նաճային զրկեց մէկ մասովն որ լերանց անցքերը բռնէ. իսկ ինքը միւս մասովը կեցաւ Հալէպի առջև։ Նիկեփոր առանց երևնալու Նաճայի, պտոյտ մ'ընելով հասաւ Սէյֆէլ–Տուլէյի վրայ, և ջախջախեց անոր բանակը, առաւ քաղքէն դուրս գտնուած պալատն, ուր գտաւ մեծ աւար, ձեռք անցուց նաև Հալէպն և պաշարեց միջնաբերդը որ շատ ամուր էր. բայց լսելով որ Դամասկոսի Ալի էմիրը միաբանելով Նաճայի հետ վրան կու գայ, յետս նահանջեց։

Երբոր Ռոմանոս Բ. մեռաւ, իր որդին Վասիլ՝ հինգ տարեկան էր և Կոստանդին՝ երկու։ Կառավարութիւնն անցած էր Թէոփանէ թագուհւոյն և Բրինկաս պաշտօնէին ձեռքը. այս պաշտօնեայն կ'ուզէր մէջ տեղէն վերցնել Նիկեփոր փոկասը. սակայն հայազգի զօրավարք Ռո-

մանոս Գուրգէն որդի Յովհաննու Գուրգէնի և իր ազգականը Յովհան Զմշկիկ բանակին ընտրելագոյն հրամանատարներն, ընտրեցին և կարգեցին իրենց Նիկեփոր սպարապետը կայսր (յամին 963) որ Յովհան Զմշկիկն դեմեսլիկ, այսինքն Արեւելից սպարապետ կարգելով՝ գնաց Կ. Պօլիս. հայրը Վարդ Փոկաս՝ կեսար և եղբայրը Լէոն կիւրոպաղատ անուանեց. պսակեցաւ Թէոփանէի հետ և սկսաւ կառավարել պետութիւնը։

Զմշկիկ Կիլիկիոյ մէջ լաւ յաջողութիւն ձեռք բերաւ, Ադանէսի քով զարնուեցաւ Թշնամեաց աՀեղ բանակին հետ, խորտակեց զանոնք. հինգ հազար հեծեալք ձիերնին Թողլով անմատոյց բլրոյ մը վրայ ամրացան։ Յովհան Զմշկիկ զօրաց գլուխն անցած վրանին յարձակեցաւ, և անոնք յամառելով՝ բոլոր ջարդուեցան և տեղն անուանեցաւ բլուր արեան. այս մեծ յաղթութեամբ արևելից սպարապետին անունը շատ մեծցաւ։

Այն ատեն Նիկեփոր ուզեց իր զօրավարէն վար չմնալ, ուստի նոր զօրք ժողվելով և Հայաստանէն և Վրաստանէն եկած զօրքերով հզօր բանակ մը կազմելով դիմեց Կիլիկիա, առաւ Ադանա և Անարզաբա քաղաքները, հասաւ Ամանոս լեռներն և աւերեց Ասորիքի սահմանին վրայ մինչև Բօփօ խոսի ծոցին շուրջն եղած երկիրները, դարձաւ Կապադովկիա, և յաջորդ տարին նորէն Կիլիկիա գալով ինքն և զօրավարները պաշարեցին և առին Մասիոն (Մոպսուեստիա) և Տարսոն քաղաքները, եւքէն Ասորիք մտաւ առաւ Անտիոք և ուրիշ շատ մը քաղաքներ։ Երրորդ տարին անցաւ Եփրատը, Մծբինն և Ամիդը չկրցաւ առնուլ և յառաջ անցաւ մինչև Մալազկերտ Հայաստանի մէջ, բայց այս ամեն արշաւանաց հետևութիւնն եղաւ մեծ անուն մը, որ աՀաբեկեց Արաբները և նաև Պաղտատու Ամիրապետն, և ոչ այլ ինչ։

Յամին 969 սպաննուեցաւ Նիկեփոր, և ինքնակալութեան աթոռ ելաւ հայազգին Յովհան Զմշկիկ։ Նոյն ժամանակ զօրավար Արևելից կամ դեմեսլիկոս անուանեցաւ Մլեհ որ (973) արշաւեց Միջագետք, ապստակեց և աւերեց Եդեսիոյ երկիրն. առաւ Մծբինն և Տիարպէքիր (Ամիդ) քաղաքն. և մեծ կոտորած հասուց բոլոր Տիարպէքիր գաւառին, և մեծ բազմութիւն գերեաց ժողվեց, և հասան Մաֆարթքին

(Մարտիրոպոլիս)։ Բայց քաջն Ապու Թագլապ նոյն կողմերուն արաբ կուսակալը, դիմացն ելլելով անձուկ կիրճի մը մէջ զարկաւ Յունաց բանակն և Մլեհ Դեմեստիկը գերի բռնեց բանտեց, և որովհետև հիւանդ էր՝ դեղի տեղ թոյն խմցնելով սպաննեց։

Կայսեր անհանդուրժելի թուեցաւ այս աղէտքն՝ որով կորած էին նախորդ աշխարհակալութիւնք։ Գունդեր գումարեց և անձամբ յառաջ քալեց. անցաւ Եփրատն, առաւ Մծբինը, դիմեց յԱմիտ որ հպատակեցաւ, որմէ ընդունեցաւ շատ աւար, դիմեց մինչև Միկտարսիս, լցաւ լիացաւ աւարով և դարձաւ Կ. Պոլիս։ Ետքէն նոր և բազմաձեռն գնդով դարձաւ. Հայոց թագաւորն Աշոտ Գ. տասն հազար զօրք տուաւ օգնական, առաջնորդութեամբ Սմբատ Թոռնեցի Ջահանայ իշխանին։ Մտաւ Զմշկիկ Ասորիք, գրաւեց Ապամիա, Էմէսա և Պաալպէք քաղաքներն, դիմեց Դամասկոս. քաղաքին էմիրը գլխաւորաց հետ մեծամեծ նուէրներով գնաց կայսեր, նա ընդունելով բերածները վրանին հարկ դրաւ. մտաւ Լիբանան, յարձակմամբ գրաւեց Պործոյ բերդը, առաւ նաև Պալնէա, Պէրութ և այլ քաղաքներ. ետ դառնալով հասաւ Անտիոք, որոյ բնակիչք ընդհանրապէս արաբ էին, Պուրծէսը հոն թողլով որ պաշարէ զայն, աւարեց շրջակայքն և եկաւ Կիլիկիա, գնաց Կ. Պոլիս ուր հրաժարեցաւ կայսրութենէն, և Ռոմանոս Բ. կայսեր որդւոց, զորոնք գահակից ըրած էր արդէն, յանձնեց իշխանութիւնն, և ինքը վանք մ'առանձնացաւ, ուր և սպաննուեցաւ. և այս եղաւ հատուցումն հայ դիւցազին, որ իր արշաւանքով երկու հարիւր քաղաք առեր և Պաղտատի դռներն հասեր էր։

Զմշկիկ արևելքէն դառնալէն առաջ Վարդ Սկլերն, որ քաջահմուտ էր պատերազմական արուեստին, և իր ամուսնոյն եղբայրն էր, կարգեց Դեմեստիկ, այսինքն՝ զօրավար Արևելից։ Բայց իր մահուանէն ետև Վասիլ Բ. նոյն պաշտօնը տուաւ Պետրոս Փոկասու որ Լէոնի որդին էր։ Վարդ Սկլեր սպաննեց զանիկա և զօրավար Արևելից կարգեցաւ Վարդ Փոկաս։ Այս նշանաւոր արանց դէպքերը առաջիկայ գլխոյն սկիզբը պիտի գրեմ համառօտիւ։

ԳԼՈՒԽ Ե

ՓՈՔՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԱՃՈՒՄԸ ԵՒ ԱՐԾՐՈՒՆԻ ՀԱՅ ՊԵՏԱՑ ՍԵԲԱՍՏԻԱ ՓՈԽԱԴՐՈՒԻԼԸ (976-1080)

Ա. Երեք զօրավարաց պատմութիւնը եւ Հայոց հանգամանքը Սեբաստիոյ եւ գաւառին մէջ (976-1023)։ Բ. Վասպուրականի հայ պետաց Սեբաստիա փոխադրուիլը։ Գ. Յովհաննէս Սենեքերիմ եւ որդի նորա Դաւիթ Թագաւորք Սեբաստիոյ (1021-1037)։ Դ. Ատոմ Թագաւոր Սեբաստիոյ եւ Առաջին արշաւանք Սելճուք Թուրքաց (1037-1070)։ Ե. Սելճուքաց երկրորդ արշաւանքը Փոքր Հայք եւ Սեբաստիա։ Զ. Մանազկերտի ճակատամարտը։ Է. Սեբաստիոյ իշխանաց վերջին դէպքերը (1070-1080)։

Ա. — ԵՐԵՔ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՍԵԲԱՍՏԻՈՅ ԵՒ ԳԱՒԱՌԻՆ ՄԷՋ (976-1023)

Ինչպէս տեսանք, Յովհան Զմշկիկ Արեւելից զօրավար կարգեր էր ժամանակին ամենէն ընտիրն յետ հայ ինքնակալին։ Բայց Վասիլ Բ. կայսեր առաջին պաշտօնեայն չէր հանդուրժեր, ուստի համոզեց կայսրն և կարգեց Վարդ Սկլերը, դուքս Միջագետաց։ Հ. Միքայէլ կ'ըսէ՝ դուքս «միոյ մասին Միջագետաց»․ այլ ճիշդ չեն նշանակեր բուն դիրքը։ Իսկ Փուրծէան որ Վարդայ բարեկամն էր դրաւ դուքս Անտիոքայ, և Արեւելից զօրավարութիւնն յանձնեց Պետրոս Փոկասի։

Վարդ Սկլեր զայրագին թողուց Կ. Պոլիսն ու եկաւ իր բանակն, որ հնազանդեցաւ իրեն զի շատ սիրելի էր, ազատեց նաև իր Ռոմանոս որդին, և պարզեց ապստամբութեան դրօշը: Գնաց ապա Մելիտինէ և Ջահան, և յունական մասին հայ հեծելագունդն իրեն հետ միացաւ, և զօրքէն հրատարակեցաւ ինքնակալ կայսր: Տիարպէքիրի և Մաֆարթ-քինի էմիրներն իրեն զօրք և դրամ հասցուցին: Եւ ըստ Հ. Միքայէլի, միաբանեցան իրեն հետ Տարօնոյ Աշոտ իշխանին որդիքը, Գրիգոր և Բագարատ և եղբայրը Ռոմանոս. նաև Ափրանիկ Մոկացի և ուրիշ շատ երևելի անձինք որոնք դժգոհութիւն մ'ունէին մտան իրեն դրօշին ներքև: Միջագետաց մէջ պատրաստեց իր զինուց քաղաքն հզօր ամրութեամբ. և երեք աւուր մէջ հասաւ Լիւկանդիա (Աշոտի, Մալաթիա և այլն) Կապադովկիոյ սահմանը:

Պետրոս Փոկաս ևս Կապադովկիա գումարած էր բոլոր հաւատարիմ մնացած զօրքերն. առջի ճակատը վաստկեցաւ Սկլեր, և անմիջապէս իր կողմն անցաւ Անտիոքայ դուքս Պուրծէս, իր հին բարեկամը: Անտիոքայ մէջ գտաւ անբաւ մեծութիւն, ուր կուսակալ դրաւ Ապտուլլահ Մունթասիր արաբն, որոյ վրայ մեծ վստահութիւն ունէր, ետքէն հասաւ Ծամնդաւ, որ մերկ ապառաժի վրայ շինուած քաղաք մ'էր, և անմիջապէս անձնատուր եղաւ, և Անդրոնիկոս Դուկաս և իր երկու որդիքը անցան Սկլերի կողմը: Ղրկեց Միքայէլ Բուրդիկ իշխանն, որ պատերազմի Կիպրացւոց և Ատալիայի ապստամբաց հետ:

Կ. Պոլիս Սկլերի յաջողութենէն զարհուրելով՝ Լէոնն անուանեցին սպարապետ, որ երբ հասաւ Կոտիկա, Փռիւգիոյ մէջ, հոն գտաւ Պետրոս Փոկասն իր բանակին մնացորդովն: Լէոն ջանք ըրաւ շահիլ թշնամւոյն բանակին գլխաւորները, բայց չյաջողեցաւ, ուստի թողուց զանոնք և ինքն յառաջ անցաւ դէպ արևելք. այս արշաւանքը վնասակար եղաւ ապստամբաց, որոնց զօրաց մեծ մասը գումարուած էր Կապադովկիայէն և Եփրատայ մօտ եղած գաւառներէն. ընչից և ընտանեաց վտանգը շատերը դասալիք ըրաւ: Այն ատեն Սկլեր ճամբեց Պուրծէսն և Տարօնցի Ռոմանոսն, որ հետամուտ ըլլան Լէոնի: Սա յանկարծ վրանին

հանելով խորտակեց զիրենք, և աններող գտնուեցաւ ամենուն, մանաւանդ Հայոց՝ որ առաջին եղան Սկլերի կողմն անցնելու:

Ապստամբ կայսրը իր բանակը կազմելով ինկաւ Լէոնի վրայ, և հայ ձիաւորներն իրենց քաջութիւնը ցուցուցին. Յովհաննէս պատրիկն և Պետրոս Փոկաս ինկան մեռան, և Լէոն գերի բռնուեցաւ. և Սկլեր զօրաց առջև հանել տուաւ Թէոդորի և Նիկետի աչքերը, որոնք իրենց երդման հակառակ Լէոնի կողմն անցեր էին: Ծովու վրայ կայսերականք յաղթող ելան, բայց Սկլեր կը մօտենար Կ. Պօլսի և պաշարեց Նիկիան, ուր ընդդիմացաւ իրեն Մանուէլ Կոմնենոս Արևելից նախարարն և ապա յանձնեց քաղաքն. և պատուով ելաւ զօրքովը, զէնքերովն և ժողովրդեան մեծագոյն մասովն:

Վերջապէս Արևելից սպարապետութիւնը յանձնուեցաւ Վարդ Փոկասայ, որ Սկլերի մեծ թշնամին էր և քաջ զօրավար: Բանակը Կեսարիա էր և ճամբան բռնուած էր Սկլերի զօրքերէն. Փոկաս գտաւ հնարքը Կ. Պօլսէն իր գնդերուն հասնելու. Սկլեր արագաշարժ ետ դարձաւ և ինկաւ կայսերական բանակին վրայ և երկու անգամ զարկաւ զանիկա, բայց Փոկաս յետս ընկրկելով ամրացաւ Կարսիանայ բերդին մէջ: Սկլեր հետամուտ էր սաստկութեամբ, և երրորդ ահեղ ճակատ մը խմբուեցաւ, ուր թէ և Փոկաս քաջութեան հրաշալիքներ գործեց, բայց ի վախճանի զօրքը տեղի տուաւ և պարտութիւնը կատարեալ եղաւ:

Այլ ևս կայսերական զօրքը բաւական չէր Սկլերի դէմ ուստի Վասիլ կայսրը խնդրեց օգնութիւն հայոց Դաւիթ մեծ իշխանէն որ Տայոց կիւրապաղատն էր, և փոխարէն՝ խոստացաւ տալ իրեն Հայաստանի յունաց բաժնէն Խաղտոյառիճ՝ Կղէսուրի հետ, Ջմարին, Կարինը, Բասենը, Սեւուկ բերդակն որ է Մարդաղի, Հարքն և Ապահունիքը: — Եւ Դաւիթ առաջնորդութեամբ Ջոջիկ իշխանին, ղրկեց մեծ բանակ մը յօգնութիւն Յունաց, ինչպէս կը պատմէ Ստեփանոս Տարօնեցի՝ Գիրք. Գ. Գլ. ԺԵ: Կայսրութեան պատմութեան մէջ կը գրուի որ Փոկաս Խաղտեաց կուսակալ եղած ժամանակէն, Դաւթի հետ բարեկամ ըլլալով, ինքնին ուղղակի անոր դիմեց: Միայն վրիպակ է կոչելը Դաւիթը Թագաւոր Վրաց, որ էր Հայ և իշխան Տայոց:

Սկլեր ևս օժանդակութիւն ստացաւ Հալէպի արաբ իշխանէն և Ալիս գետին քով սոսկալի ճակատամարտ տուին. բուռն և անյաղթելի կերպով կռուեցան երկայն ատեն. բայց ի վերջոյ Փոկասի զօրքերն տեղի տալու վրայ էին. Նա յուսահատ յարձակեցաւ թշնամեաց բանակին վրայ և հանդիպելով Սկլերի ահեղ հարուած մը տուաւ անոր որ զգայազուրկ ինկաւ. Թիկնապահք տեսան վիրաց մեծութիւնը և տարին Ալիս լուացին մինչև զգաստացաւ և ձի հեծաւ, բայց Փոկաս այն շփոթութեան մէջ՝ ժամանակ գտաւ զինքն ճողոպրելու և թշնամեաց բանակը խորտակելու։ Սկլեր ալ ուրիշ հնարք չունենալով՝ գունդ մը հեծելովք անցաւ Եփրատը գնաց Մաֆարկթքին և անկէց Պաղտատ։

Եփրատայ արևմտեան գաւառները (Լիկանդիա, Կողոնիա, Սեբաստիա և Կապադովկիա) բաւական նեղութիւններ կրեցին. բայց և ինքնակալութիւնը շատ պատաղած էր պատերազմներով։ Մի և նոյն ժամանակ Արևելից սպարապետը Վարդ Փոկաս արշաւեց մինչև Տարա զոր առաւ և աւարեց, և սակայն դարձեալ հաշտութիւն եղաւ Արաբացւոց հետ հին պայմաններու վրայ։

Իսկ Փոկաս զայրագին էր կայսեր դէմ, և կողմնակից էին իրեն Լեոն Մելիսէնի եղբայրը Թէոկնոստ և Եւստաթ Մալին, որոնք զօրաց միաբանութեամբ Վարդ Փոկասը ինքնակալ անուանեցին յամին 987, Օգոստոսի 15ին Մալինի տանը՝ Կարոխանա ամրոցն ի Կապադովկիա, և թագ դրին գլուխը։

Նոյն ժամանակ նաև Վարդ Սկլեր որ Պաղտատ ապաստանած էր յանկարծ եկաւ մտաւ կայսրութեան երկիրն. և Եփրատն անցնելով գրաւեց Մալաթիան, ուր կը հրամայէր Վասիլ պատրիկը, շահեցաւ զինքն իր կողմը և առաւ դրամը, զէնքերը, ձիերը և կազմածքները և նորէն անուանել տուաւ զինքն ինքնակալ։ Ապա խորհեցաւ համաձայնիլ Փոկասին հետ, որ յաղթութենէ եւս իրեն մաս մը հանէ։ Նա խոստացաւ տալ Անտիոքը, Փիւնիկէն, Կեղեսիւրիան, Պաղեստինը և Միջագետքը և մնացածը իրեն կը պահէր։ Այս խոստման վրայ Սկլեր գնաց Կապադովկիա. Փոկաս զինքը արգիլեց Տիրոպէա բերդին մէջ, և ինքը կայսերաց

դէմ սկսաւ պատերազմիլ, բայց ճակատումի ատեն կաթուածահար մեռաւ։ Կրկին արձակեց Սկլերն և փոկասեանք անոր քով գումարեցան. բայց նա հաշտութեան միջոցը նախատեսեր ու պատրաստեր էր իր որդին Ռոմանոսը կանխաւ առաքելով կայսերաց քով. ուստի կայսերք զինքը սիրով ընդունելով կիւրապաղատ անուանեցին։ Նոյնպէս հաշտեցան նաև հայ իշխանք, Գրիգոր, Բագարատ և Ռոմանոս, և Աբրանիկ Մոկացի։

Հիմակ խօսինք համառօտիւ Փոքր Հայոց մէջ գտնուած ազգայնոց վրայ, զի յիսուն (920–970) տարի էր որ Յունաց կայսրութիւնը դէպ ի Եփրատ և անդրագոյն ծաւալած էր. այլ և այն երկիրներն որ թեմ Լիւկանդիոյ, Կապադովկիոյ, Սեբաստիոյ, Կողոնիոյ, Հայոց և Խաղտեաց անուամբ կը նշանակուէին և գրեթէ բոլոր Փոքր Հայքն իրենց մէջ կը բովանդակէին, լեցուած էին բազմութեամբ հայոց որ ի Նորոյ կու գային Մեծ Հայաստանէն։ Մէկ կողմէն կայսերք դիւրութիւն կը մատուցանէին Հայոց այս նոր գաղթականութեան Եփրատայ արևելեան եզերքէն դէպ արևմտեանն, միւս կողմէն Մեծ Հայոց վիճակը, Բագրատունի պետութեան շփոթ և բաժանեալ ընթացքն, ի նոյն կը ստիպէին։ Հետևաբար այս գաւառները միւսանգամ հայալի ըլլալ սկսած էին, մինչդեռ Նախնի Հայոց մի մասը յունացեր էր, մի մասն այնչափ պատերազմաց մէջ ջարդուեր էր, և մի մասը տակաւին կը մնար յաւէտ հիւսիսակողմերը։ Յիշեալ նորեկները դարձեալ կը լեցնէին մեր Փոքր Հայքը բազմութեամբ։

Այս ժամանակները Վահան Կաթողիկոս հայոց (965–970), որովհետև Քաղկեդոնի Ս. Ժողովոյն ուղիղ վարդապետութեան ստոյգ կերպով տեղեկացած էր և հաճութեամբ հաւան էր, Յունաց և Վրաց հետ միաբաներ էր. երբ կաթողիկոս եղաւ Մելիտինոյ Մետրապօլտին ձեռքով, հաստատեց իր միաբանութիւնը անոնց հետ նաև թղթով, և ջանաց ուրիշներն ալ հաւանեցնել նոյն միաբանութեան (Պատմ. Հայ. Բ. Գլ. ԻԸ. էջ 840). և արդարև շատեր համաձայնեցան, նաև եպիսկոպոսունք, վարդապետք, թագաւորք և իշխանք, ինչպէս կը գրէ Լամբրոնացին իր ճառին մէջ. «զՎահանայ հայրապետին զհամաձայնութիւնն առ մեծ եկեղեցին Հռոմայ, և զնորին հետևողաց թագաւորաց և վարդապետաց,

յորոց մի էր և իմն Աստուածաշնորհ և յոգունց գերազանց, հրեշտակն ի մարմնի Գրիգոր Նարեկացի»։ Բայց Հայոց մէկ մասը գոհ չէր Վահանայ ընթացքէն, ուստի և Անւոյ մէջ գումարուած ժողովք մը կ'ուզէր մերժել զինքն, իսկ նա վասպուրական նստելով՝ ազգին մեծ մասն իր ձեռքն ունէր մինչև ցմահ։

Խաչատուր Ա. կը յաջորդէր Անւոյ մէջ Հայրապետական Աթոռ. բնականապէս սա համամիտ չէր Վահանայ (972–992)։ *Ասոր՝ կամ Վահանայ ժամանակ կը թուի ինձ որ դրուեցան Հայ եպիսկոպոսունք Եփրատայ արևմտեան կողմը. և կը յիշուին յանուանէ Սեբաստիոյ եպիսկոպոսը Սիոն և Լարիսայ՝ Յովհաննէս. որ այս առաջին անգամ կը հպատակէին հայրապետին հայոց։*

Կայսրն Վասիլ յամին 988 *հրաման ըրաւ իր իշխանութեան մէջ եղած հայոց և ժողվելով տարաւ բնակեցուց զանոնք ի Մակեդոնիա. բայց անոնք ապստամբելով Բուլգարաց կողմն անցան, և այս պատճառաւ կայսրը բարկացած էր իրենց դէմ. այս առթիւ Սեբաստիոյ յոյն մետրապոլիտն սկսաւ նեղել իր սահմանին մէջ եղած Հայերը հաւատոյ համար, ինչպէս կը պատմէ Ստեփանոս Տարօնեցի։ Հայ առաջնորդաց ճարը հատնելով թուղթ աղաչանաց գրեցին կայսեր, և խնդրեցին ազատ ըլլալ անոր ձեռքէն։ Երբոր մետրապոլիտն իմացաւ Հայոց ըրածը յամին* 989, *ինքն գրեց կայսեր և շատ մ'ամբաստանութիւններ կուտեց վրանին, ըսելով որ Եւտիքական են և թէ ուրիշներն ալ կ'ուզեն նոյն աղանդին դարձնել։ Այս պարագայով սկսաւ աւելի ևս նեղութիւն տալ անոնց, և քահանայից քանի մը հատն իբրև սերմանիչ հերետիկոսութեան երկաթի կապանքով Կ. Պոլիս ճամբեց, ուր բանտ դրուեցան, որոնցմէ ծերունին Տէր Գաբրիէլ մեռաւ կապանաց մէջ։ Իսկ Սեբաստիոյ և Լարիսայ եպիսկոպոսները Սիոն և Յովհաննէս՝ և միացեալ քահանայք ընդունեցան ըստ Ստեփանոսի Տարօնեցւոյ, Քաղկեդոնի ժողովքն և բաժնուեցան Հայոց միաբանութենէն. նոյնպէս Սեբաստիա բնակող միացեալ Հայք։ Այսու ամենայնիւ մետրապոլիտն արգելք դրաւ որ համարձակ չկատարեն իրենց պաշտամունքներն, և նոյն քաղաքին մէջ կոչնակ բնաւ չզարնեն։*

Երբոր տեսաւ մետրապոլիտն որ յաջողեցաւ շահիլ Սեբաստիոյ Հայերը, խորհուրդ ըրաւ ուրիշ մետրապոլտաց հետ, և քանի մ՚անգամ գրեց երկայն թղթեր Խաչիկ կաթողիկոսին, որ հաւանեցնէ զինքն Յունաց դաւանութեան։ Բայց Խաչիկ չուզեց պատասխանել որովհետև նախատալից էին մետրապոլտին խօսքերը. բայց քանի մը վարդապետներ գրեցին կաթողիկոսին կողմանէ, որոնք մէջ կը բերէ Ստեփանոս Տարօնեցի։

Նաև նոյն տարին (989) Մելիտինոյ Թէոդորոս մետրապոլիտը գրեց Խաչիկ կաթողիկոսին ուրիշ թուղթ մը, յորդորելով զինքը միաբանութեան։ «Եւ նա, — կ'ըսէ Հ. Միքայէլ, — յանձն արար Սամուէլի վարդապետի Կամրջաձորեցւոյ գրել նմա պատասխանի. և նա կատարեաց զպատուէր նորա. այլ թէ զինչ գրեալ իցեն երկոքին ևս ի թուղթս իւրեանց, թէպէտ ոչ է յայտ, բայց որպէս ցուցանեն հանգամանք այնր ժամանակի, չէին ինչ այնպիսի՝ որպիսի պահանջէր սէր միաբանութեան այլ յաւէտ գրգռիչ ատելութեան »։

Նոյն Ստեփանոս Տարօնացին կը պատմէ, որ երբ Դաւիթ Մեծ իշխանը մեռաւ, Վասիլ կայսրը Կիլիկիա էր. Տայոց աշխարհը գրաւելու համար, որ կտակաւ իրեն թողուած էր, եկաւ Մելիտինոյ գաւառը յամին 999 կամ 1000. Սեբաստիոյ հայ քահանայք դիմեցին իրեն և ծանուցին մետրապոլտին ըրածները. նա հրաման ըրաւ, որ համարձակ կատարեն իրենց պաշտամունքն, և զարնեն ժամահար կոչնակը։

Բ. — ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅ ՊԵՏԱՑ ՍԵԲԱՍՏԻԱ ՓՈԽԱԴՐՈՒԻԼԸ

Արծրունեաց տոհմը շատ հին է. կ'աւանդուի, որ Քրիստոսէ 700 տարի առաջ՝ Ասորեստանի Սենեքերիմ ինքնակալին Ադրամելէք և Սանասար որդիքներէն սկսած ըլլայ. որ հետզհետէ զօրանալով՝ հզօր նախարարութիւն մ'եղած էր ձեռք անցունելով գրեթէ ամբողջ Վասպուրականն, ասոնց հպատակեցան նաև Մոկաց և Անձևացեաց իշխանու-

թիւնները։ Հզօր իշխաններու յաջորդեցին թագակալ արքայք Վասպուրականի վրայ. և առաջին թագաւոր եղաւ Գագիկ եղբայր Աշոտոյ և որդի Գրիգոր Դերենկան մեծ իշխանաց Վասպուրականի

Գագիկ թագաւոր	*ԻԹ.*	908–937
Աշոտ Ա. Դերենիկ անուն որդին	*ԺԶ.*	937–953
Աբուսահլ և Համազասպ եղբայրը	*ԺԹ.*	953–972
Աշոտ Բ. Սահակ որդի Դերենկի	*ԺԴ.*	972–986
Գուրգէն Խաչիկ » »	*ԼԲ.*	972–1004
Սենեքերիմ Յովհաննէս » »	*ԾԵ.*	972–1021

վերջին երեք եղբարք մէկ տեղ սկսան թագաւորել միաբան։

Վասպուրականի թագաւորաց մէջ վեցերորդ էր Սենեքերիմ Յովհաննէս, որ երկու եղբարց մեռնելէն ետև միապետեց իր հայրենի աշխարհն այլ ևս ԺԷ. տարի. որով 1021*ին, իր թագաւորութիւնը տևած էր ԾԵ. տարի։*

Թուրք Սելճուքներն, որ Եաքսարտի (Սեհուն, Սիր–Տարիա) և Ոքսոսի (Ճիհուն, Ամու–Տարիա) գետափունքներէն տակաւ յառաջ կը խաղային, վերջապէս հասան նաև Վասպուրականի երկիրն, և սկսաւ կոտորածն և աւերմունք։ Սենեքերիմ հրաման ըրաւ իր Շապուհ սպարապետին և թագաժառանգ Դաւիթ իշխանին, որ վանեն այս նորեկ ասպատակը։ Պատերազմը սաստիկ եղաւ, և երկու կողմն ալ մեծ կորուստ ունեցան, արևմուտքէն՝ Շապուհ իր զօրքը ետ դարձուց. բայց Զագըր պէկն ալ աւելի առաջ չի քալեց։ Հայք ոտան հանելով՝ թագաւորին պատմեցին պատերազմին ելքը և թշնամեաց որպիսութիւնը։ Սենեքերիմ ինքնին երկայն խորհելէն ետև խորհուրդի կոչեց իր չորս որդիքը, Դաւիթ, Ատոմ, Աբուսահլ և կոստանդին և թոռը Վեստ, և իր ննջեցեալ Գուրգէն եղբօր որդիքը Դերենիկ, Գագիկ և Աշոտ, Վասպուրականի նախարարներն և ազատորդիքը, և ծանոյց իր միտքն որ էր Յունաց կայսեր տալ իր գաւառները և առնուլ փոխարէն փոքր Հայոց

Սեբաստիա քաղաքն, և անոր շուրջ եղած տեղերն, և հոն հանգիստ կեանք անցնել։ Եւ ամենուն հաւանութեամբ ղրկեց իր երէց որդին Դաւիթը բազմաթիւ ազատորդւոց հետ, մեծագին նուէրներով զորոնք բարձած էին երեք հարիւր ջորի և հազար տաճիկ ձի. ընկերացաւ արքայորդւոյն նաև Ռշտունեաց Եղիշէ արքեպիսկոպոսը։ Երբոր Դաւիթ Պօլիս հասաւ, մեծ ընդունելութիւն եղաւ իրեն, ի մասնաւորի կայսեր կողմանէ, որուն մատոյց իր հօրը յետկարը, որով նա Վասլի կը յանձնէր Վասպուրականի 12 բերդաքաղաքներն և 4400 գիւղեր. ըստ ոմանց նաև 70 բերդ. վանքերը, կամ անոնց մասն միայն պահեց իրեն։ Անոնց փոխարէն Վասիլ կայսրը կու տար Սենեքերիմայ Սեբաստիան և անոր գաւառը մինչև Եփրատայ մօտերը, ինչպէս կ'ըսեն, նաև Լարիսա և Աւարա քաղաքները։ Եւ Ս. Սոփիա եկեղեցւոյ մէջ կայսրն իրեն որդեգրեց Դաւիթ արքայորդին և ճամբայ դրաւ զինքը։

Այս դէպքը տարբեր կերպով կ'ընթեռնունք Յոյներն կայսրութեան պատմութեան մէջ, նախ կը դնեն Վասպուրական վերին և ստորին, և թէ ստորինն որ փոքր իշխանաց ձեռքն էր, նուաճեցաւ Նիկեփոր Փոկասու և Յովհան Զմշկիկի ժամանակ ընդ իշխանութեամբ կայսերաց. որոնք ունէին ամրոցներ նոյն երկրին մէջ բերդապահ զօրքով։ Բայց վերին մասն էր Սենեքերիմ անունով իշխանի մը ձեռքը. սա հարուածելով շրջակայ արաբ իշխանաւորներէն և դէմ դնելու շատ տկար տեսնելով ինք զինքը որոշեց իր պետութիւնը կայսրութեան թողուլ, և իր ընտանեօք Եփրատէն անդին անցնիլ։ Կայսրն անուանեց զինքը պատրիկ և կուսակալ Կապադովկիոյ և իր սեպհական կալուածոց փոխարէն տուաւ իրեն՝ Սեբաստիան և ուրիշ երկու քաղաք և շատ մը երկիրներ. և Վասիլ ղրկեց Արկիրը իբր կուսակալ Վասպուրականի, որ լաւ չկրնալով վարել իր պաշտօնը կայսրն ստիպուեցաւ յետս կոչել զինքն և տեղը ղրկեց Նիկեփոր Կոմնենոսը (Կոմինոս)։

Երբոր Դաւիթ ոստան դարձաւ, Սենեքերիմ յանձնեց ինքնակալին տասն քաղաք, եօթանասուներկու բերդ, և հազար չորս հարիւր գիւղ (ոմանք չորս հազար չորս հարիւր կ'ըսեն, և ոմանք՝ չորս հարիւրն՝

ընդարձակ և արդիւնաշատ)․ վանքերն և անոնց գիւղերն պահեց իրեն, ոմանք կ'ըսեն թէ միայն գլխաւորները պահեց, և այս աւելի հաւանական կը թուի։

Այնուհետև իր հետն առնելով որդիքն, եղբօրորդիքը, նախարարներն, երկրին ազատախումբը և ռամիկներն 14,000 հեծեալ կորիճներով և բազմութեամբ ժողովրդեան, որոնց թիւն ոմանք չորս հարիւր հազարի կը հասցնեն․ գրեթէ Վասպուրականի բնակչաց երրորդ մասը (որով բոլորը կ'ըլլայ 1,200,000)։ Իսկ ոմանք 400,000ը շատ տեսնելով, 100,000ը բաւական կը համարին։ Անշուշտ մեծ բազմութիւն եկած է Սեբաստիա նոյն ժամանակ և ետքէն, նաև Մեծ Հայաստանի ուրիշ կողմերէն։ Բայց և Վասպուրական պարպուած չէ, նոյն հեղինակաց խօսքով քիչէն 800,000 մարդ մնացած էր․ նոյնպէս իշխաններ և ազատորդիք, նաև Արծրունի արքայական տան ազգականներ ևս, որոնք աւելի երկայն ատեն մնացին իշխողք իրենց հայրենեաց, թէ և ոչ նախկին մեծութեամբ և ընդարձակութեամբ։

Սենեքերիմի փոխադրութեան ժամանակը եղած՝է հասարակ կարծեօք 1021ին․ բայց կան ըսողներ և կարծողներ ևս 1016ին և 1018ին։ Այս նորահաստատ իշխանութիւնը ունէր արքունի շուք, և հայ հեղինակները՝ թագաւոր կը կոչեն Սենեքերիմն և անոր որդիքը, բայց ժառանգական իշխանէ և յաջորդական գաւառապետէ մ'աւելի չէր Բիւզանդիոյ արքունական իշխանութեան ներքև, որոնց ազդեցութիւնը աճեցաւ Սենեքերիմի որդւոց ատեն։

Արծրունիք Վասպուրական իրենց բնիկ աշխարհին մէջ եղած ատեննին, քիչ շատ կցորդութիւն ունէին ուրիշ համազգի պետաց հետ, մանաւանդ անոնց մէջ գլխաւորին Անւոյ թագաւորին հետ, որ միւս ամենուն վրայ ունէր առաւելութիւն և ճոխութիւն մը, և նոյն պատճառաւ կը կոչուէր Շահնշահ կամ Արքայից արքայ։ Սակայն երբ Սեբաստիա փոխադրուեցան այն քաղաքական յարաբերութիւնը կերպով մը նուազեցաւ, համապատիւ պետաց և ազգին գլխոյն հետ, ըստ որում անկէ ետև կայսրութեան իշխանաց կարգը դասուած էին։ Ի վերայ

այսր ամենայնի քանի որ Մեծ Հայաստանի մէջ կանգուն կեցած էին համազգի թագաւորութիւնները, քաղաքային ակնկալութիւնները հարկ կը դնէին Յունաց վրայ և Արծրունեաց հետ դրուած դաշինքը կը պահէին ճշդիւ։ Բայց երբ Վասպուրականէ ետև յաջողեցան գրաւել նաև Անին և Կարսն և Հայաստանի գլխաւոր իշխանները ձեռք բերել, անկէ ետև չէր մնար դժուարութիւն կամ նկատմունք վերցնելու մէջտեղէն նաև այն իշխանութեան ստուերը։

Սենեքերիմի ստացած երկրին տարածութիւնը պէտք է նկատել երկու կերպով, իբր կուսակալ Կապադովկիոյ և իբր ժառանգական կալուածատէր։ Կապադովկիան կամ թեմն Կապադովկիոյ նոյն ժամանակ Կեսարիա քաղաքէն մինչև Եփրատ, հարաւէն դուրս մնալով Մելիտինէ, որ Լիկանդիոյ թեմին կը պատկանէր, և հիւսիսէն Սեբաստիան իր թեմով Կապադովկիայէն կը զատէր, այլ և այդ գաւառը մերձաւոր երկու քաղաքով (Լարիսա, և Աւարա) կը պատկանէր Սենեքերիմայ իբրև սեպհական կալուած։ Եւ այս երկու կերպով կը պատկանէր իրեն այժմու Սվազ Վիլայէթին Սվազ Սանճագը գրէթէ ամբողջ. նաև Եփրատայ աջ եզերքը եղած Արաբկիր և Ակն գաւառակները։ Բնակչաց մեծ մասը հայ էին որոնք աւելի բազմացան Վասպուրականէ եկած նոր գաղթականներով, Սեբաստիա միայն ունէր 130,000 բնակիչ և 800 եկեղեցի։ Աւելի ևս կը շատնային Հայք նորանոր գաղթականներով, որոնք կուգային Մեծ Հայաստանէն մանաւանդ Անիէն, Կարսէն և նոյն աշխարհին ուրիշ քաղաքներէ։ Այսպէս Արծրունեաց նուաղեալ արծւոյն թևոց ներքև կը խմբէին հայ ազգին ազնուագոյն մասունքն, որոնք յետոյ մեծաւ բազմութեամբ Կարսեցւոց, Վանանդացւոց, Անեցւոց և այլ կողմերէ եկող հայ ազնուական գաղթականաց հետ դէպ ի հարաւ կեդրոնանալով հիմնեցին Ռուբինեան կրկնաւոր պետութիւնը։

Անցնինք ուրեմն պատմելու Սենեքերիմի և որդւոց գործերն ի Սեբաստիա։

Գ. — ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՆԵՔԵՐԻՄ ԵՒ ՈՐԴԻ ՆՈՐԱ ԴԱՒԻԹ ԹԱԳԱՒՈՐՔ ՍԵԲԱՍՏԻՈՅ (1021–1037)

Սենեքերիմ, ինչպէս տեսանք, կը թագաւորէր Վասպուրականի մէջ 972էն ի վեր, նախ իր աւագ եղբարց հետ և անոնց մեռնելէն ետև՝ առանձին։ Երբոր նոր ստացուածոց մէջ հաստատուեցաւ ջանք ըրաւ զարդարել իր նոր մայրաքաղաքը, կառոյց գեղեցիկ ապարանք մը, և շատ ուրիշ շէնքեր։

Բայց այս գործոց սկզբնաւորութեան ժամանակ ծանր դէպք մը բաւական խռովեց ծերունի թագաւորը։ Յամին 1022 Վասիլ կայսրը արշաւանք մ'ընելով դէպ ի Վրաստան՝ եկաւ խաղաղեց և Տայոց կողմերն. որովհետև հիւսիսային Վրաց թագաւոր և Ափխազաց իշխանը Գորգի՝ կայսրութեան հետ դրած դաշինքն աւրելով մերձակայ գաւառներն ասպատակութիւն կ'ընէր։ Կայսրը Բասէն հասած էր այլ իր հետը չէր բերած Նիկեփոր–Փոկաս, Վարդ–Փոկասին որդին և Նիկեփոր–Քսիփիաս քաջ զինուորականներն, որոնք մնացած ըլլալով Կ. Պոլիս, շատ տժգոհ էին, ուստի Կապադովկիա եկան, զօրք ժողվեցին և յայտնապէս ապստամբեցան։ Անշուշտ կայսերական բանակը մեծ դժուարութեան մէջ կը գտնուէր, երկու կողմէ թշնամեաց մէջ ինկած ըլլալով։ Սմբատ սպարապետ կը պատմէ որ Նիկեփոր–Փոկաս օգնութիւն խնդրեց Վրաց Գորգի և Հայոց Յովհաննէս և Աշոտ թագաւորներէն։ Իսկ Սենեքերիմի որդին Դաւիթ վախէն հայ զօրքով գնաց ապստամբին քով։ Վասիլ շատ խռովեցաւ և գրեց Դաւթի, որ հնարք մը գտնէ և սպաննէ թշնամին։ Նիկեփոր–Փոկաս զոր ինքը ծռվիզ կ'անուանէ, շատ կը սիրէր Դաւիթը մինչև խոստացաւ զինքը հայոց թագաւոր դնել։ Բայց Դաւիթ չուզեց նենգել Վասիլի հետ կռուած դաշանց. ուստի օր մը Դաւթի գրգռութեամբ սպաննեցին Նիկեփորը։ Լսեց Վասիլ և ուրախացաւ և «տայ օժիտ Դաւթի զԿեսարիա, զԾամնդաւ, և զԽաւատանէք հանդերձ սահմանօքն իւրեանց»։

Հայր Միքայէլ Փոկասու ապստամբութեան գործակից կը դնէ նաև Սենեքերիմ թագաւորն, և կ'ըսէ թէ քրիստոնէից մէջ ըլլալիք խռովութիւնը վերցնելու, և Սեբաստիոյ կրելիք վնասին առջևն առնելու համար իր որդւոյն Դաւթի ձեռքով մեռցնել տուաւ Փոկաս ծավիզն, և գլուխը ճամբեց Վասլի, որ խաւատանէքը Դաւթի պարգևեց: Սենեքերիմ այս ծանր չփոթութենէն ազատելով ձեռք զարկաւ շինել եկեղեցիներ և վանքեր Սեբաստիա քաղաքին և անոր բոլոր սահմաններուն մէջ: Եւ անոնց նշանաւորն էր Ս. Նշանի վանքն, այսինքն Վարագայ խաչին, զոր իրեն հետ բերած էր Սենեքերիմ թագաւորն, և զետեղեց զայն նոյն վանքին մէջ որ եղաւ աթոռանիստ քաղաքին եպիսկոպոսաց: Կ'ըսուի նաև թէ Ալիսի վրայ ձգուած մեծ կամուրջն որ կ'անուանուի Ծուռ, շինուած է թագաւորին Շուշանիկ դստերէն՝ թէև հիմա Քուֆի գրերով նշանակուած է: Նորեկ իշխաններէն ոմանք շինեցին քաղաքներ, և ուրիշ շէնքեր, ինչպէս նաև Ակն և Արաբկեր քաղաքներն, որոնց շինութիւնը կ'ընծայեն նոյն իսկ Սենեքերիմին: Թող նաև աւաններու, գիւղերու և ագարակներու բազմութիւնը, զորոնք կանգնեցին, նորոգեցին և զարդարեցին թագաւորն և իր իշխանները, որոնց մէջ յիշատակութեան արժանի է Բագրատունիք, կամ Բզնիք (Բոզնիկ), որ Օսմանեան արձանագրութեանց մէջ կը նշանակուի Ֆագրատուն, Խորխոռունիք (Խորխոռ), Իշխանի, Պետրոսի, Մաշկերտ, Վարդենիք, Կամրկապ, Բագրատ, Տանձիկ, և այլն, և այլն:

Սենեքերիմի հետ եկած էին նաև շատ կրօնաւորներ որոնց հետ և Նարեկայ վանուց միաբաններէն. ասոնք իրենց հետ բերին Ս. Գրիգոր Նարեկացւոյ մարմինը և Ակնայ մօտ վանք մը շինելով՝ հոն հանգուցին զայն, և վանքն անուանեցաւ Նարեկ:

Երբոր այսպէս սկսաւ կարգաւորուիլ Արծրունի իշխանութիւնը Սեբաստիոյ մէջ, Հայոց կաթողիկոսը Պետրոս եկաւ բնակեցաւ հոն ժամանակ մը կենալու դիտմամբ:

Այս ժամանակ Բագրատունեաց պետութիւնը ձախորդ պայմանի մէջ կը գտնուէր. այն նիզակակցութիւնն որ կազմուեր էր Վասիլ ինք-

նակալին դէմ, որոյ գլուխ էր Նիկեփոր–Փոկաս, լուծուած էր Սեբաստիոյ Թագաժառանգ Դաւիթ իշխանին Վասլի կողմն անցնելով ու բանակալ կայսեր Փոկասն սպաննել տալովը։ Վասիլ կայսրը ուրիշ յաջողութիւն մ'ևս ձեռք բերած էր, Հայաստանի մէկ մասը թէ և կայսրութեան ձեռքն էր, բայց միւս մասին Արաբք կը տիրէին որոնք հզօր ամրոց մը կանգնած էին յանուն Խալիֆին, որ Վրաստան յարձակելու ճամբուն վրայ կ'իյնար։ Հայ տիկին մը քննելով բերդին և պահապանաց համազամանքը՝ գրաւեց նոյնը հայ զօրքերով, կայսրը վարձատրեց և իրեն յանձնեց զայն։ Գուրգի Վրաց Թագաւորն Պալակացի ծովակին քով տուած որոշիչ ճակատին մէջ բոլորովին յաղթուելով՝ գնաց ամրացաւ իր բերդերը. Յովհաննէս Սմբատ, որ անխորհրդաբար մտած էր նոյն նիզակակցութեան մէջ, հիմակ մինակ կը մնար յաղթող կայսեր հզօր բանակին առջև, որ առ ժամն խաղտեաց երկիրը կը գանուէր։ Հայ Թագաւորը զարհուրելով դիմեց Պետրոս կաթողիկոսին, և զինքը դեսպան ճամբեց առ Վասիլ, գրելով յետկար որով կը յանձնէր զինքն և իր երկիրը կայսեր, պայմանաւ որ իր կենդանութեան վայելէ զանոնք ապահով կայսերէն և ուրիշ հակառակորդներէն։ Վասիլ այս առաջարկութենէն այնչափ գոհ եղաւ, որ նաև յանձական Մեծ Հայոց մասը թողուց անոր, պայմանաւ որ մա՛ուանէն ետև ամենքն ալ դառնան կայսրութեան։ Եւ իր քով պահեց կաթողիկոսն որ Յայտնութեան տօնին կատարեց Ջրօրհնեաց հանդէսն և հանդիպած հրաշից համար Պետրոս գետադարձ անուանեցաւ և մեծապէս պատուելով դարձաւ 1023*ին ի Սեբաստիա ուր մնաց Ս. Նշանի մէջ հայրապետական ճոխութեամբ երկու տարի, Սենեքերիմայ քով։*

Ապա նորէն գնաց Անի և տարի մը վերջ Սենեքերիմի հիւանդութիւնը լսելով դարձաւ եկաւ Սեբաստիա, 1026*ին ըստ Ջամչեան Հօր, և կամ ըստ պատմութեան Սեբաստիոյ՝* 1027*ին, յորում կը դրուի Սենեքերիմ արքային կենաց վերջն։ Սենեքերիմ յանձնարարեց որդւոցը Դաւթի, Ատոմայ, Աբուսահլի և կոստանդնի որ Ս. Խաչը Վարագ դարձնեն և զինքը տանին հոն թաղեն, այս պատուէրը տալէն ետև հանգեաւ ի Տէր վեց (ութ, տասը) տարի Սեբաստիա Թագաւորելէն ետև։*

Իր որդիքը հօրերնուն պատուիրանին համեմատ մարմինն առին տարին, Ս. Խաչն ևս միասին, թողլով ինչպէս կ'աւանդուի մաս մը Ս. Նշան վանաց մէջ. և գնացին մեծահանդէս շքով Վասպուրական. կենաց փայտը զետեղեցին Վարագայ վանաց մէջ իր ընիկ տեղն, ուր թաղեցին նաև Սենեքերիմ թագաւորն իր դամբանին մէջ և դարձան Սեբաստիա:

Դաւիթ թագաւոր Սեբաստիոյ

Սենեքերիմայ տեղը թագաւորեց երէց որդին Դաւիթ յամին 1027 (1028), որուն համար այսպէս կը գրէ Ուռհայեցին «Եւ հաստատեալ լինէր թագաւորական իշխանութիւն Տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ վասն զի էր այր փառաւոր և պատուական և ահարկու ի վերայ երկրի»:

Իր թագաւորութեան երկրորդ տարին (Պատմ. Սեբաստ.) մեռաւ յամին 1028–9 Սիոն արքեպիսկոպոս Սեբաստիոյ, և Դաւիթ խնդրեց Պետրոս կաթողիկոսէն որ ուրիշ արժանաւոր և աստուածպաշտութեան և իմաստութեան մէջ վարժ անձ մը ձեռնադրելով կարգէ իրենց եպիսկոպոս: Հայրապետը գրեց Գրիգոր Մագիստրոս իշխանին, խնդրելով որ իր աշակերտներէն քանի մը հատը, որոնք իր քով կը պարապէին իմաստասիրութեան ուսմունքին՝ ղրկէ: Մագիստրոս ղրկեց անոնց երևելիները Բարսեղ և Եղիշէ ընծայութեան թղթով առ կաթուղիկոսն, որ Եղիշէն ձեռնադրեց Սեբաստիոյ աթոռոյն վրայ. Գրիգոր Մագիստրոս յորդորանաց թուղթ գրեց նորընտիր եպիսկոպոսին, իբրև վարժապետ՝ իրեն սիրելի աշակերտին, որ կը սկսի այսպէս. «Լսեմ զքէն մանուկ դու եթէ գառնիգ երբեմն ելով, այժմ հովիւ զքեզ կացուցին» և այլն:

Եղիշէ արքեպիսկոպոսն ընդունելով վարդապետին այս լի խրատուք գրութիւնը, շատ գոհ եղաւ և ջանաց ամեն կերպով լաւ առաջնորդել իր հօտին և ծաղկեցնել իր վիճակը:

Յամին 1029, մեռաւ Կարսի Աբաս թագաւորն և իրեն յաջորդեց որդին Գագիկ. Պետրոս կաթողիկոս այս լուրն առնելով ելաւ Սեբաստիայէն և գնաց Կարս և անկից Անի, ուր հանգիստ չգտաւ, և մեկնեցաւ դէպ ի Վասպուրական, ուր առանձնացաւ Ձորոց Վանաց մէջ, զոր Մեծն Ներսէս շինած էր, և առանձնացած մնաց հոն չորս տարի. այս բանէն շատ բարկացան Յովհաննէս թագաւորն և նախարարք:

Պետրոս կաթողիկոսի իշխանութեան ժամանակ մեծ սով և ժանտախտ պատահեցաւ, որ կ'աւերէր կ'ապականէր փոքր Հայքը, Կապադովկիան և ուրիշ աշխարհներ, և թանձրամած ամպի նման խուժեցին բազմաթիւ մարախներ որոնք լափեցին երկրին ամեն սերմերն և պտուղները և երեք տարի բոլոր այն աշխարհներն ապարտելէն ետև, սաստիկ հով մ'ելաւ և թափեց զանոնք Ելեսպոնտեան ծովն:

Յամին 1034 Պետրոս կաթողիկոս կոչուեցաւ Անի, ուր տարուեցաւ ախոյանոք և Յովհաննէս արքային հրամանաւ բերդարգել եղաւ Բջնի ամրոցին մէջ և 1035ին արքունեաց ազդեցութեամբ եպիսկոպոսաց ժողով գումարելով Անիի մէջ հակառակաթոռ դրին Թէոդորոս Սանահնի վանահայրը, զոր չընդունեցին ազգին երևելի եպիսկոպոսները, չթողուցին եպիսկոպոս ձեռնադրել, ոչ պատարագի մէջ անունն յիշեցին, և իր անարժան գործոց համար զինքը աթոռընկէց ըրին և աքսորեցին իր վանքը, և ամենքը հնազանդեցան Պետրոս կաթողիկոսի իշխանութեան:

Սեբաստիոյ մէջ տասը տարի թագաւորեց Սենեքերիմի որդին Դաւիթ և մեռաւ յամին 1037. և որովհետև արու ժառանգ մը չունէր, գահակալեց եղբայրն Ատոմ և իրեն օգնական եղաւ միւս եղբայրն Աբուսահլ. իսկ կրտսեր եղբայրնին արդէն մեռած էր:

Դաւթի մահուանէն առաջ երկու դէպք պատահեցան. որոնց առաջինն է, երբ կայսրն Կոստանդին Թ. 1028ին մահուան դուռն հասաւ, Կիրակոս հայ քահանային՝ որ կաթողիկոսարանէն էր, յանձնեց Անւոյ և գաւառին համար Յովհաննէս թագաւորին տուած նամակն, որ տանի

յանձնէ նոյն արքային, և ըսաւ որ պահէ իր թագաւորութիւնն, և տայ իր որդւոց կամ ազգին մինչև ի յաւիտեան. բայց Կիրակոս անարժան քահանայն անհաւատարիմ գտնուեցաւ։ Երկրորդն է որ երբ Ռոմանոս Արկիր ինքնակալ եղաւ, իր եղբօրը աղջիկը կնութեան տուաւ հայոց Յովհաննէս թագաւորին, որուն հետևութիւնը մեծ էր անշուշտ հայոց համար։

Դ. — ԱՏՈՎՄ ԹԱԳԱՒՈՐ ՍԵԲԱՍՏԻՈՅ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՒԱՆՔ ՍԵԼՃՈՒՔ ԹՈՒՐՔԱՑ (1037–1070)

Եղբօր մահուան յաջորդ տարին նստաւ Ատովմ թագաւոր կամ իշխան Սեբաստիոյ, և անոր պատկանեալ տեղերուն վրայ յամի 1038։ Ասոր համար Ուռհայեցին կը գրէ «Լցեալ էր առաքինութեամբ և արդարութեամբ և սուրբ վարուք ի Քրիստոս Յիսուս, հեզութեամբ և քաղցրութեամբ ողորմած ի վերայ տառապելոց, դարմանիչ աղքատաց, և յոյժ սիրելի կրօնաւորական դասուն, շինիչ եկեղեցւոյ և բազմացուցիչ վանօրէից»։

Հազիւ տարի մ'անցած էր Ատովմայ թագաւորելուն վրայ, և ահա չար իշխան մը, Սենեքերիմի հետ եկող ազատներէն, նախանձելով Ատովմայ ստացած պատւոյն վրայ, ընտանեօք հանդերձ կ'ելլէ Սեբաստիայէն և կ'երթայ ի Կ. Պօլիս, և կը չարախօսէ թագաւորին և անոր եղբօրը դէմ, Միքայէլ Դ. Պափղագոնացի (1034–1041) կայսեր, և կ'ըսէ թէ, «կամին ապստամբել և յարուցանել քեզ վիշտս և հալածանս»։ Կայսրը շուտ հաւատաց և իր սպասեակին (ակոլութ, աքոլիտ) առաջնորդութեամբ տասնհինգ հազար զօրք ղրկեց Սեբաստիա, որ բերէ զանոնք ի Կ. Պօլիս։ Պատուիրեց հրամանատարին պատերազմ չընել՝ երբ անոնք հաճին երթալ, իսկ թէ որ չուզեն երթալ, պատերազմ ընելով աւերէ աշխարհնին և զիրենք կենդանի բերէ իր քով։ Երկու եղբարք զարմացան յուզուեցան և տագնապեցան, և ընելիքնին չէին

գիտեր. իսկ իրենց ծերունի սպարապետը, Շապուհ իշխանն՝ ըստ գրելոյ Ուռհայեցւոյն կ'ըսէր իրենց «կամիք զի զզօրսդ Հոռոմոց ցիր և ցան անեմ ընդ երեսս դաշտաց: Եւ արար զրահս եւթն կրկնակի, և զարկանէր թրով ի վերայ և ի վայր հեղոյր մանր զերկաթն»: Անոնք թէպէտ կը ճանչնային Շապհոյ անձնական զօրութիւնը, բայց չափակցելով կայսրութեան և իրենց զօրութիւնը, յարմար չդատեցին պատերազմով դէմ կենալ. և ոչ կը յուսային թէ մինչև վերջը պիտի կարող ըլլան տոկալ, ուստի պատասխանեցին Շապհոյ. «Մի եղիցի այդպէս, այլ երթամք զհետ կոչնականացն»: Շատ մը պարգևներ տուին եկող հրամանատարին, իրենք ևս ելան գնացին. երբոր հասան Կ. Պօլիս և ներկայացան կայսեր, աղաչեցին իրեն, որ եթէ իր կայսերական մեծութեան ծանր չգար, երթան մէկտեղ Վասիլ կայսեր գերեզմանը: Եւ երբ կայսեր հետ հոն հասան, անոր առջև՝ գերեզմանին վրայ ձգեցին նամակն որ Վասիլ տուեր էր իրենց Սենեքերիմ հօրը, Սեբաստիոյ երկրին ժառանգութեան համար, և ըսին. «Դու ետուր մեզ զսա և դու աներ զմեզ յաշխարհ քո, և այժմ դատ արա մեզ, ո՛վ հայր մեր, զի իշխանք քո սպանացեալ են ի վերայ մեր կորուսանել զմեզ, և առնուլ զաշխարհ մեր»: Երբոր կայսրը այս խօսքերը լսեց զարմացաւ, և իր գութը սաստիկ կերպով շարժելով անոնց նկատմամբ, վզերնին փաթթուելով շատ սէր և պատիւ ցուցուց իրենց, և անմիջապէս իրենց մատնիչն և չարախօսը բանտ դրաւ, և զիրենք թագաւորական զարդերով ճոխացուց, և մեծ փառաւորութեամբ ճամբեց իրենց աշխարհը՝ Սեբաստիա:

Նոյն Միքայէլի ինքնակալութեան ժամանակ կը պատմուի գործ մը յիշատակութեան արժանի զոր գործեց Կատակլուն Ամրուստ, վահանակիր ինքնակալին, և հրամանատար հայ պահանորդաց: Արաբացիք առաջնորդութեամբ Ապուլֆարի տէրն Սիկիլիոյ ամեն քաղաքներն, որ Յունաց ձեռքն էին. կը մնար միայն Մեսսինան որուն պահպանութեան կարգուած էր Կատակլուն հինգ հարիւր հետեակ և երեք հարիւր ձիաւոր զօրքով: Ապուլֆար պաշարեց զայն իր բոլոր զօրութեամբ. բայց յունական զօրավարին ճարտար հնարքներովն և հայ ջոկատին քաջութեամբը, Մեսսինա Արաբաց ձեռքը իյնալու վտանգէն ազատեցաւ:

Իսկ 1039 մեռաւ Անւոյ թագաւորը Յովհաննէս Սմբատ, և աթոռը պարապ մնաց երկու տարի։ Յունաց կայսրը կը պահանջէր Անին և ներքին շփոթք կը տագնապէին պետութիւնը. Վահրամ Պահլաւունի սպարապետը յաղթեց Յունաց բանակին յամի 1040, վանեց նաև երկու անգամ Դաւիթ Անհողին Գուգարաց հայ թագաւորը. և նախարարաց մեծ մասը միաբանելով թագաւոր դրին յամին 1042 Գագիկն, որ որդի էր Աշոտոյ եղբօր Յովհաննու, տասնվեց կամ տասնուեօթ տարեկան. ուսման մէջ կրթուած, վեհանձն, արի և վայելչահասակ։ Գագկայ գործն ի սկզբան յաջող գնաց, յաղթեց Յունաց, մեծ ճակատ մը վա-տրկեցաւ Սելճուքաց դէմ, բայց իր նախարարաց ոմանց դաւաճանութիւնը, ու Կոստանդին Մոնոմաք կայսեր կեղծ հնարքներն ստիպեցին Գագիկն երթալ Կ. Պօլիս, և գահընկէց ըլլալ, հակառակ խոստմանց և երդմանց՝ յամին 1045. Գագիկ իր թագաւորութեան փոխարէն ընդունեցաւ պալատ մը Կ. Պօլսի մէջ և փոքր քաղաք մը Կապադովկիա, նաև Անիէն բերել տուաւ իր ինչքերն և ստացուածքներն։ Ապա Պիզու գալով կայսեր հրամանաւ՝ առաւ Սեբաստիոյ Դաւիթ վախճանեալ թագաւորին դուստրն և ունեցաւ երկու որդիք, Յովհաննէս և Դաւիթ։ Կ'երևի թէ այս ամուսնութեան պատճառաւ Գագիկ ժառանգեց մաս մը Սեբաստիոյ իշխանութեան պատկանեալ երկրէն, յաւէտ այն որ Դաւթի կը պատկանէր։

Յամին 1048, Անւոյ յոյն կատապանը (մարզպան) սկսաւ արհամարհանօք վարուիլ Պետրոս կաթողիկոսի հետ, և ստիպեց որ երթայ Կարնոյ գաւառն և նստի Արծն։ Յայտնութեան տօնին օրը, կայսերական գործակալք ձերբակալ ըրին զինքն, և տարին Խաղտառինչ ուր արգելեալ մնաց մինչև Զատիկ։ Վերջը կայսրը իմանալով հայրապետին անմեղութիւնը կոչեց զինքն Կ. Պօլիս։ Խաչիկ եպիսկոպոսն տեղապահ կարգելով Անւոյ մէջ, ինքը մեծ շքախմբով գնաց կայսեր քով, ուր հասաւ նաև Սեբաստիոյ Եղիաէ արքեպիսկոպոսը, կաթողիկոսին հետ՝ կային եպիսկոպոսներ և վարդապետներ ևս. կայսրը մեծ պատուով ընդունեց զիրենք, և լաւ խնամք կը տանէր. բայց կերպով մ'արգելեալ

էին հոն. Հայ ժողովուրդն երեք տարի անհովիւ մնալով սկսած էին տրտնջալ։ Այն ատեն Սեբաստիոյ Տէրն Ատոմ, միաբանելով Աշոտեան Գագկայ, Անւոյ վատարանդի թագաւորին հետ, աշխատեցան կայսեր առջև և երեք տարի Կ. Պոլիս մնալէն ետև բերին զինքն, Եղիշէ Սեբաստիոյ արքեպիսկոպոսն և բոլոր հետն գնացեալներն։ Եւ Ատոմ պահեց կաթողիկոսը Սեբաստիոյ մէջ իր քով և ապա տուաւ անոր բնակութեան տեղ Ս. Նշան վանքին մէջ, զոր գեղեցիկ կերպով վայելչացուցեր էր։ Հոն մնաց Պետրոս կաթողիկոս եօթը տարի և մեռաւ յամի 1058, և թաղեցաւ նոյն վանաց մէջ, եկեղեցիէն դուրս Ս. Սեղանոյն ետևի կողմը։

Իր մեռնելէն առաջ Գրիգոր Մագիստրոս ղրկեց իրեն ճարտարագործ ոսկի գաւազան մը ականակապ և մեռոնի անօթ մը, հետն ալ ներբողական ոտանաւոր ճառ մը խաչին վրայ որ կը սկսի «Օրհնեալ ես փայտ կենաց»։

Պետրոսի մահուանէն ետև ընտրեցաւ կաթողիկոս նոյն քաղաքին մէջ, Պետրոսի քեռորդին Խաչիկ Բ. և այսպէս տասնմէկ (1052–1061) տարի աթոռը մնաց Սեբաստիա։

Առաջին Արշաւանք Սելճուք Թուրքաց

Այն որ սկզբնապատճառ եղաւ փոխադրութեան Արծրունի թագաւորութեան Վասպուրականէ ի Սեբաստիա, ահա նորէն կը մօտենար խռովելու մեր փախստական արքունեաց անդորրութիւնը։ Մեծ Հայք բազմաթիւ ասպատակութիւններով մինչև Եփրատ գրեթէ ամբողջ Արաբաց ձեռքն անցած էր, և ահա կը սկսէին միջամուխ ըլլալ Փոքր Հայք։ Յամի 1058–1059, Դինար անունով Սելճուք հրամանատար էմիր մը բազմութեամբ զօրաց յարձակեցաւ Մելիտինէ հռչակաւոր քաղաքին վրայ որ այս ժամանակները շատ ծաղկած էր, որովհետև լսած էին որ այնչափ հարստութիւն ունէր ոսկիի, արծաթի, մարգարիտներու և ղիպակաց. յիանակլին սկիզբն էր, որ եկան և անաշխատ առին քա-

ղաքը որ դժբաղդաբար նոյն ժամանակ անպարիսպ էր, և անխնայ ջարդեցին իր և դաստակերտաց բնակիչներուն շատերը, տասուերկու օր։ Այս դառն հարուածոց վրայ կը գրէ Ուռհայեցին, և լի ցաւով կը նկարէ բազմամարդ քաղաքին ողորմելի խեղճութիւնը, ահեղ կոտորածն, լայնատարած դաշտերուն և անդաստաններուն աւերմունքները, բազմաթիւ անձանց գերութիւնը, անհամար գանձուց՝ ոսկւոյ, արծաթոյ յափշտակութիւնն։ Այդքան եկան և ելան գնացին մեծատուն, սակայն չմնաց իրենց ձեռքը։ Ինչու որ երբ հասան Մեծ Հայք, Սասնոյ իշխանը Թոռնիկ Մամիկոնեան իր կորիճ լեռնականներովը վազեց վրանին և ահեղ ճակատամարտէ մ'ետև, առաւ անոնց ձեռքէն գերին և գանձը։

Մի և նոյն ժամանակ ուրիշ գունդ մը յարձակեցաւ Կողոպտեց Կողոնիա քաղաքին սահմանն, և շատ աւարով մեկնեցաւ։

Այս միջոցիս այսինքն (1057ին) Միքայէլ Զ. կայսեր դէմ մեծ դաւակցութիւն մ'ելաւ, որոյ գլխաւոր գործիչ էր Կատակլոն և կ'ուզէր կայսերական գահը ամբառնալ Իսահակ Կոմնենոսը, որ ազնուատոհմ և նշանաւոր անձ մ'էր։ Մինչդեռ Կոմնենոս իր գնդովը կեցած էր Պափղագոնիա մատանջութեան մէջ ընկղմած, Կատակլոն կը գումարէր իր գունդերը հազար հոգի, և Խաղտեաց խմբերն, և ապա կը ժողովէր փոքր Հայոց արի զօրքերն որոնց վրայ մեծ էր ակնկալութիւննին և Կոմնենոսի լուր տալով բոլոր բանակը քալեց դէպ ի Կ. Պօլիս, ու Նիկիոյ մօտերն Այէս ըսուած տեղն զարնուեցան իրարու հետ։ Կոմնենոսի աջ թևը խորտակեցաւ և զօրավարը գերի ինկաւ. Կոմնենոս շփոթած կ'ուզէր նահանջել, բայց Կատակլոն ձախ թևին հրամանատարն իր քաջ հայերովը ջախջախելով թշնամեաց աջ թևը, տիրեց կայսերական բանակին և յաղթութիւնը կատարեալ եղաւ։ Միքայէլ թէև կ'ուզէր համաձայնութեամբ մը խաղաղութիւն ընել և Կոմնենոս կը զիջանէր, բայց արին Կատակլոն դէմ կենալով, Կոմնենոս կը մտնէր Կ. Պօլիս և կը պսակուէր կայսր՝ Ս. Սոփիայի մէջ, և աթոռընկէց կ'ընէր Միքայէլ Կեբուլար Կ. Պօլսոյ պատրիարքն, և տեղը կը դնէր Կոստանդին Գ.։

Տուղրիլ Սելճուքաց Սուլդանը յամին 1059–1060, բազմաթիւ զօրքեր ժողվեց և յանձնեց զանոնք երեք ընտիր զօրավարաց, որոնք են Սամուխ Ամուրքափը և Գիճաղիզ (Գոլոսար), որովհետև լսած էր որ յոյնք ներքին կռիւներով տկարացած են։ Ասոնք ապստամբութեամբ յառաջ քալեցին յունական կայսրութեան գաւառներն, և շատ տեղեր ու գաւառներ աւեր ապականութիւն դարձնելէն ետև, դիմեցին Սեբաստիա բազմամարդ և հոյակապ քաղաքին վրայ, մտքերնին դնելով որ ձերբակալ ընեն Սենեքերիմի երկու որդիքը Ատոմ և Աբուսահլը։ Այս արշաւանքը առաջուց իրենց ազդ եղած ըլլալով․ քանի մ՚իշխանով գնացին ամրացան խաւատանէք անառիկ աւանը։ Իսկ Սուլթանի զօքերն անարգել և անդիմակաց յառաջ քալեցին հեղեղներու պէս և ողողեցին բոլոր երկիրն, և ապականեցին դաշտերու գեղեցկութիւնն, արեամբ ներկեցին Սեբաստիոյ երկրին ընդարձակութիւնը, կրակով այրեցին շատ մ՚աւաններ և գիւղեր։

Երբը հասան մեծ քաղաքին դիմացը Վարդավառի բարեկենդանին օրը․ քաղաքը պարիսպ չունէր և պահակ զօրքէ ևս թափուր էր։ Ուռհայեցին և Սմբատ կը պատմեն որ նախ և առաջ չհամարձակեցան քաղաք մտնել, որովհետև հեռուէն տեսած ըլլալով բազմաթիւ եկեղեցիներու սպիտակ գմբէթները, կարծեցին թէ յունական զօրաց վրաններն են անոնք, այլ շուտ անցաւ այս պատրանքն և իրենք յարձակեցան լեցուեցան քաղաքին մէջ, և ամէն կողմէ պատելով կը ջարդէին բազմութիւնը։ «Արք և կանայք պատուականք, կ՚ըսէ Սմբատ, քահանայք և սարկաւագք անկեալ ի մէջ արեանցն ապաժոյժ թաւալէին, և ոչ ոք էր որ խնայէր կամ ծերի ողորմէր այլ դիզեալ կային իբրև զփայտակոյտ և ամենեքեան թաւալեալ կային յարեան ճապաղիս»։ Իսկ Ուռհայեցին կ՚ըսէ․ «Անխնայ կոտորեցին զայնքան բազմութիւն քաղաքին, և անթիւ և անհամար աւարաւ և գերութեամբ արանց և կանանց, և այնչափ զանձս ոսկւոյ և արծաթոյ ականց և մարգարտաց և դիպակաց յափշտակեալ հանին ի Սեբաստիոյ»։ Առին նաև Ատոմ թագաւորին գանձերն, և ինչ որ գտան մեծամեծաց տուները։ «Եւ առ սակաւ մի ժամ, կը

յաւելու, աւեր եղև քաղաքն և դաշտն արեամբ լցեալ, և գետն որ անցանէր ընդ մէջ քաղաքին. փոխանակ յատակ ջրոյն յարիւն դարձուցանէր զգոյն: Եւ բազումք այն էին որ հրով այրեցան, և ահա անկեալ կային բազում իշխանք և մեծք և փառաւորք....: Զինչ և վասն քահանայից և սարկաւագացն ասացից, և յաղագս վեց հարիւր եկեղեցեացն (գմբէթաւորք ամենքին և մեծաշէնք) որ ի նմա կային ամենքեան հրով վճարեցան...: Եւ ի սակաւ ժամ մի՝ եղև Սեբաստիա իբր զխուղ մի այրեցեալ հրով: Եւ կացին զօրք այլազգեացն ի Սեբաստիա աւուրս ութ»: Այսպէս եղծին աւերեցին և հրոյ ճարակ տուին այս մեծ և երևելի քաղաքն. իսկ ասպատակաւորք լցան լիացան անբաւ աւարաւ, և գերեաց բազմութիւնն հետերնին առած՝ դարձան իրենց աշխարհը:

Աւարառուներուն մեկնելէն ետև, քաղաքէն փախչողները դարձան իրենց տեղն. և սկսան քիչ քիչ նորոգել եղած աւերմունքները: Եւ այս հարուածն եղաւ յամի 1059–1060: Իսկ Ատոմ և Աբուսահլ գնացին Կ. Պօլիս մնացին հոն ժամանակ մը, և դարձան Սեբաստիա յամին 1061:

Կրօնական խնդիրներ Յունաց և Հայոց մէջ և այլ դէպքեր

Այս աղէտին վրայ շատ չէր անցած Կոստանդին Դուկաս (Տուկիծ) կայսրը (1059–1067) ուզեց Հայերը դաւանութեամբ միացնել Յունաց հետ, և սկսաւ ստիպել զիրենք որ ընդունին Քաղկեդոնի Ս. Ժողովքն: Այս հրամանին գործադիրները չափն անցուցին, և խնդրոյն պայմանէն դուրս ելլելով, սկսան պահանջել Պետրոս կաթողիկոսի բազմաթիւ ոսկիները և արծաթները: Սեբաստիոյ մէջ խռշտանգեցին շատեր այս պատճառաւ: Կ. Պօլիս տարին Պետրոս կաթողիկոսի յաջորդը Խաչիկը ուրիշ եպիսկոպոսաց հետ: «Ընդ որս էր, կ'ըսէ Ուռհայեցին, և ամենագովելի Տէր Եղիշէ արքեպիսկոպոս Սեբաստիոյ. և պահեցին զնոսա յաքսորս զամս երիս»: Կ'երևի թէ ինչ ինչ բաներու մէջ համաձայնութիւն եղաւ մէջերնին հաւատոյ խնդրոց մէջ: Եւ ապա Հայոց Թա-

գաւառներն և իշխանները Գագիկ Անեցին, Ատոմ և Աբուսահլ մեծապէս ջանք ըրին և յաջողեցան դարձնել հայրապետն և անոր հետ գնացողները, և բերելով նստեցուցին Թաւ–Բլուր՝ Տերէնտէի մօտ, կայսեր հրամանաւ՝ որ տուաւ կաթողիկոսին երկու վանք և հարիւր գիւղ դէպ ի Կոկիսոն :

Եղիշէ արքեպիսկոպոս Կ. Պոլսէն դառնալէն ետքը կնքեց իր կեանքը յամին 1064. *մինչ նոր զերծած էր իր երկարատև արգելարանէն։ Բիւզանդիոնի, և Ատոմ Թագաւորին հաւանութեամբ յաջորդեց իրեն Տէր Խաչատուր, որ աչալուրջ տքնութեամբ և վշտակիր տառապանօք հովուեց իր հօտը ԼԱ. տարի։ Ասոր և յաջորդաց վրայ ետքէն պիտի խօսիմ :*

Նոյն ժամանակները Յոյնք հետամուտ էին Հայերը միաբանել իրենց հետը, և ինչպէս առաջ՝ այս անգամ ևս այնպէս կարծուեցաւ որ Յոյնք կ'ուզեն Հայ ազգութիւնը ջնջել և ձուլել զանոնք իրենց հետ։ Բայց նախընթացն աւելի սաստիկ էր, Հայոց Հայրապետութիւնն ևս վերցնելու խօսք կամ կասկած եղաւ։ Կոստանդին Դուկաս Կ. Պոլսէն մարդ ճամբեց Սեբաստիա և հրաւիրեց Ատոմն և Աբուսահլն. անոնք իմացան կայսեր միտքը և իրենց հետ տարին Քարափնեցի Յակոբոս գիտնական վարդապետը։

Սիրով և պատուով ընդունեցաւ զիրենք ինքնակալն և քանի մ'օր ետքը առջևնին դրաւ միաբանութեան խնդիրն։ Անոնք պատասխան տուին թէ առանց հաճութեան Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ մենք բան մը չենք կրնար ընել, ինչու որ ան քաջ մարդ է և թագաւոր և մեր փեսան։ Բայց կայսրը չէր հաճէր անոր գալուն, իսկ Ատոմ և Աբուսահլ գաղտուկ ազդ ըրին Գագկայ։ Ինքնակալը հրաման ըրաւ քննութիւն ընել, և Յակոբոս վարդապետ շատ մը վէճերէն ետև Հայոց և Յունաց հաւատոյ միաբանութեան գիր մը գրեց, որ Դուկասի հրամանաւ պահեցին Ս. Սոփիայի մէջ։ Մինչդեռ այս գործերը կը կատարուէին, Կ. Պոլիս կը հասնէր Գագիկ Աշոտեան, որ Յակոբոսի գրածը տեսնելով մերժեց անոր ըրած միաբանութիւնը։ Սակայն և ինչպէս կ'երևի շատ խստու-

թեամբ չվարուեցաւ։ Հաւատոյ դաւանութեան թուղթ մը գրեց և մատուց ինքնակալին ձեռքը, զոր մէջ կը բերէ Ուռհայեցին. բայց ո՞րչափ կարելի է արդեօք անկասկած ըլլալ անոր հաւատարմութեան վրայ։ Յայտնի է որ Գագիկ կը խօսէր և կը գրէր յունարէն, կամ ձեռամբ թարգմանի, և Ուռհայեցին թարգմանիչ մի է։ Գագիկ իր գրուածքին մէջ ուրիշ հերձուածողաց հետ կը նզովէ Նեստորը, Պօղոս Սամոսատցին և Պետրոս Կնափեցին. նաև Դէոսկորոսն՝ եթէ անանկ հերձուած մը խորհեցաւ։ Կ'ընդունի երկու բնութիւն միաւորեալ յանձն Բանին, երբոր կ'ըսէ. «Բնութիւնք երկու քանզի Աստուած և Մարդ, բայց Որդիք ոչ երկու»։ Եթէ հաւանինք Ուռհայեցւոյն՝ Յոյնք հաճեցան անոր խօսքերուն, որով յայտնի կ'ըլլայ որ անոնց մտաց համեմատ խօսած է, և ոչ բոլորովին այնպէս ինչպէս որ ինքը մէջ կը բերէ և կը դնէ անոր բերանը։ Մանաւանդ որ Կոստանդին Դուկաս, ինչպէս ինքը կը պատմէ, ըրաւ «Մեծ սէր և ընդունելութիւն նոցա, և շնորհեաց բազում պարգևս Գագկայ և Ատոմայ և Աբուսահլի, և այլոց իշխանացն»։ Բայց այս միաբանութիւնը կ'երևի յաւէտ խօսքով եղած էր, ժամանակին հարկին համեմատ, ուստի երբ դարձան իրենց տեղերը, մնացին իրենց նախկին կարծեաց մէջ, մանաւանդ Գագիկ որ զայրագին մեկնեցաւ Կ. Պօլսէն. իսկ Արծրունիք անշուշտ աւելի մեղմ էին և համաձայն։

Ալփ Արսլան Պարսից Սելճուք թագաւորն առաւ Անի մեծ մայրաքաղաքը, տասնևութ տարի Յունաց ձեռքը մնալէն ետև։ Կարգն եկած էր Վանանդայ փոքրիկ թագաւորութեան. Գագիկ, որդի Աբասայ, հնարքը գտաւ այս անգամ զերծուցանելու իր երկիրն և Կարս մայրաքաղաքը։ Բայց բնականապէս չէր կրնար յուսալ միշտ նոյն յաջողութեան հանդիպիլ։ Ուստի ինքն ևս ձեռք առաւ իրմէն առաջ եղող հայ պետաց ընթացքը. Յունաց տալ իր երկիրն և կայսրութեան մէջ ձեռք բերել անդորր տեղ մը։ Հետևաբար յամին 1065 տուաւ կայսեր Կարսն և անոր պատկանեալ երկիրներն, և ընդունեցաւ ինքնակալէն Ծամնդաւ ամրոցն (Թոմարզայի սահմանին մէջ), նոյնպէս ևս Կեսարիա և Խաւատանէք։ Ուռհայեցին կը յիշէ Ծամնդաւը միայն. Սմբատ կը յաւելու

ևս Կեսարիան և Խաւատանէքը։ Իսկ Վարդան Հարիւր գիւղ ևս վրայ կը դնէ։ Բայց քաղաքները կ'անուանէ Ծամնդաւ, Լարիս, Ամասիա և վերին Կոմանան։ Իսկ Հ. Միքայէլ հետևելով Վարդանայ՝ նոյն տեղերը կը յիշէ. բայց զի Ծամնդաւը կը զետեղէ Ամասիոյ, Լարիսայի և Կոմանայի մէջ, այն ատեն այս ետքինը պէտք է ըլլայ Կոկիսոնի մօտ Կոմանան, որով շատ կ'ընդարձակի տրուած երկրին սահմանը։ Կը կարծեմ որ Սմբատ սպարապետին գրածը աւելի յարմար է և չափաւոր, կրնայ աւելցուիլ վարի Կոմանան։

Ե. — ՍԵԼՃՈՒՔԱՑ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՒԱՆՔԸ ՓՈՔՐ ՀԱՅՔ ԵՒ ՍԵԲԱՍՏԻԱ. ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՄԵԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՒ ՍԵԲԱՍՏԻՈՅ ԻՇԽԱՆԱՑ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԸ (1070–1080)

Այս ժամանակ հայ ազնուականութեան մեծագոյն մասը ամփոփուած էր Փոքր Հայաստանի մէջ։ Երկու Բագրատունի թագաւորներ Գագիկ որդի Աշոտոյ, և Գագիկ որդի Աբասայ իրենց կեդրոն ունէին առաջինն Անւոյ տեղ Պիզուն և Կալունպալատն, իսկ երկրորդը Կարսի տեղ Ծամնդաւը, Զամանդի գետոյն եզերքը։ Սենեքերիմ Վասպուրականի Արծրունի թագաւորին որդիքը Ատոմ և Աբուսահլ զետեղուած էին Սեբաստիա։ Այս երեք թագաւորներն ունէին քաղաքներ, ինչպէս Ամասիա, Կոմանա (այժմ Թոգադ), Ծամնդաւ (Զամանտի), Լարիս (այժմ Վերան Շէհիր՝ Ուզուն-եայլայի մէջ), Խաւատանէք (որ կը կարծուի այժմու Կիւրինը) և Կեսարիա (Գայսէրի) և շատ մը գիւղեր։ Նաև Հայրապետն ունէր Տէրէնտէյէն դէպ ի Կոկիսոն ընդարձակ երկիր մը, որուն կեդրոնն էր Թաւ-Բլուր Ջահանի (Էլ Պօլթան) մէջ։ Այս մեր յօդուածին ընթացից ժամանակ ետևէ ետև Անտիոքայ դուքս եղան Խաչատուր և Գրիգոր Մագիստրոսի որդին Վասակ. Խաչատուր Անտիոքէն փոխադրուեցաւ Անդրոյն, որ է Անարզն Զէյթունի մօտեր. Փիլարետ հայ իշխանն ևս

քիչ մ'ետքը սկսաւ տիրել Մարաշու, և մինչև Ջահան և Եփրատ շատ մ'ամրոցներու: Թողունք Եփրատայ միւս կողմը եղածները:

Կոստանդին Դուկաս և իր յաջորդները երևելի գործ մը չեն ունեցած ի պաշտպանութիւն կայսրութեան: Դուկաս մեռաւ 1067ին. կայսրութիւնը ժառանգեց Միքայէլ Պարապինաս, իր մօրը Եւդոքսիա Թագուհւոյն խնամակալութեան ներքև, որ 1068ին նորէն ամուսնանալով Ռոմանոս Դիոժէնի հետ, իր նոր այրը բարձրացուց կայսերական աթոռն որդւոյն տեղ:

Երբոր Յոյնք իրենց ներքին աղմուկներով զբաղած էին, Ալփ Ասլան սուլդան, որ յամին 1063 յաջորդեր էր Տուղրիլ Բէկի, շատ մ'արշաւանքներ ըրած էր ինքնակալութեան երկիրներ, և շատ գաւառներ գրաւած անկէ. նաև Անտիոք վտանգի մէջ էր Սելճուքաց ձեռքն իյնալու:

Ռոմանոս Դիոժէն աւելի քաջ պատերազմող էր քան թէ պետութեան խոհական վարիչ մը. կը խորհէր միայն երթալ պատերազմիլ թշնամեաց հետ, ուր որ գտնուէին: Ասոր համար բազմութեամբ զօրաց Կապադովկիոյ ճամբով դիմեց Լիւկանդիա, որպէս զի Սուրիա երթայ և ազատէ Անտիոքը. ճամբու վրայ լսեց որ Սելճուք Թուրքաց զօրքը, յանկարծ վրայ հասնելով առին Նէոկեսարեան Լիկոսի եզերքն, աւերեցին քաղաքն և բնակիչքը գերի ընելով կը տանէին: Հարկ համարեցաւ ճամբան փոխել, և Սեբաստիա հասնելով իր կահ կարասիքն և հետևակազօրուն մեծ մասն հոն թողուց Յովհաննէս Դուկասի որդւոյ Անդրոնիկեայ հրամանատարութեան ներքև, և ինքը գունդերուն ընտիրներովը քալեց արագաշարժ ընթացքով Տիվրիկ, ուրկէց պիտի անցնէին Նէոկեսարիոյ աւարառուներն. և երբ անոնք հասան զարկաւ ջարդեց անոնց շատերն և ազատեց աւարն և գերիներն:

Այս առաջին յաջողութեամբ հաստատելով իր լքած զօրաց սիրտերը Սեբաստիա դարձաւ, և երեք օր իր զօրաց հանգիստ տալով քալեց գնաց դէպ ի Սուրիա: Եւ Տաւրոսի կիրճերը Կոկիսոն քաղաքին քով անցնելով, հասաւ Թէլուք, և անկէ ղրկեց Մելիտինէ մեծ գումարտակ մը պետութեան սահմանները պահպանել, և մեծ գունդ մը

Հափսիմանի հրամանատարութեամբ Եփրատայ սահմաններուն հսկելու Թուրքաց դէմ։ Իսկ ինքը պատերազմելով Արաբաց և Թուրքաց դէմ, որոնց հետ միացաւ նաև Հալէպի էմիրն, որ մինչև այն ատեն նիզակակից էր կայսրութեան, պաշարեց Յերապօլիսն (Մամպիճ), և անձամբ առաւ զայն. բայց իր երկրորդ բանակն, որ Արաբաց և Թուրքաց դէմ ղրկած էր չարաչար պարտեցաւ. այն ատեն կայսրն իր հայ և կապադովկացի գնդովն գիշերանց վրայ հասնելով խորտակեց, բայց սաստիկ հետամուտ չեղաւ, վասն զի զօրքը շատ յոգնած էր, ուստի Բարաման վրացին հրամանատար կարգելով Յերապօլսի, ինքը ասպատակեց և աւարեց Հալէպի երկիրներն և առաջ խաղալով մօտեցաւ Անտիոքայ։ Կը պակսէին պաշար և ուրիշ կարևոր իրք, այս պատճառաւ գնաց Աղեքսանդրիա խասս ծոցին քով, հոն քանի մ'օր հանգստանալէն ետև դարձաւ Բոտանտէ Կապադովկիոյ սահմանին վրայ, ուր իմացաւ որ Թուրք ասպատակաւորք Գաղատիա մտեր են. հրաման ղրկեց Մելիտինոյ հրամանատարին գալ իր զօրքով և միանալ կայսեր բազմաթիւ գնդին հետ, որ Ծամնդաւ կը գտնուէր, բայց այն վատասիրտը տեղէն շարժիլ անգամ չհամարձակեցաւ սուտ պատճառներով։ Իսկ կայսրը ձմերոցները զետեղելով զօրքերը՝ դարձաւ Կ. Պօլիս։ Յաջորդ տարին նորէն դիմեց կայսրը Թուրք ասպատակաւորաց վրայ. և Մելիտինէի մօտերը հասնելով բանակ դրաւ, և առաջ քալեց ապա դէպ ի Եփրատ. Թշնամիք զինքը տեսածնուն պէս փախան գետէն անդին. ինքնակալն ևս անցաւ անոնց ետևէն և մտաւ Րոմանոպօլիս, և միտքը դրաւ դիմել մինչև Խլաթ Վանայ ծովակին քով, և ահա լուր հասաւ որ Թուրք ասպատակաւորք Լիկայոնիա մտեր են։ Նա դարձաւ և եկաւ Սեբաստիա, և անկէց շուտով մեկնեցաւ որ ասպատակաց հետամուտ ըլլայ, իրեն հետ էր նաև Փիլարետ, կայսերական բանակի մէկ մասի հրամանատարը։ Սակայն ինքնակալին հասնելէն առաջ ասպատակները լի աւարօք մեկնեցան գնացին իրենց աշխարհքը։ Դիոժէն չյուսալով անոնց հասնիլ, զօրք և հրաման ղրկեց հայազգի Խաչատուր Շիրականի քաջ զօրավարին որ առջևնին առնու. բայց մինչ սա արագ ընթացքով Մամեստիա հասնելով կը սպասէր

անոնց գալստեան՝ հայ գունդ մը Թուրքաց Սելևկիոյ լերանց կիրճերն անցնելու ատեն, դարանամուտ եղաւ, զարկաւ զանոնք չարաչար, Թափել տուաւ աւարն և գերիներն և հալածեց զանոնք իրեն առջևէն։

Երկու տարի էր որ Դիոժէն կը դիմէր կայսրութեան բոլոր արևելեան գաւառներն, որպէս զի պաշտպանէ զանոնք Թուրք ասպատակաց դէմ, և բաւական ընկճեր էր անոնց համարձակութիւնը, կը յուսար ժամանակ մը հանգիստ ընել պատերազմի աշխատութենէն։ Ուստի զօրաց հրամանատարութիւնն յանձնեց Մանուէլ Կոմնենոս կիւրապաղատին, որ անդրանիկն էր Յովհաննէս Կոմնենոս կիւրապաղատին և ինքը դարձաւ Կ. Պոլիս։

Այս մանկահասակ իշխանը գումարեց իր զօրքը Կեսարիա, և այնպէս լաւ կարգաւորեց զանոնք, որ ամեն բախմանց մէջ յաղթող հանդիսացաւ։ Դիոժէն անոր այս յաջողութեանց վրայ նախանձելով, ակարացուց ձեռքն եղած բանակն, որովհետև հեռահեռէ հրաման ըրաւ հատուածել անոր գնդերն այլ և այլ տեղեր խումբ խումբ ղրկելով. անանկ որ Մանուէլ չյուսալով այլ ևս կարևոր գործ մ'ընել, եկաւ բանակեցաւ Սեբաստիա։

Նոյն ժամանակներն Ալփ Արսլան սուլդանին զօրավարներէն մէկը, Խրուճ անունով, զոր մեր պատմիչները Կորիճ և Բիւզանդացիք Կրիզոսկոլոս կ'անուանեն, ազգական սուլդանին, ապստամբելով Ալփ Արսլանայ դէմ յամին 1069, բազմութեամբ զօրաց յարձակեցաւ Փոքր Հայք, ի մասնաւորի Սեբաստիոյ կողմը և շատ նեղութիւն տուաւ ասպատակութեամբ և աւարհարութեամբ։ Մանուէլ կը տեսնէր այս եղածներն և թէպէտ շատ նուազ էր իր զօրաց թիւը, սակայն և այնպէս չհանդուրժելով պատնէշի մէջ փակուած մնալ, քալեց անոնց դէմ, զարկաւ և հալածեց զանոնք։ Բայց երբոր յանդուգն կերպով անոնց հետամուտ եղաւ, Թուրքաց մէկ մասն՝ որ դարանի մտած էր, վրան յարձակեցան և մէջ փակեցին անոր գունդը, շատեր սպաննեցին և ձերբակալ ըրին, ուրիշներու հետ նաև Մանուէլ կիւրապաղատն. և իր երկու քեռայրները Միքայէլ Տարօնեցին և Նիկեփոր Մելիսէն, Թշնամին տիրեց բանակին և աւարի առաւ. և եթէ Սեբաստիա մօտ չըլլար՝ ուր փախստականաց շատերն ապաւինելով ապրեցան, բոլոր բանակը ջարդուեր էր։

Մանազկերտի ճակատամարտը

Թուրք Սելճուքներն այս յաղթութեամբ համարձակութիւն առնելով աւրեցին և աւարեցին բոլոր աշխարհքն, և կապադովկիոյ ճամբով քալեցին արագ մինչև Փռիւգիա և կողոպտեցին Կողոսս քաղաքը։ Իսկ Մանուէլ Կոմնենոս որ գերի էր Խրուճի քով, գիտնալով անոր միտքը Ալփ Արսլանայ հակառակ, շահեցաւ զինքը խոստանալով կայսեր հետ մտերմացնել, և անոր օգնութեամբն հասնիլ իր բաղձանաց։ Վերջապէս յոյնին փափուկ լեզուն համոզեց փառասէր Թուրքը, որ յանձնառու եղաւ Կ. Պոլիս երթալու նոյն ինքն Մանուէլ իշխանին հետ, և այսպէս երկուքը մէկտեղ գնացին կայսերական քաղաքը ամբողջ յոյն գերիներով։ Դիոժէն իր բանակին պարտութեան վրայ այնպէս զայրացած էր որ, անմիջապէս կ'ուզէր անձամբ իր պարտեալ զօրաց մնացորդներուն գլուխն անցնելով վրէժխնդիր ըլլալ. բայց իրեն զայրոյթը հազիւ կրցան մեղմել իր պալատականները։ Մանուէլի և Խրուճի հասնելէն ետև կայսրը դաշն նիզակակցութեան դրաւ Սելճուք էմիրին հետ որ օգնէ անոր հզօր գորութեամբ և Ալփ Արսլանայ տեղ զինքը թագաւոր դնէ պարսից վրայ. և անմիջապէս հրաման ըրաւ զօրք ժողվելու յոյներէն, հայերէն և ուրիշ ազգերէն։ Մանուէլ մեռաւ նոյն օրերը, և կայսրը հեռացուց իրմէ շատ մը լաւ պաշտօնակալներ զորոնք իրեն հակառակ կը կարծէր, և 1071ի մարտ ամսուն ճամբայ ելաւ մայրաքաղաքէն. Ալիսն անցնելու ատեն տակաւին կը գտնուէր իր քով հարիւր հազար հետևակ և բազմաթիւ հեծեալ, կայսեր հետ էր նաև Խրուճ իր գնդովը։ Դիոժէն իր բանակին մէջ ուրիշ քանի մը սխալ կարգադրութիւններ ընելէն ետև եկաւ Սեբաստիա։

Ատովմ և Աբուսահլ դէմ գնացին մեծ հանդէսով և ընծայեցին իրեն շատ մը նուէրներ։ Իսկ այն կողմերը բնակող յոյն իշխաններէն ոմանք, որոնք իրենց սրտին մէջ թշնամութիւն ունէին հայ իշխանաց և

ազգին դէմ, կայսեր դիմացն ելլելով ամբաստանեցին Սեբաստացիներն և բոլոր հայերն, ինչպէս կ'ըսէ Ուռհայեցին, «Եթէ յորժամ եհար զմեզ կորիճ Ամիրայդ, ազգն հայոց առաւել կոտրեցին զմեզ քան զԹուրքն», և թէ իրենք կը գրգռեն պարսիկներն։ Եւ հաւատաց, կ'ըսէ Ուռհայեցին, «Թագաւորն Գիոժէն սուտ խօսիցն Հոռոմց և սպառնացեալ սաստիկ երդմամբ, եթէ ի դառնալն ի պատերազմէն պարսից բառնամ զհաւատն հայոց. և նոյն ժամայն հրամայեաց ալափ տալ (աւարի առնուլ դեռ ևս նոր նորոգուած) զՍեբաստիա քաղաքն ամենայն զօրացն Հոռոմց, և յալափելն արարին սպանումն բազմաց. և ընկեց յերեսաց զԱտոմ և զԱբուսահլ և արկ սուգ մեծ ի վերայ քաղաքին Սեբաստիոյ»։ Նոյն հեղինակը կը յաւելու ևս թէ այն ատեն Հոռոմց մեծամեծ իշխանները, Գագիկ շահն որդի Աշոտոյ, կայսեր բանակին մէջ գտնուող ուրիշ հայ իշխանք և նոյն իսկ Խրուճ ամիրան, որ գերի բռնեց կիւրապաղատը, կ'ըսեն Թագաւորին թէ «մի լսեր սուտ խօսից ազգիդ քո (զրպարտչաց) զի որք ի պատերազմին Թուրքաց մնացին (ապրեցան) սոքա (Հայք) եղեն (նոցա) օգնական։ Եւ լուեալ Թագաւորն արար խաղաղութիւն»։ Մինչև հոս Ուռհայեցին, բայց Հոռոմց պատմութեան մէջ ամբողջ այս դէպքին յիշատակը չկայ։ Իսկ Հ. Միքայէլ կ'ըսէ թէ կայսրը խաղաղութիւն ընելէ ետև ևս զրկեց Ատոմն և Աբուսահլը իշխանութենէ, և թէ սպաննալիք ևս ըրաւ։

Գիոժէն ամեն մտադրութիւն դարձուց առաջիկայ պատերազմին վրայ. և հրաման ըրաւ պատերազմական մեծ ատեան մը կազմել, ուր յանդուգն սպաներէն ոմանք կը բաղձային թշնամւոյն վրայ երթալ, և չտալ անոր ժամանակ որ ինքը գայ զիրենք զարնելու։ Բայց Նիկեփոր Բրիէն արեւմտեան զօրաց հրամանատարն, և Յովսէփ Տրակոնիացի պատերազմափորձ զօրավարք, որոնք այս արշաւանքին գլխաւոր և հմուտ հրամանատարներէն էին, կը կարծէին որ առանց վտանգի չէ թշնամւոյն հետամուտ ըլլալ Հայոց և Մարաց լեռներու մէջ, ուր անիկա իր երկրին մէջ գտնուելով ազատ էր իրեն նպաստաւոր ճակատու տեղ ընտրել, լաւ էր բերել զինքը Տիգրիսի այս կողմը, պատսպարել անոր շուրջը եղած

քաղաքները, անոնց քով եղած դաշտավայրը եղծանել և աւերել, և այսպէս խոհեմութիւն կը համարէին մնալ ի Սեբաստիա։ Իսկ եթէ ինքնակալը կը հաճէր փոքր ինչ ևս առաջ երթալ, կարելի էր մինչև Թէոդուպոլիս քալել, ուր կը գտնուէին ճակատամարտի յարմար տեղեր։ Այս խորհուրդները շատ լաւ էին, բայց չգործադրուեցան. կայսեր միտքն էր, անյապաղ հանիլ թշնամեաց բանակին։

Դիոժէն մեկնեցաւ Սեբաստիայէն դէպ ի Թէոդուպոլիս, բայց հոն չկենալով արագեց գնաց Մանազկերտ քաղաքին դիմացը։ Նիկեփոր Վասիլակ հայ իշխանը հասաւ հոն Հայաստանի և Ասորիքի օժանդակ գնդերով։ Ուռհայեցին կը յիշէ նաև Խատտայ անունով հայ իշխանն, որ Վասիլակի հետ հրամանատար էր բանակին։

Մօտ էր նաև սուլդանին բանակը, որ օգտակար պայմաններով խաղաղութիւն առաջարկեց. Դիոժէն թշնամւոյն դիմացը փոխանակ բանակը ամփոփ բռնելու, մաս մը ղրկած էր դէպ ի Խլաթ, և Տարկոնիատի առաջնորդութեամբ հեծելազօրուն ընտիր մասն և բազմաթիւ հետևակներ դէպ ի նոյն կողմը ճամբեց։ Կայսրը խաբուած էր և բնաւ տեղեկութիւն չունէր թշնամի բանակին վրայ. և ոչ իսկ կը կարծէր թէ Ալփ Արսլան բոլոր զօրութեամբ իր մօտերն է։ Ուստի երբոր դիմացը զօրաց շարժում տեսաւ, Նիկեփոր Բրենը ղրկեց անոնց վրայ. Նիկեփոր ընդդիմութիւն տեսնելով յետս ընկրկեցաւ։ Ետևէն ղրկեց Վասիլակն, որ քաջութեամբ զարկաւ հալածեց թշնամին մինչև անոնց ղակիշապատ բանակն. բայց մէկէն ի մէկ ետ դարձաւ. Յոյնք չփոթած մեծաւ մասամբ ջարդուեցան, և Վասիլակ արիաբար կռուելէն ետև ձիէն իյնալով բռնուեցաւ և տարուեցաւ սուլդանին քով։

Կայսրը մերժած էր արդէն Պարսից թագաւորին առաջարկած խաղաղութեան պայմանները. և առանց նայելու իր տկարացած բանակին, յանդգնութեամբ ինքը յառաջամարտիկ՝ սկսաւ Մանազկերտի որոշիչ ճակատն Օգոստ. 26 յամին 1071, ուր բոլորովին յաղթուելով՝ ինքն իսկ վիրաւոր ձերբակալ եղաւ և տարուեցաւ Ալփ Արսլանի առջև, բայց նա մեծանձնութեամբ մարդասիրելով, ոչ միայն շատ մը պատիւներ

ըրաւ, այլ և չափաւոր պայմաններով իրեն հետ նիզակակցութիւն հաստատեց, և ութ օր վերջը թողուց որ երթայ իր երկիրը։ Գիոժէն Թէոդուպոլսի ճամբով գնաց Կողոնիա, կ'աճապարէր հասնիլ Կ. Պոլիս. ուր ամէն բան կերպարանափոխ եղած էր։ Եւդոքսիա կայսրուհին և իր Դուկասէն ունեցած երեք որդիքը միաբանած էին Յովհաննէս Դուկաս կեսարի և անոր որդւոց հետ, և կայսրուհւոյն երէց որդին Միքայէլ Պարապինաս ինքնակալ հրատարակուած էր։

Կեսարի որդին Կոստանդին հզօր բանակով մ'առաջ քալեց, Գիոժէն իրեն սպարապետ կարգեց Թէոդոր Ալիաթը, ճակատը մղուեցաւ Ամասիոյ մօտ. պատերազմը սաստիկ էր. վերջապէս Գիոժէնի բանակը խորտակեցաւ և Թէոդոր գերի ինկաւ։ Ամէն յոյս կորած էր Գիոժէնի համար. բայց Անտիոքի հրամանատարը Խաչատուր Տիրակունի հայ իշխանը՝ բարերարուած ըլլալով, զի Գիոժէն մինչև Մագիստրոսութեան աստիճանին բարձրացուցած էր զինքը, ուզեց երախտագէտ ըլլալ, որովհետև Գագիկ կարսեցին ծանուցեր էր իրեն Գիոժէնի մեծ ձախորդութիւնը։ Խաչատուր ի սկզբան հայ գնդեր գումարեց և Կիլիկիան և անոր ամուր անցքերը բռնեց։ Գիոժէն առաջին պարտութենէն ետև առանձնացած էր Թիրոբէա ամրոցը. հիմակ եկաւ միացաւ Խաչատուրոյ հետ որ հետզհետէ լաւ բանակ մը կազմեց, պէտք եղած դրամով և զէնքերով։ Դուկասեանք այս կազմութիւնը տեսնելով ուզեցին համաձայնութեան մը գալ և թողուլ քանի մը գաւառներ և իշխանութիւնը բաժնել մէջերնին. Գիոժէն մերժեց, բայց Ատանայի քով տրուած ահեղ ճակատամարտն ևս ձախորդ գնաց։ Եւ իր զօրքերն իսկ բռնի հանեցին Գիոժէնի ծիրանին և կրօնաւորական զգեստ հագցուցին և ապա բանամահ եղաւ։

Սեբաստիոյ իշխանաց վերջին դէպքերը

Մանազկերտի աղէտին և քաղաքական պատերազմի ժամանակ և ետքը, Ատոմ և Աբուսահլ մնացի՞ն արդեօք և ո՞րչափ ատեն Սեբաստիա, և թէ կրցա՞ն պահել գոնէ իշխանութեան շուք մը, դժուար է բան մ'ըսել։ Հաւանականն այն է որ, այնուհետև որով և իցէ օրինակաւ, դիւրին չէր իրենց միայն երկայն ատեն ի Սեբաստիա, հետևաբար իշխանութիւն վարել ևս չէին կրնար. վասն զի յամի 1073, Ալփ Արսլանայ հրամանաւ, Սիւլէյման որդի Գութուլմշայ տիրեց միջերկրեայ և կանգնեց նոր սուլտանութիւն մը նախ ի Նիկիա (1074) և ապա Իկոնիոն. որով յայտնի է թէ Սեբաստիա, Ամասիա, Կեսարիա և ուրիշ քաղաքներ ինկած էին թուրք իշխանութեան ներքև։

Լաւ է ուրեմն համարել որ Սեբաստիոյ մեր երկու պետերը, ձեռքերնին ունեցած երկիրներովը գնացած են անցի Գագիկ Աշոտեան Թագաւորին, որ ազգին գլուխն էր, և ունէր տակաւին բաւական կալուածներ Կապադովկիոյ և Լիկանդիոյ կողմերն, և Գագիկ Աբասեան Ծամնդաւի տիրոջ քով։ Այս երկուքին իշխանութիւնը կը տարածէր յիշեալ դղեկին շուրջն ամուր տեղեր, Անտիտաւրոսի Հազարացուլ (Պին Պուղա) և Մեծիրան (Կէօվտէլի) ըսուած լեռներն և անոնց հովիտներն այժմու Տէրէնտէ, Կիւրիւ, Ազիզիէ, Թոնուզ և անոնց մօտակայ երկիրներն։ Յամին 1079, երբ Գագիկ Անեցին ձերբակալ ըլլալով Մանտալեայ (Պանտալէոնի) որդիներէն փակուեցաւ անոնց Կիզիստրա բերդին մէջ (Թոմարզայի մօտերը), անոր ազատութեան համար գումարեցան մէկտեղ Գագիկ Ծամնդաւի տէրն, Ատոմ և Աբուսահլ և ուրիշ իշխանք իրենց զօրքերովն և եկան պաշարեցին յիշեալ բերդը. մտադրութեան արժանի է որ Սմբատ սպարապետ կը կոչէ զիրենք Պարոն Ատոմ և Պարոն Աբուսահլ, յայտ առնելով որ անոնք իրենցմէ մեծագունի մը կը հպատակէին։ Երբ որ տակաւին կը պնդէին յիշեալ բերդին

պաշարումը, Փիլարետ որ Մարաշու, Ջահանի և Մելիտինեայ կողմերը զօրացած էր, սաստիկ սպառնալիք ղրկեց Պանտալէոնի որդւոց, որ աւելի վնասակար եղաւ, որովհետև անոնք խեղդեցին Թագաւորն և բերդն ի վար կախեցին, և ապա դուրսը թաղեցին. յետոյ Բանիկ անունով կտրիճ հայ մը տարաւ Պիզու և թաղեցին վանայ մէջ մեծ կոծ ընելով:

Եւ որովհետև այս Գագիկ որդի Աշոտոյ՝ համարուած և պատուած էր իբրև գլուխ հայ ազնուականութեան և ազգին, ոմանք կարծեցին թէ այնուհետև հայ իշխանք և գունդք ցանուցիր եղան և հետզհետէ անհետացան: Այլ ուղիղ չէ ասիկա, զի անկից ետև ևս մնացին նոյն տեղերն և մանաւանդ Սարի և Պիւրամի վերին ձորերն և հովիտներն, և Սենեքերիմի որդւոց (1080) և Գագիկ կարսեցիի մահէն (1081) ետև իրենց առաջնորդ ունէին Ռուբէն իշխանը Գագիկ Բ. Աշոտեանի ազգականն, որ հիմնադիր եղաւ Ռուբինեան հարստութեան որ դարեր տևեց:

Պէտք է յիշել նաև որ, այս ժամանակ Կիլիկիոյ մէջ հաստատուած էին շատ մը հայ իշխաններ: Անտիոքայ իշխեցին երեք Հայք, Խաչատուր, Վասակ և Փիլարետ: Առաջինն անցաւ ապա դուքս Անդրիէնի (Անտըրըն): Վերջինն, ինչպէս ըսուեցաւ առաջուց, կ'իշխէր Մարաշէն մինչև Եփրատ. և իր իշխանութեան ներքև ժողված էին շատ մը հայ իշխաններ, ինչպէս մեծ իշխանն Գող Վասիլ և անոր նիզակակից իշխանները: Մելիտինոյ իշխանը, Մարաշու իշխանապետը, Լամբրոնի, Պապեռոնի և Տարսոնի սեբաստոսները և Ծովք դղեկին իշխանն և ուրիշներ, որոնք տէր էին բերդերու և կալուածոց, և որոնք Փիլարետէն աւելի տևեցին, և ոմանք յաջորդներ ևս ունեցան, բայց մենք դառնանք Սեբաստիոյ պատմութեան:

Ատոմ և Աբուսահլ վախճանեցան յամին 1080 և այսպէս վերջ կը տրուէր Արծրունի պետաց կարգին ի Սեբաստիա զի երկու եղբարք մէկ տարուան մէջ մեռան, և կ'ըսուի թէ անճետ մնացին, այսինքն մեր այն ժամանակի պատմիչք բան մը չեն յիշատակեր իրենց յաջորդութեան նկատմամբ: Բայց հանդիպեցաւ ինձ տեսնել հայ ազգատոհմի մը ծննդեան ծառ, յորում այս Արծրունի տոհմը Պերոզի և Խոսրովի

սերունդներով կ'իջնէր մինչև մեր ժամանակները։ Կը ցաւիմ որ Կ. Պօլսոյ հրդեհ մը յափշտակեց իմ ձեռքէն այդ կարևոր տետրն ուրիշ գրուածքներու հետ։

Սեբաստիոյ Արծրունի իշխանութիւնը տևեց յիսուն (1021–1071) տարի Սենեքերիմի գալէն մինչև Ատոմայ իշխանութենէ զրկումն. կամ ըստ ոմանց 1011 - 1080 = 70 տարի, Սեբաստիա գալերնէն մինչև երկու եղբարց մահը։ Իրենց ազգականները առաւել ևս տոկացին Վասպուրականի մէջ Ամիւկ բերդն և Աղթամար և ծովակին մէջ գտնուած կղզիններն ապաստանած, և մինչև հնգետասաներորդ դարէն ևս անդին անցան։ Յունաց՝ Սեբաստիոյ կրկին գրաւումը երկայն չտևեց, զի շուտով ինկաւ Թուրքաց ձեռքը և Դանիշմէնները տիրեցին հոն։

ԳԼՈՒԽ Զ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆԸ· ՄԵԼՃՈՒՔ ՍՈՒԼԴԱՆՆԵՐՈՒՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ· ՏԱՆԻՇՄԷՆՔ

(1074–1174 ԿԱՄ 1188)

Ա. Սեբաստիոյ արքեպիսկոպոսները։ Բ. Սեբաստիա Մելճուք իշխանութեան ներքեւ. Տանիշմէն տոհմը կը տիրէ։ Գ. Տանիշմէն տոհմին իշխանաց յաջորդութիւնը եւ հայ արքեպիսկոպոսներն։ Դ. Սեբաստիոյ հայ եկեղեցւոյն դէպքերն այս ժամանակ (1179–1207)։

Ա. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Մետրապօլտութեանց վրայ խօսած ժամանակս դիտեցի որ Յովհաննէս Զ. պատմաբան կաթողիկոսի գրածն թէ Ներսէս Մեծի ժամանակ յամին 366 Վաղարշապատ ժողով մը գումարելով ուրիշ կարգադրութեանց հետ որոշած ըլլան նաև որ Սեբաստիա և Մելիտինէ մետրապօլտական աթոռ ըլլան Հայոց Մեծաց հայրապետին իշխանութեան ներքև, ո՛չ իրաւաբանական և ոչ պատմական ստուգութիւն ունի. չկայ ընաւ յիշատակ հայ և յոյն ուրոյն եպիսկոպոսաց։ Ներսէս Մեծի կեսարիա ձեռնադրուելու համար երթալու ատեն կը յիշատակուի գլխաւոր եպիսկոպոսաց կարգը նաև Գնել Մելիտինոյ։ Սակայն ասիկա Մեսրոպ Վ.է զատ ուրիշ մը չյիշեր։ Դարձեալ Քաղկեդոնի մէջ կը յիշուին Մելիտինոյ երկու մետրապօլիտներն, որոնք ստորագրած են այսպէս «կոստանդին

ողորմութեամբն Աստուծոյ եպիսկոպոս Մելիտինոյ Հայոց» և «Ռոբէոս, եպիսկոպոս Մելիտինոյ»: Երկուքն ալ յունածէս եպիսկոպոսներ են մին միւսին յաջորդը և ոչ աւելի: Ուստի հաւաստի է թէ մինչև տասներորդ դար Սեբաստիոյ և Մելիտինոյ գաւառները չունէին կրկին եպիսկոպոսներ առանձինն կեսարիոյ վեցերորդ պետութեան և առանձին Հայոց Մեծաց հայրապետին իշխանութեան ներքև: Տասներորդ դարուն վերջերը Խաչիկ Ա. կաթողիկոսը (980–992) իր բնիկ սահմանէն դուրս այլ և այլ քաղաքներու վրայ եպիսկոպոսներ ձեռնադրեց, որոնց կարգէն էին Սիոն Սեբաստիոյ և Յովհաննէս Լարիսի, զորոնք յիշեցի: Նաև Մելիտինէ նոյն ժամանակ կամ սակաւ մ'ետքը ունեցաւ եպիսկոպոս Մելիտինոյ. եղան ուրիշ քանի մ'եպիսկոպոսներ ալ նոյն կերպով:

Ինչպէս տեսանք Սիոն և Յովհաննէս ունեցան դժուարութիւններ յունածէս մետրապօլտէն, նոյն իսկ Բաղկեզոնի ժողովքն ընդունելնէն ետև, զի գոհ չէր հայ եպիսկոպոսի ներկայութենէն, որ նուազութիւն մ'էր իր իշխանութեան:

Սիոնէն ետև հայ եպիսկոպոսաց յաջորդութիւնը շարունակեց Սեբաստիոյ մէջ ինչպէս յունածէսներունը, բայց ասոնց թիւը շատ նուազ է հիմա թէ քաղաքին և թէ գաւառին մէջ: Մորոնի Սեբաստիա բառին մէջ Գումանվիլէն կը բերէ սանկ ծանօթութիւն մը:

« Արքեպիսկոպոսական գաւառ Հայոց Սեբաստիոյ. – արքեպիսկոպոսը կը նստի ի Ս. Նշան: – Վիճակակից աթոռք

Ա. Եպիսկոպոսն Ածպտերավանից Սեբաստիոյ մօտը

Բ. Անտրէսիկ, Սեբաստիոյ մօտը. եպիսկոպոսին բնակութիւնը Ս. Աստուածածնի վանքը

Գ. Ս. Հրեշտակապետի վանք Սեբաստիոյ մօտը »:

Սակայն պատմութեան մէջ անկեղծ ըլլալ պէտք է. արդէն ծանօթ է որ հայ եկեղեցւոյ կարգաց մէջ չէր գտնուէր ճշդիւ մետրապօլտական յօրինուածութիւն և եկեղեցական գաւառաց բաժանում. կը յիշատակուին յաճախ արքեպիսկոպոս, մետրապօլիտ, այլ անոնք պատուոյ և յորջորջանաց անուններ էին. և ոչ թէ կը նշանակէին իրաւունք ուրիշ գաւառակից

աթոռոյ վրայ, որոնք գոյութիւն չունէին։ Ուսպենսքի կը պատմէ Մարզպետական եպիսկոպոսին համար, որ մետրապօլիտ անուանուած էր, թէ «և նորա հպարտացեալ խնդրէր եպիսկոպոսունս ընդ ձեռամբ լինել, յորմէ երկուցեալ Հայոց ազգին, մի գուցէ այլ իմն բաժանումն լիցի, առին ի նմանէ զայն»։ Կրնայ ի բաց առնուիլ միայն Ագուանից կաթողիկոսն, որ ուրոյն դիրք մ'ունէր։

Ասոնք ընդհանրապէս ըսելէն վերջ հոս կը դնեմ Սեբաստիոյ եպիսկոպոսաց ցուցակն, որոնք նստան Ս. Նշանի վանքը.

Առաջինն է Սիոն որուն աթոռակալութիւնն եղած է	985-8
իսկ մահը	1029
Եղիսէ աշակերտ Գրիգորի Մագիստրոսի Լե. տարի	1029-1064
Խաչատուր Լ.Ա.	1064-1095
Յովսէփ ԽԲ.	1095-1117
Դաւիթ	1117-1136
Գրիգոր Ա.	1136-1169
Պսակ կամ Սահակ Ա.	1169-1186
Անանիա Ա.	1186-1207
Հոս կայ պարապ 81 տարի	1207-1288
Նիկողայոս	1288-1305
Ստեփանոս Ա.	1305-1328
Շմաւոն կամ Սիմէոն	1328-1329
Ստեփանոս Բ.	1369-1387
Հոս կայ պարապ 95 տարի	1387-1482
Յովհաննէս Ա.	1482-1513
Ղազար	1536
Մինաս Ա.	1550
Յակոբ Ա.	1576
Մինաս Բ.	1582
Պետրոս Ա.	1600
Մելքիսեդ Ա.	1612

Անդրէաս Ա.		1637
Ներսէս		1648
Անդրէաս Բ.		1654
Մելքիսեդ Բ.		1663
Սահակ Բ.		1666
Մելքիսեդ Գ.		1680
Անանիա Բ.		1692
Սահակ Գ.		1700
Աստուածատուր Թմբուկ		1701–1722
Առաքէլ		1747
Եղիազար		1754
Կարապետ		1774
Յակոբ Բ.		1799
Գրիգոր Բ.		1807
Կարապետ Վարդապետ	*Տեղապահ*	1803
Յովհաննէս »	*Տեղապահ*	1803
Թադէոս քանի մ'ամիս		1809
Յովհաննէս Բ. կարգի առաջնորդ		1809
ձեռնադրի եպիսկոպոս		1812
վախճանը (1831–1835)		1835
Կարապետ Կեսարացի		1869
Սա կը մնայ վանահայր Ս. Նշանի ցմահ		1877
Երկու տեղապահներ		1869–1870
Պետրոս Բ. Թահմիզեան առաջնորդ		1870
Ձեռնադրի եպիսկոպոս		1879
Վախճան նորա Ապր. 22		1907

Սեբաստիոյ արքեպիսկոպոսաց ցուցակը դրի մինչև հոս, որով կը տեսնուի թէ հայ եկեղեցւոյ մէջ յառաջագոյն չկար փոփոխական առաջնորդաց արդի սովորութիւնը։ Այս կը հաստատի նաև ուրիշ շատ թեմերու ընթացքէն, որոնց ոմանք աւելի կանուխ սկսած են փոփոխականութեան։

Բ. — ՍԵԲԱՍՏԻԱ ՍԵԼՃՈՒՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ· ՏԱՆԻՇՄԷՆ ՏՈՀՄԸ ԿԸ ՏԻՐԷ

Տուղրիլ Բէկն թագաւորեց Պարսից 1038–1064· *ասոր ժամանակ իր իշխաններն և զօրավարները, Մեծ Հայաստանը աւերելէն ետև անցան նաև Եփրատն և արշաւել սկսան փոքր Հայք և փոքր Ասիոյ մերձակայ գաւառները։ Սմբատ կը պատմէ որ յամին* 1055 (*ուրիշը* 1058) *Դինար անունով ամիրա մ՚աւերեց Մելիտինէ քաղաքն և անոր գաւառը։*

Յաջորդ տարին 1059, *Սամուխ, Ամուրքափր և Գիճաղիղ (Կոլուսար) աւերեցին և աւարեցին Սեբաստիա քաղաքն և անոր շրջակայ աւաններն և գիւղերը։ Թող այն զանազան արշաւանքներն որ ըրաւ Սլար Խօրասան Տուղրիլի զօրաց սպարապետը։*

Ալփ Արսլան Թագաւորելէն (1063–1072) *ետև, Աւշէն ամիրան յամին* 1066 *յարձակեցաւ Սև Լերան կողմերը, շատ մը վանքեր կրակի տուաւ և ըրաւ մեծ կոտորած և աւարառութիւն։ Անոր ետևւէն եկաւ Կիւմիշ Թէկին (զոր Ուռհայեցին Գումէշ Տիկին կ՚անուանէ) ամիրան, աւրեց աւրշտակեց Հինը–Մանսուրի երկիրն և տեղւոյն իշխաններն սպաննեց։ Եւ* 1070*ին Խրուճ ամիրան ասպատակեց Սեբաստիոյ գաւառն և շատ վնաս հասուց քաղաքին և անոր շրջակայ սահմանաց։*

Մանազկերտի ճակատամարտէն (1071 *Օգոստ.* 26) *և Դիոժէնի բռնամահ ըլլալէն ետև, Ալփ Արսլան հրաման ըրաւ (ինչպէս կը գրէ Միքայէլ Ասորի) Գուլթուլմիշի որդւոյ Սուլէյմանի զինել փոքր Ասիոյ միջին գաւառներն. և նա միջերկրեայ շատ մը տեղերուն տիրելով, իր իշխանութեան աթոռը դրաւ Նիկիա, որ ապա փոխադրեցաւ յԻկոնիոն։ Սուլէյման առաջին սուլդան եղաւ Ռումայ Սելճուքներուն և թագաւորեց* 1074–1085։

Նոյն ժամանակներն Ալփ Արսլան ղրկեց դէպ ի Կապադովկիա ուրիշ էմիր մը Կիւմիշ Թէկին անուն, որ յիշուեցաւ սակաւ մի յառաջ

և նուաճեց Սեբաստիան և Կեսարիան և եղաւ հիմնադիր Կապադովկիոյ և փոքր Հայոց Թուրքմէն իշխանաց, որոնք տիրեցին նոյն կողմերն ամբողջ դար մը, և ըստ Միքայէլի Ասորւոյ 122 տարի։

Տանիշմէն տոհմին արմատն էր Թիլու անունով Թուրքմէն իշխանաւոր մը, որ գիտնական էր և իր աշխարհին մէջ դպրոցի մը վարժապետ ուստի և կը կոչուէր Տանիշմենտ այսինքն Իմաստուն և Վարդապետ։ Ասոր որդին էր Մուհամմէտ որ կ'անուանէր Կիւմիշ Թէկին, Ալփ Արսլանի արքունեաց մէջ Հէճպ (= Սենեկապետ, Մապէյնճի) և նոյն արքային զօրավարաց կարգն էր։ Եւ շատ մը քաջագործութենէ ետև հրամանաւ Ալփ Արսլանայ, (կամ այլոց ըսածին նայելով, Մէլիք շահին՝ որ անոր յաջորդն էր) ստացաւ Սեբաստիոյ և անոր շուրջ եղած տեղերուն իշխանութիւնը, զոր Մելիք շահին յաջորդաց ժամանակ շատ ընդարձակեցին Կիւմիշ Թէկին և իր տեղը նստողները՝ տիրելով Կեսարիոյ, Ծամնդաւի, Էլպօսթանի, Մալաթիոյ՝ մինչև Եփրատ, Ամասիոյ և ուրիշ քաղաքներու՝ մինչև Սև ծով։

Տանիշմէն տոհմին Սեբաստիոյ իշխելուն սկիզբն է յամին 1072, Մանազկերտի ճակատամարտին երկրորդ տարին։ Ոմանք կ'ուզեն յապաղել մինչև յամն 1085. իսկ Սեբաստիոյ պատմութիւնը կը յետաձգէ մինչև 1100 (Շխթ.) որ ստոյգ չերևիր։ Այս իշխանութիւնը տևած է հարիւր տարիէն աւելի, իսկ Միքայէլ Ասորիին խօսքին համեմատ 122 տարի։

Ոմանք տոհմին նահապետը հայ կը համարին ազգաւ, որ ապա վարժեր է Մահմէտի օրինաց, ինչպէս կը վկայեն Միքայէլ Ասորի, Վարդան և ուրիշներ. սակայն աւելի հաւաստի է ինչ որ գրուեցաւ յառաջ։

Մեր պատմագիրներն (Ուռհայեցին, Գրիգոր և Վարդան) համեմատելով ըստ իմիք Ապուլ Ֆարաճ ասորի ժամանակագրի հետ, Տանիշմէն կամ Դանիշման տոհմին իշխանաց կարգը կը գտնենք հետևեալ կերպով.

Ա. Կիւմիշ Թէկին որդի Տանիշմանի

Բ. Էմիր Ղազի որդի Կիւմիշ Թէկինայ 1104

Սա կ'առնու Մալաթիան 1124

Գ. Մուհամմէտ կամ Մահմուտ որդի Էմիր Ղազիի կը յիշատակուի 1136.

—Պալտուք անոր եղբայրը Սամոսատի մէջ

Դ. Եաղուպ Արսլան որդի Մահմետայ կը յիշատակուի 1154

Ե. Ալիփաս կամ Ալփ Արսլան. գուցէ նոյն է առաջնոյն հետ (*Վկայ. Հայ. Յուլ* 28)

Ինչպէս յայտնի կը տեսնուի այս ցուցակը պակասաւոր է և չկայ ճշտութիւն իշխանաց յաջորդութեան ժամանակներուն, ե՞րբ գահակալեր են և ո՞րչափ ատեն և թէ ի՛նչ ըրին, ի՛նչ գործ տեսան մանրամասն կարելի եղածին չափ։

Ապա ձեռքս անցաւ աւելի ճիշդ ցուցակ մը Տանիշմէն պետաց, զոր կը դնեմ հոս երկու կերպով.

Ա. Մուհամմէտ – Իսմայէլ – Պէն – Տէնիշմէնտ Կիւմիշ – Թէկին 1072.

1085 † 1106

Բ. Միր–Ղազի 1106 † 1135

Գ. Մէլիք Մուհամմէտ † 1143

Դ. Եագուպ Արսլան 1143 † 1164

Ե. Իսմայէլ † 1173

Զ. Տըսուլուն (*Տանուն*)

Մի և նոյնը դարձեալ այսպէս.

Ա. Մուհամէտ–Իսմայէլ–Պէն–Տէնիշմէնտ 1085-1104

Բ. Ղազի († 1138) | *Սոնքոր* (*Սանղուր*)

Գ. Մէլիք Մուհամէտ Տօլաթ։ (1145 † 1151) | *Դ. Եագուպ Արսլան։* (1145 † 1164) *Ա. Ա.*

Ե. Իսմայէլ † 1173 | *Զ. Տըսուլուն* (*Տանուն*)

Հոս Իսմայէլը նոյն է Ալիբաս կամ Ալփ Արսլանայ հետ։

Գ. — ՏԱՆԻՇՄԷՆ ՏՈՀՄԻՆ ԻՇԽԱՆԱՑ ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ

Ա. – Մուհամմետ Խանայէ Կիւմիշ Թէկին

Սա Թիլու Տէնիշմէնտին որդին էր, և հիմնադիր եղաւ Կապադովկիոյ և Փոքր Հայոց Թիւրքմէն պետաց. իրենց մայրաքաղաքն էր Սեբաստիա. բայց և Մալաթիա նշանաւոր էր: Մեր պատմագիրներն Դանիշման կ'անուանէն զինքն և Բիւզանդացիք աղաւաղութեամբ Տանըշման հօրն անուամբ, փոխանակ գրելու Պէն–էլ–Դանիշման:

Իր Սեբաստիոյ իշխանութեան սկիզբը կը դնեն ոմանք յամին 1085. բայց որովհետև իրենց նոյն կողմերը տիրելն եղաւ հրամանաւ Ալփ Արսլանի Մանազկերտի ճակատամարտէն ետև, ուստի 1072էն աւելի չկրնար յապաղել. զի նոյն տարին մեռաւ Ալփ Արսլան: Նոյնը կը հաստատէ նաև Միքայէլ Ասորի, թէ «Ամիրա մի պարկեշտաձև և աղօթարար և քաղցրաբարոյ եկն զօրօք ի Կապադովկիա և հրամանաւ Ալփ Արսլանայ էառ զՍեաստ և զկեսարիա, տիրեաց և մեծացաւ, և այս եղև սկիզբն Դանշմնայ, զի այս է անուն նորա, քանզի յորժամ ածան տղա զաւաջին ի թեաալացւոց գերութեամբ ուսան զօրէնս Տաճկաց. և եղև այս Դանշման յոյժ նախանձաւոր այնմ . . դէնի »: Ասկէց օժանդակուելով նաև մերոնք, կը համարին թէ քրիստոնէութենէ և հայութենէ դարձած է նա:

Այս իշխանը զոր Ուռհայեցին կ'անուանէ Տէր Սեաստու և ամենայն Հոռոմոց աշխարհին , յամին 1100 բազմաթիւ զօրքով կը դիմէ Մալաթիոյ վրայ. և երեք տարի խիստ կը նեղէ զայն պատերազմներով և կ'այրէ անոր ամրութիւնները: Փիլարետի օրերէն կը տիրէր հոն հայազգին Գաբրիէլ իշխան, որ աներ կամ քենեկալ էր Թէոդորոս Կիւրապաղատի որդւոյ Հեթմոյ, որ առաջ իշխան էր Եդեսիոյ: Թէոդորոս

աներ էր Պատուէն թագաւորին Երուսաղէմի ։ Մալաթիոյ պաշարումը երթալով կը սաստկանար, և Գաբրիէլ չյուսալով երկայն ատեն դիմանալ աղերս ըրաւ Անտիոքայ Պոէմոնտ կոմսին խոստանալով, որ Մալաթիան իրեն կը յանձնէ։ Իշխանն իր հետն առնելով Ռիշար կոմսը շուտ մը քալեց Տանիշմէնտի որդւոյն վրայ՝ առանց պէտք եղած զգուշութեան, ուստի և ինկաւ իրեն դէմ լարուած դարանին մէջ. իր զօրքերը յաղթութեան և ջարդուեցան ինչպէս նաև հայ օժանդակ գունդը. Պոէմոնտ և Ռիշար գերի ինկան, զորոնք երկաթի կապանքով տարաւ Նիկսար և հոն բանտարկեց. բանակին մէջ եղող երկու հայ եպիսկոպոսունք, Կիպրիանոս Անտիոքայ և Գրիգոր Մարաշու ինկան սուսերահար։ Իսկ Գաբրիէլ Մալաթիոյ իշխանը ամէն նեղուելով և ճարը հատած յանձնեց քաղաքը Տանիշմէնտի որդւոյն ձեռքն, որ շատ լաւ խնամ տարաւ քաղաքացւոց, հաց և անասուն հասցնելով իրենց և այսպէս նորէն շէնցաւ քաղաքը լաւ կերպով։

Քրիստոնեայք քիչ մը ետքը միջնորդութեամբ Գող Վասիլ իշխանին, գնեցին Պոէմոնտն և Ռիշարը հարիւր հազար դահեկան փրկանք վճարելով, որուն, տասն հազարն ինքը Վասիլ շնորհեց։

Մալաթիան առնելէն երկու տարի ետև՝ մեռաւ Մուհամմէտ—Պէն—Տանիշմէնտ որուն վրայ այսպէս կը գրէ Ուռհայեցին. « Յայսմ ամի մեռաւ (Պէն) Դանիշմանն մեծ Ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի, և էր ողորմած ի վերայ հաւատացելոց Քրիստոսի. և եղև սուգ մեծ ի վերայ քրիստոնէից որք էին ընդ ձեռամբ նորա։ Եւ մնաց իւր երկոտասան որդի և կալաւ զաշխարհն աւագ որդի իւր, որ ասի Խազի և զայլ եղբարսն սպանանէր գաղտնաբար »։ Սակայն անոնցմէ մին որ Սանղուր կամ Սոնքոր կ՚անուանէր, Մալաթիոյ իշխան եղած էր. որուն վրայ քալեց Անատոլուի Սելճուք սուլթանը, Գըլըճ Արսլան, և անոր ձեռքէն առաւ նոյն քաղաքն և իրեն սեպհականեց զայն։

Այս իշխանին տերութեան ժամանակ յամին 1095, *վախճանեցաւ խաչատուր արքեպիսկոպոս տասն և հինգ տարի Ատոմայ և Արուսահլի*

մահուանէն ետև, և թաղուեցաւ Ս. Նշանի վանքն։ Իր տեղը դրին ազգին իշխանները (Պատմ. Սեբ.) Յովսէփ արքեպիսկոպոսն. այս ինքն առաջարկեցին և կաթողիկոսն օծեց։ Նոյն պատմութիւնը Գանիշմանի իշխանանալը առոր ժամանակ կը դնէ (յամին 1100), և թէ Յովսէփ արքեպիսկոպոս շատ նեղութիւն կրեց. կ'ըսէ նաև որ այս իշխանը հայ մ'էր և Պարսից թագաւորէն ընդունեցաւ իշխանութիւն կուսակալութեան Սեբաստիոյ և յունական կողմանց, (թէպէտ տիրած տեղերը Կապադովկիա և Փոքր Հայք էր, քիչ բացառութեամբ) և թէ «տառապեալ վշտացուցանէր զազգս Հայոց ի Սեբաստիա և ի սահմանս նորին, և յետ չորից ամաց սատակեցաւ»։ Բայց Ուռհայեցւոյն գրածը, զոր վերը յիշեցինք, բոլորովին առոր հակառակը կը վկայէ։

Բ. — Էմիր–Ղազի–Պէն–Մուհամմէտ

Յամին 1105–6 Մուհամմետայ տասներկու որդւոց երիցագոյնն Էմիր Ղազի նստաւ հօրն աթոռը՝ ինչպէս կը գրէ Վարդան։

Էմիր Ղազիի գահակալելէն երկու տարի ետքը ճակատամարտի մը մէջ սպանուեցաւ Գըլըճ Արսլան, և թողուց չորս որդիք՝ Մաքսուտ, Մէլիք–Շահ կամ Շահին–Շահ, Արապ և Տօղ Արսլան կամ Տողրուլ Արսլան։ Մահէն առաջ բաժնեց իր տէրութիւնը որդւոցը մէջ. Մաքսուտ թագաւորեց ի Կոնիա, Տօղ Արսլան առաւ Մալաթիան, կ'երևի թէ այս իշխանի անուամբ՝ հին Բանտարէա դաշտը Հէրէկի քովերն անուանեալ է Տօղանլը, ամէնօրէն Տաշ–օվա։

Այս ժամանակները Սեբաստիոյ իշխանը Էմիր Ղազի սպանեց Արապն, զի կ'ուզէր արգելուլ որ նա չառնէ իր հօրն իշխանութեան, որով անկէց ետև թշնամութիւնը պակաս չեղաւ Սելճուք և Դանիշմէնտ տուներու մէջ։

Յովսէփ արքեպիսկոպոս 1104էն վերջը հանդարտ վիճակ մ'ունեցաւ (Պատմ. Սեբ.) և վախճանեցաւ յամին 1117 և թաղեցաւ Ս. Նշանի

վանքը։ Տեղը նստաւ յամին 1118 Տ. Դաւիթ արքեպիսկոպոս, որոյ ժամանակի ինչ ինչ կարևոր դէպքերու վրայ ետքէն՝ իր տեղը պիտի գրենք։

Յամին 1124 էմիր Ղազին առաւ Մալաթիան երբոր լսեց թէ մեռեր է Պալակ Օրթոքեան, որուն ձեռքն ընկած էր նոյն քաղաքը տարիներէ ի վեր, և անզօրըրացուց բնակիչներն, որոնք շատ նեղութիւն կը կրէին Պալակէն։

Ասիկա Ուռհայեցին ուրիշ կերպով մը կը պատմէ։ «Յայսմ ամի (ՇՀԳ. 1124), կ'ըսէ, գայր ի վերայ Մելտինոյ Խազի ամիրայ Սեաստոյ որդի Դանիշմանին, սաստիկ պատերազմաւ խսարեաց (պաշարեց) զքաղաքն մեծ նեղութեամբ. և կացեալ ի վերայ քաղաքին զամիսս վեց, մինչև ի սաստիկ սովոյն նեղեցաւ քաղաքն և բազումք մեռան, և անճարացեալ ետուն զքաղաքն ի Խազի, և կին Խլիճ–Արսլանայ տէր քաղաքիս ելեալ գնաց ի Մշարն»։ Եւ Խազիի որդին Մահմուտ կուսակալ նստաւ ի Մալաթիա։

Այն ատեն խալիֆան, որ կ'անուանէր Ապու–Մանսուր–Մուսթէշիտու Պ'իլլահ, արքայական թագ ղրկեց և անուանեց զինքը Մէլէք–Ղազի թագաւոր Հիւսիսոյ։ Եւ Յունաց Եովանէ թագաւորն այսինքն Յովհաննէս Կոմնենոս կայսրը (1118–1143) Թուրք ասպատակաւորներուն ձեռքէն առաւ Կաստամունին, որուն տէրեր էին անոնք և հոն պահապան զօրք թողլով՝ գնաց Կ. Պոլիս։ Կայսեր մեկնելէն ետև Տօրիման՝ իմա Տէնիշմէնտ Կապադովկիոյ տէրը՝ յարձակեցաւ առաւ նոյն քաղա՛քն և յոյն պահակները սրէ անցուց։

Երբ այս լուրը Կ. Պոլիս հասաւ, մեծ ցաւ եղաւ ամենուն և ինքնակալը հզօր բանակով քալեց դէպ Կաստամունի, զի նոյն ժամանակ իրարու հետ աղէկ չէին Մէլէք–Ղազի և իկոնիոյ Մաքսուտ սուլտանը, զոր կայսրն իր կողմը շահեցաւ։ Տանիշմէնտ տեսնելով որ կարելի չէ մրցիլ երկու զօրաւոր թշնամեաց՝ կայսեր և Մաքսուտայ դէմ, ամէն ջանք ընելով, սուլթանն իր կողմը դարձուց։ Այն ատեն Յովհ. Կոմնենոս զինքն այսպէս լքուած տեսնելով յանկարծ իր դաշնակցէն, ձգեց այն գործն և թողուց գնաց Բիւթանիա։

Բայց ձմեռն անցածին պէս կայսրը դարձաւ Պափղագոնիա և պատնէշ պաշարմամբ առաւ Գանգրա (Չիանղըը) քաղաքը՝ Գաղատիոյ սահմանաց մօտերը, և պահպանութեան համար երկու հազար զօրք թողլով դարձաւ Կ. Պօլիս. իսկ Թուրքերն աւելի մեծ զօրութեամբ եկան և գրաւեցին Գանգրա քաղաքը։

Մեռաւ Մէլէք Ղազի յամին 1135 քսան և ինը տարի տիրելէն ետև, և յաջորդեց իրեն որդին։

Գ. – Մէլիք–Մուհամմէտ կամ Մահմուտ–Պէն–Ղազի

Ծակաւին հռչակուած չէր Մէլէք Ղազիի մահն և ահա խալիֆայն Էլ Ռաշիտ Կայամ–Լատին (Խիաթատին) նոյն տարին դարձեալ պարգևներ ղրկեց իրեն՝ չորս սև ալամ (դրօշ), վզնոց, ոսկի շղթայ, ոսկի գաւազան մը, նուագարաններ՝ թմբուկ և փող։ Երբ բերին յիշեալ նուէրները, զինքը մեռած գտան, ուստի և տուին այն պարգևները իր որդւոյն և յաջորդին՝ Մահմուտին։ Մտադրութեան արժանի է խալիֆայէն շնորհուած պատիւն և պարգևները յանձնելու համար պատգամաւորներու ի գործ դրած կերպը. պարանոցը ձգեցին ոսկի շղթայ, և ոսկեղէն կապանք անցուցին ոտքերն, և ցպով զարկին տասն և երկու հարուած, անով իր հպատակութիւնը նշանակելու համար. և «էր սա, կ՚ըսէ Միքայէլ Ասորի, այր պարկեշտ ի վարս Տաճկաց, գինի ոչ ըմպէր և անօրրասէր ոչ գնայր, սակայն ատէր զքրիստոնեայս և նեղէր զնոսա»։

Իր իշխանութեան երկրորդ տարին, այս է յամին ՇՁԵ (1136). Ամր–Ղազիին որդին Մահմուտ սուլդան (ինչպէս կը գրէ Ուռհայեցին) շատ զօրքով դիմեց Մարաշու երկիրներն, և եկաւ Քեսուն (հէօսն–գեղեցիկ) քաղաքին վրայ, որ այն ատեն Պոռուէն լատին իշխանին ձեռքն էր. այրեց՝ աւերեց գիւղեր և վանքեր այգեկութի ժամանակ, վերջը վեց օր պաշարեց Քեսունը, քաղաքին ջուրը կտրեց, բուրաստանները ջարդակոտոր ըրաւ, և չորս դին ասպատակեց։ Ներսն եղող քաղաքացիք

սաստիկ վախցան, բայց ետքէն մէկզմէկ քաջալերելով որոշեցին դէմ դնել մինչև վերջը, ետքէն Մահմուտ լուր առնելով՝ թէ Յովհաննէս Բ. Կոմնենոս կայսրը պաշարելոց օգնութեան պիտոր գայ, այրեց Կարմիր վանքն, ուր թաղուած էին Գրիգոր Վկայասէր և Վասիլ իշխանը, դարձաւ գնաց իր երկիրն: Եւ անկէց ետև շատ զօրացաւ Մահմուտ, իր ձեռքն ունենալով Կապադովկիոյ և փոքր Հայոց մեծ մասն և ուրիշ մերձակայ տեղեր:

Մահմուտ սուլտան, ինչպէս ըսի, կ'ատէր քրիստոնեաները, հետևաբար նահատակեց շատ հայեր Սեբաստիոյ մէջ ի կենդանութեան Դաւիթ արքեպիսկոպոսի: Յառաջ կար Սեբաստիա իշխանաւոր մը հայազգի Դաւիթ անունով, որ ունէր հինգ որդի, Արև, Գոհարինէ, Ռաստիոս (Եւստրատիոս), Նամիղէս և Տունկի. Թաթարներն երբ Սեբաստիա յարձակեցան, գերի բռնուեցաւ Դաւիթ և իր երեց որդին Արև. Դաւիթ ուրացաւ Քրիստոսի հաւատքը: Բայց իր բարեպաշտ կինը հաստատուն մնաց իր հաւատքին վրայ, և կրթեց իր չորս որդիքն, որոնք երբ չափահաս եղան, անոնցմէ իրեքը զինուոր գրուեցան ամիրային (զոր կը կոչէ վկայաբանն Ալիբաս և թոռնորդի Մուհամմէտ առաջին Տանիշմէնտի, որ ստոյգ չէ, և ոչ Ալիբաս անունով իշխան մը կայ այս տոհմին մէջ) իրենց քաջութեան համար. իսկ Ռաստիոս կրօնաւոր եղաւ Ս. Նշանի վանքը: Բայց ետքէն չորս եղբարց վրայ չարախօսութիւններ ըլլալով՝ բերին զիրենք ամիրային առջև, որ տուաւ իրենց խոստմունքներ և խրատներ, որ ուրանան Քրիստոսի հաւատքն՝ և տեսնելով թէ յանձն չեն առնուր տեսակ տեսակ տանջանքներով չարչարել տուաւ զիրենք, և ապա կտրեցին գլուխնին Մարգ–ճախին ըսուած տեղը, Քառակուսի ճանապարհին մօտն, և Սեբաստիոյ մէջ տօն դրին իրենց համար Հրոտից ամսոյն, Գոհարինեանք անուանելով, զի մեծին անունը Գոհարինէ էր: (Յուլ. 28. Պատմ. Սեբ. եւ Հ. Միքայէլ Զամչեան):

Հոս մտադրելու կէտն այն է որ՝ Սեբաստիոյ նաև Մահմեդական իշխանք Հայոցմէ զօրք կ'առնուին. և՝ այս ոչ միայն Տանիշմէնտներու ժամանակ՝ այլ և ետքը. զի Թիմուրլէնկի պաշարման ատեն կային

չորս հազար հայ զօրք Սեբաստ քաղաքին մէջ։ Գոհարինեանց նահատակութիւնը կը դնէ Սեբ. Պատմ. ՇՁԵ. 1136*ին։ Իսկ Դաւիթ արքեպիսկոպոսին մահն հանդիպեցաւ յամին ՇՁԷ.* 1138. *որուն նոյն տարին յաջորդեց Գրիգոր Ա. զոր կը գովէ Պատմ. Սեբ. անուանելով հանճարեղ և կորովարան. ասոր ժամանակ նահատակեցաւ Թէոդորոս աբեղան, որուն վրայ իր տեղը։*

Մէլիք Մահմուտ փոքր առ փոքր իր տէրութիւնն ընդարձակած էր դէպ ի Միջագետք և դէպ ի Հայաստան, առեր էր նաև Կապադովկիոյ Կեսարիա քաղաքն, և հզօր իշխան մ'եղած էր, և իր բանակն Արևելքի մէջ ահագոյնն էր։ Մի և նոյն ժամանակ Տրապիզոնի յոյն կուսակալը Կոստանդին Գաբրաս ապստամբեր և ինքնագլուխ եղեր էր։ Յովհաննէս Կոմնենոս կայսրը պատրաստուեցաւ դիմել անոնց վրայ, և նախ որոշեց ապստամբը նուաճել. ուստի 1139, *ձմեռուան սկիզբը Պափղագոնիա գալով, Սև ծովուն եզերքէն առաջ քալեց։ Նէոկեսարիոյ մօտ երկու բանակները բաղխեցան իրարու հետ. կայսերականք յաղթող հանդիսացան, բայց ինքնակալը չկրցաւ անկէ օգուտ մը քաղել, և ժամանակ մը Նէոկեսարիան պաշարելու զբաղելով, եաքէն հարկեցաւ թողուլ ամէն բան և դառնալ Կ. Պօլիս* 15 *Յունուարի։*

Մէլիք Մահմուտ կամ Մուհամմէտ մեռաւ յամին ՇՂԲ. 1143, *և իր եղբայրը յաջորդեց իրեն։*

Դ. — Եաքուպ-Արսլան-Պէն-Ղազի

Հայ վկայաբանութեան մէջ կը կոչուի ամիրա Ալիբաս կամ Ալբ-Ասլան, և անոր ժամանակը կ'ըսեն թէ նահատակուած են Գոհարինեան եղբարք (1138)։

Իկոնիոյ սուլտան Մասուտ Զ. (1120–1155) *իր դուստրը տուաւ կնութեան Եաքուպ Արսլանի, և անոր օժիտ Անկիւրիա և Ամասիա քաղաքներն։ Ասոր համար հպարտացաւ և խրոխտանօք ուզեց Կիլիկիա*

մտնել, և վրէժխնդիր ըլլալ Թորոս իշխանին և Հայոց, ինչու որ իր աներոջ երկիրն արշաւեր էին. առաջ քալեց այլ չկրցաւ միջամուխ ըլլալ, ըստ որում Հայք կիրճերուն մէջ դարան դրած էին. վերջապէս ինքզինք քաջալերելով յանդգնաբար առաջ քալեց, և լաւ պարտութիւն մը կրելով ետ դարձաւ ամօթով։

Յայսմաւուրքը Յուլ. 22ին կը պատմէ որ այս ժամանակ նշանաւոր էր Սեբաստիոյ մէջ Թէոդորոս աբեղան՝ Գրիգորիս Գ. կաթողիկոսին ատեն. որդի էր Գոհարինեայ վկայի, ու կրօնաւորած Ս. Նշանի վանքն։ Ոմանք ամբաստանութիւն ըրին իր վրայ Ալիբաս ամիրայի (Եաքուպ Արսլանի) Սեբաստիոյ, որ իր առջև կոչեց զինքն և յորդորեց որ թողու քրիստոնէութիւնը, ապա թէ ոչ տանջանք և բանտ կայ զինացը։ Թէոդորոս պատասխանեց, ես քրիստոնեայ եմ և աբեղայ և կը պաշտեմ զԱստուած Հայր և զՈրդի նորա միածին և զսուրբ Հոգին, և զայլ հաւատս կամ զկրօնս չկարեմ առնուլ յանձն։ Բարկացաւ ամիրան, հրամայեց, որ հարկանեն զինքն, և բանտ դնելէն ետև, շատ տեսակ չարչարանքներով հանեց անկէց և բռնութեամբ տանիլ տուաւ զԹէոդորոս իրենց աղօթատեղին, և դահիճները սրերնին մերկացնելով կը ստիպէին որ ներս մտնէ, և երբ որ չի մտաւ, աւելի սաստիկ տանջանքներով նորէն տարին բանտ ձգեցին։

Երբոր այս բաները լսեց Սեբաստիոյ Գրիգոր արքեպիսկոպոսը, մխիթարական թուղթ գրեց վկային և քաջալերեց զինքն, որ յօժարութեամբ մեռնի Քրիստոսի համար։ Ապա ամիրայն յանձնեց զինքը Թաոոս դատաւորին ձեռքն, որ քրիստոնէութենէ դարձած էր, և անիկա շատ մը սպառնալիքներէ ետև, տեսնելով որ երանելին անշարժ է իր հաւատքին վրայ, հրաման ըրաւ որ տանին սպաննեն։ Իսկ դահիճները գետինը ձգեցին զինքն և աքացի և բռնցի զարկին և ապա մարմինը երեք կտոր ըրին սրով, և այնպէս թաւալելով իր արեան մէջ՝ աւանդեց հոգին յամին ՇՂԸ. (1149) Աստուծոյ ձեռքը։ Նոյն ատեն Սեբաստացի հայ իշխան մը Սարգիս անունով, ամիրային նուէրներ մատուցանելով, առաւ մարմինն և տարաւ թաղեց Ս. Նշանի վանքը, Ս. Կարապետի եկեղեցւոյ

դասին ետեւն և գրել տուաւ շիրմին՝ վրայ, թէ «Այս է տապան հանգստեան սրբոյն Գոհարինեայ որդւոյն Թէոդորոս Նահատակին։ Ի թուին 1826 *փոխադրեցան նշխարքն Աստուածածնի եկեղեցին նոյն վանաց մէջ։ (Պատմ. Հայ. և Պատմ. Սեբաստ.)։*

Նոյն օրերը մեռաւ Մասուտ, և իր տեղը թագաւորեց Գըլըճ–Արսլան Բ. (1156–1188, *մեռաւ* 1192), *որ երկու եղբայր ունէր, մէկը թոյնով սպաններ, իսկ փոքրիկը Շահն–Շահ, որ Տանիշմէնտ տան փեսայացեր էր, փախաւ գնաց ամրացաւ Եւքսինեան ծովուն եզերքը գտնուած բերդերէն մէկն, որ իր հայրն ի կենդանութեան տուեր էր իրեն՝ մահէն առաջ։ Սպաննեց Գըլըճ–Արսլան նաև իր իշխանաց և աւագանւոյն շատերն։*

Երբոր տեսաւ անոր այս գործերը մեծ ամիրայն Եաքուպ Արսլան, որդի Ամիր – Ղազիի, որ տէր էր Սեբաստիոյ և աշխարհին Գամրաց (ինչպէս կը գրէ Գրիգոր Երէց), այս գործերուն չի հաւնեցաւ, և պատերազմ բացաւ անոր դէմ. ժողովեց բազմաթիւ ձիաւոր զօրքեր և արշաւեց Լիկանդոն գաւառ. քրիստոնեաները հանեց անկէ և տարաւ իր երկիրն, և այս մեծ խոհեմութեամբ զի Հայեր էին անոնք՝ յարմար վաճառականութիւնը զարգացնելու իր պետութեան մէջ, և հաւատարիմ զինուորներ. առաւ նա Լարիս ամրոցը։ Հալէպի և Մուսուլի սուլթանը Նուր – Էտտին օգնական եղաւ իրեն, և առաւ Փարզմանն և Այնթապ, որոնք կը պատկանէին Իկոնիոյ սուլթանին։ Գըլըճ–Արսլան պարապ չի կեցաւ, ինքն ևս բազմաթիւ զօրք ժողովեց, և երկու կողմը զարնուեցան իրարու հետ, և ապա առ երեսս խաղաղութիւն ըրին, և դարձան գնացին իրենց աշխարհները։

Միխայէլ ասորի կը պատմէ թէ Գըլըճ–Արսլան (Խլիճ–Ասլան) և Գար–Արսլան (Խար–Ասլան) տէրն Սեւաստոյ իրարու հետ կը վիճէին, և Պարոն Ստեփանէ (Կիլիկիայէն) դուրս ելլելով՝ կ'աւերէր երկուքին երկիրները։ Սակայն ինչպէս յայտնի է Սայֆէտտին–Գարա–Արսլան Նըսնի–քէյֆի իշխանն էր Միջագետաց մէջ, և ոչ եթէ Սեբաստիոյ, ուր կ'իշխէր նոյն ատեն Եաքուպ Արսլան։

Կը պատմէ եւ Գրիգոր երէց թէ Սելճուքներուն և Տանիշմէնտայ մէջ եղած խաղաղութիւնը չի տեւեց երկու ամսէն աւելի: Եաղուպ Արսլան յանկարծ արշաւեց Ջահանայ երկիրը, մտաւ գաւառին Ապշասթա մայրաքաղաքն, առաւ այն տեղի բնակիչներն՝ եօթանասուն հազար հոգի, և տարաւ զանոնք իրեն երկիրն. որովհետև Գըլըճ–Արսլան այս արշաւանքին լուրն առնելով կու գար իրեն վրայ, բայց չի հասնելով գնաց մտաւ Լիկանդոն որոնք իրեն հպատակեցան: Իսկ Եաղուպ–Արսլան Ջահանու բնակիչներն ամուր տեղեր դնելով, նորէն պատերազմին ասպարէզը գիմեց, և հասաւ բանակեցաւ սուլթանին դէմ ճակատ առ ճակատ. և թէպէտ երկու կողմէն պատրաստ էին զարնուելու, սակայն մահմեռականաց առաջնորդներն աղերսելով խափանեցին զայն. գի նոյն ժամանակները (1156) Թորոս Բ. հայ իշխանապետին եղբայրն Ստեփանէ կ'ասպատակէր անոնց երկիրն: Միքայէլ ասորի եւ կը գրէ թէ Գըլըճ–Արսլան իրեն բարեկամ ընելով Տանունն (այսինքն Տըրլուն, որդի Մէլիք Մուհամմէտի եղբօր Եաղուպայ՝ որ կեսարիա կը նստէր) կը խախտէր Դանիշմանի տունը:

Միւս կողմէն նաև Նուր–Լտտին դարձեալ մտաւ Իկոնիոյ սուլթանին երկիրն, որ Եփրատայ քովերն էր, մէկ մէկու ետեւէ առաւ Պեհեսնի, Ռապան և Մարաշ քաղաքներն, ետքէն հաշտութիւն եղաւ մէջերնին, ինչպէս նաև Եաղուպ Արսլանայ հետ:

Բայց Գըլըճ – Արսլան և Եաղուպ Արսլան, երկուքն եւ իրենց անուններուն համեմատ խրոխտ և սէգ առիւծներ, չի դանդաղեցան երկար՝ նորէն իրարու վրայ յոխորտալու և կռուի ձեռք զարնելու: Յամին 1160, բազմաթիւ զօրքով յարձակեցան և զարնուեցան իրարու հետ անհնարին սաստկութեամբ, պատերազմն ահեղ էր, և խորտակեցաւ Գըլըճ–Արսլանի բանակն և անոր բոլոր արքայական կազմածքներն ընկան Եաղուպ Արսլանի ձեռքն, որ մեծանձնութեամբ դարձուց ամէն բան և խաղաղութիւն եղաւ մէջերնին հաշտութեամբ և սիրով: Եւ Գըլըճ–Արսլան տուաւ Սերաստիոյ պետին Ապլասթա քաղաքն և անոր գաւառը:

Ասկէց ետև Եաքուպ Արսլան խաղաղութիւն ըրաւ նաև Մելիտինոյ հետ, և թողուց որ իր եղբօր որդին (Խամայէլն ըլլալու է) տղայ հասակաւ մնայ իր ամիրայութեան մէջ, հարկաւ իր վերին տէրութեան ներքև, և ոչ բոլորովին ազատ։

Բայց ոմանք Իկոնիոյ սուլդանին քսութիւն ըրին, թէ Եաքուպ Արսլան շատ մը ամիրայից միաբանութեամբ սպաննել կ'ուզէ զքեզ, և եղբայրդ սուլդան դնել։ Սուլդանը հաւատաց, և ամեն բանէ առաջ ջանաց իր կողմը շահիլ Մանուէլ Կոմնենոս կայսրն, ասոր համար առաքեց իրեն իր դպրապետն, որ Քրիստափոր կ'անուանէր, և ինքնակալին հաւանութիւնն առնելով, ինքն անձամբ Կ. Պօլիս գնաց, և հոն նիզակակցութեան դաշինք դնելով, ընդունեցաւ շատ դրամ և զօրք օգնական, և դիմեց գնաց Տանիշմէնտաց վրայ։ Բայց և ոչ Եաքուպ Արսլան պարապ կեցած էր, վասն զի երբոր լսեց թէ Գըլըճ–Արսլան և Մանուէլ Կոմնենոս դաշինք կը դնէին իր վրայ գալու, ինքն ալ Միջագետաց շատ մը ամիրաները հաւաքեց, և բազմաթիւ զօրքով դիմեց գնաց, որ արգելու սուլդանին արշաւանքն։ Երկու բանակներն եկան խմբեցան իրարու դէմ, բայց երկուստեք զարհուրելով իրարու բազմութենէն՝ հանդարտ կեցան և մէկմէկու պատգամաւոր ղրկելու խորհուրդ ըրին իրենց մէջ և երդմամբ սէր հաստատելով իրարու հետ, առանց պատերազմ մղելու բաժնուեցան և գնացին իրենց տեղերը։

Յաջորդ տարին (1161) *Եաքուպ Արսլան հնազանդեցուց իր միւս եղբօրորդին Տանուն կամ Տըսուլուն, որ Կեսարիոյ մէջ ապստամբեր էր իրմէ։ Ետքը Կամախ գնաց, որ Անի ամրոցն է, և սպաննեց տեղւոյն ամիրայն, որ ապստամբեր էր իրեն դէմ, և դարձաւ։*

Այս ժամանակ Եաքուպ Արսլան շատ ընդարձակած էր Տանիշմէնտ տոհմին իշխանութիւնն. իր ձեռքն էր պետութեան մայրաքաղաքը Սեբաստիա, և միւս գլխաւոր քաղաքները՝ Կեսարիա, Ամասիա, Նէոկեսարիա, Եւդոկիա (Թոգաթ), Կամախ, Մելիտինէ, Կիւրին, Էլ Պոսթան իրենց գաւառներովն և սահմաններով։ Այլ այս հզօր զօրութիւնն իր կեանքէն անդին չանցաւ, ինչպէս պիտոր տեսնենք իր յաջորդաց ժամանակ։

Միջագետաց մէջ Հըսնի–Քէֆի իշխանն էմիր Ֆախրէտտին–Գարա–Արսլան նախանձելով Տանիշմէնտ տան հզօր զօրութեան վրայ, ճաշկերութի հրաւիրեց Եաքուպ Արսլանն, որ կասկածելով հրաւիրողին նենգութենէն բազմաթիւ զօրքերով դիմեց անոր երկիրներն ասպատակութեամբ, և հարիւր հազար հոգի գերի բռնեց, որոնց հետ նաև Իգնատիոս Թէլ–Արսանիոյ և Գինեսիանոս Զայէտի կամ Քէնա–Զայէտի եպիսկոպոսներն, զորոնք ետքէն խաղաղութեամբ իրենց տեղերն արձակեց։

Անկէց ետև Եաքուպ Արսլան գնաց սուլտանին եղբօրը Շահնշահի քով, որ կը բնակէր իր հայրենատուր դղեակները Սև ծովուն եզերքն, և երբ ուրախ զուարթ ետ կը դառնար Գանգրա՝ Ալիսի քովերն հասնելով կը մեռնէր։ Իսկ իր զօրքը միայն իրեն տեղը կը դնէին եղբօր որդին Իսմայէլ, որ առաջ Մելիտինէին էմիրը կամ գաւառապետն էր։ Իսկ Ապլաստայի զօրքերն թագաւորեցուցին Մահադի որդին Մահմուտն և անկէց վրդովեցաւ Տանիշմէնտի տունն, և այս օրէն սկսան վատթարիլ պետութեան գործերը։

Ե. – Մելէք–Իսմայիլ

Ինը տարի թագաւորեց Սեբաստիոյ մէջ, և հետզհետէ ամփոփուելով տկարացաւ տէրութիւնը։ Գըլըճ–Արսլան որ Տանիշմէնտներուն անհաշտ թշնամին էր, Տըսուլուն կամ Տանուն ամիրային ձեռնտուութեամբ՝ որ Իսմայէլի հօրեղբօրորդին էր, առաւ Կաստուկը, Ապլաստան և Տարանդան, և թէպէտ Միքայէլ ասորի այս դէպքը կը դնէ ՇԳԲ. 1143. բայց կը թուի թէ դնելու է գոնէ ՈԺԲ. 1163. իսկ ըստ Համմէրի 1173։ Այս յաջողութիւնը զօրացուց Իկոնիոյ պետին սիրտն. և յամին 1169. ըստ Ապուլֆարաճի (և ոչ Ո. 1151 ըստ Միքայէլի ասորւոյ) քալեց գնաց Տանիշմէնտաց երկիրն և առաւ Կեսարիան և Ծամընդաւն Տանիշմէնտի որդիներէն. և հանդերձ ընտանեօք վտարեց Կեսարիոյ իշխանն

Տըռուլուն, որ երբեմն իր նիզակակիցն էր, և իր հօրեղբօր որդւոյն քով երթալու երես չունենալով, գնաց Դամասկոս, իրեն ապաստան գտնելու Ասորիքի Նուր–էտտին հզօր պետին քով։

Գըլըճ–Արսլան 1172 նորէն արշաւեց Տանիշմէնտերուն երկիրն և եկաւ պաշարեց Մելիտինէ քաղաքն, այլ չկրցաւ առնուլ. և շրջակայքն ասպատակելով, տասն և երկու հազար գերի տարաւ իրեն հետ։

Մէլէք–խամայէլ ճարը հատնելով՝ դիմեց Նուր–էտտինի պաշտպանութեան, որ նոյն ատեն դեռ նոր յաջողութիւն մը ձեռք բերած էր, պսակելով Մուսուլի առմամբ իր յաղթական արշաւանքը Միջագետաց մէջ։

Նուր–էտտին սիրով յանձն առաւ իրեն եղած դիմումն, և հետն առնելով Սեբաստիոյ Մէլէքն խամայէլ, Գըլըճ–Արսլանի եղբայրը Շահնշահ և ուրիշ էմիրներ, քալեց գնաց Կեսարիա և առաւ նոյն քաղաքը։ Ուզեց իրենց դէմ ելլել սուլդանը, իսկ դաշնաւորք պատգամ ղրկեցին իրեն ըսելով, երկրէդ կէսն եղբօրդ տուր։ Շահնշահին եօթն որդիքը սուլդանին քովն էին. սպաննեց անոնց մէկն և խորովելով հօրը ճամբեց և ըսաւ եթէ չես դառնար և հեռանար ինձմէ, նոյնպէս կ'ընեմ քու ամեն որդւոցդ։ Հոն եղողներն սկսան լալ ողբալ այն սոսկալի տեսարանին. և ահարեկ ըլլալով դարձան իրենց երկիրները։

Յաջորդ տարին (1173) սաստիկ սով եղաւ Սեբաստիոյ և շրջակայ երկիրներն, և Կապադովկիոյ իշխանք սպաննեցին Մէլէք–խամայէլը (զոր Միքայէլ ասորի Մսլիմ կ'անուանէ), և յափշտակեցին ցորենին համբարներն, որպէս զի չի մեռնին, և որովհետև ձմեռ էր, իրենց այս գործը ծածուկ մնաց երեք ամիս։ Բայց Սեբաստիոյ շուրջը գտնուողները սաստիկ բարկացան այս տիրասպանութեան վրայ, և երկրին բնակիչներէն ոմանք Դամասկոս երթալով կը հրաւիրեն խամայէլի հօրեղբօր որդին Տըռուլուն որ կու գայ և կ'առնու Սեբաստիոյ իշխանութիւնը։

Զ. — Տըլուլուն կամ Տանուշն–Պեն Մելեք–Մուհամմետ

Ցամին 1173 գահ ելաւ Տըլուլուն Սեբաստիոյ իշխանական Աթոռոյն վրայ, և մեծ վախի մէջ էր Գըլըճ–Արսլան սուլդանէն, որ իր առհմին ահեղ ոսոխն էր, որուն ինքն իսկ առաջ ձեռնտու եղած էր իր հօրը իշխանութիւնը տկարացնել ուզած ժամանակն։ Ուստի բոլոր յոյսը դրաւ Նուր–Էտտինի վրայ, որ անշուշտ զինքը կը փրկէ Իկոնիոյ սուլդանին սպառնալիքներէն։ Եւ արդարև Նուր–Էտտին շատ զօրք գումարելով եկաւ Սեբաստիա. և Տըլուլունը հաստատեց իր իշխանութեան մէջ, և պատգամ ղրկեց սուլդանին, որ պատերազմ չի մղէ Սեբաստիոյ իշխանին դէմ ապա թէ ոչ կը հանդիպի իր ցասմանն։ Եւ երբ ետ կը դառնար առաւ Մարաշ, Բեսուն և Պեհեսնի քաղաքները։ Սուլդանը անոր այս ըրածը լսածին պէս, զինեց անոր վրայ, Նուր–Էտտին ևս առաջ քալեց, և երկու բանակներն եկան դէմ առ դէմ կեցան Ջահան գետին երկու եզերքը։ Սակայն պէտք եղածը լաւ պատրաստած չըլլալնուն համար, երկու կողմն ևս սովէն սկսան նեղուիլ, իրենց գնդերն և շատեր կը ջարդուէին։ Այս պայմանը խոնարհեցուց երկու կողմն ևս, և հաշտութեան դաշինք կռեցին, որ սուլդանը արգելք չըլլայ այլ թողու Տըլուլունը հանգիստ ընդ հովանդութեամբ Նուր–Էտտինի. և սիրով բաժնուեցան՝ ամեն մէկը գնաց իր երկիրը։

Այսով հանդերձ Տանիշմէնտաց իշխանութիւնը չի կրցաւ հաստատուն մնալ։ Պետութիւն մ՚որ պակսեր էր իր ներքին զօրութենէն և միայն դրացիներու պաշտպանութեան ապաւինած, չի կրնար երկայն տևել, ինչպէս եղաւ Սեբաստիոյ Տէրութիւնն, որուն գլուխ կեցեր էր Տըլուլուն։

Ցամին 1174 (569 Հեճիրէի, 11 շէվվալ ամսոյն) մեռաւ Նուր–Էտտին, այս լուրը Գըլըճ–Արսլանի հասածին պէս, նախ ստուգեց զայն և ապա քալեց գնաց Սեբաստիան պաշարելու, քաղաքն երկայն չի

դիմացաւ, զոր շուտով առաւ, ինչպէս նաև Կոմանան, Նէօկեսարիան, և ջնջեց Տանիշմէնտաց տունը, ըստ Համմերի՝ թունով սպաննելով նոյն տոհմին վերջին իշխանն, և գրաւեց անոր պատկանեալ բոլոր երկիրներն։ Համմէր կը գրէ եւ թէ սուլդանն Իկոնիոյ նուաճեց Տանիշմէնտաց տէրութիւնն և առաւ անոնց Մալաթիա, Ապլաստան և Տարանդա քաղաքները, բայց այս քաղաքները մի և նոյն ժամանակ չէ առած, մանաւանդ Մալաթիան, իսկ Տարանդը՝ Լարանդան չէ, այլ այժմու Տէրէնտէն է։

Միքայէլ ասորի Տանիշմէնտաց տևողութիւնը կը համարի 122 (1066–1188) տարի, և կը դնէ վեց իշխան որոնք իրարու յաջորդեցին։ Որով յայտնի կ'ըլլայ որ ինք անոնց իշխանութեան սկիզբը կը դնէ Գիւմիւշ Թէկինի առաջին արշաւանքէն, որ եղաւ յամին 1066 և կատարածն անշուշտ պէտք է դնէ յամին 1188, որ տարին, ինչպէս կ'ըսէ Բանդու (Պատմ. Տիեզ. Հտ. ԺԱ. Գլ. ԺԲ.) «Իկոնիոյ սուլդանը յամին 1188 գրաւեց Կապադովկիան Տանիշմէնտներէն»։ Իսկ եթէ Սեբաստիոյ տիրելէն, մինչև նոյն քաղաքին Գըլըճ–Արսլանէ առումն ուզենք հաշուել, կ'ըլլայ 102 (1072–1174) տարի։

Տանիշմէնտաց տանը կործանման ժամանակ, նոյն տոհմին որդիքներէն երկու անձ միայն ազատելով, փախան և ապաստանեցան Մանուէլ Կոմնենոս կայսեր, որ իրենց ձեռքը զօրաց գնդեր տուաւ, և միանգամայն իր դեսպաններովը կը պահանջէր Տանիշմէնտաց հայրենի ժառանգութիւնն, որոնք իր երկիրն էին։ Նաև կայսրը իրենց կը հետևէր՝ բայց՝ որովհետև թշնամին հալածական կ'երթար, թողուց դարձաւ Կ. Պօլիս։ Այլ Տանիշման իշխանները 50,000 զօրքով ղրկեց, որ երթան պաշարեն Նէօկեսարիան։ Տեղւոյն Թուրք քաղաքապետն իբր Քրիստոնէից կողմէն գրեց յոյն զօրքերուն, ազդ տանելու մտքով, որ Տանիշմէնտ հրամանատարները պատեհ առթի կը սպասեն զիրենք Թուրքաց ձեռքը մատնելու։ Այս լուրը զարհուրեցուց զիրենք, և թողուցին ետ քաշուեցան ցան և ցիր։

Ինքնակալը մեծապէս վշտացաւ այս ձախորդութեան վրայ, և յամին 1178 արշաւեց դէպ Իկոնիոն և շատ յաջող գնացին իր ար-

շահանքներն և հաշտութիւն եղաւ, որովհետև կայսրը Գըլըճ–Արսլանի դէմ հաներ էր իր միւս երկու եղբայրներն։ Հաշտութենէ ետև Գըլըճ–Արսլան անձամբ գնաց Կ. Պօլիս աւելի ևս հաշտութիւնը պնդելու համար։ Կայսրը նուէրներով և հանդէսներով շլացուց զինքը, բայց և խնդրեց Սեբաստիա քաղաքը։ Սուլտանը զմայլած ըլլալով կայսեր իրեն մատուցած պատիւներուն վրայ, խոստացաւ տալ։ Իսկ երբ դարձաւ Իկոնիոն, աւերեց Սեբաստիան և բոլոր անոր շրջակայ տեղերն։ Գըլըճ–Արսլանի Կ. Պօլիս երթալն այս երկրորդ անգամ յիշեցի, զուցէ միանգամ ըլլայ. բայց տարբեր են երկու անգամուան պարագաները։

Նոյն ատենները մինակ մէկ մը մնացեր էր Դանիշմէնտներէն, վերջին շառաւիղ մը տոհմին, որ կ'իշխէր Մալաթիա, անգութ և խիստ մարդ մ'էր, որ շատ չարիք հասուց քաղաքին բնակչաց, ետքը խելքը գլուխ ժողվելով՝ թողուց իր չարաչար գնացքն, և իր Մալաթիա քաղաքը տալով Իկոնիոյ սուլտանին, ինքը Խարբերդ գնաց և բաւական դիւրութիւն եղաւ քաղաքացւոց, և այս եղաւ ըստ Համմէրի յամին 1182։

Այսպէս ահա Դանիշմէնտ իշխանութեան վերջ եղաւ, որ դարէ մ'աւելի տևած էր, և իր գաւառները խառնուեցան Իկոնիոյ սուլտանութեան նահանգաց հետ, քանի որ այս վերջաւորութիւնը կը դնեն յամին 1188, ինչպէս տեսանք։

Դ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԴԷՊՔԵՐՆ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿ (1177 - 1207)

Յամին 1179 մեռաւ Գրիգոր արքեպիսկոպոս իբր ԼԱ. տարի իր իշխանութիւնը վարելով և ի հասակ ծերութեան հասնելով, կը նստէր Ս. Նշանի վանքը, և թաղեցաւ նոյն վանաց գերեզմանատան մէջ, Պետրոս Գետադարձի շիրմին մօտ։ Իսկ իր տեղն աթոռ ելաւ նոյն տարին Սահակ կամ Պասակ արքեպիսկոպոս։

Հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոսի ժամանակ սկսած էր կրօնական միաբանութեան խնդիրը Հայոց և Յունաց մէջ, որ բաւական երկայն տևեց։ Մանուէլ Կոմնենոս կայսրը կը ջանար Յունաց եկեղեցին միաբանել Հռովմայ եկեղեցւոյն հետ։ Միւս կողմանէ փոյթ կը տանէր միւս արևելեան եկեղեցիները միաբանել յունականին հետ։

Արդէն Գրիգոր Գ․ կաթողիկոսին վերջին տարիները խօսք մ'եղած էր իր եղբօրը Ներսէս Շնորհալի արքեպիսկոպոսին ձեռօք․ բայց սոյն Ներսէսի կաթողիկոսութեան (1167–1172) ժամանակ սկսաւ պաշտօնական յարաբերութիւնը, երկայն բանակցութիւններ եղան, որոնց մէջ յիշելու արժանի է Շնորհալւոյ առանձնական նամակն առ ինքնակալն՝ յորում կ'ընդունէր յայտնապէս Քաղկեդոնի Ս․ ժողովը․ և երկու բնութիւն ի մի անձն բանին Աստուծոյ, աստուածային և մարդկային, նաև երկու կամք և երկու ներգործութիւն։ Կայ ևս վիճաբանութեան մէջ Գրիգոր եպիսկոպոսին խօսքը, թէ «որ ոչ ասէ ի Քրիստոս երկու բնութիւն նզովեալ եղիցի»․ ասոր համար կ'ըսուի ազգական և արենակից սրբոյ կաթողիկոսին, որ է անշուշտ Գրիգոր Տղան։ Ներսէս Շնորհալին ամէն բան պատրաստած ըլլալով միաբանութեան համար, նաև ընդհանուր ժողովք մը գումարելու հրաման հրատարակեց բայց մահը վրայ հասնելով, այս վերջնական յայտարարութիւնը թողուց իր յաջորդին։

Սա էր Գրիգոր Դ․ Տղայ, որդի Վասիլ իշխանի եղբօր Շնորհալւոյն, որ իր նախորդին որոշած ժողովքն յաջողեցաւ գումարել յամին 1179․ յորում գահերէց բազմեցաւ ինքն, և ներկայ գտնուեցաւ Աղուանից կաթողիկոսն և 32 արքեպիսկոպոս և եպիսկոպոս, որոնց մէջ էին Պսակ Սեբաստիոյ և Յակոբ Մելիտինոյ, և համաձայն Յունաց կ'ընդունին Քաղկեդոնի Ս․ ժողովքն, և անոր հետ միաբան կը դաւանին երկու բնութիւն աստուածային և մարդկային ի մի անձն Բանին Աստուծոյ, և երկու կամք և երկու ներգործութիւն․ և ամէնքն ստորագրեցին իրենց ձեռքովն և կնքեցին և ղրկեցին Կ․ Պօլիս Մանուէլ Կոմնենոս կայսեր․ բայց պատգամաւորք Կեսարիայէն առաջ չի կրցան անցնիլ․ դարձան կաթողիկոսին քով՝ որ ջանաց ուրիշ ճամբայ մը գտնել հաս-

ցընելու, և ահա յամին 1180 մեռաւ կայսրն Մանուէլ Կոմնենոս, և այն ատեն եպիսկոպոսունք դարձան իրենց վիճակները (Պատմ. Սեբ.) ինչպէս նաև Պաւկ կամ Սահակ արքեպիսկոպոսն Սեբաստիոյ, որ եկաւ Ս. Նշան և վախճանեցաւ յամին 1186, և թաղեցաւ Ս. Նշանի գերեզմանատունը։

Յաջորդեց իրեն Տ. Անանիա յազգականութենէ Պետրոս Գետադարձի, որ ձեռնադրուեցաւ Հռոմկլայ, սիրելի էր մեծամեծներու և և փոքրներու, և բնութեամբ վեհանձն։

Լեոն Հայոց իշխանապետն իր նախորդներէն աւելի զօրացած ըլլալով կ'ուզէր արքայական աստիճանի բարձրանալ, ուստի և խնդրեց Գերմանիոյ Հենրիկոս կայսրէն հաւանութիւն այս բանիս գործադրութեան և միանգամայն գրեց Կղեմենտինոս Գ. քահանայապետին և խնդրեց անոր օրհնութիւնը, զի, կ'ըսէ Կիրակոս Գանձակեցի, «պարծանս իւր վարկաւ զՍ. Առաքեալս Պետրոս և Պօղոս, որ կան ի Հռովմ քաղաք, որպէս թէ ի նոցունց առեալ զօրհնութիւն պսակին»։ Քահանայապետը, հաւանութեամբ կայսեր՝ փառաւոր արքայական թագ մը պատրաստելով, Մոգունտիոյ Գոնրատ Արքեպիսկոպոսին ձեռքով, որ էր միանգամայն կարդինար եպիսկոպոս Սաբինայ, ղրկեց առ Լեոն. մեծ պատուով ընդունուեցաւ, բայց պահանջեց արքեպիսկոպոսը երեք պայման՝ զոր Լեոն յանձն առաւ կատարել։

Ա. Երեւելի տօներն ըստ աւուր պատշաճի տօնել։

Բ. Ժամերգութիւնը հանդիսով եկեղեցւոյ մէջ կատարել, և պատարագի ատեն ժողովուրդը չի մնայ արտաքոյ եկեղեցւոյ։

Գ. Ծննդեան և Յարութեան ճրագալուցի երեկոյն պահքը չի լուծանել։

Եւ այս երեքին համար խնդրեց որ եպիսկոպոսաց գլխաւորներն ստորագրեն, որոնք եղան Տարսոնի արքեպիսկոպոսը Ներսէս, Անտիոքայն՝ Յովսէփ, Սսոյ՝ Յովհաննէս, Սեբաստիոյ՝ Անանիա և ուրիշներ, ընդ ամենը տասներկու արքեպիսկոպոս, ինչպէս խնդրած էր Առաքելական Նուիրակը։

Վերջէն Լեւոն շքեղ հանդէսով թագաւոր օծուեցաւ Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսէն յամին 1198։

Այս մեծ հանդէսէն ետեւ ամենքը դարձան իրենց տեղերը. նոյնպէս եպիսկոպոսունք, ինչպէս նաեւ Անանիա արքեպիսկոպոսն՝ իրենց վիճակը։ Նստաւ սա ըստ սովորութեան Ս. Նշան ե կը հովուէր իր հօտը։

Յամին 1202 վախճանեցաւ Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսը Սիս քաղաքին մէջ։ Լեւոն թագաւորը ժողովեց ազգին եպիսկոպոսները. կէսը՝ կ՚ուզէր ընտրել Անանիա Սեբաստիոյ արքեպիսկոպոսն, ե կէսը Սոյ Յովհաննէս արքեպիսկոպոսը։ Թագաւորն յարմար դատեցաւ Յովհաննէսն՝ որ իրեն մտերիմ էր ե պալատականաց հաճելի, որ ե գործադրուեցաւ. կը կոչուի սա Մեծաբարոյ ե Նստաւ Հռոմկլայ հայրապետական աթոռը։

Անանիայի կողմնակիցները գոհ չեղան, ե կ՚ըսէին թէ ընտրութեամբ եպիսկոպոսաց չեղաւ, այլ թագաւորին հաճոյից համեմատ։ Ասով Անանիա հակառակութիւն տուաւ, Սեբաստիոյ ե Կեսարիոյ բնակիչք համաձայն էին, ե միաբանեցան իրեն հետ եպիսկոպոսներ ե վանականներ։ Ուստի մեծամեծ նուէրներով Իկոնիոյ Ռոգնատտին մեծ ամիրային հաւանութիւնն առնելով, ընտրեցին զինքը կաթողիկոս առանձին Սեբաստիոյ մէջ, ե յաջողեցաւ իր իշխանութիւնը. զի Սեբաստիա կը համարէր թագաւորական քաղաք, ե ժամանակաւ աթոռ Պետրոսի Գետադարձի, ե կը տարածէր իր իրաւասութիւնը Ռոգնատտինի ամբողջ իշխանութեան մէջ։ Անշուշտ այս գովելի չէր, անջատել ազգն երկուքի, բայց Լեւոն չէր յարմար դատեր Իկոնիոյ սուլտանին հետ ծանր վէճ մը բանալ։ Քիչ մը վերջը թագաւորը ունեցաւ տարաձայնութիւն Յովհաննէս կաթողիկոսին հետ. ե այս պատճառաւ հակառակութիւն առին բնակիչք փոքուն Հայոց. ե Անանիա իբրեւ մեծ հայրապետ իր ձեռքն եղած տեղերը կարգադրութիւններ կ՚ընէր ե իր իշխանութեան ներքեւ կային բազմաթիւ եպիսկոպոսներ։

Գնաց ապա Կեսարիա, ուր ժողովուրդն իբրեւ հայրապետ մեծ պատուով ընդունեցաւ զինքն։ Հոն եղած ժամանակ նահատակուեցաւ

Թէոդորոս վկայն. որ երբ բանտն էր՝ Անանիա առաքեց իրեն Տ. Գէորգ քահանայն քաջալերելու զինքը. Թէոդորոս շատ մխիթարուեցաւ և սըրտապնդեցաւ իր արիւնը թափել ի պատիւ Տեառն: Հոն տեսաւ նաև Քրիստոս Տէրն մեր, ձեռքն ունենալով իրեն համար թագ արքայական, օրհնեց զինքն և զօրացուց: Տասնևվեց օր մնաց բանտին մէջ անտանելի տանջանքներ կրելով. և քաղաքէն դուրս տարուելով, սրերով, բրերով և քարերով հարուածեցին զինքն, և աւանդեց հոգին գոհութեամբ. լոյս ծագեցաւ վրան և դահիճները զարհուրելով փախան. Շահ–Ռոգնատոին ևս լսելով՝ հրաման ըրաւ Անանիա հայրապետին, որ վերցնէ և թաղէ արժանաւոր տեղ մը (1204, *Մայիս* 18):

Անկէց ետև դարձաւ Անանիա Սեբաստիա մայրաքաղաքն. նստաւ Ս. Նշանի վանաց մէջ և հանգեաւ խաղաղութեամբ յամին 1207 *և թաղուեցաւ վանաց շիրմին մէջ, հարաւակողմը մեծ եկեղեցւոյն պարըսպէն դուրս:*

ԳԼՈՒԽ Է

ՍԵԼՃՈՒՔ ՊԵՏԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ՍԵԲԱՍՏԻԱ· ԹԱԹԱՐԱՑ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐՆ· – ՊԻՒՐՃԱՆԷՏՏԻՆ ՏՈՀՄԸ· – ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՒԵՐՈՒՄԸ ԼԷՆԿ-ԹԻՄՈՒՐԷՆ

(1188–1441)

Ա· Սեբաստիա նորէն կ'ընկնի Սելճուքաց ներքեւ (1188–1230)։ Բ· Թաթարաց արշաւանքները (1230–1307)։ Գ· Սեբաստիոյ արքեպիսկոպոսները եւ անոնց ժամանակ հանդիպած դէպքերը։ Դ· Պիւրճանէտտին Տոհմին իշխանութիւնը։ Արքեպիսկոպոսութիւն Ստեփաննոսի Բ. եւ իր նահատակութիւնը։ Ե· Լէնկ-Թիմուրի արշաւանքը եւ Սեբաստիոյ աւերումը։

Ա· — ՍԵԲԱՍՏԻԱ ՆՈՐԷՆ Կ'ԸՆԿՆԻ ՍԵԼՃՈՒՔԵԱՅ ՆԵՐՔԵՒ (1188–1230)

Ինչպէս տեսանք Սեբաստիա աւերած էր Գըլըճ-Արսլանէն որպէս զի չի տրուի Յունաց Մանուէլ Կոմնենոս կայսեր ըստ խոստման նոյն սուլդանին. բայց ետքէն բաւական նորոգուած ըլլալու է՝ որով և շատ բարգաւաճեցաւ յետ ժամանակի Սելճուք սուլդանաց ջանքովն, ինչպէս պիտի տեսնենք. և թէպէտ իր քաղաքային պայմանն Արծրունեաց և Տանիշմէնտաց ժամանակի պէս չէր, բայց և այնպէս ունի ոչ սակաւ դէպքեր, որոնց վրայ համառօտիւ պիտի գրենք։

Ազգէտտին-Գըլըճ-Արսլան Սեբաստիոյ Տանիշմէնտ իշխանութեան մնացորդներն ամբողջ նուաճելէն ետև, իր տէրութիւնը յամին 1188

բաժնեց իր տասն որդւոց մէջ, ամէն մէկին տալով իր գլխաւոր քաղաքներէն մէկն, հանդերձ իրենց սահմաններովն՝ այսպէս.

Րոգնետտին—Սիւլէյմանի՝ Թոգաթը.
Կայաթէտտին—Քէյխոսրովի՝ Իկոնիոնը.
Մուհիէտտինի՝ Անկիւրիան.
Մուիզէտտին Գայսարշահի՝ Մալաթիան.
Մոկայաթէտտին—Թողրուլի՝ Էլ-Պօսթանը.
Նուրէտտին—Մահմուտի՝ Կեսարիան.
Խութպէտտին—Մալէք-Սալէհի՝ (անդրանիկ)՝ Սիվազը.
Նասրէտտին—Պարկեարուխի՝ Նիքսարը.
Սանճարշահի՝ Ամասիան
Շէճաէտտինի՝ Հէրակլէան։

Այս բաժանումն այլ և այլ օրինակով կը պատմուի, ոմանք որդւոց թիւը տասնևերկուքի կը հասցնեն, ինչպէս եւ ըլլայ, այս բաժանումը շատ գլուխցուց Փրեդերիկ Պարպարոսա Գերման կայսեր արշաւանքն՝ որ ահեղ ճակատամարտի մը մէջ Գըլըճ—Արսլանի բանակը ջախջախելէն ետև առաւ Իկոնիոն մայրաքաղաքն և առաջ քալելով Սելևկիոյ (Սելիֆկէ) Կալիկատ գետին մէջ լողնալու ատեն խեղդուեցաւ (1190)։

Իկոնիոյ սուլտանը Գըլըճ—Արսլան տէրութիւնը բաժնելէն ետև, ինքն ալ հասկնալով թէ ինչ մեծ սխալ էր ըրածն, ուզեց նորէն միացնել զայն իր անդրանիկին Սեբաստիոյ տիրոջ Խութպէտտինի ձեռաց ներքև. ամուսնացուց զինքը հռչակաւոր Եուսուֆ—Սալահէտտինի դստեր հետ, բայց գործը չի յաջողեցաւ, ինչու որ գժտութիւն ընկաւ իր որդւոց մէջ, որոնք իշխանութեան համար սաստիկ կերպով կը վիճէին իրարու և հօրերնուն հետ։

Մեռաւ Ազզէտտին—Գըլըճ—Արսլան 1193ին և նոր բաժանումն եղաւ իր իշխանութեան։

Իկոնիոյ տէրը Կայաթէտտին—Քէյխոսրով իր ձեռքն ունէր Լիկայոնիան և Պամփիլիան։

Ռոգնետտին թոգաթու տէրը Սև ծովուն եզերքն ստացաւ քանի մ'ամրոցներ։

Անդրանիկը Խութպէտտին-Մալէք-Սալէհ, որ Սեբաստիոյ տէրն էր, ընդունեցաւ Մալաթիան, Կեսարիան և Կողոնիան։

Մասուտ՝ (որ նոր կը յիշուի) առաւ Ամասիան, Անկիւրիան, Դորիլէան (Էսկի-շէհիր) և ուրիշ քաղաքներ Պոնտոսի մէջ։

Ամենքն ևս իրենք զիրենք անուանեցին սուլտան, և հակառակ մէկմէկու և միւս եղբարց դէմ, որոնք ուրիշ գաւառներու կը տիրէին, բորբոքեցան կռուելու։ Ամենէն առաջ զարնուեցան իրարու հետ Խութպէտտին Սեբաստիոյ սուլտանն և Նուրէտտին Կեսարիոյ (հին) տէրն, և նոյն ճակատուն մէջ ընկաւ մեռաւ Խութպէտտին։

Այն ատեն Թոգաթու սուլտանն Ռոգնէտտին Սիւլէյման առաւ Սեբաստիան, Կեսարիան, և Իկոնիոնէն վանելով Կայաթէտտին-Քէյխոսրովը զրաւեց զայն և անոր աթոռ սահմանեց էլ-Պօլթանն, ուսկից հալածեր էր Մոկայաթէտտինն ։ Ռոգնէտտին անձին սեպհականեց Սելճուքաց սուլտանութիւնն յամ̃ 1203 *և յաջորդեց իրեն որդին Ազզէտտին Գըլըճ-Արսլան Գ. իբր* 2 *տարի միայն* (1203-1205)։

Նորէն բարձրացաւ սուլտանութեան գահը Կայաթէտտին-Քէյխոսրով (1205-1211)· *իսկ իրեն յաջորդն Ազզէտտին-Քէյքավուզ յամին* 1220 (617) *հիւանդանալով մեռաւ Սեբաստիոյ մէջ· և իր կառուցած հիւանդոցին մէջ նոյն քաղաքը կայ գերեզմանը բարձր գմբէթի ներքև· (Համմէր· Գիրք Ա.)։ Զենայի՝ նոյն մատենագրին քով՝ մէջ կը բերէ արձանագիրն, որ կայ Սեբաստիա իր գերեզմանին վրայ, այլ կ'ընծայէ զայն Կայաթէտտին-Քէյխոսրովու, որ չէ ուղիղ և ոչ ժամանակը կը յարմարի։ Հոս կը դնեմ յիշեալ արձանագրին հայերէն թարգմանութիւնը։*

Ի դամբան անձուկ՝ էջ ի գահոյից
Ո՞ւր իցեն արդ գանձք՝ ու'աթոռք արքայից,
Աւարտեաց զընթացսն՝ վախճան կենացն ետ
Ցամենայն ուրեք թող ըզքանդմանց հետ։

Ի Շէվվալ ամին լուսնոյ շրջանին
վեց հարիւր ընդ տասն և եօթներորդի։

Յամին 1224 *Խորազմիներն իրենց Մուհամմէտ Ճէլալէտտին Թագաւորին առաջնորդութեամբը արշաւեցին Ասորիք և Փոքր Ասիա, որոնք պարտեցան Իկոնիոյ Ալայէտտին–Քէյքօպատ սուլդանէն, մէկ մասն ասոր վրայ դարձաւ իր երկիրն, և միւս մասն մնաց նոյն կողմերն։ Անոնցմէ սերած են այժմու Ռումայ և Ասորիքի Թիւրքմէնները։*

Այս Ալայէտտին–Քէյքօպատ Ա. որ թագաւորեց 1220 – 1237. *շէնքեր շինելու եռանդուն էր, իր տէրութեան քաղաքները զարդարեց մզկիթներով, մենարաններով, ճեմարաններով, և իջևաններով (քիրվան Սերայ). և այս քաղաքաց առաջիններն էին Սեբաստիա, Ամասիա և Անեմուր։*

Սեբաստիոյ վրայ այսպէս կը գրէ Համմէր (Գիրք Է.) Սիվազն հին Սեբաստն է, որ նորէն շինուեցաւ կամ նորոգուեցաւ Ալայէտտին–Քէյքօպատ սուլդանէն, Փոքր Ասիոյ ամենէն մարդաշատ և ամուր քաղաքներէն մէկն էր։ Բարձր որմերով պատած էր և խրամներով պատսպարուած, քառակուսի քարերով շինուած էին պարիսպներն՝ որոնց երկայնութիւնն երեք գրկաչափ. և լայնութիւնը մէկ գրկաչափ. մարտկոցներուն բարձրութիւնը քսան գրկաչափ, իսկ թանձրութիւնը՝ վարը տասը գրկաչափ և վերը վեց գրկաչափ։ Եօթը դռներ ունէր, որոնք կը դառնային երկաթի ծխնեաց վրայ։ Քաղաքին մէջ կառուցած շինուածքներէն նշանաւոր էր այն որ կը կոչուէր ճեմարան. բայց ասոր դուռը մեծագործութեամբ շատ առաւելութիւններ ունէր, և այնպէս հռչակուած էր այս դուռը Փոքր Ասիոյ մէջ, որ անկէ իբր երկու և կէս դար ետքն, երբոր սուլդան Մուհամմէտ Բ. Ֆաթիհը Պրուսայի մէջ, Կ. Պոլսոյն առնելէն առաջ մզկիթ մը շինեց, զոր անուանեց Եէշիլ Իմարէթ, այնչափ հոգ չի տարաւ Միհրապին վրայ, որչափ ջանք ըրաւ դրանը համար, և կամք եղաւ մեծ աշխարհակալին, որ իր կառուցած դուռը մեծագործութեամբ գերազանցէ դրան (Գըմըզը գաբու՝) ճեմարանին Սեբաստիոյ։ Երեք տարի տևեց Պրուսայի Եէշիլ Իմարէթի դրան շինուածքն և 40,000 *Վենետիկեան ոսկի (ցէքքինի) ծախսուեցան անոր համար։*

Կ'երևի թէ խիստ շատ էին Սերաստիոյ մէջ Ալայէտտին—Քէյքոպատի շինուածքներն, մինչև որ գինքը քաղաքին կառուցիչն անուանեցին, թէպէտ նորոգիչ մինակ է. և յայտնի է Սերաստիոյ հնութիւնն և նախնի մեծութիւնը։

Քանի մը տարի Սերաստիա հանդարտ մնաց, և բարգաւաճելով ծաղկեցաւ Իկոնիոյ կամ ինչպէս կ'անուանէին, Ռումայ իշխանութեան ներքև. բայց այս խաղաղութիւնը շատ երկայն չի տևեց։

Բ. — ԹԱԹԱՐԱՑ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ (1230-1307)

Թաթարք յամին 1232 իրենց Ուգաթա մեծ խանին հրամանաւն, և Զարմաղան մեծ իշխանին հրամանատարութեամբ եկած և գրաւած էին Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհները, բայց թողլով տեղական իշխաններն իրենց պայմանին մէջ, պահանջելով անոնցմէ հպատակութիւն, տուրք և զօրք, երբ պէտք ունենային։

Յամին Ո. (1242) Բաչու—Նուին յաջորդեց Զարմաղանին Թաթարաց արևմտեան ընդհանուր հրամանատարութեան, որուն կեդրոնն էր Մուղան (Գարանղաշտ)։ Ասոր առաջին գործն եղաւ ժողովել բազմաթիւ զօրքեր, հետն առաւ նաև հայ և վրացի իշխաններն իրենց զօրքովն և քալեց գնաց Իկոնիոյ սուլդաններուն երկիրն, պաանէշ պաշարմամբ առաւ և աւերեց Մալաթիա քաղաքն և իր սահմանները, շատ աւարով և գերիներով դարձաւ Մուղան իրենց բանակետղը։

Ասկէց գրգռուեցաւ Սելճուքներու և Թաթարաց պատերազմը, ինչու որ Իկոնիոյ սուլդանը Կայաթէտտին—Քէյխոսրով Բ. զոր Կիրակոս Գիաթատին կը կոչէ, ծանրացաւսուածն ըլլալով, խիստ և խրոխտ պատգամ ղրկեց Թաթարաց, և բազմաթիւ զօրք գումարելով, յամին 1243, դիմեց գնաց միտքը դնելով պատժել զիրենք պատուհասներով։ Բայց Թշնամիք ևս կազմ էին, և Բաչու պատգամ յղելով սուլդանին պատգամին դէմ, կ'ըսէր. «շատ բարձր խօսեցաք, բայց անոր կ'ըլլայ յաղ-

թուլթիւնն որուն որ տայ Աստուած»։ Եւ կը կազմէր կը յարդարէր իր զօրքերն և Հայոց օգնական գունդն, որոնց կ՚առաջնորդէին հայ իշխանք՝ Շամքորոյ Տէրը Վահրամ և Ազբուգայ անոր որդին, Աւագն Սարգիս, Շահնշահը, Եէլիկում Օրբելեան, Խաչէնեցիք Ջալալ և Հասան Գրիգոր-Դոպին և ուրիշ իշխաններ, իրենց զօրքերովն։ Եւ աճապարելով սուլդանէն առաջ դիմեց և Երզնկայի քովէն անցնելով Զմանկատուկ աւանին քով յիշեալ քաղաքին մօտերը հանդիպեցան սուլդանի բանակին, որ բոլորովին խորտակուեցաւ, և Թաթարներն և Հայերը բուռն զօրութեամբ հետամուտ եղան, և Սեբաստիոյ քովէն անցնելով՝ գնացին պաշարեցին Կեսարիան, առին սաստիկ պատերազմով, կ՚ըսէ Կիրակոս, և սրով մաշեցին բնակիչներն, և ինչ որ մէջը գտան յափշտակեցին, և ամայի թողլով քաղաքը՝ դարձան Սեբաստիա, և որովհետև առաջ ևս ձեռնտու եղեր էին իրենց, ընծաներով և նուէրներով իրենց դիմացն ելան մարդու վնաս չ՚ըրին, այլ յափշտակեցին քաղաքին աւարէն մաս մը, գրաւեցին զայն, և իրենց անուամբ վերակացու դնելով, գնացին իրենց ճամբան։ Եւ ի դարձին սաստիկ պաշարմամբ առին Երզնկան. մեծ կոտորած ըրին, շատ աւար և գերի առին։ Տիւրիկէ քաղաքն անձնատուր եղաւ, ուսկից ընդունեցան շատ տուգանք։

Այս արշաւանի մէջ՝ այն կողմերու Հայք մեծապէս վնասուեցան, իսկ հայազգի իշխաններն, որ բանակին մէջ էին, ջանացին պէտք եղած դիւրութիւնները մատուցանել անոնց։ Սամուէլ Անեցի համառօտ կը դնէ այսպէս. «Թաթարն (ՈՂԲ. 1243) զՀոռոմցին (Սելճուքները) կոտորեաց և զՍեւաստ էառ»։ Իսկ Վարդան աւելի ընդարձակ կը գրէ «Թաթարք, առին, կ՚ըսէ, զանուանի քաղաքն (Հոռոմոց աշխարհին) զԿեսարիա նախ, ապա զՍեւաստ, յորում խնայեցին ի կոտորելոյ. զի վաղ եկին ի հնազանդութիւն, ապա զԵրզնկա, զոր անխնայ կոտորեցին, և գերեցին քանզի ընդդէմ դարձաւ» (Թիւ ՉԲ.)։

Այս առաջին արշաւանքին վրայ տասը տարի անցեր էր. և ահա Թաթարք ձեռք զարկին նոր և մեծագոյն արշաւանք մ՚ևս ընելու։ Հայոց Չէ. Թուին սկիզբը, այն է 1256ին Թաթարաց մեծ իշխանը Հուլաւու

հրաման կը ղրկէ ամեն Թաթար իշխանաց, որոնք իրենց Բաչու գլխաւորին հրամանատարութեան ներքեւ էին, որ թողուն իրենց բնակութեան կալուածոց երկիրներն՝ Մուղան, և Աղուանից, Հայոց և Վրաց աշխարհները և երթան բնակին իրենց կահ կարասիքով և ինչքերով Ռումայ (Սելճիւքաց) աշխարհը։ Թաթարաց զօրքերը շատ վշտացան թողուլ իրենց կալուածոց երկիրն, բայց մեծ իշխանին վախէն թողուցին գնացին, որովհետև շատ կը վախնային Հուլաուէն, հաւասար խանին։ Երբոր հասան Հոռոմոց կամ Ռումայ երկիրն, սուլդանն որ էր Բոզնէտին Գըլըճ–Արսլան Դ. դէմերնին ելաւ պատերազմով, բայց իր զօրութիւնը չի բաւելով դէմ դնել անոնց, փախաւ ընկաւ Ալայա կղզին (կամ ցամաքակղզեակը) Պամփիւլիոյ եզերքն։ Իսկ Թշնամիք ի սայր սուսերի ջարդեցին անոր իշխանութեան բոլոր գաւառները մինչև Ովկիանոսի (Միջերկրականի) և Պոնտոսի ծովերն։ Առին և կոտորեցին Կարնոյ քաղաքն, Երզնկան, Սեւաստը, Կեսարիան 'և Կոնը (Իկոնիոն), և անոնց չորս կողմն եղած գաւառները։ Եւ հրամանաւ Հուլաուի իրենց կահ կարասիքը ետ դարձուցին, որ երթան իրենց իջևաններն, և իրենք նոյն կողմերը շրջեցան ասպատակութիւններով։ Ասոնց քով հասաւ նաև Հեթում Հայոց թագաւորն, որ Մանգոյ Խանին այցելութենէն կը դառնար, և կեցաւ Բաչու–Նուինի քով, որ զինքը բազմութեամբ զօրաց դարձուց Կիլիկիա՝ Սիս քաղաքը։ Մինչև հոս Կիրակոս վարդապետէ ամփոփուած է։

Այս երկու գլխաւոր թաթարական արշաւանքներէ ետև, Ռումայ սուլդաններուն հզօր զօրութիւնը շատ նուազեր էր։ Այլ Հուլաուի յաջորդ Մոնկոլաց Աբաղա խանն, որ նստաւ 1265–1281, աւելի ևս տկարացնելու ձեռք զարկաւ երկուքի բաժնելով զայն. տէրութեան արևմտեան մասն Իկոնիոն քաղաքով՝ ընդունեցաւ Կայաթէտտին–Քէյխոսրով Գ. իսկ արևելեանը Սիվազ և Մալաթիա քաղաքներով մինչև Երզնկա՝ տրուեցաւ Ազզէտտին Քէյքավուզի որդւոյն Մասուտի Բ.։

Իսկ երբ Արկուն խան թագաւորեց (1283–1287) անոր հաւանութեամբ, յամին 1283, առաւ Մասուտ արևմտեան մասն ևս։ Սակայն Ռումայ տէրութեան այս միութիւնն անուանական էր, իբր զի բոլոր իշխանութիւնը Թաթարաց ձեռքը կը գտնուէր (Համմէր Գիրք Գ.)։

Արդ՝ Թաթարաց Ռումայ երկիրն արշաւելուն սկիզբն եղած էր յամին 1242*ին Զմանկատուկի մեծ ճակատամարտէն և գլխաւոր քաղաքաց Սեբաստիոյ, Կեսարիոյ, Մելիտինոյ և այլոց Մոնկոլներուն ձեռքով աւարուելէն և քանդուելէն ետև։ Սելճուք պետը կայաթէտտին–Քէյխոսրով հարկատու և ծառայ եղաւ անոնց յամին* 1244*։ Իրմէ ետև ասոր երկու որդիքն Ազզէտտին և Րոգնէտտին թագաւորեցին, Թաթարաց վերին տէրութեան ներքև, մանաւանդ որ նաև Մոնկոլներէն կարգուած էր կուսակալ մ'որ իր ազգին անունով կ'իշխէր նոյն երկիրներուն մէջ։*

Ապա Սելճուք պետերէն Ազզէտտին Մոնկոլաց ձեռքէն փախաւ գնաց Նիկիա և ապաւինեցաւ Յովհ. Լասկարինի յոյն կայսեր, որ չհամարձակեցաւ իրեն տապնջական ըլլալ. բայց երբ Միքայէլ Պալէոլոք կայսր եղաւ յամին 1260, *զինքն կոչեց Կ. Պոլիս իր ապարանքն, և իբր բանտարկեալ կը պահէր։ Իսկ ասոր եղբայրը Րոգնէտտին խեղդամահ սպաննուեցաւ Խանին հրամանաւ։*

Սուլթանի անուն տրուեցաւ նաև անոր որդւոյն կայաթէտտին Քէյխոսրովին՝ որ տակաւին մանուկ էր, և ապա Ազզէտտինի որդւոյն կայաթէտտին Մասուտի յամին 1283 *։ Սելճուք սուլթաններուն մէջ վերջին եղաւ Ալայէտտին Գ. որ նստաւ յամին* 1297 *և սպաննուեցաւ* 1307*ին։*

Գ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ԵՒ ԱՆՈՆՑ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆԴԻՊԱԾ ԴԷՊՔԵՐԸ

Սելճուք պետութիւնը մինչև իր աւարտը հասցնելու համար, Սեբաստիոյ Նուիրական պետաց պատմութիւնը սակաւ մի յետաձգել պէտք եղաւ, ինչպէս նաև նոյն ժամանակ հանդիպած արտաքին դէպքերն, որոնց կը դառնամ այժմ։

Սեբաստիոյ պատմութիւնն Անանիայէն ետև 81 (1207 - 1288) *տարուան բացատ մը թողլով՝ կ'ըսէ. « Ցաւուրս յայնոսիկ (այսինքն*

ՋԼԷ) Նստաւ ի վանս Ս. Նշանի տեսուչ նահանգիս Սեբաստիոյ Տ. Նիկողայոս արքեպիսկոպոս, այր հեզ և խոնարհ»։ (Գլ. Ղ.)։

Ասիկա ջանաց կարելի եղածին չափ լաւ կառավարել իր հօտը։ Համբերեց ևս շատ վշտերու, վասն զի ինչպէս կը պատմէ նոյնը յամին ՉԽԱ. (1292) խումբ մը աւազակներ ապստամբելով Եգիպտոսի սուլտանէն, որ էր Խալիլ–Աշրաֆ–Սալահէտտին–Պէն–Գէլաուն, ասպատակաւ կը հասնին մինչև Սեբաստիա, որուն արուարձաններուն մէջ սպաննեցին 50 անձ քրիստոնէից գլխաւորներէն, և 800 անձ ևս գերի բռնեցին, և աւելի ևս համարձակելով քաղաք մտան, բայց Սամազարին որդին Արապ ջարդեց իրենցմէ 568 հոգի և հալածեց այն կողմերէն։

Երկու տարի վերջը (1294) Բաալահ, Սոփու և Ազաչար ապստամբները մեծ բազմութեամբ եկան մտան Սեբաստիա և բաւական չարիքներ գործեցին։ Ետքէն քաղաքացիք մէկզմէկ քաջալերելով, զարկին ջարդեցին անոնցմէ շատերն և մնացածը հալածական փախուցին։

Իսկ 1298ին Սմբատ Կիլիկիոյ թագաւորը լսելով՝ որ իր եղբայրները Հեթում և Թորոս Կ. Պոլսէն մեկնած Թաթար խանին կ'երթան և Սեբաստիա հասեր են, բազմութեամբ զօրաց գնաց բռնեց զիրենք հոն, և բերաւ Կիլիկիա, Թորոսն սպաննեց և Հեթումը կուրցուց։

Յաջորդ տարին (1299 – ՉԽԸ) Սուլամըշ անուն (Իկոնիոյ Ալայէտտին վերջին) սուլտանին զօրապետն ապստամբելով իր թագաւորին դէմ, սպաննեց Պայանչարն և Պիչեարն, և ետևէ էր տիրելու Սեբաստիոյ, բայց անոնք իմանալով իր անգութ և անողորմ բարքն և ապստամբութիւնն չի հնազանդեցան, և ամրացուցին պարիսպներն, և զինուեցան դիմադրելու անոր՝ Աստուծոյ ապաւինելով։ Ազնուհացին առաջին կիւրակին, Մարտ 8. Սեբաստիա մայրաքաղաքին վրայ եկաւ ապստամբին եղբայրը բազմութեամբ զօրաց, քանի մ'օր վերջն ինքն իսկ Սուլամըշ, և կը պաշարեն քաղաքը քառասուն օր, բայց չի կրնալով բան մ'ընել Ապրիլ 17ին Աւագ Ուրբաթ օրը մեկնեցան և գնացին Աշխարհիդաշտ (Ագշէհրապատ), ուր կոտրուեցան Բաշխերտէն, և ինքը մազապուր փախաւ Եգիպտոս։ Սեբաստիա. դառն նեղութիւններ կրելէն ետև, այս անգամ փրկուեցաւ Տէրամբ։

Այս անձուկ ժամանակը նաև Նիկողայոս արքեպիսկոպոս տառապեցաւ և վախճանեցաւ յամին 1305 (ՉԾԴ.) *և թաղուեցաւ Ս. Նշանի վանքը։*

Նոյն տարին յաջորդեց իրեն Ստեփանոս Ա. այր հանճարեղ և կորովաբան, հովիւ փութաջան։

Այս ատեններս Ալաէտտին Գ. Սելճուքայ վերջին սուլթանին մեռնելէն ետև Ռումայ պետութիւնը տասն ինքնագլուխ իշխանութիւններու բաժնուեցաւ, որոնք են։

Ա.	*Խիւտավէնտիկեար*	*Բիւթանիա, Գաղատիա*
Բ.	*Քարասի*	*Միւսիա*
Գ.	*Սարուխան*	*Լիւդիա*
Դ.	*Այտին*	*Յոնիա*
Ե.	*Մէնթէշէ*	*Կարիա*
Զ.	*Թէքքէ*	*Լիկիա և մասն Պամփիլիոյ*
Է.	*Համիտ*	*Պիսիդիա և մասն Պամփիլիոյ*
Ը.	*Կէրմեան*	*Մասն Փռիւգիոյ*
Թ.	*Գարաման*	*Լիկայոնիա*
Ժ.	*Կաստամունի*	*Պափլագոնիա*

Ասոնց առաջինը Խուտավէնտիկեար՝ Օսմանին էր, նախահօր Օսմանեան պետաց, որոյ յաջորդք հարիւր տարի ժամանակ չանցած այս ամեն իշխանութիւնքն և ուրիշ շատ աշխարհքներ գրաւելով կանգնեցին Օսմանեան հզօր ինքնակալութիւնն։

Նոյնպէս յամին 1307 (ՉԾԷ.) *Գրիգոր Է. երանայիշատակ կաթողիկոսին որոշման և առանձին յանձնարարութեան համեմատ, Լեոն Գ. աստուածասէր թագաւորն Հայոց և բարեպաշտ մեծ իշխանը Հեթում թագաւորահայր, փոյթ ըրին մեծ ժողով մը գումարել Սիս մայրաքաղաքին մէջ. և ըստ այնմ ժողովեցան բազմաթիւ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, որոնց թիւն սակաւ մի տարբեր կը դնեն.*

ումանք 36, ումանք 40. իսկ Սեբ. Պատմ. կը դնէ 41։ Ասոնց մէջ էր նաև Սեբաստիոյ արքեպիսկոպոսը Ստեփանոս, 10 Վարդապետք, 7 Աբբայք. նաև Թագաւորն և իրեն երեք հօրեղբարք և 10 մեծամեծ իշխանք։ Ժողովքին գահերէցն էր Կոստանդին արքեպիսկոպոս Կեսարիոյ, իսկ նպատակը՝ Ա. միութիւն ընել Հռովմայ Ս. Եկեղեցւոյն հետ. յայտնապէս դաւանիլ ի Քրիստոս երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն. Բ. ընդունել եօթը տիեզերական ժողովքները և անոնց սահմանադրութիւնը։ Գ. Ս. Աստուածն երգել յանուն որդւոյ Աստուծոյ, աւելցնելով մէջը Քրիստոս բառը։ Դ. տօնել Քրիստոսի ծնունդը Դեկտ. 25ին, Գալուստը՝ Փետր. 2, և Աւետումը՝ Մարտ 25. և ուրիշներ, զորոնք Հարք ժողովոյն ընդունեցան և ստորագրեցին ամենեցուն հաւանութեամբ։

Նաև կաթողիկոս ընտրեցին Կոստանդին՝ Կեսարիոյ արքեպիսկոպոսը, որ անուանեցաւ՝ Կոստանդին Գ. և չէր սա Պրօնագործն՝ այլ ուրիշ Կեսարացի մը։

Սեբաստիոյ պատմութիւնը կը համարի թէ այս ժողովքը գլխաւորաբար եղած էր կաթողիկոս մը դնելու համար, ուր ընդհակառակն այն պիտի ըլլար Գրիգոր Ե. Անաւարզեցիի ժամանակ. բայց մահը վրայ հասնելով յապաղեցաւ։ Կոստանդին ժողովքին կը ստորագրէ արքեպիսկոպոս Կեսարիոյ, և այն երկու տեղ, և ոչ կաթողիկոս Հայոց, որով յայտնի է թէ իր ընտրութիւնն եղած է ժողովոյն վարդապետական մասն աւարտելէն ետև։ Ստեփանոս արքեպիսկոպոս Սեբաստիոյ ստորագրած էր ժողովոյն և ընդունած։ Բայց իր վիճակը դառնալէն ետև, տեսնելով թէ չփոթութիւն պիտի ելլէ, չէ գործադրած՝ անշուշտ ծիսական մասերն և ոչ անոնք, որ ուղիղ դաւանութեան կը պատկանէին, զի արևմտեան Հայ եպիսկոպոսաց մէջ չկար այն խստութիւնն ինչպէս արևելեան կողմերն. սակայն և այնպէս չի կրցան ժողովին բոլոր յօդուածներն ամբողջ ի գործ դնել ամեն տեղ։

Օշին յաջորդելով Լեւոնի, ջանաց գործադրել տալ զանոնք. Ատանայի մէջ ժողովք մը գումարեց Կոստանդին կաթողիկոսին հաւանութեամբը։

Այս պարագաներու մէջ Երուսաղեմի Սարգիս եպիսկոպոսը գլուխ վերցնելով ինքզինք պատրիարք հրատարակեց յամին 1311։ *Սեր. Պատմ. կ'ըսէ թէ նաեւ Սեբաստիոյ արքեպիսկոպոսը մերժեր է այն կանոնները։ Այսպիսի բան մը գրուած չկայ ուրիշ ազգային ժամանակակից պատմութեանց մէջ. սակայն գործադրութեան դժուարութիւնը տեսնելով՝ մանաւանդ որ Կարնոյ Գրիգոր եպիսկոպոսը բաժակին մէջ ջուր խառնելուն համար սպաննուեր էր, ուստի կարծեց խոհեմութիւն զգուշութեամբ վարուիլ։ Սխալ է թէ Երուսաղէմի եպիսկոպոսին պէս, նաեւ Ստեփանոս ապստամբեր է Հայրապետին դէմ, ցաւալի է եւ որ մեր հեղինակը կը համարձակի «անիրաւ» կոչել ժողովոյն որոշմանց համար Լեւոնի եւ Օշնի թագաւորաց եւ Կոստանդին կաթողիկոսին տուած հրամանն, եւ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը տարբեր՝ յիշեալ որոշումներէն։ Չեմ կարծեր որ այսպէս կը խորհէր Ստեփանոս Ա. որ ընդունեցաւ եւ ստորագրեց, եւ կաթողիկոսին իշխանութենէն չի բաժնուեցաւ. այլ տեսաւ բացայայտ ինչ ինչ յօդուածոց գործադրութեան դժուարութիւնն, որոնք ծիսից կը պատկանէին միայն եւ ոչ բնաւ դաւանութեան վերաբերեալ նիւթոց մէջ։*

Ստեփանոս արքեպիսկոպոս կնքեց իր կեանքը յամին 1328 (*ՉՀԷ.*) *ԻԳ. տարի եպիսկոպոսութիւն ընելէն ետեւ. եւ թաղեցաւ Ս. Նշանի վանքը։*

Նոյն տարին միաբան հաւանութեամբ՝ քահանաներն, իշխաններն եւ ժողովուրդը, ընտրեցին արքեպիսկոպոս Նահանգիս Սեբաստիոյ Տէր Շմաւոն կամ Սիմէոն, որ խոհեմ եւ աչալուրջ էր եւ իր կառավարութիւնը գովելի։

Յամին 1342 *հրամանաւ Կոստանդին թագաւորին եւ Մխիթար կաթողիկոսին մեծ ժողովք մ'եղաւ Սիս, ուր գումարեցան* 29 *արքեպիսկոպոս եւ եպիսկոպոս, որոնց մէջ էր նաեւ Շմաւոն արքեպիսկոպոս Սեբաստիոյ.* 5 *գլխաւոր վարդապետներ,* 10 *վանահարք, շատ մը քահանաներ։ Ժողովքին նիւթն էր ամբաստանութեանց մատենիկն, որ մատուցուած էր Հռոմ. եւ ոչ թէ Հռոմայեցիք էին որ կը զրպարտէին Հայերն, ինչպէս կ'ուզէ ըսել մեր պատմագիրն։ Հայեր էին նոյն ամ-*

բաստանագիրը կամ, եթէ կ'ուզէ, զրպարտագիրը մատուցանողներն, որ 117 *յօդուած կը բովանդակէր։ Հոս բառ առ բառ կը բերեմ մեր հեղինակին խօսքերը. «միաբանեալ հանեն յառեան զրպարտութեանցն Հռովմայեցւոց (սխալ է, ամբաստանողներն Հայեր էին. իսկ Հռովմ հարցում ըրաւ թէ իրա՞ւ էին անոնք) որք արարեալ էին ազգին մերոյ և ժողովեալ ի միում գրքուկի* 117 *գլուխ բան մոլորութեանց, զոր ի քննութիւն մատուցեալ արքեպիսկոպոսաց, մի առ մի գրեցին զպատասխանի ընդարձակ յոյժ, և արարին գիրք մի յորում խոնարհական բանիւք ունայնացուցեալ նանրացուցին զսոյն ամենայն զրպարտութիւնս և զչարախօսութիւնս նոցին, և ցուցին լինել նոցին աղճատանս զառանցելոց մտաց և շաղփաղփութիւնք բանսարկու և քսու արանց»։*

Այս խօսքերը շատ լաւ են և մեծագոյն մասամբ Հ. Միք. Վ. Չամչեանէ առնուած. Գիրք Ե. Գլ. ԽԲ. էջ 342։

Բայց պէտք է նկատել թէ ինչ էին այն 117 *գլուխք ամբաստանութեանց, և Հայոց Սինհոդոսն ինչպէս «ունայնացուցեալ նանրացոյց» զանոնք. ընդունելո՞վ թէ մերժելո՞վ։ Մեր հեղինակը կը յիշէ միայն մէկ բան, թէ ի վտանգի մահու երբ կարելի չըլլայ հաղորդ առնուլ, Հայք կը համարին բաւական եթէ մէկն երկրի վրայ խաչ շինելով անոր թեփ հողէն մաս մը ճաշակէ, հաղորդ առած կը համարուի։ Ասոր պատասխանն յայտնի է, և ես չեմ կարծեր թէ գիտնական մ'ընդունի ասանկ ցնորք մը. բայց ցայսօր իսկ Էջմիածնական ռամկաց մէջ այն տխուր գաղափարին հետևողներ կը գտնուին. բայց կան կարևորագոյն իրեր, որոնց մի քանի հատը յիշենք։ Հոգւոյն Սրբոյ բղխման համար «և յՈրդւոյ» կը պատասխանեն Հարք Սինհոդոսին «ոչ երբէք գտանեմք թէ եկեղեցի Հայաստանեայց դիմադարձ լեալ իցէ բղխման Հոգւոյն Սրբոյ և յՈրդւոյ. և կամ չիցէ համարձակեալ յայտնապէս քարոզել՝ մանաւանդ յայժմու ժամանակիս». և երկարօրէն կը ցուցնեն ասիկա։*

Քաղկեդոնի ժողովին համար կ'ըսեն «խոստովանիմք ի Քրիստոս զերկուս բնութիւնս միաւորեալս ի միում անձին Որդւոյն Աստուծոյ, ընդունիմք զՍ. ժողովն Քաղկեդոնի և զՔաւարան։ Ճանաչեմք և զիշ-

խանութիւն Հռովմայ եկեղեցւոյն»։ Դարձեալ ուրիշ տեղ մը կ'ըսեն. «Մեք արկանեմք ջուր ի մատուցման պատարագի և տօնեմք զտօն Ծննդեան ի Իե. Դեկտ.» և ուրիշ շատ մը վարդապետական և ծիսական նիւթեր, որոնց Մխիթար կաթողիկոսին հետ նաև վեց արքեպիսկոպոսք, որոնց մին էր Շմաւոն կամ Սիմոն արքեպիսկոպոս Սեբաստիոյ և 23 եպիսկոպոսներ, նաև վարդապետք և աբբաներ՝ ինչպէս կը վերջացնէ Պատմ. Սեր. «և ապա ձեռն եղեալ ստորագրեցին ժողովեալ արքեպիսկոպոսունքն միաբան (այսինքն ամեն եպիսկոպոսներն) և առաքեցին առ Պապն, և ինքեանք դարձան ի տեղիս իւրեանց». դարձաւ և Տէր Շմաւոն իր վիճակը. գոհ իր հաւանած և ստորագրած ճշմարտութեանց վրայ, ինչպէս ըրած էր նաև իր նախորդը, զի Սսոյ (1307) Ադանայի (1316) և դարձեալ Սսոյ (1342) որոշումներն ըստ սկզբան՝ մի և նոյն էին։ Շմաւոն արքեպիսկոպոս վախճանեցաւ բարի վարուք և առաքինի գործովք (Պատմ. Սեբ.) յամին 1369 (ՊԺԸ.) և թաղեցաւ Ս. Նշան։

Դ. — ԹԻՒՐՔՄԷՆՆԵՐՈՒՆ ՏՈՀՄԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ Բ. ԵՒ ԻՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Շմաւոնի յաջորդեց Ստեփանոս Բ. յամին 1369 Ս. Նշան վանաց մէջ ուր էր իր աթոռը։ Ասոր իշխանութեան ժամանակ որ տևեց ԺԷ. տարի՝ հանդիպեցան Սեբաստիա և իր շուրջն դէպքեր, զորոնք մէջ կը բերեմ համառօտիւ։

Սելճուք պետութեան կյնալէն ետև, նաև Մոնկոլաց ինքնակալութիւնը չի կրցաւ այնուհետև պահուիլ իր հզօր զօրութեան մէջ։ Արևմտեան սահմաններուն վրայ շատ մը գաւառներ ստացուած եղեր էին Թիւրքմէն իշխանաց, որոնք ինքնագլուխ կը տիրէին այլ և այլ գաւառներու վրայ։

Այս իշխաններէն ԺԴ. րորդ դարուն վերջերը նշանաւոր էր այն, որ կը նստէր Կեսարիա, որոյ անունն ինձ անծանօթ է։ Երբոր մեռաւ (ինչպէս կը թուի անժառանգ), իր տէրութեան կալուածները բաժ-

նուեցան իր իշխանաց մէջ ։ Թոգաթի իշխանութիւնը բաժին ելաւ Հաճիճէշտիի, Ամասիայինը՝ Շէյխ–Մեճիքայ, և Պիրհանէտտինի՝ Սեբաստիայինը։

Հ. Միքայէլ Վ. Չամչեան (Գիրք Ջ. Գլ. Բ.) ուրիշ կերպ կը պատմէ և կը համարի, որ արդէն Սեբաստիա իշխան մը կար, ինքնուրոյն կամ ուրիշի ձեռաց ներքև, և անունը չի յիշուիր. ահա իր խօսքը. Այն ժամանակները (ՊԼ.Ջ. 1387) երբոր Լանկ – Թամուր Պաղտատն առաւ և Հայաստան եկաւ, Պուրհանատին անունով մէկը, որ և կ՚ըսուի Բուրհան Ղազի համարձակեցաւ ապստամբիլ Սեբաստիոյ ամիրայէն և սպաննեց զինքն, և ինքը նստաւ անոր գահը, զօրք ժողվեց և կ՚ասպատակէր շատ տեղեր։ Եւ որովհետև ամենուն հետ անգութ և անողորմ էր, իր զօրքերն, որոնք կը գտնուէին Սեբաստիա քաղաքին մէջ, մտածեցին իրեն դէմ ապստամբիլ, կամ ծածուկ դաւաճանութեամբ սպաննել զինքը։

Համմէրի մէջ (Գիրք Ջ.) աւելի մանրամասն ծանօթութիւն կը գտնուի. հոս, կըսէ, ակնարկ մը նետենք երկու Պուրհան—Էտտիններուն՝ հօրն և որդւոյն, և ետքինին բռնամահ ըլլալուն վրայ։ Ահմէտ—Պուրհան—Էտտին (փորձ հաւատոյ) դատաւոր (Գատը) էր Կեսարիոյ Թիւրքմէն իշխանին. և անոր մահէն ետև ընդունեցաւ Սեբաստիոյ տէրութիւնն. որ ընդարձակեցաւ աւելի ևս, գրաւելով Թոգաթը, Կեսարիան և ուրիշ քաղաքներ իրենց շրջականներովն։ Այս նոր իշխանութեան վրայ այսպէս կը շարունակէ նոյն Համմէր. փոքր Ասիոյ արևելագոյն մասին մէջ կար Սիվազի (հին Սեբաստիոյ) ոստիկանութիւնն, այս քաղաքին և Կեսարիոյ մէջ. ուր կը թագաւորէր Գատի Ահմէտ—Պուրհան—Էտտին, իմաստուն և աշխարհավար անձ մը, կազմեր էր ասիկա իր պետութիւնը Թաթար և Թիւրքմէն տոհմերու մնացորդներէն, որոնք երբեմն կը հնազանդէին ճինկիզեան վարչութեան։

Ահմէտ—Պուրհան—Էտտին և իր որդին Ապուլ—Ապպաս, որովհետև ապաւինութեան տեղ տուած էին Կերմիանու և Մէնթէշէի գահընկեց իշխանաց, իրենց հետ թշնամացուցած էին սուլդան Պայազիտ Ըլտըրըմը։ Թշնամի էր իրենց նաև Քարա Եուլուք կամ Քարա Օսման, որ Պայըն-

տըր Նոր տոհմին, կամ Ագ-գոյունլու թիւրքմէնաց պետն էր, և թէպէտ առաջնոյն չափ զօրաւոր չէր, բայց անկէ աւելի վտանգաւոր էր մօտաւորութեամբը։ Սոյն պարագայից մէջ ինչպէս կ'երևայ առանց մեծ վտանգի կնքեց Ահմէտ-Պուրհան-էտտին իր կեանքը խաղաղութեամբ։

Եւ յաջորդեց որդին Ալուլ-Ապպաս-Պուրհան-էտտին, և ինձ կը թուի թէ սոր օրն եղած է Ստեփանոս արքեպիսկոպոսի նահատակութիւնը։ Հետևելով Հ. Միքայէլի, գրեցի թէ Սեբաստիա եղող զօրքը ապստամբեր էր Պուրհան-էտտինի դէմ։ Երբոր ազդարարութիւն եղաւ նոյն Ամիրային իր զօրաց ապստամբութեան խորհուրդը, թշնամի անձինք ըսին իրեն թէ ապստամբութեան գրգռիչը Սեբաստիոյ Ստեփանոս եպիսկոպոսն է, որ լաւ մարդ էր, մեծամեծաց յարգելի, և իր մարմնոյն կազմածքը հասարակ կարգէ դուրս ահեղատեսիլ և զօրաւոր էր։ Երբոր ամիրան լսեց դիմեց Սեբաստիոյ վրայ, ապստամբները նուաճեց, և խիստ և ժանտաբարոյ մարդիկ ղրկելով վանքը ձերբակալեց եպիսկոպոսն, որ իր երկու աբեղաներովը, որոնց անունն էր Սեղբեստրոս և Թէոդորոս, ներկայացաւ, և ամիրան ուզեց սպաննել զիրենք սաստիկ տանջանքներով։ Եւ թէպէտ եպիսկոպոսը ցցուց անոր առջև իր անմեղութիւնն և հաւատարմութիւնը, բայց անիկա թշնամիներէն գրգռուելով ըսաւ. «քու անմեղ և հաւատարիմ ըլլալդ անով պիտի գիտնամ, որ դու դառնաս իմ օրինացս»։ Եպիսկոպոսը պատասխանեց. «դու զիս իբր ապստամբ բռնեցիր, արդ թէ անմեղ եմ, արձակէ»։ Բայց ամիրան անոր այս պատասխանէն աւելի ևս բարկանալով սկսաւ սաստիկ ստիպել զինքն որ ուրանայ, և կը սպառնար իր և աբեղայից վրայ մեծ չարիքներ թափել։ Այն ատեն երեքը մէկտեղ սկսան խոստովանիլ միաբերան, Ս. Երրորդութիւնը և Քրիստոս Աստուած և ասքէն կը յաւելուն, «մենք ուրիշ հաւատք չունինք և չենք ընդունիր այլ միայն ասիկա, և այս հաւատքի համար մեռնիլ մեզի պարծանք կը համարինք, և կը փառաւորենք մեր Արարիչն, որ անանկ ուղիղ հաւատք տուաւ մեզի»։ Ասկէց զայրացաւ ամիրան, և հրաման տուաւ իր առջևը գլուխնին կտրել։ Եւ դահիճը անգամ մը բոլոր զօրութեամբ զարկաւ եպիսկոպոսին վիզն և

չի կրցաւ կտրել. իսկ անիկա անդադար կ'օրհնէր իր Փրկիչը. ամիրան բարկացաւ դահճին վրայ, և եպիսկոպոսին քաղցրաբարբառ օրհնութիւնը լսելով բարձր ձայնով աղաղակեց, պատռեցէք բերանն, որ չի լսեմ օրհնութեան խօսքերն: Այն ատեն դահիճները տարածեցին զինքն երկրի վրայ, ոմանք բերանը պատռեցին, և ոմանք մէջքէն կտրեցին, և անդամ անդամ յօշեցին, և նա փառք տալով աւանդեց իր հոգին: Նոյն տեղը գլխատեցին նաև երկու աբեղաները, և սպաննուած չարագործաց դիակներու մէջ նետեցին իրենց մարմինը, զորոնք հաւատացեալք գողցան և տարին թաղեցին, և այս եղաւ յամին 1387 ՊԼԶ. ժէ. Մարգաց. այսինքն 25 Յունիսի. ուրիշ անծանօթ պատմութեան մէջ կը գրուի ՊԼԳ: կ'ըսուի թէ այս Պուրհանէտտին կործանեց Թառասնից վանքն. որ յայտնի է թէ անիկա Լանկ Թամուրէն աւրուեցաւ. Պատմ. Հայ. Հտ. Գ. Գիրք Զ. Գլ. Թ. Պատմ. Սեբ. Գլ. Է. որ աւելի ընդարձակ պարագաներ կը յաւելու:

Կը տեսնեմ, որ Սեբաստիոյ այս երեք արքեպիսկոպոսք՝ սքանչելի անձինք էին. Ստեփանոս Ա. ստորագրեց Սսոյ ժողովոյն 1307. Շմաւոն նոյնպէս Սսոյ ուրիշ ժողովի մը յամին 1342. և Ստեփանոս Բ. այսպիսի եպիսկոպոսական արիութեամբ կնքեց իր կեանքը Քրիստոսի Ս. հաւատոյ վրայ նահատակուելով:

Բայց ամիրան դեռ ևս բարկութեամբ բորբոքեր էր. հրամայեց որ կողոպտեն Սեբաստիոյ գաւառին Հայոց եկեղեցիներն և վանքերն. և իր սպասաւորները շատ աղետալի գործեր ըրին: Ս. Նշանի մէջ ինչ որ գտան առին, և հոն բնակեցուցին օտարազգիներ, նոյնն ըրին ուրիշ քանի մը վանքերու համար. մինչև հազիւ կրցան Հայոց մեծամեծները դադրեցունել տալ դառնութեան գործերը. բայց ամիրան դրամական ծանր հարկեր դրաւ եկեղեցականաց վրայ. Որայի վանահայրը Միքայէլ Վ. և 36 աբեղաները բռնադատեց որ ուրանան Քրիստոսը. և շատ մը սպառնալիքէ ետև, երբ տեսաւ թէ չի հաւանեցան իրեն, ամէնքն սպաննել տուաւ: Բայց վրէժը շուտ հասաւ. զի բռնեց զինքը սուլդան Պայազիտ և չարաչար սպանեց: (Հոկ. 2. Պատմ. Հայ. անդ):

Բայց Պուրհան–էտտին Ապուլ–Ապպասին մահը սուլթան Պայազիտի ձեռամբ չեղաւ. սա անուղղակի պատճառ մ'եղաւ անոր սպանութեան. կամ իր Գարամանայ երկրին գրաւմամբը, որով Պուրհանէտտին, Սեբաստիոյ, Եւդոկիոյ և Կեսարիոյ իշխանը վախէն փախաւ Խարբերդու լեռներն և հոն սպաննուեցաւ Գարա–Օսմանէն. կամ նոյն իսկ Օսմանեանց իր սահմաններն արշաւելէն, որ եղաւ հետևեալ կերպով.

Յամին 1396, Օսմանեանք մեծ արշաւանք մ'ըրին Կապադովկիա և Փոքր Հայք նոյն գաւառները գրաւելու համար։ Համմէր (Գիրք Զ.) այսպէս կը գրէ. «Թիմուր–Թաշ վէզիր Եըլտըրըմ Պայազիտի առաւ Գանգրան, որ երբեմն Պափլագոնիոյ թագաւորաց աթոռն էր. Տիւրիկէ Չիչէք–Տաղի (Ծէտիսուս) լեռներուն քով Սեբաստիոյ արևելեան կողմը, երկու օր անկէ հեռու. Նիկոպոլիսը (քաղաք յաղթութեան) Պոմպէոսէն կառուցուած, Միհրդատի յաղթած տեղը. Տէրէնտէ երկու օր Տիւրիկէէն դէպ հարաւ, երկուքի ճեղքուած լեռան մը (Զաթալ–Թէփէ) քով, ուսկից կը բղխի Ագու. Պեհեսնի համանուն գաւառովը, Մարաշի (հին Գերմանիկ) ճամբուն վրայ, որ առատ պարտէզներով շրջապատուած է, զոր կ'ոռոգանէ փոքրիկ գետակ մը. Մալաթիան (հին Մելիտինէն) որ Եփրատէն շատ հեռու չէ, Տէյր–Մեսիհ վանքին քով, որ Բունար–Պաշի վանքին հետ Ուսպուցուի (Ասպուզի) գեղեցկագոյն անցքը կը բանայ (Ճիհաննիւմա եր. 600), այս քաղաքը հռչակաւոր է Զիթ–Արապի Սէյտ–Էլպաթթալ դիւցազին հայրենիքն ըլլալուն համար, նաև Տանիշմէնտաց գլխաւոր քաղաքն էր. առաւ նաև Կամախն (որ Եփրատի քով Օսմանեանց հզօր ամրոցն եղաւ) Երզնկան և Պայպուրտը»։ Ինչպէս կը տեսնուի, այս արշաւանաց մէջ, Պուրհան–էտտիներուն քաղաքաց դէմ չկայ յարձակում, ոչ Սեբաստ, ոչ Եւդոկիա և ոչ Կեսարիա վնաս մը կրեցին, թէպէտ Թիմուր–Թաշ նոյն քաղաքներէն շատ աւելի առաջ անցած էր։

Այսուհանդերձ Ապուլ–Ապպաս ահաբեկ ըլլալով՝ իր զօրքովը նահանջեցաւ Խարբերդի լեռներն, ուր Գարա–Եուլուք, կամ Գարա–Օսման տէր Պայընտըր Նոր տոհմին, որ կ'անուանէր Ագ–Գոյունլու, սաստիկ պատերազմ մղեց իրեն դէմ, և թափով վրան երթալով ձերբակալ ըրաւ և սպաննեց զինքը։

Հաճի խալիֆը Համմերի քով (Գիրք ժԵ.) կը գրէ որ Գարա-Եուսուֆ–Գարա–Գոյունլու յամին 801–1398 սպաննեց Գազի–Պուրհան–էտտին, Սեբաստիոյ և Թոգաթու Տէրը։

Սուլդան Պայազիտ երբ լսեց Ապուլ–Ապպասի մահն, ուզեց անոր Զէյն–էլ–Ապէտին որդւոյն թողուլ հօրը կալուածքներն։ Բայց նոյն իշխանութեան ազնուականներն աւելի գործ խոհեմութեան համարեցան երիտասարդ իշխանը զրկել իր աներոջը Զիւլգատր տոհմին պետ Նասրէտտին իշխանին քով, որ մօտ էր, և հրաւիրել Պայեզիտ ինքնակալն, որ գայ տիրէ իրենց աշխարհին. նա հաճեցաւ իրենց այս խնդրոյն, զօրք զրկեց, և առաւ խաղաղութեամբ Սեբաստիա մայրաքաղաքը, Թոգաթն և Կեսարիան իրենց սահմաններովն։ Եւ այս կերպով Սեբաստացիք ինքնայօժար մտան Օսմանեան պետութեան հզօր իշխանութեան ներքև։

Պատմիչները միաբան չեն Սեբաստիոյ Օսմանեան ինքնակալութեան հպատակելու ժամանակին համար։ Համմէր կը դնէ յամին 1392. Դուկաս կը հաւաստէ որ Եըլտըրըմ Պայազիտ առաւ Սեբաստիան յամին 1394 իսկ Հաճի խալիֆէ, ինչպէս տեսանք, կը դնէ 801–1398։

Պայազիտ Սեբաստիան առնելէն ետև հոն զրկեց իր որդին Սիւլէյմանը հինգ էմիրներու հետ։ Երզնկա քաղաքը առաւ Թահերդէն ամիրայէն։ Ոմանք էրթողրուլը կ'ըսեն թէ կուսակալ եղաւ Սեբաստիոյ, և ոմանք Մուստաֆան. երկուքն ևս որդիք էին սուլդան Պայազիտի։ Կրնայ ըլլալ, որ երեք արքայորդիք մէկը միւսէն ետև կուսակալ եղեր են։ Նաև յիշատակուած Մուստաֆայի որդին կուսակալ կարգուած է Մալաթիա քաղաքին և գաւառին։

Ե· — ԼԷՆԿ-ԹԻՄՈՒՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ· ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՒԵՐՈՒՄԸ

Փոքր Ասիոյ իշխաններէն Գարամանի, Կերմիանի, Սարուխանայ, Համիտի, Մէնթէշէի և Այտընի գահազուրկ պետերն՝ աստ անդ թափառելէն ետև, գնացեր ապաւիներ էին Լէնկ-Թիմուրի, լսելով անոր յաղթական արշաւանքն դէպ Ասորիք, և կ'աղերսէին անոր գթութիւնն, որ հայրենի ժառանգութիւննին դարձնէ իրենց: Իսկ Թիմուր պատգամ ղրկեց սուլտանին, և խնդրեց որ յիշեալ իշխանաց հայրենական երկիրներն իրենց սեպհական տէրերուն յանձնէ, բայց խիստ պատասխան ընդունեցաւ օսմանեան ինքնակալէն:

Վրաց աշխարհքէն, կը գրէ Համմէր, դէպ ի Սիվազ ուղղեց Թիմուր իր ընթացքը Պիւրհանէտտինի մահուան վրէժը խնդրելու նոյն քաղաքին բնակիչներէն, և ոչ թէ զանի սպաննող Գարա-Օսմանէն (որ և Գարա-Եուլուք) որ իր իշխանութեան հպատակեր էր, և իրեն համար պատերազմներ մղեր էր Գարա-Գոյունլու Թիւրքմէնաց Գարա Եուսուֆ գլխաւորին, եգիպտացի իշխանաց, և վերջապէս Սեբաստիոյ տիրոջ Ապուլ-Ապպասի դէմ, զոր գերի բռներ և սպաններ էր:

Թիմուրի արշաւանքին լուրն առնելով՝ իրեն առջևէն հալածական փախան, Ահմէդճէլայիր, Պաղտատի Խանըհուլատի տոհմէն, և Գարա-Եուսուֆ Տիարպէքիրի տէրն: Ասոնց դէպ ի Եգիպտոս փախուստը զինուորութեամբ արգիլեց Թիմուր-Թաշ, որ Եգիպտոսի սուլտանին կողմանէ հրամանատար էր Հալէպի մէջ, և անոնք գնացին ապաստանեցան Եըլտըրըմ Պայազիտին:

Իսկ Լէնկ-Թիմուր բազմութեամբ զօրաց, և իրեն առաջնորդ առնելով Ագգոյունլու տոհմին Գարա-Օսմանն կամ Եուլուք գլխաւորն, եկաւ պաշարեց Սեբաստիան, ուր կը կուսակալէր այն ատեն Էրթողրուլ (Օտորուլ կ'անուանէին Բիւզանդացիք)· Բարկոնտիլաս կ'ըսէ· (Հա.

Ա. եր. 47) թէ տասն և երկու բիւր մարդիկ կը բնակէին հոն և Փոքր Ասիոյ ամրագոյն քաղաքներէն մին էր։ Առաջ գրեցի պարիսպներուն և ամրութիւններուն վրայ, զորոնք կանգներ էր Ալաէտտին Քէյքապատ Ա։ Համեմատ էր ամեն կերպով քաղաքին ամրութեան հետ՝ ամրականաց ոյժը, յարձակման ուժգնութիւնն և աշխարհակալին անգթութիւնը։ Այս քաղաքին կործանման արհաւիրքը, շատ վեր էր ուրիշներունէն, որոնց վրայ կը խօսուի պատմութեանց մէջ, և աւելի սաստիկ անոնցմէ, որոնք գործուեցան նոյն Լէնկ-Թիմուրէն և Ճինկիզ-Խանէն։

Քաղաքը ջրափէն խրամով երեք կողմէն պատած էր, միայն արեւմտեան կողմէն յարձակում ընել կարելի էր. և այն ևս հնարքով և ականահատութիւնով. նոր օրինակ էր պաշարման և պարիսպը խրամատելու կերպը։ Ութ հազար ականահատ կը բրէին պարսպին ներքև, և գործաւորաց երթևեկութեան համար ստորերկրեայ ականներ պատրաստուած էին. որոնց մուտքը մղոն մը հեռու էր, քաղաքացիք անոր վրայ կասկած մը չէին ունեցած։ Այսպէս կազմելէն պատրաստելէն ետև, քարերը հիմէն դուրս կը հանէին, և փայտի չերտերով, կոճղներով և տախտակներով պարիսպը վեր կը բռնէին։ Երբոր պաշարեալներէն գաղտուկ գործը աւարտեցաւ, Թիմուր ազդ ըրաւ քաղաքացւոց, որ անձնատուր ըլլան, պաշարեալները անգէտ էին պարսպին փխտուելուն և վտանգին որ իրենց առջեն էր. մտքերնին դրին թէ կրնան դիմակալել և պաշտպանել իրենք զիրենք դեռ բաւական ժամանակ. այլ բոլորովին զարմացան և ապշեցան, երբոր տեսան մէկ հարուածով թափեցան ընկան պարիսպներն և աշտարակները, կրակ տալով փայտի չերտերուն որ զանոնք վեր բռնած էին, ապա խրամատներէն ներս քաղաքը մտան թշնամիք առանց դիմադարձութեան։

Կը գրէ Շէրէֆէտտին (Գիրք Ե. Գլ. ԺԵ. եր. 266) թէ տասն և հինգ օր պաշարումէ ետև քաղաքացիք շնորհք խնդրեցին բռնաւորէն. Թիմուր շնորհեց, բայց մահմետականաց համար միայն. իսկ քրիստոնեայք, և մանաւանդ 4000 հայ հեծեալք կամ ասպետք, որոնք քաջութեամբ դէմ դրին, պէտք էր գերի ըլլային։

Իսկ Մեծոփեցին կը գրէ «Ի միւս (ՊԾԱ – 1402) ամին առեալ զզօրս իւր՝ եկն ի վերայ Սեբաստիա քաղաքին, որ և նոքա զառաջինն ոչ ետուն... և խաբեալ զնոսա ասէ, մի երկնչիք զի ով որ զձեզ սրով սպանանէ սուր նոցա ի սիրտս նոցա մացէ. և նոցա բացեալ զքաղաքն ելին ընդ առաջ նորին ուրախութեամբ և ցնծութեամբ իբր ազատեալ ի բանտէ» (եր. 64)։ Հոս ինքը կ'աւելցնէ, թէ աղքատները գերի ըրին, մեծատունները չարչարեցին, որպէս զի անոնց ծածկած պահած գանձերն առնուն, կանայքը ձիոց ագիներուն կապեցին և վազցուցին, տղաք և աղջկունք դաշտավայրի մը մէջ ժողվելով բազմութեամբ՝ հրաման ըրաւ զօրաց կամնասայլի ներքև ջարդել անողորմաբար։

Թիմուրի զօրքերը մտան քաղաքն, և սկսաւ ահագին կոտորած և անոնք որ փախչիլ փորձեցին, կերպ կերպ և սոսկալի տանջանքով կոտորեցան։ Իսկ 4000 հայ զօրքերն, որոնք հաւատարիմ մնալով Օսմանեան պետութեան, քաջութեամբ դէմ դրած և պաշտպանած էին կայսերական քաղաքը՝ բաժնեց իր զօրաց մէջ, և հրաման տուաւ զանոնք կենդանի թաղել, որովհետև երդուընցած էր զիրենք սրով չսպաննել. բայց այնպէսի խժական տանջանքով, որ մինչև նոյն ժամանակ անծանօթ էր, որպէս զի դառնակսկիծ ցաւօք ելլեն այս կեանքէն։ Եւ նախ անոնց գլուխը պրկեցին սրունքներուն մէջ սաստիկ կերպով. և ապա կահ կարասիքի պէս գլորեցին ձգեցին տասնական կամ տասներկուքական մէկտեղ խորունկ և մեծամեծ փոսերու մէջ, զոր պատրաստեր էին, և իրենց տանջանքը երկցնելու համար հողը անմիջապէս վրանին չէին լեցներ. այլ նախ տախտակով կը ծածկէին և ապա սակաւ առ սակաւ հողը կը կուտէին տախտակներուն վրայ. որպէս զի այն տանջանաց վհին մէջ հեղձանին ու յուսակտուր մեռնին աղեկտուր. ո՜վ անլուր դառնութեան և խուժադուժ վայրագութեան։ Հ. Միքայէլ կը պատմէ որ նաև քրիստոնեայ իշխանաւորներն և մեծատունները կողոպտելէն ետև գլուխնին ոտքերնուն հետ պրկելով, գլորել և նետել տուաւ զանոնք խորունկ և խոշոր փոսերու մէջ՝ զորոնք փորել տուած էր նոյն քաղ-քին բոլորը։

Սպաննել տուաւ քաջերն, իսկ բորոտներն խեղդել տուաւ որպէս զի իրենց ախտը չի փոխանցեն սերնդոց, չի խնայեց կենաց տղայոց, պատանեաց և ծերոց։

Յառաջ բռնեցաւ թէ Պայէզիտ կայսեր որդին Էրթողրուլ կուսակալ էր Սեբաստիոյ, որ հրամանաւ բռնաւորին գլխատեցաւ, տոր համար հայրը սրտին ցաւոյը համար երգել կու տար.

Սիվազը պէտք չէ որ ես կորուսանեմ.
Իմ որդիս պէտք չէ որ ես կորուսանեմ։

Հարթ յատակ եղաւ մեծ քաղաքը, կործանեց քաղաքին եկեղեցիները, որոնք բազմաթիւ էին, ինչպէս նաև հիմնայատակ ըրաւ Ս. Քառասնից քառասուն գմբեթով մեծ տաճարն, որոնց ներքև թաղուած էին յիշեալ Ս. վկայից մարմինները։

Պատմագիրք չեն միաբանիր թէ Սեբաստիոյ արհաւիրքները ո՞ր ժամանակ ի գործ դրուեցան, սակայն կը թուի թէ, գարունը 1402ին, Սեբաստիա հասաւ Չըմբայ–Էլչիքերաէ դեսպանը՝ Պայազիտի պատգամաւորներուն հետ, որոնք լաւ ընդունելութիւն չի գտան, զի Թիմուր քանի մ'օր աւերակ քաղաքին մէջ մնալէն ետև համբաւ մ'առնելով՝ կամ հանելով թէ Պայէզիտ հզօր բանակով Թոգաթ հասեր է, ուղղեց իր արշաւանքը դէպ արևմուտք՝ Փռիգիա, և Սեբաստիայէն մեկնելէն տասներկու օր ետքն Անկիւրիոյ քով հանդիպեցաւ Օսմանեան բանակին, և 20 Յուլիս, 1402 խմբեցաւ ահեղ ճակատամարտը, յորում Օսմանցիք չարաչար պարտեցան, Պայէզիտ արիաբար կռուելով ձեռք ընկաւ իր Մուսա որդւոյն հետ. իսկ Մուստաֆա, որ առաջ կուսակալ էր Սեբաստիոյ, ընկաւ նոյն ճակատին մէջ։ Թիմուր այս մեծ յաղթութենէ ետև ասպատակեց բոլոր Փոքր Ասիա։ Սիւլէյման՝ Պայէզիտի անդրանիկն՝ անոր թախանձանացն համեմատ, պետ անուանեց Օսմանեան ինքնակալութեան Եւրոպական գաւառներուն վրայ, և 1403ին երբ մեռաւ ինքնակալն Պայէզիտ ասիական գաւառներուն սուլթան կարգեց

Մուսան՝ բայց այս երկուքն ևս ինքնակալաց կարգը չեն դասուիր, այլ Մէհէմմէտ Ա. Չէլէպի։

Թիմուր իր աթոռը դարձուց Գարամանայ իշխանին որդին, և տուաւ անոր Իկոնիոն, Լարինտա, Ագսերայ, Պէկշեհիր, Անթալիա, Ագշէհիր, Սիվրի–Հիսար, Պէկ–Պազարի և Սէյտիշեհիր։ Նոյնպէս Սարուխանի, Այտընի, Մէնթէշէյի, Թէքքէի և Կերմիանու իշխաններն իրենց տեղերն հաստատեց, որոնց համար պատերազմի ելած էր։ Իսկ Օսմանեան ինքնակալութիւնը չորս եղբարց մէջ բաժնուած էր, որոնք էին Մէհէմմէտ՝ Ամասիա, Սիւլէյման՝ Էտիրնէ, Իսա և Մուսա՝ Պրուսա։ Եւ ժողվելով գերիներն իբր 60,000 *տուն հին Թաթարներէն, Յոյներէն և Հայերէն, տարաւ իրեն հետ արեւելք, և անուանեցան Գարա–Թաթար։ Կ'երևի ինձ գերեաց այս թիւն և ոմանց ըսելը թէ մեծ մասը հայ էին, չափազանցօրէն ըսուած է. զի արևմտեան փոքր Ասիա նոյն ժամանակները չունէր բազմաթիւ հայ բնակիչ։*

Անկիւրիոյ ճակատամարտէն երկու տարի առաջ, Լէնկ Թիմուր արշաւելով Եգիպտոսի (Մամելուք–Պօրկի) սուլդաններուն երկիրն առած էր Մալաթիան, Պեհեսնին, Այնթապը, և Հալէպի քով խորտակեց եգիպտական բանակը 1400 *Հկտ.* 30 *և Հեճր.* 803. *րէպիւլ–էվվէլ, և մինչև Եգիպտոսի սահմանն. աւարի առաւ բոլոր երկիրը տարի մը, դարձաւ Սեբաստիա* 1402*ին գարնան։*

Վերջապէս փոքր Ասիան թողած ըլլալով գնաց Թիմուր միջին Ասիոյ կողմերն, ուր կնքեց իր աչեղ կեանքը յամին 1403–807*։ Իր յաջորդները չի կրցան պահել մեծ աշխարհակալին իշխանութիւնն և ինչպէս սովորաբար կը հանդիպի, քաղաքային պատերազմներ պատառ պատառ ըրին այն լայնածաւալ տէրութիւնը։*

Թիւրքմէն իշխանութեանց վրայ

Հոս կը բերեմ նախ հեղինակաց մէջ գտածս. և կը յաւելում համառօտ խորհրդածութիւն: ԺԴ. դարուն վերջերէն մինչև ԺԶ. դարուն սկիզբները նշանաւոր եղան երկու Թիւրքմէն տոհմեր Եփրատայ երկու եզերքներն: Առաջինը Տիարպէքը՝ հիմնեցաւ 1373–777*ին և շիջաւ* 1469–874 *տևեց* 97 *տարի.* 4 *իշխաններ յաջորդեցին մէկմէկու, որոնք են Գարա Եուսուֆ, Իսկէնտէր, Ջահանշահ և Հասան Ալի, և կը կոչուէին Գարա–Գոյունլու:*

Իսկ երկրորդը կ՚անուանէր Պայընտըր և Աք–Գոյունլու, հիմնեցաւ Սիվազի մէջ յամին 1406–809 *և շիջաւ յամին* 1502–908 *տևեց* 99 *տարի և ունեցաւ ինը իշխան Թիւրքմէն տոհմէն, որոնք են. Գարա–Օսման, Համզա, Ճիհանկիր, Ուզուն–Հասան, Խալիլ, Եաքուպ, Պայսանգուր, Ռուսթէմ Մուրատ Մուհամմէտ, Էլվէնտ, եօթը վերջինները կը յիշէ Հաճ. Խալիֆէ (եր.* 168*) Համմէրի քով՝ որմէ է այս բոլոր ծանօթութիւնը: Զորս առաջինք իբր Միջագետաց կամ Տիարպէքիրի իշխաններ կը յիշատակուին (Պատմ. Հայ. Գիրք Զ.) որոնք կրնան ինչ ինչ յարաբերութիւն ունենալ Փոքր Հայաստանի կամ նաև Սեբաստիոյ հետ. և ոչ առնցմէ ետև եկող իշխանք, որոնք Դաւրէժ կը նստէին և Օսմանցիք արդէն մինչև Եփրատ և անդր յառաջացեր էին: Կրնայ ըլլալ որ Գարա Օսման իր ծառայութեանց համար, զոր մատուց Լէնկ–Թիմուրայ իրեն շնորհած ըլլայ Սեբաստիոյ կողմերու իշխանութիւնը, կարգելով զինքը պաշտօնապէս Տոհմապետ, Տիարպէքիրն ևս իրեն յանձնելով, որ եղաւ մայրաքաղաք Աք–Գոյունլուներուն ժամանակ մը, մինչև որ Դաւրէժ փոխադրեց զայն նոյն ինքը Ուզուն–Հասան:*

Այս տոհմն եկած էր արևելքէն, Ովքոս և Եաքսարտ (Սիր և Ամու Տարիա) գետոց եզերքէն, հաստատեցաւ Կապադովկիա և հիմնեցաւ Սեբաստիա և շուտ իրենց կեդրոնն եղաւ Տիարպէքիր. սուլտան Պայէզիտի որդւոց գահաժառանգութեան կռիւներուն, նոյնպէս Լէնկ–

Թիմուրի որդւոց պառակտմանց առեն Աք – Գոյունլուները բաւական զօրացան, և թէպէտ ժամանակ մը Գարա–Գոյունլուներն Տուրուբերանի և Վասպուրականի կողմերը հաստատուելով աւելի հզօր էին, բայց Ուզուն–Հասան խորտակեց զանոնք, և ինքն ու յաջորդք եղան տէր Պարսից և Հայոց, և սատար եղան Գարամաններուն և Տրապիզոնի կոմնենեան կայսերաց, երբոր կը պատերազմէին Մուրատ Բ. և Մէհէմմէտ Բ. ինքնակալաց դէմ։

Մէհէմմէտ Ա. Չէլէպի Սեբաստիա կ՚արշաւէ

Սուլդան Մէհէմմէտ Ա. Անկիւրիոյ ճակատամարտէն եաև Պայէզիտ բաշայի ձեռքով փախեր էր Ամասիա տասնեմէկ տարեկան ։ Հօրը գահուն յաջորդութեան կռիւներուն մէջ շատ մը գործեր ունեցաւ իր եղբարց՝ նաև այլ բռնաւորաց հետ։ Օսմանեան պատմագիրք իՆՆ արշաւանք և յաղթութիւն կատարած կը պատմեն, այլ ասոնց գլխաւորն եղաւ վեցերորդ արշաւանք Մէզիտի ապստամբաւորաց գլխաւորին դէմ, որ Սեբաստիոյ տէրն եղած էր Թիմուրի որդւոց քաղաքային յուզմանց, իրարու և այլոց հետ կռիւներու և պատերազմաց ժամանակ։ Սա ի հուսկն սուլդանի մզկթին մէջ ապաստանելով արխարար պաշտպանեց անձին Պայէզիտ բաշային դէմ, որ սուլդան Մէհէմմէտայ զօրավարն էր (Նէշրըի 121. էարիս և ուրիշներ)։ Եւքը պատուաբեր պայմաններով անձնատուր եղաւ Մէզիտ. մտաւ ինքնակալին ծառայութեան և անոր քաջագոյն զօրավարներէն էր։ Մուրատ Բ. ինքնակալին ժամանակ կը յիշուի Մէզիտ պէկ, որ յամին 1441 բազմութեամբ զօրաց Թրանսիլվանիա արշաւելով պաշարեց Սիպին քաղաքն, այլ Մաճառաց Յովհ. Հունիատ քաջ սպարապետէն յաղթուելով սպաննուեցաւ ինքն և որդին։

Եւ այսպէս Լէնկ–Թիմուրի գրաւմանէն եաև երկայն ատեն չի մնաց օտար ձեռքեր, այլ շուտ դարձաւ նորէն Օսմանեան պետութեան իշխանութեան ներքև, և սկսաւ նորոգուիլ և նաև բարգաւաճիլ, որ խուժարար աւերած էր փոքր Հայոց այս մեծ, բազմամարդ և բազմազարդ քաղաքը։

ԳԼՈՒԽ Ը

ՍԵԲԱՍՏԻԱ ՕՍՄԱՆԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ
(1441-1722)

Այս գլխուն նշանաւոր եւ աղետալի դէպքերն են Ճէլալիներուն գործերն եւ կուսակալաց ապստամբութիւնները։

Տեսանք թէ ինչպէս Սեբաստիոյ իշխանութեան առաջաւորք ինքնայօժար կամօք յանձնեցին իրենց տէրութիւնը սուլթան Պայէզիտ Ա. կայսեր յամին 1394-794 *և պատուեցան անորմէ, որ արքայորդիքն ըլլան կուսակալ։*

Ա. – Սիւլէյման, որ հօրը մահուանէն ետև թագաւորեց Ադրիանուպօլիս 1402-1410։

Բ. – Մուսթաֆա, որ ետքէն ընկաւ Անկիւրիոյ մեծ ճակատամարտին ատեն։

Գ. – Էրթօղրուլ, զոր Թիմուր սպաննեց, երբոր առաւ Սեբաստիա քաղաքը։

Լէնկ-Թիմուրի արշաւանքը տասը տարի մ'անջատեց Սեբաստիան Օսմանեան պետութենէն, և Մէհէմմէտ Ա. Չէլէպի առաւ զայն Մէզիտի ձեռքէն։

Թիւրքմէն Աք-Գոյունլու պետերուն հարիւր տարի Սեբաստիոյ տիրելուն հաւաստիք մը չկայ պատմութեանց մէջ։ Իսկ Գարա-Օսմանի անոնց առաջին պետին յամին 1418 *Երզնկան առնելէն ետև դէպ ի Պոնտոս արշաւանքն և գրաւումներն երկայն տևած չեն. մանաւանդ թէ առանձին Սեբաստիոյ անունը չի յիշուիր թէ վերստին գրաւուած ըլլայ Օսմանեանց ձեռքէն։*

Ա. — ՀԱՆԳԱՄԱՆՔ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ. ՍԵԲԱՍՏԻՈՅ ՆԱԽԿԻՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԸ ԵՒ ԱՅԼԵՒԱՅԼ ԴԷՊՔ

Սեբաստիա Օսմանեան նահանգ ըլլալէն ետև, միշտ առաջին և ընդարձակ կուսակալութիւններէն մէկն եղած է պետութեան։

Երբոր ինքնակալութիւնն աւելի ևս ծաւալեցաւ, Սեբաստիոյ կուսակալութիւնը քսան և երկու մեծամեծ նահանգաց մէջ հինգերորդ էր, որոնց գլուխը կը կենային երեք ձար (թուղ) տոջենին տանող Պէյլէրպէյներ։

Այս մեծ կուսակալութիւնը կը գտնուէր Անատոլուի (Անկիւրիի) Գարամանայ, Մարաշի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգաց և Սև ծովուն մէջ։ Պէյլէրպէյին տարեկան հասն էր 900,000 *փող. որ յայտնի կ'ըլլայ թէ ասոր հասը միւս շատ գաւառներէն աւելի էր։ Որովհետև Հալէպի Պէյլէրպէյին կ'ընդունէր* 817, 772 *փող. իսկ Գարամանինը* 660, 074 *փող. Մարաշինն աւելի նուազ էր։*

Սեբաստիոյ նահանգն ըստ արքունի դիւանագրին ունէր եօթը գաւառ (Սանճաք) որոնք են՝

ՍԱՆՃԱՔ	ԶԻԱՄԷԹ	ԹԻՄԱՐ
Սիվազ	48	928
Ամասիա	19	243
Չորում	16	310
Պօզօք	15	730
Ճանիք	7	348
Տիվրիկ	1	310
Արաբկիր	2	153
	108	3022

Զիամէթներուն ճէլէպներն առնուազը կ'ըլլան 432

Թիմարք և իրենց ճէլէպներն . 6058

. . . . 6490

Մուտք կամ հասք իրենց պարէնին համար 13.087.327 *փող։*

Ծանօթութիւն

Զիամ արաբերէն է, և կը նշանակէ հաս, ռոճիկ, նաև պատասխանատու պետ մէկի կամ շատերու, հրամանատար զինուած մարդիկներու, որոնց տէրն ինքն է, իսկ զիամէր՝ տէրութիւն կը նշանակէ։

Թիմար՝ կ'ելլէ յոյն «թիմէ» բառէն՝ որ է պատիւ զի կը տրուէր ի վարձ այն զօրականաց, որոնք քաջութիւններ գործեր էին պատերազմի մէջ։ Պատուածը Յոյնք թիմարիոթի կամ թիմարիոթօ կ'անուանէին. իսկ պատիւն որուն հետ կից կ'ըլլար նաև երկրի մը կալուածքը կ'անուանէին թիմարիոն և թիմարիա։ Ասոնք էին Օսմանեան զօրաց սպետներն կամ նահատակները։

Մէկմէկէ առաւելութիւնը՝ մուտքին չափէն յայտնի կ'ըլլար։ Զիամներն 20 *հազարէն մինչև* 99,999 *փող. կ'ընդունէին, վասն զի եթէ* 100,000 *ըլլար, Սանճաք Պէյի մուտքերուն հաւասար կը գտնուէր։*

Թիմարիոթներուն մուտքը 5–6000*է՝ մինչ* 19,999 *փող։ Ճէպէլ կամ ճէլէպները զրահազգեստ հեծեալներ էին, կ'ընկերանային Զիամներուն և թիմարիոթներու հետ, ասոնց թիւը կը համեմատէր ամեն մէկին հինգ հազար փող մուտքի վրայ. անանկ որ* 50,000 *փող մուտք ընդունող Զիամը, պարտական էր իր ձեռաց ներքև ունենալ տասը ճէլէպ կամ զրահաւոր հեծեալ։ Սուլտան Մուրատ Ա. Ղազի սկիզբ դրաւ Զիամէթ և թիմար ռոճկաց, և տուաւ իրենց կարմիր դրօշ։*

Հիմակ գանք տեսնելու Իսկէնտէր Գարա Գոյունլու պետին գործն ի Սեբաստիա։ Սա կը կոչուէր նաև Շահի–Արմէն, բայց Հայոց հասուցած վնասները խիստ շատ և սոսկալի են։ Յամին 1435 *մեծ պարտութիւն մը կրելով Շահռուքի որդի Ջօնկա իշխանէն, փախաւ եկաւ Թոգաթ, ուր ունէր շատ մ'ազգականներ և ծանօթներ, և հոն մեծ պատիւ տեսաւ տեղւոյն իշխաններէն։*

Երբ գարուն եկաւ Խոճենտէր գումարեց քառասուն հազար զօրք, և գիւղերու և քաղաքներու վրայ քալելով շատ չարիք բերաւ անոնց գլուխն, և եկաւ Սեբաստիա. երբոր այն կողմերու գիւղացիք լսեցին իր գալուստն՝ ապաւինեցան ամուր քաղաքներն և անմատոյց վայրեր։ Սեբաստիոյ մօտ կար մեծ այր մը, որուն մէջը մեծ բազմութիւն մ'արանց և կանանց, որոնց ամենքը հայ էին. Խոճենտէր իմացաւ անոնց տեղը, մօտ եկաւ նստաւ այրին քով, և սուտ երդմունքով խաբելով, հանեց զիրենք անկէց, և կանայքն և մանկունքը գերի առաւ և էրիկ մարդիկը չարչարելով կը պահանջէր անոնցմէ շատ գումար, խեղճերն ինչ որ ունէին տուին, բայց նա գոհ չեղաւ, և սկսաւ տանջել զիրենք, մաս մը կրակը նետեց, մաս մը բրածեծ ըրաւ, և մնացածը գերիներուն հետ առաւ և պատրաստուեցաւ Խարբերդ երթալ։ Տիւրիկէ քաղաքին քովէն անցնելու ատենին, հոն բնակողները մեծ գումարներ տալով ազատեցին գերիներուն մեծ մասը, զի անհնար եղաւ իրենց վճարել փրկանք, որովհետև Խոճենտէր շատ բան կը պահանջէր։

Օսմանեան նախնի կուսակալաց քիչերուն անունները ծանօթ են ինձ, որոնք Լէնկ-Թիմուրի արշաւանքէն ետև պաշտօն վարեցին հոն մինչև ժե. դարուն սկիզբն, և որ նախ կը յիշատակուի՝ է

Պայէզիտ բաշա կուսակալ Սեբաստիոյ, որ յամին 1460, գտնուեցաւ Մուհամմէտ Բ. կայսեր պատերազմներուն մէջ, զոր մղեց Ուզուն-Հասանայ դէմ։

Ուզուն-Հասան փեսայ էր Տրապիզոնի Դաւիթ Կոմնենոս կայսեր։ Հօրը Ճըհանկիրի ժամանակ ունէր ինչ ինչ ամրոցներ Տրապիզոնի սահմանին մօտ՝ որոնց գլխաւորն էր Գոյունլու-Հիսար, զոր առաւ Մէհէմմէտ Բ։ Յամին 1471-2 Գարամանայ գահընկէց իշխանաց հետ արշաւեց Ուզուն-Հասան մինչև Թոգաթ. առաւ զայն, այրեց տոչորեց, և չարաչար խոշտանգեց բնակիչներն, և աւրեց բոլոր քաղաքը, նման չարեաց զոր հասուց յառաջ Լէնկ-Թիմուր՝ Սեբաստիոյ։ Բայց Դերջանի ճակատամարտը կորուսանելով, շատ տեղեր Օսմանցւոց ձեռքն ընկաւ, ինչպէս նաև Գարա-Հիսարը շարգի։

Պայէզիտ բաշայէն առաջ թէ ո՞վ նստաւ կուսակալ յայտնի չէ։ իսկ անկէց ետև մինչև 80 տարի չկայ յիշատակ կամ անուն կուսակալի Սեբաստիոյ թէպէտ անիկա չէր դադրած, և ոչ ուրիշ իշխանութեան մը ներքև ընկած։

Նոյնպէս Սեբաստիոյ արքեպիսկոպոսաց վրայ Ստեփանոս Բ.ի նահատակութենէն ետքը՝ մինչև Յովհաննէսի նստիլն 95 (1387–1482) տարի, թէ ո՞վ, որո՞ւ յաջորդեր է յիշատակութիւն մը չկայ. կը թուի թէ քաղաքն և վանքերը սաստիկ աւերած ըլլալով՝ և այլ արշաւանքներ՝ Իսկէնտէր Գարա–Գոյունլուի և Ուզուն–Հասանի Աք–Գոյունլուի՝ վրայ գալով, չի կրցան հանդարտ մնալ և կարգաւորեալ վիճակ մ'ունենալ։

Արդ յամի 1482 (ՋԼԱ.) Ս. Նշանի վանքին մէջ նստաւ արքեպիսկոպոս Սեբաստիոյ Տէր Յովհաննէս, այր պարկեշտ և բարեկրօն։ Այս ժամանակ Ս. Նշանի վանքին մէջ երևելի էր Մատթէոս վ. (ՋԼԸ.) զոր կը յիշէ Առաքել պատմիչ։ Սա ինքն գրած է փառաւոր ճաշոց մը բոլորագիր, և ընծայած է Ս. Նշանի, որոյ մէջը կայ փրկչին պատկերն բազմած աթոռի վրայ և Մատթէոս վ. ծունր եկած՝ կը մատուցանէ աւետարանը փրկչին և կ'ըսէ.

«Ո՜վ անսկիզբն ծնցոյ Հօր բան, որ ծաղկեցար յազգս մարդկան
Եւ զայս մատեան աստուածարան մեզ հնչեցեր ձայն ցնծութեան։
Ահա առեալ զքոյս քեզ տամ բարձեալ ի ձեռս առաջի զամ
Ա՛ռ զայս նուէր բարեխնամ, և յիս նայեա Տէր հաշտակամ
Ես Մատթէոս մեղօք լցեալ, Սեբաստիոյ վարդապետ լեալ
Դատարկանուն արձանացեալ, գործոց բարեաց թափուր մնացեալ»։

Միւս միաբաններն էին Ղազար եպիսկոպոս, Շմաւոն, Ղազար, Աստուածատուր, և Յովհաննէս վարդապետները։

Յովհաննէս նստաւ ԼԱ. տարի և վախճանեցաւ և թաղուեցաւ Ս. Նշանի վանաց մէջ 1514 (ՋԿԲ.)։

Յովհաննէս արքեպիսկոպոսի վերջին տարիները հանդիպեցան քաղաքական դէպք, զորոնք հոս կը համառօտեմ, Շահ–Իսմայէլի իշխանութեան ժամանակ՝ որ Սէֆիի թոռն էր (1499–1525). և առաջինն է

Գարապըյըգ–Օղլու Շահ–Գուլի աւազակապետը, զոր Օսմանցիք Շէյթան–Գուլի կ'անուանին, ելուզակներու գնդով մը կը բռնանար Փոքր Ասիա, Շահ–իսմայէլի անունով։ Մի և նոյն ժամանակ սուլթան Պայէզիտին որդին Գորգուտ սուլթան գլուխ վերուցեր կը տիրէր Սարուխանի մէջ, բայց երբ Թէքքէէն կ'անցնէր, Շէյթան Գուլիի հրամանատարութեան ներքև եղող աւազակները զինքը կողոպտեցին։ Գարակէօզ բաշա Ասիոյ կողմնապետը վրանին գնաց պատերազմով, բայց չարաչար յաղթուեցաւ, և ելուզակները սպաննեցին զինքը ցցահար։

Այս Շէյթան Գուլուն հարկապահանջութեամբ կը նեղէր Փոքուն Ասիոյ քաղաքաց բնակիչները, ևս Սեբաստացիները, որուն համար իրեն դէմ զրկուեցաւ յամին 1511 – 917 Պաթազ անուն բաշա մ'որ եկաւ նուաճելու զինքն, և այս առթիւ կ'ըսէ Պատմ. Սեբ. եկաւ թափելու քրիստոնէից արիւնները, թէ՛ Հայոց և թէ ուրիշ ազգաց, և ծանր հարկապահանջութիւններ ըրաւ, մանաւանդ Սեբաստիոյ մէջ։

Վերջը մեծ եպարքոսն Ալի բաշա սակաւաթիւ զօրքով վրան յարձակեցաւ և Սարմսագլը աւանին քով, Կեսարիոյ մօտերը՝ սաստիկ ճակատ մը տուաւ այս աւազակներու դէմ. և հոն ընկան մեռան թէ մեծ վէզիրն և թէ Շէյթան Գուլին. և երկու կողմն ևս անառաջնորդ մնալով ցրուեցան։

Այն ատեն աւազակներուն գլխաւորներէն ոմանք Շահ իսմայէլի գնացին և պատմեցին անոր՝ եղածները։ Սակայն անիկա Օսմանցւոց շնորհուկ մ'ընելու համար ելուզակներէն քանի մը հարը վերցուց և մնացածները խառնեց իր զօրաց մէջ։

Սուլթան Սելիմ Ա. Եաւուզ Սեբաստիա կու գայ

Յամին 1514–920, *Սեբաստիա կու գայ Օսմանեան ինքնակալը սուլթան Սէլիմ Եաւուզ. և հոս հանդէս կ'ընէ իր զօրացն, որոնք էին հարիւր քառասուն հազար, և ունէին իրենց հետ ութսուն հազար ուղտ: Դիմեց գնաց Պարսից Շահ Իսմայիլ արքային վրայ և* 23 *Օգոստոսի խորտակեց անոր բանակը Չալտրան դաշտին վրայ, առաւ Դավրէժ մայրաքաղաքն և դարձաւ Կ. Պոլիս:*

Յաջորդ տարին (1515–921) *նորէն եկաւ ինքնակալը Սեբաստիա, Պարսից պատերազմն առաջ տանելու համար, միանգամայն Ալայիւտէվլէթ Զիւլգատրայ իշխանին ըմբոստութիւնը նուաճելու: Մեծ վէզիրը Սինան բաշա քալեց գնաց վրան, և մեծ ճակատ մը տրուեցաւ որուն մէջ պարտեցաւ և ընկաւ Ալայիւտէվլէթ. իսկ այլք կ'ըսեն թէ ձերբակալ եղաւ ինքն և չորս որդիքն, որոնք Սեբաստիա բերուելով կայսեր հրամանաւ գլխատուեցան:*

Հոս պատմութիւնը չշփոթելու համար յաջորդ երկու Բ. և Գ. յօդուածոց մէջ կը դնեմ նախ Օսմանեան ծանօթ կուսակալներն և Ճէլալիներուն դէպքն, և երկրորդին մէջ Սեբաստիոյ հայ արքեպիսկոպոսաց յաջորդութիւնն և անոնց ժամանակ հանդիպած իրերը:

Բ. — ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐՆ ԵՒ ՃԷԼԱԼԻՆԵՐՆ

Ինչպէս ըսի, ժամանակ մը դադրելով Սեբաստիոյ կուսակալաց յիշատակութիւնը, յամին 1536, *պատերազմներուն մէջ, զոր Օսմանեանք մղեցին Պարսից Թահմազ շահին* (1525–1576) *դէմ, կը յիշատակուի Օսմանցւոց զօրավարաց կարգը Սեբաստիոյ կուսակալ մ'որուն անունը չէ յիշուած: Ստոյգ է որ ասկէց ետև ուրիշներ նստած են* 30 – 35

տարիներու մէջ, բայց կը յիշուի միայն, յամին 1570, Պէհրամ բաշա կուսակալ Սեբաստիոյ որ գտնուեցաւ Օսմանցւոց դէպ երջանիկ Արաբիա ըրած արշաւանքին մէջ, նոյնպէս յամին 1571 Կիպրոսի Վենետիկեցիներէն առման ժամանակ իբր քաջարի զօրավարներէն մին:

Չէրքէզ–Հայտար բաշա Պէյլէրպէյ Սեբաստիոյ, որ կը յիշատակուի յամին 1583–991, սուլտան Մուրատ Գ. կայսեր ժամանակ՝ Պարսից դէմ մղուած պատերազմներուն մէջ:

Յամին 1593 ՌԽԲ. նշանակուած է թէ Սեբաստիա նոր կուսակալ մ'եկած է, այլ լռութիւն է անուան վրայ:

Մահմուտ բաշա Պէյլէրպէյի Սեբաստիոյ, որ յամին 1599–1007 գտնուեցաւ Հունգարիա մղուած պատերազմներուն մէջ:

Ճելալիներուն վրայ: Ա. – Ո՞վ էր Ճելալի

Թօգաթի անձաւներէն մէկուն մէջ ամրացած տաճիկ ազանդաւոր մ'էր, ունէր նաև արբանեակներ նոյն անձաւին մէջ. կ'ըսէր թէ կը սպասէ Մեհտիի գալստեան զի աշխարհի կատարածը մօտ է: Մեհտի ԺԲ. և վերջին ամիրապետ՝ Ալիի տոհմէն կորեր կամ աներևոյթ եղեր էր յամին (հեճր.) 873 անձաւներու մէջ ինչպէս կ'ըսուի: Օսմանցիները կը կարծեն թէ աշխարհքիս կատարածին մօտերը պիտի գայ Մեհտին, որ բոլոր ազգերը կոչէ ի ճշմարիտ հաւատս: Իսկ Պարսիկները կը համարին թէ Մեհտին տակաւին կենդանի է նոյն այրին մէջ, մարդիկներէ անծանօթ, և միշտ կը սպասեն իր երևման, որ գայ կանգնէ Ալիի տան ամիրապետութիւնը:

Արդ՝ այս Ճէլալին Ասիոյ մէջ մեծ աղմուկներ հանեց ապստամբութեան, և Օսմանեան զօրքը (1515) ամբողջ տարի մ'աշխատեցաւ իրենց շփոթութիւնը կարգաւորելու համար: Բայց կ'երևի թէ շատ զօրացած էր Ճէլալիի կուսակցութիւնը, անանկ որ երբ սուլտան Սէլիմ Ա. յաղթական փառքով դարձաւ Եգիպտոսի աշխարհակալութենէն,

հարկ համարեցաւ Մաճառաց հետ երկարաձգել զինադադարն, որպէս զի մտադիւր պարապի յիշեալ ապստամբը նուաճելու։

Այս յամին 1517 ղրկուեցաւ իրեն դէմ եւրոպական կողմնապետը Ֆերհատ բաշա, բայց անկէ առաջ Շահ-Սուար Օղլու Ալի Պէկ՝ Զիւլգատրայ իշխանը՝ խորտակեց և հալածեց ապստամբն, և երկրին Ասորւոց կուսակալներն և գաւառապետները կտրեցին Ճէլալիի գլուխն և ղրկեցին Ադրիանուպօլիս։

Ճէլալիի մահուամբ չի վերջացաւ ապստամբութեան խնդիրն. 1515ին կային ապստամբ Ճէլալիք Էլ-Պօզանի և Սիվազի կողմերն։ Այլ Շահ-Սուար Օղլու Ալի Պէկ հալածեց Էլ-Պօսթանէն մինչև Սեբաստիա և յանկարծ վրանին հասնելով կը ջարդէ զիրենք. այսու ամենայնիւ կը մնան իրենց յաջորդներն ինչպէս պիտի տեսնանք։

Բ. — Նոր ապստամբութիւն Թիւրքմէնաց և Տէրվիշներու

Իբր 1527ին ապստամբեցան Կիլիկիոյ Թիւրքմէնները հարկերու ծանրութիւնը պատճառելով, և բազմանալով վանեցին Ամանոսի իշխաններն և եւրոպական և ասիական գաւառաց կուսակալները։ Մինչդեռ հազիւ Խոսրով բաշա՝ Ամզայ և Փիրի Պէյ՝ Ատանայի կուսակալները կը նուաճէին Թիւրքմէնաց ամբոխն, ահա հազարաւոր Տէրվիշներ և բազմութիւն մը ռամկաց մեծ ապստամբութիւն հանեցին Սիւլէյման Ա. սուլտանին դէմ, և Գալէնտէր Օղլու առաջնորդ եղաւ իրենց, և քանի մ'անգամ յաղթեցին Օսմանեան զօրաց։ Աճապարանօք վրանին հասաւ մեծ վէզիրն Իպրահիմ բաշա, նախ հնարքով և խոստմունքով անոնց շատերը շահեցաւ, և մնացածները թեթև պատերազմով խորտակեց բոլորովին։ Երբ յանդիմանեց բաշաներն, թէ ինչու փախան վատ և սինլքոր Տէրվիշներուն առջևէն. Փիրի բաշային որդին ըսաւ որ, «մեր նախնիք Աստուծոյ ապաւինելով և ծերունիներու խորհրդակցութեամբ առանց գործոց ձեռք կը զարնէին և կը յաջողէին, իսկ մենք ընդհակառակն

յանձնապաստան յանդգնութեամբ ընելնուս համար ձախորդեցանք»։ Մեծ վէզիրը գոհ ըլլալով այս պատասխանէն գնաց Կ. Պոլիս։

Յամին 1528 Կիլիկիոյ մէջ նոր ապստամբութիւն մը ծագեցաւ, առանց մեծ հետեւութեան։

Գ. — Ճէլալիներուն նոր դէպքերն

Տեսանք Ճէլալիի և Ճէլալիներուն առջի գործերը, նոյնպէս և Գալէնտէր Օղլուի բրածը. նուաճուած կամ ընկճուած էին անոնք, բայց ոչ բոլորովին անհետացած, ապստամբական ոգին վառ կեցած էր տակաւին Գալէնտէր Օղլուի, և ուրիշ ոչ սակաւ հետեւողաց սրտերուն մէջ։ Դէպք կամ անխոհեմ ընթացք Սինան բաշա մեծ վէզիրին, շատ զօրաւոր ըրաւ ապստամբաց կողմն, որովհետև ասիկա 1596ին այն մեծ պաշտօնին հասնելուն պէս հետամուտ եղաւ դասալիք զօրականին, որոնց թիւը կը հասնէր 30,000 անձի. և որոնք որ ձեռքն ընկան նախատալից մահուամբ կը սպաննէր։ Ուստի անոնք որ ազատեցան իր ձեռքէն սկսան խումբ խումբ ասպատակել փոքր Ասիան։

Բայց ԺԷ. դարուն սկիզբն ապստամբութիւն և աւելի մեծ աղմուկ մ'ելաւ Օսմանեան պետութեան ասիական գաւառաց մէջ. և այս ապստամբները Ճէլալի աղանդապետին անուամբն, որ մնացած էր, կոչուեցան Ճէլալիք, որոնց վրայ վերը խօսք եղաւ։ Խռովարարաց գլուխն էր Աբտիւլ Հալիմ Գարա Եազըճի, կապադովկացի դպիր մը (Սոֆթա), վատթար և գազանաբարոյ։ Գնաց Ուրֆա՝ որ սորվի իր կրօնքին ուսումը օրէնսգէտի (իմամ) մը քով, և երբոր զինուոր եղաւ այն կողմերու իշխանի մը ձեռաց ներքև։ Զինուորութեան մէջ յառաջանալով գնդապետ կարգուեցաւ Եէնիչէրիներու և պատերազմներու մէջ շատ քաջագործութիւններ ըրաւ, և ասկէ սկսաւ գոռոզանալ և սիրտը մեծցաւ։ Եւ Քիւրտերէն և Թիւրքմէններէն մարդ ժողվելով, որոնք Մաճառիստան եղող Օսմանեան բանակէն փախած էին, երկու երեք անգամ սաստիկ պա-

տերազմով դէմ ղրաւ արքունի զօրաց, որոնք զինքը նուաճելու համար ղրկուած էին տէրութենէ։

Իր առաջին յաղթութիւններովը քիթը մեծնալով՝ ամրացուց Ուրֆա քաղաքն և ինքզինքն անուանեց թագաւոր Ասիոյ և սկսաւ շատ տեղեր ապստամբել, բազմացուցեր էր իր զօրաց թիւն, որ կը հասնէր յիսուն և վեց հազարի։ Տիրեց քաղաքներու և գաւառներու, նուաճեց և հնազանդեցուց իր իշխանութեան Չորում, Ամասիա, Մարզուան, Թոգաթ և Կեսարիա քաղաքներն և եկաւ պաշարեց Սեբաստիան, և անոր չուրջը սաստիկ պատերազմներ մղելով առաւ նոյն քաղաքն ևս, և աւարելով կողոպտեց եկեղեցիներն և ապարանները։ Կրակ ձգելով այրեց քաղաքին մեծ մասն, և աւերակ դարձուց զանիկա. երկու տարի շատ չարիքներ գործեց։ Իսկ յամին 1602 (ՌԾԱ.) չարաչար յաղթուելով Ճանիկի լեռներն ընկաւ փախստական, ուր և մեռաւ. իրենները յօշոտեցին Ապտիւլ Հալիմի դիակն, և թաղեցին այլ և այլ տեղեր, որպէս զի Օսմանեանց ձեռքը չընկնի, և չայրեն։

Իրեն տեղն յաջորդեց եղբայրը Տէլի – Հիւսէյին, և ընկեր եղան անոր ապստամբ գնդին զօրավարները՝ Տահվէրտի, Եուլարքասիտի կամ Եուլարքէստի, և Գասիլ. ասոնք շատ կերպով զբաղեցուցին կայսերական զօրքերն և խիստ մեծ վտանգ և վիշտ հասուցին փոքր Ասիոյ բնակչաց, և տարի մ՚ամբողջ չարչարեցին զիրենք։

Վերջը Տէլի Հիւսէյին Կ. Պոլիս ղրկեց իր Տահվէրտի զօրավարն և կայսեր գթութեան ապաւինեցաւ. սուլդան Մուհամմէտ Գ. ներեց, և տուաւ իրեն դրօշ, խիլա և Պոսնիոյ կուսակալութիւնն, որպէս զի Քրիստոնէից դէմ կռուելով քաւէ իր յանցանքը, զօրքերն ևս բերուեցան Մաճառաց դէմ պատերազմելու համար։ Սակայն և այնպէս ապստամբները կամ Ճէլալիք չէին նուաճուած։

Ահմէտ բաշա 1603–1011ին կ՚ըլլայ կուսակալ Սեբաստիոյ, կ՚ապըստամբի և կը սպաննուի յաջորդ տարին։ Եւ յայտնի կը տեսնուի որ փոքր Ասիոյ ապստամբները յառաջադէմ էին 1603ին վասն զի նոյն ատենները Կ. Պոլսի մէջ ևս կար մեծ շփոթութիւն ապստամբութեան՝

հոն ևս յուզումներ ընելու համար։ Նաև մեծ վէզիրն Եէմիշճի Հասան յանցաւոր և արժանի մահու դատուեցաւ՝ այն տեղի ապստամբները զսպել չի կրնալուն համար։ Իսկ ինքը գրով Մահմուտ փաշայի վրայ կը ձգէր մեղադրանքն, իբր թէ նա ևս համախոհ էր նոյն ապստամբաց հետ, և խոստացած էր տալ իրենց 30,000 ոսկի, որով կը տեսնուի թէ սահակներն ընդհանրապէս ունէին իրենց նպաստաւոր անձինք, նաև պետութեան նշանաւոր աւագանւոյն մէջ։

Դ. — Ճէլալիներուն զօրանալը

Երբոր այնպէս կ'երևէր թէ ապստամբ Ճէլալիները խորտակուեր պարտուեր են, ահա կը յաճախէին նորանոր վրդովմունքներ Փոքր Ասիոյ մէջ, և Տէլի Հիւսէյինի տեղ մէջտեղ կ'ելլէին յամին 1604 Գալէնտէր – Օղլու, Գարա – Սայիտ և Սաչլու–Խալիլ՝ Սարուխան գաւառէն։ Ասոնց վրայ աւելցան նաև ուրիշ ապստամբ գլուխներ։ Կիլիկիոյ լեռնակողմերն և Ադանա կ'իշխէր Ճէմշիտ փաշա. Սևերեքի մէջ ապստամբութեան դրօշակ վերցուցեր էր Մուսէլլի Ջաւուշ։ Ալի Պէկ Ճանպուլատ Էյուպեան տոհմէն ազգաւ քուրդ, ինքնագլուխ կ'իշխէր Հալէպ, և ուրիշ շատ տեղեր անոր շուրջը մինչև Դամասկոսի սահմանը։ Մեծանուն Ֆախրէտտին Մաան–Օղլու կը տիրէր Լիբանանու։ Ճէլալիներուն դիւցազն էր Քէօր–Օղլուն, որ իր վրայ գրուած Ջամլը Պէլի երգովը ծանօթ է մինչև հիմա կան նաև Գզիր–Օղլու, Գանաւքիրլի, Մուհամմէտ, Գընալը, Թօփալ, Օսման և ուրիշներ։

Ե. — *Ճէլալիներու դասաւորութիւնը*

Առաքել պատմիչ այսպէս կը դասաւորէ ճէլալիները. նախ Ղարա եազիճին բազմօք հեծելօք, ի հազար քառասուն և եօթը (ՌԽԷ. 1598) *թուին ապստամբեցաւ ի Թագաւորէն և եկեալ յՈւրհա քաղաք եմուտ ի բերդն, և ամրացաւ, և հրամայեցաւ ի Թագաւորէն ի վերա սորա Սարդար գալ և Սարդարն եկեալ քառասուն հազար մարդկամբ, ոչ ինչ կարաց առնանել և դարձաւ: Եւ ապա եազիճին ելեալ ի բերդէն, և այլ ևս զօրս ժողովեաց ի վերայ իւր, և նոքօք սկսաւ աւերել զաշխարհ, նախ զՈւրհա քաղաք, ապա զայլս՝ զԹոխաթ, զՍեբաստի, զԲուրսա և զԱնկիւրիա, և այլ ուր և հանդիպեցաւ: Զխարաջն՝ զոր հանապազ Թագաւորն առնոյր ի ժողովրդոց, այս եազիճիս զերկու տարւոյ խարաջն ինքն էառ և իւրոց զօրացն ռոճիկս բաժանեաց:*

Հիւսէյին բաշա (Տէլի Հիւսէյին՝ եղբայր առաջնոյն) ՌԽԶ. (1597) *թուին ապստամբեցաւ ի Թագաւորէն:*

Քօսայ–Սաֆարն ՌԽԸ. (1599) *թուին ապստամբեցաւ:*

Աճմատ բաշայ (կուսակալն Սեբաստիոյ) ՌԾ. (1601) *թուին ապստամբեցաւ:*

Ինջաղան (Ինճէ աղա) ՌԾԳ. (1604) *թուին ապստամբեցաւ:*

Ցուլարղաւին ՌԾԳ. *թուին ապստամբեցաւ:*

Թաւուլն (և եղբայր նորա) տասն և երկու հազար մարդով ապստամբեցաւ ՌԾԲ. (1603) *թուին:*

Մահմուտ բաշայն քսան և երկու հազար մարդով:

Ման–Օղլի (Մանան Օղլու–Ֆախրէտտին):

Զուլֆոլատ Օղլի Ալի բաշայ (և եղբայր նորա Խըզըր պէկ):

Քօր–Օղլի. այս այն Քօրօղլի է, որ բազում խաղ է ասացեալ, զոր այժմ աշղներն եղանակեն:

Գզիր Օղլի Մուստաֆա բէկ հազար մարդով, և սա ընկեր է Քօրօղլոյն զոր յոլով անղիս ի մէջ իւր խաղին յիշեալ է:

Միւս Մուստաֆա բէկ։

Ղարաղալ, Գալունասիպ, Եօլլար Սըղմազ, Թանըրի Թանըմազ, Գօկապախան, Ջըպլախ, Քեսաքեաս, Քըլու (Քանաքերլի) Ղարասա-հաթ, Աղաճթան փիրի։

Ասոնք ամենը, կ'ըսէ Առաքել, Ջալալիք էին՝ որոնք թագաւորին չէին հնազանդեր, և ոչ տեղ մը հանդարտ կը կենային, կամ կը բնա-կէին, այլ աշխարհաւեր և աշխարհակործան ըլլալով՝ ուր որ կը լսէին թէ բնակութեան տեղ կամ անուն կայ, հոն կը վազէին կը հասնէին և աւարելով կը կողոպտէին, և շինուածքներն աւերի առնելով կ'այ-րէին հրով։

Կ. Պօլսի մօտերէն մինչև Երևան քաղաք, Պաղտատէն մինչև Դա-մուրղափուն, (Սև և Սպիտակ ծովերուն և Պարսից ծոցին միջոցը) այսչափ աշխարհքներ աւեր և ապականութիւն դարձուցին։

Ասոնց վախէն հողագործներն ամենքը կը փախչէին և բերդերը, գղեակները և ամուր տեղեր կ'ապաստանէին, որով երկիրն առանց մշակի մնալով, հացի և ուրիշ ուտելիքներու նուազութիւն առաջ կու գար, և ասոր կը յաջորդէր երկրորդ տարին մեծ սով. և այս պատճա-ռաւ հայերէն շատեր ցրուեցան այլ և այլ տեղեր հաց գտնելու համար, որպէս զի ապրին։

Զ. — Ճելալիներուն նուաճումը. Օրուճովայի ճակատամարտը

Վեց տարի էր որ այլ ևս Ճէլալիներուն ըմբոստութիւնը իր ծայրը հասեր էր, բայց Օսմանեան պետութիւնը պատերազմներէ պարապ չէր գտնէր, որոնք կը մղուէին անդադար Հունգարիոյ մէջ, Գերմանիոյ և Հայաստանի մէջ պարսկային պետութեան դէմ։

Երբոր շատցան ապստամբութիւններն Ասիոյ մէջ, որոնց գլուխ էին Գալէնտէր-Օղլու, Գարա-Սայիտ, և Սարուխանցի Սաչլու-Խալիլ, որոնք թագաւորին հետ Տէլլի Հիւսէյինի հաշտուելէն ետև անոր տեղն

անցեր էին։ Ինքնակալն և աւագանին խորհուրդ ըրին Գերմանացւոց հետ հաշտութիւն ընել, որպէս զի Պարսից և ապստամբաց դէմ գործելու միտ դնեն։ Ասոր համար մեծ վէզիրն՝ Լալա Մուհամմէտ բաշա ջանք ըրաւ և հնարք գործեց 1603ին բայց առ ժամն չի յաջողեցաւ։

Վերջապէս 1606ին 11 Նոյմբ. կնքեցաւ հաշտութիւն Գերմանացւոց հետ Գոմորն ամրոցին մօտ։ Այս մեծ գործն աւարտելէն ետև, Գույուճի Մուրատ բաշա, ընդունած ըլլալով մեծ վեզիրութեան կնիքը՝ բոլոր մտադրութիւնը դարձուց փոքր Ասիոյ ապստամբաց վրայ, որ պատճառ եղած էր Գերմանիոյ հետ հաշտութեան, վասն զի շատ զօրացած էին այս ելուզակները, բազմացած և ստուարացած իրենց գնդերն, որոնց գլուխ կեցեր էին Գալէնտէր–Օղլու, Գարա–Սայիտ, Գընալը, Գանաքերլի Մուհամմէտ, Թօփալ Օսման, Միսաէլլի Ջեավուշ, Ճէմշիտ, Ճանպուլատ և Ֆախրէտտին, որոնք զօրք ժողվելով, այլ և այլ տեղեր կը կեղեքէին ժողովուրդները՝ մանաւանդ քրիստոնեաները, փոքր Ասիա, Հայաստան և բոլոր ասորական երկիրները։

Սուլդան Ահմէտ Ա. ազատած ըլլալով Գերմանական պատերազմէն, դարձուց իր զէնքն ապստամբ Ճէլալիներուն դէմ, որպէս զի ազատէ հաւատարիմ հպատակներն անոնց հարստահարութենէն և կեղեքումէն։ Ուստի մեծ վէզիրը Մուրատ բաշա քալեց գնաց յամին 1607, անոնց և մանաւանդ Ճանպուլատի դէմ, որ բռնացեր էր Հալէպի և Ասորիքի մէջ, և իր անունովը դրամ կը կտրէր։ Մեծ վէզիրն իկոնիոն հասնելով բռնեց աւազակներէն մէկ քանին և սպաննեց։ Ջերբակալ ըրաւ նաև Սէրամզատէ Ահմէտ պէկը. մեծ վէզիրը հարցուց իրեն թէ ինչ կրնայ ընել, նա պատասխանեց թէ քիչ ժամանակի մէջ կրնայ 30.000 մարդ գումարել. ասոր համար զինքն ալ սպաննեց, որ իր ետևէն անանկ հզօր մարդ մը չի մնայ։

Ապա դիմեց Ասորւոց երկիրն, ուր իրեն առջևն ելաւ Ալի բաշա Ճանպուլատ 40.000 զօրքով, որոնց կէսն հեծեալ և կէսն հետևակ էին։ Որուճովա դաշտին մէջ՝ Հալէպի մօտերը՝ զարնուեցան, և արիւնալից ճակատէ մ՚ետև չարաչար յաղթուեցաւ Ճանպուլատ և կորուց

իր զօրքերէն 26.000 մարդ. և փախաւ գնաց Հալէպ. սակայն հոն ալ կանայք և մանկունք դէմ ելան, և հալածեցին զինքը քարով և փայտէ կոշտերով։ Մուրատ բաշա եկաւ մտաւ յաղթանակով քաղաքն և հոն ձմերեց, իսկ Ճանպուլատ փախաւ գնաց Նիկոմիդիա՝ և անկից Կ. Պօլիս՝ ուր հանդիպեցաւ Թողութեան, և ընդունեցաւ Թմշվարայ կուսակալութիւնն, և սեղւոյն բնակիչներէն հալածուելով Պելկրատ ընկաւ, և հոն սպաննուեցաւ։

Է. — Փոքր Ասիոյ Ճէլալիներուն պարտութիւնը

Գարնան (1608) Մուրատ բաշա դիմեց Գալէնտէր-Օղլու ապստամբին դէմ, որ քսան հազարով կ'ասպատակէր Փոքր Ասիան։ Հասաւ և ճակատեցաւ անոր բանակին դէմ. ընդհարումը սաստիկ եղաւ, և պատերազմն երկու կողմէն անպարտելի կը մնար։ Ծերունին Մուրատ բաշա մէջ մտնելով իր հնդիկ սուսերը՝ քաջալերեց խրախուսեց բանակն որոնք ընկան քաջութեամբ թշնամեաց վրայ և հալածեցին զանոնք իրենց առջևէն, և կոտորեցին անոնց զօրութիւնը։

Այս մեծ յաղթութենէ ետև Մուրատ բաշա մտաւ Սեբաստիա։ Նոյն ժամանակ նաև ուրիշ զօրավարներ խորտակեցին ուրիշ ապստամբներ Պաղտատի և Կիլիկիոյ մէջ՝ ուր կը բռնակալէր Ճէմշիտ բաշա, մինչև հասաւ Սեբաստիայէն Մուրատ բաշա իրեններուն օգնականութեան։

Պատերազմէն առաջ Մուրատ աղօթքով կը դիմէր առ Աստուած և թէպէտ իննսուն տարին անցուցեր էր, ձի հեծած կը ճանապարհորդէր և անձամբ կը յարձկէր թշնամեաց վրայ. յաճախ կը կրկնէր իմաստնոյ մը խօսքը՝ թէ «Աւագորերոյ պարտք են Մովսէս լինել ի ներքոյ և Ահարոն առ արտաքս»։ Սպաննել տուաւ Պէկշէրի Էմիրշահ իշխանն, որ թէպէտ շատ անգամ կտրեր էր ապստամբներուն գնդերը, բայց կը կեղեքէր մօտակայ գիւղերը։

Ը. — Եուսուֆ բաշայի և Միւսէլլի Չեավուշին ձերբակալումը

Երբոր ձմեռ եկաւ՝ հրաման եղաւ Մուրատ բաշային՝ որ երթան կարին և հոն ձմերեն, որպէս զի գարնան Պարսից դէմ պատերազմի ելլան. և նա հակառակ կամաց յանձն առաւ, և քալեց որ հոն երթայ, այլ զօրքերէն ստիպուած դարձաւ Կ. Պոլիս։ Կը տանէր իր հետ 400 *դրօշ, որոնց վրայ գրուած էին ապստամբաց նուաճելոց անունները, և այս արշաւանի մէջ ջարդուածներուն թիւն էր* 100.000 *մարդ։*

Կը մնային դեռ Կիլիկիոյ մէջ Միւսէլլի Չեավուշ և Սարուխան՝ Եուսուֆ բաշա, որոնց մէջ կը բռնակալէին անոնք։ Մուրատ ծանուց Թագաւորին իր հնարքն, որով կ'ուզէր զանոնք մէջտեղաց վերցնել։ Երբը ձմեռ առեն՝ Թելադիր եղաւ Կիլիկիոյ Զիւլֆիգար բաշա կուսակալին՝ նենգութեամբ որսալ Միւսէլլին, իսկ ինքը Մուրատ ողոքանօք իրեն կոչեց Եուսուֆն, և առ երեսս քաղցրութեամբ Սկիւտար իր քովը պահեց զանիկա մինչև որ առաւ Միւսէլլի սպանման լուրն, և ապա Եուսուֆ բաշան ևս վերցուց մէջտեղէն։

Չորս ամիս Մուրատ կեցաւ Սկիւտար վրաններու ներքև, և Նոյեմբեր ամսոյն դարձաւ Կ. Պոլիս, իբր թէ կու գար պատերազմէ, և խաղաղցուց Ասիական գաւառները։ Երբոր ոմանք սկսան պարապ խօսքեր ընել, իբր թէ ծեր է, դանդաղ, Պարսից դէմ պատերազմի չերթալու համար պատճառանքներ կը պատճառէ, Թագաւորը գոչեց մեծաձայն. «Մուրատ կորիճ ախոյեան մի է և նահատակ, վէզիր իմաստուն և ծերունի, անիկա ինծի շահեցաւ Ասիան և իր կեանքը վտանգի մէջ դրաւ ինձ համար»։

Եւ այսպէս Մուրատ բաշան արիական քաջութեան հետ զուգակցելով նաև խորագէտ քաղաքականութիւն, երկու երեք տարուան մէջ խաղաղացուց փոքր Ասիոյ ապստամբութեան աղմուկները։

Գ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ԵՒ ԱՆՈՆՑ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԸ

Յովհաննէս արքեպիսկոպոսի տեղը նստաւ յամին 1513 Ջկբ. Տէր Ղազար, զոր պատմութիւնը կը կոչէ «Մեծն և առաքինի»: Ասոր օրերը զայրանալով այլազգիք շատ չարիքներ հասուցին մերայնոց, և շատեր նահատակեցին, ինչպէս Հայրապետ աբեղան Ս. Գէորգայ վանքէն, զոր՝ Քրիստոսի հաւատքը չուրանալուն համար կրակով այրեցին: Յաջորդ տարին բռնեցին Սեբաստիայի Թադէոս Երէցն, կը ստիպէին որ՝ ուրանայ Քրիստոսի սուրբ հաւատքն, և երբ յանձն չառաւ, բանտ դրին և շատ տանջանքներ տուին. երբ նա հաստատուն մնաց Քրիստոսի հաւատքին վրայ, կուսակալին հրամանովը բերին քաղաքին մէջ հրապարակն՝ և սրով, քարով և փայտով նահատակեցին:

Յամին 1534 սուլդան Սիւլէյման Ա. արշաւեց Պարսից Շահ Դահմասպի դէմ, որով շատ վնաս եղաւ Հայաստանի՝ սրով, գերութեամբ և աւերածով: Երբ ինքնակալը Կ. Պոլիս դարձաւ, խորհրդով մեծ վէզիրին մանկաժողով ըրաւ Հայերէն, Յոյներէն և ուրիշ քրիստոնեայ ազգերէ, և գործադրութիւնը սաստիկ խստութեամբ կատարուեցաւ, և մանաւանդ Սեբաստիոյ մէջ, ուր Թադէոս Վ. գրեց ողբական ոտանաւոր մը նոյն ժամանակը:

Իսկ 1535ին բռնեցին Շնքուտակ գիւղին Երէցն, որ Սեբաստիոյ մօտ է իբր 3 ժամ. ստիպեցին զինքն, որ ուրանայ Քրիստոսի հաւատքն, և մահմետական ըլլայ. երբ նա հաստատ կեցաւ, Մահմետականք կրակով այրեցին զինքն, և այնուհետև երկայն ատեն հայ չի բնակեցաւ բնաւ նոյն գիւղն, այլ միայն տաճիկք:

Յամին 1536 կէնճեան անունով ազնուական երիտասարդ մը, Սեբաստացի վաճառական արուեստով՝ ընտանեաց տէր, օր մը գնացած տեղէն դառնալէն ետև՝ ուրախութիւն ըրաւ իր բարեկամաց հետ: Քովի տաճիկ դրացին խիստ մարդ մ՚ըլլալով՝ դրկեց մէկ քանի հոգի, որ

խրատեն զինքը թողուլ Քրիստոսի կրօնքն և Մահմետական ըլլալ: Երբոր նա հաստատ կեցաւ և չուրացաւ զՔրիստոս, դատաւորին ամբաստանելով, երբ թէ հայհոյեց իրենց զենպեուին, դատաւորը շատ մը յորդորելէն ետև, որ մահմետականութեան դառնայ, երբ չի կրցաւ համոզել, մահուան վճիռ տուաւ. նախ՝ իր հրամանաւը լեզուն կտրեցին, բերանը վարազ անցուցին և փայտէ խաչի կապելով քարկոծեցին, և բդեշխին (կուսակալին) հրամանաւ երկու օր վերջը քրիստոնեայք տարին թաղեցին Ս. Քառասնից գերեզմանատունը:

Այս տարին վախճանեցաւ Ղազար արքեպիսկոպոս և թաղեցաւ Ս. Նշանի վանքն, և իրեն յաջորդեց Տէր Մինաս Ա. որ եղաւ արքեպիսկոպոս Սեբաստիոյ յամին 1536:

Ասոր օրը յամին 1543 նորէն մանկաժողով ըրին քրիստոնէից տղաքներն և թագաւորին կամացը դէմ մեծամեծ բռնութիւններ կատարուեցան: Խնչքեր կողոպտեցին, տներ և եկեղեցիներ այրեցին, մանաւանդ Եւդոկիոյ մէջ ութ եկեղեցի միանգամայն քանդեցին Ապր. 1ին:

Սեբաստիա ևս շատ չարիքներ գործեցին և վնասներ տուին. այն ատեն շատեր միւքան աղերս մատուցին թագաւորին և ժամանակ մը դադրեցաւ մանկաժողովը:

Այս ատեն Էջմիածնի Ստեփաննոս կաթողիկոսը դրաւ իր տեղը Սեբաստացի Միքայէլ եպիսկոպոսը կաթողիկոս, և ինքը մեկնեցաւ Աբեմուտք: Այս երկու կաթողիկոսներն ևս միաբանութիւն ըրին Հռովմայ Ս. Աթոռին հետ. Միքայէլ նստաւ ԻԲ. տարի և Սեբ. Պատմ. կը գովէ ըսելով՝ հաւատարիմ և զգօն:

Յամին 1550 (ՋՂԹ.) Շահ Թահմասպ զօրաւոր բանակով դիմեց Օսմանցոց երկիրը, գրաւեց Այրարատն և շատ տեղեր. եկաւ Բարձր Հայք, և ապատակ սփռեց, և սրով և հրով աւերեց Կարնոյ գաւառը, Բաբէնը, Դերջանը, Սպերը, Բաբերդը, Կեղին և Երզնկան, մինչև Սեբաստիոյ սահմանները. շատ մարդիկներ գերի առաւ և տարի մը մնաց նոյն կողմերն: Թադէոս վ. Սեբաստացի գրած է այս պատմութիւնը տաղերական չափազանցութեամբ:

Մինաս արքեպիսկոպոս ԻԴ. տարի առաջնորդութիւն վարելէն ետև վախճանեցաւ և թաղուեցաւ Ս. Նշանի մէջ, և իրեն տեղը նստաւ յաթոռ Տէր Յակովբ արքեպիսկոպոս՝ այր բարեսէր. երևելի էր իրմէ ետև Մշեցի Աստուածատուր եպիսկոպոսն և ուրիշ միաբանք, որոնք բարեկարգ կը կատարէին իրենց պաշտօնը։

Իսկ 1562*ին* (*ՌԺԱ*) *Սեբաստիա եկաւ Միքայէլ կաթողիկոս Էջմիածնի՝ Արարատայ խռովութեանց պատճառաւ և մեծամեծներն և ժողովուրդը մեծ յարգութիւն մատուցին իրեն. քանի մ'ամիս կենալէն ետև դարձաւ Էջմիածին։*

Խոհական վարչութեամբ վիճակին ԺԲ. տարի հոգ տանելէն ետև վախճանեցաւ Յակովբ արքեպիսկոպոս և թաղեցաւ ի Ս. Նշան։ Իրմէ տասն ամիս ետքը վախճանեցաւ նաև Հրեշտակապետի վանաց տեսուչը Յովհաննէս եպիսկոպոս։

Հոս մէջ կը բերեմ Մինաս Բ., Պետրոս Ա., Մելքիսեդ Ա. և Անդրէաս Ա. արքեպիսկոպոսաց ժամանակը, համառօտելով Սեբաստիոյ (*Գլ. Ժ.*) *և այլ պատմութիւններէն։*

Յաջորդեց Յակովբու յամին 1578 (*ՌԻԷ.*) *Տէր Մինաս արքեպիսկոպոս «իմաստուն և հանճարեղ»։ Ասոր նշանաւոր գործն եղաւ Սսոյ Ազարիա կաթողիկոսէն Հալէպ կանչուիլն, և հոն յիշեալ Հայրապետին և նաև երեք հայ եպիսկոպոսաց հետ դաւանութիւն հաւատոյ գրելն առ Գրիգոր ԺԳ. և ապա առ Քսիստոս Ե. Հռովմայ քահանայապետները, և դաւանանքը մի և նոյն էր Եւգինէոսի Դ. Փլորենտիոյ ժողովքին աւանդածին հետ։*

Սեբաստ. Պատմ. կը յիշէ Սսոյ Ջուղայեցի Տէր Ազարիա կամ Զաքարիա կաթողիկոսին կոչն և ժողովն Հալէպի, և թէ կային հոն ուրիշ քանի մ'եպիսկոպոսունք Հայոց. «գրեցին ի թղթի զուղղափառ, և զանվրթար դաւանութիւնս, և զանսայթաքելի աւանդութիւնս Հայաստանեայց կաթողիկէ եկեղեցւոյ և ստորագրեալ յղեցին առ հինգերորդ Քսիստոս Պապն և դարձան իւրաքանչիւր ի տեղի իւր»։ Մինաս արքեպիսկոպոս ևս դարձաւ Սեբաստիա Ս. Նշան և յամին 1589 *ՌԼԸ. վախճանեցաւ և դրուեցաւ Ս. Նշանի շիրմին մէջ։*

Այս նստաւ Սեբաստիոյ աթոռոյն վրայ՝ Տէր Պետրոս Ա. արքեպիսկոպոս, որ մեծ նեղութիւններ կրեց՝ իր կեդրոնի հասած ծանր դէպքերուն, և առաւել Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ձեռքէ ելլելուն համար, զոր Տաճիկներն առին յամին 1592 ՌԽԱ. և մզկիթ ըրին։ Եւ այս պատճառ եղած է ազգային իշխանաց մէջ ընկած տարաձայնութիւն մը. Նոյն ժամանակ նոր բդեշխ (կուսակալ) մ'եկած ըլլալով, ըստ սովորութեան Քիլիսէ Թէվթիշի կ'ընէ և կը բանայ շղթայակապ նոր եկեղեցպանն, և նա խոստովանելով թէ դրամ չունի, և ազգային իշխանք տարաձայն ըլլալով հոգ չի տարին և այնպէս գնաց եկեղեցին որ զմրեխթայարկ էր։ Սեբաստացի Յովհաննէս Վ.ը գրած է այս պատմութիւնն ողբաձայն, ուր աւելի մեծ կը տեսնուի կորուստն. «ի թուականութեան մերում Հայկազեան տոմարի ՌԽԲ... վասն անմիաբանութեան և անհնազանդութեան քահանայից և ժողովրդոց, զրկեալ եղաք ի Ս. կաթողիկէ տաճարացս կրկնակի՝ Ս. Աստուածածնի և Ս. Լուսաւորչի զմրեխթայարկ Ս. եկեղեցեացս»։ Ասկից կ'իմացուի թէ ձեռքէ ելածներն երկու եկեղեցիք են և ոչ մի, որ շիտակ չէ. զի Աստուածածին մնացած է։

Իշխանները միաբանեցան ապա՝ բայց անօգուտ. բանը բանէն անցած էր և մեծ ջանքով Պետրոս եպիսկոպոսի և Յովհաննէս Վ.ի, հազիւ կրցան համոզել կուսակալն և քաղաքին մեծամեծներն, որ փոքր մատուռ մը բանան նոյն թաղին մէջ, յիշեալ եկեղեցիէն բաւական հեռու յանուն Ս. Սարգսի, և սկսան հոն կատարել Աստուածային պաշտամունքը, զոր և ընդարձակեցին կարելի եղածին չափ. (ՌԽԳ.) որ եղաւ նոյն թաղին կեդրոնը։

Յամին 1595 ՌԽԴ. նահատակեցաւ Սեբաստացի Մեծատուր մանուկը պարապ պատճառով մը. ձերբակալեցին տարին դատաւորին որ բանտ դրաւ, և երկրորդ օրը հանեցին կուսակալին առջև և խնդրեցին որ սպաննէ։ Մայրը կու լար և կը քաջալերէր. «մեծ ազգէ ես և ընտիր հաւատքով ոսկի հաւատքդ՝ պղնձի հետ մի փոխեր, որդեակ իմ»։ Կիրակոս քահանայ դրկեց իրեն Ամենասուրբ Խորհուրդը քարտիզի մէջ։

Առաւ զայն սուրբ մանուկը, լացաւ բորբոքեալ եռանդով, ըսաւ. «Մեղայ Տէր Աստուած իմ, ի քեզ եմ ապաւինեալ, տուր ինձ համբերութիւն» և եռանդագին հաւատքով ճաշակեց զայն։

Երկրորդ օրը կուսակալին տարին, որ շատ յորդորեց ուրանալ զՔրիստոս. բայց նա հաստատուն կեցաւ. այն ատեն հրաման տուաւ որ սպաննեն զինքը։ Բազմութեամբ տարին և մերկ բևեռեցին խաչաձև փայտի մը վրայ. դահիճն ուրացեալ հայ մի էր. ըսաւ իրեն. «ուրացե՛ալ պինդ բևեռէ». զայրացաւ դահիճն և սրով ճեղքեց ուսը. գլխէն մինչև մէջքը նաւթով, ձէթով և կպարով օծեցին և կրակ տուին։ Երիտասարդ սարկաւագ մը քաջալերեց և յորդորեց որ փառք տայ Աստուծոյ և մանուկը գոչեց. «փառք քեզ Աստուած» և տարին գետեզերքը. կախեցին ծառէ և թելը կտրեցին. ջուրն ընկաւ մանուկն և կ՚օրհնէր զԱստուած. քար առին բայց մէկզմէկ զարկին և վիրաւորեցին և մէկը սրով գետը մտաւ և սուսերահար ըլլալով՝ աւանդեց իր մաքուր հոգին։ Երկու օր վերջը տարին ամփոփեցին Փառասուն մանկանց դամբարանը։

Այս ժամանակներն (ՌԽԸ.) երևելի էր Մկրտիչ եպիսկոպոս Դեռսցայ Ս. Գէորգ վանաց տեսուչն և հոն միաբան էին Չէյթունցի Ալեքսիանոս և Յովհաննէս վարդապետք։

Պետրոս արքեպիսկոպոս յամին 1600 ՌԽԹ. վախճանեցաւ ի վանս Ս. Նշանի և իրեն յաջորդեց Սեբաստացի ոսկեգործ Խաչատուրի որդի Տէր Մելքիսէթ, այր խոհական, որ շատ նեղութիւն կրեց. զի 1601 ՌԾ. Ճէլալի ելուզակներն, որոնք շատ զօրք ունէին իրենց ձեռաց ներքև, և առաջնորդնին էր կապադովկացի դպիրը Գարա Եազըճի. որ 26 հազար զօրք ժողվեց, ապստամբ սփռեց գրաւեց Ուրհա, Զորում, Ամասիա, Մարզուան, Թոքաթ, Կեսարիա և եկաւ պաշարեց Սեբաստիա և սաստիկ պատերազմով առաւ զայն. աւարեց քաղաքը, կողոպտեց եկեղեցիներն և ապարանքն և ապա կրակով այրեց քաղաքին մեծ մասն և ինքը շուտ մէջտեղէն կորսուեցաւ (ՌԾԱ)։ Այս ատեններս սաստիկ սով եղաւ. Առաքէլ պատմիչը կ՚ըսէ որ մէկ լիտր ալիւրը մէկ ոսկիի ծախեցին, մէկ քիլէ գարին 50 ղր.։

Ի թուին ՌԿ. Ս. Նշանի Առաջնորդը Մելքիսեդ արքեպիսկոպոս և Աւագերէց Տ. Ստեփանոս միաբանեցին իրենց հետ մեծամեծներն՝ Մահտեսի Միքայէլ, Մ. Մուրատ, Ալեքսիանոս, Սինան Պալպալեան, Կիրակոս, Մկրտիչ և Պապճեան պարոնայք և բոլոր քահանայք, իշխանք և ժողովուրդք. որոշեցին նորոգ կառուցանել կործանած աւագ եկեղեցին, որ յանուն Ամենօրհնեալ Ս. Աստուածածնին՝ հին ժամանակները շինուած էր Սեբաստիոյ մէջ: Հրաման առին արքունիքէն և քաղաքին իշխողներէն. շինեցին, նորոգեցին, զարդարեցին և «արարին մեծահանդէս նաւակատիս ի փառս Աստուծոյ և ի պատիւ միշտ Կուսին Մարիամու Աստուածածնի»:

Մելքիսեթ Ա. արքեպիսկոպոս վախճանեցաւ յամին 1618 ՌԿԷ. յաջորդեց իրեն Տէր Անդրէաս Ա. արքեպիսկոպոս: Սուլթան Մուստաֆա դէպ ի Շահաստան ճամբեց Թաթար խանը որ Սեբաստիա գալով ծանր հարկերով՝ մեծ վնաս հասուց մանաւանդ Հայոց, և գրեթէ կէս քաղաքը աւերակ ըրաւ:

Յամին 1621 Սեբաստիա եկաւ Ապազա բաշա և շատ վնաս տուաւ: Երկու տարի վերջը (ՌՀԲ) սուլթան Մուրատ Դ. մանկաժողով ըրաւ. մասնաւորապէս Սեբաստիա կրեց մեծ տոյժեր և ծանր վնասներ:

Ս. Հրեշտակապետի առաջնորդը Մելքիսեթ վարդապետը վախճանեցաւ (ՌՀԵ.) և տեղը նստաւ Նիկողայոս արքեպիսկոպոս: Նոյնպէս և Անապատի առաջնորդ Սարգիս վարդապետ մեռաւ (ՌՀԶ.) և յաջորդեց Յովհաննէս եպիսկոպոս:

Հոս կ՚աւելցնէ Պատմ. Սեբ. թէ «ի սմին ժամանակի (ՌՁԲ.) եհաս վախճան կենաց Տեառն Մինասայ կաթողիկոսին Սսոյ և համակամութեամբ եպիսկոպոսաց վիճակին եդին յաթոռն հայրապետական՝ Սեբաստացի զՏէր Սիմոն արքեպիսկոպոսն ի կաթողիկոս ամենայն Հայոց ի Սիս Կիլիկիոյ»:

Սուլթան Մուրատ Պարսից դէմ երթալու համար՝ Սեբաստիա կու գայ յամին 1635 ՌՁԴ. և 17 օր հոն կը մնայ: Այն ատեն Սեբաստացի Ներսէս Հանճարեղ վարդապետն, որ ապա Սսոյ կաթողիկոս եղաւ, կը

միաբանէ Ս. Նշանի Աթոռոյն՝ Անդրէաս արքեպիսկոպոս, Հրեշտակապետի՝ Նիկողայոս, Անապատի՝ Յովհաննէս, Ս. Գէորգայ Մկրտիչ և խնդրակատարի Յովհաննէս եպիսկոպոսները, նաև ազգին մեծամեծները, քահանայք և իշխաններն, և միաբան աղերսագիր կու տան Թագաւորին, որ Ս. Սարգսի մատուռը հրապարակական եկեղեցի շինեն։ Թագաւորը հրամանագիր կու տայ, և Ներսէս վարդապետ կը շինէ տաճարը քարաշէն, ամրակառոյց և կամարազարդ. իսկ եկեղեցւոյն միացած մասն՝ փայտեղէն։ — Հիմակ դառնանք գրելու քաղաքական դէպքերը յետագայ կուսակալաց ժամանակ։

Դ. — ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐ

Ա. — Ապազա փաշայի գործերը

Աբազա փաշա Մարաշէն փոխադրուեցաւ Սեբաստիոյ կուսակալութեան Ք.ՀԱ. 1622 (*Հեճր.* 1032), *բայց շուտ փոխադրեցաւ և իրեն յաջորդեց Թէյար-Մուհամմէտ փաշա անուանի կուսակալ Սեբաստիոյ յամին* 1623 (1033)։

Յամին 1623 *մեծ վէզիրին հրամանովն Հավըզ փաշա Ամդայ կուսակալը նիզակակցութեամբ Մարաշի, Սեբաստիոյ, Բերքուքայ, Միջագետաց Ասորւոց կուսակալներուն հետ, գնաց պաշարել Պաղտատն ուր բռնացեր էր Պէքիր անունով մէկն, սպաննելով տեղւոյն իր անուանակից կուսակալն։ Ապստամբը մեծ նեղութեան մէջ ընկնելով, ապաւինեցաւ Պարսից Շահ-Աբպասին և անոր յանձնեց քաղաքը։*

Աբազա փաշա կորիճ մարդ ըլլալով, Մարաշէն անցեր էր Սեբաստիա, և անկէց Կարին՝ կուսակալի պաշտօնով, և մեծամեծ ծառայութիւններ մատուց Օսմանեան պետութեան։ 1623*ին կուսակալ եղած էր Կարնոյ. Թագաւորանիստ քաղաքին չփոթութեանց առեն շատ զօրութիւն ցոյց տուած էր, Ենիչէրիներէն մաս մը բանտելով, մաս մը*

հալածելով. բայց սուլդան Օսմանի եղերական մահուան վրայ սաստիկ զայրացեր էր: Մայրաքաղաքին խռովութիւնները կը նորոգէին ետևէ ետև և սուլդան Մուսթաֆայի ապիկարութեան պատճառաւ ամէն ոք սանձարձակ էր: Նաև պալատականներէն ոմանք կը գրգռէին Ապազա բաշա Կարնոյ հզօր բդեաշխն, որ վրէժխնդիր ըլլայ Օսման Բ. արքային մահուան:

Ինքն Ապազա ևս նոյնին հակամէտ էր, ուստի նոյն իսկ 1623ին դրօշակ ապստամբութեան բարձրացուց սուլդան Մուստաֆայի հակառակ՝ 40.000 զօրքով և բռնացաւ մինչև Փոքր Ասիա: Նիզակակից եղան իրեն նաև Աբուճովայի քով և Փոքր Ասիոյ մէջ պարտեալ Ճէլալիներուն մնացորդները, Գալէնտէր-Օղլու, Սայիտ, Դաւիլ և ուրիշներն. որով աւելի ևս կը զօրանար և բռնակալութիւնը կը տարածէր Ապազա բաշա. Փոքր Հայքն ևս ամբողջ իր ձեռքն էր:

Սկիզբը նաև Մարաշի Պէյլէրպէյին Բէլաուն Եուսուֆ բաշա հաւատարմութեամբ նիզակակից էր, այլ ինքը նոյն հաւատարմութիւնը պէտք էր ցուցնել Օսմանեան պետութեան, սակայն ետքէն Թէյար Մուհամմէտ բաշայի հնարքներով (որ ծածուկ Թագաւորին կողմն էր), Բէլաուն կասկածաւոր գտնուեցաւ Ապազա բաշայի առջև, որ զայրագին սպաննեց զինքը:

Բ. — Թէյար բաշայի գործերը և Ապազայի պարտութիւնը

Ապազա բաշա երբոր զօրացաւ իր ապստամբութեան մէջ, Թէյարի տեղ Սեբաստիոյ կուսակալ կարգեց Սէյիտ-Խանը. այլ Թէյար հալածեց զանիկա իր գաւառէն և երբոր Ապազա բազմութեամբ զօրաց վրան եկաւ և նորէն առաւ Սեբաստիան, հնարքով զերծաւ անոր ձեռքէն: Եւ որովհետև խորագէտ էր Թէյար, ճարտարութեամբ կեղծեց ապստամբաց կողմն ըլլալ, պահեց իր անձին Սեբաստիոյ կուսակալութիւնն առ երեսս իբր Ապազայի ձեռաց ներքև: Նաև խորամանկութեամբ միաբա-

նած կուսակալներէն քանի մը հատը կասկածելի ըրաւ Ապազայի առջև, և կը ջանար այս կերպով քակել զանոնք մէկմէկէ կամաց կամաց։

Դամասկոսի կուսակալը Չէրքէզ Մուհամմէտ բաշա յամին 1624 անուանեցաւ մեծ վէզիր և իրեն յանձն եղաւ բանակին սպարապետութիւնը Ապազա բաշայի դէմ։ Վասն զի մինչև այս ատեն շատ մը կուսակալներ զրկուեցան վրան, ոմանք յաղթուեցան անկէ և ոմանք անոր կողմն անցան, զի կ'ըսէր ինքն, որ ես միայն Օսմանայ անիրաւ սպանութեան վրէժխնդիր ըլլալու համար զէնք առած եմ։

Երբոր մեծ վէզիրն հասաւ, Թէյար Մուհամմէտ բաշա յայտնեց իր միտքն և իր գնդովը համախմբեցաւ անոր բանակին հետ և հաստատեցաւ, յամին 1624, մեծ վէզիրէն Սեբաստիոյ կուսակալութեան պաշտօնին մէջ։

Կեսարիոյ դաշտերուն մէջ ճակատեցուց մեծ վէզիրն իր զօրքերն ապստամբաց դէմ, և ի ծածուկ որսացաւ թշնամւոյն կողմն անցնողներէն մի քանին, որոնք ճակատուն ժամանակ հատուածեցան և եկան միացան արքունի բանակին հետ։ Իսկ Ապազա երկայն ժամանակ կատաղութեամբ կռուելէն ետև, ի փախուստ դարձաւ և իր զօրքերն ի սայր սուսերի կոտրուեցան և շատերը գերի ընկնելով գլխատուեցան։ Ապազա փախաւ մինչև Կարին, և աճապարեց հաշտուիլ մեծ վէզիրին հետ, որ Գերջան հասեր էր, և յաջողեցաւ իր այս ջանքն, և վէզիրը հաստատեց զինքը կուսակալ Կարնոյ, պայմանով որ տասը գունդ Եէնիչէրի առնու և պահապան կարգէ բերդին և անոնց չարիք մը չի հասցնէ։ Իսկ ինքը մեծ վէզիրը խոտորեցաւ գնաց Թոքաթ և հոն ձմերեց, ուր և մնաց յաջորդ տարին, այսինքն յամին 1625։

Թէյար Մուհամմէտ բաշա, ուրիշ կուսակալներու հետ միաբանութեամբ յամին 1625 (1035), պատերազմեցաւ ապստամբ Սէկպաններուն դէմ. նոյնպէս Չէյհէլ խան ապստամբին դէմ։ Եւ յամին 1626 (1036) Պաղտատի համար Պարսից դէմ մղուած պատերազմին մէջ Օսմանեան բանակին առաջնակարգ զօրավարներէն մէկն էր։ Նաև յաջորդ տարին Թէյար կար նոյն Պարսից դէմ եղած արշաւանին մէջ։

Գ. — Ապազա բաշայի կրկին ապստամբութիւնը, ներումն և մահը

Մեծ վէզիրը Չէրքէզ Մուհամմէտ բաշա՝ թողած էր Ապազա բաշայն Կարնոյ կուսակալ՝ իր յաղթութենէ ետև։ Սա յամին 1626 սկսաւ խլրտիլ ապստամբութեամբ, խռոված տեսնելով Կ. Պոլիսն և ուրիշ գաւառներ։ Կարնոյ Խլիճէ դաշտին մէջ զարկաւ խորտակեց Ամդայ, Հալէպի, Մարաշի և փոքր Ասիոյ կուսակալաց զօրքերն, որոնց կ՚առաջնորդէր Տիշլէնկ Հիւսէին բաշա, որ և ընկաւ նոյն ճակատուն մէջ։ Հասաւ իր վրայ մեծ վէզիրը Խալիլ բաշա և եօթանասուն օր Կարինը պաշարելէն ետև, ուր կը գտնուէր Ապազա, երբ սաստկացաւ ձիւնը, թողուց գնաց ձմերեց Թոքաթ։ Բայց Մուրատ Բ. պաշտօնանկ ըրաւ զինքն, և տեղը դրաւ Պոսնացի Խոսրով բաշան, որ սաստիկ աճապարանօք հասաւ Կարին, առանց որ Ապազա չունեցաւ ժամանակ պատերազմի պատրաստուելու, կամ պաշարման տոկալու։ Ուստի խոստում առնելով որ զինքը չի սպաններ, անձնատուր եղաւ և պատուով տարուեցաւ Կ. Պոլիս, ուր ներումն ընդունեցաւ Թագաւորէն և կարգեցաւ կուսակալ Պոսնիոյ և ապա Օզուի, և մեծամեծ քաջութեան գործեր կատարելով Լեհաց դէմ, վէզիր անուանեցաւ և Կ. Պոլիս գալով՝ հաճելի անձ եղաւ Թագաւորին քով, որ վերջը վրան կասկածելով սպաննել տուաւ 1635ին։

Դ. — Մուրատ Դ. սուլթանի գործերն և իր ժամանակի կուսակալներն

Յամին 1630 (1039) Սեբաստիոյ կուսակալ անուանեցաւ Խալիլ բաշա, որ Պարսից դէմ Շէհրէզուրայ ճակատամարտին մէջ գտնուեցաւ և Օսմանեան բանակին ամեն զօրավարներէն աւելի արիացաւ հոն։

Նոյն տարին Սեբաստիոյ կուսակալ կարգուեցաւ Խալիլի տեղ Սիւմպիւլլիւ Ալի բաշա։

Եւ յամին 1632 (1041) կուսակալ կարգուեցաւ Սեբաստիոյ Տիշաւէր բաշա։

Սուլթան Մուրատ Դ. երբ անձամբ կ'արշաւէր Պարսից դէմ որ պաշարէ առնու Երեւան բերդաքաղաքը 1633 (1044) տարւոյն սկիզբը մեկնելով Կ. Պոլսէն, եկաւ հասաւ Սեբաստիա մայիս ամսոյն 12ին երեքշաբաթի օրը և տասնեօթն օր կեցաւ հոն։ Իշխանութենէ ձգեց Սեբաստիոյ Պէյլէրպէյին (որուն անունն չէ նշանակուած) զինքը գլխատել տուաւ ըրած կեղեքմանց համար՝ որոնցմով կը նեղէր կայսեր հաւատարիմ հպատակներն և իրեն տեղը դրուեցաւ գանձապետ Իպրահիմ բաշա յամին 1635 (1045)։ Ասոր իշխանութեան ժամանակ նշանաւոր էր Սեբաստիա քաղքին մէջ Աշըք-Եահեա Միրահի։

Մուրատ Դ. մեծ սէր ցոյց տուաւ Սեբաստիա բնակող Հայոց. հրամանագիր եւս շնորհեց հրապարակական եկեղեցի մը կառուցանելու Ս. Սարգսի փոքրիկ մատրան տեղն, ինչպէս առաջ գրուեցաւ։ Եւ գնաց Պարսից դէմ. ամեն տեղ զարկաւ զիրենք, սաստիկ պատերազմով և խիստ պաշարմամբ առաւ Երեւան քաղաքն, և յաղթական փառքով դարձաւ Կ. Պոլիս։

Ե. — Ուլաշ գիւղին մէջ հանդիպած դէպքը

Աւանդութիւն է Սեբաստիոյ կողմերն թէ սուլթան Մուրատ Դ. երբոր արշաւեց յամին 1638-1047 որ առնու Պարսից ձեռքէն Պաղտատ քաղաքն, եկաւ ճամբան իջեւանեցաւ Հայոց Ուլաշ գիւղը. վեց ժամ Սեբաստիայէն հեռու դէպ հարաւ։ Հոն փարթամ հայ մը կար հին անուանի տոհմէ, որ գրեթէ տէր էր բոլոր Ուլաշի երկրին, լայն հովիտներուն և ընդարձակ դաշտին։ Սա հիւրընկալեր էր Օսմանեան ինքնակալն և բոլոր անոր բանակը, զորոնք կը կերակրէ առատութեամբ. ասոր համար սուլթանը կը շնորհէ իրեն և ամբողջ գիւղին ազատութիւն արքունի հարկէն և մանաւանդ տասանորդէն։ Եւ այս արտօնութիւնը

պահուեցաւ երկայն ատեն, ինչպէս ինծ պատմեց նոյն տոհմէն մին, որուն քով հիւրընկալուած էինք ուրիշ ընկերներով 1853*ին. և թէ նոյն ժամանակ ևս տակաւին մնացած էր փոքր մաս մը նոյն արտօնութեննէն: Տոհմիս մեծութիւնը մնաց երկայն ատեն և սովոր էին կերակրել վէ-զիրներ և կուսակալներ երբ անկէց կ'անցնէին: Ժամանակին լեզուաւ կը կոչուին՝ Գարա–կեաուր:*

Կ'ըսուի նաև որ Թագաւորը զարմանալով այն հայուն մեծ հարըս-տութեան վրայ, հարցուցեր է թէ ուսկից ձեռք բերած է զայն: Իսկ հայը պատասխաներ է, երկու սկզբունքէ. երեկուան գործը չի ձգել առաւօտուան, մէկու մը ծրի հաց չի կերցնել (ազգամքի իշի սապահա պրագմամաք, իճրասըզ քիմսէյէ էքմէք եէտիրմէմէք): Այնչափ հաճեր է սուլթանն անոր խօսքին, որ Պաղտատի դիմացը հասնելուն պէս, հրաման ըրեր է նոյն օրը քաղաքին վրայ յարձակում ընել, հակառակ խորհրդոյ իշխանաց, միտքը բերելով հայուն խօսքն, երեկուի գործը վաղուի չթողուլ և անանկ յաջողած է առնուլ քաղաքն. ապա թէ ոչ Պարսից արքայորդին, որ հզօր գնդերով առաջ կու գար, կը մտնէր քաղաքն և կը պաշտպանէր զայն և այսպէս հայազգին Պէկդաշխան, որ քաղաքին հրամանատարն էր, աճապարեց անձնատուր ըլլալ:

Ե. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԸ

Ա. – *Կուսակալները*

Ս. Սարգսի եկեղեցւոյ շինութիւնն աւարտելուն յաջորդ տարին վախճանեցաւ 1637 (ՌՁԶ.) *Անդրէաս Ա. արքեպիսկոպոս և թաղեցաւ Ս. Նշանի վանքը:*

Յաջորդեց իրեն Սեբաստացի Ներսէս վարդապետ, այր յաջողակ և մեծագործ. վարեց Սեբաստիոյ արքեպիսկոպոսութիւնը ԺԱ. տարի. լաւ կառավարեց աթոռն և իր գործունէութեամբը մեծ անուն հանեց

ազգին մէջ։ Անոր օրը Սեբաստիոյ կուսակալ անուանեցաւ յամին 1643 (1053) *Նասուհ փաշա զատէ Հիւսէյին փաշա, փոխանակ գանձապետ Իպրահիմ փաշայի, որ ութ տարի է ի վեր նոյն պաշտօնը կը վարէր. բայց Մեծ Վէզիրը կը գրէր իրեն ծածուկ, թէ Հիւսէյին փաշայի կարգումն առ երեսս է միայն. և կը յորդորէր Իպրահիմն որ աներկիւղ դէմ կենայ անոր, և զինու զօրութեամբ վանէ զանիկա։ Ուստի Իպրահիմ փաշա ձեռքէն եկածին չափ զօրք ժողվեց, և գնաց զանի դիմաւորելու։ Կեսարիոյ մօտերը պատահեցան մէկմէկու երկու կողմերն, և սաստկապէս զարնուեցան իրարու հետ կատաղի պատերազմով և նոյն ճակատուն մէջ ընկաւ Իպրահիմ փաշա։*

Հիւսէյին փաշա յաղթութենէն ետև, բազմութիւն զօրաց գումարելով կը դիմէ դէպ ուղիղ Կ. Պօլիս որպէս զի վրէժ խնդրէ մեծ վէզիրին խարդախութենէն։ Նիկոմիդիոյ քով խորտակեց Ասիոյ կողմնապետն, որ իր վրայ կու գար, և առաջ քալելով գնաց բանակեցաւ Պուլկուրլու Սկիւտարի քով. բայց իր առաւելութիւնները չգիտցաւ իրեն օգտակար կերպով գործածել, ինչու որ շատ օրեր ժամավաճառ ըլլալով պարապ կեցաւ Պուլկուրլու, անօգուտ բանագնացութիւնով, որով իր զօրաւոր նիզակակիցները գլխէ հանեց. և վերջապէս մեծ վէզիրին ձեռքն ընկնելով գլխատուեցաւ չարաչար տանջանքներով յամին 1643 (1053)։ *Իրեն յաջորդ եղաւ Մուսա փաշա, որ յամին* 1644 (1054), *անուանեցաւ կուսակալ Սեբաստիոյ։*

Այսորմէ ետև կուսակալ կ՚ըլլայ Սեբաստիոյ Վարտար Ալի փաշա, որ յամին 1648 (1058) *գլուխ բարձրացնելով տէրութեան դէմ, կ՚առնու Էրզրումն, և կը քալէ ուղիղ մայրաքաղաքին վրայ, կը տիրէ Անկիւրիոյ։ Բայց Չէրքէզ գիւղի քով Քէօբրիւլու Մուհամմէտ փաշայէն յաղթուելով և Իպշիր փաշային դաւաճանութեամբ ձեռք ընկնելով սպաննուեցաւ իրեններումն։*

Նաև Սեբաստիոյ Տէլի Սիրահին Նիկսարէն կոչուելով Կ. Պօլիս՝ գլխատուեցաւ. ինչպէս եւ Օմէր–Պէկ–զատէ–Մուհամմէտ փաշա Հալէպցի յամին 1654 (1064)։ *Իսկ Սեբաստիոյ կուսակալութիւնն ընդունեցաւ յամին* 1655 (1065) *Սիյահի փաշա։*

Բ· — Ցաջորդութիւն արքեպիսկոպոսաց Սեբաստիոյ

Ներսէս արքեպիսկոպոս ԺԱ· տարի Սեբաստիոյ Աթոռը կառավարելէն ետև, Սսոյ կաթողիկոսը Սիմոն Բ· Սեբաստացի վախճանեցաւ և արքեպիսկոպոսունք վիճակին՝ քահանայք և իշխանք ընտրեցին և կոչեցին կաթողիկոս ամենայն Հայոց Սեբաստիոյ Ներսէս արքեպիսկոպոսը, որ գնացեալ «օծաւ և նստաւ յաթոռ հայրապետութեան ի կաթողիկոս ազգին մերոյ ի Սիս Կիլիկիոյ», ինչպէս կ'ըսէ Պատմ· Սեբ·։

Սեբաստիոյ աթոռոյն յաջորդեց յամին 1648 ՌՂԷ· Արապկերցի Թորոսի որդին Անդրէաս Բ· արքեպիսկոպոս, և միաբան էր Սարգիս Վ· կարնեցի գիտնական անձ։

Ցամին 1651 ՌՃ· Փիլիպպոս կաթողիկոս Էջմիածնի Սեբաստիա կու գայ դշ· օր· քաղաքին մեծամեծք կ'ընդունին զինքը մեծ փառքով, իբր «ծայրագոյն քահանայապետ Հայոց Մեծաց»։ Տասնևօթն օր կը հանգչի Ս· Նշանի մէջ· կ'երթայ Երուսաղէմ, ուր գնացած էր նաև Սսոյ Ներսէս կաթողիկոսն։ Երկուքն իրարու հետ տեսնուեցան· եպիսկոպոսաց և քահանայից մէջ մտած անկարգութիւնները վերցնելու վրայ խօսեցան· նաև երկու Աթոռոց մէջ եղած ատելութիւնը վերցնելու վրայ։ Եկած էին շրջակայ գաւառաց եպիսկոպոսներն և վարդապետներն՝ երկու հայրապետներէն կոչուելով, նաև Երուսաղէմի պատրիարքը· գրեցին ԺԳ· կանոնական գլուխ կանոններու և կոնդակ շինելով հրատարակեցին, որուն մէկ օրինակը պահուած է Ս· Նշանի վանքը, վրան կան երեք կարմիր կնիք, և նաև եպիսկոպոսացն և վարդապետացն։ Ապա Փիլիպպոս կաթողիկոս կ'երթայ Կ· Պօլիս, Ներսէս կաթողիկոս կը դառնայ Սիս Կիլիկիոյ· բայց շատ նեղութիւն կրելով անօրէններէ, կը դառնայ Սեբաստիա իր հայրենիքը՝ հինգ տարի և քանի մ'ամիս կաթողիկոսութիւն ընելէ ետև։ Եւ ժամանակ մը Սեբաստիա անցնելով կը վախճանի (ՌՃԲ)։ Թաղուեցաւ իւրակերտ Ս· Սարգիս եկեղեցին աջ դասին

եւս հիւանդոց մը. ժողովուրդը կ'անուանէ զայն գերեզման Հոգւոր տէրոջ. շիրմին վրայ կանթեղ կը վառուի, եւ կ'ըլլայ բժշկութիւն ամեն կերպ ցաւոց, ինչպէս կը պատմուի։

Յամին 1654 ՌՃԳ, վախճանեցաւ Անդրէաս Բ. արքեպիսկոպոս. յաջորդեց իրեն Կ. Պոլսեցի Տէր Մինաս քահանայ որդի Մելքիսէթ Բ. այր վեհանձն եւ խոհական. շատ մը շինութիւններ ըրաւ Ս. Նշանի մէջ. եւ բերաւ Կ. Պոլսէն վէշատակներ, զաւազան, սկիհ, խաչ եւ մագաղաթ Աւետարան մը, զոր Գարա—Եազըճըն զօրքերն առած էին Աստուածածնի եկեղեցիէն, եւ ձեռքէ հասած էր Մելքիսէթ եպիսկոպոսի հօր ձեռքը, զոր Մելքիսէթ բերաւ դրաւ դարձեալ Աստուածածնի եկեղեցին. բարեկարգեց նաեւ եկեղեցական կարգերը։

Ներսէս Սեբաստացիի յաջորդը Թէոդորոս կաթողիկոս վախճանելով 1658 ՌՃԷ-ին, տեղը նստաւ Խաչատուր Սեբաստացի կաթողիկոս Սսոյ «ամենայն Հայոց»։ Սա տասնվեց տարի առաջ պատրիարք եղած էր Կ. Պոլսի՝ տարի մ'եւ 6 ամիս։

Մելքիսէթ Բ. արքեպիսկոպոս Սեբաստիոյ վախճանեցաւ յամին 1663 ՌՃԺԲ. եւ տեղը նստաւ Սահակ արքեպիսկոպոս, որ երեք տարի վերջը վախճանեցաւ (ՌՃԺԵ.)։

Ապա նստաւ 1666 ՌՃԺԵ. ին Մելքիսէթ Գ. այր խոհական։ Ասոր օրը նահատակեցաւ Դաւիթ մանուկ Սեբաստացի բաղնեպան։ Մեծամեծ չարչարանքներ կրեց, եւ շատ մը յորդորներէ եւս, զոր ըրաւ նաեւ կուսակալն անձամբ, նա հաւատարիմ մնաց ի Քրիստոս, այն ատեն չարատանջ սպաննեցին ՌՃԻԶ. Վարդանանց տօնին օրը։ Մելքիսէթ արքեպիսկոպոս խնդրեց վկային ջախջախեալ մարմինն եւ թաղեց զայն Սրբոց Քառասնից գերեզմանը։

Դաւթի նահատակութենէն երեք տարի վերջը, Մելքիսէթ արքեպիսկոպոսն կենաց փայտն, որ աւանդութեան համեմատ՝ Վարագայ նշանին մասն էր, առաւ հետն եւ եկաւ գնաց Ուրհա, եւ հոն 1680ին ՌՃԻԹ. վախճանեցաւ, եւ սուրբ Նշանը մնաց Ուրհա մինչեւ ցայսօր։

Այս միջոցին Սեբաստիոյ կողմերն հանդիպեցաւ նշանաւոր քաղաքային դէպք մը և է Ապազա Հասան բաշայի ապստամբութիւնն և նուաճումը։

Սեբաստիա յամին 1658 (1069) ընկած էր ապստամբ բաշաներուն ձեռքն, որոնց գլուխ կեցեր էր Ապազա Հասան բաշա։ Ասիկա իր հետը միաբանելով Փոքր Ասիոյ կուսակալներէն շատերը, նոյն կողմերն և պետութեան ուրիշ գաւառներն կ'առնուր աւարի, և իր զօրութիւնն՝ աւելցնելով՝ քալեց գնաց Պրուսա և կը խնդրէր սուլդանէն որ մեծ վէզիրը պաշտօնանկ ընէ։ Սակայն Մուհամմէտ Գ. որ նոյն ժամանակ Ադրիանուպօլիս կը գտնուէր, խօսեցաւ իր զօրավարներուն և ըսաւ. «Անօրէն Ապազա ըմբոստացեր է մեր հրամաններուն դէմ, և կ'ապստակէ Փոքր Ասիա. իմ կամքս այն է, որ երթամ անձամբ նուաճեմ անօրէնը»։ Կ. Պօլիս հասնելով, անկէց սպարապետ կարգեց Մուրթէզա բաշան և արձակեց իկոնիոն։ Ապազայի հնարքները պարապի գնացին, և ճանչցաւ ասիկա, որ իր ոտխն աւելի խորամանկ է։ Բայց պատերազմի ժամանակ տեղ տեղ յաղթող հանդիսացաւ սպարապետին վրայ և երբ ինքը կը ձմերէր Անթապի մէջ, և Մուրթէզա՝ Հալէպ, ուզեց դաւել զանիկա, և չի յաջողելով, ինքն Ապազա՝ իրեններուն դաւաճանութեամբն ընկաւ Մուրթէզայի ծուղակն։ Վասն զի խաբուելով սպարապետին երդմունքներէն և խոստմունքներէն, ելաւ իրեններովն Հալէպ գնաց, ուր Մուրթէզա ուրախութեան մեծ կոչունք մ'ըրաւ և Ապազայի մարդիկները բաժնեց այլևայլ տուներ՝ ուր ջարդեց զիրենք. և իր ապարանքին մէջ կոչնոց խրախութեան ժամանակ սպաննուեցան Ապազա Հասան բաշա, Թէյար Օղլու Ահմէտ բաշա և Քէնան բաշա, նաև բազմաթիւ պէյեր։ Նոյն գիշեր երկրաշարժ եղաւ Հալէպի մէջ, և այսպէս վերջացան Փոքր Ասիոյ ապստամբական շփոթութիւնները։

Ասկէց ետև նստան Սեբաստիա հետևեալ կուսակալները. Ա. Խալիլ բաշա, որ յամին 1683 (1098) կը մասնակցէր Օսմանեան զօրավարաց մէջ, որոնք Գարա–Մուստաֆա մեծ վէզիրին հրամանատարութեամբ արշաւեցին Աւստրիոյ Վիեննա մայրաքաղաքին վրայ, և չի կրցան

առնուլ։ Բ. Մուհամմէտ բաշա կուսակալ Սեբաստիոյ, որ յամին 1693 (1108) գտնուեցաւ Օսմանեանց պատերազմներուն մէջ Հունգարիոյ սահմանն՝ Աւստրիացւոց դէմ. և մեծ պաշտօնի մէջ էր առաջին զօրավարաց կարգը։ Գ. Տուրսուն Մուհամմէտ բաշա կուսակալ Սեբաստիոյ որ յամին 1696 (1108) կը յիշատակուի Օսմանեան բանակին առաջին զօրավարաց կարգն Աւստրիացւոց դէմ ի Հունգարիա, ուր սպարապետ էր յառաջապահ գնդին։ Դ. Յամին 1698 (1109) Հիւսէին բաշա, որ կը կոչուէր Թիբարի, կուսակալ Սեբաստիոյ, և նոյն պաշտօնով Եգիպտոս ղրկուեցաւ։

Այս չորս կուսակալաց ժամանակ նստան Սեբաստիա երկու Առաջնորդներ, որոնց առաջինն էր Անանիա արքեպիսկոպոս Սեբաստացի, այր խոնարհ և առաքինի վարքով. յաջորդեց Մելքիսէթ Գ.ի յամին 1680 ՌՃԻԹ.։ Ասոր օրը Հրեշտակապետի վանքին առանձին առաջնորդ դրուեցաւ Յակոբ վ. Ատանացի, աշակերտ Մելքիսէթ Գ. արքեպիսկոպոսի, և ինքն աշակերտ Սեբաստացի Աստուածատուր վարդապետին, որ ապա յաջորդեց իրեն, նոյն Ս. Հրեշտակապետի վանքին վրայ։

Անանիա Բ. արքեպիսկոպոս ԺԲ. տարի աթոռը կառավարելէն ետև, Սեբաստիա կու գայ Կեսարացի Սահակ Վ. ժողովարարութեան մը համար, և ճոռոմախօս ըլլալով, կը շահի Սեբաստացի մեծամեծաց սիրտը, բազմակնիք աղերսագիր մը կը ճամբեն Կ. Պօլսի Մատթէոս Սարի կեսարացի պատրիարքին, որ կոնդակ կու տայ Սահակայ անուան, և մերժելով Անանիան (1692), կը հանեն աթոռ Սահակը։ Նոյն ժամանակ քաղաքին օրինաւոր եպիսկոպոսն Անանիա եկեղեցւոյ ատեանէն «յետ բազում ողջամիտ քարոզութեանց ի հարց... վասն է՞ր և սակս յի՞նչ յանցանաց զրկեցիք զիս ի տեսչութենէ, և ոչ ոք ետ նմա պատասխանի, զի չունէր ինչ. բայց միայն զի ոչ ուտէր և ոչ ըմպէր ընդ նոսա. և ապա ասաց, այդպէս լուռ մնասջիք. և ելեալ գնաց այլ ուրեք»։ Այսպէս Պտմ. Սեբ.

Իսկ Սահակ եպիսկոպոս Կեսարացի որ անիրաւ կերպով յափշտակեր էր Անանիա հեզահոգի արքեպիսկոպոսին աթոռը ձեռնտուութեամբ իր հայրենակից Մատթէոս Սարի պատրիարքին, կողոպտեց ժողովուրդն.

նաև ժողովեց եկեղեցական անօթներ և շատ մը պարտքեր թողլով, ելաւ գնաց, և իրեն բան մ՚ըսող չեղաւ, կարծեցին թէ պիտի դառնայ նորէն. «լուռ մնացին ըստ բանի Անանիա արքեպիսկոպոսի, և Ս. Նշան մնաց թափուր յընչից» և ընկաւ շատ մը տոկոսով պարտքի ներքև (Ռ․ՃԽԹ)։

Զ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐՆ ԵՒ ՀԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Վէզիր Խըմայիլ բաշա, որ յամին 1689 (1099) մեծ վէզիր եղած էր, անուանեալ կուսակալ Սեբաստիոյ, և 1698 (1110) Լէոփոլտ Ա. կայսեր բանակն հանելով կը գլխատուի, իր ըրած յափշտակութեանց համար, և գլուխը կը ղրկուի սուլդանին։

Օսմանեանք 1711ին Շուէտի Կարոլոս թագաւորին յորդորմամբ պատերազմի ելան Մեծին Պետրոսի դէմ, և կայսերական բանակին մէջ կային Գարամանի, Սեբաստիոյ, Հալէպի, Տիարպէքիրի, Ատանայի, Գանգրայ, Անկիւրիի, Աքշէհիրի, Սիւրիշէհրի, Թէքքէի և Պոզոքի կուսակալներն իրենց զօրքերովն և սուլդանին դիմացն ելլելով՝ խիլաներ ընդունեցան ի պատիւ արքունի հաճութեան։

Յամին 1744 (1157) երբոր Պարսից Նատր շահին դէմ մեծ պատերազմ բացուեցաւ, Օսմանեանց բանակին մէջ, որ ընդ սպարապետութեամբ Հէքիմզատէ Ալի բաշայի, կային Սեբաստիոյ, Տրապիզոնի, Գարամանայ, Կարնոյ, Հալէպի և Մարաշի կուսակալներն իրենց հազարաւորներովն։ Ասոնց գալէն առաջ գումարուած էին Ատանայի, Իչէլիի, Ալայէի, Նիկտէի, Ամասիոյ, Չորումայ, Գարահիսարի, Անկիւրիոյ, Աքշէհիրի, Պէկշէհիրի, Գարէսիի, Խուտավէնտիկեարի, Գոճա – էլիի և Սուլդանիէի կուսակալներն, որոնց ամեն մէկն ունէր 3–400 հետևակ և նոյնչափ հեծեալ։ Նաև եւրոպակողման Տքատրայի, Օխրիի, Ավլոնայի, Տէլվինայի, Իշպասանի, Տուքաքինի, Փիրզրէնի, Իւսքիւպի, Եանեայի, Սելանիկի, Հէրսէքի, Քէլլիսի, Ջվորնիկի և Պոսնայի կուսակալներն։

Ա. — Փեսիկլի Ահմետ փաշա կուսակալ Սեբաստիոյ

Ասիկա Օսմանեան պետութեան ականաւոր անձինքներէն մին էր, Ա. սուլդան Մահմուտի մտերիմներէն։ Գլուխ կարգուեցաւ դեսպանութեան, Պարսից Նատր շահին հետ եղած հաշտութենէն ետև անոր երթալիք ընծաները տանելու համար, և այս պատճառաւ տրուեցաւ իրեն յամին 1746, պատիւ կուսակալութեան Սեբաստիոյ։ Բայց իր դեսպանութիւնը չի հասաւ ի կատարն, զի մեծ խռովութիւն ելաւ Պարսկաստան և Նատրը շահ սպանուեցաւ յամին 1747։ Դառնամ արքեպիսկոպոսաց։

Տարի մը Սեբաստիոյ արքեպիսկոպոսական աթոռն պարապ մնաց, ասկէ ետև որպէս թէ թմրութենէ սթափած, կը ժողովին քահանայք և իշխանք միաբան կ՚ընտրեն արքեպիսկոպոս Սեբաստիոյ Աստուածատուր նոյն քաղաքէն. որ և կը կոչուէր Դմրուկ, յամին 1701 ՌՃԾ. որ իր տեսչութեան չորրորդ տարին (ՌՃԾԴ.) ժողովեց Հրեշտակապետի առաջնորդը Աստուածատուր վարդապետ Անապատին, Յակոբ վարդապետ Պալըքճի, Աւագերէց Տ. Յովսէփ, Տ. Դաւիթ, Մ. Մուրատ, Ճիկերեան Միքայէլ, Փիրըքճի Խաչատուր, Ցէսէեանց Մ. Սիմոն, եկեղեցապետ Մ. Նարին, փամբուկճի Մարգար և ուրիշ իշխաններ, որոնց հետ խորհուրդ ըրաւ նորոգել Ամէնօրհնեալ Ս. Աստուածածնի եկեղեցին, որ հին ժամանակներէ կառուցուած էր։ Հաճեցուցին քաղաքին տաճիկ մեծամեծներն և անոնց ձեռօք կուսակալն՝ և առին իրմէ հրամանագիր, նորոգեցին և զարդարեցին եկեղեցին, կատարեցին մեծահանդէս նաւակատիք ի պատիւ Մօր Սրբուհւոյ կուսին Մարիամու (ՌՃԿԴ.)։

Երեք տարի վերջը ճարակեցաւ Սեբաստիայ սաստիկ ժանտախտ մահտարաժամ (ՌՃԿԷ.) և մեռան բազմաթիւ անձինք քրիստոնեայ և տաճիկ. եաքը շնորհիւ կենաց փայտի Ս. Նշանին և մասանց Սրբոց՝ ջնջուեցաւ։

Հիմակ կարգն է խօսելու այս ժամանակի նոր յուզմանց և նախատակներուն վրայ։ Վաղուց կար կրօնական տարաձայնութիւն հայ ազգին

մէջ, Շնորհալիի և Գրիգոր Տղայի դարէն՝ արեւմտեան և արեւելեան Հայոց մէջ։ Աւելի սաստիկ էր այս՝ Գրիգորի Անաւարզեցւոյն և Կոստանդեայ, այսինքն Սսոյ և Ադանայի ժողովոց ժամանակ․ անկէց ետև ծանր կերպով յուզուեցաւ Միաբանող եղբարց պատճառաւ։ Բայց վերջին պատմագիրք նոր բան մը կը համարին։ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան սապէս կը գրէ (Պատմ․ Հայ․ Հտ․ Գ․ Գլ․ ԼԹ․) Եղիազար կաթողիկոսին էջմիածնի․ «կաթոլիկ և հերձուածող, Ֆրէնկ և Հայ շշնջելով, հանդերձ այլովք աղճատանօք, և կատարածն ո՞ գիտէ ու նկատելոց է․ որ առիթ եղև Սարգիս ոմն թոխաթցի։ Մեք զմեր ցաւն ունէաք և արդ սկիզբն երկանց կասկածեալ՝ շուարեալ մնամք։ Մին օրհնէ, միւսն անիծանէ, և երրորդն՝․որ չարն է ի հաւատոց հանէ»։ կաթողիկոսին ընթացքը մեղմ էր, և գործնական միջոց մը խորհելէն առաջ թողուց աշխարհքը։

Այս Սարգիս Թոգաթցի ետքէն եպիսկոպոս եղաւ, ո՞ր թեմի չի յիշուիր։ Սա յամին 1714 բանտարկուեցաւ Յովհան և Երեմիա եպիսկոպոսաց հետ։ Երբոր կոչուեցաւ մեծ վէզիրին առեանը, Սարգիս և Երեմիա ոկարացան, իսկ Յովհան աներկիւղ գնաց, հոն էին նաև Մելքոն եպիսկոպոս Մարտինի, Յովսէփ վրդպ․ Տ․ Աստուածատուր, որոնք բանտուեցան թիարանը կամ նաւարանն, ուր բերուեցաւ նաև յաջորդ տարին Տրապիզոնէն Աբրահամ եպիսկոպոս Հալէպի․ Յովհան և Աբրահամ ազատեցան, և մնացածները դառն տանջանօք հանգեան ի Տէր խոստովանողի մահուամբ։

Սարգիս եպիսկոպոս գրեթէ 1685ին սկսած էր իր գործը կաթողիկեայ հայերն ոգևորելու․ իր գլուխն եկած ձախորդութենէն ետև Հռովմ երթալով ապաշխարեց։

Այս ընդհանուր ծանօթութենէ ետև դառնանք նորէն Սեբաստիոյ կողմերն։ Արդ՝ յամին 1692ին առաջին անգամ Եւդոկիա և Սեբաստիա (Բրքնիկ եայլն) կու գայ Գրիգոր վրդպ․ Լեհաստանցի, հոն շատ մը քարոզութիւններ կ'ընէ հռովմէական վարդապետութեան, բազմաթիւ հետևողներ կ'ունենայ և նոյն տարին վարդապետական երկայն նամակ մը կը գրէ, ուղղեալ առ Եւդոկիացիս․ բայց մեզ կը թուի որ՝ Եւդոկիոյ,

Սեբաստիոյ, Բրգնիկոյ և Կիւրինոյ կաթողիկէութիւնն աւելի հին է, և երկրորդ Աբրահամ կաթողիկոս կը յիշէ հինաւուրց Կիւրինցիներ իբր կաթողիկեայ։ Բայց Սեբաստիոյ վիճակին տեղական աւանդութիւններն ուրիշ կերպ կը հաւաստեն. ուստի չէ դիւրին յայտնի թուական մ'որոշել։

Բ. – Նահատակութիւն Միքայէլ քահանայի Բրգնիկցոյ

Յամին 1707 ՌՃԾԶ. երկու ականաւոր մարտիրոսներ ունեցաւ հայ ազգը. մէկը Կ. Պօլիս Տ. Կոմիտաս քահանայ՝ որդի Տ. Մարտիրոսի, որ ընդունեցաւ մարտիրոսութեան պսակը (ԻԵ. Հոկտ.) գլխատմամբ։

Երկրորդն՝ Տ. Միքայէլ քահանայ Բրգնիկոյ՝ որուն համար կը գրէ (Պատմ. Հայ. Հտ. Գ. Գլ. ԽԳ.) «Յորում (ՌՃԾԵ) ամի նահատակեցաւ և ի Սեբաստիա երանելի Տէր Միքայէլ Բրգնիքցի՝ կախեալ զփայտէ»։ Իսկ ընդարձակ պատմութիւնը գրուած է հին ժամանակը այլևայլ անձինքներէ, զոր կը համառօտեմ, և եթէ Տէր հաճի կը գրեմ առանձին տետր։

Խարբերդցի էր Միքայէլ, հայրը մայրը մեռնելով երեք չորս տարեկան որբ մնացած էր։ Սեբաստիոյ Բրգնիք գիւղէն Խաչատուր անունով անձ մը յիշեալ քաղաքն երթալով, գթացաւ և առաւ բերաւ իր գիւղն յամին 1655. որդեգրեց և սնուց, և Մարկոսեան Տէր Յովհաննէս քահանային քով ուսման դրաւ. որ երբ մեծցաւ՝ քահանային զանի փեսայացուց իր միամօր դստեր։ Եւ յամին 1697 երբ մեռաւ Տէր Յովհաննէս՝ տարին Միքայէլ երիտասարդը Ս. Նշան և ձեռնադրուեցաւ Սահակ արքեպիսկոպոսէն քահանայ 1696ին, ինքն և երկու ընկերք, որ կոչուեցան Տ. Միքայէլ, Տ. Աստուածատուր և Տ. Գասպար։ Քառասնօրեայ կրթութեան (Ձիլէ) ատեն Հոգւոյն Սրբոյ շնորհքով ճանչցաւ կաթողիկէ դաւանութեան ստուգութիւնն և Հռովմայ Աթոռոյն և Հայրապետին իշխանութիւնն ամեն ազգաց վրայ։ Ուստի սկսաւ բարեպաշտ և աշխատասէր կեանք մը. սաստիկ ուսումնասէր եղաւ։ Ընթեռնլով հոգեհրաշ գրքեր՝ վառեցաւ աստուածային սիրով, և զարգարեցաւ ա-

ռաքինութեամբ. հեռու էր դատարկաբանութենէ և պարապ խօսք բնաւ չէր ըներ, և սուր կը վկայէ ականատես և ականջալուր պատմագիրը, թէ ոչ ինքը դատարկ բան մը կը խօսէր, և ոչ ուրիշին խօսիլ կու տար իր առջևը: Քարոզութեան մէջ յորդ էր. Բրգնիկէն զատ կը քարոզէր Եւդոկիա, Սեբաստիա և այլ տեղեր, ուր որ երթար. Նիւթ բանից կաթոլիկէ վարդապետութիւնն էր: Ականատես պատմիչը կը վկայէ, որ երեկոյէ մինչև առաւօտ բոլոր գիշերը կը քարոզէր կամ կը մեկնէր Աստուածային Ս. Գրքերը. կը բորբոքէր ամէնքն ի սէրն Աստուծոյ և կը ծանօթացնէր կաթոլիկէ վարդապետութիւնը:

Յամին 1707 ՌՃԾԶ. ապր. ԺԱ. սաստիկ հալածանք մ'ելաւ կաթոլիկէ Հայոց հակառակ, որպէս թէ ապստամբած են Թագաւորին դէմ: Այս զրպարտութիւնն ընողները հայեր էին և Ս. Նշանի առաջնորդը Աստուածատուր Թմբուկ: Ձերբակալեցին Մելքիսէթ Սուքիասենց, Պետրոս Լանչաճի և Առաքել Փոստալցոնց, նաև գիւղացի Եփրիանոս, ինչպէս նաև Մինաս Լէպլէպիճին և կօշկակար Արապջան. վեց անձ տարին դատարան, ամբաստանողները հայեր էին. բերին նաև երկու սուտ վկաներ, բայց վկայութեան սուտ ըլլալը յայտնի տեսնելով, դատաւորը մերժեց զայն: Եւ ահա Աստուածատուր արքեպիսկոպոսն ծունկի վրայ գալով դատաւորին առջև, ինքնին սկսաւ ամբաստանել և վկայել բոլորովին ստութիւններ, և իր ժողովուրդը կ'աղաղակէր. «մեղքը մեր վրայ և վարձքը քեզի»: Այն ատեն դատաւորը գրեց վճիռ և յանձնեց Մուպաշիրին, և տարին բանտեցին: Երկրորդ օրը բերին նաև Բրգնիկէն Տ. Միքայէլն և Տ. Գասպարն, զանոնք ևս շղթայակապ բանտեցին, և ոտքերնին դրին կոճեղներու մէջ: Սուրբ վկան կը քաջալերէր և կը սփոփէր իր բանտակիցներն:

Աստուածատուր արքեպիսկոպոսն այնչափ գօտևորեր էր Միքայէլ քահանային դէմ, որ դիմեց քէհեային աղերսով և ընծաներով, որպէս զի յիշեալ քահանային վրայ մահուան վճիռ տրուի առանց նախընթաց քննութեան, նոր նոր զրպարտութիւններ կուտելով. քէհեան ծանուց բաշային, և նա հրամայեց, որ վզէն կախեն: Երբ Միքայէլ լսեց եղած

վճիռ, ուրախ եղաւ, քաջալերեց իր ընկերներն և պատրաստեց մահուան, որ եթէ Աստուած ուզէ, իրենք ևս մարտիրոսութեամբ կնքեն իրենց կեանքը։ Ուրբաթ օր մայիս 10 կուսակալը տուաւ մահուան վճիռը, և ոչ դատական քննութեամբ դատաւորին. իսկ կատարումն նահատակութեան եղաւ շաբաթ։ Կէսօրէն ետև տարին զինքը Ջաուշին քով, որ ներս հրաւիրեց՝ սուրճ մատուց և յորդորեց երեք անգամ որ ընդունի մահմետականութիւնն. իսկ նա ամեն անգամ պատասխանեց. «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ»։ Երբ տեսաւ թէ չի թողուր Քրիստոսի հաւատքը, հրաման ըրաւ և կապեցին երկու ձեռքն, տարին, հրապարակն և հանեցին կախաղան, ուր և աւանդեց իր սուրբ հոգին։

Երանելի Տ. Միքայէլը կախաղան տանելու ատենին, գլխուն սպիտակ կտակը կ'իյնայ, զոր բոլոր հայ պատանի մը կ'առնէ գլուխը կը դնէ և անմիջապէս կը փարատի հիւանդութիւնն, և կը սկսի աղաղակել. «ես ևս կը հաւատամ ատոր վարդապետութեան»։ Ուրիշ շատ մը հրաշքներ, գործած է երանելին Տէր Միքայէլ իր մահուանէն ետև, զորոնք զանց կ'ընեմ յիշատակել, իսկ մարմինը հրամայեր են հայք ժամկոչին որ աղբիւսին մէջ թաղէ, բայց քանի մ'օր վերջը բարեպաշտ կաթողիկեայ հայ մը բաշայէն հրաման առնելով հանեց մարմինն այն անարգ տեղէն, որ կը բուրէր հոտ անուշ, և բնաւ եղծուած չէր, այլ ամբողջ մնացած, և տարաւ թաղեց քաղքէն դուրս օտարաց գերեզմանը Ս. Փառանից շիրմին մօտ, որոնց հետ խառնեց նաև այս նոր մարտիրոսը։

Վկային որդիներէն մին Պաղտատ կ'երթայ՝ կ'ամուսնանայ և հոն կը մնայ։ Իսկ միւսն որ կ'անուանէր Մանուկ՝ կ'ամուսնանայ Պոլիս և իզավաճառ ըլլալով կ'անուանի Եաղճի։ Ասոր սերնդէն էր Տիկին Սոֆի, որ ամուսնալով Թընկըր Յովսէփ աղա սեղանաւորին հետ, ունեցաւ որդիներ, որոնց մէջ նշանաւոր էին Յովհաննէս էֆ. և Եավէր բաշա։ Հոս կը դնեմ Տ. Միքայէլի վրայ գրուած ոտանաւորները զոր յօրիներ է երանելի վկային վրայ Գրիգոր վրդ. Լէհոպօլսեցի ականատես ժամանակակից և վկայ արժանահաւատ, որ այս կողմերը՝ Սեբաստիա և Եւդոկիա՝ երկու երեք անգամ շրջած է, և քարոզած կաթողիկէ վար-

դապետութիւնն Եւդոկիա քաղաքն, ինչպէս յայտնի է իր երկայն նամակէն կամ մատենիկէն առ Եւդոկիացիս։

Ոտանաւոր նահատակին

Տէր Միքայէլ Սեբաստիա — Ի գիւղէն էր Բրգնիկցի
Ընդ հազարում թուականին — Եօթն հարիւր այլ կցորդեն
Սեբաստիա ոմանք մտնեն — Թէ կաթոլիկ հաւատս ունին
Միում աւուր կիւրակէին, — ԶՏէր Միքայէլ խնդրէին,
Կալեալ զնա առեալ տարին — Եւ շղթայիւք բանտն դրին
Սա գիւղէն էր որ Բրգնիկ — Անդ բնակէր բայց չէր բնիկ,
Ստացեալ էր զաւակս հինգ — Երկուքն արու երեքն աղջիկ
Կարճահասակ ծիծաղերես — Ճշմարտասէր բարեպէս
Կարճ էր վիզն վստահ խօսէր Զանբը բոլոր մօրվօք չէկ էր։
Յիսուն և եօթն ամաց էր — Մի և տասն ամաց քահանայ էր
Ուսուցանել անձանձիր էր — Ընթերցմունս Ս. Գրոց էր։
Ճշմարտութեամբ ծանուցանէր — Ամենեցուն և վկայէր.
Վասն այսորիկ ոչ գաղեցաւ — Ամենեցուն յայտնի ցուցաւ։
Նախանձելի երևեցաւ — Նախատանաց դէմ ոչ դարձաւ
Աւետարանին հաւատաց — Խրատ փրկչին առոյգ գիտաց
Զանձն իւր ետ վասն ոչխարաց — Որպէս հովիւ քաջ կատարեաց
Ըստ վերոգրեալ թուականին — Հինգն լցեալ էր Մայիսին
Օրն էր շաբաթ յետ կէսօրին — Ջուան եղին պարանոցին
Կախաղանօք կատարեցաւ — Եւ ի յաղբիւս թաղեցաւ
Մարմինն աստ կատարեցաւ — Հոգւով յերկինս պսակեցաւ։

Հաճեան Յովհաննէս արքեպիսկոպոս Կեսարիոյ գրած է Միքայէլ քահանայի վարքին եռին, յամին 1870ի Հռոմ, «Պատուական նշխարք Տեառն Միքայէլի որ թաղեալ էր ի Քառասուն Մանկունք անուանեալ գերեզմանատան արտաքոյ քաղաքին Սեբաստիոյ՝ յոր յաւուրց անտի

նահատակութեան նորա յաճախէին ուխտաւորք, յամին 1834 ձեռամբ Միքայէլ արքեպիսկոպոսի կեսարիոյ, Առաջնորդին (վիճակին Սեբաստիոյ) փոխադրեցաւ ի նորաշէն եկեղեցի Բրգնկոյ (Ս. Սարգիս) և եդաւ ընդ բեմիւ»: Եւ ասի իր ստորագրութեամբ վաւերացուցած է: Նոյն բեմին վրայ գրուած է տառնաւոր յիշատակարան, որոյ օրինակն է այս:

Դամբանագիր Տէր Միքայէլ Բրգնկոյ
Առաքեալ նահատակին,
Գանձեալ ամփոփի ի չքնաղ Տապանիս
Գանձ անմահութեան մարմնոյ վկային,
Վեհ նահատակիս Տէր Միքայէլիս
Անգին նշխարք ի շքեղ շիրմիս
Ուրախ լեր ցնծա՛ տուն բագրատունիս
Ընդ շող հաւատոյ նոր մատիրոսիս
Որով լուսացի խաւարըն վայրիս
Լոյս կաթողիկէ նախկին ուետիս
Ի քոյ Սերնդոց ծաղկեալ ի Պօլիս
Լուցիա Տիկին Թընկրեան Տոհմիս
Որ յօժարակամ զայս կերտուած յարկիս
Նուիրէ սիրով Ձեզ նախահաւրս:

Այսչափ համառօտ Տ. Միքայէլ նահատակին վրայ:

1720 ՌՃԿԹ.ին նահատակեցաւ կ. Պօլիս Աստուածատուր Սեբաստացի որդի Անմեղուկեան Պաղտասարին և Թրուանտային, ոսկեգործ էր և մտած աշխարհի կարգը. կ'երթար կ. Պօլիս: Եւ որովհետև ծպտեալ կ'երթևեկէր, տաճիկները տարին դատաւորին ըսելով որ այլազգի է. դատաւորն հարցուց, Աստուածատուր պատասխանեց. «քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ»: Երբ Տաճիկները հակառակը պնդեցին, դատաւորը բանտ դնել տուաւ զինքը, և երկրորդ օրը տարին զինքը կուսակալին՝ որ ողոքանօք յորդորեց և խոստմունքներ ըրաւ, ապա բանտեց դառն

չարչարանօք, ուր մնաց երեսուն և երկու օր, և ետքը դրին մահապարտաց գուբը: Կրկին կրկին տարին դատաւորին, Աստուածատուր կը դաւանէր անվեհեր զՔրիստոս Աստուած. այն ատեն վճռեց դատաւորն՝ որ գլխատուի և յանձնուեցաւ դահճապետին: Կար բանտին մէջ Անտոն Սեբաստացի, որ միտքը դրած էր ուրանալ իր հաւատքը. վկան քաջալերեց զինքն և պատրաստեց առ ի մահ վասն փառացն Քրիստոսի. և աղաչեց դահճապետին՝ որ զանիկա յառաջ գլխատէ: Դահճապետը յոյս մ'ունեցաւ իր մտքին մէջ և կատարեց խնդիրքը. և սկսաւ յորդորել որ տաճկանայ, բայց Աստուածատուր դիմացաւ և դաւանեց իր սուրբ կրօնքն, և պսակեցաւ սրով: Քրիստոնեայք ընծաներ տալով առին վկային մարմինը և պատուաւոր տեղ դրին և եղան շատ մը բժշկութեան նշաններ (Պատ. Սեբ.):

Յիշեալ Աստուածատուր Թմրուկ արքեպիսկոպոսի ժամանակ բազմաթիւ նուէրներ եղան Ս. Նշանին. Կ. Պոլիս գանձանակ դրին՝ որուն գրուեցան շատեր, մանաւանդ Չրկիրնոցի վարպետք. 81 *անձ մեծ արծաթի ջահ մը ղրկեցին՝ որ կայ քաղաքին Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ: Ս. Նշանին ևս ղրկեցին կանթեղներ և ձիթաղամ:*

Յամին 1715 *ՌՃԿԴ. մեծ հրդեհ մ'եղաւ Սեբաստիա, այրեց շուկային մեծ մասը, եղաւ նաև կարկուտ մեծաքանակ և ապականեց արտորայքը:*

Վերջապէս Աստուածատուր արքեպիսկոպոս Թմրուկ, հասաւ ի վախճան կենաց, քսան տարի և քանի մ'ամիս եպիսկոպոսութիւն ընելէն ետև 1721 *ՌՃԿԱ. և թաղեցաւ ի վանս Ս. Նշանի:*

ԳԼՈՒԽ Թ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՔ

Ա. Մխիթար Մանուկեան, որ ետքն եղաւ Աբբայ Մխիթարեանց։ Բ. Արքեպիսկոպոսութիւն Տեառն Առաքելի. նորոգութիւն վանօրէից եւ ուրիշ դիպուածներ։ Գ. Արքեպիսկոպոսութիւն Տեառն Եղիազարու եւ Տեառն Կարապետի։ Դ. Յովհաննէս կը վերցուի Յակոբ դարձեալ կը հաստատուի արքեպիսկոպոս։ Ե. Արքեպիսկոպոսութիւն Տէր Գրիգորի եւ Օսմանեան կուսակալներն։ Զ. Օսմանեան կուսակալներն ։ փոխանորդութիւն Կարապետ եւ Յովհաննէս վարդապետաց, եւ առաջնորդութիւն Թադէոս արքեպիսկոպոսի։ Է. Արքեպիսկոպոսութիւն Յովհաննէս վարդապետի եւ Օսմանեան կուսակալք։ Ը. Օսմանեան կուսակալներն։ Յովհաննէս արքեպիսկոպոսի վերջին գործերը։

Ա. — ՄԽԻԹԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՈՐ ԵՏՔՆ ԵՂԱՒ ԱԲԲԱՅ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ծնաւ Սեբաստիա Հողդար արուարձանին մէջ 1676 *փետրուար* 7. *հայրը կը կոչուէր Ջէրճի Պետրոս Մանուկեան, արուեստիւ փերեզակ, իսկ մայրը Շահրիստան, ի մկրտութեան կոչեցեալ Մանուկ։ Եւ* 1685*ին Անանիա արքեպիսկոպոսէն կ'ընդունի չորս փոքր աստիճան, և* 1691*ին կը մտնէ Ս. Նշանի վանքը կրօնաւոր ըլլալու դիտմամբ, զոր ընդունեցաւ նոյն արքեպիսկոպոսէն, սարկաւագ ձեռնադրեց և անուանեց Մխիթար՝ հնգետասանամեայ։ Նոյն տարին Սեբաստիա հասաւ Միքայէլ եպիսկոպոս Նուիրակ Էջմիածնի որուն հետ ընկերներին ճամբայ ելլելով անհնարին*

տառապանօք կը հասնի Կարին. եպիսկոպոսը շատ անկարեկիր կը գտնուի իրեն. նոյն քաղաքը խոկումն Քրիստոնէական գիրքը գնելով կ'ընթեռնու. եպիսկոպոսը ձեռքէն կ'առնու, իբր թէ անոր չէր յարմարեր։

Էջմիածին կը հասնի 1692ին ուր կը վարէր Հայրապետութիւնը Նահապետ Եդեսացի. այս մայրավանքը Մովսէս կաթողիկոսին (1629-1633) օրէն սկսած էր բարեկարգուիլ. երկու ամիս Էջմիածին կենալէն ետև, ապրիլին՝ Սեբաստացի ուխտաւորի մը հետ կ'երթայ Խորվիրապի, (Արտաշատ) Սևանայ և շրջակայ վանքերն՝ խորհրդով Թէոդորոս մատակարար եպիսկոպոսին։ Սևանայ վանքին մէջ երբ կ'աղօթէր Տիրամօր պատկերին առջև, կ'երևայ իրեն Ս. Աստուածածին, զոր ի մանկութենէ մայր ընտրեր էր իրեն, երկու կուսաններով. Մխիթար հիացած յափշտակուած կը մնայ. կը հարցնէ ինչ կ'ուզես, կը պատասխանէ Մխիթար. «Այն կ'ուզեմ, Տիրուհի, ինչ որ դուն կ'ուզես». կը պատասխանէ Տիրամայրն. «Եղիցի»։

Անկէց մեկնեցաւ, և Երևանու ճամբով հասաւ Բասենոյ Աստուածամայր վանքը, զոր Գրիգոր Մագիստրոս շինած է՝ Ծիրանի կոչուած բլրոյն ստորոտը։ Վանահայրն էր Մելքիսէթ եպիսկոպոս, որուն քով մնաց, բայց Կարնոյ Աւետիք եպիսկոպոսը բաւական նեղութիւն տուաւ իրեն։ Իսկ Մելքիսէթ պաշտպանեց, զի զօրաւոր անձ էր։ Աւետիք կը հալածէր երկու բնութիւն ի Քրիստոս դաւանողները, Քաղկեդոնի ժողովքն և Լևոն քահանայապետն ընդունողները։ Մխիթար կը խորհէր թէ քանի որ կ'ընդունին զՔրիստոս ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ, ինչ դժուարութիւն կայ ընդունիլ ի Քրիստոս երկու բնութիւն։ Մեծ ճառընտրի մը մէջ կարդաց «Պատմութիւն ժողովոյն Քաղկեդոնի, որ գումարեցաւ հրամանաւ Լևոնի Հռովմայ Հայրապետի ընդդէմ Եւտիքեայ և Դէոսկորոսի»։ Հոն տեսաւ Քաղկեդոնի վարդապետութեան ուղղութիւնը, և համոզուեցաւ։

Մխիթար Մելքիսէթ եպիսկոպոսի հետ շրջեցաւ անոր թեմական այցելութեան ժամանակ. ապա որոշեց դառնալ Սեբաստիա, 1693ին մայիսի ճամբայ ելլելով հասաւ հայրենիքը. Ս. Նշան Նստաւ ժամանակ

մը. Հոն հանդիպեցաւ օր մը Եւդոկիացի Յովհան վարդապետի, 26 տարեկան եղած ատեն, որ յորդորեց զինքն Երուսաղէմ երթալ և ուսումը կատարելագործել. Մխիթար միտքը դրած էր Հռոմ երթալ, բայց յանձն առաւ և մարտին՝ 1691, գնացին Բերիա: Հոն կը տեսնուին Հ. Անտոն Ցիսուեան կրօնաւորին հետ, և Յովհան վարդապետին հետ ունին անոր առջև դաւանութիւն կաթողիկէ հաւատոյ: Եւ յիշեալ կրօնաւորին հետ որոշեցին իր արեւմուտք երթալն. նա յանձնարարական թղթեր ևս տուաւ:

Երեք ամիս Բերիա կենալէն ետև, Յովհան վարդապետին հետ գնացին Փոքր Աղեքսանդրիա, ուր մտան գաղղիացի նաւ մը. հասաւ նաև Գրիգոր Պիսակ Սսոյ կաթողիկոսն, որ եպիսկոպոսի մը հետ կ'երթար Հռոմ: Կաթողիկոսը ձեռնադրեց Յովհանը եպիսկոպոս Կիպրոսի Ս. Մակար վանքին մէջ:

1695ին կը մեկնի Կիպրոսէն, կ'երթայ Սելևկիա (Սիլվէքիա) անկէ Անտիոք, Բերիա և Այնթապ. ծանր նեղութեամբ և հետիոտն կը հասնի նոյեմբերի կիսուն Սեբաստիա. հոն կազդուրուեցաւ մտաւ դարձեալ Ս. Նշան, ուր սկսաւ ուսանողի դարձնել Առակաց գիրքը:

1696ին Սահակ արքեպիսկոպոս զինքը քահանայ ձեռնադրեց և իրեն աշակերտեցան երկու Սեբաստացի պատանիք՝ Յովհաննէս և Յովսէփ. իրենց տուաւ Թովմաս Գեմբացւոյ «յաղագս նմանութեան Քրիստոսի» ոսկեղէն գիրքը. ետքը Մխիթար ազատելու համար Յովհաննէսի ծնողաց իրեն դէմ բանած ընթացքէն՝ թողուց գնաց Եւդոկիոյ կողմերը: Յովհաննէսն ևս Ակնայ կողմերը գնաց: Երկու ամիս վերջը Մխիթար կը դառնայ Սեբաստիա ամեն բան խաղաղ վիճակի մէջ կը գտնէ. միայն Յովհաննէսի ծնողքն իրմէն կը պահանջէին որդինին. Յովսէփէն իմանալով թէ Ակն փախեր է, բերաւ և յանձնեց ծնողացը:

Լսելով կարնեցի Խաչատուր վարդապետին համբաւն, որ Ուրբանեան դպրոցի աշակերտ էր և Պոլիս կը գտնուէր, Մխիթար 1697 Ապրիլին հասաւ կայսրութեան մայրաքաղաքը, բայց լաւ չտեսաւ մեծ քաղաքին բնակչաց ընթացքը մանաւանդ եկեղեցականացը: Տեսնուեցաւ Խաչատուր

վարդապետին հետ, յայտնեց իր միտքը կրօնաւորական կարգ մը հաստատելու և աղաչեց որ վարդապետն ըլլայ Առաջնորդ և ինքը գործակից. վարդապետն հաւանեցաւ գաղափարին, բայց ժամանակին և ազգին պարագաներուն մէջ անկարելի դատեց։ Մխիթար կը կենար Ս. Լուսաւորիչ եկեղեցին՝ Ղալաթիոյ մէջ, Յովհաննէս Սերաստացիէն եկաւ իրեն քով. նաև Յովհան աշակերտեցաւ, որ եղաւ ապա Հ. Մանուէլ։

Նոյն ժամանակ Պոլիս կը հասնէր Հ. Յովհաննէս վերծոյ՝ Սուրիոյ Յիսուսեանց ընդհանուր մեծաւորը, զոր Բերիայէն կը ճանչնար. ընդունեցաւ անորմէ լաւ վկայագիր 15 Յուլ. 1697ին։ Իր բարեկամներէն և խաչատուր վարդապետէն ձեռնտուութիւն մը չի գտնելով, միտքը դրաւ երթալ Օւզի գաւառն, ուրոյ բնակիչները մեծաւ մասամբ հայազգի էին։ Ուստի իր երկու աշակերտներովը մեկնելով Պոլսէն, Էրէկլիի, Սինոպի և Սամսոնի ճամբով կը հասնի Մարսուան, Ամասիա և Եւդոկիա. և անկէ կ'ուղևորի Կարին և կը դիմէ դէպ ի կարմիր քարերով շինուած Հնձուց կարմիր վանքը։ Վանքին առաջնորդն էր Մարգար եպիսկոպոս, բարեսիրտ անձ մը։ Հոն դաստիարակեց վանքին աշակերտներն և աբեղաները տարի մը. Մարգար եպիսկոպոս իր երախտագիտութիւնն յայտնելու համար, զինքը վարդապետ օրհնեց 1698ին, նաև նոյն եպիսկոպոսը Ս. աստիճանները տալով քահանայ ձեռնադրեց Մխիթար վարդապետին Յովհաննէս աշակերտը։ Մուտուրկու վանքէն կոչեց Յովհան աշակերտն և իրմէ առաջ ղրկեց Պոլիս, իսկ ինքն Յովհաննէս աբեղայի հետ գնաց Կարին. ուր աշակերտեցան իրեն Եզեկիա, որ ապա կոչեցաւ Հ. Գաբրիէլ և Ղազարոս և 1699ի ձմեռ անցուց ի Կարին, և կը քարոզէր կաթողիկէ հաւատքը. քաղաքին եպիսկոպոսն էր հին Աւետիքն, որ ապա պատրիարք եղաւ Կ. Պոլսի. սա շատ հակառակութիւն ըրաւ, բայց Մխիթար իր ճոխ խօսքերովը մեծ ազդեցութիւն ըրած էր ժողովրդեան վրայ։ Մխիթար վկայագիր մ'առաւ լատիներէն Յիսուսեան Լոյ կրօնաւորէն, որ կը ստորագրէ «Նուիրակ Առաքելական Աթոռոյ առ ազգն Հայոց». սա ինինովկենտիոս ԺԲ. Քահանայապետէն Նահապետ կաթողիկոսին փառաւոր աթոռ մը և այլ ընծաներ տարաւ. և Կարնեցի ըլլալով հոն հանգիպած էր։

Մխիթար կը հիմնադրէ իր միաբանութիւնն և կը սկսի իր հրապարակային կեանքը. Պոլիս կը հասնի ԺԸ. դարուն սկիզբը՝ Յուլիսի մէջ. Մխիթար և Մելքիսէթ Պատրիարքաց հրամանաւ կը քարոզէ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Մեծ շփոթութիւն կ'ելլէ կաթողիկեայ և ոչ կաթողիկեայ Հայոց մէջ. Մխիթար հնարքը կը գտնէ հաշտեցնելու զիրենք և խաղաղութեամբ վերջացնելու խնդիրը։

Իրեն կ'աշակերտին Սարգիս Այնթապցի, Եղիա վարդապետ Կ. Պոլսեցի, որ զինքն Եւդոկիա տեսած էր, Ղազարոս Ակնեցի, Յովհաննէս Սեբաստացի, Ազարիա Բերիացի։ Սարգիսն և Յովհանը քահանայ կը ձեռնադրէ Թէոդոսիացի Յովհաննէս կաթողիկեայ եպիսկոպոսն, և կ'անուանեն Հ. Գէորգ և Հ. Մանուէլ։ Այս կերպով չորս քահանայ աշակերտ ունեցաւ, հիմնեց իր միաբանութիւնը յամին 1701, վարձեց տուն մը, հաւաքեց իր աշակերտները. նոյն տարին Եփրեմ Ղափանցին կ'ըլլայ պատրիարք և հալածանք կը հանէ կաթողիկեայց դէմ. եանէ կ'ըլլայ ձերբակալելու Մխիթար Սեբաստացի, Խաչատուր Կարնեցի, Պետրոս Մծխիթացի և Սահաթճի Սարգիս Եւդոկիացի գլխաւորները, որպէս զի զանոնք Թիավարութեան կամ աքսորանքի մատնէ։ Մխիթար կ'ապաստանի Վեղարաւորաց վանքը, և միտքը կը դնէ իր միաբանութիւնը տանել զետեղել քրիստոնեայ իշխանութեան մը ներքև, յաւէտ Պեղոպոնէս, որ 1687ին Վենետիկցւոց ձեռքն էր անցեր։ Վենետկոյ դեսպանին հետ ևս կը խօսի. և փոքր առ փոքր կարգի դրուելու կը սկսի գործն։ Այն ատեն 1701 Սեպտ. 8. կը հաստատէ իր միաբանութիւնը ի Կ. Պոլիս։ Մխիթար կ'ընդունուի Հիմնադիր, գլուխ և առաջնորդ միաբանութեան, և խոստացան իրեն հլու հպատակութիւն և յարգանք. իբրև կնիք դրին Ո. Կ. Վ. Ա. և գրուեցան Որդեգիր Ս. Կուսին։ Հ. Գէորգը ղրկեց Պեղոպոնէս, որ հասաւ Նաւպլիա և լաւ լուրեր տուաւ։ Նոյն ժամանակ Աւետիք Կարնոյ ծանօթ եպիսկոպոսը կ'ըլլայ պատրիարք. Մխիթար յայտնի կը տեսնէր ըլլալիքն, ուստի իր աշակերտներովը գնաց Զմիւռնիա, և անտի 1702 Սեպտ.ին գնացին Պեղոպոնէս. Նաւպլիա գտան իր աշակերտներն, և Մեթոնի մէջ որոշեցին շինել իրենց վանքը։ Վենետիկի հասարակապետու-

թիւնը տուաւ իրենց ընդարձակ երկիր մը, Գալազոն գիւղն՝ Արկադիոյ մէջ և Մաւրոմաթ գիւղին մեծ մասն իրենց ապրուստին համար։ Միաբանութիւնը տասնեվեց հոգի էր, Մխիթար կ'անուանէր վերատեսուչ կամ վեհագոյն հայր. յամին 1712, *կոչեցաւ Ս. Աթոռէն՝ Աբբայ Հայր. կային չորս վարդապետք. Հ. Եղիա, Հ. Յովհաննէս, Հ. Գէորգ, Հ. Մանուէլ և տասը եղբարք Ղազար, Յովհաննէս, Ազարիա, Պօղոս, Պետրոս, Գաբրիէլ, Միքայէլ, Յակոբ, Գրիգոր և Տիրացու, և Մարտիրոս պատանին։ Կանոնները կը սահմանէ։ Եւ* 1705 *փետր. Մեթոն քաղաքին մէջ կը հաստատուին. նոյն տարին Յուլիս* 1. *իր երկու աշակերտները կը ղրկէ Հռովմ առ Կղեմէս ԺԱ. ասոնք էին Հ. Եղիա և Հ. Յովհաննէս վարդապետները։ Քահանայապետը կու տայ օրհնութիւն միաբանից և իրենց գլխոյն, բայց առաջարկութիւնը քննութեան պէտք ունենալով՝ Հ. Յովհաննէս Հռովմ կը մնայ, որուն կը պատուիրէ Մխիթար սորվիլ Իտալերէն և Լատիներէն. և ինքը կը կառուցանէ Մեթոնի վանքը, յայտնի է, մեծամեծ դժուարութեամբ, յամին* 1706*։ Իսկ Ս. Անտոնի եկեղեցին հիմնարկուեցաւ յամին* 1708 *և շինուեցաւ նոյն քաղաքին մէջ։ Բայց այս շինութիւններէն առաջ Եւրոպիա ղրկեց Հ. Մանուէլ հոգեւոր քահանայն քարոզութեան համար. բայց հոն ունեցաւ բաւական դժուարութիւններ, մինչև ստիպուեցաւ մեկնիլ Եւրոպիայէն։*

Յամին 1712 *Մխիթար կ'ընդունի Հռովմայ Ս. Աթոռէն հաւանութիւն իր միաբանութեան, և իրեն՝ տիտղոս աբբայութեան, ինքն և իւր միաբանք կրկնեցին իրենց ուխտն Կորնթոսի արքեպիսկոպոսին առջև. և այս եղաւ երկրորդ հաստատութիւն միաբանական կենաց, և իրենց կանոն ընդունեցին Ս. Բենեդիկտոսին սահմանադրութիւնը։*

Իսկ 1715*ին երբ իմացաւ որ պատերազմ պիտի բացուի Օսմանեան ինքնակալութեան և Վենետիկի հասարակապետութեան մէջ, Հ. Ղազար Ակնեցի վարդապետը՝ փոխ աբբայ անուանելով թողուց Մեթոն, և հետը Հ. Մանուէլ, Հ. Յակոբ վարդապետները և երեք աշխատաւոր եղբայր, ինչպէս նաև կարեւոր իրերն առած, Մարտի առաջին օրը մեկնեցան Մեթոնէն, և խաղաղ օդով հասան Վենետիկ տասներկու անձինք։*

Վենետիկ տուն մը վարձեց և հոն բնակեցան առժամն։ Վենետիկ էր նաև Խաչատուր վարդապետ Կարնեցի, Ս. Աթոռէն կարգուած առաջնորդ հայ գաղութին ի Վենետիկ։ Հասարակապետութիւնը Մխիթարայ և իւրայոց կու տայ Ս. Ղազարու կղզին մէջի շէնքերովն (1717)։ Յաջորդ տարին Մխիթար կ'երթայ Հռոմ։ Օսմանեանք 1715ին կ'առնուն ամբողջ Պելոպոնէսն և Մեթոն քաղաքն, և ամեն բան կը կորսուի բաց ի միաբաններէն, որոնց երկուքը Վենետիկ գնացած էին արդէն, և երկուքը Կ. Պոլիս տարուելով գերեվարի եղան։ Իբր տասը տարի (1721–1732) շինութիւններով կը զբաղի Մխիթար. այսչափ գործոց և զբաղմանց մէջ պարապեցաւ նաև գրական կենաց, տպագրեց Աստուածաշունչ մատեանը, Մատթէի մեկնութիւնը, Հայկազնեան բառգիրքն և ուրիշ շատ մը գործեր՝ ոտանաւոր և արձակ, զորոնք մեծաւ մասամբ տպագրած ալ է։

Բայց ժամանակէ մ'ի վեր հիւանդութիւնք զինքը կը տանջէին, մանաւանդ դալուկն, որ երկու երեք անգամ կրկնուեցաւ. վերջապէս յամին 1749 Ապր. 27ին ննջեց Մխիթար Սեբաստացի արդարոց քունը 74 տարեկան և թողուց արձան անմոռաց յիշատակի իր միաբանութիւնը՝ լուսատու ջահ ազգին ի Վենետիկ և ի Վիեննա (Պատմ. Մխիթարայ Աբբայի 1901 Վենետիկ)։

Եւդոկիացի Յովնան վարդապետ

Վերը յիշատակութիւն եղաւ թէ ինչպէս Յովնան վարդապետ Յիսուսեան քահանայի մ'առջև դաւանութիւն տուաւ կաթողիկէ հաւատոյ 1695ին Բերիա Ասորւոց քաղաքը և գնացին փոքր Աղեքսանդրիա, ուր հասաւ նաև Գրիգոր Պիսակ, որ Կիլիկիոյ կաթողիկոսն էր. յետոյ գնացին Կիպրոս, և կաթողիկոսը Ս. Մակար վանքին մէջ եպիսկոպոս ձեռնադրեց Յովնանն և հետն առաւ, և երկու եպիսկոպոսներով գնացին Հռոմ, և միաբանութիւնը կրկնեցին Հռոմայ Պապին հետ և դարձան։ Յովնան

եպիսկոպոսն անուանեցաւ եպիսկոպոս Լաւոդիկեայ և պաշտօն տրուեցաւ իրեն առաքելական քարոզչի (միսիոնար)։

Սա կը կոչուի եւ Անանիա, Յովհան կամ Ջօնան արքեպիսկոպոս Սեբաստիոյ Կապադովկիոյ կամ փոքուն Հայոց. կ'երևի թէ Գրիգոր Պիսակ յանուն Սեբաստիոյ ձեռնադրած է, զոր ապա Հռովմ յանուն Լաւոդիկեայ փոխադրեց։ Կը բաղձար սա Աբրահամ արքեպիսկոպոսին հետ տեսնուելու և հրաժանգուելու անկէ։ Վերջերս Բայաս կը գտնուէր, որ Լաւոդիկէէն երեք չորս օր հեռու է։ Բայասէն թղթով ծանուց Աբրահամ արքեպիսկոպոսին իր բաղձանքը Վանք (Գրէմ) գալու, բայց պատասխանը չառած հիւանդացաւ, և կենացը վերջն եկած տեսնելով՝ իր բոլոր ունեցածներուն ընդհանուր ժառանգ կարգեց Աբրահամ արքեպիսկոպոսն և վախճանեցաւ Բայաս. իսկ թէ իր կտակը գործադրուեցա՞ւ՝ չէ յայտ։

Միայն այսչափը կը յաւելում գրել, թէ այն ժամանակ և անկէ ետև կային կաթողիկեայ Հայեր Բայասի մէջ երկայն ժամանակ, բայց անծանօթ է ինձ՝ թէ ի՛նչ կերպով ետքէն անհետացեր են։

Բ. — ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԱՌԱՔԵԼԻ, ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՎԱՆՕՐԷԻՑ ԵՒ ՈՒՐԻՇ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

Աստուածատուր Թիմբուկ արքեպիսկոպոսի մահուանէն ետև քահանայք և իշխանք միաբան աղերսագիր ըրին Յովհաննէս պատրիարքին Կ. Պոլիս, առաջարկուեցաւ Եսայի Վ. Կեսարացի, բայց Պոլիս գտնուող Սեբաստացիք չընդունեցան։ Լումայափոխ Ցէվէքիլեան Յարութիւն ամիրայ ակնցի՝ խորհուրդ տուաւ որ ընտրեն Ակնցի Առաքել վարդապետն որ նոյն ժամանակ կը գտնուէր Եկեղեաց գաւառը Տողային Ս. Աստուածածնէ վանքը։ Պատրիարքը արքայական հրամանագիր հանեց և պատգամաւորին տուաւ, որ գնայ Երզնկա, բայց վարդապետն յանձնառու

չեղաւ։ Պատգամաւորը Սեբաստիա դարձաւ և պատմեց եղածը. մեծամեծք կուսակալէն Թուղթ առին և իրենք գրեցին. դարձեալ հրաժարեցաւ, բայց յետոյ յորդորմամբ մեծարոյ անձանց ընդունեցաւ և եկաւ Ս. Նշան Յունիս 28 1722 ՌՃՀԱ. ժողովուրդը ընդունեց զինքն իբր առաքեալ Աստուծոյ։

Քանի մ'օր վերջը ժողվեցան Եղիազար և Յակոբ վարդապետները, Տ. Պետրոս, Տ. Յովհան, Տ. Սուքիաս, Տ. Յակոբ, Տ. Կարապետ, և իշխան պարոն Պէլիկ Եամէնենց, Մ. Յակոբ Շէնկուլենց, Մ. Յովհաննէս Մեսրոպենց, Մ. Յարութիւն և Մ. Պաղտասար Չէնթէանենց, Մովսէս Չէլէպի Զարոխենց, խոջա Յարութիւն Չրիկենց, Մ. Յարութիւն Դարբին, խոճա Մուրատ Էլմանենց, Մ. Դաւիթ Քէօրօղլենց, խոճա Լուսպարոնք և ուրիշներ և գրեցին վանքին ներկայ ստացուածները. — 10 խաչ, 2 փոքր կանթեղ արծաթ, 6 սաղավարտ, 1 գաւազան, 10 շուրջառ՝ հին և նոր, 10 մոմակալ պղնձի, 1 ջահ, 150 սաւան, 16 կարպետ խալի, և անասուն՝ 3 գոմէշ, 1 եզ։ Ուտելիք՝ ցորեն, գարի չկար։ Առաջնորդը մեռնելէն ետև պարտք ըրած էին 700 ղրշ. գինւոյ և ցքւոյ գործածելով։ Կային եկեղեցական անօթներ, զորոնք Հողդարցի Ալեքսան Թիմրուկ վ. ին փեսան Գէտին մաճուանէն ետև վանքին վրայ տիրելով իրացուց կամ ցրուեց, և երբ Նոր Հովիւը խնդրեց, Ագապէկ անունով անձի մը հետ միանալով՝ ութ անգամ տուգանել տուաւ վանքը։

Առաքել արքեպիսկոպոս խորհեցաւ ապա հինգ տարի նորոգել վանքին շէնքերը. մեծ եկեղեցւոյ կաթողիկէն կործանած և փայտով ծածկուած էր, և ուրիշ շէնքեր խարխլած էին, բնակելու յարմար սենեակ չկար։ Ժողվեց իշխանները, հաճեցուցին դատաւորն, աղերսագիր գրեցին Պօլիս, և այն տեղի ամիրայից աշխատանքով հրամանագիր առին ինքնակալէն, մատուցին Սեբաստիոյ Մութէսէլլիմին, դատաւորին տուին 67 ո. և կուսակալին 100 ո. և յետ քէշֆին սկսան շինել նախ գմբէթը սրբատաշ քարերով, ամրացուց առաստաղն և որմերը կրով և խճով սպիտակացուց, նաև որմերն ամրացուց։ Աջ և ահեակ կողմն երկու խորան կանգնեց և վերնատուն կանանց։

Ս. Կարապետն ևս նորոգեց, և աջ կողմը կանգնեց նոր խորան Ս. Գրիգորի Լուսաւորչի։

Կրկնայարկ առաջնորդարան մը շինեց, և անոր դիմացը քահանայից սենեակները, և մէջ տեղը պարտէզ. բարձրացուց նաև վանքին պատերն. 1728 ՌՃՀԷ-ին աւարտեցան շէնքերն։

Իսկ յամին 1732 ՌՃՁ. բազմացուց միաբաններն և կանոն դրաւ որ ամէն օր կատարեն ժամերգութիւն ի պաշտօն Տեառն։ Առատացուց գոմէշներու և եզներու լուծերն և ոչխարներու և այծերու հօտերը. զարդարեց և պայծառացուց վանքն ամէն կերպով և խնամքով։ Երեք տարի փոյթ տանելով և չի կրնալով պարտքերը տալ, անձամբ Կ. Պոլիս գնաց, ուր մեծ խռովութիւն ելաւ։ Սուլթան Ահմէտ 1730ին վար առին և տեղը դրին սուլթան Մահմուտ Ա. որ մեծ կոտորածով հանդարտեցուց աղմուկը։

Սեբաստիոյ արքեպիսկոպոսը ժողովեց բաւական դրամ, պարտքը տուաւ։ Եպիսկոպոսական զգեստ մը շինեց թագով և այլ զարդերով՝ ոսկեղէն և արծաթեղէն, և շատ մը յիշատակներով դարձաւ եկաւ ի Ս. Նշան։

Հրեշտակապետի վանքն առանձին առաջնորդ կը կենար Եղիազար վարդապետ Սեբաստացի։ Սա ևս նորոգեց իր վանքը, շինեց սենեակներ իրեն և միաբանից համար, նաև ախտաւորաց և ուրիշ շէնքեր։ Ժողովեց նպաստներ քաղաքէն և գիւղերէն, բայց չի բաւեցին պարտքերուն, ուստի 71 կնքով թուղթ առաւ և Կ. Պոլիս երթալով յայտնեց Կոլոտ Յովհաննէս պատրիարքին իր որպիսութիւնն և յաջողեցաւ գումարել բաւական դրամ, պարտքը տուաւ և շատ մը զարդերով և զգեստեղէններով ոսկեղէն և արծաթեղէն՝ դարձաւ իր վանքը։

Յամին 1733 ՌՃՁԲ. Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ Առաջնորդարանին սենեակները հիմէն նորոգուեցան աւելի վայելուչ։

Յակոբ վարդապետ Պալըքճը քառասուն տարիէն վեր ձեռքն ունէր Անապատը, ծերացեր էր և ապրուստը գտնելու համար քաղաքն էր եկեր։ Իսկ խեղճ վանքն աւերակ կը դառնար հետզհետէ. իշխանք

Յակոբ վարդապետը համոզեցին որ քաղաք մնայ, և իրենք կը հոգան իր պէտքերն. և վանքն յանձնեցին Ս. Նշանի առաջնորդին, որ այնուհետև փոխանորդով սկսաւ կառավարել զայն։ Պարտքը վճարեց, արտերն և ջրաղացները թափեց տաճկաց ձեռքէն, և ապա սկսաւ նորոգել. և Անդրէաս վարդապետը Կ. Պոլիս ճամբեց յանձնարարականով։

Հոս Առաքէլ արքեպիսկոպոսը թողլով իր Անապատի վանքը լեցընելու մտածութեանց մէջ, համառօտեմ այս ժամանակի կուսակալաց յաջորդութիւնը՝ գրելով Ջառացի տոհմին վրայ որ շատ յառաջացաւ։

Արդ սուլդան Մուստաֆային (1680–1703) ժամանակ, Սեբաստիոյ Ջառա գիւղէն Յովսէփ անունով հայ մը՝ տիրացու կամ երգիչ գիւղի եկեղեցւոյն, կ'երթայ կ'ընդունի մահմետական կրօնքը, և յառաջ երթալով կ'ըլլայ Եուսուֆ բաշա և կը կարգուի կուսակալ Սեբաստիոյ և քանի մը տարի կը վարէ նոյն պաշտօնը։

Իրմէ ետքը կը նստի կուսակալ Սեբաստիոյ Եուսուֆ բաշայի որդին՝ Օսման բաշա։ Անշուշտ աստ ժամանակն հանդիպած է այն պատերազմը, որ յամին 1711 յորդորմամբ Շուէտի կարոլոս թագաւորին Օսմանեանք մղեցին Ռուսաց Մեծին Պետրոս կայսեր դէմ։ Սուլդանի բանակին մէջ կային Գարամանի, Սեբաստիոյ Հալէպի, Տիարպէքիրի, Ատանայի, Գանգրայ, Անկիւրիոյ, Աքշէհրի, Սիտիշէհերի, Թէքքէի, և Պոզոքայ կուսակալներն իրենց զօրքերով. գնացին սուլդանին ներկայանալով խիլաթներու պատիւն առացան։ Այս պատերազմն եղաւ 1711–1124 հճրէին՝ յաջողութեամբ Օսմանցւոց։

Իսկ յամին 1742 ՌՃՂԱ. Սեբաստիոյ կուսակալ եղաւ Ապտի բաշային որդին Ալի բաշա։ Ասոր կամ իրեն յաջորդին օրն էր որ եղաւ Պարսից Նատըր – Շահին դէմ յամին 1744 (1157) մեծ պատերազմը Հէքիմզատէ Ալի բաշային սպարապետութեամբ, երբ Օսմանեան բանակին մէջ կային Սեբաստիոյ, Տրապիզոնի, Գարամանայ, Կոնիոյ, Բերիոյ և Մարաշի կուսակալներն իրենց հազարաւորներով։ Ասոնց զատ գումարուած էին Ատանայ, Իչ – Էլիի, Ալայէյի, Նիկտէի, Ամասիոյ, Չորումայ, Գարա հիսարի, Անկիւրիոյ, Աքշէհրի, Պէկշէհրի, Գարէսիի,

Խիւտավէնտիկեարի, Գոճա–Էլիի, և Սուլդանիէի կուսակալք, որոնց ամեն մէկն ունէր 3–400 հեծեալ և նոյն չափ հետեակ: Եկած էին նաև եւրոպական գաւառաց գաւառապետներն, այսինքն են Ճգտորա, Օխրի, Աւլոնա, Տէլվինօ, Իլպասան, Տուքաքին, Փէրզէրին, Իւսկիւպ, Եանեայ Սելանիկ, Հէրսէկ, Բիլիս, Զվորնիկ, Պօսնա, անոնց ոյժն ալ նախընթացներուն չափ էր: Առանց մեծ պատերազմի հաշտութեամբ վերջացաւ գործը:

Բէսրէլի Ահմէտ բաշա, ասիկա օսմանեան պետութեան ականաւոր անձինքներէն էր, և Ա. սուլդան Մահմուտի մտերիմներէն. կարգեցաւ գլուխ դեսպանութեան որ ընծաներ պիտի տանէր Պարսից Նատըր շահին, անոր հետ եղած հաշտութենէն ետև. և այս առթիւն յամին 1746 տրուեցաւ իրեն Սեբաստիոյ կուսակալութեան անունը. բայց այս դեսպանութիւնը չհասաւ իր լրման, զի մեծ խռովութիւն մ՚ելաւ Պարսկաստան, որուն մէջ սպաննուեցաւ ինքը Նատըր շահ (1747):

Յամին 1752 ՌՄԱ. Օգոստ. 8. Վիտենէն կու գայ Սեբաստիա, կուսակալի պաշտօնով Ջաալ–Օղլու Մուհամմէտ բաշա Եղիազար արքեպիսկոպոսին ժամանակ: Սուլդան Մահմուտ Ա. որ թագաւորեց 1730–1756 կտրել տուաւ անոր գլուխն, և իրեն յաջորդեց եղբայրը:

Ֆէյզուլլահ բաշա որ ունէր երկու թուղ: Սուլդան Մուստաֆա Գ. Ղազի հրաման ըրաւ իրեն յամին 1758 ՌՄԷ. ջարդել Լևէնդ անուանեալ խումբը. և նա, կ՚ըսէ Պատ. Սեբ. թէպէտ և մանուկ էր, և դեռ ևս անընտել պատերազմի. սակայն իբր հինգ հարիւր զօրքով յանկարծ վրանին յարձակելով սաստիկ կոտորած մ՚ըրաւ, անանկ որ հազիւ քանի մը հատը մազէ պրծելով ազատեցան: Սպանելոց գլուխները Ֆէյզուլլահ ղրկեց թագաւորին Կ. Պօլիս, որ իր քաջութեանցը փոխարէն թուղ մ՚ևս աւելցուց շնորհել, որ հասաւ Սեբաստիա 25 Յուլ.ի Վարդավառին շաբաթ օրը:

Առաքել արքեպիսկոպոս, որ արքունի հրամանաւ գիր չէր կրցած ձեռք բերել, ուրիշ միջոց մ՚ունեցաւ Անապատի շինութիւնը յառաջ տանելու. զի յամին 1742 ՌՃՂԱ. Սեբաստիոյ կուսակալ եղաւ Ապտի

փաշա զատէ Ալի փաշա, որուն թարգմանն էր Ստեփան յոյն, որոյ ձեռամբ հաճեցուց կուսակալն և տուաւ հրամանագիր, ըրին նաև քէշֆը։ Մայիս 7ին սկսաւ շինել տաճարին գմբէթն որ փլած էր. նորոգեց նաև մնացած մասերն, շինեց կրկնայարկ առաջնորդարան ընդարձակ սենեակներով, բնակարան ուխտաւորաց, տնտեսատուն և մառան և հարաւակողմը միաբանից համար սենեակներ, և տարուան մը մէջ աւարտեց շինուածքները, և այս գործին վերակացու էին միաբանք Ս. Նշանին՝ Յարութիւն վ. Երզնկացի, որ կը պատմէ ասոնք, Կարապետ Կամրկացի, Սահակ Ուռհայեցի, Անդրէաս Պօղոտանցի, Թոմաս Սեբաստացի և Ստեփան Եւդոկիացի վարդապետները, Տ. Նիկողայոս Հողդարցի և ուրիշները։

Այս շինութիւնները Օսմանցւոց և Պարսից պատերազմի ատեն ըլլալով շատ հարկահանութիւն և ուրիշ վիշտ ու նեղութիւն կրուած է։ Այսու հանդերձ հաստատակութիւնը մեծ խնամ տարած է, ամեն արուեստաւորք օր ըստ օրէ կերակուր կու տային, նաև մաս մ'օրականէն. բայց և այնպէս մնաց մեծ գումար պարտուց։ Ուստի արքեպիսկոպոսը քաղաք գնաց և մեծամեծները տուին ըստ կարի. պարտքը վճարուեցաւ. և ինքը հետն առնելով երկու խաչ, մասուց պատարագ. խաչին մէկն Աստուածածնի և միւսն Ս. Սարգիս եկեղեցիներուն տուաւ և ինքը դարձաւ եկաւ Ս. Նշանի վանքը։

Երկու տարի վերջը 1745 ՌՃՂԴ. Եէկէն փաշա՝ սպարապետ Օսմանցւոց՝ Սեբաստիա եկաւ (1 Մայիս), 12,000 զօրքով և ութ օր մնաց, գնաց Պարսից դէմ, պարտեցաւ և մեռաւ, և Շահ–Դահմասպ տիրեց բանակին. և փախստական զօրքը Սեբաստիա և Մարտուան շատ չարիքներ գործեցին։

Յաջորդ տարին (1746) Սեբաստիա եկաւ Հէքիմզատէ Ալի փաշա սպարապետ. ժողվեց 200,000 զօրք, ինչու որ կային 38 կուսակալներ. եկան նաև Լէզգիներն, որոնց գլուխն էին Կէնճ – Ալի, Կէնճ – Օսման, Կէմ–Ալմազ, Աւշար – Օղլու և այլն։ Սպարապետը կը հոգար զիրենք, բայց մանաւանդ Լէզգիները գիւղերու վրայ երթալով շատ չարիքներ գործեցին, մանաւորապէս ի Երզնկի։ Բայց քանի մը տարի ետքը ջարդուեցան ու ջնջուեցան Լէզգիները

Առաքել արքեպիսկոպոս այսչափ մեծամեծ գործերէ ետև վախճանեցաւ յամին, 1747 ՌՃՂԶ. 14 Ապր. Յովհ. Կարապետի գլխատման տօնին օրը ԻԵ. տարի առաջնորդելէն ետև և թաղեցաւ Ս. Նշան մեծ եկեղեցւոյ գաւթին մէջ։

Գ. — ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՂԻԱԶԱՐՈՒ ԵՒ ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Բահանայք, իշխանք և ժողովուրդը միաբան արքունական հրովարտակ և պատրիարքական կոնդակ բերին յանուն Հրեշտակապետի վանաց առաջնորդ Եղիազար վարդապետին, որ իր հոգևոր որդին Աստուածատուր Վ.ը դնելով առաջնորդ Հրեշտակապետի՝ ինքն եկաւ նստաւ Ս. Նշանի վանքը։

Սա՝ վանքին հիւսիսակողմը տասը կանգուն տեղ ներս առնելով, շինեց երկու մեծ և ընդարձակ սենեակներ, ներքնատուն և վերնատուն՝ իբր առանձին բնակարան իրեն համար։

Յամին 1748 *ՌՃՂԷ. Մայիս* 18 *համբարձման օրը սաստիկ անձրև և կարկուտ եկաւ, շատ շէնքեր կործանեց, և մեծ վնասներ պատճառեց. Ջուրը մարդ տարաւ։*

Տարի մը վերջը Ջատկին նախատակեցան Յովսէփ մէկ ուրիշ ընկերով Մարտի 26*ին։*

Օգոստ 27 *անձրևաց յորդութեամբ Բրգնիկոյ գետն յորդելով մեծ վնասներ յառաջ բերաւ։*

Իսկ 1752 *ՌՄԱ. Սեբաստիա եկաւ Վ.իզիրնէն Ջալալ–Օղլու Մուհամմէտ բաշա* 8 *Օգոստ, և սպաննեց Բէնան–Օղլու, հարկ և տուգանք առաւ հայերէն, Բիպարեան Մ. Յովհաննէսէն* 7 *քսակ. Ճօն Մ. Եսայէն* 7 *քսակ և ուրիշներէն աւելի կամ պակաս։ Այս տարի գլխատեցին Կ. Պոլիս Ակնցի Եաղուպ աղա՝ Թագաւորին լումայափոխն։ Եղիազար վեց տարի և քանի մ'ամիս արքեպիսկոպոսութիւնը վարելէն վերջը վախճանեցաւ յամին* 1754 *ՌՄԳ. փետր.* 18. *Ս. Թէոդորոսի տօնին օրը, և թաղեցաւ ի Ս. Նշան՝ Առաքելի շիրմին մօտ։*

Նոյն տարին Ապր. 17 միաբանութեամբ քահանայից, իշխանաց և ժողովրդեան, արքունի հրովարտակով և պատրիարքական կոնդակով նստաւ արքեպիսկոպոս Սեբաստիոյ Տ. Կարապետ Վ. Ակնցի ազգական և աշակերտ Առաքել արքեպիսկոպոսի, յԱշխարհամատրան կիւրակէն։

Յամին 1757 ՌՄԶ. անձրև և հեղեղներ եղան, ապականեցին արտերն և կալերը, քիլէ մը ցորեն 30 դահեկանի և քիլէ մը գարի կամ լազուտ (տարա) 20 դահեկանի չէր գտնուէր, մինչև շատերը մեռան սովամահ։

Այս միջոցին մէջտեղ ելան Լէհնդները Սեբաստիոյ կողմերն՝ երկու հազար հոգի. կը սփռէին քաղաքն և գիւղեր և կը կողոպտէին. և ամենայն խստութեամբ կը պահանջէին դրամ և նման իրք. անանկ որ քաղաքէն և մեծ գիւղերէն շատեր փախան, անոնց բռնութենէն ազատելու համար՝ խեղճութեամբ և աղքատութեամբ։

Վերջէն Լէհնդները զումարեցան Բրգնիկ և գիշերը դիմեցին Ս. Նշանի վրայ. բայց երբ կէս մղոն կը մօտենան՝ կը տեսնեն պարսպին վրայ դրօշներ, և բազմութիւն զօրաց սպառազէն և ճառագայթարձակ լամբար մը. կը զարհուրին, և չեն համարձակիր առաջ անցնիլ, և կը մնան մինչ առաւօտ ձի խաղցնելով անօգուտ, և եաքը կորագլուխ կը մեկնին Լէհնդները. իսկ տաճիկներն և քրիստոնեայները զմայլեցան այս սքանչելեաց վրայ։ Եւ հրաման հասաւ ինքնակալէն Ֆէյզուլլահ բաշայի, որ ջնջէ նոյն Լէհնդ զունդն ինչպէս զրուեցաւ։

Անապատի վանաց բեմի ծաղկեայ քարերը դրուեցան 1759 ՌՄԸ. Երզնկացի Յարութիւն վարդապետի ձեռքով, և հրամանաւ Կարապետ արքեպիսկոպոսի։ Յարութիւն վարդապետ միաբան էր Ս. Նշանի. ասկա մնաց Անապատ և գրեց անոր պատմութիւնը Աստուածատուր Թմբուկ արքեպիսկոպոսի մահուանէ մինչև իր ծերութիւնը։ Վախճանեցաւ և թաղեցաւ նոյն վանուց գաւթին հիւսիսակողմը։

Այս տարի (1759) մեռաւ նաև Հրեշտակապետի առաջնորդ Աստուածատուր վարդապետ և երեք տարի մնաց վանքն առանց առաջնորդի։ Ապա Յովհաննէս Վ. միաբան Երուսաղէմի Յակոբ պատրիարքին

կոնդակովն կու գայ Սեբաստիա և կը նստի առաջնորդ Հրեշտակապետի և կը փարէ Աստուածատուր Վ.ի ազգականներն։ Կարապետ արքեպիսկոպոս 1767*ին նորոգել կու տայ Աստուածածին եկեղեցւոյ խաչկալն և ուրիշ քանի մը մասեր, որ պէտք ունէին նորոգութեան՝ Պ. Գէորգ Չըլկեանի եկեղեցապանութեամբ։*

Երկու տարի վերջ, (1760 **ՌՄԺԸ**). *Օսմանեան զօրքը գնաց պատերազմի ռուսաց դէմ, և շատ նեղութիւն պատճառեցին խեղճ ժողովրդեան, և Պէզիրճէ արտին մէջ սպաննեցին Մ.ի որդի Մ. Յարութիւնը։*

Իբր քսան տարի արքեպիսկոպոսութիւն ընելէն վերջ Տ. Կարապետ Ակնցի վախճանեցաւ ի ծերութեան, և թաղեցաւ ի Ս. Նշան՝ Առաքել և Եղիազար արքեպիսկոպոսաց գերեզմանին մօտ Յունուար 20*ին։*

Ապա ժողովեցան Սեբաստիոյ գլխաւորներն և բազմաթիւ աղերսագիր մ'ուղղեցին Զաքարիա պատրիարքին և մեծամեծաց ազգին որ խնդրեն անձ մ'ընտրեն և կարգեն իրենց առաջնորդ։ Նոյն ժամանակ երևելի էր Արմտանցի Յակոբ վարդապետն, որ աշակերտ էր Պրուսայի Սամուէլ արքեպիսկոպոսի (*աշակերտ Յովհ. Կոլոտ պատրիարքին*)։ *Յակոբ Վ. Նուիրակ էր Կեսարիոյ և Գաղատիոյ վիճակաց. դարձաւ Երուսաղէմ և կոչմամբ գնաց Կ. Պոլիս, ուր զինքն ընտրեցին և կարգեցին տեսուչ Սեբաստիոյ. յանձնեցին արքունի հրովարտակ և պատրիարքական կոնդակը. մեկնեցաւ մայրաքաղաքէն և հասաւ Ս. Նշան շքեղ հանդիսիւ* 28 *Յուլ.* 1774 **ՌՄԻԳ**։

Այս առենները կուսակալ եղան Սեբաստիոյ, Ապազա բաշա որ կը յիշուի յամին 1769 (1183)։

Ջաալ–Օղլու Սայիտ Պէկ կը յիշուի իբր քաղաքապետ և իբր բդեաշխ (*կուսակալ*) **ՌՄԻԳ**. 1774–1187 *և* 1775–1188 *տարիներն, իսկ մահն եղաւ* 1775 **ՌՄԻԴ**.։

Յամին 1778–1191 *կը յիշատակուի կուսակալ Սեբաստիոյ Հաճի բաշա, և իրեն տեղապահն էր Մաան–Օղլու չէյխ մը. Տրուզ Մաան–Օղլու էմիրներէն։*

Երկու տարի Կարապետ արքեպիսկոպոսի մահուանէն առաջ Անապատի դուռը փակուած էր․ 1774ին Բաթիկեան Մկրտիչ շուշտակ վարդապետը Ջատալ Օղլու Սայիտ Պէյին երթալով, անոր հրամանովը եկաւ Անապատ և նստաւ առանձին առաջնորդ և քանի մը շէնքեր ևս շինեց։ Յակոբ վարդապետ ուզեց իմանալ վանքին հանգամանքն և հաշիւները․ Շուշտակը կը պնդէր որ ինքը քաղաքապետէն առած է վանքին առաջնորդութիւնը․ ազատութեան հաւատիք։ Յակոբ վարդապետ սիրով և խոհեմութեամբ յորդորեց որ ճանչնայ ընդհանուր առաջնորդին իշխանութիւնը և մնայ իր պաշտաման մէջ․ բայց անօգուտ։ Այն ատեն գրեց Կ. Պոլիս և աքսորանաց հրաման եկաւ․ նա փախաւ գնաց Բրգնիկ և անկէ Կ. Պոլիս. և վանքին բանալիները յանձնեց քաղաքապետին, որմէ առաջնորդն Յակոբ վրդ. առաւ հազար դահեկան տալով. և Անապատի վրայ տեղապահ կարգեց Սեբաստացի Յովհան վարդապետը։ Առաջուց ի վեր Ջատալ Օղլուի սիրելի էր Յովհաննէս Պալիոզ անուանեալ հայ մը․ Կարապետ արքեպիսկոպոսի մահուանէն ետև իրեն յատկացուցեր էր Ս. Նշանի փոխանորդութիւնը․ հրաման առաւ Սայիտ կուսակալէն և ինչ ինչ նորոգութիւն ըրաւ մեծ եկեղեցւոյն. և մեծ վնասներ և նեղութիւններ հասուց վանաց և տուգանքներ տալու պատճառ եղաւ առաջնորդին․ և անգամ մը մինչև իսկ բանտարկութեան (ՌՄԻԵ․)։

Վերջը Յակոբ վարդապետ խնդրակ գլխաւորաց դրկուեցաւ Էջմիածին և ձեռնադրեցաւ եպիսկոպոս Սիմէոն կաթողիկոսէն յամին 1777․ հոն որոշուեցաւ նաև Պալիոզին դատը․ և ստորագրեցին նզովքով կաթողիկոսը, չորս եպիսկոպոսունք, նաև Սեբաստիոյ արքեպիսկոպոսը և Յովհ. Պալիոզը։ Ձեռնադրութիւնը կատարեցաւ Յունիս 4 յաւուր գալստեան Հոգւոյն Սրբոյ և դարձաւ ուրախութեամբ Ս. Նշան։

Բայց Յովհ. Պալիոզ չդադրեցաւ իր չարաճճի ընթացքէն մինչև որ վերջ տուաւ իր անօրէն կենաց։

Յակոբ արքեպիսկոպոս երբ դարձաւ Էջմիածնէ, խռովութեան մէջ գտաւ Սեբաստիա քաղաքն, ինչու որ Հրեշտակապետի առանձին առաջնորդը Յովհաննէս վարդապետ՝ Էջմիածին երթալու համար գնաց Եւդոկիա։

Միտքը դրած էր Ս. Նշանի աթոռը ձեռք բերել. երբ այն չյաջողեցաւ, ինքը գնաց Էջմիածին և ընդունեցաւ եպիսկոպոսական կարգ, և դարձաւ, և խնդիր հանեց Ս. Սարգսի արդիւնքներուն վրայ, որուն մէկ մասը Ս. Նշանի, մէկ մասը Հրեշտակապետի, մէկ մասն ալ կը տրուէր Անապատի։ Սակայն Առաքել եպիսկոպոսը Ս. Նշանի դրամով նորոգած էր Անապատն, ուստի այդ մասն ևս Ս. Նշանի յատկացուց։ Յովհաննէս եպիսկոպոս այս մասին համար կը պնդէր, կռիւ հանելու դիտմամբ։ Յակոբ արքեպիսկոպոս անձամբ Կ. Պոլիս գնաց, և յայտնեց Զաքարիա պատրիարքին և մեծամեծաց՝ Յովհաննու արարքն և խնդիրները. մատուց նաև հրաժարականն։

Պատրիարքն և իշխանք որոշեցին և կոնդակ տուին Յակոբ արքեպիսկոպոսին 7 *Յունիս* 1778 *ՌՄԻԷ. որ Ս. Նշանի առաջնորդին կը պատկանի Ս. Սարգիս եկեղեցւոյ տեսչութիւնն իբր ընդհանուր առաջնորդ. ինքը կը ձեռնադրէ սարկաւագ և քահանայ. խաչ և պատկեր օրհնել, քահանայ ի ննջման օծել, իշխան կարգել և հանել, ծանր յանցաւորները բանադրել, եայլն՝ իրեն կը պատկանին։ Ս. Հրեշտակապետի մասը միայն անոր տեղւոյն առաջնորդը, պաշտօնի բնաւ միջամուխ չըլլայ. և այս որոշումով դարձուցին Սեբաստիոյ արքեպիսկոպոսը իր աթոռը։*

Կոնդակը ընթերցան Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ. Յովհաննէսի կուսակիցները խռովութիւն հանեցին. Հաճի բաշայի տեղապահ Շէյխ Մատն Օղլուի շատ դրամ տուին, և Յակոբ արքեպիսկոպոսը աքսորեցին Պետրոսի գիւղը։ Եւ Յովհաննէսին վերարկու հագցնելով նստուցին Ս. Նշան. և բազմակնիք ստորագրութեամբ խնդրեցին պատրիարքէն, որ Յովհաննէս եպիսկոպոս ըլլայ հովիւ վիճակին Սեբաստիոյ։ Իսկ Յակոբ արքեպիսկոպոս միջնորդութեամբ Պրուսացի Մահտէսի Փիրկի դարձաւ, և նստաւ Աստուածածնի եկեղեցին ու Կ. Պոլիս գրեց բոլոր անցքերը։

Բայց Յովհաննէսեանք յարմար չդատելով անոր Աստուածածնի եկեղեցին բնակիլը, քաղաքապետին առատ դրամ տուին և աքսորեցին արքեպիսկոպոսը իր Արմտան գիւղը։ Յակոբ գնաց ուղղակի Կ. Պոլիս

և պատմեց պատրիարքին՝ եղածը։ Սագայեան Տագէս Ամիրան գրեց Հաճի բաշային, թէ Ձեր տեղապահը Սեբաստիա պատրիարքութիւն կ՚ընէ արքունական հրամանաւ. առաջնորդը կը վերցնէ և տեղն ուրիշը կը դնէ։ Բաշան զայրացած գրեց տեղապահին. բեզ Սեբաստիա քաղաքապետ ճամբեցի և ոչ թէ առաջնորդի փոփոխութիւն ընելու. առաջին վարդապետը բեր տեղը նստեցուր, ապա թէ ոչ գլուխդ քեզմէ կը վերնայ։ Քաղաքապետը (Մաան Օղլու) որոնեց Յակոբն ի Ս. Նշան և Յովհաննէսն իրեններումն բերաւ շղթայակապ բանտեց, հինգ ամիս վանք կենալէն ետքը. և շատ տուգանք առաւ։ Յովհաննէս բազմաթիւ ստորագրութեամբ գնաց Կ. Պոլիս. հեզահոգին Յակոբ ինքնակամ հրաժարեցաւ. այն ատեն Սեբաստիոյ վիճակը տրուեցաւ Յովհաննէսին իբր ընդհանուր առաջնորդի։

Դ. — ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԸ ՎԵՐՑՈՒԻ
ԵՒ ՅԱԿՈԲ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հազիւ քանի մ՚ամիս մնաց Յովհաննէս ի Ս. Նշան. և ահա Սեբաստացիք աղերսագիր ըրին Զաքարիա պատրիարքին. նա Յովհաննէս եպիսկոպոսը ճամբեց Երուսաղէմ և քանի մ՚ամիս ետքը կարգեց եպիսկոպոս Կուտինայ։

Յակոբ արքեպիսկոպոսը դարձուց իր աթոռը՝ Սեբաստիա և իր պատրիարքական կոնդակներում 8 և 28 Սեպտ. 1770 ՌՄԻԲ. կարգեց զինքն ընդհանրական առաջնորդ Ս. Նշանի, Հրեշտակապետի, Անապատի, Ս. Գէորգայ, Խնդրակատար Ս. Աստուածածնի, և քաղաքին Ս. Սարգիս և Ս. Աստուածածին եկեղեցիներուն ու բոլոր նահանգին. և Ս. Նշան գալով սկսաւ հովուել իր հօտը, և տեղապահ ղրաւ ի Ս. Հրեշտակապետ և վերջացաւ այդ խնդիրն։

Այս գործոց համար շատ դրամներ վատնեցան, Յովհաննէս եպիսկոպոսին պատճառաւ որոյ պարտքերը Ս. Նշան վճարեց. և գրաւ

գլուած մուրհակները գերծուց և քովը պահեց. իսկ բոլոր այս կերպ տուգանքներու գումարը հասաւ 25 քսակի։

1781 ՌՄԼ. կարգեց Ս. Աստուածածնի 24 իշխան, և Ս. Սարգսի 12. ևս 7 ծերունի երեսունուվեց իշխանաց վրայ։

Անապատի վանքը ժողովք մ'ըրաւ քահանայից՝ ծերունեաց և իշխանաց՝ վանքերը բարեկարգելու համար. ԺԱ. կանոն դրին նզովքի ներքև, և ստորագրեցին 26 քահանայք, 7 ծերունիք և 36 իշխանք։

Ա. Ձի քաղաքիս և բոլոր վանօրէից մէկ առաջնորդ լիցի. բայց առաջնորդէն այլ ընտանի եպիսկոպոս մի լիցի. եթէ որք ի կենդանութեան դիտին կամիցի երկրորդել կամ բաժանել զառաջնորդութիւն կամ զեպիսկոպոսութիւն, այնպիսին ի Ս. Ժողովոյն անիծեալ և նզովեալ լիցի։

Բ. Յորժամ վախճանեսցի առաջնորդն՝ նոյն ժամայն հանցեն զնընջեցեալն և փակեալ կնքեսցեն զառաջնորդարանն 2 եկեղեցւոյ ծերունիքն և ոչ բացցի մինչև գայցէ նոր դէտն Պէրաթիւ և եկեալ կնքող իշխանքն բացցեն զառաջնորդարանն և յանձնեսցեն տումարաւ զինչսն նոր առաջնորդին.

Գ. Ի մէջ Հրեշտակապետի և Անապատի վանօրէիցն Ոսէփ լիցի գիտութեամբ առաջնորդին և ամ յամէ տացէ զհաշիւն ի նոցանէ, և ում կամիցի դէտն, նմա տացէ զսէիզութիւնն և բացի առաջնորդէն այլ որք ձեռնամուխ մի լիցի և եթէ որք յանդգնի, ընդ բանիւ է։

Դ. Առաջնորդն ամ յամէ սրբոց վանօրէից հաշիւն տացէ իշխանաց։

Ե. Աթոռոյ անօթքն տումարիւ լուսարարին մօտն եղիցի և ոչ այլոց։

Զ. Ի մէջ վանից աթոռակալ լիցի, և եթէ պատահեսցի մօտ այլազգաց երթալ՝ նա երթիցէ և ոչ այլ որք։

Է. Բարոզ ասող վարդապետք երկու եկեղեցիս խրատ տասցեն ծննդեան, Առաջաւորաց և Մեծ պահոց։

Ը. Առանց գիտութեան առաջնորդին միաբանք ո՛չ երթիցեն ի քաղաքն և մի ննջեսցեն անդ։

Թ. Ի միաբանից եթէ որք գնալ կամիցի՝ երթիցէ։ Այլ զայս կանոն եղոյծ Եփրեմ կաթողիկոս։

Ժ. Միաբանք ի միասին ճաշեսցեն զկերակուր և մի ցիր և ցան։

ԺԱ. Միաբանք ոչ երթիցեն ի սեննակս ուխտաւորաց առանց կոչման ։

Այսոնք ամէնքը կոնդակի մէջ դնելով ստորագրեցին Ապր. 1 ամենուն հաւանութեամբ։

Յովհաննէս եպիսկոպոսին ժամանակ Բաթիկեան Մկրտիչ վարդապետ, փոխանորդ եղած էր անոր ի Ս. Նշան. և մնացած էր անոր երթալէն ետև ևս. Յակոբ արքեպիսկոպոս անյիշաչարութեամբ ներեց անոր և կարգեց 1782 ՌՄԼԱ. տեղապահ Ս. Գէորգայ վանից։ Երբ ինքն ալ նոյն վանքը գնաց այցելութեան, Զառա գիւղին մէջ գումարեց Ս. Գէորգայ վիճակի գիւղականներն, որոնք են Զառա, Թօտորակ, Տեոյս, Ալաքիլիսէ, Բարհատ և Թէքէլի. և անոնց առջև խիլայեց Մկրտիչ վարդապետն, և պատուիրեց որ ճանչնան զինքը մասնաւոր առաջնորդ և իրեն տան ամէն հաս և իրաւունք, և անոր յանձնեց վանական վարչութիւնն և դարձաւ Ս. Նշան։

Բայց այս անմիտ վարդապետը հանդարտ չկեցաւ. արքեպիսկոպոսին անունը չէր յիշէր՝ այլ իրենը. եպիսկոպոսի մը ձեռնադրել տուաւ դպիր և սարկաւագներ. և Արեգա Եւդոկիացի Ստեփանը խնդրեց Կ. Պօլսէն գիւղացւոց հետ՝ որ անկախ ըլլայ. Յակոբ արքեպիսկոպոս լուռ կեցաւ։ Մկրտիչ վարդապետ բանտուեցաւ, տուգանք տուաւ. և սկսաւ զրպարտել արքեպիսկոպոսը և անոր փոխանորդը՝ Դաւիթ վարդապետը, և սրիկաներ ժողվելով գնաց քաղաքապետին խոստացաւ 7 քսակ տալ որ Ս. Նշանի առաջնորդն աքսորէ և զինքն անոր տեղ դնէ։ Զարմացաւ Յակոբ արքեպիսկոպոս և ակամայ գնաց քաղաքապետ Թէճէպ պէյի քով, ինքն ալ տալով անոր 7 քսակ դրամ։ Սարգիս վարդապետ աքսորուեցաւ Եւդոկիա։ Տարի մը վերջը դարձաւ, և Աստուածածնի եկեղեցւոյն մէջ դատաստան եղաւ. և Յակոբ արքեպիսկոպոս յիշեցուց իր ըրած բոլոր բարութիւնները։ Վարդապետը դիմեց արքեպիսկոպոսին ոտքը անառակին նման. ժողովուրդն սկսաւ հայցել որ ներէ։ Առաջնորդը զիջաւ, նաև յանձնեց իրեն Ս. Գէորգայ վանքը, պայմանաւ որ վարէ զայն ընդ

հնազանդութեամբ արքեպիսկոպոսին։ Երկու տարի վերջը գնաց Կ. Պօլիս և չդարձաւ. և իր ընտանիքը գրաւեցին վանքը, կ'ուտէին արդիւնքը և վանքին աւերման հոգ չէին տանիր։ Եւ այսպէս Բաթիկեան Մկրտիչ շուշտակ վարդապետը խռովարար բարուքն այնչափ վնասներ պատճառեց Ս. Նշանի, և աւեր Ս. Գէորգայ վանաց՝ ինքն և ազգականք իւր։

Ուրիշ շփոթութիւն մը յարուցին խենդ Յովհան, Մոմճի Կարապետ և ուրիշները, նաև Յովհաննէս եպիսկոպոսի կողմնակիցներէ ոմանք, որոնց բանսարկութեամբ Ջառալ-Օղլու Րէճէպ պէկ, նոր վիշտեր հասցուց բարեբարոյ արքեպիսկոպոսին, վանաց և եկեղեցւոյ և տուգանքներ կորզեց։

Բայց Յակոբ արքեպիսկոպոս այս ամենայն տառապանաց մէջ անվեհեր էր, վանքերու նորոգութեան համար արքունական հրաման բերաւ, Հրեշտակապետի վանքը նորոգեց, կանգնեց արտաքին պարիսպը. շինեց գետնայարկեր, և վրան 19 սենեակ ուխտաւորաց համար, և խախտած տեղերն ամրացուց, ծախսելով 30 քսակ։

Այս տարի 1781 ՌՄԼ. մեծ խռովութիւն եղաւ տաճկաց մէջ. դրօշ պարզեցին, և միաբան յարձակեցան և այրեցին Սար-Օղլու քաղաքապետին ապարանքը։

Յակոբ արքեպիսկոպոս Ս. Նշանի մէջ ևս նորոգութիւններ ըրաւ և նոր շէնքեր աւելցուց քսան քսակ դրամ ծախք ընելով։

Հոս յարմար կը դատիմ դնել Սեբաստիոյ կուսակալները, որ նստան Յակոբ արքեպիսկոպոսի ժամանակ, հէճրէթի թուաբերութեան հաշուով, սկսեալ 1198 տարիէն։

Վէզիր Խասէյիւ Մուհամմէտ բաշա. 1198-1784 վարեց պաշտօնը 7 ամիս, 11 օր. ինքը Պէնտէրի բերդապահ ըլլալով, կայսերական հրամանաւ տեղակալ կարգուեցաւ իրեն Միրիմիրան Օսման բաշա։

Վէզիր Սիւլէյման բաշա 1199-1785 վարեց մէկ տարի 6 ամիս 22 օր. սակայն շինեց կամուրջ Ալտըիկ գետին վրայ, Նորխան գիւղի ճանապարհին մէջ։

Վէզիր Ապտուլլահ բաշա 1200-1786։

Վէզիր Ապտի բաշա 1200-1786. 1 ամիս, 22 օր. բերդապահ էր Սիլիստրէի. և տեղապահ կարգուեցաւ Ջառալզատէ Րէճէպ պէկ Սեբաստացի։

Վէզիր Մահմուտ բաշա 1201–1787․ վարեց 3 ամիս, 2 օր․ սակայ ես Սիլիստրէի բերդակալներէն էր և իրեն տեղապահ կարգուեցաւ Ահմէտ պէկ։

Վէզիր Մուխթար բաշա 1201–1787․ վարեց չորս տարի, 7 ամիս, 7 օր՝ մինչև որ եկաւ տեղապահութիւն ըրաւ Սեբաստացի Բէնանզատէ Ահմէտ ադա։

Վէզիր Հասան բաշա 1206–1791․ վարեց մէկ տարի, 9 ամիս, 21 օր․ մինչև անոր գալուստը տեղապահ եղաւ Ջառալզատէ Բէճէպ պէկ։

Վէզիր Լասէյիտ Օսման բաշա 1207–1792․ վարեց չորս տարի, 4 ամիս, 4 օր․ տեղապահ կարգուեցաւ Սեբաստացի Խաթիպզատէ Ալի ադա՝ մինչև իր քաղաք հասնիլը։

Վէզիր Լասէյիտ Ահմէտ բաշա կայսեր փեսան (Տոմատը Ճէհրիարի) բնիկ Սեբաստացի էր, ազնուական տոհմէ և քաղաքին մեծամեծներէն, վարեց մէկ տարի, 7 ամիս, 17 օր․ յամին 1211–1796։

Վէզիր Բէճէպ բաշա Վիւզէրազատէ․ եգիպտոս ղրկուած ըլլալով եպարքոսութեամբ, տեղակալ անուանուեցաւ հօրեղբօրորդին Լութֆուլլահ պէկ 1212–1798․ վարեց Սեբաստիոյ կուսակալութիւնն մէկ տարի, 8 ամիս, 13 օր։

Այս կուսակալներէն ոմանց, և մանաւանդ տեղակալներուն հետ դէպքեր անցած են, զորոնք յիշատակեցի իրենց տեղը․ բայց կ՚երևի թէ ոմանց ժամանակն ալ հանդարտութեամբ անցած է։ Ըստի կը յիշուի մասնաւոր կերպով Սեբաստիոյ կուսակալ մը Թուրանճ Օղլու անուանած որ վէզիր Հասան բաշան է ՌՄԼԹ․ 1790–1205 որ հարկապահանջութեամբ սկսաւ նեղել քաղաքացիները․ ասոր համար անոնք միաբան իրեն դէմ ելան, և սկսան պատերազմով վանել զինքը․ քաղաքացի տաճիկներէն և բաշյին զօրքերէն, ընկան քանի մը հոգի։ կուսակալը չկրնալով Սեբաստիա մնալ՝ Օգոստ․ 10ին գնաց Բրգնիկ և հոն նստաւ վաթսուն օր․ իսկ քաղաքացիք վախնալով որ չըլլայ թէ նա յանկարծ վրանին յարձակի, սկսան մարտկոցներ շինել քաղաքին չորս կողմը,

պաշտպանելու համար իրենց դիրքը։ Ս. Նշան անփոփոխ մնաց Աստուծոյ ողորմութեամբը։

Յիշեալ Հասան փաշայի իշխանութեան ժամանակ ՌՄԽ. 1791–1206 աւագ հինգշաբթի օրը Սեբաստիա եկաւ Ջափան Օղլու Սիւլէյման պէկ բազմաթիւ զօրքով. որպէս զի իր հետ գումարէ նաև այս քաղաքին սպայակոյտ զօրքը, Ռուսաց և Աւստրիացւոց դէմ պատերազմի երթալու համար. և զօրքերը Տաճկաց և Հայոց տները նստեցուցին, որով մեծ նեղութիւն և վնաս առաջ եկաւ։

Նոյն տարին 8 Օգոստ. մեծ կրակ եղաւ Սեբաստիա. անագագործներուն և ապալաճառներուն կրպակներն այրեցան. նաև ուրիշ շատ տեղեր։ Երկու տարի վերջն (ուրիշ կուսակալի մը ժամանակ) մեծագոյն հրդեհ մը պատահեցաւ որ ծանր վնասներ յառաջ բերաւ, և այրեցան ծխավաճառներուն և դերձակաց կրպակները։ Այս միջոցին ՌՄԽԳ. 1794–1209 Յակոբ եպիսկոպոսին աշակերտը Կ. Պոլսեցի Դաւիթ վարդապետ Էջմիածին գնաց, առանց հաճութեան արքեպիսկոպոսին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Ղուկաս կաթողիկոսէն. դարձաւ Ս. Նշան և 2 1/2 տարի վերջը մեռաւ և թաղեցաւ եկեղեցւոյ գաւթին մէջ։

Տարի մ'առաջ իշխաններն Աստուածածնի եկեղեցին նորոգելու համար, արքունական հրամանին վրայ դատաւորէն վճիռ առին և ամեն պէտք եղած իրերը սկսան պատրաստել. բայց հրամանագիրը չեկաւ։ Այն ատեն աղաչեցին արքեպիսկոպոսին որ Ս. Նշանը շինէ, նա հրամանագիր հանեց Սայիտ Ահմէտ կուսակալէն. և մայիս 14 յամին ՌՄԽԶ. շինեց սենեակներ միաբանից համար և այլ շէնքեր, 20 քսակ դրամ ծախսելով։ Եւ այս շինութեան վերակացու էին Ս. Նշանի միաբաններն, որոնց անուններն են Սեբաստացի Սահակ վարդապետ, Յովակիմ, Գրիգոր, Գաբրիէլ Զաքարիա, Յարութիւն, Միքայէլ, Պոլսեցի Մինաս, Թէքիրտաղցի Գրիգոր վարդապետներն, և երկու սարկաւագ՝ Յակոբ և Յովհան, զորոնք Գիւտ խաչին աբեղայ ձեռնադրեց 25 Հոկտ. անուանելով Կարապետ և Յովհաննէս։

Նոյն տարին Յունիս չորս մարախ գալով արտերը կ'աւերէ սով կ'ըլլայ և 1 քիլէ ցորեան կ'ըլլայ 35 դահեկանի։

Յաջորդ տարին ՌՄԽԷ. Ս. Աստուածածնի առաջնորդարանը հիմէն կը կանգնուի նոր և շքեղ:

Յամին ՌՄԽԷ. 1798 Սեբաստիա կու գայ Կարնէն Եուսուֆ բաշա, և կ՚երթայ Կ. Պօլիս. մեծ վէզիր կ՚անուանուի և կու տայ Ջաալ-Օղլու Բէճէպ պէկին թուղ: Սա կը սկսի նեղել ժողովուրդը հարկապանջութեամբ, կ՚առնէր նաև տուգանք՝ մէկէն հազար՝ մէկէն հինգ հարիւր դահեկան. եկեղեցեաց վրայ ևս ձեռք ձգեց և առաւ 15 քսակ. գնաց ապա Եգիպտոս Գաղղիացւոց հետ պատերազմելու, և հոն կնքեց իր կեանքը :

Յակոբ արքեպիսկոպոս ԻԵ. տարի առաջնորդութիւնը հեզութեամբ, համբերութեամբ և փութաջանութեամբ վարելէն ետև, յամին ՌՄԽԸ. 1799 իշխաններ ժողվեց և յայտնեց իր հրաժարելու կամքը: Գրեցին Զաքարիա պատրիարքին, որ ընդունեցաւ և կարգեց առաջնորդ Ս. Նշանի և Սեբաստիոյ՝ Գաղատացի Գրիգոր արքեպիսկոպոսն:

Նոյն ՌՄԽԸ. տարին ժանտախտ եղաւ. իշխանք և ժողովուրդը միաբան եկան եկեղեցի տարին Յակոբ արքեպիսկոպոսն, որ օրհնեց ժողովուրդը ողորմեցի ըսելով, դարձաւ վանք և մահտարաժամը վերցաւ շնորհօք Տեառն:

Հրաժարելէն երկու տարի վերջը ՌՄԾ. 1801 վախճանեցաւ Յակոբ արքեպիսկոպոս Սեբաստիոյ Արմտանցի ի կոչ երկնային (ինչպէս կ՚ըսէ պատմիչը) հայրենեացն հրաւիրելով փոխեցաւ առ Քրիստոս յոյն ընաւից, 19 Մարտի երեքշաբթի. և թաղեցաւ Ս. Նշան մեծ եկեղեցւոյն Առաքել, Եղիազար, և Կարապետ եպիսկոպոսաց մօտ: Եւ իր աշակերտը Յովհաննէս վարդապետ գրեց դամբանագիր տաղաւոր:

Յայսմիկ շիրմի ներամփոփի – Յակոբ արհին մեր գերարփի
Ազգանազեան մերոյն ազգի – Անխոնջ սատարն անրիծ հոգի
Կրողն ի մտի գրան մատենի – Կորովարան ի յատենի
Որ էր տեղեաւ յԱրմտանցի – Ուխտիս սրբոյ տէր մտացի
Բարւոք մահուամբ սա վախճանի – Բառի ի մէ թուականի:

Որ է ՌՄԾ. 19 Մարտի:

Ե. — ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐ

Այս ժամանակ մեծ պատերազմ բացուեցաւ Օսմանցւոց և Գաղղիացւոց մէջ, որոնք Եգիպտոսը գրաւեր էին։ Գրիգոր արքեպիսկոպոս ուխտաւորաց հետ Երուսաղէմ էր. և 12 փետր. ՌՄԽԸ. 1799 *հասաւ Սեբաստիա Ս. Նշան. և յաջորդ տարին սպիտակացուց Ս. Աստուածածնի եկեղեցին, և զարդարեց Ս. Նշանը։*

Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսին մահուանէ ետև, կ՚ընտրուի Դանիէլ արքեպիսկոպոս Կ. Պոլիս, և կու գայ Սեբաստիա և երեք օր կենալով Ս. Նշան՝ կը մեկնի Էջմիածին։

Յամին 1800 ՌՄԽԹ. 1215 *կուսակալ եղաւ Սեբաստիոյ, Ալաէտտին բաշա* 27 *օր. որդի էր Սայիտ Ահմէտ բաշայի, և հօրը պէս ինքն ալ փեսայ էր կայսեր, հիմէն նորոգեց Բաշա ճամին, և մեծ ժամացոյց մը բերելով զետեղեց Նուր բերդի վրայ։*

Վէզիր Բէօսէ Մուսթաֆա բաշա 1215–1798 *Սեբաստիոյ մեծատուններէն, վարեց երկու տարի,* 7 *ամիս,* 11 *օր. ասիկա նորոգեց Մէյտան–ճամին, Ալիսի ծուռ կամուրջն և Բաբելոնի և Կարնոյ ճամբուն վրայ Դըղզըղ ըսուածն։ Այս բաշան երկու անգամ կուսակալ եղած է։*

Ալաէտտին բաշա երկրորդ անգամ 1217 ՌՄԾԱ. 1082 *կուսակալ եկաւ Սեբաստիա* 8 *ամիս,* 17 *օր. Ջալալզատէ Ֆէյզուլլահ պէկը կարգեց տեղապահ մինչև որ հասնի, և երբ քաղաքը եկաւ, սպաննել տուաւ Պալուան որ նեռ կը կոչուէր, և տէլի–Համզան՝ որոնք այնչափ կը նեղէին հայ ազգը հարստահարութեամբ։*

Մի և նոյն տարին փետր. 2 *Սեբաստիոյ իշխանութիւնը կ՚ընդունի Ֆընտըգ Օղլու Հիւսէյին բաշա. այլ որովհետև իր դժնեայ բարուց համբաւն իր գալէն առաջ հասեր էր, քաղաքին բոլոր բնակիչքը միաբանելով դիմադրեցին իրեն. և բողոք մատուցին սուլթան Սէլիմ Գ.*

բարբարոյ ինքնակալին որ հրաման ըրաւ գլխատել այն ժանտ մարդը, հետեւաբար շատ զօրք ժողվելով պատեցին պաշարեցին զինքը Նորխան գիւղի մէջ. և ձեռք ձգելով, գլուխը կտրեցին Ապրիլ 12ին։ Եւ այսպէս քաղաքացիք և գիւղացիներն ազատեցան անոր հարստահարութիւններէն, որոնք արդիւնք էին պատերազմական շփոթութեանց և ներքին յուզմունքներու։

Թէպէտ մեր ցուցակին մէջ չկայ, բայց կը յիշուի Սեր. Պատմ. մէջ յամին ՌՄԾԲ. 1803–1218, թէ կու գայ Սեբաստիա կուսակալ միականի Եուսուֆ բաշա, որ առաջ մեծ վէզիր էր և ունէր մակդիր՝ Գօճա։ Իրեն հետ կը հանէր նաև իր սեղանաւորը Փիլիպպոս Ամիրա։

Ապտէլ Մէրագ հաճի Մուհամմէտ բաշա 1218–9, 1804 ՌՄԾԳ. եղաւ կուսակալ Սեբաստիոյ 4 ամիս, 21 օր. Յունուար ամսուն հասաւ և սկսաւ կեղեքել քաղաքին և գաւառին բնակիչները։ Եկեղեցիներէն առաւ տասնումեց քսակ և քահանաներէն տասնհինգ քսակ։ Բողոքները շատցան և գանգատներն աճեցին դէպ ի արքունի դուռը. և աքսորուեցաւ Եւդոկիա, թուղն առնելով, երեք ամիս Սեբաստիա կենալէն ետև, թէպէտ իր պաշտօնը տեւած էր 4 ամիս, 21 օր։

Այս կուսակալաց պատճառաւ ծագած խռովութենէն կրեցին նեղութիւն քաղաքացիք և գիւղականք. նաև Ս. Նշան, ուր քաղաքապետը դրած էր իբր 50 հեծեալ. և Գրիգոր արքեպիսկոպոս կը հոգար իրենց և ձիերու պիտոյքն. երեք ամիսն հազիւ գերծած էր արքեպիսկոպոսն և ահա գրութիւններ կը հանէին. ի մասնաւորի Փիլիպպոս և Գասպար Ամիրաներէն, որոնք միականի Եուսուֆ մեծ եպարքոսին հասալաճաներն էին և ազգին երևելիներն, որպէս զի երթայ Երեք Խորան մենաստանն և կաթողիկոս օծէ Դանիէլ եպիսկոպոսը։ Գրիգոր Ապր. 27 ՌՄԾԱ. 1802 գնաց յիշեալ տեղն ուր ժողոված էին եպիսկոպոսներ և վարդապետներ և այլ կղերականք. և օծին կաթողիկոս Դանիէլ արքեպիսկոպոսը։

Դանիէլ կաթողիկոս իր անդրանիկ կոնդակն և ուրիշ նամակները յանձնեց Գրիգոր արքեպիսկոպոսի, որ տանի ի Կ. Պօլիս և յանձնէ Գրիգոր պատրիարքին և այլոց. պատրիարքն արքունի հրովարտակ տուաւ

իրեն նաև Գաղատիոյ նահանգին առաջնորդութիւնը։ Նոյն ժամանակ մեծ շփոթութիւն կար Դանիէլ և Դաւիթ կաթողիկոսներուն կուսակցաց մէջ. Պատրիարքն աքսորուեցաւ Էջմիածին իր ոսոխին Դաւթի քով, և Յովհաննէս արքեպիսկոպոս որ տարի մ'առաջ աքսորուած էր Եւդոկիա, անուանեցաւ պատրիարք և տեղապահ եղաւ Գաղատիոյ Անդրէաս եպիսկոպոսն, որ կ'ատէր Սեբաստիոյ դէսն, ուստի արքունի հրաման հանեց զինքն աքսորելու. բայց նա գնաց նստաւ Սկիւտար և իր ջանքով և բարեկամաց ձեռնտուութեամբ դարձաւ ի Ս. Նշան։

Յամին 1803 ՌՄԾԲ. արքեպիսկոպոսին Կ. Պօլիս եղած ժամանակ հասաւ Սեբաստիա միականի Եուսուֆ բաշա և իր սեղանաւորը Փիլիպպոս Ամիրայ. քաղաքին իշխանները խնդրեցին որ արքունական հրաման հանէ Ս. Աստուածածնի եկեղեցին նորոգելու համար. նա խոստացաւ։ Եւ միաբանեցան քահանայք, իշխանք և ժողովուրդն և բազմակնիք աղերսագրով Կ. Պօլիս ճամբեցին Տէմիրճեան պարոն Գրիգոր և Տէրպապեան Մ. Կարոյն. նաև շատ մը առանձնականաց նամակներ։ Վաստակեցան 8–10 ամիս, ծախեցին երեսունհինգ քսակ, և ոչ ինչ կրցան, և ոչ Փիլիպպոս Ամիրայէն և ոչ ուրիշներէն օգուտ մ'եղաւ։ Դատարկաձեռն դարձան Սեբաստիա, և առաջնորդին հետ մէկտեղ տաճիկ մեծամեծաց դրամ տալով, անոնց միջնորդութեամբ հանեցուցին Տիվրիկցի բդեշխն, և Յունիս 25ին (ՌՄԾԲ.) սկսան շինել երկու սրբատուն, երկու աւանդատուն և եօթը խորան ամբակուռ և հաստահիմն, հինգ դուռ և տասնուերկու սիւն, քսանըչորս լուսամուտ, և շուրջը լայն սրահներով. նաև առաջնորդարանը լաւ սենեակներով։ Եւ երբ աւարտեցաւ շինութիւնը Գրիգոր արքեպիսկոպոս վերացման խաչին (Սեպտ. 13ին) մեծահանդէս ձայնաւոր պատարագ մատուց, օրհնեց եկեղեցին և օծեց անձամբ աւագ խորանն, յանուն ամենօրհնեալ Ս. Աստուածածնի ինչպէս որ էր առաջ։

Աջակողմեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ խորանը՝ Յովհաննէս վարդապետ, և ձախակողմեան Ս. Կարապետի խորանը՝ Կարապետ վարդապետները օծեցին։ Մնացեալներն ես տնօրինելով և աւարտելով, արքեպիսկոպոսն օրհնեց իշխանները և ժողովուրդն արձակեց։ Յովհաննէս վարդապետ

գրեց այս պատմութիւնը ոտանաւոր չափմամբ և այլաբանական խորհրդաբանութեամբ։

Բայց շէնքին պատճառաւ ծանր ծախքեր եղան՝ ինչպէս տեսանք, և շինութեան ժամանակ հրդեհեցան Սեբաստիոյ շուկան, որով շատեր յետին տնանկութեան հասան, և կարելի չեղաւ բաւական արդիւնք գումարել. նոյն ժամանակ երեւելի էին ազգին մէջ Տէրպապեան Մ. Կարապետ, Առաքել Անտուրցի, Մ. Գրիգոր Թումայեան, Մ. Միքայէլ Թէրզիպաշի, Մ. Յարութիւն Ջատրճանց, Մ. Գաբրիէլ Գոր-Օղլու, Մ. Յակոբ Սամպուլցող, Մ. Յարութիւն Փարակէօզեան, պարոն Խաչար Ջօլախ, Մ. Յակոբ Քէլէքճեան, Մ. Աղեքսան Տաքեան, Մ. Յարութիւն և Մովսէս և ուրիշներ. շնորհեցին ոմանք երեք հազար, ոմանք հազար, ոմանք հինգ հարիւր, ոմանք աւելի կամ պակաս, բայց տակաւին պարտք մնաց Տաճիկ փոխատուաց, որոց փոխարէն մուրհակ տուաւ Գրիգոր արքեպիսկոպոս իր կնքով։

Գրիգոր արքեպիսկոպոս տեսնելով որ վանքերն և եկեղեցւոյն պարտքերը կուտելով՝ տոկոսներն ալ կը բարդին, ժողովեց Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ իշխաններն, և գլխաւոր հիմնադիրները՝ դարման մ'ընելու. որոշեցին նորէն դրամաժողով ընել և Յովհաննէս վարդապետ կարգեցաւ վերակացու. բայց յանկարծ արքունական հրամանագիր և պատրիարքական կոնդակ հասաւ, որ կ'անուանէր Գրիգոր արքեպիսկոպոսն առաջնորդ Գաղատիոյ։ Ուստի թէպէտ Յովհաննէս վարդապետ Աստուածածնի եկեղեցին ժողոված էր 14 քսակ, բայց Ս. Սարգիս եկեղեցին չկրցաւ երթալ։ Գրիգոր արքեպիսկոպոս (ՌՄԾԶ. 1807), պատրաստուեցաւ և ամենուն առջև տեսնուեցաւ պարտք 80 քսակ. գրուած և կնքուած յանձնեց իրենց և գնաց Անկիւրիա և երեք տարի ու չորս ամիս եաքը պտոյտի ելաւ և մեռաւ Սպարտա Լակեդեմոնի, և թաղեցաւ Մեգիթրա քաղաքը. (Դեկտ. 7 ՌՄԾԹ. 1810)։

Զ. — ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐ։

ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԱԴԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Սեբաստիոյ գլխաւորք բազմաթիւ ստորագրութեամբ կը գրեն Յովհաննէս պատրիարքին, որ ինքը հովուէ Սեբաստիոյ վիճակին և իրեն տեղակալ կարգէ Կարապետ և Յովհաննէս վարդապետները. ընդունեցաւ և կոնդակ տուաւ (14 *Սեպտ. ՌՄԾԶ.* 1807)։ *Այս երկու փութաջան վարդապետք. Ս. Նշանի գին ունեցող կահ կարասիքը ժողվեցին և պահեցին որ աւարի չերթան, և իրենք իջան Ս. Աստուածածին և շատ մը յորդորներով ժողվեցաւ* 22 *քսակ դրամոց, որ պարտատիրաց տրուելով՝ ուղղակի մուրհակներն ետ առնուեցան։*

Այն ժամանակ հասաւ տեղակալութեան կոնդակը Յունուար 17, *ՌՄԾէ.* 1808. *բայց ծածկեցին, որ նոր ծախուց դուռ չբացուի տաճիկ մեծամեծներէն։*

Մեր ձեռք եղած ցուցակին համեմատ Չափան Օղլու Մուհամմէտ Ճէլալէտտին բաշա կուսակալ անուանուած է Սեբաստիոյ յամին 1220, 1805. *և է. տարի և* 17 *օր վարեր է զայն։ Իսկ Սեբ. Պատ. կը յետաձգէ, և կը դնէ ՌՄԾէ.* 1808, 1222–3։ *Սա արքունի զօրաց հետ գնացած էր Ռուսաց դէմ պատերազմելու, և դարձեալ կուսակալի իշխանութեամբ եկաւ Սեբաստիա։ Քաղաքացիք հակառակ ելան իրեն դէմ. քաղաքին շուրջը մարտկոցներ կառուցին վրան թնդանօթներ դրին, բոլոր ժողովուրդը զէնք առաւ, խափանեցին իրեն քաղաք մտնելուն անցքը, կազմեցան պատերազմի։ Կուսակալը չկրնալով քաղցրութեամբ և հնարքով նուաճել զանոնք՝ կը գումարէ քսան հազարէ աւելի զօրք, որ շրջակայ գիւղերը նստելով պաշարեցին քաղաքը հեռուէն երեք ամիս. և երբ գարուն եկաւ մօտեցան քաղաքին իր զօրքերն և որոնք որ կը համարձակէին դուրս ելլել խոշտանգելով կը պահանջէին ծանր տուգանքներ և խստութեամբ*

կ՚առնուին։ Մարտի 30ին Զափան Օղլուի զօրավարներէն երկուքը դիմեցին բազմութեամբ Ս. Նշանի վանքին վրայ. քաղաքացւոց կողմէ դրուած 50 պահապան զօրքերը փախան անապարանքով։ Իսկ վանականները բանակցելով զօրավարաց հետ յաջողեցան չափաւոր պայմաններու զիջուցանել զանոնք, որոնք թողուցին վանքին մէջ 200 պահապան զօրք, և իրենք գնացին Դավրա և Բրգնիկ գիւղերը։

Քաղաքացիք կրած ծանր հարուածներէն զօրութենէ լինալով, հաշտութիւն խօսեցան և բաշան ներս ընդունեցան Ապրիլ 5ին և զերծան մեծագոյն չարիքներէ, որոնցմէ կը կասկածէին։

Կարապետ և Յովհաննէս վարդապետները տեսնելով որ պարատէրներէն ծանր նեղութիւն կը կրեն, գրեցին Դանիէլ կաթողիկոսին Էջմիածին և կոնդակ բերին ժողովարարութեան. Յովհաննէս վարդապետ գնաց Կեսարիա և սիրով ընդունուեցաւ տեղւոյն Ստեփանոս արքեպիսկոպոսէն։ Եւ երբ ինքը կը շրջագայէր և դրամ կը ժողվէր, Զափան-Օղլին՝ Սեբաստիոյ մէջ Կարապետ վարդապետը բռներ շղթայակապ բանտեր՝ և տասը քսակ առնելով դարձեալ արձակեր էր։

Այս պարագաներու մէջ (Յուն. 23 ՌՄԾԸ. 1809) լուր հասաւ թէ Մշու Ս. Կարապետի համար դրամ ժողովող Թադէոս եպիսկոպոսը, Սեբաստիոյ առաջնորդ անուանուեր է և եկեր հասեր Եւդոկիա. ժողովուրդը բազմակնիք թուղթ յղեցին իրեն և ի մասնաւորի կ՚ըսէին թէ Ս. Նշան պարտքեր ունի, և պէտք պիտի ունենանք ծախքեր ընելու Տաճկաց դռները մինչև քսան քսակ, եթէ ունիս հրամայէ եկուր, իսկ եթէ ոչ կամքդ ըլլայ։ Թադէոս եպիսկոպոս հասկցաւ մտքերնին. Եւդոկիա կեցաւ և ծանուց Յովհաննէս վարդապետին ամեն բան։

Նոյն օրերը (ՌՄԾԸ. 1809, 1224), երկրորդ անգամ Սեբաստիա եկաւ միականի Եուսուֆ բաշան, իր հետն էր նաև հաստավաճառ Գասպար Ամիրա Մաշկերացի. և անկից անցաւ գնաց Կ. Պոլիս փոխարքայ կամ մեծ վէզիր ըլլալու։ Կարապետ և Յովհաննէս վարդապետներն ծանօթ էին իրեն առաջուց. ուստի ըսաւ որ ծանարտակ (Մահսէր) գրեն, և երկուքէն որն որ կը հաճին իրենց առաջնորդ կու տայ։ Իշխանք առաջարկեցին

Կարապետ վարդապետին, նա հրաժարեցաւ, այն ատեն խնդրեցին որ պատրաստէ աղերսագիր, զոր կատարեց յանուն Յովհաննէս վարդապետի, ստորագրեցին և կնքեցին քահանայք և իշխանք, և առաքեցին Կ· Պոլիս առ Մ· Գասպար ամիրան ձեռամբ Ղանձեան Կարապետին։

Երուսաղէմի նուիրակը Սարգիս վարդապետ՝ որ առելութեամբ էր Կարապետ և Յովհաննէս վարդապետներու դէմ, համաձայն ոմանց հետ ղրկեց իր Դաւիթ Սեբաստացի արեղան, անոր քաղաքակից փանիկ դարբինին հետ Եւդոկիա և հրաւիրեց Թադէոս եպիսկոպոսն, որ Սեբաստիա իր վիճակը գայ. եպիսկոպոսը հրաւիրակներն տեսնելով և գրեանքն ընթեռնլով եկաւ Ս· Նշան Ապրիլ 16ին։

Կարապետ վարդապետն իմանալով ըլլալիքն ելաւ Ս· Նշանէն և գնաց Մանուրցի Մ· Գրիգորի տունն որ ազգին երևելիներէն էր, և Տաճիկներէն պատուած և հոն պահուըտեցաւ 40 օր։ Թադէոս եպիսկոպոս իշխանաց հակառակ թուղթ կնքեց և մատուց կուսակալին, և նա բանտեց զանոնք ըսելով որ արքունական հրամանին հակառակ են, և 17 քսակ առնելով արձակեց. և Թադէոս արքեպիսկոպոսին զգեցուց լօդիկ պատուոյ և հրամանագիր տուաւ և առաքեց Ս· Նշան։ Եւ կը պահանջէր լօդիկին տուրքը· նա պատասխանեց բան մը չունիմ, և թէ Սարգիս վարդապետ զիս հրաւիրեց· վարդապետը բանտեցին և 7 քսակ առին և արձակեցին։

Գասպար ամիրան լսելով Թադէոս եպիսկոպոսին գալը՝ լուռ կեցեր էր· բայց երբ կրկին գրեցին քահանայք և իշխանք և ժողովուրդը, գործի ձեռք զարնելով արքունական հրովարտակ առաւ և պատրիարքէն՝ Յովհաննէս վարդապետին առաջնորդութեան կոնդակ (Յունիս 12)· և Սեբաստացի պատգամաւորին ձեռամբ ղրկեց իշխաններուն յանուն Յովհաննէս վարդապետի՝ որ տակաւին Կեսարիա էր։ Կարապետ վարդապետ Թագատեան տեղէն ելաւ գնաց Կեսարիա. և երկու ամիս Յովհաննէս վարդապետի հետ նստան Ս· Կարապետի վանքը, մինչև որ հասաւ առաջնորդութեան կոնդակը։ Կարապետ դարձաւ Սեբաստիա, և յաջորդ գիշերը Ս· Նշանի դուռը պատուիրեց ոմանց՝ որ Թադէոս վարդապետն

ելլէ վանքէն և երթայ ուր որ կ'ուզէ, և ինքը գնաց Ս. Հրեշտակապետ, մինչև գայ Յովհաննէս վարդապետ։ Բայց զինքը հանգիստ չթողուցին. ստիպուեցաւ քաղաք և գիւղերն աստանդական ըլլալ, մինչև ինկաւ մահուան վտանգի մէջ, և հասնելով Կեսարիա՝ հանդարտեցաւ իր անձկութենէն և տառապանքէն։

Թադէոս արքեպիսկոպոս իբր երեք ամիս Ս. Նշան մնալէն ետև, լսելով որ Յովհաննէս վարդապետ արքայական հրամանագրով և պատրիարքական կոնդակով առաջնորդ կարգուեր է և կու գայ Սեբաստիա, ինքը անձապարեց Օգոստոսի կաղանդներուն (ՌՄԾԸ. 1809) ելաւ Ս. Նշանէն և գնաց իր հայրենիքն՝ Եւդոկիա։

Եուսուֆ միականի բաշային երթալէն ետև մնացած էր Ջափան Օղլու կուսակալ Սեբաստիոյ։ Յամին ՌՄԿԱ. (1812, 1227). Գաւէմի վրայ խնդիր եղաւ, այսինքն ննջեցելոց ժառանգութեան բաժանման վրայ։ Հայք ինը տարիէ ի վեր արքունի հրովարտակաւ առանձնաշնորհութիւն ընդունած էին այս նիւթին մէջ։ Բայց երբ պատեհ առիթ առջենին ելաւ յամին 1227 նորոգել տուին հրովարտակն, և փոքր ծախքով մը դիւանին մէջ (Գայտ) արձանագրել տուին դատաւորին։ Եւ երբ նոր դատաւոր մը եկաւ կ'ուզէր Հայոցմէ բան մը կորզել, ետևէ եղաւ նորէն յուզել արտօնութեան խնդիրն. և որովհետև իր դիտման համեմատ չկրցաւ բան մ'առնուլ, անոնց դէմ գանգատ ըրաւ Ջափան Օղլու Մուհամմէտ բաշայի, որ բանեց հայոց իշխաններն և շղթայակապ բանտեց, և տասը քսակ դրամ առնելով արձակեց։ Այլ մխիթարուեցան Հայք՝ որովհետև յաջողեցան անկէ արքունի հրովարտակը գործադրելու հրամանագիր առնուլ։ Այն ժամանակէն ի վեր, կ'ըսէ Պատմ. Սեբ., հարցում կ'ըլլար դատարանը ննջեցելոց տէրերէն. ի բաց առեալ այն պարագան երբ ժառանգաց մէջ վէճ ծագի։

Եւ անկէ ետև Ջափան Օղլուն երկայն ժամանակ չմնաց իր իշխանութեան մէջ։

Է. — ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՔ

Երբոր Յովհաննէս վարդապետ ընդունեցաւ կայսեր հրովարտակն և պատրիարքին կոնդակն ի Կեսարիա, մատուց ձայնաւոր պատարագ (ՌՄԾԸ. 1809) *Վերափոխման տօնին և եկաւ Սեբաստիա* 23 *Օգոստ. և մեծ հանդէսով մտաւ Ս. Նշան։ Եւ բազմութեան ժողովրդեան յորդորակ մը խօսեցաւ և հրաւիրեց զիրենք միաբան գործելու, սիրով և եղբայրութեամբ վարուելու իրարու հետ։ Քիչ մ'ետքը կը հասնի նաև Կարապետ վարդապետ, և մեծ ուրախութիւն կ'ըլլայ Ս. Նշան վանաց մէջ։*

Ապա Յովհաննէս վարդապետ կ'երթայ կուսակալ Զափան Օղլու Մահմէտ փաշայի քով և լօդիկը կ'ընդունի, նոյնպէս հրամանագիր արքունի հրովարտակին նկատմամբ. ես և հրամանագիր նորոգութեան Ս. Աստուածածնի գմբէթին, որ երեք ամիս առաջ կործաներ էր. և երեսուն աւուր մէջ կանգնեց աւելի ամուր կերպով։

Նոյն ժամանակ Ս. Նշանի միաբաններն էին Կարապետ վարդապետ, որ տեղապահ էր և լուսարար, Գրիգոր վարդապետ, Սահակ, Յակոբ վարդապետներն և սարկաւագ մը՝ Յակոբ։ Անապատի՝ Բէկիզ Աւետիք վարդապետ որ լաւ կը վարէր պաշտօնը։

Յովհաննէս և Կարապետ վարդապետք՝ երկու հարազատք, հաշուեցին վանքին պարտքն, և էր ընդ ամենայն 41 *հազար դահեկան,* 82 *քսակ. Կարապետ վարդապետը գնաց Անկիւրիա Գրիգոր արքեպիսկոպոսին և ժողվելով եօթը քսակ՝ ետ դարձաւ։*

Կիլիկիոյ կաթողիկոսը Կիրակոս՝ կոնդակ գրեց Եօզղաթու վիճակին. անկէ ալ հասաւ չորս քսակ։ Ինքն Յովհաննէս վարդապետ այցելութեան ելաւ իր վիճակը. և տարեկան արդիւնքէն զատ բերաւ երեք քսակ, և պարտուց տրուեցան ամենը։

Յամի ՌՄԿ. 1811 խորհուրդ ըրին իշխանները որ Յովհաննէս վարդապետ Էջմիածին երթայ եպիսկոպոս ձեռնադրուելու, և այս բանին կը յորդորէին նաև Կեսարիոյ Ստեփանոս արքեպիսկոպոսը. և Էջմիածնի նուիրակ Յովհաննէս արքեպիսկոպոսը որ Եւդոկիա էր. և Մաշկերտցի Գասպար և Փիլիպպոս ամիրաներն և ուրիշներ։ Բայց Յովհաննէս և Կարապետ վարդապետ պարագները նկատողութեան առնելով նոյն տարին յարմար չդատեցան, և իշխաններն ևս համոզեցին նոյնին, ուստի յաջորդ տարին ՌՄԿԱ. Յովհաննէս պատրիարքին վկայական թղթովն և բազմակնիք ծանուցագրով (ադերսագիր) քաղաքացւոց գնաց Սեպտ. 21ին, և հասաւ Էջմիածին Նոյեմ. 6ին. և նոյն ամսուն 14ին, Եփրեմ կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրեցաւ Սեբաստիոյ աթոռին վրայ։ Եւ Դեկտ. 17 ՌՄԿԱ. 1812 հասաւ Սեբաստիա Ս. Նշան։ Գալու ատեն Կարին հանդիպելով, հայ պղնձագործի մը շինել տուած է զանգակ մը 48 նուկի՝ 150 դահեկանի։

Պապա Իբրահիմ բաշա ի ՌՄԿԲ. 1813, 1228. կ'ըլլայ կուսակալ Սեբաստիոյ երկու տարի, 1 ամիս, 5 օր. և իրեն տեղապահ կը կարգէ Ջառալ զատէ Լութֆուլլահ պէկը։ Զօրաւոր մարդ էր Իպրահիմ բաշա, և ինքնակալէն հրաման առած էր նուաճել Քրդաց և ուրիշ ապստամբաց ստահակութիւնը։ Կը բազմացնէ իր զօրաց գունդերն և կու գայ Սեբաստիա. կը տարածէ զանոնք քաղաքին և գիւղօրէից մէջ. և կը բնակեցնէ առանձնականաց տներն. ուր մնացին Յունիս 2–9 Օգոստ.։ Այս զօրականները կ'անուանէին Հայթա, որ շատ վիշտ և վնաս հասցուցին քաղաքին և գիւղօրէից, և բոլոր գաւառին բնակչաց։ Այս պատճառաւ ծանր սով մ'ինկաւ գաւառին մէջ. քոռ մը ցորեն կը վաճառէր 75, ևս ութսունըհինգ դահեկանի, և քոռ մը գարի բարձրացաւ մինչև 50 դահեկանի։

Այս դժբաղդ պարագաները չանցած սկսաւ մեր ազգայիններէն ծանր ծանր տուրքեր պահանջել. ևս Թէֆտիշի անուամբ առաւ եկեղեցիներէն 20,000 դահեկան, և Ս. Նշանէն 20 քսակ։

Եւ երբ ժողովեց իր զօրքն և ելաւ գնաց Ագչէ տաղ, Կէրկէր և Հռոմկլա. երկրորդ տարին դարձաւ Սեբաստիա, և սկսաւ աւելի ևս

խստութեամբ հարստահարել գաւառին ժողովուրդը. և 70 օրէն ետև Կարնոյ կուսակալութեան փոխադրուեցաւ ուր յաջորդ տարին Թագաւորական Գարուճի Պաշի մը կ'երթայ Թուղերը կը վերցնէ, և զինքը կ'աքսորէ Պրուսա. և այսպէս կը հանդարտի երկիրը։

Ասկէ ետև Սեբաստիոյ կուսակալութիւնն ընդունեցաւ յամին 1230 ՌՄԿԴ. 1815 նախկին մեծ վէզիր Մուհամմէտ Ղալիպ փաշա 11 ամիս, 5 օր. լաւ և մարդամօտի մարդ մ'էր. և իր սեղանաւորը Յակոբ աղա Պետրոսեան որ երևելի անձ մի էր։

Յովհաննէս արքեպիսկոպոս այս ժամանակ համոզելով իշխանները երկու դպրոց բացաւ. մէկը Ս. Աստուածածնի, և միւսը Ս. Սարգիս եկեղեցիներուն քով։ Իսկ Ս. Նշանի մէջ շատ նորոգութիւններ ըրաւ. ի մասնաւորի շինեց խաչկալն յամին ՌՄԿԵ. 1816։

Եւ նոյն տարին (1231) կուսակալ անուանուեցաւ Սեբաստիոյ Քեմախցի Թուրք Հագզը Օսման փաշա։ Մայիսի եօթներորդ օրն հասաւ Սեբաստիա. խելացի մարդ էր. և Գրիգոր աղա Կամախեցի սեղանաւորութիւն կ'ընէր իրեն։ Օսման փաշա կանգնեց քաղաքին ապարանքը՝ պէյլիքպէրայ, կուսակալին և իր զօրաց բնակութեան համար, քովը մզկիթ մը մինարէյով և պալատին դիմացն աղբիւր մը։ Շէնքը տևեց վեց ամիս և ինքը անձամբ վերակացու եղաւ, և աւարտեց 180 քսակ դրամ ծախելով. ընդունեցաւ արքունի հրովարտակ որ գաւառին վրայ տուրք դնէ նոյն գումարն, որմէ Սեբաստիա քաղաքին եօթը քսակ բաժին ինկաւ. տարի մը 7 ամիս և 12 օր մնաց իշխանութեան մէջ (Սեբ. Պատմ. կը դնէ տարի մը և իբր երեք ամիս). սոր ժամանակ մեր ազգը խոր խաղաղութեան և անդորրութեան մէջ էր։ Բայց յամին ՌՄԿԶ. 1817–1232 հրամանաւ Թագաւորին Գարուճի պաշը կու գայ, Թուղերը կ'առնու իրմէ, ինչքերը կը յափշտակեն, զինքը կ'աքսորեն Պրուսա և կը սպաննեն։

Ասոր տեղն անուանեցաւ կուսակալ Սեբաստիոյ՝ յամին 1232 (ՌՄԿԷ. 1818). Զառխաճը (Նախամարտիկ) Ալի փաշա միականի որ Կարսի մէջ էր մէկ տարի, 7 ամիս, 24 օր։ Իրեն տեղակալ կեցաւ 25

որ Քէնան զատէ Ահմէտ աղա. Միւթէվէլլի Օղլու Բաթլագ Մահմուտ աղա։ Նոյեմբերին եկաւ անձամբ և մտաւ քաղաքը. փոխանորդ կարգեց իրեն Սայիտ աղա բնիկ Սեբաստացի, որ խօսելու և գործելու մէջ յաջողակ էր, իսկ Քէնան Օղլուն անուանեց Բէյլիսի-Այան։

Այս կուսակալը շատ ընչաքաղց ըլլալով ծանրացուց հարկը (սալիան) և ամեն ամիս կը պահանջէր 580 քսակ։ Վճիռ մը հանեց որ քոռ մը գարի վաճառուի իրեն 4 դահեկանի, որ 8, 20 կ'արժէր. իւղը՝ 9, մինչ կ'արժէր 15, 18. մսին արժողութիւնն էր 50–60 փող, կ'ուզէր որ իրեն տրուի 14 փողի։ Հայու մը ձեռքէն առաւ տուգանք 3000 դահեկան, և ուրիշէ մը 1500 դահեկան։ Բաթլագ Մահմուտը բանեց որ առաջ տեղապահ էր, և սովորական ընծաներէն զատ առաւ 12,000 դահեկան։ Իսկ Ահմէտ բաշայէն իբր ընծայ առաւ 15,000 դահեկան։ Եւ օր մը սուրն հանեց որ սպաննէ զինքը, զոր հազիւ ազատեց կուսակալին փոխանորդը Սաիտ աղա. ուստի և այս երկուքը Բաթլագ-Մահմուտ և Ահմէտ աղա, մեծամեծներէն շատերը իրենց կուսակից ընելով, սկսան պատրաստուիլ ապստամբելու երբ պատեհ ժամ առջենին ելլէ, որ և շուտ հասաւ։

Քանի մ'ամիսներէ ետև յամին 1233 (ՌՄԿԷ. 1818) Կ. Պոլսէն ազդ եղաւ կուսակալին որ շատ մը գանգատներ կը տրուին արքունիք իրեն դէմ. պէտք է որ ինքը բարի վկայութեան թուղթ մը գրել տայ Դիւան, իր գնացից վրայօք։ Եւ երբ կուսակալը կը մտածէր թէ ինչ կերպով նոյնը կրնայ յաջողցնել, բազմութիւնը շփոթութիւն մը հանելով կրպակները գոցեցին և դիմեցին դատաւորին. կը խնդրէին որ վճիռ տայ կուսակալին ապիրատութեան դէմ։ Երբոր անիկա յանձն չառաւ, խռշտանգեցին զինքը և տարին արգիլեցին քաղաքին բնակիչներէն Հաճի-Շէյխին տունը։ Կուսակալին հասնելով այս լուրը՝ հոն դիմեց հարիւր մարդով. և դատաւորն արգելանքէն հանելով հետը տարաւ. և գնաց ամրացաւ իր ապարանքն և բերդը, զի կից էին իրարու, և այս եղաւ Յունիս 12ին։

Երկրորդ օրը հասաւ Հոն Քէօր Իպրահիմ Տէլիպաշի 100 գինուորով, մտաւ բերդն և սկսան կռուիլ քաղաքացւոց հետ։ Յունիս 27ին կը հասնի անոնց մօտ Մուհամմէտ Տէլիպաշը 200 զօրքով. բայց քաղաքացիք անոր բերդ մտնելն արգիլեցին որուն համար նա դէպ ի Բրգնիք ետ գնաց։ Նորէն իր զօրքը շատցնելով 300ով առաջ քալեց մինչև Գաւուրա. որուն բնակիչները թողեր փախեր էին։ Բայց քաղաքացիք վրանին յարձակելով վանեցին անկէ մինչև Ս. Նշանի մօտերն, ուր զարնուեցան իրարու հետ ամենայն կատաղութեամբ և վերջապէս քաղաքացիք յաղթող ելան, և հալածեցին Տէլիներն իրենց առջևէն։

Յուլիս 8ին ուրիշ Տէլիպաշի մը գունդ կազմելով յարձակեցաւ քաղաքին վրայ, Գլավուզ անուանած թաղին մօտը՝ վարեց անկէ խաշինքներուն, արջառներուն հօտերն և քրիստոնէից ու տաճկաց տղաքներն, զորոնք Բրգնիք տարին. սակայն քաղաքին զօրքերն վրանին հասնելով զարկին խորտակեցին զիրենք չարաչար և աւարն ու գերիներն ազատեցին և յաղթանակաւ քաղաք դարձան։

Այս ժամանակ Կ. Պոլիս զօրացեր էին Սեբաստիոյ կուսակալին կողմնակիցներն, և մեծ վէզիրը Մուհամմէտ Րէուֆ փաշա հաւանեցուց թագաւորն, որ հրովարտակ հանէ, թէ Սեբաստացիք հնազանդին իրենց կուսակալ Կոյր Ալի փաշային և ապստամբաց երկու գլխաւորներն աքսոր զրկուին, և եթէ համարձակին դէմ կենալու՝ սուսերահար ջարդուին ամենքը մեծ և փոքր առ հասարակ։

Այս գործոյն հրամանակատար կարգուեցաւ Քափուճի-Պաշին Էօմէր-Բէշիր. և իրեն օգնական տրուեցան Ջափան զատէ Մուհամմէտ փաշա Գոնիայի, և Ջառալզատէ Լութֆուլլահ փաշա Աֆիօն-Գարահիսարի, Նուրի փաշա Մատէնի, Գափտան խորով Մուհամմէտ փաշա Տրապիզոնի, Հաֆըզ Ալի փաշա Ախըլխայի, Գալանտէր փաշա Մարաշի, Էմին փաշա Կեսարիոյ կուսակալներն իրենց նահանգին զօրքով։ Նաև 14 օրթու (գունդ) Կ. Պոլսէն 56 թնդանօթներով։ Իսկ բոլոր զօրաց ամբողջական թիւն էր 90,000 և սկսան պաշարել քաղաքը և Ս. Նշանի վանքը։

Ամենէ առաջ Բրգնիք հասաւ Ջառալզատէ Լութֆուլլահ բաշա Յուլիս 22ին։ Ետևէ ետև եկան Լօմէր Քէշիֆն և Սայիտ աղան բազմութեամբ զօրաց։ Երկրորդ օրը իրենց տեսութեան եկան 300 անձ Հաճի Շէյխին հետ. Սայիտ աղան իր հին ոխութեան վրէժն առնելու համար հրաման ըրաւ զօրաց որ գանակոծեն զիրենք։ Եթէ Լութֆուլլահ բաշան և Լօմէր–Քէշիֆը չարգելուին զօրքերը, Սայիտ աղայի կամաց նայելով պիտի ջարդէին բոլոր հոն եկող քաղաքացիներն։

Երրորդ օրը նոյն Հաճի Շէյխի հետ քաղաք դրկեցին արքունի հրովարտակը, զոր ընթերցան և հնազանդեցան համաձայն հրամանի և անձնատուր եղան։ Քէնանզատէն և Մութէվէլլի Օղլուն աքսորուեցան։ Նոյն օրէն Միականի Ալի բաշան գործի սկսաւ, և Տաճիկներէն 100 հոգի շղթայակապ բռնելով փակեց զիրենք բերդին մէջ։ Մէկ անգամէն սպաննեց 9 հոգի և ուրիշներէն կը պահանջէր ծանր ծանր փրկանք 450 մինչև իսկ 600 քսակ։ Մեծամեծներէն ոմանք՝ ինչպէս դատաւորը Քափուճի–Պաշին, կուսակալին փոխանորդ Սայիտ աղա, գանձապետը և ուրիշներ կ'ուզէին և ետևէ էին քրիստոնեաներն ևս նեղել հարստահարութեամբ. այլ այս անգամ անոնք դիւրին կերպով ազատեցան։

Քանիմէկ օր վերջ ինկաւ իր կուսակալութենէն Քէօր–Ալի բաշա, և իրեն յաջորդեց Ջառալզատէ Լութֆուլլահ բաշա որ տակաւին Բրգնիկ էր, ելաւ անկէ և եկաւ մտաւ Սեբաստիա իր հայրենիքը Օգոստ. 12ին (յամին 1233 ՌՄԿԷ. 1818) մեծ հանդէսով։ Վարեց իր պաշտօնը մէկ տարի, 6 ամիս, 13 օր։ Այս խռովութեան ժամանակ հայ ազգէն մեռան չորս անձինք հրացանի գնդակներուն հանդիպելով։ Նոյնչափ ևս վիրաւորներ եղան՝ որոնք առողջացան։ Իսկ Տաճիկներէն հարիւր հոգի սպաննուեցան և ութսունևհինգ վիրաւորուեցան, որոնք խեղանդամ մնացին։ Իսկ Միականի Ալի բաշա կուսակալութեամբ գնաց Աֆիոն Գարահիսար։

Սեբաստիոյ նոր կուսակալն ընչաքաղց ըլլալով սկսաւ կեղեքել իր հպատակներն, այլ և այլ պատճառներ կցկցելով. Սեբաստիոյ առաջնորդը արգելանաց ներքև դրաւ, և վրան բարդեց 12,000 դահեկան

տուգանք, որ վճարուեցաւ եպիսկոպոսէն, եկեղեցիներէն և ազգէն։ Քանի մ'ամիս ետքը նորէն տուաւ ազգէն 1800 դահեկան։ Այսանկ մէկ տարի և վեց ամիս տառապեցան խեղճ Սեբաստացիք և գաւառացիք այս Լութֆուլլահ բաշային ձեռքով, և մանաւանդ քրիստոնեայք։

Վերջապէս հրաման եկաւ ինքնակալէն որ զօրքով երթայ Հալէպ քաղաքին վրայ, երբոր հասաւ պաշտօնանկ եղաւ Սեբաստիոյ կուսակալութենէն և մեկնեցաւ գնաց Անթապ։

Հիմակ յիշենք նոր գործ մը. Ս. Նշանի աղբիւրը խանգարուած էր, և շատ դժուարաւ ջուրը կը հասնէր վանք, անօգուտ նորոգութիւններ կ'ըլլային. պէտք էր լաւ մը շինել նորէն ջրանցք մը. գնեցին ագարակ մը, վանքին յիշատակ ըլլին, և ամեն պատրաստութիւն տեսնելէն ետև կառուցին ջրանցքը, զի քաղաքացիք ևս սկսան շինել իրենց ջրանցքը։ Վերջապէս գործը միաբանութեամբ վերջացաւ. վանքն ևս ունեցաւ բաւական ջուր, ինչպէս կարգադրուած էր Գաղատացի Գրիգոր արքեպիսկոպոսին և ապա Յովհաննէս արքեպիսկոպոսին ժամանակ՝ հաստատուն մուրհակներով։

Յամին ՌՄՀ. 1821 *երևելի դէպք մը հանդիպեցաւ ազգին մէջ. զոր յարմար կը դատեմ Սեր. Պատմութենէն գաղափարել ճշդիւ. « Եւ յաւուրս այնոսիկ ծագեցաւ շփոթ մեծ և աղմուկ ի մէջ ազգիս, և հետևելոց վասն բանի միաբանութեան և վասն հրաւէր սիրոյ կոչեցեալ գրոցն, զոր ամբոխ արարեալ ոմանք յազգէս դիմեն ի պատրիարքարանն առ ի հարկանել և սպանանել զՊօղոս, կարծելով գոլ զնա ի կողմն հետևելոց և հետևեալ, որ զօղեալ ի մէջ ձուաց տատատաղաց, հազիւ հազ մազապուրծ ճողոպրեալ զանձն ազատի ի ձեռաց նոցա փախստեամբ»։*

Մինչև հոս պատմչին խօսքն է, բայց հրաւէր սիրոյի մէջ ամեն բան ջանացեր են յարմարել Հայոց հին հայրապետաց խօսքերուն վրայ և անկէ դուրս յաւելուած մը չկայ. այլ պակասներ կրնայ գտնուիլ, ուրեմն ի՞նչ է պատճառը Պօղոս պատրիարքին դէմ եղած այս կատաղի յարձակման, և ինչո՞ւ հեղինակը « հետևեալ » տիտղոսը կու տայ կաթոլիկէ Հայոց, որ նոյն ժամանակ ճիգ կը թափէին կարկատել օրինաւոր կերպով ազգին պառակտումը։

Ը. — ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Յամին 1235 (ՌՄԿԸ. 1819) Սեբաստիոյ կուսակալ կարգուեցաւ Հաճի Մուհամմէտ Պէհրամ բաշա. վարեց 11 ամիս 1 օր, և մարտի կաղանդներուն Ամիդէն հասաւ Սեբաստիա: Սկսաւ նեղել առաջնորդն և ժողովուրդը. կ'ուզէր առնուլ 30,000 դահեկան, և թոյլ տալ իրենց որ շինեն Ս. Նշանին մէջ ուզածնին. բայց չկար հրովարտակ կայսերական, ինչպէս կը կարծէր բաշան. վերջապէս իբր նուէր առին իրեն 8000 դահեկան:

Նոյն տարին Ֆէրթէլ Օղլու Մէմիշ աղան, ուզեց առնուլ Հողդար գիւղի կամ արուարձանին ջրաղացը: Կը կարծէր թէ կրնայ ջուրը առատացնել, դիմեց բաշային և խոստացաւ տալ 15,000 դահեկան. բաշան մեծամեծներով կու գայ Ս. Նշանի քով, շատ մը վէճեր եղան, վանքէն առին տուգանք 885 դահեկան միայն՝ բարեխօսութեամբ Սալիտ աղայի կուսակալի փոխանորդին: Եւ այս առթով առաջնորդը խնդրեց և առաւ դատաւորէն իլամ, և կուսակալէն հրաման, որ Պոլիս ղրկուեցաւ և եկաւ հաստատուն հրամանագիր, վանքին արտերը ջրելու իրաւանց հաստատութեան, որ կատարեցաւ. և հետևաբար տրուեցաւ նաև 1000 դահեկան:

Եւ 1821 ՌՄՀ. 1226 Պէհրամ բաշա Բերիա կ'երթայ ուր թագաւորական հրամանաւ թուղերն առին, և զինքն աքսորեցին, դարձաւ տունն և ժամանակ մը վերջը մեռաւ:

Ապա 1226 (ՌՄՀԸ. 1821) կուսակալութեամբ Սեբաստիա եկաւ Մէսճի Հաճի Սիւլէյման բաշա մէկ տարի, 7 ամիս, 17 օր: Երկու ամիս ետքը հրաման հասաւ թագաւորէն երթալ Յունաստան՝ որ ապստամբեր էր, կայսերական բանակաց մէջ հրամանատարութիւն ընելու: Սա իրեն տեղապահ թողուց արքունի տանենին խավաճակեաններէն Իպրահիմ

Մուխթար պէկն. որ կ'անուանէր սարը Մութէսէլլիմ՝ Կ. Պոլսեցի. բարերարոյ անձ մը, որ անդորրութեամբ պահեց ամենքը։

Եօթն ամիս ետքը Սեբաստիոյ կուսակալ անուանեցաւ Գասապ-պաշը Հասան բաշա, և որովհետև կը գտնուէր Յունաստան Օսմանեան բանակին հրամանատարաց մէջ՝ նոյն իմաստուն անձն Իպրահիմ Մուխթար պէկ մնաց դարձեալ տեղապահ. Հասան բաշայի իշխանութիւնը տևեց 7 ամիս, 3 օր՝ սկսեալ 1236 տարիէն։

Այս տարի պարսիկներն յանկարծ մտան Օսմանցւոց սահմանը Պայազիտի կողմերն, իրենց առաջնորդն էր արքայորդին Մուհամմէտ Ալի Միրզա։ Յաջորդ տարին դիմեցին անոնք 8000 հետևակ և 4000 ձիաւոր զօրքով, առին Թոփրագ Գալէն, և առաջ քալելով հասան մինչև Կարսի սահմանը, պաշարեցին Օսմանեանց մէկ գունդը՝ 1000 անձ, որոնք մեծ քաջութեամբ թշնամեաց դէմ դնելով, բայց օգնութիւն մը չգտնելով Կարսի կուսակալէն, երբոր վառօդնին հատաւ ստիպուեցան անձնատուր ըլլալ, որոնցմէ ոմանք արձակուեցան ամեն ունեցածներէն կողոպտուելով, իսկ ուրիշներ գերի տարուեցան։ Գնդին հրամանատարն էր Սեբաստացի Սայիտ աղան զոր երեք ամիս ետքը (1823, 1238) ազատեց Չափան Օղլու Մուհամմէտ բաշան և շատ մը պարգևներ տալով, իր տունը ճամբեց։

Գործն երբոր այս պայմանի մէջ էր ինքնակալէն հրաման եղաւ զօրք ժողովել. և սպարապետ կարգուեցաւ Րաուֆ բաշա. և նախամարտիկ Չափան Օղլու Մուհամմէտ բաշա, որոնք Սեբաստիայէն անցնելով գնացին Կարին 50–70,000 զօրքով։ Այլ երկայն ատեն չտևեց այն պատերազմն, ըստ որում պարսիկներն Կարին առնելէն ետև՝ երբոր հնտախտէ մեռաւ արքայորդին Մուհամմէտ Ալի Միրզա որ իրենց սպարապետն էր, թողուցին ամեն բան և դարձան գնացին իրենց աշխարհքը։

Այս տարի Սեբաստիա աքսորուեցաւ Նիզամ Յարութիւն ամիրա Նորատունկեան։ Յամին 1823 (ՌՄՀԲ. 1238) Յուն.ի 11ին կը հասնի քաղաքը, կը մնայ հոն պատուով չորս ամիս և Մայիսի կաղանդաց մէջ կը դառնայ իր հայրենիքը շնորհիւ սուլտան Մահմուտ բարեխնամ արքային։

Յամին 1823 (ՌՄՀԸ. 1237-8) Սեբաստիոյ կուսակալ կարգուեցաւ կարնոյ Չիֆթլիք գիւղէն Խամայիլ Հագգը բաշա, վարեց մէկ տարի, 10 ամիս, 7 օր. քաղաք հասնելով սկսաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել, որուն համար ծանր ծանր պահանջմունքներով նեղեց բնակիչները. նաեւ զօրքերը շատ ձանձրութիւն տուին քաղաքացւոց եւ գիւղացւոց: Գարուն հասածին պէս քալեց գնաց Կարին՝ Պարսից դէմ պատերազմելու եւ տեղապահ կարգեց եղբայրն՝ ագահ գեղջուկ մը:

Հաշտութիւնը շուտ կնքուեցաւ Պարսից հետ, որոնք արքայորդւոյն մահուանէն ետեւ չուզեցին պատերազմը շարունակել, ուստի Խամայէլ բաշա դարձաւ Սեբաստիա, իրեն հետ նաեւ զօրքերն, եւ որովհետեւ իրենց թոշակն չէին ընդունած, մտան գիւղերն եւ քաղաքն եւ շատ վնասեր հասուցին բնակչաց, մինչեւ Սայիտ աղա հնարք գտաւ զիրենք մեղմելու եւ սիրտերնին կակղցնելու, որ հեռանան Սեբաստիոյ սահմաններէն: Իսկ կուսակալը քաղաքը կեցեր կը խոշտանգէր եւ կը կեղեքէր հպատակները մինչեւ Յունիսի սկիզբն, երբ հասաւ արքունի հրաման եւ առին անոր թուղերն եւ զինքն Ամասիա աքսորեցին:

Սեբաստիոյ կուսակալութիւնը յամին 1824 (ՌՄՀԴ. 1239) կայսերական հրովարտակով տրուեցաւ Քէօսէ Մուհամմէտ բաշայի որ աքսորուած էր. վարեց չորս տարի, 10 ամիս եւ 7 օր. զգօն եւ աչալուրջ մարդ էր, լաւ կը տնօրինէր իր գործերն, եւ հանգիստ պահեց ամէնքն, բոլոր իր իշխանութեան ժամանակը՝ չորս տարի եւ աւելի: Նօզդաթցի Բարսեղ աղա մեծարոյ անձն իր սեղանաւորն էր:

Սուլթան Մահմուտ յամին 1826 (ՌՄՀԵ. 1242) Եէնիչէրի անուանած զօրքերն բնաջինջ վերցուց մէջտեղէն. անոնց տեղ հաստատեց նոր կարգ մը զինուորաց որ անուանեցաւ «Ասաքիրի Մուսալլըմէի մանսուրէի Մուհամմէտիյէ»: Եւրոպական հրահանգաց համեմատ մարզելով զիրենք:

Քէօսէ Մուհամմէտ բաշայի իշխանութեան երկրորդ տարին Մայիս 11ին արքունական հրաման եկաւ իրեն, երթալ պատուհասել Եւդոկիոյ Տաճիկներէն ոմանց ապերասանութիւնը: Կուսակալը հոն հասնելով յան-

ցուրններէն մէկ քանին սպաննեց, մէկ քանին աքսորեց։ Ոմանցմէ տու֊գանք առաւ, կործանեց նաև անոնց մեծակառոյց սրճանոյն և դարձաւ Սեբաստիա։

Այս տարի Յունիս 1ին կիրակի օր՝ սասանութիւն եղաւ երկրի, որ քառորդ մը տևեց շատ շէնքեր խախտեցան, բայց Աստուծոյ ողոր֊մութեամբ մարդու վնաս չեղաւ բնաւ։

Նոյնպէս այս տարի ժողովք եղաւ Կ. Պոլիս, և սահմանեցան բարե֊կարգութիւններ արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և այլ ժառանգաւորաց համար. հաստատուեցան 10 արքեպիսկոպոսարաններ. 1. Տարօնոյ Ս. Կա֊րապետ, 2. Կեսարիոյ Ս. Կարապետ, 3. Նիկոմիդիոյ Ս. Աստուածածին, 4. Սեբաստիոյ Ս. Նշան, 5. Կարնոյ, Մարկու վանք, 6. Գաղատիոյ Ս. Աստուածածին, 7. Տիգրանակերտի, Բարձրահայեաց Ս. Աստուա֊ծածին, 8. Եւդոկիոյ Ս. Աննա, 9. Ամասիոյ Ս. Աստուածածին, 10. Վանայ, Վարագայ Ս. Նշան, զորոնք գլխաւոր աթոռ կ՚անուանեն։ Եւ 13 եպիսկոպոսարաններ ասոնց ներքև։ Ս. Նշանի Սեբաստիոյ վիճա֊կին ստորադաս է Արաբկիրու եպիսկոպոսն Գուրուչայով։

Յովհաննէս արքեպիսկոպոս և իր տեղակալը Կարապետ Վ. փո֊խադրեցին Պետրոս Գետադարձ կաթողիկոսի և Թէոդորոս արեղայի մարմինն Ս. Նշանի Աստուածածնի եկեղեցին, և շինեցին տապան գե֊ղեցիկ և պայծառ մարմարիոն քարերով։

Ապա Յովհաննէս արքեպիսկոպոս քանի մը նորոգութիւններ ըրաւ Ս. Նշանի վանքն, որոնց մէջ նշանաւորն էր աւագ սեղանոյն խաչկալն, և այլ առանձին շէնքեր։

Յովհաննէս արքեպիսկոպոս իր փոխանորդ Կարապետ վարդապետի հետ շատ անգամ աշխատած էին արքունի հրովարտակ ձեռք բերել, և նորոգել կամ նորէն շինել Ս. Նշանի վանքը։ Վերջապէս այս գործոյն սկիզբ տրուեցաւ ՌՄՀԶ. 1827 Հոկտ. 19ին, երբ չորս տարիէ ի վեր աշխատուած և ձեռք բերուած հրովարտակին, և կուսակալական հրամանագիրին զօրութեամբ. գործը մէկ երկու տարի տևեց և մեծ ջան֊քով և ծանր ծախքով գլուխ ելաւ։

Յովհաննէս արքեպիսկոպոս իբր ԻԳ. տարի վարած է իր իշխանութիւնն, և ինքը գրած է Ս. Նշանի պատմութիւնը կարևոր ծանօթութիւններով (1021, 1830–809 տարի), զոր անուանեցի Պատմութիւն Սեբաստիոյ. շատ բան քաղեցի իրմէ, խառնելով ուրիշ տեղերէ ձեռքս հասած ծանօթութիւնները ինչպէս նաև Հ. Միքայէլ Չամչեանի ընդարձակ պատմութենէն առածներս։

Յովհաննէս արքեպիսկոպոսի կը յաջորդէ Կարապետ վարդապետ Կեսարացի, որ 1851*ին արդէն ձեռնադրուած էր եպիսկոպոս.* 1869*ին Կ. Պօլիս կոչուելով կը դրուին առ ժամանակեայ առաջնորդներ, մինչև որ Պետրոս Վ. Թաշճիզեան առաջնորդ կ'ընտրուի Կ. Պօլիս և կը ղրկուի Սեբաստիա։ Բայց Կարապետ եպիսկոպոս կը մնայ վանահայր Ս. Նշանի մինչև իր մահը՝* 1877*։*

Պետրոս վարդապետ յամին 1879 *կը ձեռնադրուի եպիսկոպոս, և իր վարչական լաւ հանճարոյն համար Կիւրնոյ առաջնորդութիւնն ևս* 1880*էն սկսեալ ժամանակ մը կը վարէ. մի և նոյն պատճառաւ յամին* 1896 *նաև Թոգաթի առաջնորդութիւնն իրեն կը յանձնուի մինչև իր մահը յամի* 1907*, յարակցելով զանոնք Սեբաստիոյ առաջնորդութեան հետ։ Լաւաբարոյ բարձրաստիճան եկեղեցական մի էր նա, խնամոտ և անշահասէր։*

ԳԼՈՒԽ Ժ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ՎԻՃԱԿԻՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ՎՐԱՅ

Ա. Սեբաստիոյ եկեղեցւոյն ընթացքն իր սկիզբէն։ Բ. Կաթողիկէ հայոց կերպաւորումը Սեբաստիոյ վիճակին մէջ։ Գ. Սեբաստիոյ վիճակին կաթողիկէ հայ առաջնորդները կամ կաթողիկոսական տեղապահները։ Դ. Եպիսկոպոսական աթոռներ կը հաստատուին։ Ե. Սեբաստիոյ Օսմանեան կուսակալներուն ցուցակը՝ Տաճկաց 1239 թուականէն ասդին։

Այս նիւթիս նկատմամբ առանձին գլուխ մը գրելով, չեմ համարիր բնաւ թէ, այս և ուրիշ գաւառաց մէջ գտնուած հայ կաթողիկեայք նորութիւն մ'են ազգին մէջ։ Այդ խնդիրն ամփոփելով Սեբաստիոյ վիճակին մէջ այժմ գտնուած կաթողիկէից՝ պիտի խօսիմ անոնց վրայ հետևեալ յօդուածոց մէջ։

Ա. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ԸՆԹԱՑՔՆ ԻՐ ՍԿԻԶԲԷՆ

Որմիզդ, Հռովմէական մեծ քահանայապետին վճռոյն համեմատ, որուն հետևեցան բոլոր արևելեան հարք, «Առաջին փրկութիւն է ուղիղ հաւատոյ կանոնը պահել, և հարց սահմաններէն բնաւ չխոտորիլ, ինչու որ չկրնար Քրիստոսի Տեառն մերոյ տուած վճիռը պարապի երթալ. որ ըսաւ՝ դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, ևն. իրաց արդիւնքն ևս ճշգրտեցին այս խօսքը զի առաքելական ա-

թուոյն մէջ միշտ անարատ պահուեցաւ կրօնքը։ Կը յուսամ արժանի ըլլալ Ձեզի (քահանայապետին) հետ միալու այն մի հաղորդութեան մէջ զոր կը քարոզէ առաքելական աթոռը, յորում է քրիստոնէական կրօնից ամբողջ և ճշմարիտ հաստատութիւնը»։ Որմէ յայտնի կը տեսնուի որ կաթողիկէութիւնը կը պահանջէ ընդունիլ և դաւանիլ Պետրոս Առաքելոյն և իր յաջորդ Հռովմայ քահանայապետաց գլխաւորութիւնն, և Հռովմայ եկեղեցւոյն հետ հաղորդակցութեան մէջ գտնուիլ, պահպանութեամբ ուղիղ հաւատոյ, որ նոյն աթոռոյն մէջ անարատ պահեցաւ ամէն առեն։

Այդ հայ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչէն ի վեր ընդունած և յարգած է այս վարդապետութիւնը, թէ Պետրոս առաքեալն և իր յաջորդները վայելած են միշտ Եկեղեցւոյ գլխաւորութեան իրաւասութիւն, և չկայ յիշատակ մ'որ այս ճշմարտութեան հակառակ ընդդիմութիւն մ'եղած ըլլայ, կամ խնդիր ծագած։

Բաժանման կէտ մ'եղաւ Քաղկեդոնի ժողովն. հոն կայ թիւրիմացութիւն մը, գոնէ ի սկզբան վէճը Յունաց հետ էր, և եկեղեցական խնդրոց մէջ մեծ մաս ունէին նաև քաղաքային տեսութիւններ։ Վերջապէս ամբողջ ազգը միաձայն չէր, ինչպէս յայտնի է հայ եկեղեցւոյ հինգ դարու (555–1065) պատմութենէն։

Կիլիկիա նստող հայրապետաց ընթացքին մէջ Գրիգոր Բ. Վկայասէրէն սկսեալ որոշ և պայծառ կերպ մը կը տեսնուի. բայց առ այժմ իմ գրուածոյս սահմանէն դուրս է անոր վրայ խօսիլ, զի առիկա կը պատկանի հայ եկեղեցւոյ պատմութեան։

Այս համառօտ տեսութիւնը հիմ դնելով, պիտի ըսեմ քանի մը խօսք Սեբաստիոյ եկեղեցւոյն և անոր հայրապետաց կերպին, ընթացքին և վարմունքին վրայ։

Սեբաստիոյ եկեղեցին և համօրէն արևմտեան Հայք գրէթէ միշտ պահեցին միութիւնը կաթողիկէ եկեղեցւոյ հետ։ Սեբաստիոյ հին եպիսկոպոսներն, որ ընդհանրապէս յոյն ծէսով կը վարուէին, գրէթէ միշտ նոյն ճամբով գնացին, քանի որ յոյն եկեղեցին չէր բաժնուած որոշ կերպով. բայց դառնանք հայածէս եպիսկոպոսաց։

Սիոն՝ որ Ժ. դարուն վերջերն աթոռակալեց, ընդունեցաւ Քաղկեդոնի ժողովքը թէ և քիչ մը հարկադրուած։

Եղիսէ՝ աշակերտ էր Գրիգորի Մագիստրոսի (1029–1064)։

Խաչատուր (1064–1095)։

Պէտք է հոս աւելցնել ևս որ Արծրունի պետերն՝ ինչպէս առաջ, նաև Սեբաստիա գալէնէն ետև հակառակ չէին միութեան. մանաւանդ թէ աւելի ևս պարագայից հարկէն առ նոյն ստիպուած։

Գրիգոր Ա. արքեպիսկոպոսը ժամանակակից էր Ներսէս Դ. Շնորհալի հայրապետին. զի նաեւ 1137–1169 *և այս ատեններս Կիլիկիա քաղաքական անձկութեան և ճգնաժամի մէջ էր, և յունական ազդեցութիւնը զօրացած։*

Պսակ կամ Սահակ (1169-1186) *ստորագրեց Հռոմկլայի ժողովոյն. որ պատրաստուեցաւ Շնորհալի հայրապետին ջանքով, և գումարեցաւ Գրիգոր Դ. Տղայ կաթողիկոսի ժամանակ՝ յամին* 1179։

Անանիա Ա. (1186–1207) *որ ստորագրեց յամին* 1197 *Սսոյ առանձնակ ժողովոյն ուրիշ տասնեմէկ նշանաւոր արքեպիսկոպոսաց հետ, որոնց մէջ էր նաև Տարսոնի արքեպիսկոպոսը՝ Ներսէս Լամբրոնացի. ինչպէս կը խնդրէր քահանայապետին նուիրակը (Լեկաղն), արքեպիսկոպոսն Մոգունտիոյ, կարդինար՝ եպիսկոպոս Սաբինայ, Գրիգոր Ե. Ապիրատի ժամանակ։*

Ստեփանոս Ա. (1305–1328) *որ ստորագրեց Սսոյ Ջ. ժողովոյն յամին* 1307՝ *որ պատրաստուած էր Գրիգոր Է. Անաւարզեցի հայրապետէն, և գումարուեցաւ կոստանդին Կեսարիոյ արքեպիսկոպոսին գահերեցութեամբ։ Որ և նոյն ժողովքին մէջ ընտրուեցաւ կաթողիկոս։ Ստորագրեց նաև Ատանոյ ժողովոյն նոյն հայրապետին ժամանակ յամին* 1316։

Շմաւոն կամ Սիմոն (1328–1369) *ստորագրեց Սսոյ ժողովոյն որ յամին* 1342 *գումարուեցաւ Մխիթար հայրապետի ժամանակ։*

Ստեփանոս Բ. արժանաւոր յաջորդ եղաւ յամի 1369–1387 *ու մարտիրոսութեամբ պսակեց իր կեանքը։*

Ստեփանոսի նահատակութենէ եւ մինչեւ Յովհաննէս Ը. 1387–1482, 95 տարիներու պարապ միջոց մը կայ։ Սակայն Փլորենտիոյ ժողովոյն հետ եղած միաբանութեան ժամանակ Սեբաստիա միաբան կեցած էր Կիլիկիոյ աթոռոյն հետ։ Անկից ետեւ ևս երբոր Էջմիածնի աթոռը նորոգելու, և կաթողիկոսութիւնը հոն փոխադրելու հոգ կը տարուէր, նա չէ ձայնակցած՝ այլ մնացած է անբաժան Սսոյ աթոռոյն հետը։

Նոյն մտածմունքը կարելի է ունենալ նաեւ այն չորս արքեպիսկոպոսաց համար որոնք 1482–1578 հովուեցին այս աթոռն. որ անով աւելի հաստատի կ'ըլլայ զի երբ Ազարիա կաթողիկոս ժողովքի կոչեց Սեբաստիոյ Մինաս Բ. արքեպիսկոպոսը, նա առանց դժուարութեան գնաց. և յամին 1585 կաթողիկէ հաւատոյ դաւանութիւն մ'ստորագրեցին Հայրապետը, Մինաս արքեպիսկոպոսը, Յերապոլսի (Հալէպի), Ջեթունի և Աշտու եպիսկոպոսներն. և կրկնեցին նոյն գրութիւնն առ Սեստոս Ե. երկու տարի ետքը։

Հայոց մինչեւ նոյն ժամանակ ունեցած կրօնական հանգամանաց վրայ մեծ լոյս կու տայ Գրիգոր ԺԳ. քահանայապետն Հռովմայ իր Հայոց համար տուած կոնդակին մէջ յամի Տեառն 1584 ուր կը հաստատէ թէ Հայք մինչեւ նոյն ժամանակ Հռովմայ աթոռոյն հետ իրենց միութիւնն և հաղորդութիւնը պահած էին. և եթէ թերութիւն մ'ևս սպրդած էր իրենց մէջ, այն ժամանակին դառնութենէն առաջ եկած էր, և ոչ թէ թիւր խոտորուած կամքէ։

Ներսէս արքեպիսկոպոս Սեբաստիոյ (1639–1648), որ ետքը կաթողիկոս եղաւ Սսոյ՝ գովելի ընթացք մ'ունեցած է մանաւանդ իր կաթողիկոսութեան ժամանակ։

Վերջապէս մինչեւ ԺԷ. դարուն կէսերն և աւելի՝ չկայ բնաւ կաթոլիկէութեան դէմ ընդհանուր հակառակութիւն, այլ ամէն բան խաղաղութեամբ կ'երթար, առանց մէկի մը կողմէ բռնադատութեան հանդիպելու։

Մանաւանդ որ այս դարուս վերջերը Գրիգոր ԺԱ. Սսոյ, և Նահապետ Էջմիածնի կաթողիկոսները կը ջանային պնդել իրենց միութիւնը

Հռովմայ հետ, ինչպէս եւ Պետրոս կաթողիկոս Սսոյ, որ նոյն պատճառաւ աքսորուեցաւ Պարսկաստան ուր և կնքեց իր կեանքը։

Եօթնևտասներորդ դարուն վերջերը Կ. Պոլսոյ պատրիարք եղած էր Եփրեմ Վարանցի այլ և այլ անգամ։ Սա վարեց սոսկալի հալածանք մը հակառակ իր արևմտակից եղբարց, որոնք յայտնի կը դաւանէին կաթողիկէ հաւատքն։ Իրմէ աւելի բռնագոյն գտնուեցաւ Աւետիք Երզընկացի, և ոմանք իր յաջորդներէն, ի մասնաւորի Յովհաննէս Գանձակեցի։ Եւ ահա այս պատճառաւ Մխիթար Սեբաստացի, նախ ի Մեթոն և ապա ի Վենետիկ շունչ առաւ. իրմէ առաջ եկան Վենետկոյ և Վիեննայի մեծարգին Միաբանութիւնք։ Այս միջոց էր նաև Աբրահամ Անթապցի ի Լիբանան ուր ծաղկեցան Անտոնեան և Զմմառեան բազմավաստակ միաբանութիւնք։ Իսկ հասարակ ժողովուրդը մաս մը ցրուեցաւ կամ ծածկուեցաւ, և մաս մը՝ հալածողաց հետ միանալու ստիպուեցաւ, թէև սակաւաթիւ։ Հալածանքն աւելի բուռն կերպով բորբոքեցաւ 1827ին վերջն, և իբր երկու տարի տևեց. տառապանք, աքսոր, բանտարկութիւն և ամեն կերպ վիշտ, նաև զրկումն ընչից կրեցին կաթողիկեայք, և առաքինի արիութեամբ տոկացին. և 1830 տարւոյն սկիզբը տրուեցաւ իրենց պաշտօնական դիրք կայսերական հրովարտակաւ։

Սեբաստիոյ և իր գաւառին մէջ եւ 1700էն ետև, մի և նոյն ժամանակներ խստութիւններ ի գործ դրուեցան զոր պատմութեան մէջ յիշատակեր եմ։

Այլ եւ բաժանումը իրականացեր էր, ոչ հայութեան, զի կաթողիկեայք ոչ երբէք ուրացեր են իրենց ազգութիւնն, այլ կրօնի. ոչ եթէ կաթողիկէ Հայք նոր կրօնքի մը հետևելով, ոչ բնաւ, այլ մնալով հաստատուն իրենց Ս. Նախնեաց՝ Գրիգորի Լուսաւորչի և անոր հետևողաց դաւանութեան մէջ։ Ես միտք չունիմ հոս խօսելու 130 (1700–1830) տարուան հալածանաց պատմութեան վրայ, և պարզելու անոր հանգամանքն և փաստերը, զի տխուր եկեղեցական պատմութեան կը վերաբերի. միայն ներուի ինձ ըսել որ պէտք չէր անշուշտ հայ ազգին՝ այդպիսի ծանր վիշտ հասցնել իր կաթողիկէ եղբարց։ Բայց կարծեմ

ազգին լրութեան վերագրելու չէ այն քանի մ'անխոհեմ և անձնահաճ առաջնորդաց գործած չարիքը։ Մտածելու է որ կաթողիկեայք, լեզուաւ, գրականութեամբ, ծէսով, տօներով, արարողութեամբ և սովորութիւններով հայ են։ Գրիգոր Լուսաւորիչ, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Ներսէս Մեծն, Սահակ Մեծն, Մեսրոպ, Վարդանանք եայլն, Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին կը պատուեն կը յարգեն։

Իսկ Նեստորի, Եւտիքէսի, Տէմոթէոս Կուզի, Դէոսկորոսի և նմանեաց համար կ'ըսեն մեծիմաստ իշխան Գրիգոր Դ. հայրապետին հետ, թէ չեն ուզեր կարդալ անոնց խօսքին, մեր ազգէն, մեր քաղաքէն չեն, վատ են՝ լաւ են, իրենց ազգայնոց գխանալիքն է, անոնցմէ ելան, անոնց խօսեցան, անոնք նզովեցին զիրենք և նզովուած են ի յաւիտեան։ Չեն յիշեր նաև Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի և նմանները, որոնց քով չեն տեսներ վերը յիշուած Ս. Նախնեաց և Հարց (Լուսաւորչին և անոր հետևողաց) հոգին և ուղիղ դաւանութիւնն և վարդապետութիւնը։

Եւ արդար իրաւամբ կը ցաւին Մեծին Լեոնի Հռովմայ Քահանայապետին, և իր առ Փլաբիանոս Կ. Պօլսոյ հայրապետը գրած և բոլոր աշխարհքի մէջ յարգուած կոնդակին (Տումարին) դէմ եղած անարգանաց։

Վերջապէս, յետ նաև այն երկարատև հալածանաց ունեցեր են միշտ սէր և բարեկամութիւն. մտադրելով որ արենակից են մինչև հիմա և մինչև իսպառ, պահելով հանդերձ իրենց կաթողիկէ դաւանութիւնն, և Հռովմայ գահին հետ իրենց հաղորդակցութիւնը, համաձայն Ս. Հարց դաւանութեան։ Հիմակ դառնամ երկրորդ յօդուածի մը։

Բ. — ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ ԿԵՐՊԱՐՈՒՄԸ ՍԵԲԱՍՏԻՈՅ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ

Բոլոր վերը գրուածներէն և ուրիշ ծանօթութիւններէ որ պիտի տեսնուին, առանց դժուարութեան կրնանք հետեւցնել, որ Թոգատի, Բրգնկոյ, Սեբաստիոյ, և կիւրնոյ մէջ կաթողիկէութիւնը զաղրած չէ, թէ և կրնայ աւելցած կամ նուազած ըլլալ ներքին կամ արտաքին պատճառներէ. նոյնը նաև ուրիշ գաւառաց համար ևս ըսել դժուար չեմ տեսներ։ Որ առաւել ևս կը հաստատի, վերը գրուածներուն վրայ աւելցնելով, նոյն ժամանակ, 1750–1820 թուերուն ազգին մէջ գտնուած բազմաթիւ հայրապետներէն՝ ի Սիս և յէջմիածին, և աւելի շատ եպիսկոպոսներէն, որոնք զաւանութիւն հաւատոյ ղրկեցին ի Հռովմ, ոմանք անձամբ խսկ գնացին հոն, և իրենց միութիւնը գործնական կերպով յայտնի ըրին։

Ա. – Թոգաղ

Արդ մանաւորելով խօսքերնիս, Թոգատի մէջ միութիւնը հին էր և լաւ տոգորուած, ուր և առաջ մեծ թիւ մը կը կազմէին։ Նշանակելի է Եղիազար Էջմիածնի կաթողիկոսին ժամանակ 1682–1691 Թոգատցի Սարգիս վարդապետին գործը, (թէպէտ փոքր մի տարբեր կերպով գրուած և ինքը թերևս աւելի իմն նախանձայուզութիւն ունեցեր է), որ եպիսկոպոսութեան հասաւ, վտանգներ ունեցաւ և հարկեցաւ Հռովմ ապաստանիլ։

Յամին 1692 Գրիգոր Վ. Լէոպոլսեցի կու գայ Թոգաղ. կը կոչուի ևս Լեհաստանցի, զի անկից եկած՝ էր աշակերտ Կղեմէս Կալանոսի. կը քարոզէ կաթողիկէ հաւատքը, ետքէն նաև Սեբաստիա և Բրգնիկ, և ժամանակ մը կը մնայ նոյն կողմերը։ Այլ թէ որչափ հետեւողներ ու-

նեցաւ, չէ նշանակուած. այն հաւատալի է որ, աւելի ևս լուսաւորեց զիրենք և կերպաւորեց իրենց վարդապետութիւնն, որ անշուշտ ժամանակին պարագաներէն այնչափ պայծառ չէր թափանցած իրենց միտքերը։

Այն կողմերէն հեռանալէն ետև լսելով որ ծանր հալածանք մը կը պատրաստուի, երկայն թուղթ, մանաւանդ մատենիկ մը գրեց, որ կը բովանդակէ նախ ընդարձակ յորդոր որով կը քաջալերէ զիրենք հաստատուն մնալ կաթողիկէ դաւանութեան մէջ, քանի որ կը պատրաստուի իրենց դառն վիճակ մը. զի արիական առաքինութեամբ միայն կարելի է տոկալ ամէն դժուարութեանց՝ շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ։

Երկրորդ՝ կը խօսի քրիստոնէութեան ծագման և յառաջդիմութեան վրայ, թէ ինչպէս հալածանօք զարգացաւ և աճեցաւ և ազատութիւն գտաւ։

Երրորդին նիւթն է Տիեզերական ժողովքներն, ուր կ'ընդարձակէ Քաղկեդոնի ժողովոյն մասը՝ կարևոր եղածին չափ։

Չորրորդ կը խօսի հայ հայրապետաց և եպիսկոպոսաց հաղորդակցութեան վրայ, որ ունեցած են Հռովմայ աթոռոյն հետ։ Նոյնպէս կը պարզէ Հայոց առանձին և համագումար ժողովոց նոյն աթոռոյն հետ պահած միութիւնը։ Եւ յորդորական ճառով մը կը վերջացնէ և կ'աւարտէ իր մատենիկը։

Գրիգոր վ. Թոգատի կաթողիկէութիւնը իրեն կը վերագրէ. ես իմ մտածութիւնս յայսմ մասին յայտնեցի վերը. բայց չեմ ուզեր բնաւ անոր իրաւանց դէմ դժուարութիւն մը յարուցանել, և կամ հաստատել։ Գրիգոր վ. նաև Մեծ Հայք շատ մը տեղեր շրջած է քարոզութեամբ, և ապա դարձած է իր հայրենիքը Լէոպոլիս. ուսկից գրած է վերը յիշուած նամակը կամ մատենիկը։ Եւ 1713ին միջոցները Գրիգոր վ. նորէն կու գայ Բրգնիկ, Թոգատ, և 1715ին բանտ կը դրուի տեղական կառավարութեան կողմանէ և մեծամեծաց մատուցած տուրքերով շուտ կ'ազատի, և նոյն կողմերէն կը մեկնի իր երկիրն, ուրիշ տեղեր ևս հանդիպելով։

Բ. – Բրգնիկ և Սեբաստիա

Այս երկու տեղերը նոյն ժամանակ փայլուն պայման մ'ունեցան. Միքայէլ երէց Բրգնիկ գիւղի, կատարեց իր նահատակութիւնը Սեբաստիոյ մէջ 1707ին, որուն պատմութիւնը համառօտ գրած եմ կարգին մէջ: Այս նահատակութեան ատեն կար նոյն գիւղին մէջ բաւական բազմութիւն կաթողիկէից, ինչպէս նաև Սեբաստիա, Թոգաթ և ուրիշ տեղեր: Տեսանք որ Թոգաթու կաթողիկէութիւնը կ'ընծայուի Գրիգոր վարդապետին, մասամբ նաև Բրգնիկ և Սեբաստիա. կամ Միքայէլ երիցու կը վերագրուի Բրգնիկ, Սեբաստիա, նաև Թոգաթ: Ես չեմ ներհակիր գրուած պատմութեան և գրած եմ ես իրենց տեղը, բայց և չեմ համոզուած ես որ կաթողիկէութիւնը ի սպառ շիջած էր նոյն կողմերը: Բայց հոս միտքս բան մը կու գայ, զոր կ'ուզեմ պարզել. Գրիգոր վարդապետ համարձակ կը զրուցէ որ ինքն առաջին քարոզ եղաւ, ի մասնաւորի Թոգաթցոց. Միքայէլ երիցու պատմագիրն, անոր կ'ընծայէ անկախապէս Բրգնկոյ ևայլն քարոզութիւնը: Գիտենք որ Մխիթար Աբբայ ևս ծանօթ էր նոյն վարդապետութեան, ասոնց հետ կամ առաջ ևս, որ և լուսաւորուած էր հայերէն ձեռագիր մատենի մը գրուածքներէն, մանաւանդ Քաղկեդոնի ժողովքին նկատմամբ, նոյնպէս կը վարդապետէր հասած տեղերը: Ուստի բաւական կը դատիմ ըսել միասնգամ որ Գրիգոր վարդապետ և Տէր Միքայէլ և այլք՝ կերպաւորեցին զայն լուսաւորութեամբ: Վասն զի ԺԷ. և ԺԸ. դարերուն պատմութիւնը յայտնի կը ցուցնէ, որ այն ատենները կային կաթողիկեայք ոչ միայն Թոգաթ, Սեբաստիա և Բրգնիկ այլ և ուրիշ տեղեր, ինչպէս Ամասիա 20–40 տուն, ևս Արաբկիր, Կիւմիւշխանէ, Տրապիզոն, Բաբերդ, Սպեր և բազմաթիւ գիւղեր: Նոյնպէս Սեբաստիոյ շուրջն եղած գիւղերու մէջ, մինչև Տէրէնտէ և Աղչէ-Տաղ, որոնք հալածանաց խստութեան ժամանակ եկեր Բրգնիկ ամփոփուեր էին, իրենց հակառակ եղած հետապնդութիւններէն ազատիլ կրցողներն:

Հիմակ պէտք է ըսել քանի մը խօսք Բրգնկոյ հիմնարկութեան վրայ. աւելի հնագոյն տեղեկութեանց պակասութեան պատճառաւ մետասներորդ դարէն անդին չանցնիր ազգային աւանդութիւնն, որուն համեմատ այս գիւղին բնակութիւնն սկսած կ՚ըլլայ յամին 1021, 1022, Հայ թուին ՆՀ. կամ ՆՀԱ։ Այն ժամանակ երբոր Սենեքերիմ Արծրունի Վասպուրականը թողլով եկաւ Սեբաստիա, իրեն հետ փոխադրուեցան մեծ բազմութիւն. ըստ կայ՝ մինչև չորսհարիւր հազար եթէ չափազանցութիւն չէ։ Կային այն բազմութեան մէջ երևելի ընտանիքներ, նախարարական և ազնուական տոհմեր, որոնք Սեբաստիոյ շուրջը կանգնեցին բնակութեան տներ, յարդարեցին ագարակներ, գիւղեր և աւաններ փոքր Հայոց այն ամեն կողմերն ուր կը տարածուէր Սենեքերիմ Արծրունիի տէրութիւնն և իշխանութիւնը։ Այս տեղերն առին իրենց հիմնարկուներուն կամ տոհմերու անունները, ինչպէս Բրգնիք–Բագրատունիք, Խորոխոնք–Խորխոռունիք, կամ գաղթող տոհմապետին կամ ազնուականին անուամբ, ինչպէս Պետրոսի, Իշխանի, Թոտորակ եայլն և ևս տեղւոյ անուամբ, ինչպէս Բիւրակ, Պարտիզակ, Փարահատ, ուսկից մեկնած էին նոյն ժամանակ կամ քիչ մը ետքէն։

Բրգնկայ հիմնարկութիւնն ուրեմն եղած է յամին 1021 և Պիգէոնի արձանագրութեան համեմատ 1022ին. ի սկզբան եօթը տուն են եղեր հոն բնակողները, և իբր բարձր ընտանեաց ժառանգորդ, իրենց հետևորդովը և ծառաներովը, բաւական մեծ թիւ մը կազմելու էին անշուշտ։ Կրնայ այս Բագրատունեաց գալուստը յետաձգուիլ քանեհինգ տարի մ՚ևս, և համարիլ՝ Անին գրաւելէն ետև եկած։ Ասոնք երկայն ատեն քաղաքին ազնուականաց պէս շքեղ զգեստներ կը հագնէին, գլուխնին խոյր դնելով և ոտքերնին կօշիկ անցունելով, գլխաւոր գործերնին արհեստ և վաճառականութիւն էր. ունէին նաև ագարակներ, Բրգնկայ ընդարձակ երկիրներէն զատ իրենց կը պատկանէին նաև Դաւրա երկիրներն որ քաղաքէն կէս ժամ հեռու է. և հոն գտնուած Ջրաղացներն արքունի հրովարտակաց մէջ կը կոչուին եղեր «Ֆաւրատուն թահունլէրի» (Ջրաղացք Բագրատունեաց). նոյն գիւղին մօտ կայ և ընդարձակ անդաստան մը, որ մինչև հիմա Բէյխենց անունը կը կրէ։

Եկեղեցին շինուած է յանուն Սրբոյն Սարգսի (1257) *որովհետև* 1834*ին երբ վերջին անգամ նորոգուեցաւ նոյն եկեղեցին, դասին յատակը գտնուեցաւ քարէ խաչարձան մը, որուն պատուանդանին վրայ գրուած էր « Ի Թուին Հայոց ՉԶ. » որ է ամ Տեառն* 1257*։ Նոյն ժամանակէն և աւելի առաջ կար նաև ուրիշ եկեղեցի՛ մը յանուն Սուրբ Աստուածածնի, որուն աւերակները կը տեսնուին Մելիքենց կամ Արապենց տան քով։ Կար նաև գիւղին արևմտեան կողմը Լուսաղբիւր կոչուած տեղն ուրիշ նուիրական վայր մը, զոր գիւղականք Ս. Յովհաննէս կը կոչեն։ Վերը յիշուած խաչարձանը զետեղուած է Ս. Սարգիս եկեղեցւոյ արևմտեան ճակատը։*

Յայտնի կը տեսնուի՝ որ 1021 - 1046*է մինչև* 1257 *Բրգնիկ գիւղը շատ ծաղկած և յառաջացած էր. թէպէտ ինչ ինչ ձախորդութիւններ ևս պակաս չէին եղած, ինչպէս տեսնուեցաւ պատմութեան մէջ, և կրնայ ըսուիլ որ, նոյն ընթացքը շարունակուած է մինչև* 1400 *և եղած արգելքներն արագ դարմանուելով՝* 350 *և աւելի տարուան մէջ, անշուշտ բազմացեր և զարգացեր էին հետզհետէ։*

Հնգետասաներորդ դարուն սկիզբը պատահեցաւ այն սոսկալի աղէտքն, որ Սեբաստիա հոյակապ քաղաքը կործանեց և կոյտ մ'աւերակ դարձուց, կ'ուզեմ ըսել Լէնկ–Թիմուրի ահեղ արշաւանքն, որ Սեբաստիոյ հետ աւերեց նաև Բրգնիկ գիւղը. բնակիչք մասամբ ջարդուեցան և մասամբ ցան և ցիր եղան, և բաւական ատեն միայ աւերակ։

Երկայն տևեց այս վիճակը. Սեբաստիան նորոգուելէն ետև, նաև Բրգնիկ սկսաւ նորէն բնակելի ըլլալ. աւելի վերջն եղած է Ս. Սարգիս եկեղեցւոյ նորոգութիւնն ինչպէս յայտնի է նոյն եկեղեցւոյ մէջ գտնուած խաչարձաններէն, որոնց միայն պատուանդանին վրայ գրուած է ՌԶ. և միւսին պատուանդանին վրայ ՌԺԲ. ըստ այսմ նորոգութիւնը տևած ըլլալու է վեց տարի (1557-1563)*։ Ով գիտէ որպիսի դժուարութեանց հանդիպած ըլլալու են։ Այն ժամանակ առանց երկրայութեան բնակչաց թիւը շատ նուազած էր, միայն յայտնի եղածն այս է որ կը նշանակուի արձանագրի մը մէջ, զոր կը յիշէ Գրիգոր Պետրոս Ը. իր*

պատմութեան մէջ, և որ Ս. Նշանի վանքը գտնուած գրքի մը յիշատակարանին մասն է, որ քիչ մ'առաջ յիշուած եկեղեցւոյ նորոգութենէն 74–80 տարի վերջը գրուեր է յամին 1631, այսպէս. «Բագրատունիք այն է Բագնիք (Բգնիք). զամանէ ասի յոմանց թէ էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ աստ արարին հիմնարկութիւնք: Եւ էին տունք իբր եօթն. յետոյ ի զանհկաց զարձուցեալ զԲագրատունիքդ՝ Բրգնիք. և է իբր ժամու և կիսով հեռի ի քաղաքէն Սեբաստիոյ. և այժմ են ի սմա տունք իբր ԺԵ. ի թուին Հայոց ՌՁ. = 1631։

Այս տասնեհինգ տներն աճեցան հետզհետէ 1700–1710 և հասած էր իրենց թիւը 80 – 100 տան 70, 80 տարուան մէջ. գրեթէ նոյն թիւն ունէր 1786ին՝ յորում Զմմառ ի վանաց մէկ տոմարին մէջ գրուած է 900 անձ, որ 'ինձ քիչ մը նուազ կը թուի։ Տասնեհինգ տան աճման կայ երկրորդ պատճառ մ'ևս, զի հին տներուն մնացորդներէն զատ, որոնք են Օճէխենք, Մելիքենք կամ Արապենք, Արևենք, Գաւիթենք, Պապոնք, Վարդանենք, Մաթոսենք, Անանենք, Թերզոնք և անոնցմէ սերեալներ, ինչպէս կը կարծուին Մարկոսենք, Գորենք ևայլն։ Եկեր էին հետզհետէ և եկան ևս ուրիշ ընտանիքներ Ճանճիէն, Խորոխոնէն, Տըմզենիէն, Կամախէն, Տարէնտէէն, Հէքիմխանէն, Ագչագալէէն, Ամասիայէն, Մարսուանէն և այլն տեղերէ որով աճեր ևս բազմացան։

Ինչպէս ըսի Բրգնկայ մէջ կաթոլիկէ կրօնքը ծաւալողը կամ լաւ ևս ամրապնդողը եղաւ Տէր Միքայէլ Նահատակ։ Ժամանակը շատ յարմար էր, Խաչիկ Գ. Սիս նստող կաթողիկոսը 1663ին տասներեք եպիսկոպոսներով և ինը վարդապետներով ուղիղ հաւատոյ դաւանութեան թուղթ գրեց Հռոմ Աղեքսանդր Է. Քահանայապետին, իր յաջորդներն Գաւիթ Ե. և Խաչիկ Ե. նոյն ճամբայէն գնացին, ինչպէս նաև Գրիգոր ԺԱ. և Պետրոս Բ.։ Նաև Էջմիածնի կաթողիկոսաց քով զօրացած էր Հաւատոյ միութեան գաղափարը. Փիլիպպոս, Յակոբ, Եղիազար և Նահապետ հպատակութեան թուղթ գրած էին Հռոմ, 1633–1705. միայն թէ այս երկու Աթոռոց հայրապետներուն ըրած կերպն այն էր, ընդունիլ ուղիղ հաւատոյ դաւանութիւնը, ճանչնալ Հռոմայ Քահանայա-

պետաց ընդհանուր եկեղեցւոյ վրայ ունեցած գլխաւորութիւնը ։ Իսկ միացած բաները, ծէս, սովորութիւն եւայլն, թողլով անփոփոխ, ինչպէս որ էր մինչև նոյն ժամանակ։

Վերջապէս, այս լաւ պատրաստութիւնը զօրաւոր դիրք մը կ'ընծայէր որ քարոզուի համարձակ կաթողիկէ վարդապետութիւնը գրեթէ ամէն տեղ։ Այսպէս և ի Բրգնիկ Տէր Միքայէլի հետ միաբան կ'աշխատէին Տէր Աստուածատուր Խորոխոնցի և Տէր Գասպար Բրգնիկցի, որոնք երեքը մէկտեղ ձեռնադրուած էին քահանայ յամին 1697, Ս. Նշանի վանքը՝ Սահակ Գ. արքեպիսկոպոսէն։ Ետքէն Տէր Աստուածատուրի անունը իր տոհմն իրենց սեպհականեցին և անուանեցան Տէր Աստուածատուրեան. միացին ՝կաթողիկեայ՝ ինչպէս նաև գիւղին ամբողջ ժողովուրդը։

Քրիստոնէական կենաց մէջ յաջողութիւն և ձախողութիւն զուգընթաց են։ Այն պատուական հայրապետներու իբր թէ ժամանակակից էին Կ. Պոլիս նստող քանի մ'առաջնորդներ, որոնք պատրիարքի շքեղ անուամբ պատուած էին, ինչպէս Եփրեմ Ղափանցի, Աւետիք Եւդոկիացի, Յովհաննէս Զմիւռնացի, Սահակ Անեցի, Յովհաննէս Գանձակեցի, զոր Աբրահամ կաթողիկոս կ'անուանէ գինեմոլ և ուրիշներ որոնք բորբոքեցին հալածանքը կաթողիկէից դէմ որոնք երթալով սաստկացան։ Տէր Կոմիտաս նահատակուեցաւ Կ. Պոլիս գլխատմամբ և Տէր Միքայէլ Սեբաստիա կախաղանով յամին 1707. ձերբակալութիւն, բանտարկութիւն, աքսոր, տուգանք և ամէն կերպ տառապանք և նեղութիւն և ամէն տեսակ խստութիւն և չարչարանք ի գործ դրուեցան։

Տէր Միքայէլի մահուանէն ետև Բրգնիկ գիւղին կալուածատէրը Տէլի Շէյխ, վախնալով որ չըլլայ թէ գիւղացիք ցրուին և մեծ վնաս հասնի իրեն, սկսաւ բոլոր իր ազդեցութեամբ պաշտպանել զիրենք, և երկու քահանայք Տէր Աստուածատուր և Տէր Գասպար հովուեցին այնուհետև համարձակ իրենց ժողովուրդը ամենայն փութաջանութեամբ։

Բրգնիկցիք 29 փետր. 1769 նամակ մը գրած են առ Ս. Ժողովն Հռովմ, ըսելով որ Տէր Միքայէլի նահատակութենէն վեց տարի ետև Կարնոյ կողմերէն Բրգնիկ եկեր է (1713) Գրիգոր Վ. Լեհացի. (այս կող-

մերը գալուն երկրորդ անգամն է. առաջինը Թոգաղ է)։ Իսկ երբ հասաւ յամի 1718 Տէր Ստեփան Տրապիզոնցի աշակերտ Աբրահամ կաթողիկոսի, իր եպիսկոպոսութեան ժամանակ ինչպէս կը հաստատէ Գրիգոր Պետրոս Ը. կամ աշակերտ նոյն Գրիգոր Վ.ի Լէօպոլսեցւոյ ըստ այլոց։

Իսկ յամին 1717, Բրգնիկ կու գան Մխիթար Աբբայի աշակերտներէն Հ. Փիլիպպոս և Հ. Ղուկաս բայց շատ չեն կենար կը դառնան։

Այս ժամանակ կը յիշուի Մինաս Վ. Առաքելական միսիոնար որ կը նստէր Կ. Պոլիս, և թղթեր գրած է Բրգնիկ Տէր Աստուածատուր և Տէր Գասպար քահանայից. կ'ըսէ որ Ծրժղենցի Տէր Անդրէաս և Տէր Գրիգոր դաւանութիւն առին իր առջև, ինչպէս յանձնարարած էին իրենք. կը յիշէ եպիսկոպոս մը Կ. Պոլիս, որ լատին Վիքարն ըլլալու է։ Կ'ողջունէ Աբել եպիսկոպոս մը, բայց չյայտներ ով ըլլալը։ Գրիգոր Պետրոս Ը. կը համարի Առաջնորդ Սեբաստիոյ, այդ անունով չկայ եպիսկոպոս Սեբաստիոյ, և թուի թէ չէր ի բաժանելոց զոր պիտի յիշեմ միւսանգամ։

Այս ժամանակները մեծ ձախորդութիւն մը կը պատահի Սեբաստիա, ուր կային 60–70 տուն կաթողիկեայք, որոնք կ'երթան կը միանան ազգին միւս մասին հետ և կը մնան միայն 8 տուն։

Գ. – Թոգաղ և Բրգնիկ

Յամին 1718 Բրգնիկ կու գայ Տէր Յովհան Վ. որ կը մնայ 24 տարի մինչև իր մահը յամին 1742։ Յովհան վարդապետէն իբր երկու տարի վերջ Բրգնիկ և լաւ ևս Թոգաղ եկան Տ. Յակոբ Սեբաստացի և Տ. Յովհաննէս Թոգաղցի։ Եւ ահա Կարնոյ առաջնորդը Խաչատուր անդադար խռովութիւն կը յուզէր, որով շատեր բանտուեցան և մեծամեծ տուգանքներ տալու ստիպուեցան. անգութ առաջնորդը չէր դադրէր իր հետապնդումները առաջ վարելու. 1722ին հալածումը սաստկացաւ և տարածեցաւ Կարին, Բասեն, Բաբերդ, Երզնկա, Թոքաղ եւյլն։ Վերջին

քաղաքին մէջ բռնուեցան և բանտ դրուեցան Տէր Յակոբ և Տ. Յովհաննէս և 1500 դահեկան տուգանք տալով հազիւ ազատեցան։

Իսկ 1742ին կու գայ Հ. Անդրէաս Անտոնեան կրօնաւոր որ երկու տարի Բրգնիկ մնալով կը վարէր հոգւոց հոգը, երբ մեկնեցաւ մնաց հոն միակ խորոխոնցի Տէր Աստուածատուր ծերունին։ Եւ որովհետև մեռած էր Տէր Գասպար, տեղը ձեռնադրել տուին Ս. Նշան ուրիշ մէկ Բրգնիկցի, որ անուանեցաւ նոյնպէս Տ. Գասպար։

Յամին 1754 Հ. Անդրէաս նորէն դարձաւ Բրգնիկ և Տ. Ստեփան Գաղատացի միաբան Զմմառի՝ ի Թոգատ 1756ին, և 1757ին կու գայ այն կողմերը Հ. Անտոն Տէր-Յարութիւնեան Տփխիսեցի կրօնաւոր Անտոնեան. որուն վրայ շատ գովեստներ գրուած է Բրգնկայ և Թոգատի պատմութեան մէջ, ականաւոր անձ էր և գեղեցիկ կարգերով պայծառացուցեր է Բրգնիկ և Թոգատ։

Այս ժամանակ մեծ վէճ մ'ելաւ Կիլիկիոյ հայրապետին և Կ. Պոլսոյ առաքելական փոխանորդին մէջ, թէ Թոգատ և Բրգնիկ այս երկուքէն որուն կը պատկանին. խնդրոյն սաստկութիւն տուողն էր Գեր. Աթանաս Մէրաս կամ Տայի Սիմոնեան արքեպիսկոպոս տիտղոսիւ Հռոմկլայի 1758–1779 Կ. Պոլսոյ կաթողիկէ հայերուն փոխ-Վիքարը որ գժտած էր Հ. Անտոնի հետ։ Այս թեմական իրաւարանութեան վէճը տևեց գրեթէ քսան տարի, և բաւական շփոթ ընթացք մը տեղի ունեցաւ նոյն միջոցին։

Յամին 1759 Բրգնիկի համար քահանայ ձեռնադրուեցաւ Տ. Գրիգոր Փրղենց, որ ունէր երկու որդի՝ Փանիկ և Միքայէլ, և այս Միքայէլի որդիք էին Գրիգոր, Գաբրիէլ, Տ. Դաւիթ վարդապետ (միաբան Զմմառի) և Յուսիկ։ Նոյն տարին ձեռնադրուեցաւ նաև Տէր Առաքել Անանեան։

Տփխիսեցի Հ. Անտոնն որ այնչափ սիրելի էր Սեբաստիոյ կողմերն, և Թոգատու և Բրգնկայ ժողովուրդը զինքը կը յարգէին մեծապէս, իր հակառակորդներն հնարք մը գտան զինքն այն կողմերէն հեռացնելու։ Տ. Գասպար. Տ. Գրիգոր և Տ. Առաքել՝ Բրգնկայ քահանայքը և յիսուն աշխարհականք, 1764ին կը գրեն Սրբազան Քահանայապետին

կղեմէս Ժ.Գ.ի և կը գովեն Հ. Անտոնն, իր բարքը, վարքն և վարդապետութիւնը։

Բայց նոյն 1764ին դարձեալ եկաւ Թոգատ ծանուց Միքայէլ կաթողիկոսին, և անոր հրամանաւը գնաց Հռոմ 1769ին։

Յամին 1766 կը վախճանի Տէր Գասպար և Թոգատ, կ'երթայ Հ. Ամբրոսիոս կրօնաւոր Անտոնեան։

Նաև Աթանաս եպիսկոպոս կը ճամբէ Մըրլեան (Եաղլըգճեան) Անտոն վարդապետը։ Բայց ոչ Թոգատ և ոչ ալ Բրգնիկ ընդունելութիւն գտնելով, շուտով կը դառնայ կ'երթայ Կ. Պոլիս։ Այն ատեն իր տեղը կ'երթայ Հ. Յակոբ Զամչեան և կը մնայ հոն ժամանակ մը. Թոգատ կու գայ նաև Յովհաննէս վարդապետ Գարասարցի, որ վեց տարի Զմմառ բնակելով լաւ կրթուած և կարգաւորուած էր։ Ասոր գալէն ետև Հ. Ամբրոսիոս գնաց Կ. Պոլիս. իսկ Յովհաննէս վարդապետ մնաց իր առաքելութեան մէջ վեց տարի, և յամին 1774 գնաց Հռոմ ուխտ ընելու համար կաթողիկոսին հրամանաւ։ Եւ իր մեկնելէն առաջ հասաւ Յովսէփ վարդապետ Կ. Պոլսեցի՝ միաբան Զմմառի, որուն վրայ եաքէն։

Կիւրին

Այս փոքր քաղաքին հայերն այլ և այլ կողմերէն հաւաքուած են և զանազան ժամանակ. ոմանք կը նոյնացնեն զայն մետասաներորդ դարուն յիշուած Փաւստանէք, այսինքն Տանէնքսա այրի ամրոցին հետ, որուն վրայ խօսեր եմ։ Տեղւոյն այժմու ժողովուրդը մասամբ եկած են Դերջան գաւառէն, և կը կոչուին Թերջենցիք կամ Թերճեններ։ Ոմանք Երասխաձորի Պայրում–Չայ ձորձորէն և կը կոչուին Պայրմչացի կամ ըստ տեղական արտասանութեան Պայամչացի։ Ոմանք հին Կարկառ ամրոցէն, և իրենց նախնի բնակութեան այժմու հնչման համեմատ կը կոչուին Կերկերեան։ Չեմ երկրայիր որ Փօջունենք են Փաջունիք, որ

կ՚երևի Քաջբերունիքէն եկած են, և Մարանները՝ Մարանդունիքէն, Դաճմաններ՝ հին Պարսից հիւսիսի գաւառներէն, Նահապետներ և այլք։

Կիւրին ընաւ քահանայ կամ վարդապետ մը չէ եկած կաթողիկէութիւն քարոզելու. բայց կային անոնցմէ. և ընական հետեւութիւնն է՝ որ իրենք հնուց ի վեր կաթողիկէ էին, այս կը հաստատի նաև այնու որ Թերճեններ շատոնց նոյն դաւանութեան մէջ կը գտնուէին։ Աբրահամ կաթողիկոս իր տումարին մէջ կը յիշէ 1741ին Աբարկոս (Աբբա Մարկոս) Թէրճէնեան՝ և իր հայրն, և մեծ հօրը (պապուն) Մ. Յարութիւնի հոգւոյն պատարագ կը մատուցանէր. նոյնպէս կը յիշէ Մ. Մանուկ Տէվէճեան, և ասոնց կաթողիկէ ըլլալուն թուական մը չէ նշանակուած։ Նոյնպէս Նահապետներ (Կարապետենք), Սարաֆենք Սիմաւոններ հին ընտանիք են. կան նաև Հէքիմներ որ շատ հին ցեղ մ՚է որոնցմէ ոմանք Հալէպ գաղթեր են, և անկից մաս մը Լիբանան եկեր բազմացեր են, ոմանք պահեր են իրենց նախկին մականունն Բժշկեան, արաբերէնի թարգմանելով որ է Պէյթ–Թապիպ, և ուրիշներ առաջին անգամ Լիբանան եկողին անունով կը կոչուին Պէյթ – Մուրատ։ Ընդունած են Մարոնի ծէսն և կը յիշեն իրենց հայ ծագումն։ Վերը յիշուած Նահապետեան գերդաստանին պետն Յովսէփ Կիւրինցի որ կը յիշուի Զմմառ վանքին մշտնջենաւոր պատարագաց գլուխն (իբր 1760)· ինքը վաճառականութեամբ Բերիա կ՚երթար և կը դառնար։ Ասոնք ամենը յայտնի կը ցուցնեն որ նոր սկսուած կաթողիկէութեան վրայ գաղափար մը չկայ։

Միայն Պայրամ–Չայցի տոհմին մէկ մասին մէջ կայ աւանդութիւն մ՚առանձնական հետեւեալ կերպով։ Թէ նոյն տոհմէն (որ այժմ 300 տնէն աւելի են) Յարութիւնի որդին Եղիազար, որ կը յորջորջուի եղեր Կոծիկ Աղըզար, և վաճառականութեան կը պարապի եղեր, Տրապիզոն կ՚երթար կու գար։ Ժամանակն անծանօթ է, Բրգնկայ պատմութիւնը՝ ընդունած բերանացի տեղեկութեանց համեմատ, յարմարցուցեր է այն ժամանակին, յորում Աբրահամ վարդապետ Արծիւեան՝ արքեպիսկոպոս Հալէպի՝ կը վարէր Տրապիզոնի առաջնորդութիւնը 1714–1717 տարիներու միջոցին։ Եղիազար անոր քարոզները լսելով և լուսաւորելով,

եկեր նաև իր եղբայրները համոզեր է, որոնք էին Մ. Աւետիք Պայամշա, Ալեքսանդրոս և Տիշտիշ, որոնցմէ սերած են Եղիազարենք, Պայամշոնք, Աղեքսանդրենք, Տիշտիշենք և Խնկիկենք, Մ. Աւետիքէն։ Ասոնց մէկ երկուքը կը յիշէ Աբրահամ կաթողիկոս իր պատարագի տումարին մէջ՝ 15 Մայիս 1740ին որոնք նուէրներ ղրկած էին իրեն, և են Մ. Աւետիք, Մ. Յակոբ, Մ. Մանուկ, Մ. Աղեքսանդրոս Նոր— Արև և Յովհան Օրհնեալ. վերջապէս ասիկա տոհմի մը պատմութիւնն է։ Բայց կայ նոյն աւանդութեան մէջ կարևոր կէտ մ՚որ մտադրութեան արժանի է։ Այսինքն երբոր եղբայրներն իմացան Եղիազարին միտքն, քննեցին միայն իրենց Տիշտիշ եղբօրը ձեռքով, որ տիրացու էր և կարելի եղածին չափ հմուտ Երրորդութեան և Մարդեղութեան խորհուրդներուն և եկեղեցւոյ յօրինուածութեան և ննջեցելոց վրայ. համաձայն գտան անոր բանձներն իրենց գիտցածին հետ, և միաբանեցան անոր հետ։

Այս ամենքը չունէին իրենց վրայ հսկող քահանայ մը ժամանակին կաթողիկէ նուիրապետէ կամ եպիսկոպոսէ մը կախուած, և հալածանքը կը նեղէր զիրենք, և մեծ երկպառակութիւն մը կը տիրէր. մկրտութիւն, թաղումն և պսակ տեղւոյն քահանայից քով կ՚ըլլային։ Առաջին անգամ իրենց համար քահանայ ձեռնադրուեցաւ յամին 1782 Յովհան Կիւրինցի, Սեբաստիոյ Հրեշտակապետի վանքն, Աբել եպիսկոպոսէն. թէպէտ Բրգնկայ պատմութիւնը կը համարի թէ Սեբաստիոյ առաջնորդ էր, բայց ինձ հաւաստի չի թուիր, զի այն ժամանակ Եղիազար էր Սեբաստիոյ արքեպիսկոպոսը։ Կրնայ ըլլալ որ Աբել Հրեշտակապետ վանքին առանձին առաջնորդն էր, և ինչպէս կը տեսնուի իրեն վրայ եղած խօսքերէն՝ կաթողիկեայ։ Այս Տէր Յովհանէն սերած են Ոհանենք՝ որ այժմ քանի մը տուն կը կազմեն։

Եղիազարենք որդեգրած էին իրենց Մարանեան խաչիկն որ Լիբանան Զմմառ ղրկուելով քահանայ կը ձեռնադրուի յամին 1764 և Կիւրին դառնալով Տէր Յովհաննին հետ խորհուրդ կը մատակարարեն գաղտուկ և իրենք պահուած կը մնան, զիմադրաց երկիւղէն։

Նահապետեան Յովսեփայ որդին Աբրահամ, Զմմառ կ'երթայ և 16 *Մայիս* 1765*ին քահանայ կը ձեռնադրուի Միքայէլ կաթողիկոսի հրամանաւ՝ աթոռակալ Բարսեղ եպիսկոպոսէն։ Կը դառնայ հայրենիք և հոգ կը տանի ժողովրդեան Տ· Խաչիկի հետ ամենայն փութաջանութեամբ բայց շատ դժուարութեանց մէջ կ'իյնան։ Ահա յանկարծ հիւանդութիւն կը պատահի, մեռելներ կ'ըլլան, բայց հայ քահանայք չեն թաղեր զանոնք, խնդիրը կը ծանրանայ և կառավարութեան միջամտութեամբ կը ստիպուին թաղել։ Խնդիրը կ'ելլէ Սեբաստիոյ կուսակալին ատեանն, և նա սուրհանդակ կը ճամբէ Կիւրին, և երկայն բարակ քննութենէ ետև կ'որոշուի որ կաթողիկէ քահանայք մկրտեն և թաղեն իրենց կողմն եղողներն, սակայն վճարեն առաջնորդական տուրքը։*

Եւ որովհետև վաճառականութեան համար Սեբաստիա կը յաճախէին, այս առթիւ ևս շատ նեղութիւններ կրեցին։ Ուստի կաթողիկէ իշխանք ապաստանեցան Եօզղաթի Չափան-Օղլու անուանեալ պետոյ, ինչու որ Կիւրինն իրենց կը վերաբերէր։ Հոն մեծ դատ եղաւ հայ ազգին երկու մասանց մէջ, և կաթողիկեայք նպաստաւոր ելան և յաջողութեամբ դարձան։ Եւ այնուհետև մնաց Տէր Աբրահամ հանդարտ իր պաշտաման մէջ մինչև 1828, *և ի խոր ծերութեան հանգեաւ ի Տէր սրբակրօն վարքով։*

Իրեն օգնական եղած են հետզհետէ Տէր Խաչիկ Մարանեան. նոյնպէս Զմմառէն Թոփալցիք, Տ· Բարսեղ Գըլըճեան և Տէր Մատթէոս Փազանճեան, և ապա Տէր Պետրոս Հիւրմիւզեան Կիւրինցի և վերջապէս Տ· Յակոբ Ճգնաւորեան, որ յամին 1828 *փոխադրուեցաւ Սեբաստիա ուր և հանգեաւ ի Տէր։*

Գ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ՎԻՃԱԿԻՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆԵՐՆ

Թեմական իրաւաբանութեան նկատմամբ յուզուած խնդիրը վերջ գտեր էր և 1769ին տրուած վճռով որոշուած էր որ Թոգատ և Բրգնիկ կը վերաբերին Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռոյն: Ուստի Միքայէլ Պետրոս Գ. սահմանեց, որ ամբողջ Սեբաստիոյ վիճակն ըլլայ թեմ հայրապետական: Եւ յամին 1774 իրեն փոխանորդ կամ տեղապահ կարգեց Կ. Պոլսեցի Յովսէփ վարդապետը: Սա իր հետն առնելով Բիլիսցի Տ. Օգոստինոսն, երկուքն ևս միաբանք Զմմառի, հասաւ Թոգատ, Գարասարցի Յովհաննէս վարդապետին անկից մեկնելէն առաջ:

Այն հռչակաւոր վճռէն ետև ևս Գեր. Աթանաս եպիսկոպոսի կողմէ տակաւին նոր դժուարութիւններ մէջտեղ կ՚ելլէին. յամին 1777 Ապր. 19ին տրուած վերջնագոյն որոշում մը խնդիրը կ՚աւարտէր բոլորովին, թէ և ժողովրդեան մէջ կը մնար կողմնակցութիւն, որ հետզհետէ վերցուեցաւ:

Յովսէփ վարդապետ վախճանեցաւ 1782ին, և այն կողմերը մինչև 1791 մնացին առանց առաջնորդի:

Միքայէլ կաթողիկոս յամին 1774 կը ձեռնադրէ արքեպիսկոպոս Ատանոյ Բիլիսցի Գրիգոր վարդապետը և խնդրով և հաճութեամբ Ս. ժողովոյն առաքեց զինքը Կարնոյ կողմերը քննելու այն ոչ միացեալ կեղծ եպիսկոպոսին գործերն և պէտք եղածը կարգաւորելու: Գրիգոր եպիսկոպոս ժամանակ մը կեցաւ Կարնոյ կողմերն, և այն քննութիւնը աւարտելէն և իրեն յանձնուած ուրիշ գործերը կարգի դնելէն ետև 1779ին այցելութեան գնաց նաև Թոգատ և հասաւ Բրգնիկ, և տեղւոյն քահանայից ընթացքէն, որոնք էին Տէր Յակոբ Արևեան, և Տէր Պետրոս, գոհ չըլլալով, ծանոյց Միքայէլ կաթողիկոսին պէտք եղած դարմանները և մեկնեցաւ:

Այս միջոցին, այսինքն 1786ին, պատարագաց տումարին մէջ ի Զմմառ կայ գրուած անկատար մարդահամար մը Կիլիկիոյ պատրիարքութեան ժողովրդոց. ուր Սեբաստիոյ նահանգին համար նշանակուած է հետևեալ ցուցակը

Սեբաստիա	70	2000 *անձ.*
Թոգատ	700	
Բրգնիկ	900	
Կիւրին	330	

Հոս շատ ցաւալի է տեսնել՝ որ Սեբաստիա փոխանակ 60, 70 *տներու կը ներկայացնէ միայն* 70 *անձ. Թոգատի բնակիչն ևս նուազած կը տեսնուի, ուր քիչ մ'առաջ գրուեցաւ որ* 200 *տուն կար. Բրգնիկ ևս նուազութիւն մը կը տեսնուի, եթէ առնք վրիպակ մը չըլլան։ Իսկ Կիւրնոյ ժողովուրդը յամին* 1795*ին եղեր են* 332։

Յովսէփ վարդապետ

Ութ տարի առաջնորդ միայն պատճառն էր, նոյն կողմերու և յատէտ Բրգնկայ քահանայից և ժողովրդեան շփոթ վիճակը։ Միքայէլ կաթողիկոս և մանաւանդ իր յաջորդը՝ Բարսեղ, շատ ջանք ըրին, նաև Ս. Ժողովքը յորդորներ գրեց, բայց առ ժամս չեղաւ հանդարտութիւն։ Վերջապէս Գրիգոր Պետրոս Ե. կաթողիկոսական փոխանորդ անուանեց Զմմառի միաբաններէն Յովսէփ վարդապետն, որ նոյն ժամանակ Կարին կը գտնուէր և որոշուած էր կառուցանելիք ընծայարանին համար ժողովարարութեան երթալու։ Յովսէփ վարդապետ եկաւ իր նոր պաշտօնատեղին. և շատ աշխատութիւններ ունեցաւ մանաւանդ Բրգնիկը կարգաւորելու. երկու տարի վարեց իր առաջնորդութիւնը. քիչ շատ բարեկարգութիւններ ըրաւ, և ծանուց պէտք եղածներն և միանգամայն խնդրեց Գրիգոր կաթողիկոսէն որ նոր և յարմար քա-

հանաներ զրկէ, և իր տեղն ուրիշ փոխանորդ մը, հրաման տալով որ ինքն իր նախկին պաշտաման երթայ։ Եւ հաճութեամբ նորին Գեր- երջանկութեան մեկնեցաւ, և այլևայլ տեղեր շրջելով հասաւ Կ. Պօլիս և մնաց հոն ժամանակ մը, և յամին 1808 հանգեաւ ի Տէր։

Յովհան. վարդապետ Կիրակոսեան Ենճի–խանցի

Կաթողիկոսական փոխանորդ անուանեցաւ Յովհան վարդապետ Կիրակոսեան Միաբան Զմմառի յամին 1793 որ հետն ունենալով Ան- տոնեան կրօնաւորներէն Հ. Ստեփան՝ Թոգադի համար և Հ. Փիլիպպոս՝ Բրգնկայ, ճամբայ ելաւ։ Կիրակոսեան վարդապետին համար մեծամեծ գովեստներ գրուած են Բրգնկայ պատմութեան մէջ, ուր կը յիշուի իր փութաջանութիւնն և եռանդը հոգւոց փրկութեան համար, բարեպաշ- տութիւնն և մանաւանդ ջերմեռանդութիւնն առ Տիրամայր կոյս Աս- տուածածին։

Հալէպի ճամբով հասաւ Կիւրին, և հոն կեցաւ մէկ քանի օր, և ըրաւ պէտք եղած բարեկարգութիւնը. հաւանութեամբ գլխաւոր իշխա- նաց և ժողովրդապետ Տեառն Աբրահամու՝ կարգեց իրենց գահերէց մը, Թէրճէնեան Եղիա, և որոշեց իրեն երեք խորհրդակից, որ տեղւոյն գործերը կարգի դնեն, և այս եղաւ 1793 Նոյեմբերին։ Յիշեցուց իրենց պարտքերը նկատմամբ հայրապետական Աթոռոյն և ամենքն յանձնառու եղան կատարել իր որոշումներն, բայց երբ Զափան–Օղլու Կիւրին եկաւ, որ երթայ Ալպստանն առնու, նորէն տարաձայնութիւն մը պատահեցաւ։

Յովհան վարդապետ Կիւրինէն մեկնելով գնաց Թոգադ ուր կային Հ. Ռափայէլ Անտոնեան կրօնաւոր և Տ. Օգոստինոս միաբան Զմմառի, որ Հ. Ստեփանին հետ յորդորեցին որ Հ. Ռափայէլ վանք դառնայ՝ համաձայն հրամանի կաթողիկոսին, և գրութեան իր Աբբահօր. Յովհան վարդապետ եւս ստիպեց. շատ մը դժուարութենէ ետև վերջացաւ այս գործը։ Փոխանորդը շատ մը բարեկարգութիւններ ըրաւ թէ Թոգադ և

թէ Բրգնիկ։ Սահմանեց նաև քահանայից և առաջնորդին պատարագաց թոշակը․ նոյնպէս կաթողիկոսական աթոռին տրուելիք տասանորդն, որ ամեն ազգաց քով հասարակ է։ Կարգաւորեց նաև տեղական առանին գործերն, և խաղաղութիւնն հաստատեց որչափ կարելի էր։ Եւ յամին 1811 վանք կոչուեցաւ ըստ կամաց կաթողիկոսին և Զմմառ գնուող եպիսկոպոսաց խնդրովն և համաձայնութեամբ․ և յամին 1812 եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Դամասկոսի տիտղոսիւ․ Զմմառ մնաց այնուհետև և իր կեանքն կնքեց և հանգեաւ ի Տէր սրբակրօն վարքով (12 Յուլիս 1821)։

Յարութիւն Ծ. վարդապետ Շիրինեան,

Յովհան վարդապետին փոխանորդութեան ժամանակ եկած էր Թոգաթ Տ․ Յարութիւն Շիրինեան միաբան Զմմառի՝ Գաղատացի։ Յարութիւն վարդապետ տուաւ իրեն գաւազան վարդապետութեան, և հայրապետական հրամանաւ կարգեցաւ կաթողիկոսական փոխանորդ, յամին 1811։ Իր ժամանակ այն կողմերն եկան Տ․ Բարսեղ Գըլըճեան (1812ին) և Տ․ Միքայէլ Տ․ Աստուածատուրեան (1815) միաբանք Զմմառի։ Տէր–Աստուածատուրեան վարդապետ ըլլալով կարգուած էր Մեծաւոր կամ Աւագերէց Բրգնիկի, ինչպէս եղած էր իրմէ առաջ Հ. Փիլիպպոս Անտոնեան կրօնաւորն, կաթողիկոսական փոխանորդ Յովհան վարդապետի խնդրանաց համեմատ։

Թէ Հ. Փիլիպպոս և թէ Տ․ Միքայէլ յարգեցին կաթողիկոսական փոխանորդաց իշխանութիւնը․ Յարութիւն վարդապետ երկայն ժամանակ մնաց իր պաշտաման մէջ։ Իսկ Միքայէլ վարդապետ տասը տարի Բրգնիկ կենալէն ետև 1825ին վանք դարձաւ, և 1826 Մայիս 1ին ձեռնադրեցաւ տիտղոսաւոր արքեպիսկոպոս Կեսարիոյ․ և հինգ տարի վարեց Զմմառի ընծայարանին վերատեսչութիւնը։

Յամին 1828 կարապետ Պալաթցի Կ. Պօլսոյ պատրիարքին օրն ելաւ հայ կաթողիկեայց դէմ ընդհանուր հալածանք։ Հարկ չկայ ըսելու

թէ որչափ ծանր նեղութեանց հանդիպեցան խեղճերն, աքսոր, բանտարկութիւն, տուգանք, ժամանակին տանելուն չափ հարստահարութիւնք, զրկումն յընչից և գաղթականութիւն: Վերջապէս 1830ին ազատութիւն հրատարակուեցաւ, որով ազգին երկու հասարակութեանց բաժանումը պաշտօնապէս եւս ճանչցուեցաւ:

Հալածանքէն վերջը կ'երևի թէ կաթողիկէից թիւը նուազում մը կրած է: Կայետանոս Մորոնի իր ընդարձակ ուսումնական բառարանին մէջ Կիլիկիոյ պատրիարքական Աթոռին վրայ խօսելով Բրգնիկ և Սեբաստիա կը դնէ 70–80 տուն ուր երեք չորս քահանայք հրապարակական պաշտօն կը կատարէին: Ունէին եկեղեցի (Բրգնիկ). Թօգատ 160 տուն. և Կիւրին 40 տուն և մէկ քահանայ: Իբր 50–60 տարուան մէջ նշանաւոր թիւ մը պակսած ըլլալու է, զոր ես չեմ կարծեր և մանաւանդ Բրգնկայ համար. ինչու որ քիչ մը ետքը նշանակուած թիւը պէտք էր համարել արտակարգ աճում:

Միքայէլ արքեպիսկոպոս Կեսարիոյ

Յամին 1830 ներքին տարաձայնութիւն մը տեղի ունեցաւ, Աստարճեան վարդապետին այն կողմերը գալովը: Եւ որովհետև Յարութիւն վարդապետ Շիրինեան արդէն վախճանած էր, Գրիգոր Պետրոս Ջ. կաթողիկոսական փոխանորդ անուանեց Կեսարիոյ Միքայէլ արքեպիսկոպոսն որ 1831 Մարտ 3ին մեկնելով Զմմառէն հասաւ Թօգատ: Եւ իր ներկայութեամբ խաղաղեցաւ ամէն բան և վերցաւ ամէն խոչընդոտն և անդորրութեամբ վարեց իր պաշտօնը մինչև 1843: Իր իշխանութեան կը պատկանէին Սեբաստիա, Թօգատ, Կիւրին և Բրգնիկ. և իր առաջնորդութեան ժամանակ շինուեցան նոյն կողմերու եկեղեցիներն: Բրգնկայ Ս. Սարգիս եկեղեցին նորոգեցին ի հիմանց ընդարձակելով յամին 1834. Թօգատ կառուցաւ նոր եկեղեցի յանուն Ս. Կոյս Աստուածածնի Աւետման յամին 1838. Կիւրինի նոյնպէս յանուն Ս. Ա֊

տուածածնի յամին 1829. այս շէնքերուն ծախքը վճարեցին տեղեաց բարեպաշտ ժողովուրդք, թերեւ արքունի հրովարտակաց ծախքն ի բաց առեալ: Քանի մը տարի վերջը (1845) կառոյց Սեբաստիոյ Ս. Վլաս եկեղեցին բարեյիշատակ Յակոբ վարդապետ Ճգնաւորեան միաբան Զմմառի, քովի փոքրիկ առաջնորդարանին հետ իր անձնական ջանքովը և դրամով:

Հին ատեն Բրգնկայ քահանայք չէ թէ եկեղեցւոյ քով առաջնորդարանը կը բնակէին, այլ առանձին տեղեր՝ անոնք որ դրսէն կու գային. իսկ՝ նոյն գիւղէն եղողները իրենց տունը: Տփխիսեցի Հ. Անտոն առաջին անգամ հաւաքեց զիրենք եկեղեցատունն, և աստուածային պաշտաման համար բարեկարգութիւններ սահմանեց: Յովհան վարդապետ Կիրակոսեան իր առաջնորդութեան ժամանակ նոյները աւելի կարգաւորեց, նաև դպրոցի հոգ տարաւ: Մեծագոյն եղաւ այս ամեն իրաց վրայ Միքայէլ արքեպիսկոպոսի խնամքն, որ հետզհետէ եկեղեցիներ, առաջնորդարաններ և դպրոցներ կառուցանելու հոգ տանելով, բարեկարգեց և բարեզարդեց զանոնք՝ ի մասնաւորի Բրգնիկ, Թոգատ և Կիւրին:

Միքայէլ արքեպիսկոպոս յամին 1843 կաթողիկոսի ընտրութեան սինհոդոսէն Զմմառ կոչուեցաւ. ինքը ինչպէս 1840ին ըրած էր, այս անգամ ևս կ'ուզէր հրաժարիլ, բայց վերնագոյն մեծաւորներէ ստիպուած գնաց սինհոդոսին և ընտրուեցաւ միաբան քուէիւք Հայրապետ Տանն Կիլիկիոյ և ԻԲ տարի և կէս՝ վարելով աթոռին տեսչութիւնը և զարգացնելով զայն շատ կերպով, հանգեաւ ի Տէր սրբակրօն վարքով, և օրինակ բարի թողլով ամենուն, մանաւանդ իր սիրելի հոգևոր որդւոց միաբանից Զմմառի, ի մասնաւորի սրբութեան, իմաստութեան և խոհական վարչութեան մէջ:

Պօղոս վարդապետ Հաճեան

Միքայէլ արքեպիսկոպոս Սեբաստիոյ կողմերէն մեկնելէն առաջ տուաւ Հաճեան Տ. Պօղոսի գաւազան Ծ. վարդապետութեան և կարգեց զինքը փոխանորդ առժամանակեայ և տուաւ իրեն կոնդակ մը, որ է

Տ. Կ.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Միքայէլ արքեպիսկոպոս Կեսարիոյ պատրիարքական փոխանորդ և առաջնորդ Եւդոկիոյ և Սեբաստիոյ Յորմէ Քրիստոսաձիր օրհնութիւն և Յիսուսաւանդ ողջոյն որոց յանձն արկանեն զայս վիճակական կոնդակ մեր

Յայտ առնեմ ամենեցուն զի շնորհք շնորհողին Աստուծոյ, ամենազօր ազդեցութեան Աջոյն Միածնի և ներգործութեան պարգևք Հոգւոյն սրբոյ, որ անքուն արթնութեամբ հսկէ ի պահպանութիւն հօտին իւրոյ, և ըստ աւուրց և ժամանակի ընտրէ, զորս կամի, զոմանս յառաքելութիւն, զոմանս յառաջնորդութիւն և զոմանս ի վարդապետութիւն։ Նոյն շնորհք ամենակեցոյց զարթոյց զմիտս մեր և զկամս ի հոգ ոչխարացն Քրիստոսի կոչել ի վարդապետութիւն զԳերապատիւ սիրելի որդին մեր զՏ. Պօղոս Հաճեանց տալով նմա զծայրագոյն գաւազան վարդապետութեան։

Ուստի տուաք նմա յաւուր հրաշափառ տօնի Աւետման Սրբոյ կուսին, յեկեղեցւոջ Աւետման Աստուածածնի որ յԵւդոկիա, զգաւազան վարդապետական, և կարգեցաք լիակատար փոխանորդ մեր յԵւդոկիա, ի Սեբաստիա և ի Կիւրին, այսուհետև ունի իշխանութիւն վարել զամենայն վարդապետական արտօնութիւնս, ի հանդիսութեանս եկեղեցւոյ և արտաքոյ։ Եւ ի նախայիշատակեալ տեղիս և ի ժողովուրդս կարող է բացարձակ, ըստ իւրում խոհեմութեան, և ըստ յանցանաց յանցաւորաց

ըստ պիտելոյն կախակայել զկամակոր եկեղեցականս և բանադրել զաշխարհականս: Եւ ի պահանջել հարկի ունի հրաման տնօրինել զարգելս ամուսնութեան, յազգականութեան ի վեցերորդ աստիճանի բացառութեամբ և ի խնամութեան և ի կնքահայրութեան զչորրորդն բանալով:

Վասն որոյ և մեք յանձնելով զնոյն Տէր, Վարդապետ շնորհացն Քրիստոսի և ողորմութեան Բարձրելոյն, պատուիրեմք ամենեցուն հնազանդ լինել դմա և լսել քարոզութեան և հրամանաց դորա, ի փառս Փրկչին մերոյ և ի պարծանս եկեղեցւոյ. որով իսկ ամենեքին արժանի լինիջիք օրհնութեանն Աստուծոյ և մեր: Շնորհք ողորմութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

1843, ի 25 Մարտի յԵւդոկիա
Ի Մայր Եկեղեցւոջ Աւետման Ս. Աստուածածնի

Կաթողիկոսական Աթոռ ամբառնալէն վերջ հաստատեց Պօղոս վարդապետ Հաճեանի կաթ. փոխանորդութիւնը առանձին կոնդակով, որուն օրինակն է.

Տ. Կ.

Գրիգոր ծառայ Աստուծոյ և ողորմութեամբ նորին կաթողիկոս և պատրիարք Կիլիկիոյ և Ասորեստանի առաքելական օրհնութիւն աստուածային ողջունիւ խաղաղութեան:

Որոց միանգամ ակն արկանեն յայս մեր Հայրապետական նամակ, գիտութիւն լիցի թէ սովին զՅարգոյամեծար Պօղոս վարդապետ Հաճեանց կարգեցաք մեզ օրինաւոր փոխանորդ և մեծաւոր ժողովրդեան մերոյ, որք բնակին յաստուածապահ քաղաքն վիճակին մերոյ յԵւդոկիա, ի Բրգնիկ և ի Կիւրին: Եւ տուաք նմա իշխանութիւն և հրաման հոգ տանելոյ և կառավարելոյ զժողովուրդ յիշատակեալ քաղաքաց, եթէ ըստ հոգւոյ և եթէ ըստ մարմնական առաջնորդութեան, ըստ իւրում արթուն խնամոց խոհեմութեան և ըստ իմաստութեան մտացն: Եւ ինչ

ինչ ես առանձին գրովք հրամայեալ եմք նմա առնել, ուստի այսուհետև ինքն կարող է հրամայել և պատուիրել ամենեցուն ե՛թէ եկեղեցականաց և ե՛թէ աշխարհականաց։ Եւ ի պահանջել հարկին պատուհասել ըստ եկեղեցական կանոնաց կախակայութեամբ զանցաւոր եկեղեցականս և զապստամբ աշխարհականս բանադրանօք։ Եւ որ ոք հակառակ կայ հրամանաց և պատուիրանաց դորա, Աստուծոյ և մեր հակառակ և ընդդիմակաց համարեսցի։ Եւ որ լսէ և հնազանդի դմա Աստուծոյ և մեզ հնազանդ և լսող եղիցի։ Եւ շնորհք, ողորմութիւնն Աստուծոյ և Մեր առաքելական օրհնութիւն ի վերայ նորա։

1843 *Օգոստ.* 2

Ի Լիբանան ի վանս փոխման կուսին

Ի կաթողիկոսարանի մեր (*Ստորագրութիւն*)

Գրիգոր Ը. Պետրոս

կաթողիկոս Կիլիկիոյ Հայոց

Այս երկու կոնդակները բնագրէն օրինակած եմ բարեյիշատակ Յովհաննէս Հաճեան Կեսարիոյ արքեպիսկոպոսէն ընդունելով, որ նոյն Պօղոս վարդապետն է։ Բայց իր փոխանորդութիւնը կարճատև եղաւ։

Իգնատիոս Գալըպճեան արքեպիսկոպոս Ամասիոյ

Վասն զի 1844*ին Սեբաստիոյ նահանգին կաթողիկոսական փոխանորդ կարգուեցաւ Ամասիոյ արքեպիսկոպոսն, որ կը կոչուէր առաջնորդ Եւդոկիոյ, նոյն տարին Սեպտեմ.* 8/20*, Զմմառէն մեկնելով և Թոգաղ հասնելով վարեց իր պաշտօնը մինչև* 1852*։*

Գրիգոր կաթողիկոս գործունեայ կերպով սկսաւ աշխատիլ թեմերուն զարգացման համար, միանգամայն և Զմմառեան միաբանութեան յառաջդիմութեանն և առաքելութեանց ծաղկելուն։ Իր բարձր հրամանին համեմատ յամին 1848 *գնուեցաւ Թոգաղ Անալա թաղին մէջ եկեղեցւոյ*

և առաջնորդարանին կից ընդարձակ տուն մը պարտէզով, որ ունի առատ ջուր։ Նորոգեցին նոյն տունն և իրեն կից պարտէզն և կարելի եղածին չափ ձևաւորելով կարգեցաւ փոքր ընծայարան, Զմմառի կեդրոնական ընծայարանին օժանդակ ըլլալու համար։ Գնման, նորոգութեան և կարգաւորութեան ծախքերն եղան Զմմառի վանքէն, իբր հազար ոսկի։ Առաջին մեծաւորն եղաւ Յովսէփ վարդապետ Կիւլեան կարնեցի, որ կիւրինցի Աբրահամ վ. Կարատէլեանի հետ, քանի մը աշակերտներով հասաւ նոյն քաղաքն. և իր պաշտաման մէջ տարի մ'աւարտելէն առաջ հանգեաւ ի Տէր և իրեն յաջորդեց Աբրահամ վ. մինչև 1855։ Օգնական էր իրեն և դասատու Ներսէս վ. Հալէպլեան, և սոյնց աշակերտներէն ելան ութ քահանայ, որոնց մին է այս պատմութիւնը գրողը։ Ներսէս վ. ելաւ դպրոցէն 5 տարի պաշտօնը վարելէն ետև, և Աբրահամ վ. երեք տարի վերջը սրբակաց վարքով կնքեց իր կեանքը։

Փոքր ժամանակ մը պարապ մնաց նոյն ընծայարանն և ապա յաջորդ եղաւ 1856ին Ղևոնդ վ. Խորխոռունի Բրգնիկէն, որ Նաքութեան Պօղոս վ.ին հետ միաբանելով, Քօճաճուգ ըսուած տեղը գեղեցիկ եռայարկ վանք մը շինեցին ընդարձակ պարտէզի մէջ, ամենալաւ դիրքի մը վրայ։ Չորս տարի վերջը Ղևոնդ վ. փոխադրուեցաւ Մալաթիա գլուխ կարգուելով այն նոր առաքելութեան, զոր լաւ ծաղկեցուց։

Եւ որովհետև այս շէնքերուն և այլ գնումներու և գործոց համար կը մնային ծանր պարտքեր, որոնք մեծ մտադրութեան արժանի էին, հետևաբար անոնց հոգը յանձնուեցաւ կարող ձեռքերու և խոհական փութաջանութեամբ փոյթ տարուելով գործն ելաւ իր դժուարին վիճակէն։

Գ. — ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻՆ

Սեբաստիոյ վիճակը Թոգաթով և Բրգնիկով՝ ինչպէս առաջ ևս ըսի, մինչև 1850 համարուած էր իբր սեպհական թեմ կաթողիկոսական կամ պատրիարքական։ Իսկ յամին 1851ին որոշուեցաւ որ Թոգաթ առանձին և Սեբաստիա Բրգնիկով և Կիւրնով առանձին թեմ ըլլան։ Եւ համաձայն այս որոշման 23 Մայիսի 1858ին Ներսէս Վ. Հալէպլեան Թոգաթցի ձեռնադրուեցաւ արքեպիսկոպոս Սեբաստիոյ Գրիգոր Պետրոս Ը. կաթողիկոսէն, Զմմառ վանքին մէջ, որուն ինքն ևս միաբան էր։ Միայն Կիւրին առ ժամն առանձին մնաց կաթողիկոսին կողմանէ փոխանորդի մը տեսչութեան ներքև, անշուշտ առժամանակեայ կերպով։

Տարի մը վերջը (15 Օգոստ. 1859) Անտոնեան կրօնաւորներէն Հ. Արսէն Աւագ–Վարդան–Անճարակեան ընտրեցաւ և կարգեցաւ արքեպիսկոպոս Թոգաթի, կամ ինչպէս ինքը կը ստորագրէր արքեպիսկոպոս Նէոկեսարիոյ ի Թոգաթ։ Իրեն յանձնուեցաւ առժամանակեայ կերպով նաև Պօճաճըզի ընծայարանին վարչութիւնը։ Սակայն նախկին պարտուց մնացորդները չջնջանելէն զատ, նորեր վրայ դրուած էին. զի նորին արհիապատուութեան վստահութիւնը լաւ չէր գործածուած։ Այն ատեն Գերերջանիկ կաթողիկոսը նոյն ընծայարանին վարչութիւնը գնելով դարձեալ ուղղակի վանքին տեսչութեան ներքև, գործակատար կարգուեցան միաբանութեան կողմանէ Գրիգոր վարդապետ Էնֆիյէճեան և Յովհան Աղա Մաթոսեան, որոնք պարտքերը թեթևցուցին։ Եւ Յովհան Աղա իր առատաձեռնութեամբ պարտէզն ամբողջ պատեց բարձր պատով և հեռու տեղէ առատ ջուր բերաւ ընդարձակ պարտէզին համար։

Արսէն արքեպիսկոպոս ի գործ դրաւ ինչ ինչ օգտակար կարգադրութիւններ. երկայն ճանապարհորդութեան ձեռք զարկաւ թեմին օգտին համար։ Ունեցաւ նաև դժուարութիւններ. վերջապէս 17 Յուլիս 1865ին հրաժարեցաւ աթոռէն, առանձնացաւ Հռոմ Անտոնեանց վանքն, Ա-

նուանեցաւ արքեպիսկոպոս Տարսոնի և ի Հռովմ հանգեաւ ի Տէր։ Արդէն արքեպիսկոպոսին հրաժարելէն ետև, Կեսարիոյ Յովհաննէս արքեպիսկոպոսն անուանեցաւ արտաքոյ կարգի քննիչ Թոգադի վիճակին և գնաց հոն։ Բայց Գրիգոր կաթողիկոսի առ Աստուած փոխելէն ետև (1866 Յունուար 8) նոյն տարւոյն առջի քառորդին դարձաւ եկաւ Զմմառ, նոր հայրապետի ընտրութեան առթիւ։

Իսկ Ներսէս արքեպիսկոպոս ամէն ջանք կ'ընէր իր թեմին յառաջադիմութեան համար. շատ մը նամակներ գրեց Սեբաստիոյ հին և նոր վիճակին և Վլաս եպիսկոպոսապետին վրայ, զորոնք յօրիներ էր այս գործոյս գրիչը. քիչ շատ յաջողութիւններ ալ ունեցաւ։ Եւ այն ժամանակները թեմին կարևոր գործոց համար Զմմառ կը գտնուէր, ուսկից (27 Ապրիլ 1865) գնաց Կ. Պօլիս. և հարկ եղաւ ժամանակ մը յապաղել հոն. բայց երկայն չտևեց և հանգեաւ ի Տէր 1866ին։

Այլ և նոյն կողմերը պարապեալ էին իրենց հովիւներէն և չէր դիւրին նոր հովիւներ կարգել այն պարագայից մէջ, բայց և կարելի չէր անխնամ թողուլ խեղճ ժողովուրդը, ուստի առ ժամն նորէն հին կերպը ձեռք առնուեցաւ։

Իգնատիոս արքեպիսկոպոս Ամասիոյ՝ կաթողիկոսական փոխանորդ

Աստի նորընտիր կաթողիկոսն Անտոն Պետրոս Թ. անուանեց կաթողիկոսական փոխանորդ կամ տեղապահ երկու աթոռոց և Կիւրնոյ միանգամայն՝ Ամասիոյ Իգնատիոս արքեպիսկոպոսն, որ իր յորդորմամբ կառուցանել տուաւ Կիւրնոյ երկրորդ եկեղեցին յանուն Յիսուսի Փրկչին, բայց իր պաշտօնը չտևեց երկայն։

Յովհաննէս վ. Բեռնարդոսեան

Իր տեղը 1868ին կաթողիկոսական փոխանորդ կարգեցաւ Յովհաննէս վ. Սեբաստիոյ վիճակին, այսինքն նաև Թոգաթի, Բրգնկայ և Կիւրնոյ։ Նոյն ժամանակ ազգային շփոթութիւնը մէջտեղ ելլելով, հարկ եղաւ նոր փոփոխութիւն մ՚ընել։

Գեւորգ Խորխոռունի արքեպիսկոպոս Մելիտինոյ

Յամին 1870 իբրև սահմանակից եպիսկոպոսի՝ Գեւորգ գերապայծառի յանձնուեցաւ նաև Սեբաստիոյ Աթոռոյն կաթողիկոսական փոխանորդութիւնն, որ երբեմն իր թեմը կենալով, երբեմն իր փոխանորդական տեղը շրջելով՝ մատակարարեց զայն, և վերջապէս հրաժարեցաւ նոյն փոխանորդութեան պաշտօնէն 1876ին։

Կարապետ վ. Գատիֆեան

Նոյն տարին կաթողիկոսական փոխանորդ անուանեցաւ Կարապետ վարդապետ Գատիֆեան Թոգաթցի։ Բայց ԺԱ. ԺԲ տարուան (1865–1877) փորձը յայտնի ցոյց տուաւ որ փոխանորդով վարչութիւնը մեծ զարգացում մը յառաջ չէր բերեր. ուստի պարագայից յարմարելուն որոշուեցաւ դարձեալ դառնալ ու կարգել թեմական եպիսկոպոս, որ շատ առաւելութիւններ ունի վարչական գործոց մէջ։

Թեմական եպիսկոպոսներ: Կարապետ Գատիփեան եպիսկոպոս Սեբաստիոյ և մատակարար Եւդոկիոյ

Կաթողիկոսական հրաւիրանաց համեմատ թեմականներէն քանի մը եկեղեցական անձանց վրայ բարի վկայութեան ցուցակ մ'ընդունելով, վերջապէս ԺԱ.–ԺԲ. տարի պարապութենէ ետև, պատրիարքական սինհոդոսով ընտրութիւն եղաւ եպիսկոպոսի յամին 1877: Յորջորջման համար՝ մտադրութիւն կար անուանել գնորընտիրը մէկ անուամբ արքեպիսկոպոս Սեբաստիոյ: Բայց Հալէպի Գրիգորիոս արքեպիսկոպոսին խորհրդածութեան համեմատ, պատրիարքութեան մէջ արդէն սահմանուած որոշում մը չնուազեցնելու դիտամբ, սահմանեցին որ նոր ընտրուած անձը կոչուի եպիսկոպոս Սեբաստիոյ և մատակարար Եւդոկիոյ: Հաստատութիւնն եղաւ Օգոստոս 14ին, և ձեռնադրութիւնը 23 Սեպտեմբերի՝ նոյն տարին, և ընտրեալն էր Կարապետ վ. Գատիփեան: Սա ծերացած ըլլալով նոր գործերու չկրցաւ ձեռք զարնել, այլ ջանք ըրաւ եղածը պահպանելու: Ետքէն աւելցաւ իր տկարութիւնն, որուն համար յարմար տեսաւ հրաժարիլ իր ծանր պաշտօնէն 1890ին. առանձնացաւ Թոգաթ իր հայրենիքն ուր և հանգեաւ ի Տէր (1897):

Սահակ վ. Հաճեան Երզնիկցի

Յաջորդեց Սահակ վ. Հաճեանց, Թոգաթու Անարատ Յղութեան ընծայարանին աշակերտ, և ընկերակից այս աշխատութիւնը գրողին. ձեռնադրեցաւ 8 Ապր. 1892, և նոյն տարին (Մայիս 30) ընդունեցաւ յորջորջումն՝ Արքեպիսկոպոս Սեբաստիոյ և եպիսկոպոս Թոգաթի: Ինքը գործունեայ անձ և անխոնջ աշխատող ըլլալով, երկու անգամ գնաց Եւրոպա: Գնեց ի Կ. Պօլիս տուն մը բոլոր Թեմին պիտոյից համար:

կանգնեց ի Բրգնիկ աղջկանց փառաւոր դպրոց մը. գիւղն ունէր վարժարան մանչերու համար, զոր լաւ ևս ձեւաւորեց, ու առաջնորդարանն և եկեղեցին նորոգեց։ Կիւրին՝ Թուփիկեան Մարտիրոս էֆէնտիին Սըմըգլի Թաղին մէջ պարգեւած տունը կարգաւորելով՝ աղջկանց դպրոց ըրաւ, և եկեղեցւոյ ցրիւ կալուածոց գնով վաճառանոց (պէզ–խաթան) մը գնեց. Թոգատի եկեղեցին և առաջնորդարանն նորոգեցին Մաթոսեան Յովհաննէս պէյի հետ, որ վերը յիշուած Յովհան աղային եղբօրորդին է կէս առ կէս ծախքը վճարելով, նաև եկեղեցւոյ մեծ դուռը փառաւոր կերպով շինելով բոլորովին նոր։ Յիշեալ Յովհաննէս պէյը նուիրեց նաև առատ գումար, Տարտազանեան Ներսէս Ծ. Վ.ին ձեռօք նորոգելու Գոճաճուքի վանքը, ուր նոյն վարդապետն ևս իրմէ աւելցուց ինչ ինչ գործեր։

Սահակ արքեպիսկոպոս յամին 1905 հրաժարեցաւ իր աթոռէն, անուանեցաւ արքեպիսկոպոս Բեսինոտայ, առանձնացաւ ի Կ. Պոլիս և հոն 1908 Սեպտեմբերի 23ին հանգեաւ ի Տէր։

Լեոն Վ. Քէչէճեան Մարաշցի

Հաճեան արքեպիսկոպոսին հրաժարելէն իբր երեք տարի ետքը յաջորդեց իրեն (21 Յուլիսի 1908) Լեոն վարդապետ Քէչէճեան, որ անուանեցաւ արքեպիսկոպոս Սեբաստիոյ և եպիսկոպոս Թոգատի. որ կը հովուէ նոյն միացեալ աթոռները, որուն կը մաղթեմ յաջողութիւն և զարգացում։

Սեբաստիոյ գաւառին կաթողիկէ հայոց թիւն, որ անցեալ դարուն սկիզբը Թոգատ 160, Բրգնիք 80–100 և Կիւրին 40 և Սեբաստիա 60–70 տուն էր. յամին 1786ին ամենը միանգամայն 2000 անձ, ինչպէս առաջ նշանակած եմ. իսկ 1830ի նուազումն, այսինքն՝ բոլորը մէկէն 280 տուն (Մորոնի) շիտակ չտեսայ և պատճառն ևս իր տեղը նշանակեցի. 1880ին Բրգնիկ ունէր 1800–2140 անձ, 255 տուն. հի-

մակ կը համարիմ 2800–3000 *անձ։ Սեբաստիոյ ժողովուրդն արդ փոքր մի աճած է. 8 տունէն կամ 70 անձէն, այժմ հասած է 30 տան և 2–300 անձի, Բրգնիկէն, Կիւրնէն և այլ տեղերէ եկած գաղթականներով, և յոյս կայ որ աւելի ևս աճի։ Կիւրին մեծ աճում չէ ունեցած 1780ին 330 անձ ըլլալով 120 տարի ետքը հասած է միայն 5–600 անձի. Բայց Կիւրնոյ շուրջն ևս կան կաթողիկէ ժողովուրդ ունեցող գիւղեր։ Աճումը շատ աւելի պիտի ըլլար եթէ գաղթականութիւնը չջլատէր զայն. Բրգնիկցիք մեծ բազմութիւն մ'ունին Կ. Պոլիս, ևս ուրիշ տեղեր, Կիւրինցիք կը գաղթեն շրջակայ քաղաքներն և Սեբաստիա։ Թոգատի Հայ կաթողիկեայք քաղաքին մէջ գրեթէ աճում մը չեն ունեցած. 1770ին համար գրուած էր 200 տուն՝ 1786ին 700 անձ. մեծ նուազութիւն մը, թէ որ շիտակ է. ուրիշ առթիւ ևս կը տեսնուին այս փոփոխութիւնները. պատճառն այս է, որ Թոգատի Հայք գործունեայ վաճառական են և արուեստաւորք. բազմութիւն մը գաղթած է Սամսուն, Կ. Պոլիս և Եգիպտոս և ասոր համար Թոգատ այժմ ունի հազիւ 1500 անձ կաթողիկեայ։*

Ե. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԸ ՏԱՃԿԱՑ 1239 ԹՈՒԱԿԱՆԷՆ ԱՍԴԻՆ

	ՏԱՐԻ	ԱՄԻՍ	ՕՐ		
Բէօսէ Մուհամմէտ բաշա	4	10	4	1239	1824
Խալայէլ հազզը բաշա. վերստին		9	24	1244	1828
Օսման բաշա			10	1245	1829
Հաճի Հասան Բ. Ասիկա Ռուսաց դէմ պատերազմի գնացած ըլլալով տեղապահ կարգուեցաւ Սեբաստացի Սայիտ աղա	1	5		1245	1829
Նորէն շինեց Իհսանիէ մէյրէսէն.					

	ՏԱՐԻ	ԱՄԻՍ	ՕՐ		
ապարանից քով կանգնուած բաղնիքն անոր կալուածք տալով. կառուց Ջօրգազ մզկիթը, Համիտիէ մէտրէսէն Գաւրա գիւղի ճամբուն վրայ, և քաղաքէն քիչ մը հեռու՝ քարաշէն կամուրջ մը։					
Մուհասըլըկի պաշտօնով Սեբաստացի Սայիտ աղա Տէրկեահը Ալի Գաբուճի պաշին	2		2	1246	1830
Օսման բաշա վերստին		9	29	1248	1832
Մուհասըլ Իպրահիմ Սէյիտ աղա. վերստին. շինեց մզկիթ մը՝ մինարէով, Կէչիպուլան թաղի մէջ. և Գարագաշ կամուրջը՝ Կարնոյ ճամբուն վրայ		8	5	1249	1833
Նախկին Եպարքոս Րէշիտ Մուհամմէտ բաշա, Խարբերդու և Տիարպէքիրի Քիւրդերը հնազանդեցնելու զբաղած ըլլալով, իրեն տեղապահ կարգեց Շաքիր և Ահմէտ Պէյերը, գայմագամութեան տարիճանով	2	11		1249	1834
Հաֆըզ Մէհէմմէտ բաշա, զբաղած ըլլալով Րէշիտ բաշայի գործով, տեղապահ կարգեց Գաբուճի պաշը Ալի Պէկը	2	2	17	1252	1836
Էսատ Մէհէմմէտ բաշա	1	7	27	1254	1838
Ֆէրիգ Մուհամմէտ Համտի բաշա		1		1256	1840
Միրի–Միրան Իպրահիմ Սայիտ բաշա երրորդ անգամ, և այս անգամ կառուց Մէյտան Եազըյի գեղեցիկ աղբիւրները	2			1257	1842

	ՏԱՐԻ	ԱՄԻՍ	ՕՐ		
Աշխար Ալի բաշա		8		1259	1843
Միրի Միրան Իպրահիմ բաշա չորրորդ անգամ որուն շնորհուեցաւ Բիւթպէյի պալա		10		1260	1844
Մուհամմէտ շէրիֆ բաշա		7		1261	1844
Միրի Միրան Մուհամմէտ Մունիպ բաշա		8	26	1262	1845
Վէզիր Մուհամմէտ Բ. վերստին		3	27	1262	1846
Վէզիր Իզզէթ բաշա		2	27	1263	1846
Աշխար Ալի Բ. վերստին, որ նորէն շինեց Պախթիար Պօլթանի մզկիթը. կանգնեց նաև Սեբաստացի Շէմսէտտինի թիւրպէն	1	8		1263	1847
Միրի Միրան Ապպաս Բ.	1	1	14	1264	1848
Միրի Միրան Մուհամմէտ Մունիպ բաշա վերստին	1	9	12	1265	1849
Վէզիր Մէհէմմէտ Բ.	3	4	27	1267	1851
Վէզիր Իսմայիլ Բ.	1	8	20	1269	1853
Վէզիր Ֆէյզուլլահ Բ. շինեց Ղազի ապուլ Վահապի քովի գեղեցիկ աղբիւրը. յետոյ իր գերիներէն սպաննուեցաւ	1	8	21	1270	1854
Վէզիր Մուհամմէտ Բ.	3	4	10	1272	1856
Վէզիր Խայրէտտին Բ.		5	5	1275	1859
Միրի Միրան Հաճի Ահմէտ Բ.	2	2	20	1276	1859
Միրի Միրան Մուհամմէտ Զէքի Բ.	1	2	7	1278	1861
Մէհէմմէտ Ռէշիտ Բ.	1	6	20	1279	1862
Միրի Միրան Ահմէտ Բ.	1	4	4	1281	1864
Վէզիր Ալի Ռիզա Բ.	1	4	29	1282	1865
Վէզիր Ահմէտ Իզզէթ Բ. Հօրը Օսման բաշայի կազմած ապարանից դիմաց	3	6	20	1284	1867

	ՏԱՐԻ	ԱՄԻՍ	ՕՐ		
շինեց գեղեցիկ աղբիւր մը, նոյնպէս երկու աղբիւր Շահնայ գմբէթի և Գարտաշլարի մէջ					
Վէզիր Մէհէմմէտ Հալիթ Բ.		6		1188	1871
Մուշիր Լսատ Բ.		2	17	1289	1872
Վէզիր Խուրշիտ Բ.		8	25	1289	1872
Թագաւորին Բ.		11	1	1290	1873
Հաճի Ահմէտ Իզզէթ Բ. վերստին	3	11	11	1291	1874
Մուսթաֆա Սուրէյա Բ.	1	6	17	1295	1878
Ջէյնէլ Ապիտին Բ.		6	2	1296	1879
Իսմայիլ Հագգը Բ.	1	10	12	1297	1880
Խալիլ Րիֆաթ Բ. շատ բարեկարգութիւններ ըրաւ, խճուղի ճամբաներ շինեց, կամուրջներ կանգնեց, և ետքէն Կ. Պոլիս կանչուելով յամին 1303, 1886, մեծ եպարքոս եղաւ, և նոյն պաշտաման մէջ կնքեց իր կեանքը։	3	9		1299	1882

ԳԼՈՒԽ ԺԱ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԹՈԳԱԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆԸ

Ա. Թոգադ կամ Եւդոկիա: Բ. Սեբաստիոյ արքեպիսկոպոսութիւնն առանձին: Գ. Սեբաստիա գաւառին արեւելեան եւ հարաւային կողմերը:

Ա. — ԹՈԳԱԴ ԿԱՄ ԵՒԴՈԿԻԱ

Պատմութեանս ընթացքին մէջ բաւական խօսեցայ թէ այս երկու անուններն ուսկից առաջ եկած են: Դիւրին բան մը կ'երեւի ըսելն՝ Եւդոկիա համանուն կայսրուհիէ մը յառաջ եկած է. բայց պէտք է գտնել թէ ո՞ր Եւդոկիա կամ Եւդոքսիա թագուհին էր այն, որոյ անուամբը կամ հրամանովը շինուած է այս քաղաքը: Իսկ Թոգադ, կամ ինչպէս կ'ուզուի՝ Տօքաթը, զխլուածով մը կը կարծուի մէջտեղ ելած. իբր թէ իշխան մը նոյն տեղը ձին արածել տալու ատեն՝ խոտին առատութեան վրայ զուարճանալով, բացագանչած ըլլայ Տօ՛ք–աթ. որով այն ունեցած կ'ըլլայ Թուրք ծագում: Սակայն ինչպէս ինծ կը թուի, հնութեան մէջ Թոգադ քաղաքն ոչ այս անուններով, և ոչ այս պատճառներով յիշուած է: Թոգադ՝ Տաքսիմոն հին գաւառին գլխաւոր քաղաքն էր, զոր Ուխտանէս եպիսկոպոս Դատիման կ'անուանէ: Ոմանք կը համարին թէ սխալ է հին Նէօկեսարիա Գամրայ ըսուածն, և ոչ անիկա՝ որ հիմակ Նիքսար կը կոչուի, կամ թէ հին Կոմանան (Կէմէնէկ) որ

հիմակ աւերակ է և Թոգաղէն քանի մը ժամ հեռու, և որ հին ատեններն երբեմն յանուն Պոնտոսի և երբեմն յանուն Հայոց կը կոչուէր։ Անշուշտ յարմարագոյնն այն է, որ յիշեալ քաղաքաց՝ մանաւանդ Կոմանայի աւերմանէն ետև պայծառացաւ և եղաւ գլխաւոր կեդրոն մը վաճառականութեան. տեսակ տեսակ պղնձի անօթներ կը գործուէին հոն որոնք հեռու տեղեր ևս կը տարուէին. մէկ խօսքով շատ զարգացած էր ու մինչև հարիւր հազար բնակիչ ունէր, որոնք հետզհետէ ցրուեցան Սամսոն, Կ. Պօլիս, Եգիպտոս, նաև մօտաւոր քաղաքներ, ինչպէս Զիլէ, Հէրէկ և Նիքսար տասնական ժամ հեռու Թոգաղէն։

Հինգ տարի նստած եմ այս քաղաքը, սակայն յարմար կը դատեմ համառօտել ուրիշի մը գրածն, որուն անունը չեմ նշանակած։ Թոգաղի վաճառքներն են, կ'ըսէ, տպածոյ (պասմա), պղնձեղէն, գօտի, կտաւ, ծխախոտ, ցորեն, գարի, Հորք (մահլէպ), ափիոն, խաշխաշ, օղի, պարան և աբեթ։ Դրսէն կ'առնու Եւրոպական ապրանքներ։ Գըլխաւոր արհեստներն են, պասմաճիութիւն 90–100 գործարան և 800–1000 գործաւոր, գօտեգործութիւն, որ ընդհանրապէս կանանց ձեռքով կ'ըլլայ, պղնձագործութիւն, 50 խանութի մէջ կան 300 հայ վարպետ և աշակերտներ, (բայց հիմա առաջուան փայլը չէ մնացած)։ Կը յիշէ ևս հետևեալներն. ներկարարութիւն, ժամագործութիւն, դերձակութիւն, ապաճիութիւն (որ ատեն մը շատ ծաղկած էր), կօշկակարութիւն, երկաթագործութիւն, դարբնութիւն, հիւսնութիւն, որմնադրութիւն, քարագործութիւն, խաղախորդութիւն, դանակագործութիւն, ցփսիագործութիւն, անագագործութիւն, ոսկերչութիւն, սափրիչութիւն, բրուտութիւն, աբեթագործութիւն, գորգագործութիւն և խոհարարութիւն, որոնց մէջ նշանաւոր են Հայք։ Մինչև հոս յօդուածագիրը։ Բայց այս յիշուածներուն շատերն առտնին գործեր են և նաև փոքր քաղաքաց համար հասարակ, գոնէ նուազ կերպով։

Ինչպէս ըսի, արհեստները տկարանալով՝ քաղաքին բնակիչներն ևս հետզհետէ նուազեցան. անկէց 30–40 տարի առաջ գրուած ցուցակ մը յայտնի կը ցուցնէ զայն, որ վաւերական աշխարհամարէ մ'առնուած է։

Տաճիկք	*տուն*	2,500	15,000
Հայք		1,600	9,600
Հայ–կաթողիկեայ		200	1,200
Յոյնք		300	1,800
Հրեայք		220	1,300
		4,820	28,900

Անցեալ դարուն սկիզբը Հայք միայն էին 2,500 *տուն. կաթողիկէ Հայերն* 200 *տնէ աւելի և բազմարնակ, նոյնպէս և Յոյնք* 300 *տուն. իսկ Տաճիկք,* 12,000 *տուն։ Հիմակ բնականապէս քաղաքը դարձեալ սկսած է բազմամարդանալ, որուն մէկ պատճառն ալ է գիւղացիներուն քաղաք հաւաքուիլը. միւսն ալ միւթասարըֆութիւն ըլլալը, զի առաջ գայմագամութիւն միայն էր, միշտ Սիվազի կուսակալութեան ներքև։*

Հայ կաթողիկեայք եաղաքին Առապլա թաղին մէջ ունին եկեղեցի մը յանուն Աւետման Ս. Աստուածածնի վայելչակերտ և ընդարձակ, միջին մասը գմբեթայարկ՝ հինգ խորանով, քովը կայ զանգակատուն զարդարուն. մօտը կը գտնուի և եպիսկոպոսարանը նոր նորոգուած և յարկով մը բարձրացած է, և անոր վրայի կողմը կայ Ջմմառեան միաբանից գնած և կառուցած հին կղերանոցը, գեղեցիկ պարտէզով և առատ ջրով։

Հայ Լուսաւորչականք եօթը հատ եկեղեցի շինած են, երեքը քարաշէն և կամարակապ. Ա. Ս. Աստուածածին մայր եկեղեցի, որուն մօտն է առաջնորդարանը. Բ. Ս. Երրորդութիւն և Գ. Քառասուն Մանկունք. իսկ միւս չորսը կէս քարաշէն և կէս փայտաշէն են, այսինքն Ս. Լուսաւորիչ, զոր Բեմբէճեանք կառուցեր են ինչպէս նաև Քառասուն մանկունքը, Ս. Մինաս, Ս. Ստեփանոս և Ս. Գէորգ։

Յունաց եկեղեցին Ս. Նիկողայոս է։

Տաճիկներն ունին երեք մեծաշէն մզկիթ, որոնք են՝ Ուլու ճամի, որ կ'ըսուի թէ առաջ եկեղեցի էր. քարով շինուած և գմբեթայարկ, որ պատած է կապարէ տախտակով. կան տակաւին ուրիշ մզկիթներ, որոնց մին ալ առաջ եկեղեցի է եղեր, և մէջը գերեզման մը կը գտնուի։ Իսկ մանր մզկիթները բազմաթիւ են։

Ունի երկու քարաշէն մեծ իջեւան (խան) և ութ՝ փոքր. տասնեհինգ բաղանիք։ Յիշատակութեան արժանի հնութիւն մի է յիմարանոցն՝ իբր բուրգ մը, կը բաժնուի երկու մասի. մէկը նմանութիւն ունի եկեղեցւոյ, միւսը հին գերեզմաններ են, զորոնք Տաճիկները Քըրք-Գըզլար կ'անուանեն։

Հին գերեզմանի աւերակ մը կայ, ուր ժողովրդական աւանդութիւնը կը համարի թէ թաղուած ըլլայ Լէնկ-Թիմուրի որդիներէն մին։

Ունի երկու պղնձհալք (քաշխանէ), մէկը եւրոպական ձեւով՝ ուր կը զտուին Բախըր Մատէնի հանքերը։

Քաղաքը պատած է լեռներով Գըժըլժ՝ արեւելքէն, Խաչ տաղ՝ արեւմուտքէն. կան երկու ամրոցներ կիսաւեր, մէկը լեռներն ելլելու ճամբան պաշտպանելու համար, որ լքուած է, միւսը քաղաք մտնելու ճամբուն վրայ, գետին մօտ, նոյնպէս կիսաւեր, ուր կան ևս քանի մը թնդանօթներ։ Կ'երեւի թէ մնացորդ են անոնք Միհրդատի շինած ամրոցներուն՝ Պարիադրիս լերանց անցքերը Հռովմայեցւոց դէմ պաշտպանելու համար, զոր յիշեցի պատմութեան մէջ։

Մերձաւոր ձորերու մէջ հաւաքուելով կը կազմուի փոքրիկ վտակ մը Խըտըրլըք անունով, նաև Պէկզատ վտակ, որոնք կը թափին Իրիս (Եէշիլ-ըրմաք)։ Սոյն գետին վրայ կառուցուած է քարաշէն հոյակապ կամուրջ մը հինգ կամարով։

Թոգատ ունի ընդարձակ Պէզ-խաթան, և հրապարակ մեծ վոյվոտա խանին առջև որ հիմակ շատ բարգաւաճ չէ։

Քաղաքին շրջակայքը կան այգիներ, պարտէզներ և ամարաստաններ. մերձաւոր է Մալքայայի ամարանոցն, ուր կայ ևս գեղեցիկ մատուռ մը յանուն Ս. Կուսին, և բնակարաններ քահանայից համար։ Անկէց քիչ մը հեռու է Գօճաճուկ ամարանոցն, որոյ լաւ մէկ դիրքին վրայ է Ս. Աստուածածնի Անարատ Յղութեան վանքը, զոր գնեցին և կառուցին Միաբանք Զմմառի իբր օժանդակ ընծայարան ի նպաստ Մայր վանուց ի Զմմառ։ Բայց հիմակ քաղաքը և Գօճաճուք եղած երկու դըպրոցներն ևս դատարկ են, որ այնքան մեծ ծախքերով առաջ եկած

էին, որուն օժանդակեցին նաև բարեպաշտ հաւատացեալք, մանաւանդ Թոգադցիք, և գլխաւոր բարերար եղաւ հանգուցեալ Յովհան Աղա Մաթոսեան, որ ընդարձակ պարտէզին շուրջը բարձր պատ մը կանգնեց, և հեռու տեղէ առատ ջուր բերել տուաւ վանքին և պարտէզին։

Կէս ժամ ասկէց և 1 $^1/_2$ ժամ քաղաքէն հեռու է Յունաց վանքը Կէքս բռուած գիւղին մէջ, յանուն Վերափոխման Ս. Աստուածածնի, զոր կը նորոգէին մեր տեսած ժամանակ։ Եկեղեցին շինուած է Մեծն Յուստինիանոսէ, ինչպէս յայտնի է պատմութենէ, և որ անձամբ տուզած եմ տեղւոյն ծերունիներէն. եկեղեցւոյ որմերուն մէկը նորոգած ժամանակնին վէմ մը գտած են, որուն վրայ իբրև կառուցող նշանակուած է եղեր Յուստինիանոսի անունն և թուականն։ Եկեղեցւոյ մէջը կայ չորս կճեայ ազնիւ սիւն, և այս պատճառաւ կոչուած է Մէրմէռ քիլիսէ, ունի երկու գմբէթ, որոնց վրայ կը ցոլանան ոսկեձոյլ խաչեր։ Այս Կէքս գիւղը կը համարուի երկրորդ Կոկիսոն, որ Մարաշի կողմերն եղածէն զատ է։

Կէս ժամ աւելի առաջ երթալով կը հանդիպինք Եայլաճիք լերան ստորոտը Հայոց յանուն Յովակիմայ և Աննայի վանաց, ուր առաջ կը նստէր Առաջնորդը սովորաբար. որ և ժամանակին ժառանգաւորաց դպրոց էր։ Հոս կը գաղափարեմ վերը յիշուած անձին գրած խօսքերը։ Այս վանքը՝ կ'ըսէ, քաղաքին արևմտեան կողմը լերան զառ ի վայրին վրայ կառուցուած ուխտատեղի է. Ջուրը մաքուր և առատ, օդը առողջարար, ամրակուռ պարսպով պատած ունի 40 սենեակ, մատուռ մը, գիշերօթիկ դպրոց՝ լքուած. այժմ շատ յետամնաց է։ Վանքին շուրջը կան մեծամեծ արտեր. երեք ժամ հեռու կայ ընդարձակ դաշտավայր մը. 400 քիլօ ցորեն կրնայ ցանուիլ, սանք գրէթէ լքուած են և վանքը աղքատ և խեղճ է։ Այս վանքին շուրջը կային քանի մը տուն Հայեր, որոնք կը մշակէին վերը գրուած արտերն և անդաստանը. բայց հիմակ նուազած են։ Վանքն ունի Վաուլաս անուն գիւղ մը դէպ ի Իրիս գետ, 100 տուն տաճիկ և 15 տուն հայ բնակչօք։

Թոգատ կը բաժնուի չորս գազայի (գաւառակ) որոնք են՝ Թոգատ, Զիլէ, Էրպաա և Նիքսար։ Գաւառին բնակչաց մեծագոյն մասը Տաճիկ են, կը գտնուին սակաւաթիւ Յոյներ, աւելի քիչ Հրեաներ։ Տաճիկներէն ետև Հայք բազմաթիւ են. Թոգատի սանճագին բնակիչը կը դնեն 180,000 որոնց 55,000 Հայ, և 5,000 Յոյն։ Այս կարծիք մ'է։

Ա. – Թոգատու հայ գիւղերն

Արդ՝ Թոգատու գազային մէջ եղած հայ գիւղերն դէպ հարաւային արևելք են, Օրթոքապատ կամ ինչպէս հիմակ կ'ըսեն՝ Արթ–Օվա, լայնածաւալ և արգաւանդաշող դաշտին մէջ, ուր կան 60 և աւելի գիւղեր, մեծագոյն մասը Տաճիկ և Չէրքէզ. Յոյնք ևս ունին երեք գիւղ։ Իսկ Հայոց գիւղերն են.

Չիֆթլիկ՝ Նահիէի կեդրոնն. երեսուն տարի առաջ ունէր 35 տուն և 300 անձ հայ բնակիչ. ըստ այլոց 326. եկեղեցին Ս. Յակոբ։

Պօլիս, ուղիղը Պօլիս կամ Պէրիսա. առեն մ'աւան էր և հիմա գիւղ. հնուց եպիսկոպոսանիստ քաղաք էր Սեբաստիոյ մետրապօլտութեան ներքև։ Հիմակուան եկեղեցին Ս. Լուսաւորիչ է. բնակչաց թիւը, Հայք 35 տուն, 300 անձ, կամ 200 ինչպէս կը կարծէ ուրիշ մը, սակայն լսած է միայն, մօտը կայ համանուն գիւղ մը Տաճկաց և 234 անձինք։

Եաթմըշ. եկեղեցին Ս. Գէորգ. Հայք 40 տուն, 400 անձ, ուրիշ մը կ'ըսէ 334։

Քէրվանսէրայ. եկեղեցին Ս. Աստուածածին, բնակիչք՝ Հայ 35 տուն, 350 անձ։

Թահթըպաղ. եկեղեցին Ս. Աստուածածին, բնակիչք՝ Հայք 25 տուն, 200 անձ։ Ուրիշ մը՝ 262։

Կէտաղազ. եկեղեցին Ս. Սարգիս. բնակիչք՝ Հայք 30 տուն, 250 անձ. ուրիշ մը՝ 308։

Ընդ ամենայն 200 տուն և 1800 անձ։

Այս ծանօթութիւնը երեսուն ու մէկ տարի առաջ առուցած եմ Պորիսի Տէր Յակոբ ալեզարդ քահանայէն, որուն տունը գիշեր մը հիւր եղած էի։ Գիտեցի ևս որ նոյն կողմը հայերէնը լաւ կը հնչեն։ Իսկ ուրիշ ըսածս՝ Թորոս աղբարն է, որ կը տարբերի։

Գրիգորէս. քաղաքին արևելեան կողմը հեռու երկու ժամ. եկեղեցին՝ Ս. Աստուածածին. բնակիչ 100 տուն, 600 անձ հայ, կամ ուրիշ մը 245 անձ, որ սակաւ կը թուի ինձ բոլորովին։

Պիսկինճիք, դէպ արևմուտք քաղաքէն 3 ժամ հեռու, եկեղեցին Ս. Յակոբ, 100 տուն. 550 հոգի. ուրիշ մը՝ 291 անձ։

Արևմտեան կողմը կայ Ղազիապատ ընդարձակ դաշտ, կ՚ըսուի այժմ Ղազ-Օվա, մէջէն կը հոսի Իրիս գետն, ունի ևս ուրիշ ջրեր, ագարակներ, այգիներ. շատ բարեբեր է, խաղողն առատ, որ իր երկրէն զատ կը բաւէ նաև Սեբաստիա քաղաքին և շրջակայիցն. կան մէջը նաև գիւղեր, որոնց հայաբնակներն են.

Լնտիզ. եկեղեցին Ս. Փրկիչ, 40 տուն Հայ բնակիչ. ուրիշ մը՝ 60 անձ Հայ և 95 Տաճիկ։

Կեսարէ. Կիւլպէկեանց ագարակն Լնտիզի մօտ. բնակիչք 9 տուն հայ. կան ևս Տաճիկներ։

Սէօնկիւտ. Քալպճեանց ագարակը. բնակիչք 25 տուն Տաճիկ. Հայք սակաւ։

Ջէրչի. Իրեկեանց ագարակը բնակիչ 30 տուն, որոնց 10 տունը Հայք են։

Գուրջի. կամ Կուրճի գիւղ. Հայք 31, Տաճիկք 195 անձ. այժմ 200 տուն Տաճիկ և 10 տուն հայ։

Վարազ գիւղ. ուր կայ մարմարիոնի հանք. եկեղեցի՝ Ս. Սարգիս. Հայք 10 տուն. ուրիշը՝ 39 անձ. և Տաճիկներն են 171 անձ։

Պազար. Ղազիապատի մէջտեղը 6 ժամ Թոգաթէն և 6 ժամ Թուրխալէն հեռու, կեդրոն է Նայիային, ուր կը նստի Մուտիր, ունի բնակիչ 300 տուն տաճիկ. և իբր 15 տուն Հայ։

Թուրհալ աւանը հեռու է Թոգաթէն 12 ժամ. ոմանք կը կարծեն՝ որ հին Սեբաստուպօլիսն ըլլայ, բայց ստոյգ չէ. բնակիչքը Տաճիկ են. իսկ Հայք սակաւաթիւ։

Արհով գիւղ՝ Թուրհալի մօտ, ուր կը գտնուին սակաւաթիւ Հայեր, զուրկ ամէն կարեւորներէն։

Հռչակաւոր է Կոմանայի աւերակը, որ 3–4 ժամ հեռու է Թոգաթէն. դէպ ի հիւսիսակողմը, ուր կայ եւ այն մեծ վէմն, որոյ մէջ կը բնակէին դեւք, և Ս. Գրիգոր Սքանչելագործ հալածեց վէմն միջիններումն, որ այժմ Թաչուն քար կ'անուանուի։

Կոմանայէ 1 ժամ հեռու է Պիզէրի գիւղն, որ յամին 1298 ունի եղեր 800 տուն Հայ բնակիչ. հիմակ Հայք նուազած են 34 անձի. իսկ տաճիկք աճած 540 անձի։ Հոս է այժմ Յովհաննու Ոսկեբերանի վանքը Հայոց ձեռքը. վայելչակերտ եկեղեցի ունի, որուն ներսի մասին մէջ կայ Սրբոյն գերեզմանաքարն, զոր Կոմանայէ փոխադրած է Սենեքերիմ, իսկ մարմինը առաջուց հրամանաւ Արկադ կայսեր փոխադրուած էր Կ. Պօլիս. բայց գերեզմանը մինչև հիմա ուխտատեղի է քրիստոնէից և տաճկաց։ Արձանագրութիւն մը կայ գլանաձև քարի վրայ, որ կը հաւաստէ թէ Սեբաստիոյ Սենեքերիմ Թագաւորը կամ իր որդիքը շիներ են այս վանքը յամին 1022 կամ 1027 և անուաներ են Ս. Նշան։ Իր կանգնած շէնքերէն կը մնայ տակաւին փոքր մատուռ մը քարուկիր. լաւ շինուած է. միւս մասերը նորոգուած են ետքէն։ Երևելի նորոգութիւն մ'եղած է Սերոբեան Յակոբոս արքեպիսկոպոսին ժամանակը՝ յամին 1842, որուն անուամբը կայ արձանագրութիւն եկեղեցւոյ դրան վրայ, զոր ընթերցած եմ անձամբ։ Ուրիշ նորոգութիւններ ալ եղած են հետզհետէ։ Կան որ այս Պիզէրին՝ Գագիկ Աշոտեան Անւոյ Թագաւորին տրուած Պեզու քաղաքը կը կարծեն։

Թոգաթի և շրջակայից Հայ բնակչաց թիւը կը դնեն ոմանք 40,000 և աւելի. յուսալի է ճիշդը գտնել։

Բ. — Զիլէ Գաւառ

Այս քաղաքին համար Պլինիոս և այլք կը վկայեն որ Կապադովկիոյ կը վերաբերի. Սոկրատ ևս կը յիշէ: Երևելի քաղաք մի էր, ուր կը կատարուէր մեծ տօնավաճառ Անահտական դից տօնին, որ հիմակ ևս կը շարունակէ ամեն տարի, և կը ժողովին ամեն կողմէ մեծ բազմութիւն վաճառականաց:

Փոքր քաղաք մ'է այժմ Զիլէ, ունի 4–5000 տուն բնակիչ որոնց 6–800 տունը Հայեր են, կան նաև կեսարիայէն գաղթած Յոյնք իբր 10 տուն: Հողը բարեբեր է, կլիման բարեխառն և առողջարար: Փոքր Ասիոյ գլխաւոր վաճառաշահ քաղաքներէն մէկն է, իրեն գրաւելով Թոգաթի վաճառականութեան մէկ մասը:

Զիլէ ընդարձակ դաշտ մ'ունի Արք–Օվա անունով, և 260 գիւղ. բերքը միջին հաշուով կ'ելլէ 15,000 օքքա աֆիոն, 500 հազար օքքա խաշխաշ, 10 միլիոն օքքա ցորեն. ունի այգիներ և շատ տեսակ պտուղներ առատօրէն: Հայ բնակչաց թիւն ոմանք կը դնեն 4500, մեծագոյն մասը քաղաքին մէջ. եկեղեցիքը Ս. Նշան և Ս. Յակոբ. կայ նաև դպրոց մը:

Գ. — Էրպաա Գաւառ

Թոգաթի հիւսիսակողմը, կեդրոնն է Հէրէք, վտակի մը վրայ, որ Լիկոսի (Կէրմէլի) Իրիս թափելու բերնին մօտերն անոր կը խառնուի: Էրպաա կամ Հէրէք՝ հին Եւպատորիան է, զոր կառուցած էր Մեծն Միհրդատ իր պատուոյ անուամբ և զոր աւերեց Լուկուլլոս Հռովմայեցի զօրավարը: Այժմ փոքր քաղաք է ընդարձակ դաշտի մէջ՝ որ հին ատեն կը կոչուէր Փանարէա, իսկ այժմ Տօշապատ կամ Տաշ–Օվա: Հէրէք

սկսած է հիմակ ծաղկելու, մանաւանդ ծխախոտի վաճառականութեան առաջ երթալով։ Ունի բազմաթիւ գիւղեր, որոնց բնակիչքը գլխաւորաբար Տաճիկ են. Հայք բազմացած են Հէրէքի մէջ. ասկէց երեսուն տարի առաջ համրուած էին 1226 անձինք. այժմ կը հաշուին վեց հարիւր տնէ աւելի. եկեղեցին՝ Ս. Աստուածածին. ունին դպրոց։ Տաճկաց նախկին թիւն էր 4702, հիմակ անոնք ևս աճած են համեմատաբար։ Հայաբնակ գիւղերը.

Ազապագը	Հայք	79	377
Զօղլար	»	92	
Էյվազայ	»	113	
Սարը Գայեան	»	63	
Սախար Ձալ	»	30	

Երկբայութիւն չկայ, որ այս գիւղացիներն ևս աճում ունեցած են. և անշուշտ Սունիսա և այլ տեղեր ևս Հայեր կը գտնուին, որով ընդհանուր թիւը կը համարին իբր 6,000 Հայ։

Հէրէկի գաւառակն ունի ոչխարներ, որոնք ղմակի տեղ պոչ կը կրեն Ռումէլիի գըվըրճըքէն աւելի երկայն և հաստ։ Հողը շատ բարեբեր է և արգաւանդ, առատ ջրով։

Դ. – Նիքսար Գազա

Առաջին անունը Նէօկեսարիա էր, երևելի քաղաք հնուց և աթոռ մետրապոլտի, ուր նստաւ Գրիգոր Սքանչելագործը։ Վերջը հետզհետէ աւերելով, պզտիկցաւ։ Հիմակ սկսած է նորէն յառաջանալ բարեկարգութեամբ և վաճառականութեամբ, ինչպէս նաև Զիլէ և Հէրէք. և կազմած են առևտրական ուրոյն կարգ, և կը ծաղկին հետզհետէ։

Նիքսար կը գտնուի Լիկոս գետին եզերքը, Հէրէքի արեւելեան կողմը։ Մէջը կը դնեն տասը հազար բնակիչ, որոնց մեծ մասը Տաճիկ

են։ Հայերը քաղաքին մէջ կը հաշուին 400 կամ 500 տուն, ունին եկեղեցի և դպրոց։ Կան նաև Յոյներ քաղաքին մէջ։

Այս գաւառակն ունի նահիաներ և բազմաթիւ գիւղեր Տաճկաց և Յունաց․ Հայոց գիւղն է Գարու-Աղըլ, 90–100 տուն բնակչօք, եկեղեցին՝ Ս. Կարապետ. անշուշտ ուրիշներ ևս, զի այժմ Հայք սկսած են բազմանալ հոն, և իրենց բոլորական թիւը կը համարի 4000։

Այս չորս գաւառակները կը կազմեն Թոգաթի թեմն, որ միացած է Սեբաստիոյ արքեպիսկոպոսութեան հետ, պահելով իր յորջորջումը, կազմութիւնն և սահմանները։

Բ. — ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՆՁԻՆՆ

Սեբաստիոյ վիլայէթը չորս Սանճագ ունի, Սեբաստ, Շապին-Գարահիսար, Թոգաթ և Ամասիա. վերջինը կը պատկանի Տրապիզոնի եպիսկոպոսութեան. Թոգաթ թէպէտ միացեալ է Սեբաստիոյ արքեպիսկոպոսութեան, այլ ուրոյն թեմ է, և կը պահէ իր յորջորջումն, որուն վրայ խօսեցայ նախընթաց Յօդուածին մէջ։

Ուստի Սեբաստ և Շապին-Գարահիսար կը կազմեն այս արքեպիսկոպոսութիւնն, զորոնք պիտի բաժնեմ երեքի. ա. Գարահիսար, բ. Սեբաստիոյ գաւառին հիւսիսակողմերը՝ մայրաքաղաքովն, և գ. նոյն գաւառին հարաւակողմերն՝ այսինքն անոնք որ արդ ևս կը պատկանին Սսոյ աթոռոյն, ինչպէս են Տիվրիկ, Կիւրին և Տէրէնտէ։

Ա. — Շապին-Գարահիսար

Կը կոչուի նաև Գարահիսարը Շարգի. իր հին անուան վրայ խօսած եմ. ընդհանրապէս հիմակ կը համարին Պոմպէոսի կանգնած Նիկոպոլիսն. ինձ յարմար թուեցաւ Կողոնիան, որ ունէր Հռովմէական գաղթականութիւն մը, որ յայտ է իր անունէն. միանգամայն գլուխ էր համանուն թեմին. իսկ հիմակ գլխաւոր քաղաք է Սանճագին. և այս նոր անունն առած է պաղլեղի հանքին պատճառաւ, որ մօտերէն կ'ելլէ։ Տաճիկները 2000 *տուն են, իսկ Հայք* 800 *տուն. ունին եկեղեցի Ս. Աստուածածին և Ս. Փրկիչ. ոմանք կը դնեն նաև Ս. Ստեփանոս, որ այժմ չի յիշուիր։ Հայոց քով առանձին առաջնորդութիւն է, և իր իշխանութեան ներքև ունի այժմ բոլոր գաւառն, և Ածպտեր հին թեմը։*

Յոյնք 160 *տուն են, ունին եկեղեցի և եպիսկոպոս, որ Սեբաստիոյ մետրապօլտութեան ներքև է։*

Թամզարա. 1½ *ժամ. եկեղեցին Ս. Թագաւոր վանաց մէջ՝ Ս. Գէորգ, և մատուռ մը։ Հայք* 400 *տուն են և Տաճիկները սակաւաթիւ։*

Անեղի կամ Անեղրի 1½ *ժամ. Հայք* 200 *տուն են. եկեղեցին Ս. Աստուածածին։*

Զիպէր ½ *ժամ. եկեղեցին Ս. Յակոբ,* 30 *տուն Հայ։*

Զըրըրխի 2 *ժամ. Հայք* 30 *տուն։*

Պուսէյիտ, եկեղեցին Ս. Գէորգ.

Զըրտագ. » » »

Ազ-Շէհրապատ, ռամկօրէն Աշխար-Ովա, ընդարձակ դաշտ է. ութ ժամ երկայն արևելքէն արևմուտք։ Շատ դժուար էր առաջ այս կողմերը բնակիլն, աւազակաց բազմութեան համար. ասոնք որջացեր էին անկիւն տեղեր, և անհանգիստ կ'ընէին ժողովուրդը, բայց այժմ Օսմանեան տէրութիւնը մաքրած է զանոնք։ Այս դաշտը բարեբեր է և բազմութիւն Հայոց կը բնակին հոն, որոնց թիւը կը հասցնեն 1200

տան, որոնք առանձինն կամ խառն գիւղերու մէջ են։ Ագ–Շէհր՝ քաղաք սպիտակ ըսել է, այժմ գիւղ է. 8 ժամ թամզարայէ հեռու։ Լիկոս գետէն սկսելով այս դաշտը կը տարածուի դէպ արեւելք Երզնկայի սահմանը, դէպ հարաւ Տիվրիկի կողմն, որմէ կ'անջատեն բարձր լեռներ։

Գոմէշտուն 5 ժամ. Հայք 10 տուն, եկեղեցի Ս. Աստուածածին։

Չիֆթլիկ 5 ժամ. Հայք 15 տուն։

Եէնիքէօյ 6 ժամ. 20 տուն Հայ. եկեղեցի Ս. Կարապետ։

Ածպտեր կամ Էզպիտէր, երկու գիւղ են Ագ – Շէհր դաշտի մէջ։ Վարի Ածպտեր, ունի 200 տուն Հայ բնակիչ, եկեղեցի Ս. Կարապետ և վանք Ս. Նշան. և վերի Ածպտեր, 250 տուն Հայ, եկեղեցի Ս. Աստուածածին։ Այս գիւղերը Շապին–Գարահիսարէն 6 ժամ հեռու են։

Ալամոնիկ 6½ ժամ. բոլոր Հայք՝ 30 տուն, ունի եկեղեցի Ս. Աստուածածին։

Մշակնոցս՝ Հայք 100 տուն. 7 ժամ. եկեղեցի Ս. Սարգիս և Ս. Յակոբ։

Փրթանոս, կամ Կթանոց, 7 ժամ, Հայք 40 տուն, եկեղեցի Ս. Գէորգ։

Աղրաւիս, Հայք 150 տուն, եկեղեցի Ս. Աստուածածին։

Էսկի–Շէհիր, Հայք 25 տուն, եկեղեցի Ս. Մինաս։

Բուրք կամ Բիւրք 8 ժամ. Հայք 200 տուն. եկեղեցի Ս. Աստուածածին, և Ս. Յակոբ։

Էնտերէս կամ Անդրէաս 8 ժամ. Հայք 300 տուն. եկեղեցի Ս. Աստուածածին և Ս. Սարգիս։

Սիս. Հայք 40 տուն և 30 տուն Տաճիկ. եկեղեցի ԺԲ. Առաքեալք, որ վանք էր և ժամանակին աթոռ առաջնորդական Շապին–Գարահիսարի վիճակին։

Համամ. եկեղեցի Ս. Լուսաւորիչ։

Ղրաճ. » Համբարձում։

Ապանա. 10 ժ. Հայք 30 տուն, եկեղեցի Ս. Պետրոս–Պօղոս։

Սէվինտիք, 10 ժ. » 30 » » Ս. Ոսկեբերան։

Ադուանիս 12 ժ. » 30 » » Ս. Գէորգ։

Սիս (միս) 20 ժ. Հայք 20 տուն, եկեղեցի (?)
Աւառնգու-գմլուճ — » Ս. Լուսաւորիչ։

Շապին-Գարահիսարի Սանճագը կը բաժնուի հինգ գայմագամութեան, ունի իբր 100,000 Տաճիկ և 45,000 Հայ։ Ցոյնք նուազ են Հայերէն, բայց այս հաշիւները ճշդութեան կարօտ են։

Բ. – Սեբաստիա քաղաքն և իր շրջակայքն

Այս մեծանուն քաղաքին հնութեան վրայ խօսած եմ, կը մնայ հիմակ ըսել համառօտիւ արդի վիճակին վրայ։ Համառօտ ըսի, վասն զի ուրիշներ ևս գրած են, և երկարօրէն, ուստի աւելորդ կրկնութիւն պիտի ըլլայ իմ ընելիքս։

Միշտ մեծ վիլայէթներուն մին համարուած է Սեբաստիա՝ ընդարձակ և բազմամարդ, մէկ միլիոնէ աւելի բնակիչ ունի, ինչպէս կը նշանակուի ընդհանրապէս. Նոր աշխարհամար մը պիտի ճշդէ այս և ուրիշ կողմերու բնակչաց թիւը։

Ալիս գետին հիւսիսակողմը շինուած է քաղաքը, կէս ժամ գետափունքներէն հեռու։ Ժամանակին ունեցած է ամուր պարիսպ, զոր Լէնկ Թիմուր հարթյատակ ըրաւ։ Կան տակաւին երկու կիսաւեր ամրոցներ, մէկը սեպացած քարէ բլուրի մը վրայ, ուր Հայք եկեղեցի մ'ունէին Ս. Յովհաննէս անունով։ Միւսը դիմացն եղած հովտի զառ ի վերին վրայ, որ կողմը շինուած է նաև քաղաքը։

Այս բերդի ստորոտը կայ շէնք մը բոլորը մարմարինէ, շքեղ, քանդակազարդ, որ Տաճկաց ձեռքն է, վրան կը գտնուի երկու վիշապ բազմագլխեան, զինանշան Արծրունեաց, և աւանդութիւն է սեբաստացի Հայոց, որ Սենեքերիմ Արծրունի թագաւորը շինած է։

Սեբաստիոյ շէնքերը թէպէտ փառաւոր չեն ընդհանրապէս, բայց կան յիշատակութեան արժանի քանի մը տեղեր, ինչպէս կուսակալութեան պալատը, Սենեքերիմեան ընկերութեան կառուցած ճեմարանն և

այլ շէնքեր։ Բազմաթիւ են մզկիթներն, մանաւանդ Սելճուք սուլթաններէն շինուածներն։ Իսկ Գըզըլ-Ճեմարանին դուռն այնպէս լաւ քանդակագործուած էր որ, մինչեւ սուլթան Մուհամմէտ Ֆաթիհ նմանն և գերազանցը շինեց ի Պրուսա։ Կան իջեւաններ (խաներ) որոնց մին է Մէհէմմէտ բաշա խան, զոր յամին 1643 նորոգեց Գարա Մուսթաֆա բաշա, իր եպարքոսութեան ժամանակ, և ուրիշներ, որ հետզհետէ շինուած և նորոգուած են։

Տակաւին քաղաքիս բնակչաց համար որոշ թիւ մը սահմանել դժուար է, ատեն մը կ'ըսուէր թէ Տաճիկները 22,000 են և Հայք 13,000· ժամանակ մը վերջը գրուած էր 39,000 Տաճիկ, և 13,429 Հայ։ Հայոց թիւը երրորդ տեղ մը 16,648 կամ ևս 17,000 դրուած է, բայց այս լրերն հնամի են, մօտերս տեղ մ'ընթերցայ որ Հայոց թիւը կը հասնի 5–6000 տուն, և իբր 30,000 անձ. բերանացի լսեցի, որ նոյն քաղաքին բնակչաց թիւն 70–80,000էն աւելի են, որով և Տաճկաց թիւը կը բարձրանայ յիսուն և աւելի հազարի։ Հայոց մէկ փոքր մասը կաթողիկեայ են, մաս մ'ևս բողոքական՝ այլ սակաւաթիւ։

Յոյնք քաղաքին մէջ հազիւ 100 տուն կ'ելլեն, ունին եկեղեցի մը Ս. Գէորգ անուն։

Հայ կաթողիկեայք ևս ունին փոքրիկ եկեղեցի մը Ս. Վլաս Հայրապետի անուամբ, յարակից առաջնորդարանով, զորոնք կառոյց Զմմառի վանաց միաբան հանգուցեալ Տէր Յակոբ Վ. Ճգնաւորեան իր արդիւնքովն, և մնաց հոն մինչեւ ցմահ՝ սրբակաց վարքով։

Հայոց մայր եկեղեցին է Ս. Աստուածածին, որ ունի առաջնորդարան մը մեծաշէն և փառաւոր։ Երկրորդ եկեղեցին է Ս. Սարգիս, ուր թաղուած է Ներսէս, նախ արքեպիսկոպոս Սեբաստիոյ, ապա կաթողիկոս որ կը նստէր ի Սիս. և Սեբաստացիք կը կոչեն «գերեզման Հոգևոր Տեառն»։ Միւս եկեղեցիներն են Ս. Մինաս, Ս. Փրկիչ, Ս. Յակոբ և Ս. Գէորգ։

Պէտք է անշուշտ յիշատակել Սեբաստիոյ Քառասուն Մանկանց հռչակաւոր տաճարը, քառասուն գմբեթայարկ խորանով որ հիմակ

աւերակ է ձգուած, խաչ քարերով և ջախջախուած սիւներով. Լէնկ Թիմուր կործանեց այն երևելի տաճարը, և մինչև հիմա կը մնայ նոյն վիճակին մէջ։ Ասոր քովն է Հայոց գերեզմանատունն, երկուստեք որմով պատած։ Նա ինքն Թիմուր հոս կենդանի թաղել տուաւ Հայ ասպետները։

Նոյն գերեզմանատան մօտ է Սեբաստիոյ լիճն, որ մեծ բան մը չէ, բայց հռչակուած է քառասուն մանկանց հոն անկմամբը։

Տաճիկ տան մը մէջ կեցած է Ս. Վլասի գերեզմանը. ժամանակին երկայն յօդուած մը գրած եմ ի խնդրոյ բարեյիշատակ Ներսէս արքեպիսկոպոսի Սեբաստիոյ. Տաճիկները կ'անուանեն Սուրբը «Պօղազ Լըվլիասը». պատուած է ամենէն, և կ'երթան քրիստոնեայք և տաճիկներ, այլ գտնուած տեղը շատ խեղճ է։

Քաղաքին մօտերը կը գտնուի Ալիս գետին վրայ շինուած ծուռ կամուրջը տասնեինը կամարով, և աւանդութիւն է՝ որ անիկա շինուած է Սենեքերիմ Թագաւորին Շուշանիկ դստերէն, սակայն կայ վրան Թուրք արձանագրութիւն որ եթէ եօթէն աւելցած չէ, կը տկարացնէ վերը գրուած աւանդութիւնը։ Կայ երկրորդ կամուրջ մը 24 կամարով, դէպ ի Կեսարիա գնացող ճամբուն վրայ, զոր տեսած եմ։

Հիմակ քանի մը խօսք ևս դպրոցաց նկատմամբ ընելու եմ, որ կեդրոններ են բարեկրթութեան և քաղաքակրթութեան. համառօտ պիտի անցնիմ, որովհետև անոնց վրայ արդէն ուրիշները՝ մանաւանդ Ն. Չ. Սոմմպօլեանց գրած է երկարօրէն հին Մասիսի մէջ։ Բայց այնուհետև շատ դէպքեր անցան, և թերևս օրինակելով զանոնք, շատ բաներ չի կրնար համաձայնիլ ներկայ պայմանին հետ։ Անհերկրայ եմ, որ այժմու Սահմանադրական վարչութեամբ և վեհափառ ինքնակալին նպաստաւորիչ խնամքովն առաւել ևս պիտի ծաղկին ուսմունք և գիտութիւնք ուղիղ սկզբամբ։ Արդ հին դպրոցներն էին Աստուածածնի եկեղեցւոյն Մայր վարժարանը, Ս. Սարգիս եկեղեցւոյ Թաղը՝ Ներսէսեան վարժարան, Ս. Մինաս եկեղեցւոյ Թաղը՝ Մինասեան վարժարան, Հողդարի Թաղը՝ Մխիթարեան վարժարան, Բաշա պարտէզի Թաղը՝ Թորգոմեան վարժարան, Հայ Թաղը՝ Սահակեան վարժարան, Թաղ–Ջայի բաղանեաց՝

Արամեան վարժարան, և օրիորդաց համար Հռիփսիմեան, Պեզիքեան և Լուսինեան վարժարանները։ Իսկ ընկերութիւնք էին Սենեքերիմեան՝ հաստատուած 1851ին, Անձնանուէր, Լուսաբեր, Համալսարանական և այլն, որոնք ևս ունին դպրոցներ կարելի եղածին չափ զարգացած։

Սեբաստիոյ վաճառականութիւնը բաւական ընդարձակ է, այլ անշուշտ այսուհետև առաւել ևս յառաջադէմ պիտի ըլլայ, մանաւանդ երբ աւարտի երկաթուղին Սամսոնէ մինչև Սեբաստիա, և սոյն քաղաքին հետ կցորդելիք միւս գծերն։ Եւրոպական ապրանքներով լի են կրպակներն և իջևանները, բայց Սեբաստիա և իր գաւառն ունի արտադրելու շատ նիւթեր, ինչպէս ցորեն, գարի, տորոն և այլ ընդեղէններ, իւղ, պանիր, մեղր, գազի խէժ, սահլէպ, ճէհրի, բուրդ, մազ, անասնոց մորթեր, կովու, ոչխարի և այծու, աղուեսինի, սամոյր, գայլենի ևայլն։ Հանքերը բազմաթիւ են. գաճ, բորակ, մարմարիոն, լեռներու մէջ ազնիւ քարեր, վէրտէ անթիքօ, տեսակ տեսակ վանաքարեր, զորոնք անձամբ հաւաքեր եմ։ Սեբաստիոյ աղահանքերը խիստ առատ են, որոնց քանի մը հատը տեսած եմ ինքնին, մանաւանդ Աղծովը (Թուզլա) խորունկ ձորի մէջ, իրեք կողմէն պատած բարձր լեռներով, առաջքը միայն բաց, վարն աղջրի տասն աւազան կայ, շրջակայ լեռներն կանանչ, կապոյտ, կարմիր և գորշ գոյներով խատուտիկ։ Հինգ րոպէ անդին կայ ուրիշ աղծով մը ծանծաղ ձորակի մէջ, և երկուքը մէկտեղ տարին 250,000 քիլօկրամ աղ կ'արտածեն, կ'երևի թէ ժամանակին մեծատարած ծով կար։ Կան նաև պաղլեղի և այլ տեսակ մետաղներ, ինչպէս նաև արջնաքար (Մանկանէզ). նաև ի Կիւրին կայ առատ ծծումբի հանք և այլն։

Գաւառին հողերը մեծաւ մասամբ տաճկաց ձեռքն, են քրիստոնէից մասը նուազ է, ինչ որ պահել կարող եղած են։ Երկրացիք ընդհանրապէս փութաջան են, և լաւ ծաղկած է երկրագործութիւնը։

Քրիստոնէութեան պատկանեալ գլխաւոր շէնքն է Ս. Նշանի վանքը, զոր կառուցած է Սենեքերիմ թագաւորն ի յիշատակ Վասպուրականի հռչակաւոր վարագայ Ս. Նշանի, և հոն փոխադրեց Կենաց Փայտը,

զոր իր մահուանէն ետև առջի տեղը դարձուցին, անշուշտ թողլով մաս մը նոր վանքին մէջ։ Թէպէտև շատ անգամ նորոգութիւններ և փոփոխութիւններ եղած են, այնուհանդերձ շէնքերը կարգաւոր ձև մը չունին, լաւ կտորներն են՝ առաջնորդարանը, սեղանատունը և վարժարանը։ Տաճարներն երեք հատ են Ս. Նշան, Ս. Կարապետ և Ս. Աստուածածին, ունի ևս մշտահոս աղբիւր և ընդարձակ պարտէզ և կալուածքներ։

Ս. Նշանի և քաղաքին մօտերը կը գտնուին հին վանքերու մնացորդներ։

Անապատ. քաղաքէն կէս ժամ հեռու, Դաւրա գեղին մօտ, ունի առատ ջուր և պարտէզ. քովը կան քարայրներ ճգնութեան համար։ Հին ատեն խիստ բազմաթիւ էին փոքր Հայոց և Կապադովկիոյ մէջ միանձանց ճգնարանները, որ հիմա նուազած կամ լաւ ևս անգործ մնացած են։

Ս. Յակոբ. կէս ժամ Անապատէն հեռու, օդն ու ջուրը լաւ է, և ինքն հին եկեղեցիէ մը միայն կը բաղկանայ։

Խոնրկտուր. (Խուլ քէսէն) փոքրիկ վանք մի է խնդրակատար Ս. Աստուածածնի։

Առաքելոց Վանք. Աղտից կամ Դուզասարի մօտ։

Սոխկերի. 3 ժ. քաղաքէն հեռու, մօտը կը գտնուի սեննկի ձևով փորուած քարայր. ուր կը բնակին եղեր տարին բոլոր սոխ և հաց ուտող ճգնաւորները, նոյնպէս մարդկային ձեռագործ, որ կը հաւաստէ մի և նոյն աւանդութիւնը։

Գլխըտեղ. վանք համանուն գիւղին մօտն, ուր գլխատուեցաւ Ս. Սևերիանոս վկան. $1^{1}/_{2}$ ժ. քաղաքէն հեռու հիւսիսակողմը, և ուխտատեղի է. գիւղին բնակիչքը տաճիկ են։

Ս. Գէորգ. Գէվէքսէի մօտ, որ առաջ բաւական պայծառ էր և իրմէ կը կախուէին հոգևորապէս իբրև սեփական վիճակ՝ Զառա, Թորակ, Գէվէքսէ կամ Գևոյս, Ալա—Քիլիսէ, Ֆարհատ և Թէքէլէ գիւղերը. հիմակ այս վանքն աւերակ է։

Ս. Հրեշտակապետ. 5 ժ. հեռու է քաղաքէն. Աղտից կամ Աղծովի մօտը բարձր լեռներու վրայ զետեղուած, ունի տաճար և սենեակներ։ Ամենէն շատ հող ունեցող վանքն է, ունի ձեռագիր մատեաններ։ Վանքին մօտն է գերեզմաննոցն, որ Խաչբլուր կը կոչուի։ Հոս 1871ին գտնուեցան Գոհարինեայ ոսկորներն, արկղաձև շարուած և մեծ քարէ խուփով փակուած. մէկ կողմին արձանագրութիւնն է. «Որք կատարեցան վասն Քրիստոսի Ռատիկոս, Գոհարինէ, Տնզիկ, Ծամիդէս». և միւս կողմը «եղան յայս տեղւոջ ի ձեռն Ս. Վարդապետին Բարսղի, Թուակ, ՌԼԶ.»։

Գ. — Սեբաստիոյ մերձակայ աւանները և հայ գիւղերը

Քաղաքին մօտաւոր գիւղն է Գաւրա, եկեղեցին Ս. Աստուածածին. որ ունի առատ ջուր, և որչափ կը յիշեմ՝ գեղեցիկ ջրվէժ մը։ Թիլթեռնիկ վտակը խողովակներով քաղաք տարուած է, կան բազմաթիւ ջաղացքներ։ Գիւղիս մէջ եւս կը գտնուին քարափոր այրեր ճգնութեան համար, որոնց մէջ է քարափոր խորան մը յանուն Սրբոյն Սարգսի, և այլ և այլ տեղեր շատ մը մանր խաչարձաններ, որոնք ճգնաւորաց առանձին աղօթատեղիքն էին։ Գիւղին դպրոցն Դաւթեան կ'անուանի, իսկ բնակիչքը Հայ են 880 կամ 995 անձինք։ Ուխտանէս եպիսկոպոսին Քառասուն մանկանց համար ըսածը կը յիշեցնէ։

Բրգնիկ կամ Բագրատունիք. քաղաքէն 1 ժ. դէպ արևելեան հիւսիս. եկեղեցին Ս. Սարգիս՝ քարաշէն է. և աւագ սեղանը մարմարինէ։ Առաջնորդարանը կարգաւոր, ունի մեծաշէն դպրոցներ մանչերու և աղջիկներու առանձինն։

Բնակիչքն անցեալ դարուն սկիզբն էին 100 տուն, ետքէն աճեցան, և բազմաթիւ գաղթողներ եղան, ի մասնաւորի Կ. Պոլիս։ Իսկ Ցիացածը յամին 1860 էին գիւղին մէջ 1350 անձ. տասնեվեց տարի վերջը գրուած է 1800 և ապա քանի մը տարիէն 2140, հետևաբար կրնանք ըսել որ վերջին դարուն աճումը շատ լաւ գնացած է, և բոլորը կաթողիկեայ են։

Նոր–Խան. եկեղեցի Ս. Խաչ, կայ վարժարան. Հայք 682 *կամ* 861, *իսկ Տաճիկք* 720. *աւան է Եըլտըզ–Էլիի։*

Գալտը կամ Ղալդի. եկեղեցի Ս. Սարգիս, Հայոց թիւը 256 *կամ* 346։

Սարը–Հասան. եկեղեցի Ս. Գէորգ. Հայք 96 *կամ* 291։

Ճնքուրակ. եկեղեցի Ս. Սարգիս. Հայք 28 *կամ* 64։

Պորագիդ կամ Պօրազուտ. Հայք 50 *կամ* 62. *Տաճիկք* 30։

Իշխանի. եկեղեցի Ս. Նիկողոս, ունի վարժարան, թիւ Հայոց 408 *կամ* 486.

Գդման. եկեղեցին Ս. Սարգիս, կայ վարժարան. Հայոց թիւն է 411 *կամ* 552։

Բիւրակն կամ Պին–կէօլ. եկեղեցին Ս. Մինաս. կայ վարժարան. Հայք 615 *կամ* 666։ *Անցեալ դարուն սկիզբը միայն* 10 *տուն էր։*

Պետրոսի կամ Գօչ–Հիսար կեդրոն գայմագամութեան Հաֆիզէլիի քաղաքին արեւելեան կողմը 6 *ժ. հեռու, եկեղեցին Ս. Յակոբ գետնափոր, ուր կ'իջնուի* 12 *և աւելի աստիճանով. խեղճ վիճակի մը մէջ. ունի վարժարան. բնակիչներէն Հայերն* 706 *կամ* 711, *Տաճկաց թիւն է* 470։ *Բայց կ'երևի թէ այժմ աւելցած և եղած են Հայք* 150 *տուն և Տաճիկք* 50 *տուն. երկուքը միանգամայն ըլլալու են գոնէ* 2000 *անձ, համեմատաբար։*

Եէնիճէ. ունի եկեղեցի Ս. Յակոբ և վարժարան, Հայք 157 *կամ* 227։

Խանձար. եկեղեցին Ս. Սարգիս, կայ և վարժարան. Հայք 467 *կամ* 508։ *Անցեալ դարուն սկիզբը գրուած է* 40 *տուն, որով կը տեսնուի այժմ նուազութիւն իբր* 50 *անձի։*

Խաւրազ. ունի եկեղեցի Ս. Փրկիչ և վարժարան. բնակիչք՝ Հայք 261 *կամ* 368։ *Հոս ևս անցեալ դարուն սկիզբը կար* 40 *տուն. համեմատական նուազութիւնն է* 150 *և աւելի անձանց։*

Խորասան կամ Խորսանա. եկեղեցիքը, Ս. Աստուածածին և Ս. Սարգիս, կայ վարժարան։ Հայք 618 *կամ* 827, *որ անցեալ դարուն սկիզբը* 40 *տուն ըլլալով՝* 300 *անձի աճում մը կ'երևնայ։*

Պօքա. բնաւ չի յիշուիր նոր հեղինակաց մէջ, մինչ անցեալ դարուն սկիզբը ունէր նոյնպէս 40 տուն Հայ։

Աղաք կամ *Աղաեղ*. (*Դուզասար*). եկեղեցին Ս. Կարապետ և վարժարան մը։ Քաղաքին արևելեան հարաւակողմն է 6 ժ. հեռու։ Հայք 1631 կամ 1876։ Հոս անունը շատ չէ համեմատութեամբ, զի անցեալ դարուն սկիզբը ունէր 150 տուն Հայ։ Ասոր մօտն է Ս. Հրեշտակապետի վանքը, բարձր և զուարճալի դիրքի մէջ, ինչպէս տեսանք։

Կավրա կամ *Կարա*, եկեղեցին Ս. Սարգիս, կայ վարժարան. Հայ բնակիչք 438 կամ 313։

Կամիս. ունի եկեղեցի Ս. Թորոս և վարժարան, բնակիչներէն Հայք 327 կամ 555 անձինք և Տաճիկք 75։

Շըժղէնիկ կամ *Եար–Հիսար*. եկեղեցի Ս. Սարգիս. կայ վարժարան. Հայք 827 կամ 893։

Սթանոզ. եկեղեցին Ս. Թորոս, ունի վարժարան. Հայք 498 կամ 584, իսկ Տաճիկները 128։

Ճանճի, եկեղեցին Ս. Խաչ, կայ վարժարան, բնակիչներէն Հայք 138 կամ 140, Տաճիկները 310։

Թոտորակ. ունի եկեղեցի Ս. Յակոբ և վարժարան, բնակիչներէն Հայք 500 կամ 525 և Տաճիկք 370։

Կովտուն. եկեղեցին Ս. Աստուածածին և վարժարան։ Հայք 1145 կամ 1355։ Անցեալ դարուն սկիզբը կայ եղեր 150 տուն որով յայտնի կ'ըլլայ որ բաւական նուազում յառաջ եկած է։

Քոթնի. եկեղեցի Ս. Սարգիս, կայ վարժարան. Հայք 453 կամ 524։

Գեոցա կամ *Տիվէկաէ*. 7 ժ. քաղաքէն հեռու դէպ արևելք, եկեղեցի Ս. Կարապետ. բնակիչ՝ Հայք 70 կամ 95, Տաճիկք 270։ Առաջ այս գիւղին մօտը կար Ս. Գէորգայ վանքը՝ ուր կը նստէր առանձին առաջնորդ. այժմ աւերակ մնացած է։

Ջառա գիւղաքաղաք, կեդրոն Քոչկիրիի գայմագամութեան. եկեղեցի Ս. Լուսաւորիչ, ունի վարժարան, բնակիչներէն Հայք 1497 կամ 1774 Տաճիկներն 1900։ Անցեալ դարուն սկիզբը կը բնակէին Ջառա 300

տուն, մեծագոյն մասը Հայ, որով կը տեսնուի, թէ հարիւր և աւելի տարուան մէջ Հայք աճում չեն ունեցած, նա թէ նուազած են։ Իսկ Տաճկաց առաւելութեան առաջին պատճառն է Տիրացու Յովսէփին Տաճկանալն, և իրեն ու տոհմին բաշայութեան հասնիլն՝ Ջառալ–Օղլու մակդրով, որուն համար ուրիշներ ևս շուտով կրօնափոխ կ՚ըլլան։ Այս աւանին արդի բնակչութիւն է 360 տուն Հայ և 940 տուն Տաճիկ, որոնց այս բազմանալուն երկրորդ պատճառն է նոր գաղթականներու գալուստը շրջակայ գիւղերէն և ուրիշ տեղերէ։ Ջառա կը գտնուի զառիվայրի մը ստորոտն Ալիս գետին աջակողմը, Սեբաստիայէն 12 ժ. հեռու։ Այս աւանին մէջէն կ՚անցնի առու մը պատուական ջրով՝ որ կը բղխի Սուկաւէտ լեռնէն և կը թափի Ալիս. Ջառայի դիմացը կը գտնուի Նորաշէն վանք մը։

Բէչէ–Եուրտ. եկեղեցի Ս. Աստուածածին։

Բարհատ. եկեղեցի Ս. Աստուածածին և կայ վարժարան, Հայք 328 կամ 445։

Ալա–Բիլիսէ. ունի եկեղեցի Ս. Մինաս և վարժարան. Հայք 663 կամ 727։

Թէք–Էվլի կամ Թէքէլի. եկեղեցի Ս. Գէորգ. Հայք 130 կամ 131։

Գարա–Պօղազ. եկեղեցի Ս. Խաչ. կայ և վարժարան. Հայք 224 կամ 339, Տաճիկք 40, Քիւրդք 25։

Ջայ–Բէօյ. եկեղեցի Ս. Աստուածածին. Հայք 80 կամ 87. Տաճիկք 180։

Պարտիզակ կամ Պաղչէճիկ. եկեղեցի Ս. Գէորգ, կայ և վարժարան. բնակիչներէն Հայք 279 կամ 315. Տաճիկները միայն 40։

Խորոխոն. եկեղեցի Ս. Հրեշտակապետ. կայ վարժարան. բնակիչներէն Հայերը 372 կամ 430. իսկ Տաճիկները 230. գիւղիս բնիկ անունը կը համարին Խորխոռունիք։

Բրաբերդ. ունի եկեղեցի Ս. Թորոս և վարժարան. Հայք 363 կամ 393, իսկ Տաճիկները 231։

Ողնովիտ կամ Ուռնովիտ. եկեղեցի Ս. Յակոբ. Հայք 58 *կամ* 66. *և Տաճիկները* 700։

Թավշանլը. եկեղեցի Ս. Թորոս. Հայք 83, *Տաճիկք* 420։

Խմին աղա չիֆթլիկ. Հայք 24. *Տաճիկք աւելի*։

Հոս կուզեմ դնել կարևոր հատուած մը համառօտելով Ուխտանէս եպիսկոպոսի գրածը Բառանից վրայ (Գլ. ԿԱ.)։

Լիկկիանէս հարիւրապետ մը կը ճամբէ զօրաց գնդով կապուտակէք գաւառ. և թեմն՝ որ կը կոչուի Թելախունէք. և Անատաւլիկէք, և Խարտանայք, և Արմենակք, և Գատիմոն, որ քրիստոնեաները հալածեն. որոնք կը փախչին Սեբաստիոյ կողմեր. ոմանք Մելեսիզ ամրոց և լեռնակողմն և ոմանք Տախալասուն, որ լեռ է դէպ ի Ցեկնոց. ազատ տեղեր են և հեռի ամրոցներ։ Բայց հարիւրապետը կը հասնի վրանին, կը փախչին կ'ազատին և ոմանք ձեռք ընկնելով հաստատուն կը կենան իրենց հաւատքին վրայ և կը նահատակուին. որոնց վրայ հալածանքէն ետև եկեղեցիներ կը շինուին. որ հիմակ կ'ըսէ հեղինակը, կը կոչուին Եկեղեցաձոր։ Իսկ քառասունները գործակից չեղան սպանութեան. այլ թողին գնացին Ալիս գետուն եզերքն այր մը, որ ժամանակին ամայի էր և հիմակ կը կոչուի Բաջ–Վահանայ. որ սրբոց տեղին է. ամեն մէկին անունը գրուած, և խաչին նշան տպաւորուած. և մինչև հիմա եկեղեցիներով պատուած են։ Հարիւրապետը չի կրցաւ գտնել զիրենք. Լիկկիանէսի ծանուց, և նա Սեբաստիոյ դքսին պատուիրեց, որ գտնէ զիրենք և եթէ չի գտնան կոց՝ նահատակէ՛ զիրենք. որ և կատարեցաւ ի Սեբաստիա։

Ասիկա կը յիշեցնէ Թորոս Աղբարի մէջ գրուածը թէ Տավրայի եկեղեցւոյն կից կակուղ ժայռերու վրայ քարայրներ կան յատկապէս փորուած և հոն սեղան Ս. Սարգսի, նաև մանր խաչեր քանդակուած այն քարայրներուն վրայ. ասոնք ճգնաւորաց տեղեր են եղած։ Այն ժայռերուն ներքև կային գերեզմաններ։

Գ. — ՍԵԲԱՍՏԻԱ ԳԱՒԱՌԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԵՐԸ

Այս տեղերն՝ ինչպէս ըսի, Սոյ աթոռոյն կը պատկանէին. և ունեցած են շատ մը փոփոխութիւններ. այժմ անուամբ՝ երեքի, այլ իրօք երկուքի կը բաժնուին. ա. Տիվրիկ, բ. Կիւրին Մանճըլըք և Տարանդա. ըստ այսմ և ես կը բաժնեմ զանոնք երկու մասի միայն։

Ա. – Տիվրիկ Գաւառ

Թէփրիք կամ Տիվրիկ գաւառակին կեդրոնն է դաշտաձև հովտի մը մէջ շինուած Չալթա – Չայ վտակին աջ եզերքն. երկայն և լայն հովիտը զարդարուած է պարտէզներով և այգիներով։ Ոմանք կարծեցին որ անիկա հին Տոլիքան ըլլայ. բայց այս ստոյգ չէ. զի Տոլիքան մօտ է Այնթապ քաղաքին. թերևս աւելի իրաւունք ունին անոնք՝ որ կը համարին զանիկա Պոմպէոսի շինած Նիկոպոլիսը։ Միջնաբերդը կը գտնուի արևելեան կողմը բարձր բլուրի մը վրայ կանգնուած դարաւոր հնութեամբ։ Այս ամրոցին մօտ է բերդաթաղն, որ նոյն իսկ հին քաղաքն է, ուր բազմաթիւ էին Հայք, բայց տեղը քարուտ և անջրդի ըլլալով, այժմ մեծագոյն մասը այգեթաղը կը բնակին, կէս ժամ հեռու։ Ունի երկու եկեղեցի՝ վարի և վերի, իրարմէ քանի մը վայրկեան հեռու։ վարինը Ս. Երրորդութիւն՝ քարաշէն միջակ մեծութեամբ. վերինը Ս. Աստուածածին՝ նկուղի նման՝ հին եկեղեցւոյ տեղը, քարաշէն հոյակապ երեք խորանով. 1851ին շինուած. ունի և դպրոց։ Քաղաքին մէջ կան նաև եկեղեցիներու աւերակներ ինչպէս են Ս. Աստուածածին, Ս. Գէորգ, Խնդրակատար և Ս. Յակոբ։ Բնակչաց թիւն ունի շատ մը տարբերութիւններ։ Հնուց կը կարծուի եղեր 2000 տուն Հայ, որ իջած է ապա միայն 100 տան, որ չափազանց կը թուի։ Ժամանակ մը կ՚ըսէին 250

տուն և մօտ ատեններս իբր 500 տուն. իսկ վերջապէս 4000 անձ. և Տաճկաց թիւը կրկնապատիկ, որով բոլորը մէկէն կ'ըլլայ 12,000 անձ։ Կան նաև բողոքականք։

Ալիս գետը կը բղխի քաղաքին հիւսիսակողմն և մօտերը. բայց տեղը ցած ըլլալով երկիրը չոռոգաներ։

Ս. Լուսաւորիչ վանք, ուր կը նստի Տիվրիկի առաջնորդը քաղաքէն $2^1/_2$ ժ. կամ 3 ժ. հեռու. լեռներով, կիրճերով զատուած ցած բլրակի մը վրայ շինուած է. յառաջագոյն կ'անուանէր «Կիւրղի անապատ», և Խուռնավուլայ մօտն ըլլալով՝ ըսուած է նաև «Խուռնավուլայ վանք». 8–900 տարի առաջ շինուած կը կարծեն ոմանք, բայց անշուշտ սկզբնաւորութիւնը շատ աւելի հին ըլլալու է, երրորդ՝ չորրորդ դարու գործ, կամ ճգնատուն միանձանց՝ որ բազմաթիւ էին Կապադովկիոյ և Փոքր Հայոց մէջ։ Դիրքը սքանչելի է, բնութեան ամէն բարութեամբ զարդարուած։ Երեք կողմէն պատած է հեղեղատով. խիստ յարմար տեղ է կրօնաւորաց համար, յառաջագոյն ունեցեր է բաւական թիւ մը կրօնաւորաց որոնց գործն է եղեր գրքեր գաղափարել, իսկ այժմ չկայ ոչ կրօնաւոր, ոչ ժամասաց և ոչ աղօթող։ Շէնքերն անշուք են, տաճարը ցած և անլոյս, ընդհակառակն առաջնորդարանը փառաւոր, լուսաւոր և հովասուն։ Ունի դրախտ մը թթենեաց և մրգաբեր ծառերու։ Վանքին եկամուտը կը կազմուի գեղերու պտուղներէն, արտերու բերքերէն և ուխտաւորաց նուէրներէն։

Տիվրիկէն 1 և 2 ժ. հեռու կը գտնուին Բալամղա և Կրասոն գիւղերը։ Բալամղա փոքր գիւղը կը գտնուի գետաղաշտի կամ հովտի մը մէջ. իր պզտիկութեամբն հանդերձ փոքրիկ Տիվրիկ մը կը ձեւացնէ 18–20 տնով՝ որոնք ընկերասէր են, հողագործ և հիւրամեծար։ Մէկ եկեղեցի ունի, ջուրը մաքուր և առողջարար է, արտերը ջրարբի՝ Հաքմա վտակէն, որ կ'իջնայ Չալթայ–Չայ գետակը։ Ջրին առատութեան համար Բալամղացիք կը ցանեն ցորեն, գարի և բրինձ։

Կրասոն լայն հովտի մը մէջ է, ունի եկեղեցի և վարժարան. բնակիչք՝ Հայ 50–60 տուն, հողագործ են, պարտէզներ ունին և ազնիւ խնձոր։

Նոյն Հաքմա վտակին եզերքն են Կրասոն, Արմըթաղ, Օտուր, Արշուշէն, Բարզամ և Ս. Յակոբ գիւղերուն ծառաստանները։

Տիվրիկի շուրջը, վերը յիշուածներէն զատ, կը գտնուին բաւական թուով գիւղեր՝ տաճկարնակ, հայարնակ և խառն. ոմանք կը նուազեցնեն անոնց թիւն՝ ոմանք կ'աճեցնեն, 25էն մինչև 120 ըսող կայ. ես այժմ պիտի գրեմ հայարնակ և խառն եղողները, մէկալնոնց վրայ ամբողջ տեղեկութիւն մ'առած չըլլալով։

Խուրնավուլ, ունի եկեղեցի Ս. Լուսաւորիչ և վարժարան 50 աշակերտով։

Տանձիկ. Արմտան կամ Արմութաղ. Զալթա–Զայի աջակողմն, եկեղեցին Ս. Գէորգ. ունի վարժարան. Հայք 150–200 տուն. իր շուրջը կան հայ և տաճիկ գիւղեր և գիւղակներ։ Հայարնակ են Շիկիմ, Փալանկա՝ որ ունի եկեղեցի Ս. Գէորգ, Արտամէտ որուն խնձորը լաւ է. և այլն։

Մրուանայ, եկեղեցին Ս. Աստուածածին։

Սինճան, » Ս. Գէորգ։

Աշուշէն, » Թագաւոր Մոգուց, կայ վարժարան։

Օտուր կամ Օղուռ, եկեղեցի Ս. Թովմաս Առաքեալ. ունի վարժարան։ Ասոր մօտը կայ աւերակ վանք, որ կը կոչուի Փայլեվանք։

Բարզամ. եկեղեցին Ս. Աստուածածին. բնակիչ՝ Հայք 30 տուն 500 անձ։

Ս. Յակոբ աւերակ վանք, որուն եկեղեցին կանգուն է, Հայք 15–20 տուն են, որ վանքին հողերն իրենց սեպհականեր և արտերը բաժներ և փոքրիկ գիւղ մը ձևացուցեր են։ Ուխտաւորներ կը յաճախեն եկեղեցին, և հաւաքուած եկամուտը գիւղացիք կը վայելեն։

Կիւրէսին. ունի եկեղեցի Ս. Երրորդութիւն և վարժարան։ Այս գիւղին մօտ է Ս. Թորոս կիսաւեր վանքը։

Կասմա, Գասմա կամ Քէսմէ 5–6 ժ. Տիվրիկէն հեռու և 10 ժամ Ակնէն։ Հոս կը բնակին 100 տուն Հայ և 50 տուն Տաճիկ. եկեղեցին Ս. Աստուածածին, ունին վարժարան։ Գիւղին դիրքը գեղեցիկ է, ջրաւէտ և ծառազարդ. իր տները Տիվրիկի տներէն աւելի ձևաւոր են.

Կամա ունի երկաթի առատ հանք։ Այս գիւղէն Կ. Պոլիս գաղթած է Նորատունկեան ազգատոհմը։ Կամա այս գաւառակին նշանաւոր գիւղերէն մին է. իրեն մօտը կայ աւերակ եկեղեցի և Բագրատունի անուն գերեզմաննոց, ուր առաջ կար համանուն Հայաբնակ գիւղ մը։

Տիվրիկի նշանաւոր գիւղերէն մին է նաև Ձիմառա, կը գտնուի Կամայի արևելեան կողմը. բարձր լերան լանջակողմն որ կ'իջնէ մինչև Եփրատ։ Օդը մաքուր և սքանչելի է. դիրքը գեղեցիկ, շրջապատած է պարտէզներով։ Բնակիչքը Հայ են 100–110 տուն, ժրաջան անձինք, հողագործ, կօշկակար, երկաթագործ, հիւսն, և այլն։ Երկիրը կը բերէ ցորեն, գարի, լուբիա, ընկոյզ, և այլն։ Գիւղին մէջտեղը կայ եկեղեցին Ս. Երրորդութիւն, շինուած է 1873ին, նոյն կողմերուն գեղեցիկն է, բայց կարօտ նորոգութեան, և անոր մօտ է դպրոցն, որ կը կոչուի Նալեան Կ. Պօլսի Յակոբ պատրիարքին մականուամբը, զի նա Ձիմառացի էր։ Գիւղէն մէկ ժամ հեռու է Վերի վանք կոչուած ուխտատեղին, ուրկէց կը բղխի ջուր սառնորակ և պատուական, զոր գետնի տակէն նախնիք գիւղը բերեր են, և հոն աղբիւր մը շինած։ Ասոր մօտ է խաչի կէօլ ըսուած լճակն, որուն ջրով կ'ոռոգուին պարտէզներն։ Ինձ կը թուի որ Վերի վանքն է, կամ անոր եկեղեցին, որ կը կոչուէր Ս. Քրիստափոր, և կամ արդ ասիկա աւերած է։

Բենկան կամ Բենկեան, Եփրատայ օձապտոյտ եզերքը բարեբեր գիւղ, պարտէզներով զարդարուած է. վերևը կայ Միջնարփի բլուրն որուն ստորոտէն կը սահի գետակ մը Ձիմառայէն գալով։ Ունի թութ, ծիրան, բալ, տանձ, խնձոր, և այլն, անանկ որ բերոց առատութեամբ Բենկայ պիտոր ըլլայ փոքր Մալաթիա մը. վերը յիշուած պտուղներն իրեն բաւելէն զատ, շրջակայ գիւղերու ևս կը վաճառեն։ Ունի լաւ այգիներ, այլ իր մեծատարած արտորայքը ջրարբի չեն, եթէ բաւական ծախք ըլլայ Եփրատ գետն և Կիւռէ վտակն կրնան ոռոգանել զանոնք։ Բենկան ունի իբր 80 տուն բնակիչ և աւելի, այս գիւղէն ելած են ականաւոր և երևելի անձինք։ Եկեղեցիներն են՝ Հրեշտակապետ, Աստուածածին և երեք Մանկունք. ունին դպրոցներ։ Գիւղին շուրջը կը

գտնուին Ս. Թագաւոր, Ս. Նիկողոս, Ս. Խաչ, Ս. Յակոբ և Խրնակատար (Խնդրակատար) եկեղեցեաց աւերակներն, որով յայտնի կ'ըլլայ թէ յառաջագոյն նշանաւոր տեղ մ'ըլլալու էր։ Եւ արդարև կը պատմուի, որ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին իշխաններէն Բենիկ անունով մէկ մը նորոգելով այս գիւղն անուանել է Բենկան կամ Բենկայ, տեղն առաջ Թապաթ կը կոչուի եղեր, ինչպէս մինչև հիմա մերձակայ Տաճիկ գիւղը նոյն անունը կը կրէ, որ իբր առանձին թաղ բլրին ստորոտն է։

Տիվրիկէն մէկ ժամ հեռու Վանք անունով գիւղ մը կայ, այժմ բնակիչները Գըզըլպաշ են։

Իսկ չորս ժամ հեռու կը գտնուի Արակայ գիւղն, որուն բնակիչքն հիմա Տաճիկ են։ Գիւղին մօտը Նարեկացւոյն անուամբ վանք մը կայ, և անոր մէջ՝ Սենեքերիմ Արծրունիի Վասպուրականէ գաղթած ժամանակ, կրօնաւորք Նարեկացւոյն մարմինը բերած և ամփոփած էին երբեմն։ Մատուռն և քանի մը սենեակներ դեռ ամբողջ կեցած են մինչև հիմա։

Բ. — Կիւրին–Մանճըլըք և Տարանդա

Այս գաւառակներն ևս մասն են Սեբաստիոյ արքեպիսկոպոսութեան, որոնք պիտի ամփոփեմ մէկ անուան ներքև զի Տարանդա ևս այժմ Կիւրինայ առաջնորդութեան յանձնուած է Սսոյ կաթողիկոսէն, որուն իշխանութեան կը պատկանին առանց ևս՝ Տիվրիկի պէս. և կը կազմուին Սեբաստիոյ վիճակին հարաւային գաւառակներէն, միայն թէ դիւրին չէ ճշդիւ նկարագրել զանոնք զատ զատ, մինչև հիմա եղած յաճախ փոփոխութեանց համար։ Հիմակ այս մասը կը բովանդակէ իր մէջը հետևեալ գաւառները։

ա. Կիւրին, բ. Գանդալ, գ. Թոնուզ, դ. Ազիզիէ որոնց մէջ կը գտնուին մեծ և փոքր 4–500 *գիւղ. և* 100–120,000 *բնակիչ, եթէ ենթադրենք Տէրէնտէն ևս* 70–80 *գիւղով և* 20–30,000 *բնակիչ, կ'ըլլան*

ամենը մէկտեղ 120–150,000 բնակիչ, որոնց իբր 40,000 Հայ են. անորոշ դնելուս պատճառն այն է, որ նախ չկայ տակաւին ստոյգ մարդահամար և երկրորդ չեմ վստահիր լիով առած տեղեկութեանցս։ Հիմակ կ՚իջնամ խօսելու ամենուն վրայ ընդհանրապէս, մանաւանդ Հայ գտնուած տեղերն։

Կիւրին, սովորաբար կը կարծուի հին Կանակ։ Մեծն Վասիլ Մարաշի կողմէն Ծամնդաւ երթալու ատեն առաւ ճամբուն վրայ Կէսոն անունով ամուր քաղաք մը։ Դարձեալ Կիւրինէն շատ հեռու չէ Ուզուն Եայլայի մէջ գտնուած աւերակ մ՚որ Վէրան–Շէհր կը կոչուի, և կը կարծուի որ՝ Ժ. և ԺԱ. դարուն յիշատակուած Լարիսան կամ յաւէտ Ծամնդաւն է։ Կայ ևս այն գաղափարն՝ թէ Կիւրին մետասաներորդ դարուն յիշուած Խաւատանէք ամրոցն է, զոր Վասիլ Բ. կայսրը տուաւ Դաւիթ Արծրունիի, ժառանգութեամբ անցաւ Գագիկ Գ. արքային, որ Դաւթի դուստրն առաւ կնութեան, ուր ապաստանեցան Սելճուքներուն արշաւանաց ժամանակ Ատոմ և Աբուսահլ իրենց իշխաններովն։ Արդ այս ամրոցն, որ կը թարգմանուի Տանէքսայի այրը, Կիւրին կը համարի այն կողմերը շրջագայող Յիսուսեան Հայր մը. նաև Հ. Միքայէլ Վ. Չամչեան կ՚ըսէ «ամրոց ընդ արևմտակողմն Հարաւոյ երկրին Սեբաստիոյ»։ Կայ նաև Պէկէօրէն անունով նոյն կողմերը մէկ աւերակ որ անշուշտ Բագրանն է։ Այս ամէն մտածմունքները դնելէն ետև կը յաւելում որ յիշեալ տեղեաց մօտ Կիւրինէն աւելի յարմար դիրք մը չիկայ՝ զանոնք իր մէջը ամփոփելու համար։ Բերդին տեղն յայտնի է, բնական ամրութիւն մը, ծայրը կայ քարաժայռ բլրի վրայ աշտարակ մը կործանած, որուն ներքև կան իրարու քով և իրարու վրայ խիտ առ խիտ այրեր, հին զէնքերու համար շատ յարմար դիրք մի է այս։ Պէտք է աւելցնեմ ևս, որ եթէ այրն և ամրոցն այս տեղ են, հին Տանէքսան դէպ արևւելեան հարաւ է. զի իբր երկու ժամ հեռու կայ Տանէլ, կամ ըստ Տաճկաց՝ Թ·էլլին անուն մէկ մեծ գիւղ, և աւանդութիւն է, թէ քաղաքն առաջ նոյն տեղն էր։ Իսկ ամրոցն ունի ևս պաշտպանութեան անցք մը կապան կամ Կալին կոչուած, և նոյն կողմն ուրիշ աշտարակ մ՚ևս կայ որ գետնափոր ուղիով մը կապուած է ամրոցին հետ։

Կը գտնուի այս փոքր քաղաքը Մեծ Իրան (Կէօվտէլի սու) վտակին վրայ, որ համանուն լերանց ծործորներէն կը բղխի, և կ'իջնայ Մելոս (Թօզմա—սու)։ Արեւմտեան կողմը կան յաղթ ժայռեր սեպացած, նաև հրաբխոյ հետք կամ բերան, որ կ'երևի թէ շատ հին չէ, վասն զի երբ լաւան խորտակեցին ներքեէն՝ ելան գերեզմանաքարեր, վրանին քանդակուած հայկական ձևով խաչ։ Նոյն վէմերուն վրայ ճամբայ մը թզաչափ լայն, և վերնակողմը միայն ոտքերու տեղ, և գլուխը՝ վի-մափոր այր մը։ Հին տեններ՝ ինչպէս Սեբաստիոյ գաւառին վրայ խօսած ժամանակս ըսի, կային այս կողմերն ևս միանձանց վանքեր և ճգնարաններ, ինչպէս նաև բոլոր Տաւրոսի և Անտիտաւրոսի ան-կիւններն. այս տեսակէն էր և Սաղրու Ս. Աստուածածնի Անապատն, ուր տեղն մը ճգնեցաւ մեծահռչակ Ներսէս Լամբրոնացի իշխան միանձն, և Գրիգոր Դ. կաթողիկոսի բարձր հրամանը հազիւ կրցաւ բաժնել զինքն՝ այն սիրելի ճգնարանէն։ Կը յիշուին նոյնպէս աւելի հին մե-ծարոյ անձինք, Սեբաստիոյ հայրապետը Վլաս, Մեծն Բարսեղ, և ուրիշ ականաւոր անձինք, որ ճգնած կամ առանձնացած են այսպիսի մենա-րաններու մէջ։ Հնոյն Կապադովկիոյ և փոքր Հայոց Անապատները շատ աղէկ ծանօթ են, նման Եգիպտոսի ներսերը գտնուածներուն։ Այսչափ այս նիւթիս վրայ։

Այս այրին հակառակ կողմը կայ աճազին միապաղաղ ժայռ մը, որուն, ինչպէս նաև դիմացն եղող ժայռին վրայ հիթիթեան արձանա-գրութիւնք կը գտնուին, որոնց պատկերը ամերիկացի ճանապարհորդք հաներ տարեր են։

Այս փոքր քաղաքին արհեստներն են գօտի, շայաք, գորգ հինել, զգեստեղէնի, սեննկի, կարասեղինաց բրդեղէն և բամբակեղէն պատրաս-տութիւններ և նմաններ, որ բաւական զարգացած են։ Վաճառականու-թիւն և փերեզակութիւն իրենց շատ սիրելի են։

Հայոց տները կը հաշուին այժմ իբր 2000 որոնց 100 տունը կաթողիկեայ են և իբր նոյնչափ բողոքական։ Հայք ունին հինգ եկեղեցի, և դպրոցներ որոնց հին ցուցակն երկայն է, անշուշտ այժմ նորոգելու

վրայ են։ Կաթողիկեայք՝ երկու եկեղեցի և դպրոց ունին. Նաև բողոքականք իրենց աղօթարանները։ Կիւրինցիք ընդհանրապէս ընթերցասէր են, և մեծագոյն մասը կարդալ գրել գիտեն։ Մինչև հիմա շատ ընտանիքներ հետզհետէ գաղթած են Տաճկաստանի այլ և այլ քաղաքները՝ հազար տնէն աւելի։

Կիւրնայ Տաճիկները իբր հազար տուն են, ունին 4–5 *մզկիթներ մեծ և փոքր։*

Կիւրնայ մօտերը կան հետևեալ հայաբնակ գիւղերը.

Գարա–Սար, որ Մելասի ուրիշ փոքր վտակի մը վրայ է. ունի այժմ 150 *բնակիչ. եկեղեցին Ս. Սարգիս, կայ վարժարան։*

Մերձաւոր տեղ Սաղի ձոր անուանեալ կայ մեծաշէն խան մը կիսաւեր, այս ևս ինչպէս՝ կ՚ըսուի, բնութեան մը ժամանակ՝ քրիստոնէից եկեղեցիները քանդելով շինուած է։

Գարա–Լօրէն 5 *ժ. դէպ հիւսիս. բնակիչքն* 80 *տուն Հայ և* 20 *տուն Տաճիկ։*

Ջախըրըն–Բէօյիւ. յիշեալ գիւղին և Մանճըլըքին մէջտեղը, բնակիչքը 20 *տուն՝ հայ։ Նաև Քրիստիան էրէնի Կիւրնէն* 3 *ժ. իբր* 10 *տուն հայ և* 5 *տուն Քիւրդ։*

Բազմաթիւ են Տաճկաց գիւղերը. գլխաւորներէն մի է Թէլլին, որոյ հասարակ անունն է Տանէլ կամ Տանըլլի, զոր կ՚ուզեն ընել Դանիէլի, բայց գործածուած անունն աւելի յարմար է և կը պատասխանէ Տանէք կամ Տանէքսա հնչման. բնակիչք իբր 300 *տուն որոնք ըստ աւանդութեան հայութենէ դարձած են։ Հոս հիւսիսէն գալով կը խառնուի Կէօլտէլլի–Սույի հետ ձկներ վտակը (Պալըքլը–Սու) և կը կազմեն Թոքման կամ Մելասն, որ ուրիշ վտակներ ևս ընդունելով աջէն և ձախէն, կ՚երթայ կը թափի Եփրատ։ Մելասի և իր վտակաց կարմրախայտ ձուկը նշանաւոր է և բարեհամ։ Կան նաև ուրիշ շատ գիւղեր. ինչպէս Սաչ–Ձրղաղ, Կէօպէկ–Լօրէն և ուրիշներ, առհասարակ Տաճկաբնակ։ Տանէլի հետ կան* 50–60 *գիւղեր և ասոնց մէջ կը համարին* 2–3,000 *տուն բնակիչ, որոնց հազիւ* 50–100 *տունը Հայ են։*

Կանդալ կամ Գանդալ. կեդրոն համանուն գայմագամութեան, ինչպէս առաջ ես ըսի, կը համարիմ սաիկա Կողոնիա Կապադովկիոյ ըսուած հին քաղաքը. հիւսիսակողմն եղածէն տարբեր, որ և այս անշուշտ Հռովմէական գաղթականութիւն մ՚ էր, ինչպէս անունէն ևս յայտնի է։ Յառաջագոյն բնակչաց մեծագոյն մասը հայ էր, հիմակ ևս իբր 250 տուն գտնուելու է անոր մէջ, ունին եկեղեցի և վարժարան. դիրքը յարմար է զարգացման և երկիրը բարեբեր։

Մանճըլըք գիւղ, Կիւրնայ հիւսիսակողմն, ունի վանք Ս. Թէոդորոսի անուամբ, որ կը կարծուի թէ Ժ.Զ. դարուն շինուած է. աշտարակաձև է եկեղեցին, ունի բարձր փոքր լուսամուտներ, քովը կայ վանքը՝ հին շէնք։ Ժողովուրդը Հայ է, քաջ և կորովի անձինք 200 և աւելի տուն։ Առաջնորդն տեսն մը հոս կը նստէր, հիմակ փոխադրուած է Կիւրին։

Ուլաշ. Հայաբնակ մեծ գիւղ է ընդարձակ դաշտի մէջ, առջևը կայ աղի լիճ մը, բայց աղը լեղութիւն մ՚ունի. իրենց հին արտօնութեան վրայ, զոր սուլդան Մուրատ Դ.էն ընդունած էին գրած եմ պատմութեան մէջ։ Երեք անգամ գնացած եմ այս գիւղը. վերջին անգամ երթալուս ունէր 117 տուն, 1000 անձ, և կը պատկանէր Թօնուզի Գազային, հիմակ անշուշտ շատ աճած են. եկեղեցին Ս. Աստուածածին, կայ վարժարան. Թէճիր լերան ստորոտը շինուած են ջրաղացներ, Սեբաստիայէն հեռու է 8 ժամու ճամբայ։

Քանի որ կարգ խօսից հասաւ Թօնուզ Գազային, տար և Ագիգիէի համար կան ըսելիքներ. Նախ որ՝ ասոնք հին ժամանակի բերման համեմատ շատ մը փոփոխութեանց ներքև ընկած էին, երկրորդ՝ այս գաւառները Բագրատունեաց և Արծրունեաց վերջերն և Ռուբինեանց սկիզբները մեծ մաս ունեցեր են այն ժամանակի դէպքերուն մէջ. Նա թէ Արասեան Գագիկ Թագաւորն իր հանգստեան վերջին տարիներն Ագիգիէ գաւառին և անոր շուրջն անցուցեր է, և եթէ Վէրան – Շէհր չէ Լարիսան, այն ատեն պէտք է համարիլ զայն Ծամնդաւն, որ համանուն գետին աղբերականց մօտերն է։ Ծանօթութիւնք որչափ և մութ ըլլան, և քաղաքականութիւնք թէև շատ մը փոփոխութեանց առիթ

տայ, բայց և այնպէս դարեր առաջ հանդիպած դէպքերը չեն կրնար ուրացուիլ։ Հիմակ համառօտեմ հայաբնակ գիւղերուն նկատմամբ ձեռքս հասած ծանօթութիւնները։

Այս կողմերս ամենէն նշանաւոր և մեծկակ Հայաբնակ աւանն է Կէմէրէկ. բնակչաց թիւը կը դնեն ոմանք 300 որ շիտակ չէ, ոմանք Հայերը 5–600 այլք 800 և ուրիշներ 1000 նաև 1200 տուն կը հասցնեն. իսկ Տաճկաց թիւը կը համարին 250 տուն. նորագոյն տեղեկութիւն մը Հայերը կը համարի 1500 տուն, և Տաճիկները 500 տուն, « կալցի որ որպէս և կամի ». կան նաև բողոքականք, որոնց թիւը կը դնեն 50 տուն։ Հայք ունին երկու եկեղեցի, որոնց կից են երկու ծաղկոց. բողոքականք ևս ունին աղօթարան և դպրոց։ Կը բաժնուի այս աւանը երկու թաղի՝ վերի և վարի, և Միւտիրութիւն է Թոնուզի կամ Շէհիր–Գըշլայի Գազային մէջ և կը պատկանի Սեբաստիոյ վիլայէթին։

Կէմէրէկի մօտերը կը գտնուին հետևեալ գիւղերը.

Չէփնի, Սեբաստիոյ հարաւակողմն, ունի իբր 600 տուն բնակիչ, որոնց 200–250 Հայ են. և ասոնց 80 տունը կաթողիկեայ, որոնք ունին վարժատուն մը և բնակարաններ։

Տէնտիլ. որ ունի 180 տուն Հայ, որոնց 15 տունը կաթողիկեայ են, և դպրոց մ'ունին։ Այս գիւղը Չէփնիի մօտերը կը գտնուի։

Պիւրհան. 170 տուն բոլորը Հայ։
Թէքմէն. 130 » » »
Չաթ. 200 » » »
Բարակէօզ. 200 » » »
Թօփաճ. 200 » » »
Ալա–Քիլիսէ. 30 » » »
Եարալթըն 150 տուն կէս Հայ և կէս Թուրք։
Սիքանթ » » » » » »

Թոնուզ Գազային մէջ կան ևս ուրիշ հայաբնակ գիւղեր. որոնք են Գարա–Սար, Գարաճաճըլը կամ Մաղարա, որ մօտ է Տէլիւքլի–Թաշ թրքաբնակ գիւղի։ Եւս

Բաշա գեղ.

Բաթըրի գեղ.

Գազը–Մաղարա.

Գանթարոզ.

Գուրտլու–Գայա.

Շէհիր–Գըշլայի և Թոնուզի մէջ ևս կան Հայեր թէև սակաւաթիւ։

Սարմըսագլը կամ Պիւնեանը Համիտ, վերջերն եղաւ աթոռ գայմագամի. ունի 600 տուն բնակիչ Տաճիկ, Հայ և Յոյն։ Հայոց եկեղեցին Ս. Աստուածածին է։

Կան այս կողմերը ուրիշ քանի մը գիւղեր դէպ հարաւային արևմուտք, ինչպէս.

Կիկլի. իբր 100 տուն Հայ։

Սարը–Օղլան, իբր 120 տուն Հայ։

Էգրէկ կամ Ագարակ. հայաբնակ մեծ գիւղ։ Բնակչաց թիւը 400 տուն, ունի եկեղեցի Ս. Աստուածածին և Ս. Գէորգ և վարժարան։

Սըվըլը. 1 ժ. հեռու է Ագարակէն, ունի 100 տուն հայ բնակիչ և եկեղեցի։

Զէք գիւղ հայաբնակ։

Այս երեք գիւղերու գերեզմանատանց մէջ կը գտնուին բևեռագիր հնութիւններ և կեսարիայէն 8 ժ. հեռու են դէպ հարաւային արևելք. և կը պատկանին Ազիզիէ Գազային։

Նոյն կողմերն են նաև,

Սաղըը, ուր է հայազգի Սէլեան Օղլուի Չիֆթլիկը՝ Ագարակէն 2 ժ. հեռու, որ 100 տուն հայ բնակիչ ունի։

Թաչըն, նոյնպէս 2 ժ. հեռու, ուր կան Հայեր։

Այս վերջին գիւղերն ևս կը վերաբերին Ազիզիէ գաւառակին։ Իսկ գլխաւոր աւանին մէջ կայ իբր 1000 տուն բնակիչ, որուն 120 տունը Հայ են, մեծաւ մասամբ կեսարիայէն գաղթած. ունին եկեղեցի և դպրոց. կան նաև բողոքականներ 5 տուն, որոնք ունին աղօթարան։ Ոմանք կը համարին՝ որ Ազիզիէ կը գրաւէ հին Արիարաթիա քաղաքին տեղը։

Գ. — Դարանդա կամ Տարէնտէ

Թոզմա (Մելոս) գետին երկու եզերքը տարածուած է երկայն կիւրինէ դէպ ի Մալաթիա ճամբուն վրայ, առաջինէն վեց ժամ հեռու, և երկրորդէն 12: *Յամին* 699 *ՃԽԸ. Արաբները գրաւեցին այս բերդաքաղաքը Յունաց ձեռքէն, բայց կայսերականք նորէն առին զայն, և այս տիրափոխութիւնը մէկ անգամէ աւելի եղած է: Քաղաքային պատմական մասը թողլով հոս, կը յիշեմ հետևեալ դէպքը:*

Կոստանդին Դուկաս կայսեր հրամանաւ Խաչիկ Բ. կաթողիկոս ժամանակ մը Կ. Պոլիս մնալէն ետև, յամին 1064 *փոխադրուեցաւ Թաւբլուր, զոր կայսրն իրեն պարգևեց, նաև երկու վանք Դարանդայի մէջ, և այսպէս Թաւբլուր եղաւ կեդրոն և աթոռ Հայրապետութեան Հայոց, որ անկէց առաջ փոքր ժամանակ մը Սեբաստիա էր: Խաչիկ այս նոր կայարանին մէջ քանի մ'ամիս միայն ապրեցաւ և Անւոյ առման և կոտորածին լուրը լսելով սրտին ցաւէն վախճանեցաւ:*

Տարէնտէ գիւղաքաղաքը զետեղուած է արևելքէն Ալի-Տէրէ, արևմուտքէն Հայէկ լերանց մէջ, օդը մաքուր, պարտէզներով զարդարուած, թութը քաղցր և առատ է, ունի ուրիշ պտղատու ծառեր, խնձոր, տանձ, ծիրան, սալոր, և ուրիշ տեսակներ: Բնակիչքը կը համարին 3000 *տուն, մեծագոյն մասը Տաճիկ են: Հայք ատեն մը կը համարուէին* 500 *տուն, ապա* 450 *տուն, վերջապէս ետքերը գրուեցաւ* 380 *տուն,* 1700 *անձ, և կը բաշխուին այսպէս.* 200 *տուն Եկեղեցւոյ թաղը,* 40 *տուն Գալարըմի թաղն,* 70 *տուն Հայուն-զոզ թաղը, Եէնի - Մահլէն* 20 *տուն և Հատիր թաղը* 30 *տուն: Այս հինգ թաղերը Հայէկ լերան ստորոտը շարուած են մէկ կարգի վրայ: Տարէնտէն ունի երեք եկեղեցի և նոյնչափ դպրոց, որոնց մէջ կը յաճախեն* 2-300 *աշակերտ: Կայ նաև վանք մը Ս. Կարապետի անուան որ Մշոյ և Կեսարիոյ համանուն վանքերէն ետև կը համարուէր իբր փոքր Ս. Կարապետ մը,*

թէ և Սրբոյն յիշատակը նոյն է, ուր որ ըլլայ. և որչափ կը յիշեմ այս ևս ուխտատեղի էր։

Աշոտի, աւան է հիմա։ Հին ժամանակ կար այս կողմերը՝ Ջահանայ մօտ Լիւկանդեան հայ նախարարութիւնը, համաձայն գրութեան Հ. Միքայէլ Վ.ի Չամչեան՝ որ էր «երկիր բերրի և արգաւանդահող»։ Արդ՝ շատ մը փոփոխ դէպքերէն ետև՝ որոնք անցան այս գաւառին նկատմամբ, Մեղրիկ – Մելի կամ Մէլիաս հայ իշխանը Կ. Պոլսէն գալով փոքր Հայք, հաւաքեց խումբ մը զօրաց և եկաւ Լիւկանդիա գաւառը 888ին և շինեց հոն դղեակ մը զոր անուանեց Աշոտի յանուն Աշոտ Ա. Բագրատունի թագաւորին, Չամչեան Հօր պատմութեան համեմատ. և ուրիշները՝ կառուցած կը համարին Լիւկանտ քաղաքը։ Ես այս դէպքը յիշած եմ պատմութեան մէջ իր պարագաներով. հիմակ պէտք է աւելցնեմ, որ ոմանք Լիւկանդիոն կամ Լիւկանդիա քաղաքը կը դնեն Պեհեսնիի մօտերը. սակայն լաւ է որ շատ չի տարածենք Մելիասի սահմաններն, ինչու որ Մալաթիան և անոր հարաւային կողմերը աւելի ուշ միացան Լիւկանդիոյ հետ։ Ես բաւական համարինք այս իշխանին Մելոսի և Պիւրամայ (Ջահան կամ Ճիհան) վերին հովիտներն, ուր եկան բնակեցան շատ հայեր և քիչ ժամանակի մէջ բազմամարդացաւ երկիրը։ Լէոն կայսրը թեմ Լիւկանդիոյ անուանեց այս գաւառն, և թեմակալ կարգեց նոյն ինքն Մեղրիկ կամ Մելիաս իշխանն։ Ասոր յաջորդներէն էր անշուշտ Սմբատ Թոռնեցի իշխան Ջահանայ կամ Լիւկանդիոյ, որ գտնուեցաւ Հարք ժողոված Հայոց համագունդ բանակին մէջ յամին 973 և ինքն ընտրեցաւ Աշոտ Գ. Թագաւորէն, որ դեսպանութեամբ երթայ առ Յովհ. Չմշկիկ կայսր. և ինքն անուանեցաւ հրամանատար բիւր մը հայ գնդին, որ տրուեցաւ կայսեր յօժանդակութիւն։ Սա յաջող պատերազմէն ետև պատուեցաւ ինքնակալէն և անուանեցաւ Մագիստրոս և Փրօթոսփաթոս։ Աշոտի ունեցաւ ևս իրեն թեմական եպիսկոպոս, և կը յիշուի 1585 Ազարիա կաթողիկոսին ժամանակ Մարտիրոս եպիսկոպոս Աշոտու, ինչպէս նշանակած եմ պատմութեան մէջ։

Հիմակ Աշոտի նահեայ է Տարէնտէ գաւառին մէջ, բնակչաց մեծ մասը Տաճիկ են, կան նաև իբր 200 *տուն Հայեր, թէպէտ ոմանք կը նուազեցնեն* 100 *տան, որոնք ունին եկեղեցի և վանք մը Ս. Յակոբ։*

Տարէնտէ Գազան ունի հինգ վեց նահիէ և 20–30 *գիւղ, որոնց մէջ կը գտնուին ըստ ոմանց* 17,000 *բնակիչք, իսկ Հայոց ընդհանուր թիւը կը դնեն* 4950 *որ սովորական աճման համեմատ* 6,000 *ի հասած ըլլալու էր, և Տաճկաց թիւը* 14–15,000։

ՑԱՆԿ

	Էջ
ՅԱՌԱՋԱԲԱՆ	5

Գլուխ Ա. – Նախաւոր գիտելիքներ

Ա. – Անուն և դիրք Փոքուն Հայոց	9
Բ. – Փոքր Հայոց բաժանմունքները	12
Գ. – Փ. Հ. բնակիչները	18

Գլուխ Բ. – Փոքր Հայոց հին պատմական դէպքերը

Ա. – Փոքր Հայոց իշխանութիւնները	21
Հատուած առաջին	21
Հատուած երկրորդ	25
Հատուած երրորդ	29
Բ. – Փոքր Հայք Կ'իյնայ Միհրդատայ և Տիգրանայ ձեռաց ներքև. Հռովմայեցւոց հետ պատերազմ	33
Գ. – Փոքր Հայոց համար Հռովմայեցիներուն հետզհետէ սահմանած կարգերն. Որոյն թագաւորութիւնը.	37
Դ. – Պիւտոդորիս թագուհին և Պողեմոն Բ. կը թագաւորեն և Սեբաստիոյ վրայ տիղեկութիւն	40
Սեբաստիա քաղաքին տեղը, հիմնարկութիւնն և զարգացումը	42
Ե. – Փոքր Հայոց նոր թագաւորութիւնն, և Հայաստան կ'ըլլայ գաւառ Հռովմէական .	46

Գլուխ Գ. – Քրիստոնէական կրօնք Փոքր Հայոց մէջ

Ա. – Ծագումն լուսոյ Աւետարանին Փոքր Հայց մէջ. և առաջին քարոզիչները . .	49
Բ. – Փոքր Հայոց մէջ Քրիստոսի սիրոյն համար նահատակուող Մարտիրոսաց վրայ տեղեկութիւն մը	55
Գ. – Առաջին Հայոց կամ Սեբաստիա գաւառին եկեղեցիները	60
Կարևոր ծանօթութիւն	66
Դ. – Եպիսկոպոսարանք Երկրորդ Հայոց	68
Ե. – Մետրապօլտութեանց սկիզբը. Հայաստանի երեք եկեղեցական գաւառաց հանգամանքը.	74

Գլուխ Դ. – Քաղաքական գործեր փոքր Հայոց՝ Հռոմայ եւ Կ. Պոլսոյ ինքնակալութեան ներքեւ Է. դարէ մինչեւ ԺԱ. դարուն սկիզբը

Էջ

Ա. – Պատմական դէպքեր 400էն մինչեւ 570 . 82
Բ. – Փոքր Հայոց իշխաններն եւ զօրավարները (570-630) . 87
ա. Յովհան Նախարար . 87
բ. Մուշեղ Մամիկոնեան դուքս . 90
գ. Մժէժ գնունի իշխան եւ զօրավար . 93
Գ. – Կայսրութեան երկիրն՝ Արաբներուն բրած արշաւանքը եւ Փոքր Հայոց հայազգի իշխանները (630–741) . 94
դ. Վասակ իշխան . 95
ե. Շապուհ իշխան . 96
զ. Սմբատ պատրիկ իշխան . 97
է. Արտաւազդ իշխան եւ զօրավար . 99
Դ. – Արտաւազդի ինքնակալութիւնը եւ այլ դէպքեր. (741–830) . 99
ը. Նիկետ իշխան եւ զօրավար Փ. Հայոց . 99
թ. Վարդ Պատրիկ իշխան եւ զօրավար . 101
ժ. Նիկեփոր Պատրիկ զօրավար . 101
ժա. Աւեքս Մուշեղ իշխան եւ զօրավար . 102
ժբ. Թէոդոր Պատրիկ զօրավար . 103
ժգ. Լէոն Արծրունի իշխան եւ զօրավար . 105
ժդ. Մանուէլ Մամիկոնեան իշխան եւ զօրավար . 105
Ե. – Փոքր Հայոց մէջ պատահած դէպքեր։ — Խմիրներ։ — Պաւլիկեան աղանդաւորներ։ — Պատերազմներ. (830-870) . 106
Զ. – Մեծին Վասիլի ինքնակալութիւնը. Պետութեան կրկին ծաւալումը դէպ Արեւելք եւ ապա նուազումն (870–920) . 114
Մեգրիկ կամ Մելի հայ իշխան Թեմակալ Լիկանդիոյ . 120
Է. – Յովհան Կուրգէն եւ Յովհան Ձմշկիկ. եւ Յոյն ինքնակալութեան դէպ Արեւելք զօրաւոր ծաւալումը. (920–976) . 122

Գլուխ Ե. – Փոքր Հայոց մէջ հայ գաղթականաց աճումն եւ Արծրունի Հայ պետաց Սեբաստիա փոխադրուիլը (976–1080)

Ա. – Երեք զօրավարաց պատմութիւնն. եւ Հայոց հանգամանքը Սեբաստիոյ գաւառին մէջ (976-1020) . 130
Բ. – Վասպուրականի Հայ Պետաց Սեբաստիա փոխադրուիլը . 136
Գ. – Յովհաննէս–Սենեքերիմ . 141
Դաւիթ Թագաւոր Սեբաստիոյ (1021–1027) . 144
Դ. – Ատոմ Թագաւոր Սեբաստիոյ (1037–1070) . 146
Առաջին արշաւանք Սելճուք Թուրքաց . 149

ԷՋ

Կրօնական խնդիր Յունաց և Հայոց մէջ և այլ դէպքեր 152

Ե. – Սելճուքաց երկրորդ արշաւանքը Փոքր Հայք և Սեբաստիա (1070-1080) . . 155

Մանազկերտի մեծ ճակատամարտը 159

Սեբաստիոյ իշխանաց վերջին անցքը 163

Գլուխ Զ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսաց յաջորդութիւնը. — Սելճուք սուլթաններուն տիրանալը։ — Տանիշմէնտները (1074–1174 կամ 1188)

Ա. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսները. 166

Բ. – Սեբաստիա Սելճուք իշխանութեան ներքև — Տանիշմէն Տոհմը կը տիրէ . . 170

Գ. – Տանիշմէն Տոհմին իշխանաց յաջորդութիւնն և Հայ արքեպիսկոպոսները . . 173

ա. Մուհամմէտ Իսմայէլ Կիւմիշ Թէկին 173

բ. Էմիր-Ղազի-Պէն-Մուհամմէտ. 175

գ. Մէլէք-Մուհամմէտ կամ Մահմուտ-Պէն-Ղազի 177

դ. Եաղուպ-Արսլան-Պէն-Ղազի 179

ե. Մէլէք-Իսմայիլ 184

զ. Տրսուլուն կամ (Տանուն) Պէն Մուհամմէտ 186

Դ. – Սեբաստիոյ Հայ Եկեղեցւոյն դէպքերը այս ժամանակ 1177–1207 188

Գլուխ Է. – Սելճուք պետաց իշխանութիւնն ի Սեբաստիա։ — Թաթարաց արշաւանքները։ — Պիւրհանէտտին Տոհմը։ — Եւ Սեբաստիոյ աւերումը Լէնկ-Թիմուրէն (1188–1441)

Ա. – Սեբաստիա նորէն կ'իյնայ Սելճուքաց իշխանութեան ներքև (1188–1230) . . 193

Բ. – Թաթարաց արշաւանքները 1230–1307 197

Գ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսներն և անոնց ժամանակ հանդիպած դէպքերը . 200

Դ. – Պիւրհանէտտին Տոհմին իշխանութիւնը. — Ստեփանոս Բ. արքեպիսկոպոսի նահատակութիւնը 206

Ե. – Լէնկ-Թիմուրի արշաւանքն, և Սեբաստիոյ աւերումը 212

Թիւրքմէն իշխանութեանց վրայ 217

Սուլթան Մէհէմմէտ Ա. Չէլէպի Սեբաստիա կ'արշաւէ 218

Գլուխ Ը. – Սեբաստիա Օսմանեան ինքնակալութեան ներքեւ (1441–1722)

Ա. – Հանգամանք կուսակալութեան Սեբաստիոյ. Նախկին կուսակալներն, և այլ և այլ դէպքեր 220

Սուլթան Սէլիմ Ա. Եավուզ Սեբաստիա կու գայ 225

Բ. – Օսմանեան կուսակալներ և Ճէլալիներ 225

ա. Ճէլալիներուն վրայ. — Ո՞վ էր Ճէլալի 226

բ. Նոր պատմութիւն Թիւրքմէնաց և Տէրվիշներու 227

Էջ

գ. Ճէլալիներուն նոր դէպքերը 228
դ. Ճէլալիներուն զօրանալը. 230
ե. Առաքել պատմիչ այսպէս կը դատաւորէ Ճէլալիները 231
զ. Ճէլալիներուն նուաճումն. Ուրուճովայի ճակատամարտը . . . 232
է. Փոքր Ասիոյ Ճէլալիներուն պարտութիւնը 234
ը. Եուսուֆ բաշայի և Միւսէլլի Չեավուշին ձերբակալումը . . . 235
Գ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսներն և անոնց ժամանակի գործերն . . . 236
Դ. – Օսմանեան կուսակալները 242
ա. Ապազա բաշայի գործերը 242
բ. Թէյյար բաշայի գործերն և Ապազայի պարտութիւնը 243
գ. Ապազա բաշայի կրկին ապստամբութիւնը, ներումն և մահը . . . 245
դ. Մուրատ Դ. սուլդանի գործերն, և իր ժամանակի կուսակալները . . 245
ե. Ուլաշ գիւղին հանդիպած դէպքը 246
Ե. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսներն և օսմանեան կուսակալները . . . 247
ա. Յաջորդութիւն օսմանեան կուսակալաց 247
բ. Յաջորդութիւն արքեպիսկոպոսաց 249
Զ. – Սեբաստիոյ կուսակալներն և արքեպիսկոպոսները. 253
ա. Քէօբրէլի Ահմէտ բաշա կուսակալ Սեբաստիոյ 254
բ. Նահատակութիւն Միքայէլ քահանայի Երզնկցոյ 256

Գլուխ Թ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսներն եւ օսմանեան կուսակալներ

Ա. – Մխիթար Մանուկեան, որ ետքն եղաւ առաջին Աբբայ Մխիթարեանց . . . 262
Յովհան վարդապետ Եւդոկիացի 268
Բ. – Արքեպիսկոպոսութիւն Տեառն Առաքելի. Նորոգութիւն վանօրէից, և ուրիշ դիպուածներ. 267
Գ. – Արքեպիսկոպոսութիւն Տեառն Եղիազարու, և Տեառն Կարապետի. . . . 275
Դ. – Յովհաննէսը կը վերցուի և Տէր Յակոբ դարձեալ կը հաստատուի արքեպիսկոպոս. . 280
Ե. – Արքեպիսկոպոսութիւն Տեառն Գրիգորի, և օսմանեան կուսակալներ . . . 287
Զ. – Օսմանեան կուսակալներ. փոխանորդութիւն Կարապետ և Յովհաննէս վարդապետաց, և առաջնորդութիւն Թադէոս արքեպիսկոպոսի 291
Է. – Արքեպիսկոպոսութիւն Յովհաննու վարդապետի, և օսմանեան կուսակալներ . . 295
Ը. – Օսմանեան կուսակալներ. Յովհաննէս արքեպիսկոպոսի վերջին գործերն . . . 302

Գլուխ Ժ. – Սեբաստիոյ վիճակին կաթողիկէ Հայոց վրայ

Ա. – Սեբաստիոյ եկեղեցւոյն ընթացքն իր սկիզբէն 307
Բ. – Կաթողիկէ Հայոց կերպաւորումը Սեբաստիոյ վիճակին մէջ. . . . 313
ա. Թոգադ. 313
բ. Երզնկէ և Սեբաստիա 315
գ. Թոգադ և Երզնկէ 320
դ. Կիւրին. 322

Էջ

Գ. – Սեբաստիոյ վիճակին հայ կաթողիկէ առաջնորդները, կամ կաթողիկոսական տեղապահները . 326
Յովսէփ Ծ. վարդապետ . 327
Յովհան Ծ. վարդապետ Կիրակոսեան Եէնի-խանցի . 328
Յարութիւն Ծ. վարդապետ Շիրինեան Գաղատացի . 329
Միքայէլ արքեպիսկոպոս Կեսարիոյ Բրգնիկցի . 330
Պօղոս Ծ. վարդապետ Ճանեան . 332
Իգնատիոս Գալըպճեան արքեպիսկոպոս Ամասիոյ . 334
Դ. – Եպիսկոպոսական աթոռներ կը հաստատուին . 336
Իգնատիոս արքեպիսկոպոս Ամասիոյ . 337
Յովհաննէս Վ. Բեռնարդոսեան . 338
Ղևոնդ Խոսխոսունի արքեպիսկոպոս Մելիտինոյ . 338
Կարապետ Գասիֆեան . 338
Թեմական եպիսկոպոսներ. Կարապետ Գասիֆեան եպիսկոպոս Սեբաստիոյ և մասակարար Եւդոկիոյ . 339
Սահակ Վ. Ճանեան Բրգնիկցի . 339
Լեւոն վարդ. Քէչէճեան Մարաշցի . 340
Ե. – Սեբաստիոյ օսմանեան կուսակալներուն ցուցակը Տաճկաց 1239 թուականէն . 341

Գլուխ ԺԱ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսութիւնն եւ Թոգատի եպիսկոպոսութիւնը

Ա. – Թոգադ կամ Եւդոկիա . 345
ա. Թոգադու հայ գիւղերն . 350
բ. Զիլէ Գազա . 353
գ. Էրպաա Գազա . 353
դ. Նիքսար Գազա . 354
Բ. – Սեբաստիոյ արքեպիսկոպոսութիւնն առանձինն . 355
ա. Շապին-Գարահիսար . 356
բ. Սեբաստիա քաղաքն և իր շրջակայքն . 358
գ. Սեբաստիոյ մերձակայ աւանները և հայ գիւղերն . 363
Գ. – Սեբաստիա գաւառին արևելեան և հարաւային կողմերը . 368
ա. Տիվրիկ Գազա . 368
բ. Կիւրին-Մանճըլըք և Դարանդա . 372
գ. Դարանդա կամ Տարէնտէ . 379

ՄԵԼԻՏԻՆԷ

(ՄԱԼԱԹԻԱ)

ՄԵԼԻՏԻՆԷ

ԿԱՄ ՄԱԼԱԹԻԱ ԳԱՒԱՌ

Հին առեն Փոքր Հայոց երկրորդ գաւառը կը համարուէր Մելիտինէ, համաձայն բաժանման Հռովմէական ինքնակալութեան, մանաւանդ Մեծին Կոստանդիանոսի կարգադրածին, ինչպէս յիշած եմ պատմութեան մէջ: Բայց մոռնալու չէ՝ որ Խորենացին կը դնէ Երրորդ Հայք, կամ ևս՝ որ կը դնեն Առաջին և Երկրորդ Հայք, իշխեցողաց կամքին համեմատ:

Եկեղեցական հին բաժանման հետևելով՝ Մելիտինէ իր մետրապօլտութեան ներքև ունէր Կոմանա, Կոկիսոն, Արիարաթիա, ևս Կիթարիձոր՝ որոնք Փոքր Հայոց մասը կը կացուցանէին, նաև Սոփենէ (Ծոփք) և Տիոսպօլիս, որոնք Չորրորդ Հայոց կը պատկանէին. իսկ այժմեան գաւառին և Եպիսկոպոսութեան գալով՝ այդ եօթը քաղաքներէն և ոչ մին կը վերաբերի արդ Մալաթիա գաւառին, ոչ եկեղեցական և ոչ քաղաքական նկատմամբ, բայց այս կորուսած մասին փոխարէն՝ իր գաւառէն մնացած մասին հարաւակողմն տուած է բաւական տեղ հին Կոմագ (Կոմաքենէ)էն, որ ետքէն Եփրատացիք (Եպրատխիա) անուանեցաւ. և աստ հիւսիսային արևելեան մասն է, որ միացած է Մելիտինէի եպիսկոպոսութեան և արդի Մալաթիա գաւառին հետ, որոնք ճշդիւ նոյն սահմանները կը պահեն:

Մելիտինէ պահած է հին քաղաքներէն կեդրոնն իր ամբողջ սահմաններովն, և Արկա քաղաքն. իսկ Կոմագէն ստացած տեղերն են. Բերրաւ (Հասան Մանսուր), Սամոսատա (Սամսատ) և այլն, որոնք ժամանակին եպիսկոպոսական աթոռներ էին Եփրատացւոց աշխարհին մէջ։

Մալաթիա եղաւ Սանճագ Օսմանեան Պետութեան ներքև, երբեմն կախուած էր Մարաշէն, որ ունէր իր գլուխը Պէյլէր Պէյի (իբր վալի) և չորս գաւառի կամ սանճագի կը բաժնուէր, որոնց երկուքն էին Մալաթիա և Սէմիսաթ. ետքինն այս մասն եղաւ Մալաթիա Սանճագին որ ժամանակ մը Խարբերդի և ժամանակ մը Տիարպէքիրի հետ միանալէն ետև այժմ Խարբերդի կամ Մամուրէթ–իւլ Ազիզի մասն է, և ունի հինգ Գազա (գաւառ), Մալաթիա՝ կեդրոն, Արկա, Քիահթա, Հէօսն–Մանսուր և Պեհեսնի. զորոնք երկու մասի պիտի ամփոփեմ՝ հիւսիսային և հարաւային։

Հիւսիսայինը կը բովանդակէ իր մէջը Մալաթիա կեդրոնն և Արկա Գազան (գաւառակ)։

Արղա (Արկա)

Տիվրիկի, Տէրէնտէի և Մալաթիայի միջոցը կ'իյնայ, Սանճագին հիւսիսային արևմտեան կողմը։ Պետութիւնը կ'անուանէ Ագչէ – Տաղ (Աղճա–Տաղ). գլխաւոր քաղաքն է Արղա (Արկա), Մալաթիոյ արևմտեան կողմը 12 ժ. Թոգմա գետին վրայ, որուն երկու եզերքը տարածուած է գաւառակը։ Հին ատեն եպիսկոպոսական աթոռ էր՝ Մելիտինոյ Մետրապօլտութեան ներքև և հիմա տաճկաղէն են բնակիչքը, կան և սակաւաթիւ Հայք՝ 15–20 տուն։

Երեք Նահիէի կը բաժնուի Արկա, որոնք են Հէքիմխան, Քիւանէ և Քիւրէճիկ։ Վերջի երկուքը Քուրդ են՝ Քուանալըները Սուննի են, և Քիւրէճիքները՝ Ալէվի։ Ունին իրենց հրամանատար Պէյեր և գլուխներ. իրենց թիւն էր ատեն մը 15–20,000։ Ասոնք լեռնակողմերը կը բնա-

կին, և առաջ շատ նեղութիւն պատճառեցին վարչութեան՝ իրենց ապստամբութիւններովը։ Վրդովեցին գեղերու խաղաղասէր բնակչաց անդորրութիւնն և ճանապարհորդաց հանգիստ երթևեկը։ Յանդգնեցան նաև արշաւելու մինչև Մալաթիոյ դռները. անգամ մը միայն 10-15 հոգւով, և երբեմն մեծ բազմութեամբ. և այն ատեն կու գային կը բանակէին քաղաքին մօտերը Շահնախան ըսուած տեղը։ Ասանկ գլխաւոր դէպք մը հանդիպած է 1862ին, զոր Իսմայիլ բաշա՝ Խարբերդի վալին՝ նուաճած է. ուրիշ անգամներ ևս եղած են նման դէպքեր։ Հիմակ Տէրութիւնն ընկճած է անոնց ըմբոստութիւններն և դադրած է պաշտօնապէս ապստակութիւնն, և իրենք ըստ բաւականի հանդարտ կը կենան գիւղերու մէջ և կը պարապին երկրագործութեան։ Նոյն կողմերը կայ նաև Տըրիճանը աշիրէթը։

Հէքիմխան մեծկակ գեղ մ'է կամ աւան, ուր կը բնակին Հայք 70-80 կամ ևս 100 տուն. կէսէն քիչ պակասը կաթողիկեայ են. իրենց եկեղեցին փոքր է։ Հայերն ևս ունին եկեղեցի։ Աւանը հեռի է Մալաթիայէն 12 ժ. ամառը կ'երթայ ժողովուրդը Ճիւղինկլիտ որ 2 ժ. է Հէքիմխանէն, լեռնադաշտ մը, օդը, ջուրը լաւ և առատ են, և տեղը շատ զուարճալի։

Հասան Չէլէպի, հեռու է Հէքիմխանէն 3-4 ժ. տաճկախառն գիւղ. մէջը կան 25-30 տուն Հայ, որոնց երրորդ մասը կաթողիկեայ են։

Այս գիւղէն քանի մը ժ. հեռու է Հասան-Պատրիկ խանն՝ որ ատենօք Մեծն Վասիլ կայսեր ժամանակ՝ փոքր քաղաք մ'էր և կը կոչուէր Սեբոր կամ Պատրիկէ, իսկ հիմակ մնացած է Փըլթըկակ խան մը, և քովը փոքր գիւղ մը։

Հէքիմխանի մօտերը կը գտնուին՝ քանի մը տաճկաբնակ գիւղեր, ինչպէս են Ակվալըք, և այլն։

Մալաթիա

Հին Մելիտինէն կամ Մելտենի կամ Մելիտա, որ անուն է դիւցուհւոյ, և կ'ըսուի թէ անոր անուամբ կառուցած է Շամիրամ Ասորեստանեայց դշխոյն, կամ ինչպէս ուրիշները կ'ուզեն՝ Շահ–Միր–Ամ ինքնակալն: Այս ստոյգ է որ, քաղաքիս սկիզբը շատ հին է. բեւեռագրաց մէջ կայ իր յիշատակն և ուրոյն թագաւորութիւնը. զոր Ս. Գիրքն ևս կը յիշէ, մանաւանդ Հոլոփեռնէսի ժամանակ: Այս թուականէն աւելի առաջ Մելիտինէի գաւառը Ծոփաց աշխարհին հետ ինքնուրոյն թագաւորութիւն մ'եղաւ, Հայաստանի հարաւային մասին հետ. որ Անտիոքոսի ժամանակ երկրորդեցաւ կամ շարունակուեցաւ, զոր վերցուց Տիգրան Մեծն և իր թագաւորութեան հետ միացուց: Պոմպէի հետ եղած հաշտութեամբ Տիգրանի համանուն որդւոյն տրուեցաւ, և ապա սահմանակից թագաւորութեանց, և մանաւանդ Կապադովկիոյ թագաւորներուն: Վերջը կանգնեցաւ ինքնուրոյն Տէրութիւն մը Մելիտինէ մայրաքաղաքով, ուր թագաւորեցին Կոտիս, Արիստաբուղ, Տիգրան, և ուրիշներ, Հռովմայեցւոց ազդեցութեան ներքև, որ և խառնուեցաւ նոյն ինքնակալութեան հետ գաւառ ըլլալով հռովմէական և աթոռ Պրետորի: Տրայանոս անուանեց Մելիտինէն մայրաքաղաք Փոքր Հայոց, (ոմանք կ'ըսեն՝ ամէն Հայոց), և լէգէոն մը կազմեց նոյն գաւառէն, որ անուանեցաւ մելիտեան, որոնցմէ 40 քաջեր իրենց արիւնը թափելով Քրիստոսի համար, մարտիրոս եղան, և նշխարքնին կը պահուի մատրան մը մէջ նոյն երկիրն որ այժմ ծանօթ չէ: Այս գունդը կամ լէգէոնը Մարկոս Աւրելիոսի ժամանակ ամբողջ քրիստոնեայ էր, և Աստուծոյ օգնութեամբ թշնամին վանելով՝ շանթաձիգ մակդիրն առացաւ: Տրայիանոսի տուած մայրաքաղաքի պատիւը տևեց միայն երկու տարի. բայց այն ժամանակէն սկսաւ պայծառանալ քաղաքը, մանաւանդ վաճառականութեան մէջ: Եւ կայսրութեան բաժանման ատեն՝ ընականապէս Արևելից մասն

եղաւ, և պահեց իր բարգաւաճ պայմանն իբր մայրաքաղաք Երկրորդ Հայոց։ Պրոկոպիոսի պատմութեան համեմատ՝ Մեծն Յուստինիանոս իր արևելեան սահմանները Պարսից դէմ պաշտպանելու դիտմամբ՝ շատ ջանքեր ըրաւ, և այս քաղաքը բոլորովին փոխակերպեց, և ըրաւ պատսպարան, պատուար և զարդ Հայաստանի, բայց իր շէնքերէն այժմ հետք մը չէ մնացած։ Անգամ մը Պարսիկները գրաւեցին Խոսրով Թագաւորին ժամանակ և հրոյ ճարակ ընելով՝ թողուցին գնացին։

Վեցերորդ դարուն կէսէն վերջը Մելիտինէ դարձեալ մայրաքաղաք եղաւ Փոքր Հայոց մէջ տիրող հայ իշխանաց։ Ասոնք թէպէտ հպատակ էին կայսերաց, և նիզակակից, բայց և երբեմն թշնամութեամբ կը վարուէին, ինչպէս տեսանք պատմութեան մէջ։ Արաբաց արշաւանքը վրայ գալով՝ հայ իշխանք աւելի համարձակութիւն առին. նաև դէպ ի հիւսիս մղում մ՚ունեցան հետզհետէ. և Արաբացիք տէր եղած էին Փոքր Հայոց մեծ մասին։ Այս իբր երկու և կէս դարու յիշատակներն ևս չեն մնացած նոյն գաւառին հայ Տոհմին շէնքերուն։

Արաբները կը զօրանային, կայսերք կը դիմակալէին, և երկուստեք կը մրցէին. Թէոփիլ (829-842) հզօր բանակով պաշարեց առաւ Մալաթեան Արաբներէն, քայքայեց ամրութիւններն, և բնակիչքը Յոյն և Հայ փոխադրեց Կ. Պոլիս։ Նոյնը ըրաւ նաև Սամսատ և Սոզոբերդ քաղաքներուն։ Ոմանք կոստանդին կոպրոնիմոսի կ՚ընծայեն այս արշաւանքն, որ ինձ ստոյգ չերևար։

Հայ իշխաններէն ևս արաբ էմիրներ տիրել սկսան, որոնք նստան Մալաթիա, Թէոփիլի արշաւանքէն իսկ առաջ, ինչպէս Սաուտէն Օմար, և յաջորդներն, և Պաւղիկեանց հետ միաբանելով քիչ աշխատութիւն չի հասուցին կայսերութեան, որ Մեծին Վասլի ժամանակ զօրացաւ և ընկճեց Պաւլիկեանները։

Տասներորդ դարուն սկիզբները (920) Յովհան Գուրգէն խոնարհեցուց նախ, և ապա նուաճեց բոլորովին Մալաթիոյ էմիրները, Փոքր Ասիա և Հայաստանի մասը կայսերութեան ձեռքն անցուց, որովհետև Արաբք իրենց ներքին պառակտումով տկարացեր էին։

իսկ ԺԱ. դարուն Սելճուք սուլդանութիւնը մինչև Կ. Պօլսի դռները մղեց վանեց Յոյները, և եթէ Եւրոպայէն Պաղեստին չի դիմէին խաչակիրք, գոնէ Փոքր Ասիա ամբողջ եղած էր կայսրութեան ձեռքէն։ Եւրոպացւոց գալուստը փոխադրել ստիպեց Սելճուքներուն իրենց կեդրոնը Նիկիայէն Իկոնիոն (Գոնիա), և Յոյնք նորէն յառաջացան ծովեզերքէն դէպ ի Կիլիկիա։

Նոյն ԺԱ. դարուն առաջին քառորդին մէջ Փոքր Հայք հաստատուեցան Արծրունիք։ Եւ յիշեալ դարուն կիսուն շուրջը հոն եկան նաև Անւոյ և Կարսի Բագրատունի պետերն, որոնց մնացորդները Փոքր Հայոց հարաւային կողմերը կը զետեղուէին և դէպ ի Տաւրոս կ'ապաստանէին։ Կային ևս քանի մը գլխաւոր իշխաններ աստ և անդ նշանաւոր տեղերու հրամանատար, ինչպէս Մարաշ, Տարսոն, Անտրուն, Անդիոք և Եդեսիա։ Ասոնց դասէն էր նաև Գաբրիէլ իշխան՝ որ կը տիրէր Մալաթիոյ, և խնամի էր Թորոսի Կիւրոպաղատի, որ կ'իշխէր Եդեսիա։ Գըլըճ–Արսլան Սելճուք սուլդանը պաշարեց Մալաթիան յամին 1096. Գաբրիէլ քաջութեամբ դէմ դրաւ. իսկ սուլդանը լսելով խաչակրաց իր սահմանները մտնելը թողուց Մալաթիան և գնաց իր արևմտեան սահմանագլուխը պաշտպանելու։ Քանի մը տարի հանգիստ մնալէն ետև Սեբաստիոյ իշխողը՝ Դանիշմէն տոհմէն՝ եկաւ պաշարեց Մալաթիան. և թէպէտ Անտիոքայ կոմսը Պոէմոնտ օգնութեան հասաւ, բայց թշնամւոյն ծուղակն ընկնելով գերի եղաւ և Մալաթիա յանձնուեցաւ Տէնիշմէնին, և ետքը դարձեալ ընկաւ Սելճուքներուն ձեռքը, որոնցմէ կան քանի մը կործանած և աւերած շէնքեր։

Մալաթիա թէպէտ ծաղկեցաւ ատեն մը, զոր օրինակ Տրայիանոսի, և մանաւանդ արևելեան ինքնակալութեան ժամանակ, բայց թէ ասոնք և թէ Արաբները և ուրիշներ որ յարաբերութեամբ իշխեցին, չի յաջողեցան այս քաղաքը հզօր կեդրոն մը կազմել։ Ունի ընդարձակ անտառ, երկիրը բարեբեր և բազմաբեր է. մեծ քաղաք մ'ըլլալու, բնակչաց բազմութիւնը պահելու համար լի է ամենայն առատութեամբ, բայց արուեստին հմուտները կը համարին թէ չորս կողմերը պատսպարան

ըլլալու դիրքերն՝ ամրութիւններ կանգնելու յարմար պայմանի մէջ չեն գտնուած, որով և հետզհետէ եկած բարբարիկ հրոսակաց արշաւանքներէն՝ չիկրցան ընդարձակ և տևական զարգացում ձեռք բերել, որուն կը նպաստէր երկրին բարեբերութիւնը: Բայց կը թուի թէ այժմու ռազմագիտութեամբ պիտի կրնայ կարևոր դիրք մը ձեռք բերել՝ տնտեսական և զինուորական տեսակէտով:

Ժամանակ մը Մալաթիա Սելճուքներուն ձեռքը մնալէն ետև, 1235*ին, Մոնկոլները գրաւեցին: Տակաւին կային բազմաթիւ եկեղեցիներ, և կ՚առաջնորդէին անոնց եպիսկոպոսներ, և սոոնց ամենքն Անտիոքայ հայրապետին իշխանութեան ներքև էին: Բայց աւարի առնուեցան, և մնացածը մեծաւ մասամբ քանդուեցան և կրակի տրուեցան:*

Սուլթան Պայեզիտ Ա. ինքնակալ Օսմանցւոց յամին 1396 *առաւ Փոքր Ասիոյ այս կողմերը Թիմուրթաշ վէզիրին ձեռքով, Գարամանի իշխանին յաղթելէն ետև: Եւ* 1401*ին ընկաւ Լէնկ-Թիմուրի իշխանութեան ներքև. և ինչ որ մնացած էր դղեակներէն և մզկիթներէն ամբողջ կրակի տրուեցաւ: Երբ Սելիմ Ա. նորէն առաւ Մալաթիա, աւերակներու կոյտ մը գտաւ զայն, որ այլևս չիկրցաւ քաղաքի մը կարգը բարձրանալ: Նաև մերձակայ ապստամբ Քիւրտերն ևս շատ վնասակար եղած են զարգացման, ինչպէս վերը գրեցի. հակառակ այն անհաւատալի արգաւանդ հողին: Սուլթան Սուի գետակն ունի առատ և յորդ ջրեր որ կը թափի Մելի (Թօքմա). իր աղբիւրը կը բղխի կրային կոյտէ մը՝ դաշտէն* 100 *մեդր բարձր և քաղաքին հարաւի կողմէն կ՚ոռոգանէ շուրջանակի երկիրը: Հոս կը գտնուի այժմ տիպար ագարակ մը*[1]*:*

Հին քաղաքը հիմա գրեթէ բոլորովին լքուած է և խարխուլ տներուն մէջ կը գտնուին սակաւաթիւ բնակիչ Տաճիկ և Հայ: Առաջ տարւոյն երեք մասը կ՚անցնէին պարտէզներուն մէջ, և միայն մէկ մասը կը բնակէին քաղաքը, որ կիսաւեր և ապականած է: Իսկ հիմակ հաս-

1. *Այս ագարակը սուլթան Համիտ շինել տուած է, և այժմու վեհափառ ինքնակալը դարձուց Պետութեան:*

տատուած են ամարաստանին մէջ, որ մրգաստաններ են. ուր պտղատու ծառերը գեղեցիկ տեսարան մը կ'ընծայեն ակնահաճոյ, այգիներն առատ են, ողկոյզներն՝ ունին անհաւատալի մեծութիւն։ Սորաքոն կը յիշատակէ Մօնարիա գինին, անշուշտ այս խաղողէն պատրաստուած ըլլալու է։ Հոս ծիրանւոյ հայրենիքն է, որ իր ծագումն ունի Հայաստանէն։ Ջիթապտուղ չի յաջողիր, երկրին ծովուն եզերքէն ունեցած բարձրութեան համար։

Նոր քաղաքն որ՝ Ասպուզի կամ Հասբուզի կ'անուանի, կամ ինչպէս ոմանք կ'ուզեն Պարփուզ (ձմերուկ), անկէց կէս դար առաջ՝ ունեցած տները միջին պայման մ'ունէին, մզկիթները լաւ դիրքի մէջ չէին. կառավարչին պալատն ըստ բաւականի լաւ էր։ Իսկ հիմակ բնականապէս նոր նոր շէնքեր կառուցուած են, մանաւանդ որ նոր քաղաքը կը բարգաւաճէ և առաջ կ'երթայ։

Նոր Մալաթիայի բնակչաց համար Թէքսէռ վերը յիշուած միջոցին գրուած է 30,000 անձ, և երրորդ մասը քրիստոնեայ կամ Հայ, համեմատութիւնը կրնայ ընդունելի ըլլալ, բայց ոչ թուոյն քանակը. յայտնի է տներու որքանութենէն, վասն զի 3000 կամ 3600 տան մէջ, որուն երրորդ մասը 1000 կամ 1200 տունը քրիստոնեայ էին՝ ինչպէս գրուած է, այն ատենուան համար, 15,000–20,000 է, աւելի բնակիչ չէր կրնար ունենալ։ Իսկ հիմակ կը համարիմ 30,000 էն աւելի, իբր 5–6000 տուն, որոնց 1500–2000 տունը քրիստոնեայ են, և ասոնց մեծագոյն մասը չեն միացած, այլ ունին Հայազգի եպիսկոպոս իրենց առաջնորդ, որ Սսոյ կաթողիկոսին իշխանութեան ներքև է։ Այս գաւառն առաջ երեք մասի կամ առաջնորդութեան բաժնուած էր, Մալաթիա, Պեհեսնի, Հէօսն-Մանսուր. իսկ հիմա ամփոփուած է մէկի Մալաթիոյ անուամբ։ Կաթողիկեայ Հայք առաջ կը գտնուէին այս գաւառին մէջ, ինչպէս յիշատակած եմ պատմութեան մէջ, որոնք վերջի հալածանաց մէջ ցրուեցան, և ոմանք գաղթեցին մօտաւոր տեղեր։ Յամին 1859 մաս մը դարձեալ միացան կաթողիկեայց հետ. և Ղևոնդ Ծ. վ. Խորխոռունի Զմմառեան միաբանութենէ առաջնորդ կարգեցաւ այս գործոյն, և առա-

քելութեան յառաջադիմութիւնը տեսնելով, հրամանաւ Գրիգոր կաթողիկոսին, եղաւ ընտրութիւն եպիսկոպոսի. և յամին 1861 ձեռնադրեցաւ Ղևոնդ Վ. Խորխոռունի: Ժողովուրդը կ'աճէր և կը նուազէր. այժմ քաղաքին մէջ կը հաշուին 200 տուն, ունին եկեղեցի յանուն Վերափոխման Ս. Աստուածածնի, և դպրոցներ պատանեաց և օրիորդաց. այս երկրորդը կը հոգան Անարատ Յղութեան հայազգի կուսանք: Շինուած են ընդարձակ առաջնորդարան և ուրիշ կարևոր շէնքեր: Ղևոնդ եպիսկոպոս Մալաթիոյ գաւառին մէջ աճեցուց առաքելութիւնները, մանաւորապէս Պեհեսնի և Հէօսն-Մանսուր և անոնց շրջակայքը:

Յաջորդ եղաւ Միքայէլ Վ. Խաչատուրեան Խարբերդցի միաբան Զմմառի՝ գործունեայ և փութաջան անձ: Կան Մալաթիա լատին կղերէն աշխատասէր Քափուչին Հայրեր, որոնք փոյթ կը տանին հաւատացելոց զարգացման, ունին եկեղեցի և դպրոց:

Հայոց եկեղեցիներն երեք հատ են՝ Ս. Աստուածածին, Ս. Յարութիւն, և Ս. Երրորդութիւն:

Մալաթիոյի տնտեսական զարգացումը լաւ պայմանի մէջ է, գլխաւոր վաճառքն էր մեկոն (խաշխաշ, Աֆիոն). շերամաբուծութիւնն ալ առաջ կ'երթայ. Զմմառցի եպիսկոպոսունք և վարդապետք բաւական մղում տուած են ասոնց ալ: Արմտեաց բերքն՝ ինչպէս ցորեն, գարի և նմաններ առատ են, ունի ազնիւ և պատուական պտուղներ՝ ինչպէս ծիրան, տանձ, խնձոր, սալոր, թութ և ուրիշներ: Ջուրն առատ է. երկու վտակ՝ Տէր-Մէսիհ և Փուղար Պաշը կ'ոռոգանեն քաղաքն և շրջակայք և բոլոր մէկէն այգեստան կամ դալարագեղ պարտէզ մը կը կազմեն:

Նախնի ժամանակներ Մելիտինէն ընծայեց եկեղեցւոյ շատ մը սուրբեր, ինչպէս համառօտած եմ պատմութեան մէջ: Շանթաձիգ Լէգէոնին պատկանածներէն զատ, կայ նաև արքայազարմ Պոլիկտոս, որ Հայաստանի առաջին մարտիրոսներէն է. և նահատակեցաւ 257ին. իրեն հետ նաև բարեկամը Նէարք: Եւ այս անունները ծանօթ են փոքր Հայքի մէջ՝ Պոլիկ կամ Պօլիկ և Նորիկ կոչմամբ: Հոս ծնած է Մելիտոս, որ եղաւ Մետրապոլիտ Սեբաստիոյ և ապա պատրիարք Անտիոքայ Դ. դա-

րուն: Նոյնպէս Ս. Եւթիմիոս, որ Արքիմանտրիտ եղաւ Պաղեստինի մէջ, և Մելիտինէ քաղաքին և Թեմին բոլոր վանօրէից տեսչութիւնն ունեցաւ, Ակակ և Սինոտ մետրապոլտաց ժամանակ: Այս վանքերը շատ պարզ կերպով շինուած էին, որոնց մեծագոյն մասը կործանած և քանդուած են բոլորովին:

Մալաթիա Եփրատայ աջակողմը զետեղուած ըլլալով՝ անորմէ 4 ժ. հեռու է և Մելի գետէն 5. իսկ Խարբերդէն կամ Մամուրէթ-ուլ-Ազիզէն 18 ժ. ուր կը նստի վալին: Քաղաքին հարաւակողմը կու գան լեռներ, իսկ հիւսիսակողմը դէպի գետ դաշտային է, ի սկզբան զառիթափ, իսկ գետաձորը լայն է, ուր կ'իջնայ գետը գալով արևմտեան բարձունքներէն, որ կ'անուանեն Մեծ Խրան և Հազարացուլ. և իր մէջն ամփոփելով հիւսիսէն և հարաւէն իջած վտակները, կը հոսի նախ բուռն սաստկութեամբ, և ապա հեզասահ կը հասնի և կը թափի Եփրատ: Մելի (Թօգմա) գետին վրայ կայ կամուրջ մը քառասուն կամարով, որ կը կոչուի Քըրք-կէօզ:

Հիմակ պէտք է տեսնել ևս համառօտիւ Մալաթիոյ շուրջը գտնուած տեղերն և գիւղերը:

Ս. Լուսաւորիչ Մալաթիոյ քով

Քաղաքին հարաւային արևելեան կողմը 1 1/2 ժ. հեռի, Պէկ-տաղի ճիւղերէն միոյն կուշտը ժայռուտի մը վրայ կառուցուած է, դիրքը գեղեցիկ, օդը զով, ջուրը պաղ և սքանչելի. վանքին ճիշտ կեդրոնը շինուած է տաճարը ժԳ. դարուն՝ Սիմոն եպիսկոպոսի օրով, որ քաղաքին առաջնորդն էր: Կայ նորոգումներուն մէջ արձանագրութիւնը: Տաճարին հիւսիսային արևելեան կողմը շինուած է 10-12 սենեակ. և վրան նոյնչափ փայտաշէն, հարաւային կողմը կը գտնուին բնակարաններ երկրագործներու համար, ախոռներ և խաղախորդարանը: Արևմտեան կողմը հաստատուած է որբանոցը 10-12 ծածքէ բաղկացեալ, 50 որբ կը

բնակչին, որոնք ուսման հետ կը սորվին կօշկակարութիւն և խաղախորդութիւն, ծախքերնին կը հոգացուի պատրիարքարանէ եկած տարեկան նպաստով (15 *ոսկի*) *և վանքին եկամուտովը:*

Ս. Լուսաւորիչ վանքին քով կայ Գող–Լուղ անուանած ջուրը:

Անսուր այժմ փոքրիկ գիւղ մի է, ուրկից շատեր քաղաք հաստատուած են. բնակիչքը 15–20 *տուն են՝ բոլորը կաթողիկեայ. ուրիշները կը դնեն* 30 *տուն:*

Օրտուզ կամ Հօրտէօզ բարբարիկ անունը նշանակիչ մ'ունի Ատտաս անուան հետ, որ կը նշանակուի Անտոնինոս կայսեր ուղեգրին մէջ Մելիտինոյ մօտերն: Ատեն մը Հօրդէօզ կամ Ատրասի կամ Օրտուզի մէջ կը բնակին եղեր ի մասնաւորի յոյն ընտանիքներ. և կայ եղեր հոն եկեղեցի մը քառասուն Մանկանց, որ շատ պատուած էր այն կողմերը. բայց վրան նշանակուած արձանագրութիւնը չի հաստատեր այս աւանդութիւնը: Ս. Եւդոքս, որ Մելիտեան լէգէոնին չի պատկանիր, և իր նշխարքները գտնուեցան 966*ին Սողոմոն մետրոպոլտին ջանքով,* (*որ կը պակսի մեր ցուցակին մէջ, ուր* 250 *տարուան բաց մը կայ. և կրնայ ըլլալ որ՝ Սողոմոն նախորդ է Թէոդորոս Բ.ի*)*: Եւդոքս կը պատկանէր ուրիշ լէգէոնի մը, և մարտիրոս եղած է Մաքսիմիանոս և Դեկոսի ժամանակ. իրեն հետ էր նաև կայսեր սենեկապանը Ռոմուլ, զոր ինքն Եւդոքս դարձուց քրիստոնէութեան* 6 *Սեպտեմբեր* 252*ին Մաքսիմիանոսի կայսերութեան ատեն:*

Օրտուզի Հայոց եկեղեցին նուիրեալ է յանուն Ս. Փրկչին. և իրենք 50 *տուն են:*

Ջրմխտի (*Ջերմ–ուխտ*) *եկեղեցին Էջմիածին է:*

Մուշավկա կամ Մուշեղի, եկեղեցի Հայոց՝ Աստուածածին, բնակիչ 50 *տուն:*

Այս երկու գիւղերը լեռնակողմերն են:

Հարաւակողմը կան Տաճկաց գիւղեր ինչպէս Սիւրկի, Էրքէնէզ և այլն, նաև ուրիշ կողմեր կան բազմաթիւ գիւղեր որոնց բնակիչներն ընդհանրապէս տաճիկ են:

Դէպ ի Հիւսիս նոր Մալաթիայէն երկու ժ. հեռու է հին քաղաքին աւերակն ուր կը բնակին Հայեր և Ցաճիկներ. Հայոց եկեղեցին յանուն Ս. Ստեփանոսի է, և իրենց թիւն 200 տուն։

Հին Մալաթիայէն կէս ժ. դէպ ի Հիւսիս է Ճարճարեկ ըսուած տեղը. մինչև Մելի գետն կը տարածուի դաշտավայրն, որ կը կոչուի Եազը խան։

Ձեմ զանց ըներ դնել հոս յիշատակարան մը Մուշողկուն վանքին մէջ գտնուած, որ 300 տարի առաջ նշանաւոր շէնք մ'եղած ըլլալը կը յայտնէ ։

« Գրեցաւ Ս. Աւետարանս ձեռամբ Պօղոս եպիսկոպոսի յերկիրն Մելտենի ի գիւղն Մուշողկուն վանքն, ի դուռն Ս. Սարգսայ և Սրբոյն Ցակոբայ և Ս. Թորոսու և Ս. Խաչատուրայ և Ս. Կարապետի և Ս. Ստեփանոսի ի խնդրոյ բանի Մղտեսի Խոճայ Պակէ որդւոյն Կասպարին։

Արդ գրեցաւ ի թուին ՌԽԷ ի թագաւորութեան շահ Մուրատի որ ուղարկեաց զիւր վազերն բեռ[1] հեծելով ի վերայ կարսին ի կաթողիկոսութեան Տէր Խաչատուրոյ և ի վանից առաջնորդութեան Տէր Աստուածատրոյ աբեղայի և մեր եղբարցս Համշիրակ Տէր Գրիգորի եպիսկոպոսի և ծերուն եպիսկոպոսի որ է պարթև և աշակերտին իմոյ Տէր Յովհաննէսին և Տէր Յակոբին և Մալազին Տէր Գևորգին և այլ միաբանից յիշեցէք ի Քրիստոսի զԹարուկղն և զՇահզատան և զՍուլթան և զՄելիքն։

1. Այսինքն հարիւր հազար։

ՄԵԼԻՏԻՆԷ ԳԱՒԱՌԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԵՐԸ

Ցառաջ ևս ըսի, որ այս կողմերը չէին պատկաներ ճշտիւ Փոքր Հայոց։ Հին ատեն կ'անուանէր Կոմագ կամ Կոմագիա, ևս Կոմաքէնէ. առանձին թագաւորութիւն մ'եղաւ Քրիստոսի Տեառն մերոյ աշխարհ գալէն սակաւ մի առաջ և ետև։ Վեսպասիանոս՝ նահանգ ըրաւ Հռովմայեցւոց, որ ինքնակալութեան բաժանման ատեն՝ Արևելից մասն եղաւ. և յետ ժամանակի Լիւկանդեան հայ նախարարութեան և թեմին հետ միացաւ։ ԺԱ. և ԺԲ. դարերուն Հայք բազմացան այս կողմերն, և զօրացան Փիլարետ, Գող-Վասիլ, Տղայ Վասիլ և այլք, և Եդեսիոյ կոմսերն և իրենց ազգեցութեան ներքև Հայ իշխաններ։ Որդոք պետերը, Սելճուգ սուլտանները և Մուսուլի ու Հալէպի Արաբիկերը մրցեցան այս երկիրներուն վրայ, ետքէն Թաթարք և Եգիպտացիք մանաւանդ, որոնց ձեռքը մնաց երկայն ատեն, մինչև որ 1516ին Օսմանցիք առին։

Վերջի ժամանակները Մալաթիոյ Սանճագին այս կողմը բաժնուած էր երեք գազայի, որոնք են Քիահթայ, Հօսն-Մանսուր և Պեհեսնի։

Ա. – Քիահթա

Այս անունը կը յիշեցնէ հին Լիւկանդիան, մանաւանդ որ քանի մը աշխարհագրական տախտակներ նոյն կողմերը կը յիշատակեն զայն։ Պատմութեան մէջ տեսանք, որ Մեղրիկ իշխանը շինած էր Լիւկանդիա քաղաքը։ Հայ պատմութիւնը կը յիշէ ևս որ նոյն իշխանը կառուցեր է Աշոտի ամրոցը (Լիւկանդիա քաղաքին կամ գաւառին մէջ. և այս ետքինն աւելի յարմար է, և այսպէս տարբեր են վերը յիշուած քաղաքն և ամրոցը)։

Քիահթա քաղաքագիւղ (գասապա) է Հօսն – Մանսուրի հիւսիսակողմը լեռներու մէջ, և այլ և այլ բլուրներու վրայ շինուած, և

կը բնակին 400 տուն Տաճիկ, և 300 տուն Հայ, որոնց եկեղեցին է Ս. Գէորգ։

Թիահմա ունի երեք գիւղախումբ՝ Մէրտէսէ, Շէրօ և Կէրկէր։ Յիշատակութեանց արժանի է Ուլպիշ մեծ գիւղը, որ ունի իր շուրջը գեղեր, որոնց մէջ Հայերը կը համարին 312 տուն, և հայաբնակ գիւղերն ըլլալու են Նարընջ, Հաճալա և այլն. մանրամասնութիւնները կը պակսին։ Իզ–Օղլուէն, ուսկից Եփրատը կ՚անցնի Մէմուրէթ–իւլ–Ազիզ երթալու համար, մինչև Կէրկէր գտնուած միջոցը կը կազմէ Շէրօ Նահիէն՝ ուր կան եւս հինգ հայաբնակ գիւղեր, ինչպէս Տէրէթէ, Կեավուզ և այլն. ամանք Շէրօի հայ բնակչաց թիւը կը դնեն 1200 տուն, և բոլոր Թիահմայի մէջ 3000 տուն, որ անշուշտ չափազանց է։

Երրորդ գիւղախումբն է Կէրկէր կամ Կառկառ որ կը թուի Վասպուրականի Կառկառ գաւառէն կոչուած, և ունի պատմական յիշատակներ և սոր յարմար, որ քիչ մ՚աւելի երկայն գրուի։ Նոր Կառկառն իր ժամանակին համեմատ ամուր բերդ մի էր բարձր լերան վրայ շինուած Եփրատայ աջակողմը, հիմակ նոյն գետին մօտերը գիւղ մի է, իրմէ հեռու չէր նաև Պիպու ամրոցը։ Մետասաներորդ դարուն վերջերը կ՚իշխէր այս բերդերուն և անոնց մօտերը գտնուած շրջակայ տեղեաց Կոստանդին անունով Հայ իշխան մը։ Սա՝ կ՚երևայ, նիզակակից էր Եդեսիոյ Թէոդորոս իշխանին. բայց ետքէն Պաղտին կոմսին կողմնակից եղաւ ի վնաս Թորոսի։ Եւ թէպէտ ժամանակ մը բարեկամութեամբ գնացին լատին իշխանին հետ, բայց վերջի տարիները թշնամութիւն ծագեցաւ, Կոստանդին շատ քիչ զօրութիւն ունէր Եդեսիոյ կոմսին դէմ դնելու, որ յաղթող հանդիսանալով՝ առաւ անոր բերդերն և զինքը շղթայակապ բանտեց Սամոսատայ բերդը, ուր և մեռաւ դառն տառապանքով։ Պաղտին ուրիշ գործեր եւս ունեցաւ Հայ իշխանաց հետ և նոյն տարին փոխադրեցաւ Երուսաղէմի գահուն. և ապա 1125ին, Շնջրիկ գիւղի մօտ Սինճա գետին ձախակողմը Պաշակ ամիրային ձեռքը գերի ընկնելով՝ ինքնին յանձնեց անոր նոյն բերդերը Կառկառ և Պեպու, և ինքը տարուեցաւ Խարբերդ. երկու տարի վերջը Միքայէլ՝ որ Կառ-

կառայ հին տիրոջ Կոստանդին իշխանին որդին էր՝ տիրեց նոյն բեր-
դերուն. բայց Սելճուգները գրաւեցին դարձեալ։ Այլ լատին իշխանք
առին Կաւկառն և Պեպուն և յանձնեցին Ծովք դղեկի տիրոջ Վասիլ
իշխանին, որ Ապիրատայ որդին էր և Շնորհալւոյն երէց եղբայրն, որ
տասն և հինգ տարի իշխանութիւն վարեց. և Եփրատայ եզերքը սնաւ
պատանին Գրիգոր մականուանեալ Տղայ, որ Հայաստանի հռչակաւոր
հայրապետներէն մին պիտի ըլլար։ Մինչդեռ Պահլաւները հանգիստ
կ՚անցնէին այս նոր ամրոցներուն մէջ, և իրենց երրորդ եղբայրը Գրի-
գոր Գ. կաթողիկոս իր աթոռը դրած էր առ ժամն իրենց հայրենական
Ծովք դղեակը, ահա հարկեցան նոր գործողութեան։ Պէտք է յիշել ես
որ կաթողիկոսական աթոռն կաթողիկոսին բերդէն յառաջելով դէպ
արևելք, հաստատուած էր Հռոմկլայ։ Իկոնիոյ սուլդանը Մագսուտ
1148ին պաշարեց Թլպաշար, որ Եդեսիոյ Լատին կոմսութեան վերջին
պատուարը մնացեր էր, և շատ նեղութեան մէջ ինկած էր պաշարի
պակասութեամբ։ Վասլի յանձնուեցաւ այս վտանգաւոր գործը. պա-
տրաստեցին համբարածուներու մեծ կարաւան մը. Վասիլ և Շահան
երկու եղբարք գլուխ անցան, և հետերնին առին 400 կտրիճ Հայեր,
և արիաբար անցան թշնամւոյն կարգերէն և յաջողեցան պարենաւորել
սովու մատնուած բերդաքաղաքը, սակայն իրենց յետադարձը աղետալի
եղաւ։ Հոնի-Քէյֆի տէրը Գարա-Արսլան Ֆախրէտտին Որթոք տոհմէն,
որ հզօր բանակաւ նոյն կողմերը կը գտնուէր, իրենց հանդիպեցաւ,
դիմադրել կարելի չէր, հարկ եղաւ անձնատուր ըլլալ։ Գարա-Ասլան
ստիպեց որ բերդերն ևս յանձնեն, որ չափաւոր պայմաններով կատա-
րուեցաւ և Վասլի ընտանիքը կարող եղան իրենց պատկանեալ իրերով
ապահովութեամբ հասնիլ Սամոսատ, ուր հաւաքուեցան նաև նախկին
ցրուած զօրքերն և գնացին Հռոմկլայ, որ Գրիգոր կաթողիկոսի ձեռքն
էր. իսկ Վասիլ մնաց Գարա-Ասլանի քով, որ լաւ վարուեցաւ իրեն
հետ, կալուած ևս տուաւ անոր իր սահմանին մէջ։

Հիմակ Կէրկէր աւանիկ մի է անշուք մանաւանդ այն ժամանակ,
երբ կը դնէին իր մէջը 30 տուն Հայ. այժմ շրջականներուն որոնք են

Նօխուտլու, Վանքուկ, Հատրօ և Ցիվան գեղերն, ունին 200 և նորագոյն ծանօթութեանց համեմատ 300 տուն Հայ։

Մալաթիայէն դէպ ի Ջերմուկ Եփրատայ երկու կողմը կը բնակին Իզ-Օղլու աշիրէթը, և Քիաճթայի մէջ կան Շէրօ աշիրէթն, որ Ալեվի են։ Եփրատի կողմը Քիաճթայէ մինչև Հօսն-Մանսուր ծաւալած են Ճանպէրտի աշիրէթը դէպ ի Մալաթիա յառաջացած։

Բ. — Հօսն-Մանսուր

Հօսն-Մանսուր հին ատեն եւս քաղաք էր եպիսկոպոսական և կ'անուանուէր Պէրա կամ Բերրա, Եփրատացւոց մէջ Յերապօլսի (Մամպէճ) Մետրապօլտութեան ներքև. երկրացիք աւանդութիւն մ'ունէին որ Սամոստիոյ գաղթականները շիներ են այս քաղաքը։ Ութերորդ դարուն կէսին՝ Օմմիայեա խալիֆաներուն վերջնին՝ Մրուան Բ.ի օրը՝ Մանսուր Պէնճ'ունահ-Ալսամերի շինեց նոր քաղաք կամ բերդաքաղաքն որ իր անուամբ կոչուեցաւ Հօսն-Մանսուր (Բերդ-Մանսուրայ), հին ամրոցին արևմտեան կողմը ժամ մը հեռու. հին աւերակը կեցած է տակաւին և պաշտօնապէս ծանօթ հին անունը՝ Բիւրէ գազասը՝ բայց հասարակութեան առջև գործածական չէ։ Մետասան և երկոտասան դարուց հայ հեղինակները կ'անուանէին աղաւաղութեամբ Հասանմսուր. ետքէն ըսուեցաւ նաև հեգնութեամբ Ատիեաման։ Մետասաներորդ և երկոտասաներորդ դարուն Եդեսիոյ կոմսերը, Թեսնոյ իշխանք՝ դարձեալ Եդեսիացիք առին այս քաղաքը և գաւառն։

Հօսն-Մանսուր Մալաթիոյ հարաւակողմը կ'իյնայ երեք օր անկէ հեռու, բնակիչքը կը համարին 2000 տուն տաճիկ և 600 տուն քրիստոնեայ, որոնց 450 տուն հայ են. 120 տուն հայ կաթողիկեայ և 50 Ասորի։ Ոմանք կը դնեն 3000 տուն տաճիկ և 1000 տուն քրիստոնեայ, որ կ'երևի քիչ մ'աւելի է։

կաթողիկեայ Հայոց եկեղեցին է Յիսուս Փրկիչ, իսկ Հայոցը Ս. Աստուածածին։ Այս գաւառակին կաթողիկէ առաքելութիւնը զարգացաւ Խոռխոռունի եպիսկոպոսին, իր յաջորդին և զմմառեան միաբանից ջանքովն, և շուրջն եղած գիւղերուն սակաւաթիւ Հայերն ալ հասարակ կաթողիկեայ են իբր 80 տուն։

Այս գաւառն ունի երկու նահիա՝ Սամսատ և Պէօքէթ–Օղլու, որոնք ունին շատ մը գիւղեր. այս երկրին դիրքը լաւ և բարեբեր է, արևելքէն և հարաւէն պատած է Եփրատով, որ կողմն է նաև Ուրֆայի գաւառը։

Վարդանա հայաբնակ գիւղը լեռներու մէջ է Հօսն–Մանսուրէն 1 ժ. հեռու որ առաջ ունէր 22 տուն, ետքէն իջաւ 20ի, 12ի, ըսող կայ մինչև հինգի, մնացածները քաղաք ամփոփուած են։ Կը թուի ասիկա Կիլիկեցւոց ժամանակ յիշուած Հարթանն որ կը թարգմանուի՝ որմունք։

Այս կողմերն էին նաև նոյն ժամանակ յիշուած Թուրեր և Ուրեմն. և այս ետքինն ըլլալու է հին Ուրիմա եպիսկոպոսանիստ քաղաքը։

Սամոսատիա կամ Սամուսատ, հիմակ Սէմիսատ, կամագիոյ հին մայրաքաղաքը, ուր նստան Հռովմայ ազդեցութեան ներքև թագաւորներն 130 տարի (64 Քրիստոսէ առաջ և 72 Քրիստոսէ ետև)։ Եպիսկոպոսարան եղաւ Դ. դարուն սկիզբը Յերապօլսի մետրապօլտութեան ներքև, նշանաւոր էր եպիսկոպոսաց մէջ Պէպէրիոս, որ շատ երևելի գործեր ունեցաւ, Արիոսեանց դէմ մրցեցաւ, Վաղէս հալածեց զինքը։ Ազատելով անկէ՝ իր գործունէութիւնը ձեռքէ չի թողուց, Արիանոսաց ատելութիւնը մեծ էր իրեն դէմ և պատճառ եղաւ իր մահուանը։

Սամոսատիա Բիւզանդիոնի ինքնակալաց ատեն աթոռ եղաւ արևելեան զօրավարաց։ Յետ ժամանակաց շատ ինկաւ. և այժմ Միւտիրի կեդրոն է Հօսն–Մանսուր գաւառակին մէջ, ուրմէ 6–8 ժ. հեռու է. Հայ կաթողիկեայք կ՚աւելնան և կը պակսին, անանկ որ երբեմն 5 տունէ՝ կը հասնին 10–15–20 տուն. հոս կայ փոքրիկ եկեղեցի մը։

Մօտ է Սամսատայ փոքր գիւղը Գանթարա, որ ատեն մը 25 տուն բնակիչ ունէր և այժմ միայն 8 տուն։

Կէվրիկ Հօսն–Մանսուրէն 6–8 ժ. հեռու. այս կողմերու հայաբնակ գիւղերուն մեծագոյնը. մէջը կար կաթոլիկեայ 30 տուն, և հիմա 60–70 տուն, որով կ'իմացուի՝ թէ Սամսատէն և Գանթարայէն պակսած տներն ուր հաւաքուած են։

Ցառաջ այս գիւղացիներն սփռուած էին հետևեալ կերպով. Վարդանա 12 տուն. Կէվրիկ՝ 32. Սամսատ 10. Գանթարա 5. Հայկ 2. Ջուռնա 3. Ջորկավր 1. Խըլք՝ 1. Կէօլ–Բունար 4. Թէրփէթիլ 4. Պոզուկ՝ 2. և Պըչրին 2. որոնք հիմայ ամփոփուած են մեծաւ մասամբ Հօսն–Մանսուր և Կէվրիկ։

Այս գաւառին Թիւրաներն են՝ Հօսն–Մանսուրի շուրջը՝ Խըտըրսօր աշիրէթը՝ Ալէվի. լեռնակողմերը Թէրգ Օղլու՝ Սիւննի, քովերը Պէրէքէք աշիրէթը՝ Սիւննի, նաև Սամսատի աղաները. կան նս Թեավլի և Զրաւքէն աշիրէթները։

Հօսն–Մանսուր և Պեհեսնի գաւառակաց մէջ կան շատ գետեր որոնք կը հոսին հիւսիսէն հարաւ և կը թափին Եփրատ։ Այս գետակներուն մէջ յիշատակութեան արժանի է Ճէնիճէ կամ Սինճա, արաբերէն Նահր–էլ–ազրագ (կապոյտ գետ). Պտղոմէոս կը համարի, որ Սինկասը մեծկակ վտակ մի է, և Սամոսատայ հարաւէն կը հոսի և կը թափի Եփրատ։ Սինճայի վրայ կանգնուած կամուրջը Հռովմէական շէնք մի է, արաբացի գրիչները աշխարհքին հրաշալիքներէն մէկը կը համարին։ Սինճայի վրայ շատեր գրած են. իսկ հիմակ գետին ընթացքը փոխուած ըլլալով կամուրջը ծառայութիւն մը չի մատուցաներ, և արդէն կիսաւեր է, և կորուսած է իր նախկին պայծառութիւնը և օգտակարութիւնը։ Իսկ գետը սրընթաց ըլլալով՝ մանաւանդ գարունը շատ դժուարութիւն կը պատճառէ անցուդարձի։

Գ. — Պեհեսնի

Հասարակաց բարբառը կ'անուանէ Պեսնի, Տաճիկները Պեհեսնի–Պահուէտոյին կամ Պէհասոյին. հին քաղաքին անունը ծանօթ չէ։ Յունաց և Արաբացւոց ժամանակ այս անուամբ չէ յիշուած։ Սոյգ է որ այս կողմերը միացան Լևկանդիոյ թեմին, որ ԺԱ. դարուն Հայ վտարանդի Թագաւորաց և իշխանաց ձեռքն անցաւ։ Եւ նոյն դարուն երկրորդ կէսին մէջ զօրացաւ Փիլարէտ իշխանն, և ասոր յաջորդ եղան Վասիլ Ա. և Բ. և իրենց նիզակակիցներն։ Նոյն կողմերը տիրեցին նաև խաչակիրք, մանաւանդ Եդեսիոյ կոմսերն. և Հայ իշխաններէն առաւ նոյն կողմերը Պաղտին 1118ին։ Այս ժամանակները Պեհեսնի հռչակաւոր դղեակ մ'էր, կամ ամրոց, զոր ժամանակակից պատմագիրք անարիկ կ'անուանեն. իսկ հասարակ ժողովուրդը Ջինիվիզ Գալէսի՝ ճենովացւոց անունը դնելով Եւրոպացւոց տեղ, ինչպէս շատ տեղ նոյն կերպով ֆրանք անունը։

Պեհեսնի ԺԱ. և ԺԲ. դարուն նշանաւոր էր իր հզօր ամրութեամբը, իր հարստութեամբն և բազմաթիւ կաթողիկէ ժողովրդովը, Հայ էին ամենքը։ Տաճիկները երբ առին, տեղւոյն ամրութեան և դրից համար, քրիստոնեաները հեռացնելով՝ իրենք հոն հաստատուեր են։ Այս տեղերն անցան Սուրիոյ Աթաբէկներուն, Իկոնիոյ սուլդաններուն և ուրիշ իշխանաց ձեռքն, Եգիպտացիք տիրեցին և Օսմանեանք գոլին. բայց և ժամանակ մը կային կէս ինքնագլուխ տոհմեր, ինչպէս Պէյատ Օղլուներ, որոնց անունը կը կրէ ցարդ Պեհեսնիի մօտ գիւղ մը, Շան–Պէյատի անուանուած։

Պեհեսնիի ամրոցները հիմայ աւրուած են, և անոնց պէտք ևս չի կայ։ Ժողովուրդն ունի իր աւանդութիւնն անոնց նկատմամբ, բայց հնագիտական խուզարկութիւնը դեռ որոշ բան մը չէ նշանակեր։

Հիմայ փոքր քաղաք մի է Պեհեսնի, ունի 2000 տուն Տաճիկ բնակիչ։ Կան 250–300 տուն Հայք. եկեղեցին Ս. Փրկիչ։ Կաթողիկեայ

Հայոց թիւն է 100–150 տուն, ունին եկեղեցի Աւետումն Կուսին և դպրոց: Ամարաստանին մէջ ևս ունին կաթողիկեայք ուխտատեղի մը նուիրուած գլխաւոր Առաքելոց Պետրոսի և Պօղոսի: Քաղաքէն դուրս, պարտէզներուն և այգեստանաց մէջ կը տեսնուին տակաւին հին ամրոցին աւերակները սփռուած:

Գաւառն կը բաժնուի երկու նահիէ, որոնք են Սիւրկիւ և Հուէյտի:

Յիշելու արժանի տեղն է հին աւերակ մը, Պեհեսնիի արևմտեան կողմն, ուր կար մեզի պատմութենէ ծանօթ Քեսուն դղեակն, որ կը կոչուի ևս երկիր Կիսոնի, սակայն բուն անունն է Հիսնի կամ Հիւսնիւ (գեղեցիկ–վայելուչ): Մետասաներորդ դարուն վերջերը հոս իշխեց Վասիլ հայ իշխան, և իր քով ժողովեցան Բագրատունեաց և Արծրունեաց մնացած զօրքերէն շատ մը իշխաններ, նաև Պահլաւունիք, և արքայազուններ, կը նստէր Քեսուն ամրոցն, ուր շինած էր ինքը բարձրայարկ ապարանք և մեծաշէն դռներ: Իր ձեռաց ներքև ունէր Ռապան, Բերդուս, Պեհեսնի, Փարզման, Մասր Հարթան և ուրիշ տեղեր: 1112ին մեռաւ Վասիլ իշխանն և իրեն յաջորդեց Վասիլ Կամսարական: Ասոնց նիզակակից էին Կառկառի, Արևընթանի, Ծովք դղեկին, Պիրի՝ իշխանները: Յամին 1098 հաստատուած էր Եդեսիոյ լատին կոմսութիւնը, որ 1118ին առաւ վերը յիշուած հայ իշխանութեանց մեծագոյն մասը: Նոյն տարին կոմս եղաւ Ճօսլին Եդեսիոյ և Թլպաշարի, Սիր Պաղտին կ'իշխէր Մարաշի և Քեսնոյ և անոր սահմանացը, կոմսին վերին իշխանութեան ներքև: Ետքը ձեռքն էին Պեհեսնի, Ռապան և Մարաշ, Մելիտինոյ սահմանէն մինչև Անտիոքայ կողմերը: 1140ին Պաղտին կը մեկնի Քեսունէն՝ հեծելազօրքը հետն առած: Իսկ բնակչաց մեծ մասը գնաց Պեհեսնի, ոմանք Ռապան և մաս մը Հռոմկլայ: Քեսուն դատարկացեր էր, և մէջը մնացեր էին սակաւաթիւ ազատներ և քաղաքին դուքսը Վահրամ: Ասոնք երբ լսեցին Գարա–Արսլանի Ռապան գալը, ձգեցին փախան, և երեսուն տաճիկք բաւական եղան կողոպտել և կրակի տալ այն ամայացած ականաւոր քաղաքը:

Յամին 1143 Եդեսիան առնուեցաւ. Ճօսլին ուզեց ետ առնուլ երկու տարի վերջն և յաջողեցաւ. իրեն հետ էր և Պաղտին: Բայց անմիջապէս վրայ հասաւ Նուրէտտին, սոսկալի ճակատ դրուեցաւ, ուր ինկաւ քաջութեամբ Պաղտին և Եդեսիա ձեռքէ ելաւ: Ճօսլին հազիւ կրցած էր պաշտպանել Թլպաշար, Մազուտ սուլթանը պաշարեց զայն 1145ին և չի կրցաւ առնուլ, և տուգանքը կրեցին Կառկառայ հայ իշխանները Վասիլ և Շահան, որոնք պաշարեալ քաղաքին պարէն տանելով՝ ինկան Գարա–Ասլան Ֆախրէտտինի ձեռքը, ինչպէս գրուեցաւ:

1150ին Մազուտ սուլթանը յարձակեցաւ դարձեալ Եփրատացւոց աշխարհքն, և նոյն ընդ նոյն յանձնեցին իրեն Քեսուն քաղաքը, գրաւեց ութ օրուան մէջ անմատոյց և անառիկ դղեակը Պեհեսնի և չորս օր վերջը մեծակառոյց Ռապանը: Յաջորդ տարին յանձնուեցաւ նաև Թըլպաշար, և մնաց միայն Հռոմկլայ, ուր հաստատուած էր մեր կաթողիկոսաց վեհարանը: Քեսնոյ մօտերն էր հռչակաւոր Կարմիր վանքը ԺԱ. և ԺԲ. դարուց մէջ: Հոն սնան Գրիգորիս և եղբայրը Ներսէս Շնորհալի, որոնց բարեկրօն Ստեփանոս վարդապետն արժանացաւ մանկահասակ՝ բարձրութեան եպիսկոպոսական աստիճանի բոլոր Վասիլեան նահանգին: Յամին 1136 այրեց Կարմիր Վանքը՝ Սեբաստիոյ իշխեցողը Մահմուտ Տանիշմէնտ: — Մարաշու երկրին սահմաններուն վրայ դէպի հիւսիս կը գտնեն Քեսունը, Պեհեսնիի մօտերը:

Ռապան՝ Մարաշի և Քեսնոյ մէջ դէպ արևմտեան հարաւ: Հիմակ այս կողմերը կ'անուանեն Ռապան Օվասը (հովուաց դաշտը) ուր կը համախմբէին Քուրդ և Թիւրքմէն աշիրէթներն, և կ'արածէին իրենց խաշանց հօտերը: Այս կողմերու ժողովուրդները նոյն տոհմերէն առաջ եկած են: Կը գտնուին և Հայեր սակաւաթիւ:

Պեհեսնիի մօտերն իբր հին յիշատակ կան նաև Մատրասուն և Վարդահեր աւանները: Առաջինին մէջ կ'իշխէր Գուրգէնի որդին Գագիկ, ուր ժամանակ մը հանգիստ առաւ մեծ Վկայասէրը Գրիգոր, որ և կը յաճախէր Կարմիր Վանքը, իր սիրելի ճգնարանը: Յարմար էր նաև տեղւոյն անունը՝ Մատրասուն՝ ուսուցչաց դաս՝ կ'երևի վարդապետանոց

էր կամ համալսարան և հոն կը փայլէր Մեծ Մագիստրոսին համանուն և համանման որդին։

Վարդահեր գիւղի մէջ վախճանեցաւ Վկայասէրի քրոջ որդին և յաջորդը Բարսեղ՝ յամին 1113։

Թողլով հին յիշատակները դառնանք ներկային. հիները կոյտեր են աւերակաց, բայց և արդ կան բազմաթիւ գիւղեր. բնակչաց մեծագոյն մասը տաճիկ են։

Բէլ–էրէն կամ Պէլէրէն հեռու է Մարաշէն 20 ժ. Հաճարի ճամբով, ունի 25 տուն Տաճիկ և 5 տուն Հայ։

Սարափ՝ կան Տաճկաց հետ 5 տուն Հայ։

Սոֆրազ, հոս ևս կան սակաւաթիւ Հայք։

Հիւսիսային և արևելեան կողմն է Բալվերու, որ կը գտնուի Աղ–Սու վտակին լճակներուն մօտ. կան նաև Թուլթ և Շան–Պէյատի և ուրիշ գիւղեր, որոնց մէջ կը գտնուին և Հայեր, բայց ընդհանրապէս սակաւաթիւ են, և ժամանակին պարագայից համեմատ փոփոխական։

Պեհեսնիի Քուրդերն իրենց մէջ կը բովանդակեն խըտըրսօրներն. բազմաթիւ է Րիշվան աշիրէթը՝ Ալէվի։ Թիւրքմէններն են՝ Տէտէ–Արխըն՝ Ալէվի։ Պեհեսնիէն դէպ Անթափ է Ջագըլը Թիւրքմէն՝ Ալէվի աշիրէթը։

ՎԵՐՋ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԷՋ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
16	20	Լիբանդիոյ	Լիկանդիոյ
17	10	Հեօրէկ	Հէրէկ
»	12	Ագշէհրապանը	Ագշէհրապատ
»	18	Նէվշհիր	Էլ–Պօսթան
26	7	Է	Էր
33	25	Ջամր	Ջամլը
42	14	Ըանդարձակեց	Պայծառացուց
56	4	Ներենարկոսի	Հերենարկոսի
59	12	Ներուն	Ներոն
»	17	Ուրիշ	Ուրիշ Օր
»	19	Գաղատոս	Գաղատա
65	5	Եպիպիկէ	Եպիկէ
72	8	Աղճուտաղի	Աղճատաղի
78	9	որ	որ է
80	11	գարգին	կարգեն
90	23	Արիուշփին	Արիուլփին
91	1	Արում	Ասում
»	9	Սօլահսն	Սօլակսն
»	25	Սիսարչանի	Սիսարպան
96	3	Մանավիէի Մանավէայի	Մուավիայի
209	20	Արիմապետին	Ամիրապետին
131	20	Բուրդիկ	Քուրդիկ
134	24	միաբաներ էր	միաբանելու
137	21	արևմուտքէն	արևմուտքին
140	11	Եփրատ	Եփրատ կը հասնէր
141	11	հիւսիսային	հիւսիսային կողմէն
143	2	Կայսեր	Կայսր
149	21.2	Արաբաց	Սելճուգաց
164	5	Վանայ	Վանքին
166	18	Քաղկեդոնի	Քաղկեդոնի ժողովքին
181	28	Նըսնիքէյֆի	Հըսնիքէյֆի
198	3	Շամքորոց	Շամքորի
202	13	Մէնթէշը	Մէնթէշէ
212	18	Խանըհուլաուի	Խանը՝ Հուլաուի
223	9	Հասանի	Հասան
224	15	սակաւաթի	սակաւաթիւ
229	18	Դասիլ	Դաւիլ
230	15	Ճահպուշատ	Ճանպուլատ
»	18	Մասն. Մանան	Մաան
233	12	Ճանպուշատ	Ճանպուլատ
237	3	Երբ	Իբր
340	16	Գեոսցայ	Գլեսցայ
243	27	Ջէյհէլ	Ջէյնել
246	2	Տիշաւէր	Տիլաւէր
250	5	քահանայ	քահանայի
252	23	ի հարց	եհարց

ԷՋ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
»	27	. . . .	Անանիա վերջին Արք Եպիսկոպոսն էր Սըսոյ Աթոռէն ձեռնադրուած, և այնուհետև ընկաւ Կ. Պօլսի Պատրիարքութեան ներքև. և որ գլուխ հանեց Պատրիարքը Մատթէոս Սարի, որ առաջ Սըսոյ կաթողիկոս էր. Սահակի օգնելով, զի ինքն և կեսարացի էր։ Եպքերը կը ձեռնադրուէին Էջմիածին
255	8	ու	ուր
269	24	Աստուածածնէ	Աստուածածնի
272	6	Լեցնելու	չէնցնելու
282	24	Թէճէպ	Թէճէպ
318	11	Զմմառ ի	Զմմառի
322	19	1782	1752
»	29	Յովհան	Յովնան
331	1	1829	1839
334	4	զանցաւոր	զյանցաւոր
»	26	Առնալա	Առտալա
335	3	զափ	չափ
346	13	հորգ	նորգ
348	8	քաշխանէ	քալխանէ
356	19	Զըրըըխի	Զըրըըխի
366	13	. . . .	Ջառայի գաւառակին մէջ։
369	20	պտուղներէն	պտղիներէն
374	6	ճամբայ մը	ճամբայ մը կայ
»	24	սենեկի,	սենեկի
375	10	150	150 տուն
392	3	Բերրաւ (Հասան	Բերրա (Հօսն
»	11	(գաւառն)	(գաւառակ)
»	24	Փիւտնէ	Փիւռնէ
392	25	Փուտնալըները	Փուռնալըները
395	15	չէնքերուն	զէնքերուն մէջ
400	12	հուսիսէն	հիւսիսէն
403	11	Աբաբիկերը	Աթաբկերը
404	14	ասոր յարմար	ասոր համար յարմար է
405	20	Հոնի	Հըսնի
409	3	Պահուէտտին կամ Պէհատտին	Պասէտտին կամ Պէհաէտտին
»	19	գոին	առին
411	3	գրուեցաւ	տրուեցաւ
412	8	Հաճարի	Նաճարի

Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна